Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ

V

Академия Наук Армянской ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ
с 562
ЯЗЫКАМИ

ТОМ
V

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН ~ 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՀԱՏՈՐ
V

A III 2924

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1965

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հատորը նվիրված է դերբայների և չթեքվող խոսքի մասերի համեմատական ու պատմական ուսումնասիրությանը։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորում հետազոտությունը տարվում է ընդհանուր լեզվաբանական, պատմահամեմատական և պատմական տեսանկյունով։ Աշխատության պատմական մասն ընդգրկում է գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի և հայ բարբառների երևույթների հանգամանալից քննությունը։

Խմբագրությամբ Է. Բ. ԱՂԱՅԱՆԻ

Под редакцией Э. Б. АГАЯНА

Տպագրության պատրաստեցին պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ
և Ք. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Подготовили к печати проф. Э. Б. АГАЯН
и К. Г. АЧАРЯН

Գ Լ Ո Ւ Խ Ա

Դ Ե Ր Բ Ա Յ

1. ԴԵՐԲԱՅ ԵՎ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Այն բայերը, որոնք ձևով անուն և իմաստով բայ են, կոչվում են **դերբայ** *կամ* **աներևույթ**:

Այս երկուսը էապես նույնն են, բայց համաձայն հին հոմարենի քերականության, որի վրա կազմված են նաև մյուս լեզուների քերականությունները, դրվել է զանազանություն երկուսի միջև։ Երբ բայը կատարում է գոյականի դեր, կոչվում է **աներևույթ** (infinitif), *իսկ երբ կատարում է ածականի դեր, կոչվում է* **դերբայ** (participe)։ *Հոմարենում դերբայը իր բոլոր գործածությամբ իրապես ածական էր, բայց աներևույթը տակավին ամբողջապես գոյականի ձև կամ գործածություն չուներ։*

Հայերենի մեջ մենք **դերբայ** *բառին տալիս ենք ընդհանուր գործածություն, և* **աներոշ դերբայ** *ասելով հասկանում ենք* **աներե-վույթը**:

Մասունք բաների փոխանակությունը սովորական երևույթ է բոլոր լեզուների մեջ։ Կարող է գոյականը ածական դառնալ և ածականը՝ գոյական, բայց գոյականը նախ գոյական է և էապես գոյական է, որ հետո մենք կարող ենք ածականաբար առնել, նմանապես ածականը նախ ածական է և էապես ածական է, հետո մենք կարող ենք այն գոյականաբար գործածել։ Օրինակ, էշ նախ գոյական է և անշուշտ գոյական է, բայց երբ ասենք **էշ մարդ, էշը** *դառնում է ածական։ Նույնպես* **կարմիր** *ածական է և միայն ածական, իսկ երբ ասենք* **կարմիրները եկան**, *դառնում է գոյական։*

Այս մտածողությամբ առաջնորդվելով, աներևույթը և դերբայը կարող են մերթ գոյական, մերթ ածական լինել, այնուամենայնիվ պահում են իրենց անկախ դիրքը։ Օրինակ, ուտել աներևույթ է և միշտ գոյական է և չի կարող լինել ածական, բայց երբ հոլովենք և սեռականի ձև տալով ասենք ուտելու ճաշ, դառնում է ածական, իբր թե ապառնի դերբայ լիներ։ Նույնը ֆրանսերենում լինում է տրական հոլովով pain à manger։ Այս և ուրիշ պատճառներով, մենք այս գրքում որոշեցինք բոլորը միացնել մի անվան տակ, որ է դերբայ։ Աներևույթը կոչում ենք անորոշ դերբայ։

Կան լեզուներ, որոնք դերբայ չունեն։ Այսպես, օրինակ, ճապոներենը ո՛չ դերբայ ունի և ոչ աներևույթ. բառարանում բայերը հիշվում են ներկայի ձևով (Plaut, 10), ինչպես անում են նաև հին լեզուներից հունարենը և լատիներենը, և սրանց հետևողությամբ էլ մեր հայերեն գրաբարը։ Գործողությունը կատարող անձը (ներկա դերբայ) ճապոներենում կազմվում է բայի վրա ավելացնելով te մասնիկը, որի բուն նշանակությունն է «ձեռք»։ Օրինակ՝

noru	«հեծնել»	—	norite	հեծյալ
kau	«գնել»	—	kaite	գնող
uru	«վաճառել»	—	urite	վաճառող

(Plaut, 304)

Ամերիկյան նահուատլ լեզուն էլ զուրկ է թե՛ աներևույթից և թե՛ դերբայից. խոնարհումը կազմվում է բայարմատի վրա դնելով դերանունները (ենթակա և սեռի խնդիր) ու ժամանակ ցույց տվող մասնիկները (Grasserie, 41)։

Ամերիկյան չիապանեկա լեզուն չունի աներևույթ, ուստի փոխանակ ասելու «ապրելու և իրեն պահելու համար պետք է ուտել», ասում են դիմավոր բայով «պետք է ուտենք, որպեսզի ապրենք և մեզ պահենք» (Albornz, 38)։

Արաբերենն էլ մինչև այժմ ո՛չ դերբայ ունի և ոչ էլ աներևույթ։ Ներկա դերբայը արաբերենում գործող անձն է (فاعل), անցյալ դերբայը գործողությունը կրողն է (مفعول), իսկ աներևույթը միևնույն բայի արմատն է, որ և գործ է ածվում իբրև գոյական և հոլովվում ու հոգնակի է դառնում. ինչպես harb կռվել, կռիվ, xarǰ ծախսել և ծախս։ Սա թե՛ ներգործական է և թե՛ կրավորական. ժամանակը անհայտ է, գործածվում է թե՛ ներկա, թե՛ անցյալ և թե՛ ապառնի։

Բայց արաբերենը ունի երկու տեսակ ներկա դերբայ (=գործող անձ). առաջինը ցույց է տալիս այն անձը, որ գործողությունը մեկ անգամ պատահմամբ կատարում է, իսկ երկրորդը ցույց է տալիս այն անձը, որ նույն գործողությունը միշտ և սովորաբար կատարում է։ Առաջինը մեր մեջ դերբայն է, երկրորդը՝ արհեստ ցույց տվող բառի է վերածված (տե՛ս «Ներածություն»)։ Ասորերենն էլ սեմական լեզու է, գիտե պարզ ներկա դերբայի և շարունակականի տարբերությունը։

Ասացինք, որ արաբերենում աներևույթը թե՛ բայ է և թե՛ գոյական, թե՛ ներգործական է և թե՛ կրավորական, ժամանակն էլ անհայտ է։ Այս պատճառով էլ, օրինակ, قتل qatl «սպանություն կամ սպանել» բառը կարող է ցույց տալ թե՛ մեկի կատարած սպանությունը և թե՛ իր սպանվելը (մահը)։ Առաջին դեպքում կարող է մինչև անգամ ստանալ հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ օրինակ՝

قتل زيدٍ محمداً qatlu Zaidin Muhammadan
Սպանութիւնն Զայդի զՄուհամմէդ

(այսինքն այն հանգամանքը, որ Զայդը սպանել է Մուհամմեդին)։

Իսկ պարզապես «սպանութիւնն Զայդի» պիտի հասկացվեր թե՛ այն, որ Զայդը մարդասպանություն է գործել և թե այն, որ Զայդը սպանվել է մեկի ձեռքով։

Սրա նման իսմի ֆաի՛լն էլ (ներկա դերբայը), իբրև գոյական կամ իբրև բայ ըմբռնվելով, կարող է առնել թե՛ սեռական խնդիր և թե՛ հայցական. օրինակ՝

قاتل الناسِ qātilu-nnāsi (սեռ.) սպանող մարդոյ
qātilu- nnāsa (հյց.) սպանող զմարդ

Սրանցից դուրս արաբերենն ունի նաև maŝdar-i mimi (միմ-ով աներևույթ), որ ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն անորոշ դերբայը՝ վրան ավելացրած ma ձայնը, առանց իմաստի փոփոխության. օրինակ՝

قصد qaşd նպատակ, որից
maqşad նպատակ։

Ավելի զարմանալի է կաբարդին լեզվի դերբայը, որ թե՛ հոլովվում է և թե՛ խոնարհվում միաժամանակ, այսինքն ստանում է թե՛ բայական ժամանակի վերջավորությունները և թե՛ գոյականի հոլովները։ Օրինակ, tlağu «տեսած» բառից, ներկա ժամանակով ունենք՝

Ո. zə-tlaǵu-r տեսածս (զոր տեսանեմս)
Մ. Տ. zə-tlaǵu-m տեսածիս
Գրծ. zə-tlaǵu-mkė տեսածովս

Կատարյալ ժամանակով՝
Ո. zə-tlagu-ā-r տեսածս (զոր տեսի-ս)
Մ. Տ. zə-tlagu-ā-m տեսածիս
Գրծ. zə-tlagu-ā-mkė տեսածովս

Հարակատար ժամանակով՝
Ո. zə- tlaǵu-gā-r և այլն, որ վաղուց տեսել եմ

Ապառնի ժամանակով՝
Ո. zə- tlaǵu-no-r տեսնելիքս (որ պիտի տեսնեմ)

Այս բոլորի մեջ r, m, mkė հոլովական վերջավորություններն են, իսկ նրանցից առաջ դրվածները՝ ā, gā, no, բայական ժամանակ ցույց տվող մասնիկներ։

Վեպս կամ չուդ լեզուն ունի երեք ձևի դերբայ, առաջինը անէրևույթ, որ համարվում է գոյական և ընդունակ է հոլովվելու. օրինակ՝ andta «տալ», որից ստանում ենք հայերենի նման «տալու, տալով, տալուց, տալում, տալու մտադրությամբ և այլն» (իբր գերմ. geben, um zu geben, im geben, vermittelst des gebens և այլն)։ Մյուս երկուսը ածական են կոչվում և են ներկ. andab «donnant, տալով» և կատ. andnu «տված լինել», „avoir donné“ (Ujfalvy, 32—33)։

Աֆրիկյան շամբալա լեզուն ունի մի տեսակ աներևույթ, որ կազմվում է բայի արմատի սկիզբը դնելով ku մասնիկը. ինչպես՝ ku-iza գալ, ku-aša վառել (Rōsler, 5)։ Ճիշտ նույն ձևը կա նաև աֆրիկյան խասու լեզվում (Kotz, 6)։

Աֆրիկյան ահլոն լեզվով ներկա դերբայը կազմվում է երկու ձևով. ա) բայարմատի սկիզբը դնելով aǹwa, որ նշանակում է «նա որ». բ) բայարմատից հետո դնելով ǹoti «մարդ». օրինակ՝

aǹwanelege «ծառ կտրող»
ofefe-ǹoti «դաշտ գնալ մարդ (գյուղացի)»
(Westermann, 18)

Աֆրիկյան գանգ լեզվով ներկա դերբայը կազմվում է po «անձ» բառով, ինչպես՝

suna «ցույց տալ»—osunapo «ուսուցիչ». ato «բան, իր», boe «անել», ato-aboepo «բանվոր, աշխատավոր»։
(Westermann, 165)

Ինչպես կան լեզուներ, որոնք զուրկ են դերբայներից, կան լեզուներ էլ, որոնք ունեն բազմատեսակ դերբայներ։ Այսպես են, օրինակ, ալթայական խմբի լեզուներից տունգուսերենը, մոնղոլերենը և տաճկերենը։

Տունգուսերենն ունի դերբայ, որոնք են, բացի ներկա, անցյալ և ապառնի դերբայներից (եկող, եկած, գալիք), 3 տեսակ ներկա gerundiv, մի անցյալ gerundiv և մի gerundiv-terminativ։ Gerundiv-ի ներկայի 3 տեսակները կազմվում են—na,-mi և mnim մասնիկներով, անցյալը—ksa կամ—ha մասնիկով, իսկ վերջինը՝ — մասնիկով և ստացական հոդով։ Օրինակ՝

Gerundiv	ներկա առաջին՝	ana-na	
»	երկրորդ՝	ana-mi	
»	երրորդ՝	gamnin	
»	անցյալ՝	ana-ksa	քննելուց հետո
		ana-ha	

» terminativ biti-dé-lé-f այն միջոցին, որ գրում եմ, թրք. yazdəġəmda։

(Adam, Gram. tong. 61)

Մանջուրերենն ունի 6 դերբայ, որոնք են.

Gérondif	առաջին՝	arare	գրելու
»	երկրորդ՝	ara-ra-de	գրելիս
»	երրորդ՝	ara-ra-be	գրելով
»	չորրորդ՝	ara-ha-i	գրելու միջոցով
»	terminatif	ara-tala	մինչև գրելը
»	antérieur	ara-nggal	գրելուց առաջ

(L. Adam, 55)

Մոնղոլերենում գրական լեզուն զանազանում է երկու տեսակ ներկա դերբայ. անմիջական, որ կազմվում է kči մասնիկով, և տևական, որ կազմվում է dek մասնիկով, ինչպես medekči «իմացող» (այժմ միայն), mededek «իմացող» (միշտ)։

(Клюкин, 51)

Մոնղոլական բարբառներում դերբայները ավելի են շատանում։ Այսպես, դագուր բարբառում կան 1) ներկա-ապառնի ոչ-տևական դերբայ, 2) ներկա տևական դերբայ, 3) անցյալ անկատար դերբայ, 4) անցյալ կատարյալ դերբայ (Поппе, Dагур. Нареч., 167—168)։ Սրանցից դուրս կան նաև դերբայի նշանակություն տվող զանազան երանգներ, ինչպես պայմանական (եթե որ...),

վիճական уступительное (*թեև, թրք.* ise de), *միացուցիչ* (*անցյալ անկատար կամ կատարյալ իմաստով. օրինակ՝ նստած լինելով և շարունակելով նստել*), разделительное (*վերջացրած գործողություն է ցույց տալիս, ինչպես՝ նստելով, ուտելով, գալով, տեսավ*), слитное(*ներկայի իմաստով, ինչպես՝ ուտելիս*), овместное (*այնքան ժամանակ, որ, քանի որ..., ցորչափ*), последовательное (*երբ գնաց, երբ եկավ*), продольжительное (*շարունակելով գործը, ինչպես՝ քանի ուտում ենք...*)։

(Поппе, *անդ, 168—172 և* Клюкин, 72 *և այլն*)։

Թուրքերենում 17 դերբայ կա, որոնք են.

sev-dikde	*սիրելիս, սիրելու ժամանակ*
sev-dikje	*քանի սիրի*
seve-seve	*սիրելով-սիրելով, սիրելով հետզհետե*
sev-ejek	*սիրելիք, սիրելու*
sev-eli	*քանի սիրել է, սիրելուց ի վեր*
sev-en	*սիրող*
sev-er	*սիրող*
sev-eriken	*սիրելիս, սիրելու միջոցին*
sev-erek	*սիրելով*
sev-ib	*սիրելով*
sev-ijek	*սիրելու*
sev-inje	*սիրելուն պես*
sev-mek	*սիրել*
sev-mekde	*սիրելիս, սիրելու գործողության մեջ*
sev-megin	*սիրելուց, սիրելու պատճառավ*
sev-meli	*որ պետք է սիրել*
sev-miş	*սիրած*

սրանց վրա ավելացնենք նաև՝

չուվաշ.	sev-gan	*սիրելով,*
թաթար.	sev-ġač	*մինչև սիրելը,*
»	sev-ġuday	*սիրելիս*։

Ամերիկյան արավակ լեզուն ունի 10 դերբայ, որոնցից 5-ը աներևույթ, 5-ը՝ բուն դերբայ։ Աներևույթն ունի մի ներկա, 3 անցյալ և մի ապառնի. այսպես՝

ներկ.	aiyahaddin	*ման գալ (այժմ)*
անց.	aiyahaddinnibi	*ման եկած լինել (այսօր) կտր.*

	aiyahaddinnibūna	» » » (երեկ) հրկ.
	aiyahaddinnikuba	» » » (վաղուց) գրկ.
ապ.	aiyahaddinnipa	» գալու »

Բուն դերբայն էլ ունի մի ներկա, 3 անցյալ և մի ապառնի։— ներկ. «ման եկող», անց. «ման եկած» (այսօր, երեկ, վաղուց), ապ. «ման գալիք»։ Բոլոր բուն դերբայները ունեն եզ. ար. և իգ. և հոգ. ար. և ընդհանուր սեռ։

(Grevaux-Sagot-Adam,199, 202)

Թրքական օյրոթ լեզուն ունի շատ դերբայական ձևեր, ինչպես՝ kan-ող. կազմում է ներկա դերբայ, ինչպես aytkan, որ այժմ խոսում է.

ar որ պիտի անի (ապառնի դերբայ).

galak դեռ չեղած. ինչպես kalgalak դեռ չեկած. tan չեղած. ինչպես տճկ. gelmeden չեկած (միայն բացասականով).

la, le=տճկ. li. ինչպես geleli քանի եկել է.

p=տճկ. əb անելով. ինչպես al-əb առնելով.

kanča «քանի անում է». ինչպես ürengenče=թրք. öyrendikje քանի սովորում է։

(Тощакова, 32)

Շատ դերբայական ձևեր ունի նաև թուրքական շոռ լեզուն, որոնց մասին մանրամասն խոսում է Дыренкова (էջ 152—168)։

Ամերիկյան տենսա լեզուն ունի 7 դերբայ, որոնցից 4-ը աներևույթ, 3-ը՝ բուն դերբայ։ Աներևույթը ունենում է բացարձակ ձև, ներկա, անցյալ և ապառնի. օրինակ՝

üvlo «սիրել» բացարձակ ձևն է, որի վրա դնելով i, a, e ձայնավորները, ստանում ենք ներկա, անցյալ և ապառնի. այսպես՝

i-üvlo	սիրել այժմ (ներկա)
a-üvlo	սիրած լինել (անցյալ)
e-üvlo	սիրելու լինել (ապառնի)

Սրանց վրա ավելացնելով r, b, n վերջահար մասնիկները, ստացվում են ներկա, անցյալ և ապառնի դերբայները. այսպես՝

üvlo-r	սիրելով (այժմ)
üvlo-b	սիրած լինելով (անցյալ)
üvlo-v	սիրելու լինելով (ապառնի)

(Haumonté, 22, 23)

Դերբայական մի զարմանալի ձև ունի հիմալայան քամբու լեզվի բահինգ բարբառը։ Բայի որևէ դիմավոր ձևը, ստանալով me հետամասնիկը, դառնում է գոյական (այսինքն դերբայ). օրինակ՝

jā-ngā-si	կերա նրանց երկուսը
jā-ngā-si-me	այն երկուսը որ ես կերա
jā-yi	նա ուտում է ինձ
jā-yi-me	ես որ կերված եմ նրանից

(Grierson, հատ. 3, մասն 1, 330)

2. ԴԵՐԲԱՅԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆՈՒՄ

Հնդեվրոպական նախալեզվի մեջ, քերականական լեզվով խոսելով, դերբայ են կոչվում այն անվանական բառերը, որոնք թեև կազմված են բայական ձևերից և ունեն բայի զանազան հատկությունները, այն է ժամանակ, երևույթ (aspect), սեռ (voix), բայց բայ չեն, որովհետև զուրկ են բայական վերջավորություններից, որոնք արտահայտում են դեմքը։

Դերբայները հետևյալներն են.

1) Ներգործական դերբայ-ent-։ Այս կարգի դերբայները կազմվում են ներկայի և աորիստի բներից. մասնիկը երևում է ent, ont, nt, n̥t ձևերով. ժառանգների մեջ պահված է՝ կամրս. anra, -an, սանս, ant, at, an. լտ. ens, հն. ων, οντ-, հայ.-y, լիթ. ą (s) ձևերով, ինչպես հնխ. es «լինել» արմատից՝ դերբ. հնխ. s-ent-, s-n̥t-> կամրս. ašanra, սանս. s-an «լեալ», հոգ. ուղ. s-ant-as, եզ. սեռ. s-at-às, լտ. prae-s-ens «ներկա» (մերձ լեալ), հուն. ὤν, —հայ. s-y (<s-ont-s) «լեալ»։

Հնխ. bher «բերել» արմատից՝ հնխ. bhero-nt-«բերեալ»> սանս. bharan «բերեալ», հոգ. ուղ. bharant-as, եզ. սեռ. bharat-as, հն. φὲρων, φὲροντες φὲροντος, լտ. ferens, գոթ. bai-rands, հայ. bery.

Այս մասնիկն է, որ իրան. -ant-, զնդ. -ant-, հպ. -*ant —անցնելով և-ak մասնիկն ստանալով եղել է պհլ.—andak > պրս. خند —ende (xānende): (Spiegel, Gram. Huro. 116)

2) Ներգործական դերբայ-wes և -wet:-Այս կարգի դերբայները կազմվում են կատարյալի բնից։ Երկու ձևի մասնիկ կա, wes և wet, որոնք հոլովման ժամանակ ձայնդարձով լինում էին

-wos-,-us-և-wot-։ Ժառանգներից ունեն միայն արիականը, հույնը, բալթիկ-սլավոնականը, որոնց մեջ երևում է հետևյալ ձևերով. հնխ. -wes-ձևից, սանս. (ոնգականի հավելումով) եզ. ուղ.-vān, հոգ. ուղ.-wāms-as, եզ. սեռ.-úș-as, եզ. ուղ. իգ. -úș-i, հն. չեզ. -fóς, իգ.-ιτα (<υσ-τα), հսլ. իգ.-ŭș-i, լիթ իգ. -usi, հնխ. wet ձևից՝ սանս. ուղ. հլց.-vát, գրծ. vád-bhis, հոգ. ներգ.-vát-su, հն. սեռ. ϝότ-ος, գոթ.-woθs (պահված weitwoθs «վկա» ձևի մեջ)։

Օրինակներ.

Սանս. virik vàn «լքեալ», լիթ. իգ. lik-us-i.

Սանս. mamŗ-vàn «մեռեալ», իգ. mamr-usi, լիթ. իգ. mir-us-i, հսլ. իգ. mîr-ŭș-i.

Հն. μεμα-fώς «ըղձացեալ», δεδfι-fώς

Սանս. vid-vān «գիտացեալ», իգ. vid-ùșsī, հն. fιδώς, իգ. fις-ιτα «գիտացեալ».

Գամիս. supin ձևերում՝ ինչպես eššuwanri («լինել» բայից), ebbuvan կամ ebbuvanri (ep «անել» բայից).

Հայերենի մեջ ըստ իս տալիս է ու < -us-, որից ունենք ազդու, ճառու, կծու։

3) Հասարակ դերբայ—կազմվում է հասարակ բայերի ներկա, աորիստ և կատարյալ բներից։ Մասնիկն է-meno—, mno—, որ ձայնդարձի զանազան աստիճաններով պահված է ժառանգների մեջ. այսպես՝ սանս. māṇa—, հն. μενο—ς, զնդ.—mna—, լտ.—mnu—, հպրուս.—mana—, քուչ.—mane, թերևս և նույնից կրճատված ձևով՝ հսլ. mu, լիթ. ma. օրինակ՝

Սանս. bhara—māṇa—s «բերեալ»=հն. φερο-μενος, զնդ. yazə-mna-«յազեալ», լտ. vertu-mnus, հպրուս. poklausī-mana-s «լուեալ», քուչ. weskemane «ասացեալ», հսլ. vezomŭ «կառքով տարված»= լիթ. vēža-ma-s.

Նույնի փոխարեն կա նաև -āna- մասնիկը, որ գործածական է միայն արիականում, թե՛ ներկայի և թե՛ կատարյալի համար, ինչպես duh-āná-s «կթելով», bubudh-āná-s «զարթնելով», զնդ. γn-āna- «ճանաչելով»։

Ասացինք, թե դերբայները բայական նշանակություն ունեն։ Այդ երևում է հենց նրանից, որ ունեն ներկա, աորիստ և կատարյալ ժամանակ և ներգործական և հասարակ։ Նույնպես դերբայները ստանում են հաճախ այնպիսի խնդիրներ, որոնք հատուկ են բայե-

րին և ո՛չ թե գոյականներին. ինչպես քեզ (զքեզ) սիրողը փոխանակ քո սիրողը, բայց գոյականով՝ քո սիրահարը. սանս. dàtā vásv «տուող զինչս», բայց հյ. «տուող հարստութեանց»։

Հնդեվրոպական նախալեզում աներևույթի հատուկ ձև չուներ*. այդ երևում է նրանից, որ արդի լեզուները աներևույթի համար համապատասխան ընդհանուր ձևեր չունեն, այլ յուրաքանչյուրը առանձին ձև ունի։ Նույնիսկ հունարենը, ուր աներևույթը այնպիսի ընդարձակ գործածություն ունի, բարբառից բարբառ տարբեր կազմություն է ներկայացնում։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ աներևույթի փոխարեն գործ էր ածվում բայարմատը հոլովված ձևով, ինչպես ag-ei, որ ag— «ածել, բերել» արմատի տրականն է և հետևաբար նշանակում է բուն «յածումն, ի բերումն», նշանակում էր նաև «ի բերել, յածել» և դառնում էր աներևույթ։ Նույնպես և արմատի անվանական բունը, ինչպես հնխ. do «տալ» արմատից do-men- «տուչութիւն», տրական do-men-ei «ի տուչութիւն» կամ «ի տալ»։

Հետագայում ժառանգ լեզուները այսպիսի հոլովական ձևերից կազմեցին իրենց աներևույթները։ Այսպես, աներևույթի վերջավորությունններն են՝

կամխս.—war. ինչպես iyawar «անել»։

Սանս—tum, որ—tu մասնիկով անվանական բների հայցականն է. ինչպես i արմատից étum «երթալ», kr արմատից kàrtum «գործել»։

Սանս.—tvā մասնիկով կազմվում է դերբայ՝ հլ.—լով իմաստով. օրինակ՝ crutvā «լսելով». անշուշտ նախկին գործիական հոլով է՝ ըստ Whitnèy, Ind. gram. § 989:

Սանս.—ase, —mane, —vane, որոնք—as (հնխ.-es-), —man, van ձևով բների տրականի ձևերն են, ինչպես jivàse «ապրել», thi-yase. vid-máne «գիտենալ», dà-mane,. dā-vāne «տալ»։

Սանս.—dhyai, որ նույն է հունարենի—σθαι վերջավորության հետ, անշուշտ նույնպիսի տրականաձև է, ինչպես վեդ. váha-dhyai «կառքով տանել», հուն. φὲρεσθαν «բերել»։

Հպրս.—tanay (որից առաջացավ պհլ. պրս.—tan, —dan), ինչպես čartanay «փորել», nipaištanay «գրել»։

---

* Brugmann. ընդունում էր աներևույթի գոյությունը հնդեվրոպական նախալեզվում. սրա դեմ երկար խոսում է Meillet, BSL № 67, 182—185.

Հն.—ειν, որ -ς- անվանական ընի —en ածման ներգոյականն է, ինչպես φέρειν «բերել» <*bher-es,-en. սրա հետ նույն են սանս. —s-an-i ձևով ներգոյականները, որոնք ցույց են տալիս գործողության անունը։

Հն.—μεν, —μεναι, —ϝεναι. վերի սանս. mane, vane ձևերի պես հնխ. men, ven ըների տրական-ներգոյականն են, ինչպես δόμεν, δόμεναι, δοϝεναι, δοῦναι «տալ», ἴδμεν «գիտենալ»։

Հն.—σθαι հասարակ և կրավորական բայերի աներևույթի վերջավորությունն է, որ նման է սանս. dhyai ձևին։

Լտ.—re ներգործական բայերի անորոշն է կազմում, ինչպես dicere «ասել», amare «սիրել»։ Սրա հետ նույն է և —se վերջավորությունը, ինչպես es-se «լինել», dixisse «ասելու լինել» և այլն։ Երկուսն էլ պետք է լինեն —es ընի ներգոյականը, ճիշտ ինչպես վերը սանս. —ase. Այսպես և կրավորական —ri աներևույթը պետք է լինի նույն ընի տրականը։

Լտ. —i կրավորական բայերի անորոշն է կազմում, ինչպես՝ agi «բերվել», sequī «հետևել» և այլն ձևացած են բայանունների տրական հոլովից, ինչպես որ նույն գործածությունը կար հնդեվրոպական շրջանում. այսպես հնխ. ag-ei «բերել, ածել»; հմմտ. սանս. áj-e «ի տանել»։

Լտ. —turum, որ կազմում է ապառնի աներևույթ, ապահով մեկնություն չունի. ընդհակառակը —tum, —tu ձևով supin-ները (ինչպես datum, datu) -tu ընի հայցականն ու ներգոյականն են, ինչպես է սանս. tum.

Լատիներենի մեջ կան նաև ուրիշ աներևույթ ձևեր, որոնք առանձին գործածական չեն, այլ թաքնվում են զանազան բայաձևերի մեջ, ինչպես ferē-bam «բերում էի», manē-bam «մնում էի», mane-bo «մնալու եմ», salbo-da «օծել եմ, օծեցի», salbo- dedum «օծեցինք» (ինչպես ունի և Meillet, 242)։ Այս բոլորի մեջ առաջին մասը աներևույթ է, իսկ երկրորդ մասը էական բայի զանազան ձևերը։

Լատիներենը այնքան առաջ է տարել աներևույթի գործածությունը, որ մտցրել է լծորդության մեջ, ստեղծել է նրանց համար ժամանակ (ներկա, կատարյալ, ապառնի ներկայի և կատարյալի), սեռ (ներգ. և կրավ.), եղանակ և նույնիսկ աներևույթով նախադասություն։

Հյ.-ti և լիտ.-ti, ինչպես հյ. pi-ti «խմել» և լիտ. gér- i

«խմել», երկուսն էլ առաջացած հին տրական tei,-ti հոլովից (Meillet, BSL հտ. 32, № 96, էջ 191)։

Հպրուսերենում աներևույթի վերջավորություններն են-t,-tun. twei (Trautmann, 292)։

Որոշ լեզուներ աներևույթը ձեռք բերելուց հետո նորից են կորցրել. այսպես են արդի հունարենը և բուլղարերենը, որոնք աներևույթ չունեն (Vendryès. Le langage, 128)։ Նոր հունարենն աներևույթի տեղ գործ է ածում ստորադասական, ինչպես՝

կուզեմ լսել —θὲλω να ἀκούσω «կուզեմ լսեմ»։

Եվ այս այնքան է առաջ գնացել, որ գոյականի վերածելու ժամանակ, ինչպես որ աներևույթի վրա դրվում է չեզոք հոդ, նույնպես և ստորադասականի վրա, և այն՝ խոնարհմամբ. ինչպես՝

τὸ γράφειν կամ τὸ να γράφω, τὸ νά γράφης և լն. գրելը, գրում (իբր գրելս, գրելդ և այլն)։

Ռումիներենը ունի անորոշ, բայց ժողովրդական լեզուն սիրում է խոսել ստորադասականով, ինչպես vreau ša merg la scoală ուզում եմ դպրոց գնամ։

Այսպես նաև սերբերենում, ուր ունենք bijēš se kāzati վախում եմ ասել (գրական ձև), բայց ավելի հաճախ bòjīš se da kāzēš վախում եմ որ ասես (ժողովրդական ձև) (Meillet, Serbe, 188).

Անգլերենում աներևույթը բայի արմատն է և արաբերենի նման՝ նույն է գոյականի հետ, որ զանազանվում է նրանից միայն հոդի միջոցով. այսպես՝

the light	լույսը,	to light	լուսավորել
a telegraph	հեռագիր,	to telegraph	հեռագրել

Լատինը հնարել է նաև երկու ձև, որոնք գտնվում են աներևույթի և դերբայի միջև, այն է gerundivus և supinum, որոնք ձևով դերբայ են, իմաստով՝ աներևույթ։

Gerundivus-ը աներևույթ է, որ վերածվել է չեզոք սեռի գոյականի և ստացել հոլովական վերջավորություններ. ուրիշ խոսքով աներևույթը ուղղականն է, gerundivus-ը նրա խոտորնակ հոլովները։ Supinum-ը (նշ. կռնակի վրա պառկած, շեղ, թեքված) աներևույթի մի ձև է, որ ցույց է տալիս մի գործողություն, որ շարժման նպատակն է. ներգործականում նա հայցական է, կրավորականում՝ բացառական, երբեմն էլ տրական։ Ինչպես՝ eo lisum «գնում եմ խաղալ», difficile dictu «դժվարին ասելու» (այսինքն ասվելու)։

Պարսկերենում անորոշի ձևն է dan *կամ* tan, *բելուջերենում՝* —aγ. *օրինակ* t'ašaγ *«վազել»* (Gilbertson, 79—80), miraγ *«մեռնել»,* t'araγ *«վերադառնալ»,* nindaγ *«նստել»,* rasaγ *«հասնել»*.

Դերբայները, ինչպես գիտենք, միանալով օժանդակ բային, կազմում են զանազան բաղադրյալ ձևեր։ Պարսկերենում, նաև գերմաներեն և հատկապես շվեդերեն լեզվում, դերբայը գործ է ածվում հաճախ առանց օժանդակի և տալիս է դիմավոր բայի նշանակություն, ինչպես՝

պրս. In rafta u dīda *սա գնացել տեսել է*

գերմ. Als ich das Zimmer verlassen... *հենց որ ես սենյակը թողեցի...* Kaum dass er fortgegangen, kam... *հազիվ թե նա գնացել էր, եկավ...*

Այսպես է առաջացել նաև արդի ռուսերենի կատարյալը, որ հնապես միայն դերբայ էր (օժանդակը ջնջված է). օրինակ՝ я кушал *«ես կերել (եմ)»=կերա։*

Հին պարսկերենում և պահլավերենում էլ դերբայը գործածվում է անձնական դերանվան սեռականով, որից էլ առաջացել է արդի պարսկերենի կատարյալը՝ օրինակ՝ հպրս. manā kartam=*պհլ.* man kart *կամ դիմորոշով*—am kart *«իմ արարեալ»*>*պրս.* kardam *«արարի»* (Jensen, Neupers. gram. 142)։

Պարսկերենում կազմվել է նաև ապառնի դերբայի մի նոր ձև, որը առաջանում է անորոշ դերբայից (աներևույթից), ավելացնելով նրա վրա ī, *ինչպես* xōrdenī *«ուտելիք»։ Միանալով օժանդակի հետ՝ այս դերբայը տալիս է բարդ ապառնի կամ պարտավորական* (necessitivus, *ըստ* Jensen, *անդ, 161) ձև, ինչպես՝* رفتنی ام reftenī am رفتنی هستم refteni hestem *«գնալու եմ, պարտավոր եմ գնալ, պիտի գնամ»։ Այստեղ* ī *նույն է, ինչ որ ածականների ծայրին* ī *«ական» մասնիկը, օրինակ՝* āb-ī *«ջրային»։ Ըստ* Jensen, *անդ, 148, բաղադրյալ ապառնիի այս ձևը նոր կազմություն ունի և գործածական է միայն ժողովրդական լեզվի մեջ։*

Ինչպես բայը, նույնպես և դերբայը կարող է ստանալ զանազան երևույթներ (aspect)։ *Այս կողմից հարուստ է, օրինակ, ռուսերենը, ուր ունենք՝*

Ներկա դերբայ,—стучащій *խփելով*
անցյալ » (անկատարական) стучавшій *խփած լինելով*
» » (կատարելական) постучавшій *խփած լինելով*

ԳՐԱԴԱՐԱՆ

անցյալ դերբայ	(վայրկենական)	стукнувшій	մի անգամ խըփած լինելով
» »	(հաճախական)	постукивавшій	հաճախ խըփած լինելով

gérondif	(ներկա). —	стуча	խփելով
»	անց. անկ.	стучав	«խփած լինելով»
»	» կատ.	постучав	«խփած լինելով»
»	» (վայրկենական)	стукнув	«խփած լինելով»

Ռուսերենում անորոշ դերբայն էլ է իբրև դիմավոր գործածվում և այն՝ պարտավորականի նշանակությամբ. ինչպես՝ им пить պետք է որ նրանք խմեն, теперь мне итти այժմ ես պետք է որ գնամ (բառացի՝ նոցա ըմպել, այժմ ինձ երթալ)։

Պորտուգալերենում անորոշ դերբայը զարմանալի կերպով ստանում է մինչև անգամ դեմքերի բայական վերջավորություն, այն է՝ եզակի Բ դեմքում es, հոգնակի Ա դեմքում mos, հոգնակի Բ դեմքում des, հոգնակի Գ դեմքում em, իսկ եզակի Ա և Գ դեմքերը մնում են անփոփոխ, օրինակ՝

e preciso nos **ficarmos** em casa
պետք է որ մենք մնանք ի տան
antes de **irmos** a casa, queremos ainda beber
նախքան որ գնանք ի տուն, ուզում ենք դեռ խմել
fareis bam· em **irdes** para casa
կանեիք լավ երթաք ի տուն։

(Anstett, 294)

Այս նախադասությունների մեջ ficarmos «մնանք», irmos «գնանք», irdes «երթաք» անորոշ դերբայ են, բայց ստացել են բայական դեմքերի mos, des վերջավորությունները, իբր թե «մընալ-անք, գնալ-անք, երթալ-աք»։

3. ԴԵՐԲԱՅԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Անորոշ դերբայը (աներևույթը) հայերենի մեջ կազմվում է—լ մասնիկով, որ կցվում է ներկայի բունին, ինչպես բերել, ճանաչել, աղալ, գողանալ, թողուլ, առնուլ և այլն։ Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, բունի ձայնավորը մնում է անփոփոխ։

Անորոշի վերջավորության պատահաբար նման են.

Ամերիկյան լուկատեկան լեզվով—al, —el, օրինակ yacuntall «սիրել», talel «գալ», binel «երթալ» (Kingdom, 30):

Ինգուշերեն —ăr, ինչպես deşăr «ուսանիլ», lovrăr «խաղալ» և այլն (Мальсаров, 59)։

Միայն երկրորդ լծորդությունն է, ուր թե՛ Ա և թե՛ Բ տիպարի մեջ բնի ձայնավորը ի չէ, այլ Ա լծորդության նման ե: Այսպես՝ խօսել, ուսանել (և ո՛չ թե խօսիլ, ուսանիլ):

Այս երևույթը շատ հին է, և մեսրոպյան շրջանի գրականությունը չի ճանաչում -իլ,-անիլ վերջավորությամբ աներևույթ։

Սրա շատ հասարակ ապացույցն այն է, որ հոլովման ժամանակ խօսիլ, ուսանիլ տիպի բայերի անորոշը դառնում է խօսելոյ, ուսանելոյ (ե-ով), որոնց տեղ պիտի ունենայինք խօսլոյ, ուսանլոյ (ի ձայնավորի անկումով, ինչպես ունենք թողլոյ, զգենլոյ՝ ու ձայնավորի անկումով)։ Բայց այսպիսի ձևեր (խօսլոյ, ուսանլոյ) ո՛չ մի տեղ չկան, նույնիսկ հոմաբան դրականության մեջ։

Մենք գիտենք, որ Ա լծորդությունը կրավորականի է վերածվում եմ, անեմ վերջավորությունը դարձնելով իմ, անիմ: Աներևույթի մեջ սակայն ել, անել մնալով անփոփոխ՝ ստացվում է երկու անպատեհություն. առաջին այն, որ ամբողջ բայի խոնարհման և միակ աներևույթի մեջ մտնում է անհամաձայնություն. այսպես՝ խօսիմ, խօսիս, խօսի և այլն և այլն, բայց խօսել, խօսելոյ և այլն։ Երկրորդ այն, որ Բ լծորդության ներգործականն ու կրավորականը շփոթվում են իրար հետ և օրինակ՝ բերել նշանակում է հավասարապես թե՛ «բերել» և թե՛ «բերվել»:

Դասական շրջանը լռելյայն տարավ այս երկու անպատեհությունները։ Միայն երկրորդ անպատեհության դեպքում, անխուսափելի շփոթության առաջքն առնելու համար, տեղ-տեղ ստիպված էին խուսափողական դարձվածների դիմել, ինչպես՝ պաշտել, պատժել, մկրտել, չարչարել, կոխել ներգործականների դեմ իբրև կրավորական գործ էին ածում պաշտօն առնուլ, ի պատիժս մտանել կամ կրել պատիժ, կնիք առնուլ, չարչարանս ընդունել, կոխան լինել և այլն և այլն։

Ուշ ժամանակ հնարվեց և հոմաբան դպրոցը նվիրագործեց Բ լծորդության աներևույթի -իլ, -անիլ վերջավորությունը, որով միանգամայն ջնջվեցին ու վերացան կրկնակ անպատեհությունները։ Այս նորոգության հետևեցին նույնիսկ չեզոք բայերը (մեռանիլ, տրտմիլ, նստիլ, երկնչիլ և այլն), որոնք կրավորականի հետ շփոթվելու երկյուղ էլ չունեին։ Այնուամենայնիվ ձևափոխությունը ար-

մատական չեղավ և այս կարգի անորոշների հոլովումը մնաց նախկին ձևով. սեռ. մեռանելոյ, տրտմելոյ և այլն, և ո՛չ բնավ մեռանլոյ, տրտմլոյ և այլն։ Այսպիսի ձևեր «անլուր» են մեր մատենագրության մեջ (Զալխ., 124)։

Այնուամենայնիվ այսօր էլ մեր բարբառներում անորոշը լինում է հաճախ մեռնել, նստել և այլն ձևով, թեև կարելի է հավասարապես ասել մեռնիլ, նստիլ և այլն։

Աներևույթը հոլովվում է իբր ո բուն, հետևյալ ձևով.

Ո. սիրել	հատանել	խօսել	ուսանել
Ս. Տ. սիրելոյ	հատանելոյ	խօսելոյ	ուսանելոյ
Հ. զսիրել	զհատանել	զխօսել	զուսանել
Բ. ի սիրելոյ	ի հատանելոյ	ի խօսելոյ	յուսանելոյ
Գ. սիրելով	հատանելով	խօսելով	ուսանելով

Ո. աղալ	գողանալ	թողուլ	զգենուլ
Ս. Տ. աղալոյ	գողանալոյ	թողլոյ	զգենլոյ
Հ. զաղալ	զգողանալ	զթողուլ	զզգենուլ
Բ. յաղալոյ	ի գողանալոյ	ի թողլոյ	ի զգենլոյ
Գ. աղալով	գողանալով	թողլով	զգենլով

Դիտողություն 1) Բ լծորդության անորոշ դերբայը վերջավորվում է -ել, -անել. հետնաբար կա -իլ, անիլ, բայց հոլովման մեջ չի մտել։ 2) Սրանց հոգնակի հոլովումը չկա։

Ինգուշերեն լեզվում աներևույթը հոգնակի չունի. այն ժամանակ միայն նա կունենա հոգնակի, երբ նա զուտ գոյական դարձած լինի, ինչպես däär «ուտելիք, կերակուր», հոգնակի däaraš, ovzär «հարսանիք», հոգ. lovzäräš (երկուսն էլ բուն աներևույթ են däaz «ուտել» և lavzär «խաղալ» ձևերից) (Мальсаров, 60)։

Անորոշ դերբայը ժամանակ չունի. սրա համար էլ կոչվում է անորոշ. նրա ժամանակը որոշվում է գործածության տեղի համաձայն՝ ինչպես գրաբարում, նույնպես և աշխարհաբարում. օրինակ՝

հույս ունի հաղթել (ներկա)
հույս ուներ հաղթել (անկատար)
հույս կունենա՞ս հաղթել (ապառնի) և այլն։

Աներևույթը գործ է ածվում իբր գոյական և ստանում է սեռական հատկացուցիչ, ինչպես «ի կատարել աւուրց վերանալոյ նորա» (Ղուկ. Թ 51)։ Բայց կարող է նաև իբրև բայ՝ ստանալ լրացուցիչ,

ինչպես՝ «Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց» *(Ղուկ. Թ 60)*. «Իշխանն Յունաց ի նալածել կայր զեկեղեցի Աստուծոյ» *(Ագաթ. § 38)*։

Այստեղ էլ երևում է դերբայի իրական բնույթը, գոյական և բայ միանգամայն։

Աներևույթից կազմված է երկու ածական.

1. -ի *մասնիկով, որ ածականակերտ սովորական մասնիկ է, ինչպես* սիրելի, ուտելի, *նշ. որ կարելի է սիրել, ուտել և այլն։*

2. -ոց *մասնիկը, որ ծառայում է իբրև ապառնի դերբայ, ինչպես* բերելոց, *«որ պիտի բերե կամ պիտի բերվի»։*

Այս երկուսի գործածության մասին կանդրադառնանք քիչ հետո։

Անցյալ դերբայի մասնիկն է -եալ, *որ իրապես նույն* -լ *մասնիկն է, որ կցվում է* -եա- *ձևի վրա այն բայերի մեջ, որոնց ներկան է* -ե- *կամ* -ի- *բնով և* aorist*-ը* -եաց *ձևով (այսպես* գործ-եաց, գործեալ*), և այն բոլոր բայերի մեջ, որոնց* aoriste*-ը արմատական է, ինչպես* առեալ *(կտր.* առի*)։ Անշուշտ այստեղից է, որ* -եալ *անցել է այն բայերին, որոնց դերբայը կազմված է* ց*-ով* aoriste*-ից, օրինակ* բացեալ *(*բացի*-ից),* զգեցեալ *(*զգեցայ*-ից),* ասացեալ *(*ասացի*-ից) և այլն։*

Աներևույթի հետ նույն լինելով՝ -եալ *մասնիկն ևս հոլովվում է իբրև* ո *բառ։ Նշանակության կողմից, իբրև ածական, թե՛* intransitive *է և թե՛ կրավորական, ինչպես* «այր ի նանդերձս փափկութեան զարդարեալ» *(Ղուկ., Ե 25)։*

-եալ *մասնիկը դրվում է՝*

Աորիստի բնի վրա, ինչպես նատի—նատեալ, կացի—կացեալ, յուսացայ—յուսացեալ, ասացի—ասացեալ:

Երբ ներկան -եմ, -իմ *ձևով է և աորիստ* -եցի, -եցայ, *անցյալ դերբայում* ց *չի լինում, ինչպես* արձակեմ, արձակեցի—արձակեալ:

Մի խումբ բայեր, որոնք վերջանում են -յեմ, -չեմ, -նեմ, -ջեմ-յիմ, չիմ, նիմ, ջիմ, միմ, րիմ, *ստանում են այս դեպքում դարձյալ* ց, *ինչպես՝*

կոչեմ—կոչեցի—կոչեցեալ
աղաչեմ—աղաչեցի—աղաչեցեալ
ամաչեմ—ամաչեցի—ամաչեցեալ
անեմ—անեցի—անեցեալ
ննջեմ—ննջեցի—ննջեցեալ
նայիմ—նայեցայ—նայեցեալ

կամիմ—կամեցայ—կամեցեալ
սիրեմ—սիրեցի—սիրեցեալ

Բայց երբեմն նաև երկու ձևերը գործածական են, ինչպես խօսեալ—խօսեցեալ, այրեալ—այրեցեալ, ճանեալ—ճանեցեալ, կարծեալ—կարծեցեալ:

Ընդհանրապես շատ քիչ դերբայ կա -եցեալ ձևով. ըստ Այտընյանի (էջ 451) մեծ մասամբ վերջահոլովներն են, որ այդ ձևն են ստանում, ինչպես սրբեցելոց, պաճեցելոյ, աղացելոյ, կրթեցելոյ և այլն։

Երբ արմատը -եայ է վերջանում, բայը չունի դերբայ և այդ ձևը փոխ է առնում անցողականից, ինչպես՝

փախչիմ—փախեայ—փախուցեալ
մատչիմ—մատեայ—մատուցեալ

Ապառնի դերբայի մասնիկն է -լոց, որ նույն անորոշի -լ մասնիկն է, բնի վրա ավելացրած -ց վերջավորությամբ։ Այս -ց, -ոց մասնիկը(<-os-ko-)նույն է այն -ոց մասնիկի հետ, որ գտնում ենք կտրոց, ճեծանոց և այլն բառերի մեջ, իբր թե «-լիք» (ըստ Sommer, WZKM 31 (1924), 105—112, Postpositionen in Armenischem)։

Սրանով էլ կազմվում են բաղադրյալ ժամանակներ, ապառնի նշանակությամբ, ինչպես բերելոց եմ. ունի թե՛ ներգործական և թե՛ կրավորական նշանակություն, օրինակ՝ Յովհ. ԺԳ 21. «Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս». բայց Ղուկ. Ժ 44. «Որդի մարդոյ մատնելոց է»: Անդեմ դարձվածը, որ սովորական է -եալ ձևով դերբայների համար, այստեղ չի պատահում։

Այս -լոց դերբայը չի հոլովվում՝ հակառակ մյուս տեսակի դերբայների։

Աֆղաներենի մեջ էլ անորոշի վերջավորությունն է -ą կամ ăl, ինչպես xandăl «խնդալ», vatạl «թռչիլ», բայց բնավ կապ չունի հայերենի հետ, որովհետև ծագում է անց. դերբ. ձևից Grun d. Ir, I 212, Darmesteter, Ghants pop., XCIII)։

Անորոշի -al և -il վերջավորություն գտնում ենք նաև դրավիդյան լեզուների մեջ, բայց բոլորովին պատահական է (Caldwell, 534, 539), ինչ. Թամիլ. poí-al «կրել, տանել», tar-al «տալ»։

Թե՛ անորոշի -լ, թե՛ անցյալ դերբայի -եալ և թե՛ ապառնի դերբայի -լոց մասնիկը առաջանում են միևնույն -լո- մասնիկից, որ գտնում ենք նաև սլավականի կատարյալ ժամանակների դեր-

բայի մեջ, ինչպես nes-lŭ jesmĭ «բերեալ եմ», բառացի «բերող եմ»։ Դերբայի սեռականով գործածությունը հայերենի մեջ, որ առաջին հայացքով տարօրինակ է թվում, բացատրվում է նրանով, որ դերբայը նախապես գոյական է եղել. **նորա բերեալ է** «նա բերել է» նշանակում էր նախապես „il y a porter de lui“ (կա նրա բերումը). աներևույթը և դերբայը երկրորդաբար են միայն տարբերվել իրարից։ Նույն -lo- մասնիկը կա նաև ուրիշ լեզուների մեջ և հատկապես թոխարականում, ուր մեծ դեր է կատարում և կազմում է ներկա և անցյալ դերբայներ։ Այսպես, լատիներեն —ulus և հն.—ηλος, —ωλος, —ωλη. օրինակ՝ լատիներեն tremulus «դողդոջուն», հն. στρεβ-λό-ς «դարձած», μιμλός «նմանող», σιγη-λό-ς «լուռ», σκόπελος «ժայռի ծայրը» (բառացի «դիտարան»), αἴθαλος «ժանգ» և այլն։ Բայց հայերենն ու սլավը միակն են, ուր -lo- մասնիկը տվել է անվանական ձևեր, որոնք կցվել են բայական բներին։ Ավելին կա. սլավական ձևը (nas-lŭ) սկզբնապես գոյական է եղել, լատինը (tremulus) գործող անձ է ցույց տալիս, հույնը գոյական կամ ածական է. բոլորն էլ մասնիկը կցում են արմատի կամ անվանական բնի վրա։ Այսպես հսլ. nes-lŭ կազմված ուղղակի nes- արմատից. իսկ հայերենը իր անվանական ձևը կազմել է աորիստի բնից (**-եալ**<հնխ. is-ā-lo-), ինչ որ լեզվի կազմության մեջ բոլորովին մի նոր քայլ է հնդեվրոպական տեսակետից (Marìès, REA, 1930, X, 170—171)։

-եմ, -իմ լծորդության բայերի մի մասի դերբայը կազմվում է **-եցեալ** մասնիկով՝ փոխանակ **-եալ**, ուր **եա** մասը կրկնված է երկու անգամ (**սիրեցեալ** <**սէր-եա-ց-եալ**)։ Անշուշտ այն ժամանակ, երբ կազմվում էին այս ձևերը, այս **-եց** մասնիկի մեջ զգալի չէր is-ā-։ Ի՞նչ պատճառով դերբայի մեջ ներմուծվեց սահմանականի **ց** ձայնը. անշուշտ՝ գլխավորապես տարբերություն դնելու համար ներգործական և կրավորական ձևերի միջև։ **-եմ** և **-իմ** լծորդության բայերի հրամայականը լինում է ներգ. **սիրեա**, կրավ. **սիրեաց**, որոնց մեջ կրավորականի նշանն է **ց**, որից զուրկ է ներգործականը։ Լեզուն վերցրեց հենց այս զանազանությունը և կազմեց նրա միջոցով՝ **սիրեալ** իբր «սիրած» և **սիրեցեալ** իբր «սիրված»։ Այս կողմից իբր դրդիչ էին հանդիսանում մի կողմից անցողական բայերի **-ուցեալ** դերբայի օրինակը, և մյուս կողմից ձայնաբանական մի հանգամանք. **-եցեալ** ձևով դերբայ ունեցող բայերից շատը հանգում է **-յեմ, -շեմ, -ճեմ, -չեմ** (**-յիմ, -շիմ, -ճիմ, -չիմ**) և անշուշտ ձայնապես ավելի հեշտ էր **յ, շ, ճ, չ** բաղաձայնները կցել **ե** ձայնա-

վորին, քան թե եա երկբարբառին (աճ-եալ, աճ-եց-եալ) (Mariès, REA, 1930, X, 173—174)։

Դերբայի համար ունենք նաև -ող մասնիկը։ Սրա հետ պատահական նմանություն ունի բելուջ. -ox մասնիկը, որ նույնպես կազմում է «գործող անձ», ինչպես taş-ox «վազող» (Gilbertson, 87). -ող մասնիկը հոլովվում է ա բնով և գործածվում է ներկայական նշանակությամբ, ինչպես բերող: Բայց այս մասնիկը հնագույն հայերենում քիչ է գործածական։ Այնպիսի մի դարձվածի մեջ, ուր հունարենը դնում է այսպիսի մի դերբայ, հայը դնում է -եալ ձևով մի դարձված, ինչպես Յովհ. Թ 8. «Որոց տեսեալ էր զնա» οι θεωροῦντες αὐτόν τό προῖρον։ Ըստ Meillet-ի, այս մասնիկն էլ անշուշտ նույն է նախորդ -լ, -եալ, -լոց մասնիկների լ- մասի հետ։ Բայց տարբեր է -աւղ, որ ծագում է հնխ. tel ձևից։ Իմաստի նույնության պատճառով այս երկուսը միշտ շփոթվում են իրար հետ և համարվել են վերջապես միևնույն մասնիկը։

-ող մասնիկը դրվում է ընդհանրապես կատարյալի բնի վրա, ինչպես լացող, բացող, զլացող, ատեցող, կերող, աղացող, արարող, ծնող, մոռացող, ընթերցող, պաճեցող, երգեցող, իշխեցող և այլն։ Քիչ անգամ պատահում է ներկայի բնից, ինչպես կարող, գիտող, ասող, լսող, մուրող, ոrսող (փխ. մուրացող, որսացող) և այլն։ Ա լծորդության ա տիպարի մեջ երկու ձևով էլ կա, ինչպես տեսող և տեսանող, ուսող, ճարկանող և այլն, բայց ավելի հաճախ կատարյալից, ինչպես սպանող, մտող, ծնող: Դասական շրջանից դուրս են ներկայի բնով կազմված լուանող, իմանող, ունող, կիզանող, լինող, առնող, մատնող, փախչող և այլն։

Ասացինք, որ -ող ձևով դերբայները քիչ են գործածվում ընտիր հայերենում. ամեն բայ չունի -ող ձևով դերբայ, եղածներն էլ ներգործական կամ չեզոք են, իսկ կրավորականները բնավ չունեն -ող ձևով դերբայ։ Սակայն այդ սահմանափակումով էլ -ող վերջավորությամբ ներկա դերբայները հաճելի չեն հին հայերենին, և հեղինակները սիրում են վերածել հարաբերական նախադասության. այսպես, օրինակ, Աստվածաշնչից զանազան օրինակներ՝ համեմատությամբ հույն բնագրի հետ. ինչպես՝

«Զի ոչ է ծառ բարի, որ առնէ պտուղ չար» (Ղուկ., Զ. 43)= հն. οὐ γάρ ἐστι δένδρον καλόν ποιοῦν καρπόν σαπρόν, որի ճիշտ թարգմանությունն է «Ոչ զի է ծառ բարի արարող պտուղ չար» (Թիրյաքյան, Հայ-Երան. ուս. 175).

ησαν γάρ οἱ ἐρχόμενοι καὶ οἱ ὑπάγοντες πολλοί=«Զի էին բազումք

որ երթալին և գալին» (ըստ հն... «Զի եկողքն և գնացողքն բազումք»)։

τὸν ἀποστείλαντά με = «զայն որ առաքեացն զիս» (ըստ հուն. «զառաքողն զիս»)։

καὶ τινες τῶν ἐκεῖ ἑστηκότων = «և ոմանք յորոց անդն կային» (ըստ հուն. «և ոմանք անդ կացելոց») (Թիրյաքյան, անդ. 177—178)։

-ող մասնիկի փոխարեն, իբրև ավելի ընտիր հայերեն, գործածվում է -իչ մասնիկը, որ ընդհանրապես դրվում է ներգործական բայերի վրա, ինչպես արարիչ, կեցուցիչ, տուիչ, վարիչ, առաքիչ, ստացիչ, տածիչ, տանջիչ, կիզիչ, բնակիչ և այլն։ Անցողական բայերը միշտ կարող են ստանալ -իչ մասնիկը, ինչպես՝ գնացուցիչ, զովացուցիչ ևն։ Հոլովվում է ի-ա խառն հոլովմամբ։

Հաճախ գործածվում է նաև -լի մասնիկը, որ հոլովվում է -լւոյ, -լեաց ձևով, ինչպես զենլի, զենլեաց, սիրելւոյ, սիրելեաց: Հնագույն հայերենում ներգործական և չեզոք էր, հետո զարմանալի կերպով դարձավ կրավորական և այժմ գործածական է միայն վերջին ձևով։ Դասական շրջանում երկու ձևով էլ կա և հաճախ իմաստի շփոթության տեղիք է տալիս։ Օրինակ՝ ատելի բուն նշանակում է «ատող», հետո եղավ «ատված». այսպես «Բարի արարէք ատելեաց ձերոց» նշանակում է «լավություն արեք ձեզ ատողներին», իսկ օր. ԻԱ 15 «Մինն ի նոցանէ սիրելի և միւսն ատելի»՝ ունի «ատված» իմաստը։ Նույնպես այս խոսքի մեջ սիրելի կրավորական է, մինչդեռ «Ողջո՛յն տուր սիրելեաց մերոց հաւատովք» խոսքի մեջ սիրելի նշանակում է «սիրող», ըստ որում հույն բնագրում գրվում է «ողջունեա՛ զսիրողսն մեր»։ Այսպիսի ներգործական իմաստ ունեն դարձյալ՝

«Լսելիք և առնելիք օրինաց»=«Օրենքը լսողներն ու կատարողները» (խորթ ձև է արարող զօրէնս):

«Սիրելիք անուան քո»=«Քո անունը սիրողները»
«Ջարեաց գործելի»=«Ջարիք գործող»
«Ծնանելիք»=«ծնող», «բերելիք»=«բերող»

«Մտանելեացն և ելանելեացն»=«մտնողների և ելնողների» և այլն։

Երբեմն էլ անփոփոխ՝ էական բայով է գործածվում, ինչպես «Ջնոյն ասելի է»=«Նույնը պետք է ասել»։

Միջնադարյան հայերենում -ող *և* -իչ *մասնիկները ընդհանուր գործածություն չունեն։ Սովորական հայերենում* -ող *ձևի փոխարեն դրվում էր* որ *դերանունով կազմված դիմավոր բայ, ինչպես՝* Որ սիրէ զիս *«զիս սիրողը»,* որ զձեզ անարգէ *«ձեզ անարգողը»,* որ շարժին և փոփոխէ *«շարժվող և փոփոխվող»։*

-ող *մասնիկը հին հայերենում ցույց էր տալիս բնություն կամ սովորություն, ինչպես՝* սպանող է այրս. թոյնք սպանողք, այր բարկացող. ցուլ հարկանող. այր կերող և արբեցող. բամբասող. զրկող. զօր պատերազմող *և այլն։ Սրանց մեջ* -ող *ածական է կազմում։ Ունենք նաև պարզ գոյականներ, ինչպես* ծնողք, հնձողք, կթող:

-ող *մասնիկը պատկանում է* ի-ա *խառն հոլովման և հոլովվում է հետևյալ ձևով.*

Ո.	*երգեցող*	*երգեցողք*
Ս. Տ.	*երգեցողի*	*երգեցողաց*
Հ.	*զերգեցող*	*զերգեցողս*
Բ.	*յերգեցողէ*	*յերգեցողաց*
Գ.	*երգեցողաւ*	*երգեցողօք*

Ունենք վերջապես -ուն *մասնիկով բայական ածականներ, ինչպես* գնալ—գնայուն, ասել—ասուն, *որոնց բուն իմաստն է «գնացող, խոսող» և այլն։ Այս մասնիկը թերևս նույն է արիականի անբուն տիպի հասարակ դերբայի* -āna- *մասնիկի հետ։ Սրա շարունակությունն է պրս.* -ān *ինչպես* xendan *խնդացող,* dihān *տվող և այլն, որ է պհլ.* -ān *ներկա դերբայի զնդ.* -ana- =*սանս.*-āna- *վերջավորությունը՝ հասարակ* (medial) *բայերի մեջ։ Բայց հայերենն անկախ է։*

Ներկա դերբայի մասնիկ է նաև -ան, *որ ըստ իս հնխ.* -nt- *ձևն է։ Հնագույն հայերենում կար այս մասնիկը, որից ունենք* վիպասան, կռան, խցան, խթան. *մի քանի տեղ* -լան, *ինչպես* խափլան *(Եղև.)։ Նոր լեզվի մեջ շատ սովորական է դարձել* հաչան, փչան, կծան, խափլան «խաբող» *(Երև.),* ուտան, ուզան, բերան, ածան *և այլն։ Սովորական է գործիքների համար, ինչպես* ցաքան, հեսան:

Դերբայից անբաժան է բայանունը։ Այս բառով հասկանում ենք այն բառերը, որոնք ունեն դերբայի իմաստ, բայց ձևով բոլորովին տարբեր են։ Դրանցից մի մասը գոյական է և մի մասը ածական (այս դեպքում կոչվում է բայածական)։ Հոլովվում և հոդ են ստանում, միևնույն ժամանակ բայի նման խնդիրներ են ստանում, բայց զուրկ են ժամանակից։

Հնխ. մասնիկն էր -tvo-, -tvā, *որ մերթ տալիս է ժառանգ լեզուների մեջ բայանուններ և մերթ իսկական գոյական. հմմտ.*

սանս. kartva-1. *պարտականություն, 2. անելով*
հսլ. žętva *հունձք,* jastva *ընթրիք,* gonitva *հալածում*
սանս. hantva *զարնելով*
զնդ. staobwa *գովեստ*
գոթ. wahtwa, wahtwo *պահպանում (գերմ.* wacht)
գոթ. frijaßwa *սեր*

Նույնի վրա կարելի է ավելացնել նաև -na- *մասնիկը և կըցացվի սանս.* tvana, *հուն.* συνα, *ինչպես*

հուն. δουλοσύνη — *ծառայականություն*
սանս. martyatvanā — *մարդկություն*
զնդ. ā-staobwana — *գովեստ*

Հայերենի մեջ բայանունը լինում է կամ պարզ արմատ (ինչպես **դարձ, էջ, ելևմուտ, ցոյց, աւեր, տրտունջ**) *և կամ զանազան մասնիկներով կազմված ձևեր։ Այսպես՝*

1\. **-ք** *մասնիկով, ինչպես* **էջք, ելք, մուտք, վայելք, ընթացք, խաղացք, գնացք, նայեացք.**

2\. **-ութիւն (-ություն)** *մասնիկով, ինչպես* **յափշտակութիւն, շինութիւն, քարոզութիւն, մկրտութիւն** *և այլն։ Այստեղ պետք է նկատել, որ ամեն* **-ութիւն** *մասնիկով բառ բայանուն չէ, այլ նրանք միայն, որոնք կազմված են բայի արմատից։ Այսպես վերի բառերը բայանուն են, որովհետև կազմված են* **յափշտակել, շինել, քարոզել, մկրտել** *բայերից, իսկ օրինակ՝* **մեծութիւն, ծերութիւն, մարդկութիւն** *բայանուն չեն, որովհետև* **մեծ, ծեր, մարդ** *բայ չեն։*

3\. **-ուստ, -եստ** *մասնիկներով, ինչպես* **փախուստ, կորուստ, ուտեստ, պանեստ:**

4\. **-անք** *մասնիկով, ինչպես* **սփոփանք, անարգանք:** *Այս* **-ան-ք** *մասնիկը նույնն է թվում պրսկ.* -an(دوان devān *«վազելով»,* خیزان xizān *«վեր կենալով») դերբայական մասնիկի հետ, որն ըստ Բենվենիստի* (Gram. sogd., 55) *նույն է սոգդ.* -ān *ներկա դերբայի վերջավորության հետ։*

5\. **-ած** *կամ* **-ուած** *մասնիկով, ինչպես* **շինած, աւրած, շինուած, յաւելուած, նարուած:**

6\. **-ունդ** *մասնիկով, ինչպես* **սնունդ, ծնունդ:**

7\. *Զանազան այլ մասնիկներով, ինչպես* **յագուրդ, տեսիլ, երկիղ** *և այլն։*

Բայց այս բոլորից շատ ավելի սովորական են -իւն և -ումն մասնիկներով կազմված բայանունները, ինչպես շաչիւն, պայթիւն, շառաչիւն, բախիւն, գոչիւն, դղրդիւն, սօսափիւն,—գոչումն, շարժումն, փոփոխումն, դողումն, պայթումն, շառաչումն, սոսկումն և այլն։

Բայածականներն էլ կարող են լինել՝

1. Արմատական բառ, ինչպես ճմուտ, կիրթ, փորձ, զգոյշ և այլն։

2. Ածանց բառ, ինչպես գիտուն, զգայուն, շարժուն, փախստեայ, գործունեայ, երկիւղած, կոխան, վիրավոր և այլն։

3. Բարդ բառ, ինչպես չարախօս, վնասակար, կանխագէտ, լուսատու, առատաբեր, մշտաբուխ, շատախօս, քաջատես և այլն, որոնք կազմված են զանազան մակբայներով կամ մակբայաբար առնված ածականներով։

4. Սրանց բացասականները, ինչպես տգէտ, անգէտ, անգործ, անհաս, անքննական և այլն։

Այս բառերը կազմված են բայերի արմատներից, որոնք և պատճառ են խնդրառության։ Նույնիսկ վնասակար, ինչպես և օգտակար, կազմված են պհլ. kār «գործել» բայարմատից։

Այս բոլորի խնդրառության մասին կխոսենք Շարահյուսության մասում։

4. ԴԵՐԲԱՅԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Աներևույթը միջին հայերենում պահեց գրաբարի սովորական վերջավորությունները։

Karst 342 տալիս է հետևյալ օրինակները.

Ա լծ.—ասել, գիտել, գրաւկնել, ծախել, կարգել, ճանչել, ուզել, պաճրնչել, վճարել, դարձրնել, իջցնել, կեցցրնել, բլայթել, մունետկել, ջալրնչել և այլն։

Բ լծ.—դատստնիլ, ճագնիլ, փօշամնիլ, ապրիլ, դատիլ, ճաշտիլ, այրիլ (որոնց մոտ կային նաև հին գրաբարի ապրել, դատստնել, ծնանել, կռվել, մեռնել, ունել, լինել ձևերը, թեև սրանց ներկան լինում էր ապրիմ, դատստնիմ, ծնանիմ, կռվիմ, մեռնիմ, ունիմ, լինիմ): Երբ կազմվեց նոր ձևի կրավորականը, միջին հայերենում էլ ձևացան պսակուիլ, վճարուիլ, պաճուիլ, ուտուիլ, ցանուիլ և այլն ձևերը.

Գ. լծ.—ամբնալ, ատալ, գալ, տալ և այլն։

Դ լծ.—առնուլ, երդնուլ, թողուլ, տեսնուլ

Անցյալ դերբայի –եալ *վերջավորությունը դարձավ* –ել, *որին ավելացավ* –ած *ձևը, որոնց վրա վերը խոսել ենք ընդարձակ (տե՛ս հ. IV, գիրք Բ)։*

Ներկա դերբայի –ող *ձևը շատ մեծ տարածում ստացավ. միջին հայերենում գրվում էր* –օղ, –աւղ *ձևերով.* Karst *343 տալիս է հետևյալ օրինակները.* գնօղ, գրւակնօղ, գրօղ, լսօղ, գրկօղ, ծախօղ, ծեծօղ, կարօղ, կորսնօղ, ճիլայօղ, շահօղ, ուզօղ, ուսցնօղ, ջողըն-ջօղ, fշտօղ, անցնօղ, դառըստնօղ, ունօղ, գնացօղ, արբեցօղ, ճոզ-ցօղ, տըւօղ *և այլն։ Այս բոլորը հին գրաբարի ոճով են կազմված։ Բայց միջին հայերենը սկսեց նաև* –ող *մասնիկը կցել ներկայի բու-նին՝ հակառակ գրաբարի։ Այսպես մինչ գրաբարը ասում էր* արա-րող, գտող, սպանող, առող, *միջին հայերենը կազմեց* այնող (ընող), գտնօղ, սպաննօղ, առնօղ, *որոնք աշխարհաբարի ձևերն են արդեն։ Հետաքրքրական է միջին հայերեն* ճանկնօղ, *որ ո՛չ գրա-բարի* ճանկացող *ձևն ունի և ո՛չ աշխ.* ճանկըցող, *այլ նույն է գվռ.* ճանկնող *ձևի հետ։*

–լի *ձևով դերբայները շատ հազվագյուտ են միջին հայերենում։* Karst *344 հիշում է* ընդունելի, անթողլի, անբժշկելի *ձևերը միայն, իսկ էջ 204 էլ* այնելիf, խմելիf, ծխանելիf, ճովցնելիf, ճազնելիf, պառիկելիf, ցանելիf, օծնելիf, *որոնք սակայն գոյական են և ցույց են տալիս, թե դերբայի այս ձևը, որ աշխարհաբարում այժմ սովո-րական է, նոր էր դեռ սկսում։*

5. ԴԵՐԲԱՅԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Այստեղ չեմ խոսելու ոչ լծորդությունների տեղափոխության, ձևափոխության և կամ ջնջման երևույթների մասին, ո՛չ էլ դեր-բայների օժանդակությամբ կազմված բաղադրյալ ձևերի մասին։ Այս բոլորի մասին նախապես ընդարձակ խոսել ենք։

Այստեղ կխոսեմ միայն այն մասին, թե գրաբարից մնացած դերբայները ի՛նչ ձևի տակ են պահված բարբառներում, և թե ի՛նչ նոր դերբայական ձևեր են հնարված։

Անորոշ դերբայի ամենից հարազատ ներկայացուցիչներն են Նոր Ջուղայի, Վանի և Մշո, Սալմաստի, Ալաշկերտի, Հաճնի, Սու-չավայի բարբառները, որոնք պահել են անորոշի –ել *վերջավորու-թյունը՝ ինչպես Ջղ.* սիրել, խագնել, ուտել, *Վն.* սիրել, ուզել, ուտել, *Մշ. Ալշ. Հճ. Սչ.* ուտել *և այլն։*

Երկրորդ հերթի վրա գտնվում են այն բարբառները, որոնք տարբերություն չդնելով հին հայերենի ե և է ձայնավորների միջև, երկուսն էլ հավասարապես հնչում են է: Այսպես են բարբառների մեծ մասը, ինչ. Երև. սիրէլ, խօսէլ, Պլ. սիրէլ, բաժնէլ, Ննխ. սիրէլ, լսէլ, բաժնէլ, Մրղ. Ախց. Կր. ուտէլ, Ակն. Սեբ. Տիգ. ուդէլ, Գոր. Ղրբ. օ՛տէլ, ա՛սէլ և այլն։

Երրորդ գծի վրա են այն բարբառները, որոնք անորոշի -ել վերջավորությունը դարձնում են -իլ: Այսպես են Ագուլիս թա՛կիլ «թա՛կել», սա՛յրիլ «սիրել», սրիլ «սրել», Տփղիս, Շամախի ուտիլ «ուտել», սիրիլ «սիրել», Մեղրի՝ օտիլ, սիրիլ, Մոկք, Ոզմի ուզիլ «ուզել», Ջթ. Խրբ. Սվեդ. ուդիլ «ուտել», ուզիլ «ուզել»։

Ասլանբեգի բարբառը հնչում է բաց է, որով սիրել, ուտել և այլն դառնում են սիրէ՛լ, ուդէ՛լ և այլն։

Մյուս լծորդության մեջ անորոշը անփոփոխ է ընդհանրապես, ինչպես Պլ. խօսիլ, նաժնիլ, խաղալ, մօռնալ, Ջղ. խազալ «հազալ», մոռանալ, Ագլ. մոռնիլ «մեռնել», Մրղ. խազզալ «հազալ», խաստանալ «հաստանալ», Ղրբ. մուռա՛նալ «մոռանալ» և այլն։

Այստեղ կարևոր է հիշել այն երևույթը, որ բարբառներից ոմանք ա դարձնելով օ, ըստ այսմ ձևափոխել են նաև երրորդ լծորդությունը. այսպես են Ագլ. խըզզօ՛լ «հազալ», ըրվէօլ «երևալ», Ջթ. բա՛նօլ «բանալ», իշնօլ «իջնել> իջնալ» (որոնց դեմ կան նաև բա՛նօլ, իշնօլ և այլն ձևերը՝ Ջեյթունի մի այլ թաղում)։

Կրկնենք նաև այն, որ ում ճյուղի բարբառներից մի քանիսը Բ լծորդությունը վերածելով Ա-ին, ի բունը դարձրել են ե: Բայց սա ո՛չ թե ձայնափոխություն է, այլ նմանողության օրենքով կազմված ձևափոխություն, որ անորոշ դերբայի համար շատ ավելի սովորական է։ Այսպես Մրղ. խասնել, Ննխ. նարփէլ, նաժնէլ, թեև ներկան լինում է նարփիմ, նաժնիմ:

Անցյալ դերբայի -եալ վերջավորությունը բարբառներում տալիս է ե, ա, է, ի: Օրինակ սիրել, սիրէլ, սիրեր, սիրիր, սիրե, սիրէ, սիրի: Այս բոլորի մասին վերը խոսել ենք մանրամասն։ Խոսել ենք նաև այն մասին, թե ի՛նչպես օրինակ, սիրել լինելով մերթ անորոշ դերբայ և մերթ անցյալ դերբայ, տեղիք էր տալիս երկդիմության և շփոթության։ Հնում սիրել եմ նշանակում էր թե՛ ներկա «ի սիրել եմ=սիրում եմ» և թե՛ անցյալ սիրել եմ «սիրեալ եմ=սիրեր եմ»։ Եվ սրանց պատճառած շփոթության առաջքն առնելու համար էր, որ մի կողմից հնարվեցին -ում, -ման, -լիս ձևերը, որով ներկան ազատագրվեց և անցյալը փրկվեց, և մյուս կողմից հնարվեց դեր-

բայի -եր ձևը, որով վերջ տրվեց -ել (<նել) և -ել (<եալ) ձևերի խառնակությանː Միայն Նոր-Ջուղայի բարբառն է, որ անորոշի համար -ել և անցյալ դերբայի համար -էլ ձևերն ստեղծելով, մինչև այժմ պահում է հին հայերենի վիճակըː

Գիտենք նաև, թե հների մեջ երկդիմության և շփոթության պատճառներից մեկն էլ ներգործականի և կրավորականի անորոշությունն էր. բերեալ նշանակում էր թե՛ «բերած» և թե՛ «բերված»ː Այս շփոթության էլ առաջքն առնելու համար հնարվեց -ած ձևով դերբայը, որ նախապես միայն կրավորական էր, իսկ հետո դարձավ -ած ձևի տակ ներգործական և -ուած ձևի տակ կրավորականː

Հենց որ -ել և -ած (-ուել և ուած) ձևերը հրապարակ իջան, այժմ էլ մրցումն սկսվեց այս երկու ձևերի գործածության համարː Բարբառների ընդհանուր սկզբունքն այն եղավ, որ -ել> -եր որոշվեց հատկացնել բայական գործածության, իսկ -ած՝ իբր ածականː Բայց այստեղ էլ որոշումը վճռական չեղավ և որոշ բարբառների մեջ գտնում ենք հավասարապես տեսել եմ (տեսեր եմ) կամ տեսած եմ ձևերը՝ իբրև համազորː Այնուամենայնիվ կարելի չէ գտնել որևէ դեպք, ուր -ել ձևը գործածվի իբրև ածականː Կարելի չէ ասել, օրինակ, ներկել պատ, այլ միայն ներկած (կամ ավելի լավ՝ ներկուած) պատ:

Անկարելի է նաև գործածել -ել ձևը լինիմ (ըլլալ) բայի հետ, ինչ որ սովորական էր հնումː Մխ. Բժշ. 91 գրում է. «Ջերդ որ հիւանդն... ըմպելիքն տաք և չորային լինի խմել և շատ հոգս լինի տարել կամ տքնութիւն, կամ դատել լինի շատ, կամ շատ ժամանակ ի պաք է կեցել»: Այժմ անհնարին է ասել խմել լինի, լինի տարել, դատել լինի, այլ միայն խմած լինի, տարած լինի, դատած (հոգնած) լինի (կամ ըլլայ): Բացառություն է կազմում միայն Նոր-Ջուղայի բարբառը, ինչպես կտեսնենք քիչ հետոː

Իբրև մնացորդ հնության, հաճախ Երևանի բարբառում կրավորական դերբայը գործածվում է ներգործականի ձևով. այստեղից էլ անցել է նաև արևելյան գրական լեզվին, օրինակ՝

Պատը ներկած է (փխ. ներկված է)
Ներկած պատեր (փխ. ներկված)

Եվ նույնիսկ Պատկանյանը, որ Նոր-Նախիջևանցի է, իր գրական լեզվով գրած գործերի մեջ տեղ-տեղ գործադրում է այս ձևը, օրինակ՝

«Մեր ծանոթ Սուսաննան էր, որ այժմ շրջապատած շատ երիտասարդներով, կադրիլները… բաժանում էր» (Ընտիր երկասիրութ., Պետերբուրգ, 1893, Բ, 146)։

«Բայց դուք, եթէ չեմ սխալւում, արդէն հրաւիրած էք» (անդ, 147)։

«Մի անգամ Սուսաննան ճաշի էր հրաւիրած» (անդ, 138)։

Թեև շատ անսովոր, բայց գտել եմ նաև -ել դերբայը գործածված իբր կրավորական.

«Ռաֆայէլի կապոյտ աչքերն այնպէս նշանակալից փայլով սևեռել էին իր վրայ» (Սիրաս, Զգր. օր., 315)։

Ուզում է ասել սևեռվել էին, ճառել էին:

-ած մասնիկը գրեթե բոլոր բարբառների մեջ էլ մնում է անփոփոխ -ած (կամ արևմտյան արտասանությամբ -ադ)։ Ագուլիսի բարբառում, ձայնավորների ներդաշնակության օրենքների համաձայն, դառնում է ած, ոծ, էծ, ինչպես քա՛կած, սա՛յրած, ուէծ, մոա՛ճած, բսկյո՛ճոծ, խզզաճած, ըրվո՛ճոծ: Մարաղայի բարբառում, հակառակ սովորականին, այս ձայնափոխությունը տեղի չի ունենում և հավասարապես ասվում է ազատած, չէօֆած, թեև միևնույն ժամանակ՝ երկրորդ դերբայը լինում է ազատիր, չէօֆիւր «ազատած, չոքած»։

Կիլիկյան բարբառում -ած դառնում է -օձ. ինչպես Զթ. և Հճ. գի՛րօձ «գրած»։

Ներկա դերբայի -ող ձևը, որ այսպես հազվագյուտ էր Մեսրոպյան շրջանում և ընդհակառակը այնպես տարածվեց միջին հայերենում, բոլոր բարբառներում էլ ընդհանուր ընդունվեց և դարձավ ներկա դերբայի միակ ձևը։ Ընդհակառակը՝ ջնջվեց իր մրցակից -իչ ձևը, որ հնում ավելի պատվավոր էր։

Հետաքրքրական է նաև -լոց և -լի ձևերի պատմությունը։ Առաջինը իսպառ ջնջվեց, հազիվ իր տեղը զիջելով Ջուղայի -լէց և Ագուլիսի -լաց, -լոց ձևերին, որոնք սակայն առաջանում են ո՛չ թե -լոց ձևից, այլ -լեաց ձևից։ Մյուս բարբառները յուրացրին գրաբարի -լոյ ձևը, որ անորոշ դերբայի սեռականն էր և միջին հայերենում էլ ընդհանուր գործածություն էր ստացել։ Միայն թե այս -լոյ ձևը աշխարհաբարի ձայնական օրենքների համաձայն դարձավ -լու (այսպես Երև., Տփ., Ջղ., Ննխ. լսելու, ճաւճելու, խաղալու, Մրղ. խարփօլու, խասճօլու, խազզալու, խասատճալու, իւզօլո՛ւ, բայց նաև իւզօլը, սակայն նույնիսկ չէօֆօլու «չոքելու», առանց ներդաշնակության օրենքին հպատակելու)։ Ուրիշ բարբառներ նույն

-լու ձևը դարձրին -լիւ, ինչպես Վն. ուզելիւ, Ոզմի ուզիլիւ, Շմ. սիրիլիւ:

Ավելի զարմանալի է -լի ձևը։ Սա, ինչպես տեսանք, նախ ներկա դերբայ էր՝ -ող (անող, կատարող) նշանակությամբ. Հետո դարձավ կրավորական և ստացավ -ւող, «արվող, կատարվող» իմաստը։ Բարբառների մեջ նա դարձավ անեզական (-լիf) և վերածվեց ապառնի դերբայի։ Այս ձևը ընդհանուր է այժմ մեր բոլոր բարբառներում (լսելիf, ուտելիf, բերելիf, խաղալիf և այլն), որի սեռական ձևն է Ջղ. Ագլ. -լէց, լաց, լոց:

Այս ընդհանուր խոսքերից հետո տալիս ենք ավելի ամփոփ տեղեկություններ մեր ծանոթ բարբառների մասին, մնացյալը վերապահելով Շարահյուսության։

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

ա) Անորոշ դերբայի ներգոյական հոլովը (սիրելում, ասելում, խաղալում և այլն) որոշ թաղերում գործածական չէ. դրա փոխարեն ասվում է սիրելու մէջ, խաղալու մէջ և այլն։ Ուրիշ թաղերում գործածական է՝ հատկապես ժամանակ ցույց տալու համար, օրինակ գնալում տեսի «գնալիս՝ գնալու ժամանակ տեսա»։

բ) Ժամանակ ցույց տվող ձևը (սիրելիս, խաղալիս և այլն) նույնպես գործածական չէ այս բարբառի մեջ. դրա փոխարեն ասվում է խաղալու վախտը, ուտելու վախտը, կամ ուրիշ թաղերում՝ ներգոյական ձևով, ինչպես վերը նկատեցինք։

գ) Անորոշ դերբայը իբրև գոյական գործածելու ժամանակ՝ կարելի է դնել -ման ձևը, ինչպես՝ Լուղ տվողանուն լուղ տալման տեսնելն էլ լէվ ա (Լողացողների լողալը տեսնելն էլ լավ է)։

դ) Հնդկահայոց մեջ անորոշ դերբայները հաճախ ստանում են ստացական հոդ, որ Նոր Ջուղայի մեջ գործածական չէ։ Օրինակ՝ Դ'ողման ամ էտուր մտածելս ես (Dialogues, էջ 47). Կը կամենա՞ս փոխելդ (էջ 46), ժամանակ չունեմ տեսնելս (էջ 19). Տխուր ամ ջուր նիվանդ լինելն լսելս (էջ 19). Պատրաստ ամ նրամանոց ծառայելս (էջ 24). Կարող չե՛մ յէկուց գ'դ'անելս (Վաղը կարող չե՛մ ստանալ) (էջ 27). Կարող ամ խմելս (էջ 40). Կարող աս ունելդ (էջ 40). Կարող ամ մին նուն ունելս «Կարող եմ մի վառյակ ունել» (էջ 39)։

ե) Անորոշ դերբայի բացառականը սովորաբար լինում է -ուց *ձևով. բայց Հնդկաստանի հայոց, ինչպես նաև Ջուղայի հին բարբառի մեջ գործ է ածվում հաճախ հնաձև* -է *հանգով բացառական, ինչպես* ապրելէն յետ, մնալէն յետ, պռծանելէդ յետ, բերելէն յետ *և այլն։ Այժմ Նոր Ջուղայի բարբառում սովորական է նույնի մակբայաձև գործածությունը, որի դեմ գրական լեզուն գործիական է դնում, ինչպես՝* խօսելէն գ'նաման ա *«խոսելով գնում է» (համմտ. Պլ. խօսելէն կ'երթայ)։ Նույն ձևը Հնդկաստանի հայոց մեջ գործ է ածվում ժամանակ ցույց տալու համար, ինչպես՝* Տեսնելէս կ'ասեմ *(Երբ տեսնեմ՝ կասեմ) (Լեյլի, 101)։*

զ) Անորոշ դերբայները ունեն նաև -է *վերջավորությամբ սեռականի մի ձև, որ գործածական է Հնդկաստանի հայոց մեջ, ինչպես՝* սիրելէ խմար *«սիրելու համար»,* ուտելէ խմար *«ուտելու համար»,* խմելէ ջուր *«խմելու ջուր»,* խագ'նելէ շոր *«հագնելու շոր»,* խաց ուտելէ ժամանակն ա, Առանց կարդալ սովրել է: *Նույնպիսի ձևեր գտնում ենք նաև Գիլանենցի ժամանակագրության մեջ, ինչպես՝* Ասկար կալէ ձէն էլ չկէր *(էջ 92).* Մեր չկոլէ *պատճառն (էջ 98),* Քնելէ թեղեր *(էջ 99),* Փախելէ ճար չկայ *(էջ 103)։ Այս պարագային կարելի է դնել նաև ստացական հոդ, ինչպես՝* Սավօրելէդ' խմար *«Սովորելուդ համար»։*

Անցյալ դերբայ

ա) Անցյալ դերբայն ունի կրկին ձև՝ -ած *և* -էլ. *առաջինը հարակատարի և գերակատարի կազմության մեջ գործածական չէ, այլ կա միայն իբր ածական. օրինակ՝* Մոռացված ա *և այլն։ Բայց մյուս բայական բաղադրյալ ձևերի մեջ մտնում է. ինչպես՝* Բ'երած յելա *«Բերած եղա» և այլն։*

բ) Դերբայական ձևերից երկրորդը շատ ավելի հաճախ գործածություն ունի բարբառիս մեջ՝ քան այլուր. մինչև անգամ այն կարգի բայական ձևերի մեջ, ուր -ած *ձևի դերբայը ընդունված է ընդհանրապես, այստեղ գործ է ածվում* -էլ *ձևով. ինչպես՝* Տե՛ս խմբարfումն սղալել չելնեմ *«Տե՛ս հաշվի մեջ սխալված չլինեմ».* Եթէ նա փողն տվէլ չելնէր *«Եթե նա փողը տված չլիներ». Հ*ավատման ամ վոր թարեղն դրէլ յելնեմ *«Կարծեմ թվականը դրել եմ»։*

Ապառնի դերբայ

ա) Ապառնի դերբայի սովորական ձևն է -լու, *որի միջոցով կազմվում են զանազան բաղադրյալ ժամանակներ։ Այս ձևը գործ է ածվում նաև իբրև գոյական, բայց միշտ ստացական հոդով. ինչ-*

պես՝ Ասելունս ասի. Իմ ասելունն էդ՝ ա. Ասելունդ՝ ասա. Քո ասելունն է՞դ ա. Անելունն արէց, ասելունն ասէց. Բ՛երելունն բերէց:

բ) Ապառնի դերբայի երկրորդ ձևն է –լիf, *որ գործ է ածվում միայն իբր գոյական և միշտ ստացական հոդով. ինչպես՝* Անելիfս. Ասելիfդ՝ է՞ս ա. Յելնելիfը ի՞նչ ա *«լինելիքն ի՞նչ է»*. Անելիfներն արէլ աս:

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

Անորոշ դերբայը, ինչպես և անցյալ դերբայը, իբրև գոյական կարող են հոլովվել։ Առաջինը հետևում է երկրորդ հոլովման և բոլոր հոլովների մեջ էլ ի *դառնում է* է, *իսկ* օ *դառնում է* ա. *ինչպես՝* ուտել> օ՛տիլ. ըտէ՛լու, ըտէ՛լուց, ըտէ՛լով, ըտէ՛լում. մոռանալ> մոռա՛նիլ. մըրնէ՛լու, մըրնէ՛լուց, մըրնէ՛լով ,մըրնէ՛լում. ճազալ> խզզալ, խզզա՛լու, խզզա՛լուց, խզզա՛լավ, խզզա՛լամ:

Անցյալ դերբայը, ինչպես գիտենք, ունի երկու ձև՝ –ած *և* –ալ. *առաջինը գործ է ածվում թե՛ իբր ածական և թե՛ իբր դերբայ՝ կազմելու համար զանազան բաղադրյալ ժամանակներ. երկրորդը գործ է ածվում կատարյալ ժամանակի երկրորդ ձևը կազմելու համար։*

Դերբայի –ած *մասնիկն էլ ունի երեք ձև. ծանր բառերի համար* –ած, *թեթև բառերի համար* –ած, *իսկ երբ շեշտը ընկնում է իր վրա՝* –էծ: *Ցղնայի ենթաբարբառում միշտ լինում է* –օծ, *որի թեթևն է* –էօծ. *ինչպես՝* նստօծ, խլօծ, տրէօծ *«դրած»*, կ՛ըրէօծ *«գրած»*։ *Ըստ ձայնաբանական օրենքների՝ առաջին երկուսը՝* –ած *և* ած, *ուղիղ են, որովհետև վերջավանկի անշեշտ* ա *ձայնը բարբառիս մեջ մնում է, իսկ* –էծ *ձևի փոխարեն պետք էր գտնել* *–օծ, *որովհետև վերջավանկի շեշտյալ* ա *դառնում է* օ: *Ցղնայի ենթաբարբառը ցույց է տալիս, որ այսպես է եղել Ագուլիսի բարբառի ավելի հին վիճակում, իսկ* –էծ *ձևը առաջացած պիտի լինի ավելի ուշ՝ անցյալ դերբայի երկրորդ ձևի* (–էլ) *նմանությամբ։*

Հոլովման ժամանակ թե՛ –էծ *և թե՛* –օծ *չեն փոխվում* –ած, *այլ մնում են նույնպես. օրինակ՝* գ՛ըրէծ, գ՛ըրէ՛ծի, գ՛ըրէ՛ծից, գ՛ըրէ՛ծով, գ՛ըրէ՛ծում=կ՛ըրէօծ, կ՛ըրէօ՛ծի կ՛ըրէօ՛ծից, կ՛ըրէօ՛ծով, կ՛ըրէօ՛ծում:

Ներկա դերբայի մասնիկներն էլ նախորդի նման երեք են. –ամ՝ *ծանր բառերի համար,* –ամ՝ *թեթև բառերի համար,* –ում՝ *եթե շեշտը իր վրա է։ Մասնիկի այս երեք ձևափոխությունները ցույց են տալիս, որ այստեղ էլ ուրիշ բան չէ, եթե ոչ ներգոյականի* –ում *մասնիկը, որ հոլովման մեջ էլ ներկայանում է հիշյալ երեք*

ձևերով։ Ցղնայի ենթաբարբառը, որ հոլովման մեջ ներգոյականի համար չգիտի -ամ, -ում, այլ միայն -ում, այդպես է նաև ներկա դերբայի մեջ։

Ինչպես անցյալ դերբայը, նույնպես և ներկա դերբայը գործ է ածվում Ագուլիսի, ինչպես և Ղարաբաղի բարբառում իբրև ածական. ինչպես՝ ադ խօ'սում մօրդը «այդ մարդը, որ այժմ խոսում է», տա'նամ տէղը նօ'ֆար ա, Բիրամ տէղը՝ աղա «տանում տեղը ծառա է, բերում տեղը՝ տեր» (առած). նօ'տամ վախտը «կերած ժամանակ»։

Ապառնի դերբայի մասնիկն է միշտ -է'լուց կամ -ա'լաց, որ համապատասխանում է հին հայերենի -լոց, -ելոց, -ալոց ձևերին։ Ցղնայի ենթաբարբառը զուրկ է այս ձևից և համաձայն ուրիշ շատ բարբառների և մասնավորապես Ղարաբաղի բարբառին, ապառնի դերբայը կազմում է -լու մասնիկով. օրինակ՝ կ'ըրի'լու, տնի'լու, ընի'լու «ասելիք», մնա'լու «մնալիք» և այլն։ Այսպիսի ձևեր Ագուլիսի բարբառում կան, բայց գործ են ածվում միայն իբր ածական. ինչպես՝ ընէ'լու խօսք «ասելու խոսք», ըտէ'լու նօց «ուտելու հաց» և այլն։ Նույնը նաև -լի ձևով. ինչպես՝ ընէ'լի «ասելի, ասելու», ըրէ'լի «անելու» և այլն։

Գործողության ժամանակը ցույց տալու համար, անորոշ դերբայի վրա ավելացվում են -իս, -ուց մասնիկները, անկախ այն հանգամանքից, թե դերբայը կարո՞ղ է -լիս մասնիկն ստանալ, թե ոչ։ Օրինակ՝ ըտէ'լիս կամ ըտէ'լուց «ուտելու ժամանակ», թկէ'լիս կամ թկէ'լուց «թակելու ժամանակ», ըսկընէ'լիս կամ ըսկընէ'լուց «հագնելու ժամանակ» և այլն։

Գործողությունը հաստատելու, բայց հետո էլ մի թեական ավելացնելու համար կա անորոշ դերբայի մի առանձին գործածություն՝ բայի կրկնությամբ, հետևյալ ձևով. ա'նիլը նա'նամ ա, ամա... «ասելը ասում է, բայց...», գ'իւլը գ'է'լիս ա, ամա... «գալը գալիս է, բայց...», տօլը տա'լիս ա նէլ, ամա... «տալը տալիս էր, բայց...»։

Գործողությունը կատարող անձը ցույց տալու համար դրվում է -ող մասնիկը, օրինակ՝ տա'նող «տանող», բի'րող «բերող», ա'նող «ասող», կա'պող «կապող» և այլն։ Հոլովման մեջ այս մասնիկի ու ձայնը դառնում է ա. ինչպես՝ ընա'ղուն «ասողին», թկա'ղուն «թակողին», խօսա'ղուն «խոսողին», մըռընա'ղուն «մոռացողին» և այլն։

Գործողությունը կատարելուց անմիջապես հետո մի բան անելը ցույց տալու համար Ագուլիսի բարբառը գործ է ածում | տաս ձևը,

որ համապատասխանում է արևմտահայոց «պես» ձևին. ինչպես՝ մոնէ՛լուն բոււտ «մտնելուն պես», ընէ՛լուն բոււտ «ասելուն պես»։ Նույնի տեղ կարելի է գտնել նաև բոււտո՛ն ինչպես՝ մոնէ՛լուն բոււտո՛ն և այլն։

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Անորոշ դերբայն ունի երեք տեսակ վերջավորություն. –էլ (կամ –նէլ), –ալ (կամ –նալ) և –ալ: Այս բոլորն էլ հոլովվում են գոյականների նման, միայն թե առաջինը հոլովման մեջ է ձայնը տեղ-տեղ դարձնում է օ, երկրորդը մնում է անփոփոխ, իսկ երրորդը կա՛մ մնում է անփոփոխ և կամ ա դարձնում է ա. ինչպես՝

Ո.	պէրէլ	խաղղալ	էթալ
Ս.	պէրօլու	խաղղալու	էթալու, էթալու
Տ.	պէրօլում	խաղղալում	էթալում, էթալում
Բ.	պէրէլէն	խաղղալէն	էթալէն
Գ.	պէրէլօվ	խաղղալօվ	էթալով, էթալով

Սեռականի մեջ ու ձայնը կարող է դառնալ ը. ինչպես՝ տանօլը խամա «տանելու համար» և այլն։ Բացառականի մեջ երրորդ ձևի փափուկ ա ձայնը չի դառնում ա, երկու կողմի փափուկ ձայնավորների պատճառով։ Գործիականի մեջ վերջավանկի ձայնավորի ազդեցությամբ կարող է է դառնալ օ. ինչպես՝ ասօլօվ, ուտօլօվ, պէրօլօվ և այլն։

իւ, էօ ձայնավորներից հետո՝ օ ձայնը կարող է դառնալ էօ. ինչպես՝

Ո. իւզէլ
Ս. իւզէօլիւ
Տ. իւզէօլիւմ, իւզօլում
Բ. իւզէօլէն, իւզօլէն, իւզէլէն
Գ. իւզէօլօվ, իւզօլօվ, իւզէլօվ

Անորոշ դերբայը կարող է ստանալ ստացական հոդ և այն ժամանակ փոխանակում է մի դիմավոր բայ. ինչպես՝ չէթալքի՛ բիտ էթալքիրէտ աղէկ՛ ի (այսինքն «չերթաք ավելի լավ է քան երթաք»)։

Անորոշ դերբայի ներգոյականի –լում և –լիս ձևերը գործածական չեն բարբառիս մեջ. այս պարագային գործ է ածվում տրա-

կանի ձևը. ինչպես՝ ուճօլուճ աղէյ չի, խաղալուճ աղեկ՛ ի *«սովորելու մեջ լավ չի, բայց խաղալու մեջ լավ է»*. կուէղճալուճ վիրա խասսամ *«գողանալուց, գողանալու ժամանակ վրա հասա»։ Կարելի չէ այս ձևերի վրա դիմորոշ հոդ դնել։*

Գործողության ժամանակը ցույց տալու համար կարելի է նաև դերբայի վրա դնել –ուց *մասնիկը. ինչպես՝* էթալուց յար ստա *«երթալու ժամանակդ արի՛ այստեղ»*. փախճօլուց վիրա խասսամ *«փախչելիս վրա հասա»*. ք'իճօլուց խըմը՛ *«քնելու ժամանակ խմի՛ր»*. *այսպես նաև* էփօլուց *«եփելիս»*, խտալօլուց *«հալելիս»*, խազզալուց *«հազալիս»*, կռօլուց *«կտրելիս» և այլն։*

Անցյալ դերբայն ունի կրկին վերջավորություն՝ –իր *և* –ած. *առաջինը գործ է ածվում միայն բայերի բարդ ժամանակները կազմելու համար. երկրորդը սովորաբար իբր ածական է գործածվում և բաղաձայնի մոտ վերջաձայն ծ դարձնում է* ս. *ինչպես՝* իզաս տռ'ւճա *«ուզած տունը»*, աառաս տէ'ղը *«տարած տեղը» և այլն։* –ած *վերջավորությամբ դերբայներն էլ կարող են կազմել բայերի բարդ ձևերը, բայց նվազ գործածական են և շատերը չեն ընդունում* տարած իմ, տարած իմ էր *ձևերը, այլ միայն տարիր իմ և նմաններ։*

Երբ բայի բարդ ժամանակից առաջ դրված է լինում մի շեշտյալ բառ, օժանդակը առաջ է անցնում և այն ժամանակ անցյալ դերբայի –իր *վերջավորությունը կրճատվելով՝ դառնում է* –ի, *եթե նրա նախորդ ձայնավորը թեթև է և* ը, *եթե նույն ձայնավորը ծանր է.* ա *ձայնի դեմ լինում է* ի, *իսկ* ու *ձայնի դեմ՝* ու: *Օրինակ՝* կիճացիր իմ, լսսիր իմ, ասսիր իմ, տուռիր իմ, առւլիր իմ, *բայց շրջմամբ՝* շատ իմ կիճացի, շատ իմ լըսսը՛, շատ իմ տըսսը՛, մինք՛ ինք՛ տրի, տիւք՛ էք՛ առւռու *կամ* տուվու, չիս ուսսու *և այլն։*

Շրթնական բաղաձայններից հետո՝ անցյալ դերբայի –իր *մասնիկը դառնում է* -ը՛ր. *ինչպես՝* ծըռվը՛ր ի, կապը՛ր իմ, խարփը՛ր ի *և այլն։*

Կալաչուղցոց արտասանության մեջ ծանր ձայնավորով բայերի անցյալ դերբայը լինում է –ըր *հանգով, որի ազդեցությամբ օժանդակն էլ իր ձայնավորը դարձնում է* ը. *ինչպես՝* ասըր ըմ, խարփըր ըս *և այլն։*

Ապառնի դերբայը անորոշ դերբայի սեռականն է և Ա և Բ լծորդություններ մեջ վերջավորվում է –օլու, *Գ լծորդության մեջ՝* –ալու, *թեթև ձայնավորների մոտ կարող է դառնալ* –էօլի, –ալիւ. *ինչպես՝* իզէօլի, էթալիւ. *իսկ ծանր ձայնավորների մոտ վերջաձայն* ու *կարող է դառնալ* ը: *Այս բոլոր ձևերով կազմվում են բա-*

յերի բարդ ձևերը. ինչպես՝ իւզօլու իմ, իւզէօլիւ իմ, տանօլույ իմ, տանօլըյ իմ, *շրջմամբ՝* յի՛ս իմ առնօլը *և այլն։*

–լիf *ձևը գործածվում էր հին բարբառում՝ իբր գոյական. ինչպես՝* ասէլի՛fիտ ասա. առնէլի՛fիս տու. *բայց այժմ գոյություն չունի բարբառիս մեջ. նրա փոխարեն գործածվում է կա՛մ անորոշ դերբայը և կամ ապառնի դերբայի առաջին ձևը, և այս պարագային դրվում է ստացական հոդ. ինչպես՝* ասէլըտ ասա՛ *կամ* ասօլուտ ասա՛ *«ասելիքդ ասա՛».* զուրցալտ մի՛ մոռացը *կամ* զուրցալուտ մի՛ մոռացըր՛ *«խոսելիքդ մի՛ մոռանար».* կիրէլտ կիրի *կամ* կիրօլուտ կիրի *«գրելիքդ գրի՛ր»։*

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

Անորոշ դերբայը կարող է իբր գոյական գործածվել և այդ դեպքում ստանում է հոդ կամ հոլովվում է. օրինակ՝ էրթալդ ըլլա, գալըտ չըլլա *(անեծք).* Իւրու հետ էրթալ-գալ ունի՞f. Ուդէլուն-խմէլուն ըստագը վօ՞վ բիդի դա. Ադ ուդէլ-խմէլնէրթ դէսնօղը բիդի ըսէ fի հինգ օր է անօւթի էf մնացէր:

Անորոշ դերբայը ստանալով մը *անորոշ հոդը և կրկնվելով իր դիմավոր բայի հետ՝ ցույց է տալիս շատություն. օրինակ՝* էրէկ մսէլ մը մսէցա fի... Անանկ հաfվիլ մը հաfվէր էր fի...

Անորոշի բացառական հոլովը ցույց է տալիս այդ գործողությունը անելով և գործածվում է իբր մակբայ (սովորաբար հոդ է ստանում). օրինակ՝ Բարձէնալէն կխօրաթէ գօր. Ուդէլէն գէրթա:

Բացառականը ցույց է տալիս նաև պատճառ. ինչպես՝ Աշվրնէ-րուտ գարմըրիլը շատ fնանալէդ է:

Անորոշի հետ միացնելով թրք. –իfէն *ձևը՝ ստացվում է «ժամանակ, միջոցին». օրինակ՝* էրթա՛լն–իfէն, բէրէ՛լն–իfէն *(այս* ն *հոդը դրվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ և թե՛ երրորդ դեմքի համար. օրինակ՝* էս, դուն, ան, մէնf, դուf, անօնf էրթալն–իfէն):

Անորոշ դերբայը սեռ.-տր. հոլովաձևով, դիմորոշ հոդով և պէս *բառի հետ միացած՝ ցույց է տալիս «հենց որ, անմիջապես որ». օրինակ՝* Ո՛ւդէլուս բէս դուրս էլա. Գա՛րթալուա բէս իմացա. Ձանը հանէլուն բէս ջանծծա. Գա՛նչէլնէրնուս բէս վազէցին էգան *(շեշտը դրվում է միշտ առաջին վանկի վրա)։*

Ներկա դերբայը գործածվում է իբր ածական և իբր գոյական. օրինակ՝ էգօղ դարի. էգօղը առավ դարավ:

Անցյալ դերբայը երկու ձև ունի (–էr *և* –ած*). առաջինը, որ համապատասխանում է գրաբարի* –եալ *ձևին, գործածվում է միայն*

իբր դերբայ (դէսէր էմ, բէրէր էյի): Երկրորդը գործ է ածվում թե՛ իբր ածական, թե՛ իբր գոյական և թե՛ իբր դերբայ. օրինակ՝ Գէ-րած-խմածըք քէզի, դէսածք-լսածք բաամէ՛. Անցած օրը վո՞ւր էյիր. Անցած-գացած բան է. Անցածը անցած է: Սվօր գէրած աքուրը նայէ մէյ մը:

Անորոշ դերբայի նման՝ -ած ձևի անցյալ դերբայն էլ կարող է միանալ Թրք. -իքէն բառին, չի ստանում դիմորոշ հոդ և նշանակում է ժամանակ. օրինակ՝ բռնած իքէն «երբ (ես) բռնեցի». Հասած իքէն «երբ (դու) հասար». Վազած իքէն «երբ (նա) վազում էր»։

Անցյալ դերբայը իբրև ածական դրվում է գոյականից առաջ և այն ժամանակ գոյականը ստանում է դիմորոշ հոդ, որ ստացականի երևույթ ունի, բայց ստացական չէ. օրինակ՝ Գացած դունս «իմ գնացած տունը». դէսած մարթըտ «քո տեսած մարդը». բէրած ճա-ցէրնիս «այն հացը, որ մենք բերինք»։ (Այնպես է խոսքի կազմությունը, որ կարծես թե տունը, մարդը, հացը իրենն են։ Նման պարագաներում Երևանի բարբառը հոդը դնում է դերբայի վրա. այսպես՝ գնացածս տունը, տեսածդ մարդը, բերածս ճացը):

Անցյալ դերբայը սեռ.-տր. հոլովով, ստացական հոդով և պէս բառի հետ միացած՝ ցույց է տալիս անմիջապես. ինչպես՝ Ա՛ռածիս բէս փախա. Դէ՛սածին բէս քովըս էգավ. Ջանս լը՛սածիք բէս քովըս էգուր (շեշտը դրվում է միշտ առաջին վանկի ձայնավորի, նույնիսկ ը-ի վրա)։

Անցյալ դերբայը (բայց միշտ բացասական ձևով) կարող է ստանալ նաև Թրք. -դան մասնիկը և նշանակում է «դեռ այդ բանը չեղած». օրինակ՝ չէգածդան «դեռ չեկած», չըսածդան «դեռ չասած», չբէրածդան «դեռ չբերած», չգէրածդան «դեռ չկերած» և այլն։ Այս ձևը ճիշտ կաղապարումն է Թրք. almadan «դեռ չառած», atmadan «դեռ չգցած», qačmadan «դեռ չփախած», yapmadan «դեռ չշինած» և այլն ձևերի։ Թուրքերենի մեջ այս -dan մասնիկը բացառականի հոլովական վերջավորությունն է, որ ունի նաև իր թեթև -den ձևը և կցվում է բայի արմատին՝ բացասական ma/me մասնիկի հետ։ Հայերենում ընտրված է միայն -dan (ծանր) մասնիկը, որովհետև -ած դերբայն էլ ծանր է, և դրվում է ո՛չ թե արմատի, այլ անցյալ դերբայի վրա, ինչպես պահանջում է իմաստը։

Շեշտից հետո, Երևանի բարբառում, էական բայը դերբայից նախադաս է դրվում. ինչպես՝ Շա՛տ եմ տեսել. Նման երևույթ չկա Պոլսի բարբառում, ուր ասվում է սովորական ձևով՝ Շա՛տ դէսէր էմ: Բայց եթե մեկը ասեր «Շա՛տ էմ դէսէր», տարօրինակ չէր լինի։

Գրական հայերենում, ինչպես գիտենք, անորոշ դերբայը ժամանակ չունի. **սիրել** *թե՛ ներկա է, թե՛ անցյալ և թե՛ ապառնի։ Պոլսի բարբառում* **սիրէլ** *ձևը հատկապես ներկա է,* **սիրած ըլլալ** *անցյալ է (հարակատար) և* **սիրէլու ըլլալ**՝ *ապառնի։*

Ապառնի դերբայն էլ երկու ձև ունի՝ **սիրէլու** *և* **սիրէլիք.** *առաջինը էապես դերբայ է, բայց կարող է նաև իբրև ածական գործածվել. ինչպես՝* **ուզէլու էմ, ուզէլու էյի.** *բայց՝* **ուզէլու ճաց չունի, սիրէլու ղղա է:** *Երկրորդը՝ իբրև դերբայ չի կարող գործածվել, այլ միայն իբր գոյական կամ իբր ածական. ինչպես՝* **Ըսէլիքդ ըսի՞ր. Քըէլիքա չը մօռնա՞ս. Աս անօր ընէլիք բա՞նն է:**

Ապառնի դերբայի հին ձևն է **–օց.** *այս մասնիկով ունենք* **ըլլալօց բան չէ** *«անկարելի է, լինելիք բան չէ»,* **էրթալօց է** *«մեռնելիք հիվանդ է»։*

Ապառնի դերբայի հետ կարող է գործածվել նաև **ունիմ** *բայը. օրինակ՝* **Քաշէլիք ունինք էղէր. Ա՛լ ասօր ըսէլիք չունիմ:**

Օժանդակի նման գործածություն ունի նաև **գալ** *բայը անորոշ դերբայի հետ. օրինակ՝* **բռնէլըտ ձէձէլըտ գուքա** *«ուզում ես բռնել ծեծել»։*

–լու *և* **–լիք** *ձևերի միացումից առաջացել է* **–լուք,** *որ երբեմն գործածվում էր հների մոտ. ինչպես՝* **Երթալուք տեղ. ուտուէլուք կէրակուր:**

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Դերբայները վեցն են Նոր Նախիջևանի բարբառում. ներկա դերբայ, անցյալ դերբայի կրկին ձևերը, անորոշ դերբայ և ապառնի դերբայի կրկին ձևերը։ Սրանց գործածության մեջ նկատելի են հետևյալ երևույթները, որոնք ուրիշ բարբառներում սովորական չեն։

Ներկա դերբայը գործածվելով էական բայի հետ՝ ստանում է սահմ. ներկայի նշանակություն. ինչպես՝ **Մէնք չէ ասօղ չինք, աղլի խամչին ալ բադէն վար առնօղ ինք** *«Մենք չէ՛ չենք ասում, բայց ծանոթ մորակն էլ պատից ցած ենք իջեցնում».* **Յէս քշէրը վախցօղ, դուրըս գօցօղ, գանուխ բառգօղ իմ** *«Ես գիշերը վախենում եմ, դուռս կողպում և կանուխ պառկում»։*

Ներկա դերբայի վրա դնելով **–ս** *մասնիկը և կցելով* **ըլալ** *«լինել» բային՝ ստացվում է «կեղծել, ձևացնել» նշանակությունը. ինչպես՝* **«Յէս ալ բան ճասկըցօղս գըլամ** *«Ես էլ իբր թե բան հասկացող եմ ձևանում».* **Դուն ալ ի՞նչ չգիացօղս գըլաս** *«Ինչո՞ւ դու

էլ չգիտենալ ես ձևացնում». Սուդ չդեսնօղս՝ չլսօղս գըլա «Այնպես է ձևացնում, որ իբր թե չի տեսնում ու չի լսում»։

Անցյալ դերբայի –ած ձևը Նոր Նախիջևանի բարբառում շատ հաճախ գործ է ածվում անցյալ անորոշի նշանակությամբ։ Ինչպես հայտնի է, հայերենի մեջ անորոշ դերբայը ժամանակ չունի և կարող է հավասարապես գործածվել ներկայի, անցյալի և ապառնիի մտքով. օրինակ՝ երբ ասում ենք «հայ լինելդ հասկացա», կարող ենք իմանալ հավասարապես «հասկացա թե հայ էիր կամ հայ ես և կամ հայ պիտի լինես»։ Այս պակասությունը լրացնելով՝ Նոր Նախիջևանի բարբառը անորոշ դերբայը հատկացրել է ներկա ժամանակի համար, անցյալ դերբայը հատկացրել է անցյալ անորոշին, իսկ –ած ըլալ կամ –ած գտնուիլ ձևը հատկացրել է հարակատարին։ Օրինակ՝ Յէս նարա խէվ էղածը չօխտան գիդիմ «Ես նրա հիմար լինելը (անցյալ) վաղուց գիտեմ». Նարա նօրը մէռածը մէկ դարի էղավ «Նրա հոր մեռնելը մեկ տարի եղավ». Գիդցօղը գիդեր եղիլ է ադ մաշթուն մէշը ինչ սօյ նրէշդագ նստածը (Պատկ. Գ 340). Ադբէս գրիլ ինճ դէյին՝ ի՞նչ խաբանաթ արած գգնվիլ ինճ «Այդպես գրելով ի՞նչ հանցանք գործել ենք» (հարակատար). Մէռած եղածը չիմացան:

Այս նշանակությամբ գործածվելով՝ դերբայը կարող է նաև ստանալ դիմորոշ հոդ, որ ենթական է նշանակում. ինչպես՝ Խէվ եղածս վդխէ՞ն գիդիս «Ինչի՞ց գիտես, թե ես խենթ եմ». Հայ եղածդ ինչօ՞վ բիդի ցուցունուս «Ինչո՞վ պիտի ցույց տաս, թե հայ ես դու»։

Կարելի է նաև դերբայը հոլովել թե՛ եզակի և թե՛ հոգնակի, կցելով դիմորոշ հոդը. ինչպես՝ Հասածներս չիմացա «Չիմացա թե ի՛նչպես հասանք մենք». Զարգածէն իմացա «Զարնելուց (այսինքն զարնելու ձևից) հասկացա». Մէ՛գ օր մալ բան գդածնէրը էղած չէր «Ո՛չ մեկ օր բան չէին գտած» (գերակատար). Հայ էղածներէն գամըշնան «Ամաչում են որ հայ են». Ասածներէն գա նը (իբր՝ ասածներէն կայ նէ) «Եթե իրենց ասածը ճշմարիտ է». Նարա շալածի՛ն նայէ «Տես նա ի՛նչպես է նվագում»։

Այս դեպքում բացառական հոլովը նշանակում է «պատճառավ». ինչպես՝ Վախէցածէն գիյնի «Վախենալու պատճառավ ընկնում է». Բան չունեցածներէն է «Այն պատճառավ է՝ որ գործ չունեն»։

Առանձին նկատողության արժանի է անցյալ դերբայի բացառական հոլովի մի այլ գործածությունը՝ «տեղ, փոխանակ» նշա-

նակությամբ. ինչպես՝ Հոն գէցաձէդ հօս արի «Փոխանակ ա՛յնտեղ կենալու՝ ավելի լավ է այստեղ գաս»։

Անցյալ դերբայը գործիական հոլովով կամ ա՛յն է դարձվածով ցույց է տալիս անմիջական գործողություն. ինչպես՝ Դէսաձօվս «Անմիջապես որ տեսա». Ա՛սաձօվը յէգավ «Հենց որ ասաց՝ եկավ». Զա՛րգաձօվդ «Անմիջապես որ զարնես». Լը՛սաձնէրօվս «Անմիջապես որ լսեցինք». Դէսաձն ալ ա՛ն է «Հենց որ տեսավ». Էգաձն ալ ա՛ն էր «Եկավ թե չէ՛, հենց որ եկավ». Իմացաձս ա՛ն է «Հենց որ իմացա»։ Այս դարձվածների մեջ, ինչպես տեսնում ենք, գործիական հոլովը շեշտը առաջին վանկի վրա է պահանջում։

Անցյալ դերբայը հոդ առնելով և միանալով թրք. ایکن iken =իfէն մասնիկի հետ՝ ցույց է տալիս գործողության կատարված ժամանակը. ամբողջի վրա դրվում են ս, դ, ը դիմորոշ հոդերը, որոնք ցույց են տալիս գործող անձը կամ ենթական, ինչպես՝ նայա՛ձնիfէնս «երբ ես նայում էի». նայա՛ձնիfէնդ «երբ դու նայում էիր». գարթացա՛ձնիfէնը «երբ նա կարդում էր»։ Սրանք լինում են նաև հոգնակի. ինչպես՝ նայա՛ձնիfէննէրս «մեր նայած ժամանակը, երբ մենք նայում էինք». գնացա՛ձնիfէննէրդ «երբ դուք գնում էիք», առա՛ձնիfէննէրը «երբ նրանք առնում էին»։

Այս բոլորը բարբառի հին ձևերն են. նորերի մեջ որոշյալ հոդը և միջին ի ձայնավորը կրճատվելով՝ վերի ձևերը լինում են նայա՛ձfէնս, նայա՛ձfէնդ, գարթացաձfէնը, նայաձfէննէրս, գնացաձfէննէրդ, առաձfէննէրը և այլն։

Անցյալ դերբայի երկրորդ ձևը գործ է ածվում միմիայն բարդ ձևերի կազմության ժամանակ. գրեթե ամեն տեղ էլ ունի -իլ ձևը. բայց քաղաքում կային սակավաթիվ ընտանիքներ, որոնք -իր ձևն էին գործածում, ինչպես դերբայի, նույնպես նաև ներկայի կամ արգելականի մեջ։ Այսպես ենք գտնում նաև տեղ-տեղ Պատկանյանի գործերում. օրինակ՝ լսիր իմ (Պատկ. Բ 300). ունեցիր իմ (300). սօրվիր ին (297). չէին անիր (293). չէին լմանիր (291). չէր մօդ-նուր (303). չի լսվիր (307). մի՛ ասիր (331). չին ասիր (333). չիմ առնուր (374). չիմ դեսնուր (281). չի դէսնուր (Матер. 44) (Օրի գավառականով). չին ասիր (69). չիմ հասfընար (72). մի՛ ուդիր (120). մի՛ անիր (121, 123)։

Անորոշ դերբայը, որ ինչպես տեսանք, Նոր Նախիջևանի բարբառում գործածվում է միայն ներկա անորոշի նշանակությամբ, ունի -էլ, -ալ վերջավորությունները։ Սրանով երբեմն բարբառում ներգործական և չեզոք բայերը իրար հետ շփոթվում են. օրինակ՝

վառէլ *նշանակում է թե՛ «վառել» (ներգործական) և թե՛ «վառվել» (չեզոք), որ Ում ճյուղում կրավորական* վառվել *ձև է ստացել։ Նույնպես* ժաշfըթէլ *նշանակում է թե՛ «շարժել» և թե՛ «շարժվել». ինչպես՝* Դէղէն ժաշfըթէ՛ *«շարժի՛ր նրան տեղից»*. Դէղէդ ժաշfըթէ՛ *«շարժվի՛ր տեղից»։*

Անցյալ դերբայի նման անորոշ դերբայն էլ կարող է առնել –իfէն *մասնիկը և նշանակում է գործողության կատարված ժամանակը. ինչպես՝* գարթա՛լնիfէնս, ասէլնիfէնդ, բէrէլնիfէնը *«կարդալու ժամանակս, ասելու ժամանակդ, բերելու ժամանակը» և այլն։ Երկուսի նշանակության տարբերությունն այն է, որ անցյալ դերբայով կազմված ձևերը ցույց են տալիս անցյալի մեջ կատարված գործողության ժամանակը, իսկ անորոշ դերբայով կազմված ձևերը ցույց են տալիս ներկայի մեջ կատարված գործողության ժամանակը։*

Ուզել, կrնալ *և այս վերջի նշանակությամբ գործածված* ըլլալ *բայերի մոտ անորոշ դերբայը դրվում է սեռ.-տր. հոլովաձևով. ինչպես՝* Գուզիմ ասէլու fի *«Ուզում եմ ասել թե»*. Դուն գը գrնա՞ս գօղնալու, ճաrամութին անէլու, խափէլու, մարթ մէոցունէլու, ճազար չէշիգ այլաբէrութիններ անէլու *(Պատկ. Գ 289)*. Գըլա՞ դէսնէլու *«Կարելի՞ է տեսնել»։*

Ապառնի դերբայն ունի երկու ձև՝ –լիf *և* –լու. *առաջինը սովորաբար գործ է ածվում* ունիմ, կայ *և* գալ *բայերի հետ. ինչպես՝* խալսէլիf չիfա *«Ազատում չկա, չպիտի ազատվի»*. խալսէլիf ունի՞մ վօr. Բաfնէլիfդ գուfա *«ուզում ես համբուրել»։*

Երկրորդը –լու՝ *շատ ավելի սովորական, ազատ գործածություն ունի քան նախորդը, հակառակ ուրիշ բարբառների, որոնց մեջ* –լու *ձևը հազվագյուտ է,* –լիf *ձևը ավելի տարածված. ինչպես՝* Ասէլուս ան էr fի *«Ասելիքսա՛յն էր որ»*. Ինչ գrէլուս միթf գանէի *«Ինչ գրելիքս էի մտածում»*. Իմ գլխուս fալուն ալ ադ է *«Իմ գլխի գալիքն էլ այդ է»*. Ի՛նչ ասէլուս գիդէյի, ի՛նչ անէլուս *«Ո՛չ ասելիքս գիտեի, ո՛չ անելիքս»*. Զիդէյի ի՛նչ անէլուս *«Չգիտեի թե ի՛նչ անեմ, ի՛նչ անելիքս չգիտեի»*. Ջէռfի վէrշի ուդէլուն ալ առիլ ին *«Ձեռքի վերջին ուտելիքն էլ են առել»*. Մէզի ճէդ fալուներուն ասէf վօr fան *«Մեզ հետ գալիքներին ասացեք որ գան»։*

Գործածվում է նաև իբր անորոշ դերբայ՝ ապառնի ժամանակով, դիմորոշ հոդով և հոլովված ձևով. ինչպես՝ Մէզի մալիմ էղիլ էr fու fալուդ *«Գալդ մեզ հայտնի էր եղել, հայտնի էր եղել մեզ թե գալու ես»*. Մօnցած չիս խօմ ասօr էշթալուները *«Իհարկե չես*

մոռացել, որ այսօր գնալու ենք»։ Ինչի՞ ճամար է իդա վարժարունի ստագ դալունէրս «Ինչո՞ւ համար դպրոցին փող պետք է տանք»։ Դունին ծախվէլուն լսից նը «Երր լսեց թե տունը ծախվելու է»։ Գիդէ՛յի վօ՛ր ծարը գայնէլունէրս «Գիտեի թե ո՛ր ծայրը պետք է կանգնենք»։

Մյուս բարբառների մեջ դերբայների վերաբերմամբ կարևոր երևույթներ են հետևյալները.

Երևանի բարբառում -ում գործ է ածվում ներկա դերբայի համար և սրա կրճատ ձևն է -ըմ. ինչպես՝ էթում վախտը կամ էթըմ վախտը «Գնալու միջոցին, գնալիս»։ Այստեղ հետաքրքրական է նաև -լօն ձևը, որ ուրիշ տեղ բոլորովին անգործածական է. ինչպես՝ սիրէլօն «սիրելով», ասէլօն «ասելով», էթալօն «երթալով» և այլն։

Բայազեդի բարբառում, ինչպես նաև Մշո բարբառում, անցյալ դերբայը կազմվում է -ուկ մասնիկով, բայց միայն կրավորական և չեզոք բայերի համար. ինչպես՝ ՆԲ պառկուկ «պառկած», գ'րուկ «գրված», լվացուկ «լվացված», խերկուկ ա «հերկված է», Մշ. մէռուկ «մեռած», փիցուկ «սատկած», կոտրուկ «կոտրված», գ'ըրուկ «գրված» և այլն։ Այս մասնիկը ուրիշ տեղեր էլ գործածական է, բայց հատուկենտ բառերի մեջ. այսպես պառկուկ, կայնուկ, նստուկ, խառնուկ, կտրուկ բառերը գտնում ենք ո՛չ միայն Մուշ, Ալաշկերտ, Բուլանըխ, Բաղեշ, Տիգրանակերտ, Խլաթ, այլև ավելի հեռուները՝ Ակն, Արաբկիր, Ջենկիլեր, Զարսանջաք, Սուրմալու, Դերսիմ, Վան և մինչև անգամ Եվդոկիա և Պոլիս։ Պոլսի բարբառում ծանոթ առած է «Անցուկը մոռցուկ կլլայ» (անցած գնացած բանը կմոռացվի)։ Գալով մասնիկի ծագման, առաջին իսկ րոպեին մեզ ներկայանում է նվազական -ուկ մասնիկը, բայց ի՞նչ կապ ունի նվազական մասնիկը չեզոքի, կրավորականի և կրավորաբար չեզոքի հետ։ Այս պարագային ակամա ներկայանում է մեզ թրք. -ük մասնիկը, որ ունի ճիշտ նույն գործածությունը։ Բայց այս մասնիկը գործածվում է միայն այն բառերի մեջ, որոնց արմատական ձայնավորն է ü. իսկ մասնիկի բուն սովորական ձևն է -ək, -ık. հմմտ. qər-əq «կոտրած», čökük «չոքած», sök-ük «քանդած», bulaş-əq «վարակված, կեղտոտած», yar-əq «ճղած», del-ik «ծակած», sil-ik «սրբված» և այլն։

Ղարաբաղի բարբառում դերբայներն են. անորոշ՝ օրինակ՝ կա՛րիլ, ա՛սէլ, մուտա՛նալ և այլն, ներկա՝ օրինակ՝ կա՛րօղ, ա՛սօղ, խօ՛սող, մուտա՛ցօղ և այլն, անցյալ՝ օրինակ՝ կա՛րած, ա՛սած, մուտա՛ցած կամ կա՛րալ, ա՛սալ, մուտա՛ցալ և այլն, իսկ ապառնին

կազմվում է −ա՛ցուֆ, −ական *մասնիկներով. ինչպես՝* կրըլա՛կան, բըըլա՛կան, մուտընըլա՛կան *կամ* կրըլա՛ցուֆ, բըըլա՛ցուֆ, մուըըլա՛-ցուֆ *և այլն։ Կարևոր է նկատել նաև ա՛յն, որ Ղարաբաղի, ինչպես նաև Աստրախանի բարբառում անորոշ դերբայի սեռականը կազմվում է* −ի *հոլովմամբ. ինչպես՝* դնէլի, խօսէլի, կարէլի *«դնելու, խոսելու, կարելու»։*

Սրան նման է նաև Կեսարիայի բարբառը, ուր անորոշ դերբայի սեռականը կազմվում է կրկին վերջավորությամբ՝ ու *և* ի. *ինչպես՝* մընալույի, խօսէլույի, տալույի, էրթալույի *և այլն։ Այսպիսի երևույթ ուրիշ ո՛չ մի բարբառում գոյություն չունի։*

Անշուշտ այս ձևափոխությունը առաջացել է այս բարբառներում՝ զանազանություն դնելու համար ապառնի դերբայի (−լու*) և անորոշ դերբայի սեռականի (*−լու*) միջև։*

Զեյթունի բարբառում անցյալ դերբայի մասնիկը, որ ներգործական բայերի համար −օծ *(*<ած*) ձևն ունի, կրավորական բայերի համար դառնում է* −մօն. *ինչպես՝* իփմօն *«եփված»,* փօռմօն *«փռված» և այլն։ Այս մասնիկը, որ ես համեմատել էի հն. համապատասխան* -menos *մասնիկի հետ (Բարբ. 205), առաջանում է* −ման *ձևից (ինչպես նկատեց Մեսրոպ վարդապետ Մաքսուտյան) և կապ չունի հն. մասնիկի հետ, այլ ծագում է հյ.* −ումն, *սեռ.* −ման, *ներգ.* ի −ման *ձևից։ Այս մասնիկը գոյություն ունի նաև ուրիշ բարբառներում, բայց հատուկենտ ձևով. այսպես՝ Ննխ.* կայնըման, նստման, պառկման *«կանգնած, նստած, պառկած», Վանի բարբառով էլ՝ մակբայական գործածությամբ՝* կայնմանց *«կանգնած ձևով»։ Սա այն մասնիկն է, որ Նոր Ջուղայի բարբառում կազմել է ներկայի և անկատարի սովորական ձևը. ինչպես՝* գ՛նաման ամ, *«գնում եմ, գնում էի»։*

Բարբառներում դերբայի վերաբերյալ ամենից զարմանալի նորությունն է −ուշ *մասնիկը, որ ներկայացնում է Համշենի բարբառը։ Այս բարբառում անորոշ դերբայի* −ել, −իլ, −ալ, −ոլ *վերջավորությունները ջնջված և նրանց տեղ հնարված է այս նոր մասնիկը, որ բոլոր լծորդությանց համար էլ ընդհանուր է. ինչպես՝* խօսուշ *«խոսել»,* էշդուշ *«երթալ»,* բերուշ *«բերել» և այլն։ Հոլովված ժամանակ էլ գործածվում է դարձյալ նույն մասնիկը. ինչպես՝*

Ո. Հ.	*բ'էրուշ*	*բ'էրուշնին*
Ս. Տ.	*բ'էրուշի*	*բ'էրուշնուն*
Բ.	*բ'էրուշըն*	*բ'էրուշնուն*
Գ.	*բ'էրուշօվ*	*բ'էրուշնէրօվ*

Ինձ թվում է, թե հիշյալ մասնիկը փոխառյալ է թրք. -իշ, -ըշ, -ուշ *և պրս.* -իշ *մասնիկից, որոնք նույնպես դերբայ են շինում. օրինակ՝ թրք.* ալըշ-վէրիշ *«առևտուր» (այն է՝ առումն և տալն), պրս.* ասայիշ *«հանգիստ, հանգչելն» և այլն։*

Մի քանի խոսք էլ -լիս *ձևով դերբայի մասին, որ արևելյան հայերենի սովորական դերբայներից է և ցույց է տալիս այն գործողությունը կատարելու ժամանակ. ինչպես՝* ուտելիս, խոսելիս, ասելիս, մոռանալիս, ճազալիս, տեսնելիս *և այլն։*

Բարբառներում կա նաև -լուս *ձևը, որ և ոմանք գործ են ածում գրականի մեջ, ինչպես՝* խոսելուս, ուտելուս, մեռնելուս *և այլն։*

Չպետք է կցել այս ձևը ո՛չ գրաբարի -ելի *վերջավորությամբ ածականների ու դերբայների հետ, ո՛չ էլ արևմտահայ աշխարհաբարի* -լուս *ձևի հետ (սիրելիս, սի՛րելո՛ւս պէս և այլն)։ Ըստ այսմ* -լիս *դերբայը պահում է միշտ իր* ս *ձայնը և երբեք չի կարող դառնալ* դ *կամ* ն, *ինչպես մյուսներն են. ուստի ամեն դեմքի համար էլ ասվում է՝*

ես	*գնալիս տեսա*	*մենք*	*գնալիս տեսանք*
դու	*գնալիս տեսար*	*դուք*	*գնալիս տեսաք*
նա	*գնալիս տեսավ*	*նրանք*	*գնալիս տեսան*

Ինչպես վերևը բացատրեցինք, -լիս *գրաբարի հոգնակի նախդրիվ հայցական ձևիցն է և* ս *վերջավորությունը* ս *դիմորոշ հոդի հետ կապ չունի։*

Անորոշ դերբայի բացառականը ջատ տեղ ստացել է մակբայի արժեք. այսպես Նոր Ն. Պոլիս և այլուր -լէն *ձևով (Շմ.՝* -լոն, *ինչպես՝* սիրիլոն *«սիրելեն»)։ Օրինակ՝* Ուտելէն կ՚երթայ. Քալելէ՞ն պիտի էրթանք, չէ նէ ձիով:

Սրա նման է նաև գործիական հոլովը, որ Ե դարից սկսած՝ բռնել է գրաբարի -եալ *անցյալ դերբայի տեղը։ Սրա առաջին օրինակներն են. Արեգակն* ծագելովն *և* վերանալով *և ի մուտս* դառնալով. *և լուսին աճմամբ* լնլով *և* նուազելով. *և այլք ևս յարարածոցն ըստ իւրաքանչիւր բնութեանց* շարժելովն *և* դադարելովն *(Ծնն. 11). Եւ յայտ առնէ երկիր* շարժելովն *և* լուսաւորքն խաւարելովն *և օդքն* գժդմնելովն *և* քստմնելով *(Ծնն. 16)։ Կամ ծով* ծածկելով... *կամ երկիր* կլանելով... *կամ հողմ* պարտասեցուցանելով... *կամ օդք երբեմն զսառնամանիսն* շնչելով *և երբեմն զխորշակն* բերելով *(Ծնն. 17)։ Փավստոսի մոտ (ըստ Մատիկյան, Անանունը, էջ 31) 10-ից ավելի են պատահում նման ձևեր, ինչպես՝ Քրիստոսի բանաւոր*

խաշանցն նովունլով *(էջ 26).* խրատելով *(26). և ինքն կայր քաշու-թեամբ* ունելով *զճակատուն տեղի (124). շրջէր* ճեմելով *(142) և այլն։*

Բարբառներում, ինչպես և գրականում անորոշ դերբայի գործիականը մակբայական գործածություն ունի ճիշտ բացառականի նման և նրան իբր համանիշ։ Հավասարապես կարելի է ասել՝ Ուտե-լէն կ'երթայ *կամ* Ուտելով կ'երթայ. Քալելէ՞ն պիտի երթաք *«Քա-լելո՞վ պիտի երթաք»։ Առաջինները հատուկ են միայն արևմտյան բարբառներին և արևմտյան գրականին, իսկ երկրորդները՝ թե՛ արևմտյան և թե՛ արևելյան բարբառներին և երկու գրական լեզու-ներին։*

Ղարաբաղի բարբառում անորոշ դերբայի գործիականը -լավ *ձևն ունի և էական բայի ներկայի և անցյալի հետ միանալով կազմում է բայական առանձնահատուկ մի ձև, որ իմ «Ղարաբաղի բարբառի քննության» մեջ (էջ 174) կոչել եմ անմիջական ձև. օրինակ՝*

ճաճէ՛լավ ըմ, պըծճէ՛լավ ըս, թխէ՛լավ ա *և այլն.*
ճաճէ՛լավ ի, պըծճէ՛լավ իր, թխէ՛լավ ար *և այլն։*

Այս սովորական ձևից դուրս անմիջական ձևը կարելի է կազմել նաև բայական պարզ արմատի կրկնությամբ և ու *շաղկապի միաց-մամբ. ինչպես՝*

ճաստւճաս ըմ, ճաստւճաս ի,
ճովըճաս ըմ, ճովըճաս ի,
թկվըթակ ըմ, թկվըթակ ի *և այլն։*

Սրանք նշանակում են «հասնելու վրա եմ, հասնելու վրա էի, այսինքն՝ քիչ մնաց, որ հասնեմ, քիչ մնաց, որ հասնեի» և այլն։

Անմիջական գործողություն ցույց տվող այս ձևերը գոյություն ունեն միայն մի քանի բայերի համար և քիչ են գործածական։

6. ԴԵՐԲԱՅԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Գրաբարի, միջին հայերենի և բարբառների վերոհիշյալ բոլոր ձևերի միջից աշխարհաբարը յուրացրել է հետևյալ դերբայները. 1) անորոշ դերբայ, 2) ներկա դերբայ, 3) անցյալ դերբայ, 4) ապառնի դերբայ։

Ա. Անորոշ դերբայ

Անորոշ դերբայի (աներևույթի) վերջավորություններն են՝

Ա լծ. -ել *(օրինակ՝ սիրել, գործել, բերել).*

-նել *(օրինակ՝ պագնել, թքնել. ջնջված է արևելյան գրականում. արևմտյան գրականումն էլ շատ սակավաթիվ է)։*

Բ լծ. -իլ *(օրինակ՝ խօսիլ, շարժիլ. այժմ ջնջված է արևելյան գրականում)։*

-նիլ *(օրինակ՝ հագնիլ, մեռնիլ. այժմ ջնջված է արևելյան գրականում և դարձած* -նել*)։*

Գ լծ. -ալ *(օրինակ՝ կարդալ, խաղալ).*

-անալ *(օրինակ՝ գողանալ, արևմտյան հայերենում՝ գողնալ).*

Դ լծ. -ուլ *(մնում է միայն մի բայ, այն է* թողուլ, *որ գործածական է միայն արևմտյան գրականում)։*

Անորոշ դերբայի ժամանակն անհայտ է. նա ծառայում է ընդհանրապես թե՛ իբր ներկա, թե՛ իբր անցյալ և թե՛ իբր ապառնի։ Սրանից էլ ծագել է իր անունը։

Բայց աշխարհաբարում, հատկապես արևմտյան գրականում, անցյալի և ապառնիի համար ստեղծվել են առանձին ձևեր. այն է՝ անց. -ած ըլլալ *և ապառնիի համար* -ելու ըլլալ: *(Այտն. 95, առաջինը կոչում է* աներևույթ կատարյալ, *երկրորդը՝* աներևույթ ապառնի*)։ Օրինակ՝* սիրած ըլլալ, սիրելու ըլլալ:

Շատ հեղինակներ ուշադրություն չեն դարձնում հայերենի այս կետի վրա և ամեն դեպքում էլ գործ են ածում պարզապես անորոշ ձևը. օրինակ՝

«Հաւանական է, որ Սևանայ վանքի իրավունքները IX դարում նուիրուած տեղերի նկատմամբ կարող էին խախտվել» (Լ. Մելիքսեթ-Բեկ, Տեղեկագիր Արմֆանի, 1940, № 4, էջ 118)։

Պետք է լինի «խախտված լինել». այստեղ խախտվել *բոլորովին տարբեր իմաստ և բովանդակություն է տալիս։*

Դերբայները կարող են ունենալ իրենց կրավորական սեռը. այս ձևը կազմվում է Ա և Բ լծորդությունների 4 տիպարների համար դնելով -ուիլ, -նուիլ *վերջավորությունը, որ արևելյան գրականում դառնում է* -վել, -նվել:

Օրինակ՝ սիրել—սիրուիլ—սիրվել, տեսնել—տեսնուիլ—տեսնվել, շարժիլ—շարժուիլ—շարժվել, անցնիլ—անցնուիլ—անցնվել:

Գ լծորդության -ալ, -անալ, -նալ վերջավորությունները կրավորականում դառնում են -ացուիլ (-ցուիլ). այսպես՝ կարդալ—կարդացուիլ (արևել. կարդացվել), գողանալ—գողացուիլ (արևմտ. գողցուիլ, արևել. գողացվել)։

Թե՛ ներգործական և թե՛ կրավորական ձևերը կարող են դառնալ բացասական՝ ստանալով չ մասնիկը. ինչպես՝ չսիրել, չսիրուիլ (չսիրվել), չկարդալ, չկարդացուիլ (չկարդացվել)։

Անորոշ դերբայն իր բոլոր ձևերով գոյական է և հոլովվում է հետևյալ ձևով.

Ո. Հ. սիրել	սիրուիլ (արևել. սիրվել)
Ս. Տ. սիրելու	սիրուելու
Բ. սիրելէ (արևել. սիրելուց)	սիրուելէ (արևել. սիրվելուց)
Գ. սիրելով	սիրուելով

Նկատելի է, որ ուղղականի ի ձայնավորը հոլովման ժամանակ դառնում է միշտ ե։ Այսպես նաև խօսիլ—խօսելու, չյօգնիլ—չյօգնելով։

Արևմտահայ գրականում բց. սիրելէ ձևը հաճախ ստանում է ն հոդը (Այտն. 101). բայց առանց հոդի էլ սովորական է. ինչպես՝ Չկշտացան իրար սիրելէ, գգուելէ և փայփայելէ։

Արևելյան գրականում ներգոյական հոլովը (սիրելում, կարդալում, խաղալում) անսովոր և ավելի բարբառային է։

Անորոշը ընդհանրապես հոգնակի չունի, բայց կարելի է երբեմն հոգնակի էլ գործածել. օրինակ՝

Այդ տեսակ զզչալներ շատ եմ տեսեր
Այդ ուտել-խմելներդ չե՞ն որ զքեզ կը կործանեն (Այտն. 101)։

Ինչպես վերջին օրինակը ցույց է տալիս, անորոշը կարող է ստանալ նաև ստացական հոդ. ինչպես՝

Երթալդ ըլլայ, գալդ չըլլայ (անեծք)
Ինչպէս երթալներնիս-գալերներնիս չիմացանք (չիմացանք թե ինչպես գնացինք ու եկանք)։

Անորոշ դերբայը գոյական է և այս դեպքում կարող է հաճախ ստանալ որոշիչ հոդ. օրինակ՝

Ձեր երթալը չիմացայ
Կարգուիլը շատ անուշ բան է (Պարոնյան)

Նայիլ կ'ուզէ, բայց ամէն կը նուաղի
Կ'ուզէ սիրել, ճամբայրի մը նետ նուաղիլ,
Մաշիլ, խամրիլ, յոգնած իյնալ գերեզման:

(*Դուրյան*)

Սխալ է սակայն ասել.

Որտեղի՞ց սկսեց նա իր տարածվելը:
(Ա. Ղարիբյան, Տեղեկագիր ԱրմՖանի, 1943, № 2, էջ 6)։
(Պետք է լինի՝

Որտեղի՞ց սկսեց նա տարածվել
Որտեղի՞ց սկսվեց նրա տարածվելը
Որտեղի՞ց սկսվեց նրա տարածումը):

Անորոշը իբրև գոյական համազոր է –ութիւն կամ –ում ձևով վերացական գոյականի. այսպես վերի օրինակների մեջ՝

կարգալիլը—ամուսնություն
տարածվելը—տարածում

Նույնպես՝ մեռնելը—մահ
ապրելը—կյանք *և այլն։*

Բայց կարելի չէ ամեն անգամ –ում-ը դարձնել դերբայ. ինչպես՝

Գրական և իմաստասիրական շարժում
(=Գրական և իմաստասիրական շարժվելը)!
Պետք էր քաջալերել այս շարժումը
(=Պետք էր քաջալերել այս շարժումը)!

Անորոշ դերբայի բացառականը արևմտյան գրականում հաճախ մակբայի իմաստ ունի և այս դեպքում ստանում է միշտ որոշիչ հոդ. օրինակ՝

Երկու կողմ օրօրուելէն կ'երթայ
Քիթը բերանը ծռմռելէն կը խօսէր

Սակայն սովորական բացառականի արժեք ունի՝

Նայելէն չէր կշտանար
Այդչափ խօսելէն չձանձրացա՞ր
Այս նիւանդութիւնը մսելէն առաջ կու գայ
Իմ գալէս ետքը

Արևելյան գրականում մակբայական գործածության դեպքում դրվում է գործիական -ըով ձևը, իսկ սովորական բացառականը դառնում է -լուց: *Այսպես, վերի օրինակները դառնում են՝*

Երկու կողմ օրօրվելով գնում էր
Քիթը բերանը ծռմռելով խոսում էր
Նայելուց չէր կշտանում
Այդչափ խոսելուց չձանձրացա՞ր
Այս ճիւանդութիւնը մրսելուց է առաջանում
Իմ գալուց յետոյ

Արևմտյան գրականումն էլ անորոշ դերբայի բացառականն ու գործիականը կարող են իրար փոխանակել. այսպես՝

Փաթտուելով ի՞նչ կ'ըլլայ եղեր
Փաթտուելէն ի՞նչ վնաս կու գայ

(Պարոնյան)

Անորոշ դերբայի սեռականի մասին քիչ հետո։

Բ. Ներկա դերբայ

Երկու գրական լեզուների մեջ ընդունված ներկա դերբայի ձևն է -ող, *որ ժառանգություն է մնացել հին գրաբարից։ Միայն թե, մինչդեռ հին գրաբարում շատ հազվագյուտ մի ձև էր, աշխարհաբարում ամեն բայի համար առանց բացառության ընդունված միակ ձևն է։ Կազմվում է Ա և Բ լծորդությանց մեջ* -ող *մասնիկով, իսկ Գ լծորդության մեջ* -ցող *մասնիկով. ինչպես՝* սիրող, բերող, խոսող, խաղացող, մնացող, փղացող *(արևմտ. գողցող) և այլն։*

Ցույց է տալիս գործող անձ։

Աշխարհաբարը ներկա դերբայի կազմության այս շատ պարզ եղանակով տեղ-տեղ չի համապատասխանում գրաբարին, որ ներկայացնում է զանազան նրբություններ և բացառություններ։ Այդ բացառությունները ընդունված են աշխարհաբարում իբրև քարացած ձևեր և գործածվում են մյուսների հետ՝ մի քիչ տարբեր առումով։ Օրինակ՝

ատող—ատեցող
պահող—պահեցող
իշխող—իշխեցող

կառողացող *(արևել.)*, կրցող *(արևմտ.)*—կարող
ռւսացող—*ուսող*
անող, ընող—արարող
երգող—երգեցող
տեսնող—տեսանող *և այլն։*

-ող ձևով դերբայները թե՛ածական են և թե՛ գոյական. վերջին դեպքում կարող են ստանալ որոշիչ հոդ և հոլովվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի։

Բարկացող մարդ
Երգ ու պար սիրող ժողովուրդ
Գործ տեսնող մարդիկ
Գործ կայ, գործող չկայ
Քէֆ անողին քէֆ չի պակսի

Տառապողներուն, չարչարուողներուն, աւր ճացի կարօտ եղողներուն գործ և աշխատանք կը ճայթայթէր:
Սիրողները երկու ներկայացում տուին:

Այտն. 101 ասում է, որ ներկա դերբայի հոգնակին շատ անգամ գրաբար ձևով է լինում, ինչպես՝ բարկացողք, բարկացողաց: *Արդի լեզվի մեջ այդպիսի երևույթ չկա։*

-ող ձևով դերբային հոմանիշ է -իչ ձևը, որ հին գրաբարում շատ ավելի հարգի և սովորական էր քան -ող: *Աշխարհաբարում սակավաթիվ են -իչ մասնիկով կազմված բառերը և մնում են լեզվի մեջ իբրև գրաբարից ժառանգություն։ Այսպես՝* փրկիչ, երգիչ, շարժիչ, ճամարիչ *(կոտորակի վերին թվանշանը)*, ճամրիչ *(տեր-ողորմյա)*, ճաշիչ, սափրիչ, գործիչ, գրգռիչ, կարգադրիչ, յուզիչ, փորձիչ, մատնիչ, ճամռզիչ *և այլն։ Հատկապես անցողական բայերի համար. ինչպես՝* ձանձրացուցիչ, մեղմացուցիչ, նուաստացուցիչ, սաստկացուցիչ, զայրացուցիչ, *մինչև անգամ* յոգնեցուցիչ *և այլն։*

Ըստ այսմ կարելի չէ ամեն մի բայից ազատորեն կազմել -իչ ձևով դերբայ։ Այսպես կարելի չէ ասել յաղթիչ, խաղացիչ, դնիչ *և այլն (այլ միայն* յաղթող, խաղացող, դնող *և այլն)։*

Բոլո աշխարհաբար և գավառական բառերից ո՛չ մեկը չի կարող ստանալ այս մասնիկը. այսպես՝ գցել, ուզել, ընել *կամ* անել, փնտրել, պառկել, կողպել *բայերից կարելի չէ կազմել* գցիչ, ուզիչ *և այլն ձևերը։*

Իբրև ներկա դերբայ և գործող անձ (կամ իր) ցույց տվող բառեր կազմելու համար գործ է ածվում նաև -ան մասնիկը։

Զարմանալի է այս մասնիկի բնույթը. նա հին գրաբարում գոյություն է ունեցել ո՛չ իբրև կենդանի, այլ մի մեռած մասնիկ, որով կազմված են եղել հին ու կարևոր բառեր։ Նրանք կենդանի են գրաբարում իբրև քարացած ձևեր. սակայն այդ մասնիկով նոր բառեր չէր կարելի կազմել։ Այսպես են վիպասան, ճարտասան, խթան, աfցան, եղան, յեսան, կռան. ուշ ժամանակ կազմված ձև է գովասան (Պղատ. Օրին)։

Միջին դարում այս մասնիկը չի գործում. բայց նոր բարբառներում մեծ կենդանություն է ստանում և նրանով են կազմվում բազմաթիվ բառեր. ինչպես՝ ճաչան, ճարբան, վազան, սուտասան, սուտխաբան, դնան և այլն։

Ի նկատի ունենալով այս մասնիկի շատ մեծ հնությունը, կարծում եմ, որ նա ծագում է հնխ. -ŋt- ձևից, որ կազմում էր ներկա դերբայ։ Հայերենի ձայնաբանության օրենքով ŋ տալիս է -ան-, իսկ բառավերջի t (հատկապես n-ից հետո) ջնջվում է։

Ինչո՞ւ սակայն մասնիկը, որ գրաբարում արդեն մեռած էր և միջին հայերենում էլ չէր գործում, հանկարծ նոր կենդանություն ստացավ բարբառներում։

Կարծում եմ, այստեղ դեր ունի թրք. -an- մասնիկը, որ ներկա դերբայ կազմող միակ մասնիկն է (իր հետ ունենալով -en՝ թեթև ձայնավորով բառերի համար, մինչդեռ -an հատուկ է ծանր ձայնավորով բառերի). ինչպես՝ al-an առնող, qač-an փախչող, ver-en տվող, gez-en ման եկող, gid-en գնացող և այլն։

Աշխարհաբարում -ան մասնիկով բառեր չեն կազմվում. բացառություն է դերասան, որ կազմված է վիպասան, ճարտասան և գովասան բառերի օրինակով։

Ներկա դերբայ կազմելու համար ունենք նաև -ուն մասնիկը, որ սակայն շատ ավելի քիչ է գործածվում քան նախորդները. օրինակ՝ մնայուն, գնայուն, շարժուն, կայուն, տոկուն, դողդոջուն, կարկառուն, փայլուն և այլն։

Ընդհանրապես այս բառերը հնից ավանդված ձևեր են, բայց մի մասն էլ նոր է կազմված։

Այս մասնիկը ցույց է տալիս ո՛չ թե միայն մի անգամ գործող անձ, այլ միշտ նույն բանը անող կամ միշտ նույն վիճակի մեջ գտնվող։

Ներկա դերբայի համար մեջ բերված բոլոր վերոհիշյալ մասնիկները հատուկ են թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրական լեզուներին։ Բայց արևելյանին միայն հատուկ են -ում *և* -լիս, *որոնք սահմանականի ներկան և անկատարը կազմող մասնիկներ են, ինչպես գիտենք։*

Այս մասնիկները կարող են գործածվել սակայն նաև իբրև զուտ դերբայ. ինչպես՝ Այն մարդը գնում տեղը խօսում է. Ուտելիս ինչո՞ւ ես շրթունքներդ շփշփացնում:

Գ. Անցյալ դերբայ

Անցյալ դերբայ կազմելու համար ունենք երկու հիմնական մասնիկ՝ -ել *որի արևմտյան համապատասխան ձևն է* -եր, *և* -ած:

Սրանցից զուտ դերբայն է -ել=-եր, *որ ծառայում է կազմելու բազմաթիվ բաղադրյալ ձևեր. ինչպես՝* տեսել եմ=տեսեր եմ, տեսել էի=տեսեր էի *և այլն։ Այս բոլորի մասին ընդարձակ խոսել ենք արդեն։ Կարելի չէ բնավ գործածել այս ձևերը առանձին կամ հոլովել։ Բայց կա նրանց կրավորականն ու բացառականը. ինչպես՝* տեսնվել եմ, տեսնվել էի, չեմ տեսել, չէի տեսել, չէի տեսնվել. *արևմտ.* տեսնուեր եմ, տեսնուեր էի, չեմ տեսեր *և այլն։ Կարելի չէ որևէ դեպքում կրճատել այս ձևերը, ինչպես ընդունված է բարբառների մեջ։*

-ած *մասնիկը կազմում է անցյալ դերբայ, որ կարող է գործածվել թե՛ իբրև ածական և թե՛ իբրև գոյական։ Վերջին դեպքում գործածվում է առանձին, ստանում է որոշիչ կամ ստացական հոդ և հոլովվում է։ Իբրև դերբայ՝ կազմում է բաղադրյալ ձևեր և ունի իր կրավորական ու բացասական ձևերը։*

Օրինակներ՝

Ածական.— յոգնած մարդ, տեսած տունս, ծովի մեջ բուսած ժայռեր. *կրավորական՝* սիրված ու փայփայված զավակներ, կարդացված գրքեր:

Գոյական.— Անցածն անցավ. Եղածը եղած է. Խօսածը կը թռչի, Գրվածը կը մնա. Դրա խօսածից մի բան հասկացա՞ր. Գրվածի ոճից երևում է. Քո ասածներից ի՞նչ դուրս եկավ:

Դերբայ.— Տեսած եմ, տեսած էի, չեմ տեսած, չէի տեսած, տեսնված եմ, չեմ տեսնված, չէինք տեսնված *և այլն։*

-ած *վերջավորությամբ դերբայը ընդհանրապես անցյալ է, բայց կարող է նաև լինել ներկա. ինչպես՝*

Կերած հացդ *(այն հացը, որ այժմ ուտում ես)* ո՞րտեղից ես առել:

Ձեռքիդ բռնած լրագիրը *(այն լրագիրը, որ այժմ ձեռքիդ ես բռնել)* ո՞ր օրվանն է:

Պառկած կարդում է *(այժմ պառկած է և կարդում է)։*

Անցյալ դերբայի -ել (-եր) *և* -ած *մասնիկներից դուրս ունենք նաև երկու ուրիշ մասնիկ, որոնք նույնպես գործածվում են անցյալ դերբայ կազմելու համար։ Դրանք են՝* -եալ *և* -եցեալ:

Սրանց տարբերությունը նախորդներից այն է, որ մինչդեռ -ել (-եր) *և* -ած *գործածական են անխտիր բոլոր բայերի համար՝ իբրև կենդանի մասնիկ, ընդհակառակը* -եալ *և* -եցեալ *հատուկ են միայն սակավաթիվ բառերի* (-եցեալ *շատ ավելի սակավաթիվ քան* -եալ): *Երկուսն էլ ներկայացնում են գրաբարից մնացած բառեր՝ իբրև քարացած ձևեր, և չեն կարող կազմել իսկական դերբայներ։ Այսպես են՝* անցեալ, մնացեալ, մեռեալ, սիրեցեալ, խաչեալ *կամ* խաչեցեալ, կործանեալ, լքեալ, քարացեալ, ուրացեալ *և այլն։*

Այս բոլորը կազմված են գրաբար բայերից և հին լեզվից մնացած ժառանգություն են։ Բուն աշխարհաբար և գավառական բառերի վրա կարելի չէ դնել -եալ *կամ* -եցեալ *մասնիկները։ Կարելի չէ ասել, օրինակ,* գոցեալ, ուզեալ *կամ* ուզեցեալ, կղպեալ, փնտրեալ *և այլն։*

-եալ *և* -եցեալ *ձևով դերբայները՝ դերբայ են միայն գրաբարի համար, իսկ արդի աշխարհաբարում գործածվում են միայն իբրև ածական կամ գոյականաբար առնված ածական. օրինակ՝*

Անցեալ տարի. Կործանեալ գահ. Լքեալ թողեալ ագարակներ. Քարացեալ ձև. Մեռեալ մասնիկ. Մեռեալ ժամ. Օրհնեա՞լ ժողովուրդ. Կատարեալ մարդ է. Բեկեալ գիծ:

Հանգուցեալը շատ բարի մարդ էր. Անցեալն էանց. Ուրացեալների բանակը ջախջախուեց. Խաչեցեալի մարմինը թաղեցին. Անիծեալը նորից եկաւ.

«Անիծեալը» Մամուրեանի թարգմանութիւնն է. Անցեալ կատարեալի խոնարհումը *և այլն։*

Դ. Ապառնի դերբայ

Ապառնի դերբայի սովորական մասնիկներն են -լու *և* -լիք:

-լու *իբրապես անորոշ դերբայի սեռականն է. գործածվում է՝*

ա. Նախ իբր ածական. ինչպես՝ բնակելու տուն. վախենալու երազներ. տեսնելու *(կամ տեսնվելու)* բան է. չուտվելու կերակուրներ. սիրելու տղայ է. Մեռնելու ժամը եկել է. Կարդալու լաւ-լաւ գրքեր ունե՞ս. Ուտելու հաց չունի: *Սրանցից մի քանիսը դեռ պահում են անորոշ դերբայի պատկերը. ինչպես՝* Մեռնելու ժամը եկել է:

բ. Ավելի քիչ անգամ իբրև գոյական. ինչպես՝ Ուտվելուները կե՛ր, չուտվելուները թո՛ղ:

գ. Ամենից ավելի գործածական է իբրև դերբայ և կազմում է բաղադրյալ ձևեր. ինչպես՝ Տեսնելու եմ, տեսնելու էի, չեմ տեսնելու, չէի տեսնելու, տեսնվելու եմ, տեսնվելու էի, չեմ տեսնվելու, չէի տեսնվելու: *Սրանց մասին ընդարձակ խոսել ենք արդեն։*

-լիք *մասնիկով կազմված դերբայը գործածվում է՝*

ա. Նախ իբրև գոյական, և այս պարագային կարող է ստանալ որոշյալ կամ ստացական հոդ և հոլովվել. օրինակ.

Ա՛լ ըլլալիքը եղաւ. Ա՛լ ըսելիք չմնաց. Ըլլալիքը առաջուց գուշակեց. Ընելիքը չէր գիտեր=*Ինչ անելիքը չէր իմանում.* Ըսելիքս իմացան. Գրելիքդ չմոռնաս. Գալիքէն կը վախնայինք. Ուտելիքներն ու խմելիքները թողեցին ու գնացին. Առնելիքս ու տալիքս հավասար դուրս եկան: Կանուխ հանելիքդ գիտեի:

Այս բոլորի մեջ զգացվում է բայի գոյությունը, բայց կան բառեր էլ, որոնք կա՛մ ձևով և կա՛մ իմաստով չեն համապատասխանում նրանց։ Սրանք ո՛չ թե աշխարհաբարի մեջ նոր կազմված բառեր են, այլ գրաբարից ավանդված քարացած ձևեր. ինչպես՝ օծանելիք, ծխանելիք, զվարճալիք, հոտոտելիք, տեսանելիք, ճաշակելիք, լսելիք, շօշափելիք *և այլն։* Օծանելիք *նշանակում է «սպեղանի» և եթե աշխարհաբարի մեջ կազմված ձև լիներ, պետք է լիներ* օծելիք *և պիտի նշանակեր «օծելու (գիրք, եկեղեցի, պատկեր կամ քահանա)»։* Ծխանելիք *նշանակում է «խունկ» և աշխարհաբարի ձևով պիտի լիներ* ծխելիք, *որ պիտի նշանակեր «ծխելու (գլանակ, ծխախոտ, սիգար և այլն)»։* Զվարճալիք *զավեշտական բան է և աշխարհաբարով պիտի լիներ* զվարճանալիք: *Վերջապես* տեսանելիք, շօշափելիք, հոտոտելիք *և այլն ո՛չ թե պիտի նշանակեին* տեսնող, շօշափող, հոտոտող *(աչք, ձեռք, .քիթ) և այլն հինգ զգայարանները, այլ «տեսնելու, շոշափելու, հոտոտելու և այլն առարկա»։*

բ. Իբրև ածական է գործածվում և այդ դեպքում միացած է լինում գոյականի հետ. ինչպես՝ Գրելիք թուղթս. Ուղարկվելիք դեսպանը. Լինելիք հրաւէրները. Ուտվելիք կերակուր չէ. Երթալիք տեղ ունի՞ս:

դ. Գործածվում է իբր դերբայ և այս դեպքում միանում է ունիմ (ունեմ) *բային. ինչպես՝* Այլևս այս երկիրը տեսնելիf չունիմ. Եթէ այսօր չյաղթուի, այլևս յաղթուելիf չունի:

Ինչպես օրինակները ցույց են տալիս, սրանք սովորաբար բացասական են լինում։ Բայց կարելի է նաև գնել դրական. ինչպես՝ Քաշելիf ունինf եղեր *(Պարոնյան)։ Իսկ* ըսելիf ունիմ, տալիf ունիմ, առնելիf ունիմ *ձևերի մեջ* -լիf *զուտ գոյական է կազմում։*

Ապառնի դերբայի սովորական -լու *և* -լիf *մասնիկներից դուրս ունենք նաև* -լի *մասնիկը, որով կազմվում են մի խումբ ածականներ։ Այս բառերի մի մասը գրաբարից ժառանգություն է. ինչպես՝* սիրելի, ողբալի, ատելի, նախանձելի, հիանալի, զարմանալի, սոսկալի *և այլն։ Մի երկրորդ մասը սրանց օրինակով կազմված ուրիշ բառեր են. ինչպես՝* խղճալի, ցավալի, տրտմալի, ուրախալի, զվարճալի, ամոթալի, համակրելի *և այլն, որոնք գրաբարի մեջ այնչափ հարգի չեն, սակայն աշխարհաբարի մեջ ընտիր բառեր են (Այտն. 103)։*

Այս բոլորը, ինչպես ասացինք, ածական են. ինչպես՝ սիրելի բարեկամ. ողբալի վիճակ. ամէնուն ատելի. օրինակելի կարգապահութիւն. համակրելի օրիորդ. ներկայանալի մի երիտասարդ:

Այտն. 103 ասում է, որ այս կարգի բառերը (գոնե ոմանք) կարելի է մտածել իբրև -լի *ածականով կազմված բարդություն. օրինակ՝* ամօթալի=ամօթով լի *(իմա՝ ամօթալից). այս դեպքում նրանք կանցնեն նախնյաց ընտիր բառերի շարքը։*

Զուտ աշխարհաբար և գավառական բառերը չեն կարող ստանալ այս -լի *մասնիկը. կարելի չէ ասել* համրելի, կողպելի, փնտրելի, գոցելի, ուզելի *և այլն։*

Ե. Բայանուն

Աշխարհաբարի մեջ բայանունը կազմվում է բառի կամ բայի պարզ արմատից, կամ f *հավելվածով, կամ որևէ մասնիկով, որ կարող է նաև* f *հավելվածն ստանալ. այսպես՝*

ա. Բայի պարզ արմատից.— դող, գիտ, զարկ, ծեծ, խնդիր, ծիծաղ, վախ, կերուխում, երթևեկ, առուտուր, եփութափ:

բ. Բայարմատը f *հավելվածով.*— հևf, լիցf, տեսf, դիրf, ծախf, ցոյցf, խնդիրf, մուտf, ելf, թռիչf, թշնամանf, ելևէջf, ծալf,

բերք, շարք, տղաբերք, բարևտուք (գրաբար ասվում է եզակի՝ տես, դիր, ծախ, ցոյց, խնդիր)։

գ. Գոյականը կամ ածականը ք հավելվածով.— հուրք (օրինակ՝ վարդեջուրը ցաված աչքին հուրքը կ'առնէ), ջուրք, խաղք, երկայնք, լայնք:

դ. Անցյալ դերբայի -ած կամ մանավանդ կրավորական -վածք ձևի վրա ք հավելվածով.— աղածք, խօսվածք, նայվածք դրվածք, գրվածք, կեցվածք, հօրինվածք, նստվածք (որոնց գրաբար ձևն է նայեցուած, նայեաց, յաւելուած, յօրինուած)։

ե. Արմատի -աց ձևի վրա ավելացնելով ք.— լացք, լվացք, ընթացք (միջին հայերենով էլ արմացք, իմացք, յետմնացք «ժառանգությունները»)։

զ. -անք մասնիկով.— աղաչանք, հալածանք, աշխատանք, դատանք, բաղձանք, արտորանք, անապարանք, դժգոհանք, մխիթարանք, զարմանք, բամբասանք, զրկանք, զգուանք:

է. -ումն կամ -ում մասնիկով՝ շատ անգամ հոգնակի.— ուսումն=ուսում, հնչումն, կործանում, սոսկում, իրարանցում, սրտհատնում, գոռում, գոչում, բերում կամ բերմունք, կարդացմունք, վարմունք, մտածմունք:

ը. -ութիւն մասնիկով.— քննութիւն, մտածութիւն, մատնութիւն, մոռացութիւն, ծանօթութիւն, տեսութիւն։

թ. -ուստ կամ -եստ, -իստ մասնիկով.— փախուստ, գալուստ, կորուստ, ապրուստ, թաքուստ, հանգիստ, գովեստ:

ժ. -ուց, -էց մասնիկով կամ ք հավելվածով.— ուռէց, այտուց, ուռեցք, այտուցք:

ժա. -ուք, -էք մասնիկով.— մտմտուք, սրտմաշուք, պահվտուք, փնտռտուք, տնօրհնէք, տունդողջէք:

Այս մասնիկներով ուրիշ բառեր էլ կան, բայց որովհետև դերբայի զորություն չունեն, ուստի բայանուն չեն, այլ հասարակ գոյական. ինչպես՝ վաճառք, ապրանք, ցուցանք «հրեշ», համրանք «թիվ», զարդարանք «զարդ», ջրաղացք, ծերութիւն, բարութիւն, մարդկութիւն և այլն։ Բառեր էլ կան, որ մի իմաստով բայանուն են, մի ուրիշ իմաստով գոյական. ինչպես՝ մուտք, ելք «շահ, ծախս» իմաստով գոյական են, իսկ «ելնելը, մտնելը» իմաստով բայանուն։

ԳԼՈՒԽ Բ

ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԱԽԴԻՐ

Նախդիր և նախադրություն, մանավանդ նախադրություն և մակբայ շատ են շփոթվում թե՛ միևնույն լեզվի մեջ և թե՛ մանավանդ լեզվից լեզու։ Օրինակ՝ հայերեն առաջ բառը թե՛ մակբայ է և թե՛ նախադրություն. մակբայ է՝ երբ ասեմ առաջ անցաւ. բայց նախադրություն է, երբ ասեմ քեզնից առաջ անցավ: Նմանապես հյ. առ, ի նախդիր են և անա, անաւասիկ մակբայ, իսկ ֆրանս. à «ի» և voilà «ահա»՝ հավասարապես նախադրություն (Brachet, Gram. fr., 1903, 260 և 263)։

Բխելով հայերենի ոգուց, մենք այս բառերը կարող ենք սահմանել հետևյալ ձևով։

Նախդիր են կոչվում մի կամ երկու և երեք ձայներից բաղկացած այն բառիկները, որոնք իբրև բառ առանձին գոյություն չունեն և որոնց իմաստն էլ շատ ընդհանուր և շարժական է. սակայն միանալով գոյականների և դերանունների զանազան հոլովների հետ՝ ստանում են որոշ և հաստատուն նշանակություն։ Նրանք կարող են կցվել նաև բայերին և ծառայելով իբրև նախամասնիկ՝ փոխում են բայի նշանակությունը։ Այսպես ընդ նմա «նրա հետ», ընդունել (ունել «բռնել» բայից)։

Իսկ նախադրությունը այն անփոփոխ բառն է, որ ունի առանձին իմաստ և միանալով գոյականների և դերանունների հետ, որոշում է նրանց այս կամ այն պարագան և այս հանգամանքով կապում նրան բայի հետ։ Օրինակ՝ նրանից առաջ անցաւ. այստեղ

առաջ նախադրություն է, որ որոշում է նրա տեղի պարագան և այս հանգամանքով կապում է նա բառը անցաւ բայի հետ։

Այն բառը, որ նախադրությունը կապում է բայի հետ, ունենում է որոշ հոլով և այդ հոլովով դառնում է նախադրության խնդիրը։ Իսկ նախադրությունը նրա հետ միասին՝ կոչվում է նախադրությամբ խնդիր։

Եթե չլինի այդ խնդիրը և նախադրությունը ինքնին կապվի բային, կդառնա մակբայ։ Այսպես, եթե ասենք՝ նա առաջ անցաւ, ցաւ, առաջ բառը մակբայ է դառնում։

Ուրեմն ըստ էության նախադրություն և մակբայ միևնույն բաներն են։

1. ՆԱԽԴԻՐԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆՈՒՄ

Այն ինչ որ հիմա մենք կոչում ենք նախդիր, հնդեվրոպական նախալեզվի համար մակբայ կամ նախադրություն է. և ինչպես որ մեր այժմյա նախադրություններն ու մակբայները հնդեվրոպական նախալեզվի գոյականների այլևայլ հոլովներից առաջացած ու քարացած ձևեր են, նմանապես հնդեվրոպական նախադրություններն ու մակբայները նախահնդեվրոպական լեզվի գոյականների հոլովներից առաջացած ու քարացած ձևեր են։ Ուրիշ խոսքով՝ մեր արդի նախդիրները հնդեվրոպական լեզվի մեջ առանձին ու անկախ հոլովված բառեր էին, որոնք հնդեվրոպական նախալեզվում իրենց ինքնությունը կորցնելով, դարձել են նախադրություն կամ մակբայ, իսկ այժմ՝ է՛լ ավելի թուլանալով ու շեշտից զրկվելով՝ դարձել են երկրորդական բառեր, գրեթե հավասար մասնիկներին։ Նախդիրներից շատերը տակավին մատնում են իրենց հին հոլովական վիճակը, թեև ուրիշներ այլևս անճանաչելի են դարձել։ Առաջիններից ունենք՝

Հնխ. perə «առաջը, առջևը» բնից՝
ներգոյականի i վերջավորությամբ կամ առանց վերջավորության սանս. pari, զնդ. pairi, հն. πέρι, լտ. per. գոթ. fair, լիթ. per, հսլ. prě—, սանս. peré—;

սեռ.—բցռ.—սանս. puràs, զնդ. parŏ, հն. παρος;—o վերջավորությամբ (որ թվում է թե գործիական է ցույց տալիս), սանս. pra, զնդ. fra, հն. προ, πρω, լտ. prō, լիթ. pra, pro, հսլ. pro, pra, հիռլ. ro, կան և մի քանի անհայտ ձևեր, ինչպես՝ հն. παρα, παραι, սանս. purà, գոթ. faur, հյ. առ, լտ. prae.

Հնխ. ep— «կողքին, քովը» ընից՝ հնխ. ėpi «նաև», ներգ. àpi «բացի, նաև», հն. ἔπι «վրա», հյ. և;

սեռ.—բցռ.— թերևս pos, որից սանս. paç-čá, լիթ. pas-kuĩ, լտ. pos-t, pone (*pos-ne) և a հավելվածով ու s վերջավորու-թյամբ՝ հն. αψ, լտ. abs;

o վերջավորությամբ՝ հսք. po, pa, լիտ. pa, po, լտ. po (ինչ-պես po-situs) և a հավելվածով՝ սանս. àpa, զնդ. apa, հն. ἄπο, առանց վերջավորության՝ լտ. ab,

Հնխ. en «մեջը, ի ներքս» ընից՝

ներգ.—հն. ἐνι, ἐν, ενς (որից ἐς, εἰς), լտ. in, գոթ. in, հյ. ի (հու-նարենների մոտ ն).

ero մասնիկով աճած՝ հյ. ներ (ներ-քին, ներ-քս).

tero » » լտ. inter, սանս. antàs, antàr,

a հավելվածով՝ ումբր. ander, հսլ. ǫtro.

Հնխ. et «լայնկոյս» ընից՝ հնխ. eti «էլի, դեռ, այլ ևս». ներգ. սանս. àti «բացի սրանից», հն. ἔτι «էլի», լտ. et, որ եղավ ֆրանս. et, իտալ. ed, գոթ. iθ.

սեռ.-բցռ.—հսլ. otŭ (a հավելվածով)? o հանգով.—լիթ. ata-

Սրանցից դուրս հնդեվրոպական նախալեզվի մեջ գտնում ենք նաև ուրիշ նախդիրներ, որոնց հոլովական վիճակը անհայտ է կամ որոնք քիչ են տարածված ժառանգների մեջ։ Այսպես են՝

Հնխ. ni «վերից վար».

այս նախդիրը շատ հաճախ գործածվում է արիական ճյուղի մեջ. ունենք նաև հայերենում զանազան բառերի սկիզբը ն ձևով, ինչ-պես ն-ստել, նի-ստ, նա-յել, նե-ցուկ և այլն. Նախալեզվի մեջ սովորական էր, որից կազմված է, օրինակ, nizdas «նստելու տեղ», որի ժառանգներն են լտ. nīdus, հիռլ. nett, հբգ. nest, լիտ. lizdas (փխ. nizdas) «նիստ». իբրև առանձին նախադրություն գտնում ենք հսլ. nici «երեսնիվայր», վեդ. nīčàt «վարից» (բցռ. հոլով), հսլ. nizŭ «ցածը, վարը», հբգ. nidar «վարը», ero մասնիկով՝ հն. ἔνερος «ստորին» հյ. ի ներքոյ, ներքև:

Հնխ. upo «տակը կամ վրան»,

որից սանս. ùpa «տակը, դէպի, վրան, միասին», զնդ. upa, հն. ὑπό «տակը», լտ. sub. «տակը», գոթ. uf «տակը», բարդության մեջ «վրան», հբգ. oba, uf.— սրանից ero մասնիկով՝ հնխ. upero, որի ժառանգներն են սանս. upàri, զնդ. upairi, հպրս. upariy «վրան», հն. ὑπερ «վրան», լտ. super, supra, գոթ. ufar, հբգ. ubar, գերմ. über.

Հնխ. de, do «մինչև, ցը».
երկուսը ներկայացնում են միմյանց ձայնդարձները. առաջինը գտնում ենք հոմերական հն.— ςε ձևով, մյուսները հսլ. do, լիտ. da-, հանգլ. to, հբգ. zuo, գերմ. zu.

Հնխ. ūt «դուրս»,
որից սանս. ūt «դուրս», գոթ. ūt-, հսլ. vy- (հին *ūt ձևից), սրա վրա ավելանալով s մասնիկը՝ հնխ. uts, որ գտնում ենք գնդ. us, գոթ. us-, գերմ. aus «դուրս»:

Հնխ. de «ի բաց»,
որ գտնում ենք լտ. de, հիռլ. dī, կորն. the ձևերի մեջ և որ հնդեվրոպական նախալեզվում դարձել է հետո բացառականի մասնիկ. ինչպես՝ հնխ. vlqōd > վեդ. vēkāt, հլտ. lupōd «ի գայլոյ»:

Հնխ. ek «միջից դուրս»,
որից s և tero մասնիկներով՝ հնխ. eks և ektera-. Ժառանգներից ունենք հն. ἐκ, ἐγ, ἐξ, լտ. ec, ex, ē, exterus, exterior, հիռլ. ess, ass, echtar, հպրուս. esse և այլն. հավանաբար սրանց հետ կարելի է համեմատել հսլ. is, izû, լիթ. iš, հպրուս. is, լեթթ. iz, ռուս. изъ. «միջից դուրս»:

Հնխ. pròti և póti «ընդդէմ»,
որոնց ժառանգներն են հոմեր. հն. πρότι, սանս. práti և հպրս. patiy, դոր. ποτι «դեմ, ընդդէմ»:

Տրված օրինակներից նկատելի եղավ անշուշտ, որ՝

1. Նախդիրները ընդունակ են ձայնդարձի զանազան աստիճաններին. հմմտ. de, do. ճիշտ ինչպես հոլովման մեջ սեռական-բացառականի մասնիկը զանազան ձայնդարձներով լինում է es, os, s.

2. Նախդիրները հաճախ երևում են o կամ ō վերջավորությամբ, որ թվում է թե գործիականի նշան է. հմմտ. հնխ. pro > հն. προ, πρω և այլն:

3. Նախդիրները կարող են աճել s կամ ero, tero մասնիկներով և կամ a նախահավելվածով. հմմտ. հն. ἀπο = սանս. apa, իրան. pati և patis, հն. ἀψφι ἀψφὶς, հյ. Gbp, լտ. inter, super և այլն:

4. Նախդիրները կարող են ներկայանալ կրճատ ձևով՝ առանց վերջավորության. հմմտ. լտ. ab, sub և այլն:

Ասացինք, որ մեր արդի նախդիրները հնդեվրոպական նախալեզվի մեջ առանձին գոյություն ունեցող բառեր էին և գործ էին ածվում իբրև նախադրություն կամ մակբայ: Հին լեզուներից մի

քանիսը, նույնիսկ լատիներենը, դեռ պահում են նախդիրների նախավոր անկախ գործածության այս հետքերը. ինչպես՝

լտ. ire ob mortum և obire mortem «գնալ մահվան առաջ»

հլտ. sub vos placo

հետո իբրև նախդիր՝ supplico vos.

հն. πρὸς «մոտը, բացի» գործ է ածվում իբր անկախ բառ (մակբայ), հետո ընկերացած գոյականի հետ (իբր նախադրություն) և վերջապես միացած բայի հետ (իբրև նախամասնիկ կամ նախդիր)։

Հն. ŏreos bainō kāta «ի լեռնէ գամ վայր» (որ հնդեվրոպական ձևն է), որ հետո դառնալով՝ kata oreos bainō (ուր kata նախադրություն է), եղավ վերջը՝ katabainō oreos նախդրավոր բայ։

Հին պարսկերենը արդեն մտած լինելով նոր լեզվի ընթացքի մեջ, չգիտե նախդիրների անկախ գործածություն. նա նախդիրը դնում է միշտ բայից առաջ և նրանից չի կարող բնավ բաժանել, հակառակ վեդայականի, զանդկերենի կամ հոմերական հունարենի, ուր նախդիրը դեռ անկախ է և կարող է բայից բաժանվել ու հեռանալ։ Սրա համար է, որ հին պարսկերեն արձանագրության մեջ, ուր բառերը իրարից բաժանում են ⁝ նշանով, նախդիր և բայ միասին են գրում՝ առանց բաժանարար նշանի։

Հայերենը արդեն բավական ուշ ժամանակ մտած լինելով գրականության մեջ, այդպիսի անկախ գործածության հետքեր թողած չէ, այլ իր նախդիրները գործ է ածում միայն գոյականների և դերանունների հետ (ընդ նմա) կամ նաև բայերի հետ միացած (ընդունել)։

Սոգդերենում 21 բայական նախամասնիկ կա. բայց որովհետև լեզուն լավ ծանոթ չէ մեզ, հայտնի չէ, թե դրանք կենդանի գործածական մասնիկնե՞ր էին, թե ավանդաբար մնացած մեռած բառեր (Benveniste, Gram. sogd. 58—62)։

Երբ նախդիրները կցվեցին բայերին, լեզուներից ոմանք հատկացրին նրանց աորիստի իմաստը. այսպես՝ լիտվաներենում pa-նախդիրով կազմված բայերը, հպրս. ham «միասին», գոթականում ga-, լատիներենում cum: հպրս. dārayāmiy «ունեմ, տեր եմ», hamadārayaiv «տիրեցի, ձեռք բերի»։ Այս երևույթը սլավականում հասավ կատարելության, ուր կազմվեց ամբողջ մի սիստեմ. կատարյալ (совершенный, perfectif) կոչվում են այն բայերը, որոնք ունեն մեր կատարյալ ժամանակի (հն. աորիստի) իմաստը և սովորաբար կազմվում են նախդիրներով. սրանք ցույց են տալիս, որ գործողությունը եղել վերջացել է։ Իսկ անկատար (несовершенный,

imperfectif) *կոչվում են այն բայերը, որոնք ունեն մեր անկատար ժամանակի իմաստը և սովորաբար կազմվում են առանց նախդիրի. սրանք ցույց են տալիս, որ գործողությունը չի վերջացել և տևում է։ Միևնույն երևույթը կա նաև բոլոր սլավական լեզուների մեջ։*

Նախամասնիկ

Սերբերենում դժվար է գտնել բայ, որ գործածվի առանց նախամասնիկի. օրինակ՝ imati *ունենալ,* smiti *համարձակվել. ընդհանրապես ունեն մի նախամասնիկ, որ նրբացնում է իմաստը կամ բոլորովին այլ իմաստ տալիս. այդ նախամասնիկներն են՝*

do, iz, mimo-, na, nad, o (ob, oba)
ց դուրս մոտ վրա վրան շուրջը
od, oda, po, pod, poda, pre, pred
հեռու կրկ. տակը միջով առաջը
pri pro zaz s u uz
մոտ միջով բաժանում. միասին հեռացում բարձրանալով
za *մեջ*
հետևը
միացնել
փակել
սկսել

օրինակ՝ ići *երթալ բայը 17 պարզ և 7 կրկնակ նախամասնիկով.*

doći	*հասնել*
izaći	*դուրս գալ, ելնել*
mimoići	*մոտով անցնել*
naći	*գտնել,* naići *պատահել*
nadići	*վրայից անցնել*
obići	*շուրջը ման գալ, այցելել*
otići	*մեկնել*
poći	*հեռանալ*
podići	*տակը գալ*
prići	*մոտենալ*
preći	*միջով անցնել*
proći	*անցնել*
zazići	*բաժանվել*
sići	*իջնել*

ući	մտնել
uzići	բարձրանալ
zaći	մոլորվել
pridoći	գալ միանալ
iznaći	հնարել
prinaći	նորից տեղալ (ձյունը)
pronaći	հնարել
snaći	վրան ընկնել
poproeći	մի քիչ անցնել
prevarići	գերազանցել

(Meillet, Gram. serbe, 251—262)

Հայերենը, հունարենը և արիական լեզուները նման երևույթ չունեն և նրանց մեջ բայի վրա դրված նախամասնիկները բայի կազմական իմաստը չեն փոխում։

Սանսկրիտի մեջ գործածված բայական նախդիրները հետևյալներն են.

àti	առաջը
àdhi	վրան
ànu	դեպի, առ
antar	մեջ, միջով
apa	դուրս, հեռու
api	դեպի
abhi	դեմ, ընդդեմ
ava	դուրս, հեռու
ā	առ, մոտը, ud վրան
upa	herzu, hinzu
ni	դեպի ցած, դեպի մեջը
nis	դուրս, բաց
parā	հեռու
pari	շուրջ
pra	հեռու, դեն, առաջ
prati	դեմ
vi	հեռու, դեն, բաց
jam	միասին

Արդի եվրոպական լեզուների մեջ նախդիրները հատկապես մեծ գործածություն ունեն գերմանական և սլավական լեզուների մեջ։ Գերմանական լեզուների մեջ նախդիրները մերթ անբաժանելի կեր-

պով կապված են բային, մերթ դեռ իրենց անկախությունը պահած՝ կարող են բաժանվել բայից. ինչպես՝

bearbeiten	*անբաժանելի մասնիկ է.*
aussprechen	*բաժանելի է, և պետք է ասել*
ich spreche aus	

Շվեդերենում էլ նույնպես է. բայց այստեղ մինչև անգամ միևնույն մասնիկով կազմված բայը փոխաբերական իմաստով անբաժան է, նյութական իմաստով՝ բաժանելի. օրինակ՝

jag ōfversätter	*թարգմանում եմ*
jag satter ōfver	*անցնում գնում եմ*

Ավելի զարմանալի է այն պարագան, երբ միևնույն մասնիկը մի դեպքում բաժանվում է, մի ուրիշ դեպքում ոչ. օրինակ՝

nedgōra	*չարդել (անբաժան)*
ned hagga	*կոտրել (բաժանելի)*

Երբ նախդիրը դեռ իր անկախությունը պահում է, այսինքն բաժանական է, ստանում է շեշտ. հակառակ դեպքում անշեշտ է. օրինակ՝ գերմ. àus sprechen, *բայց* beárbeiten, bedénken *և այլն։*

Նկատելի է հատկապես՝

übersétzen	*թարգմանել*
ubersetzen	*վրայեն անցնել, փոխադրել*

Լատիներենի մեջ էլ նախդիրները կցվելով բային տալիս են զանազան երանգներ, որոնք և կազմում են լատին բայի հարստությունը. օրինակ՝ eo *ձևից՝* ineo, adeo, abeo, exeo, subeo, pereo *և այլն։ Նորալատին լեզուները այս դրությունը ջնջեցին և պահեցին մին կամ մյուսը՝ առանց կապելու իրար, իբրև անկախ ձևեր։*

Այս միևնույն բանը նկատվում է նաև կելտական և գերմանական լեզուների մեջ։

Նույնը և հայերենում։

Նախդիրները կարող են իրար վրա էլ դրվել. ինչպես՝ հպրս. երկու նախդիրով (երկրորդը միշտ ā*)* avājaniyā *«կարող է սպանել»,* patiyābaram *«հետ բերի», որոնց մեջ ունենք* ava+ā *և* pati+ā. *լտ.* exadversum *«դեմ առ դեմ» կազմված է* ex, ad, versum *նախդիրները և ֆրանս.* devant *«առջև» ձևացած է լտ.* de-ab-ante *նախդիրներից* (Meillet, Traité, 481).

Չեխերենում միավանկ նախադրությունները դրվելով գոյականի մոտ, համարվում են իբր մի բառ և նրա շեշտը քաշում են իրենց վրա. օրինակ՝ préd prači նախքան աշխատանքը, po praci աշխատանքից հետո (Hantich, Gram. tchéque, 11)։ Սա նախադրրությունը մասնիկի վերածելու առաջին քայլն է։

Նախդիրները բոլոր լեզուների մեջ էլ հետզհետե մեծ կարևորություն ստացան. հոլովումը շատերի մեջ վերածվեց նախդիրների։ Այս մասին արդեն խոսել ենք հոլովման բաժնում։

Նախդիրների գրության ձևը

Նախդիրները եթե բաղկացած են մի ձայնավորից կամ նրան հարակից մի կամ մի քանի բաղաձայններից, համարվում են առանձին բառ և գրվում են անջատ։ Իսկ երբ նրանք բաղկացած են միայն բաղաձայնից, առանձին բառ չեն համարվում և միանում են հարակից բառին, երբեմն ապաթարցով բաժանված և երբեմն էլ նույնիսկ առանց ապաթարցի՝ իբրև հարակից բառի անմիջական մասը։

Այս երևույթի ամենալավ օրինակն է ի նախդիրը, որ գրվում է առանձին, բայց յ նախդիրը, որ նրա բաղաձայն ձևն է, գրվում է հաջորդ բառին միացած։ Այսպես՝

ի տան, ի տուն, ի տանէ, *բայց*՝
յանուն, յանուան, յանուանէ

Այսպես նաև առ, ընդ, ըստ՝ առանձին, իսկ զ, ց՝ միացած։

Նախդիրներին նման են նաև մակբայները և բառիկները. ինչպես՝

Ոչ գրվում է առանձին և առանձին բառ է. իսկ նրա զուտ բաղաձայն ձևը՝ չ առանձին բառ չէ և միանում է միշտ անանջատորեն՝ իր հարակից բառին. ինչպես՝

ոչ գիտեմ, չգիտեմ, ո՛չ երէց=չերէց:

Սահմանականի մասնիկը կու, կ գտնվում է նույն վիճակում։ Առաջ ասում և գրում էին կու բերէ, կու տանի, հետո դարձավ կը բերէ, կը տանի, այժմ գրվում է կբերե, կտանի: Իսկ ձայնավորի մոտ գրվում էր և գրվում է կ'երթայ=կերթա, կ'ըսէ=կասէ, կասե:

Այսպես են նաև ուրիշ լեզուների նախդիրներն ու բառիկները. օրինակ՝

Ֆրանս. le, la, de. du, au, à հոդերը գրվում են առանձին, իսկ սրանց կրճատ ձևերը՝ l', d', de l', à l' միացած. ինչպես՝

le pain (հաց-ը), la table (սեղան-ը), l'ami (բարեկամ-ը), d'ami (բարեկամ-ի, բարեկամ-ից), à l'ami (բարեկամ-ին) և այլն։

Պարսկերեն be նախդիրը (նշան տրականի) և me, ne բացասականները եթե ստանում են իրենց վերջին ձայնավորը, գրվում են առանձին, իսկ եթե այդ ձայնավորը կորցնելով՝ վերածվում են մի բաղաձայնի, կցվում են հարակից բառին. օրինակ՝

به خانه	be xāne,	բայց	بخانه	bexāne	«դեպի տուն»
مه کو	mé gu	կամ	مکو	mégu	«մի ասա»
نه دانم	né dānem	կամ	ندانم	nédanem	«ոչ գիտեմ»

Այսպես էր նաև ռուսերենի մեջ, ուր հին ուղղագրությամբ ունենք՝

въ Москву въ Москве;

Երբ հիմնվեց նոր ուղղագրությունը և բառերի վերջից ջնջվեց ъ չհնչվող տառը, մեքենաբար ջնջվեց նաև այս նախդիրների ъ վերջավորությունը։ Բայց այս դեպքում պետք էր, որ в, k, c նախդիրները կցվեին հարակից բառին, բաժանվելով միայն ապաթարցով։ Այս կարևոր կանոնը ի նկատի չունեցան նոր ուղղագրության հիմնադիրները, և այսպիսով առաջացավ լեզվական բացառիկ մի երևույթ՝ անջատ կամ անկախ բառ առանց ձայնավորի և միայն մի բաղաձայնից կազմված։

Նույնիսկ հեռագրական օրենքով այս մի հատիկ բաղաձայնները մի մի բառ են համարվում։

Հետաքրքրական է մելանեզյան յաբեմ լեզուն, որ ընդհանրապես առանձին բառերով նախադրություն, մակբայ կամ նաև ջաղկապ չունի, այլ նրանք իրենց իմաստով մտնում են բայի նշանակության մեջ. օրինակ՝

sô	դեպի ներս շարժվել
sa	դեպի դուրս »
pi	դեպի վեր »
sêp	դեպի վար »
deŋ	դեպի մի նպատակ »

Ուստի սրանց մոտ եթե դնենք մի գոյական (տուն, ծառ, կղզի և այլն), այլևս ո՛չ մի նախադրության կամ մակբայի կարիք չի լինի։

Այնուամենայնիվ կան մի քանի նախադրություններ. ինչպես aŋga «-ից, մի տեղից» (Dempwolff, 11, 33, 34)։

Թուրքերենի նախադրությունները դեռ լավ ցույց են տալիս իրենց ծագումը գոյականներից. ինչպես՝ ič միջուկ, օրինակ՝ badem

iči նուշի միջուկը, ǰeviz iči ընկույզի միջուկը, ičinde մեջում, միջում, ičine «դեպի մեջը, ի ներքս», ičeri «դեպի ներս», ičerde «ներսում».— Թերևս նաև բայական ič «խմել»-ի արմատը (իբր ներս լցնել հեղուկը), որով նաև գոյական արմատը կապվում է բայական արմատին։

üst «վեր, վրան, վերևը», üst gatə «վերնահարկ», üstü «վըրան», üstüne «դեպի վրան», üstünde «վրա, վերևը», alt-üst «տակնուվրա»։

alt «տակ, հատակ», alt gatə «ներքևի հարկը», altə «տակը», altəna «դեպի տակը», altənda «ներքևում, տակին»։

göre «ըստ, համեմատ, համաձայն», göz göre «ակներև, ակնհայտ,» արմատն է gör «տես, տեսանել», որից görmek «տեսանել» և göz «աչք», որով դարձյալ բայական և գոյական արմատները միանում են։

2. ՆԱԽԴԻՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին հայերենում գործածված նախդիրներն են զ, ի=յ, ց, առ, ընդ, ըստ:

զ

Հին հայերենի ամենահատկանշական տարրն է։

Իր շատ ճոխ գործածությունից դատելով՝ պետք է լինի բնիկ հայ. բայց որովհետև զ ձայնով սկսող հայերեն բառերը կա՛մ փոխառություն են և կա՛մ դեռ մեկնված չեն, ուստի հայտնի չէ թե ի՛նչ պիտի լիներ սրա հին ձևը։ Սակայն որովհետև հնխ. g'h երկու ձայնավորի միջև տալիս է հայերեն զ և բառի սկզբում տալիս է հյ. ձ, իսկ ձ դառնում է բաղաձայնի մոտ զ, ուստի կարելի է ենթադրել, որ զ ձևն էլ ծագել է հնխ. g'h-ից (այսպես դարձած նախ բաղաձայնով սկսվող բառերի մոտ և հետո ընդհանրացած)։ Այս մտածումով կարելի է մեր բառի հետ համեմատություն անել հսլ. za մասնիկը, որի գործածության եղանակը մերինին շատ է մոտենում։ Այսպես՝ za n˝je =զ-ի. jętû ję za rąką = կալաւ զձեռանէ նորա. za utra =զառաւօտու. հսլ. za սեռականով ցույց է տալիս ժամանակ և գործողության պատճառը (տե՛ս Miklosich, Vergl. Gram. IV, 527 և այլն), հայցականով՝ գործողության տևողությունը (անդ, էջ 410 և այլն), գործիականով՝ «ետևը» (հմմտ. հյ. զերիս աւուրս, զճետ, զկնի և այլն)։

Ռուսերենում за նախամասնիկը ցույց է տալիս սաստկություն. ինչպես՝ за-болтаться շատախոսել, за-вершать ամբողջովին վերջացնել, задолго до շատ վաղուց, заигрываться շատ երկար ժամանակ խաղալ, засидѣться շատ երկար նստել մի տեղ և այլն։ Սրանց համապատասխանում է հյ. զ, որ նույնպես սաստկություն է ցույց տալիս. ինչպես՝ անցանել-զանցանել, արմանալ-զարմանալ և այլն։

Թերևս սլավական za բառին կցելու է նաև արևել. լիտ. azù, լեթթ. uz «վրա», aiz «ետևը, պատճառավ, լայնկոլս»։ Իսկ գոթ. ga-մասնիկը (ինչպես՝ ga-laubjan=գերմ. glauben հավատալ) սըրանցից բաժանելով՝ կցում են սովորաբար լտ. com, cum, հիռլ. com, cum, cun, կիմր. cyf. գալլ. com «ընդ, հետ» ձևերին. հնխ. com (տե՛ս Walde, 180)։

Հյ. զ-ի հետ բոլորովին պատահական նմանություն ունի հունգ. az որոշիչ հոդը (=հյ. զ-)։

Հայերենի զ նախդիրը մեծագույն նորմուծությունն է հնդեվրոպական հոլովական կազմության մեջ։ Գործ է ածվում նախ՝

ա. Իբրև որոշիչ, եթե որոշյալ գոյականը հայցական է, առանց խափանելու սակայն նաև ն որոշիչ հոդի գործածությունը գոյականի վրա։ Օրինակ՝ Տէ՛ս զերկինս և զերկիր, զծով և զցամաք. Տացէ նմա զաթոռն Դաւթի:

Ցուցականները և անձնական դերանունները, որ հարաբերականը միշտ որոշյալ լինելով (այսպես նաև հատուկ անունները), միշտ էլ ստանում են զ նախդիրը. ինչպես՝ զիս, զքեզ, զնոսա, զմիմեանս, զոր, զԱբրահամ. կարելի չէ ասել մերկորեն իս, նոսա, դոսա, այս (հյց.)։ Մինչև անգամ ի հարցականը միշտ զ ունի, այնքան որ ո՛չ միայն անորոշ հայցականի ձևը չէ գործածված բնավ, այլև հայցական զի դարձել է նաև ուղղական։

Կարելի է միայն ասել ընդ իս, ըստ իս, առ նոսա, ընդ միմեանս և այլն, որովհետև գոյականի վրա եթե մի նախդիր կա, այլևս զ չի դրվում։

բ. Բացառական հոլովի հետ (աննախդիր) նշանակում է «մասին, վրայոք». ինչպես՝

Տրտնջել զՏեառնէ, զմարդոյ, զեղբօրէ, զմանկանէն.
Պատմել զնմանէ, զձէնջ, զայլոց ումանց, զնոցանէ, զումեքէ, զիմեքէ, զայլմէ իմեքէ «մի ուրիշ բանի վրայով»։
Ունիցի՞ս ինչ զինէն (իմ մասին ասելիք ունե՞ս)։

խօսէր զնմանէ. *Ղուկ. Բ 38*։

Գոն են զքէն. գոնանան զԱստուծոյ:

Հին քերականները զ-ով բացառականը համարում էին առանձին հոլով, որ և կոչում էին պատմական:

գ. Գործիական հոլովի հետ նշանակում է՝

1. «Բոլորտիքը, շուրջը». ինչպես՝

Ճրջին զփաղափաւ, զտամբ, զպարսպօք, զնովաւ *«նրա շուրջը»*, զինև *«իմ բոլորտիքը»*։

2. «Մեկի կողքով կամ վրայով». ինչպես՝

էանց զինև *«ինձնից անցավ, իմ կողքով անցավ, ինձ թողեց անցավ»*։

Վազեաց զինև, զգետով *«իմ վրայից, գետի վրայից ցատկեց»*։

3. «Մի բանից այն կողմ». ինչպես՝

Անցեալ էին զաւուրբք իւրեանց. *Ղուկ. Ա 7 (շատ էին ծերացել)*։

4. «Տարածությամբ». ինչպես՝

Զերեքօք դաշտին *(Զալխ. 134)*։

5. «Մոտավորապես այն ժամանակ». ինչպես՝

Զինն ժամու *«ժամը իննի մոտերը»*

Զմիջօրէիւ *«կեսօրվա ժամանակները»*։

Հին քերականները զ-ով գործիականը համարում էին առանձին հոլով, որ և կոչում էին պարառական:

Պարառական հոլովը ժամանակի վերաբերմամբ ցույց է տալիս մոտավոր թիվ, ճիշտ ինչպես այժմ ասում են «շուրջ ժամը ...-ին» օրինակ՝

Եւ ելեալ զերրորդ *ժամու*... Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն ժամու: Եւ զմետասաներորդ ժամու ելեալ... *(Մատթ. Ի 3—6)*։

Իբրև եկին որք զմետասաներորդ *ժամուն. (Մատթ. Ի 9)*։

դ. Բայերի սկիզբը դրվելով՝ զորացնում է նրանց իմաստը, որով զ նախդիրը դառնում է սաստկական. ինչպես՝ անցանել—զանցանել, արմանալ—զարմանալ, ան *(հին ձևը* արհ) բառից* զարճուրել *«շատ վախենալ, սարսափել»*, ընկենուլ—զընկենուլ *«սաստկությամբ ցած ընկնել»*, իջանել—զիջանել *«խոնարհվել»*, գետին *բառից՝* զգետնել *«գետին տապալել»*, ճատուցանել—զճատուցանել *«իջեցնել, խոնարհեցնել» և այլն*։

զ զորացուցիչ մասնիկը հետզհետե կորցրեց իր գիտակցությունը լեզվի մեջ. այսօր զգում ենք նրա ներկայությունը միայն այն դեպքում, երբ կրկնությամբ ասում ենք արմանալ—զարմանալ, արմանք—զարմանք, անցանել—զանցանել և այլն։ Բայց նրա գործածությունը արդի բառերի համար՝ անկարելի է։ Նույնիսկ զգալի չէ, թե զարկանել (որի կրճատ ձևերն են զարկել, զարնել) հարկանել բայից է։ Մինչև անգամ դժվար է համոզել մեկին, թե զգալ, զգաստ, զգօն, զեկուցանել (զեկուցել) կազմված են գալ, եկ արմատներից։ Լեզվաբանական քննություններ պետք է կատարել համոզելու համար մերոնց, թե զգենուլ, զգեստ, զբաղվել, զգածվել և նմաններ կազմված են գե «հագնել», գեստ «հագուստ», բաղ, գած (հմմտ. առիգած) պարզականներից։

Այսօրվա հայը դժվարանում է նույնիսկ որոշել, թե զերազանց բառի մեջ թաքնված զ՝ հայցականի նախդի՞րն է, թե՞ ուրիշ բան։

Բայց նույնիսկ Ե դարի հայը չէր կարող իմանալ, թե հյ. զերծ, զերծանիլ բառի մեջ զ զորացուցիչ նախդիր է և արմատն է *երծ, որ կցվում է հնխ. serģ արմատին. հմմտ. սանս. sarj «ձեռքից բաց թողնել», զնդ. harəz «արձակել», պհլ. hirz «թողնել» և այլն։ Այսքան մթագնած էր զ նախդիրի իմացումը նույնիսկ հնում, և այսօր էլ չկա՞ն արդյոք բառարմատներ, որոնք սկսվում են նախաձայն զ-ով, որ նախդիր պետք է լինի։

Երբ բառն սկսում է բաղաձայնով՝ զ-ի մոտ ընչվում է. ինչպես՝ ճարկանել—զարկանել «ուժգին բախել», ճատանել—զատանել, ճեղուլ—զեղուլ «առատորեն թափել» և այլն։

Երբ բառն սկսում է խուլ բաղաձայնով՝ զ ստանում է ս ձևը. ինչպես՝ թափիլ—սթափիլ, քօղ—սքօղել, տածել—ստածել, փռել—սփռել, նաև սփոփել (որի արմատն է *փոփել)։

ե. Այս բոլորից դուրս զ նախդիրը գտնում ենք նաև մի քանի դեպքում սեռականի հետ գործածված. ինչպես՝ զանի կամ զերկիւղի կամ զամօթի ճարկանիլ. եճար կամ զարկոյց զքարի, զվիմի, զգետնի «քարին, վեմին, գետնին խփեց» (Երևանի բարբառով՝ «գետնովը տվեց, քարով տալ»)։

զ Նախդիրի այս բազմատեսակ գործածությունը և հատկապես սեռական, բացառական և գործիական հոլովների հետ գործածվելը ցույց է տալիս, որ զ նախդիրը բնավ հայցականի նշան չէ, ինչպես ընդունված է շատերի կողմից։ ՆՀԲ գրում է (Ա 709ա). «Զ նախդիր, որ կազմէ զհայցական հոլով», և հետո էլ ավելացնում է՝ «Զ զօրութեամբ գտանի յանորոշ հայցականս»։

զ. Նախդիրը որոշիչ հոդ է, որ գործ է ածվում միայն հայցականի դեպքում։ Այնպես որ, եթե հայցականը որոշյալ է, ն հոդ ունենա կամ ոչ, անպատճառ պիտի ստանա զ նախդիրը։ Եթե զ նախդիրը որոշիչ հոդ չլիներ և միայն հայցականի նշան լիներ, մի կողմից պետք է, որ անորոշ հայցականն էլ անպատճառ ստանար զ նախդիրը, իսկ մյուս կողմից՝ որոշյալ հայցականը անհրաժեշտ կերպով պիտի ստանար ն հոդը, շբավականանալով միայն զ նախդիրով։ Իսկ եթե այսպես չէ և որոշյալ հայցականը կարող է չստանալ ն հոդը, ուրեմն զ հոդ է։

զ նախդիրի (իբրև հոդ) այս գործածությունը բնավ նման չէ եվրոպական լեզուներին, որոնց մեջ որոշիչ հոդը թե՛ ուղղական և թե՛ հայցական միևնույնն է. օրինակ՝

Ֆրանս. La maison est belle «Տունը գեղեցիկ է»
J'ai vu la maison «Տեսա տունը»
Իտալ. La casa é bella
Io ho veduto la casa
Անգլ. The house is beautiful
I have seen the house
Սպան. La casa es bella
He visto la casa

Այս բոլորի մեջ ֆրանս., իտալ., սպան. la և անգլ. the միաժամանակ որոշյալ ուղղական է և հայցական։

Հյ. զ նման է պրս. -rā վերջավորության (կամ թրք. -i), որոնք հայցականի որոշյալ ձևի նշանն են և չեն գործածվում բնավ ուղղականում. իսկ անորոշ հայցականը չի ստանում նման վերջավորություն. օրինակ՝

Պրս. xāne xūb est
տունը գեղեցիկ է
xāne didem
տուն տեսա
xāne-rā didem
տունը տեսա
Թրք. ev güzel
ev gördum
ev-i gördüm

Այսպիսով, եթե հայերենում ուղղական և հայցական նույնացել են, որոշյալ լինելու դեպքում զ դառնում է ընտիր միջոց՝ զանազա-

նելու համար հայցականը ուղղականից (և նախդրիվ հայցականից)։ Միայն անորոշ լինելու դեպքում այս միջոցը անզոր է դառնում, այն էլ միայն եզակիում, որովհետև հոգնակիի մեջ անորոշ հայցականը ճանաչվում է ս վերջավորության միջոցով։

Ահա այս բոլոր պարագաները ներկայացնող երեք օրինակ.

Յորժամ զուստր զմայր անարգիցէ և նու զկեսուր իւր և կին զայր, և ծառայ զտէր և եղբայր զեղբայր... *(Եզն. 60). (անորոշ ուղղական և որոշյալ հայցական)։*

Մատուցին առ նա դիւահարս բազումս և եհան զայսսն բանիւ և զամենայն հիւանդսն բժշկեաց *(Մատթ. Ը 16). (անորոշ և որոշյալ հոգնակի հայցական)։*

Ազգ չար և շնացող նշան խնդրէ և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի *(Մատթ. ԺԶ 4). (եզակի անորոշ ուղղական և հայցական)։*

զ *որոշյալ հայցականի նշանն է, բայց դա արգելք չէ, որ որոշյալ բառի վրա հոդ դրվի. օրինակ՝ Եզնիկը (էջ 5—6) գրում է.*

... Պարտի զպղտորութիւն աչացն, զաղտն և զբիծն ի բաց պարզել *(այստեղ, ինչպես* աղտ *և* բիծ, *նմանապես և* պղտորութիւն *որոշյալ են, ուստի ստացել են ն հոդը, հայցականի համար էլ* զ. *վերջինը՝* պղտորութիւն, *հաջորդ* աչաց *սեռական հատկացուցիչի պատճառով՝ հոդը փոխադրել է նրա վրա։*

Իսկ Մատթ. Ա. Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅուդա... *հայցականները չունեն ն հոդը, որովհետև հատուկ անունները հոդ չեն ստանում։*

Մինչև անգամ ասվում է Գորտ ետես զեզն մի, *ուր* եզն *ունի* զ՝ *թեև անորոշ է։*

Ծանոթ.— *Հայերենի մեջ ընդունված սովորություն է, որ* զ *նախդիրը բաղաձայնից առաջ միշտ կարդացվում է* ըզ. *ինչպես՝* զտուն=ըզտուն, զճեզ=ըզճեզ: *Միայն ձայնավորի մոտ է, որ միանում է և մի վանկ կազմում. ինչպես՝* զիս, զանուն իմ:

Սակայն կան դեպքեր, երբ հին ձեռագրերում գրված է ուղղակի զը, *փխ.* ըզ *կամ* զ. *օրինակ՝ 1173 թվականին գրված երկաթագիր մագաղաթյա Ավետարանում (Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ, 442—443)։*

զը փափադ	*էջ 442,*	*տող 17*
զը տենչումն	*» 442,*	*» 18*
զը Կոստանդին	*» 443,*	*» 20*
զը ծնողս	*» 443,*	*» 21*

Թե այսպիսի հնչումը անսովոր և սխալ ձև է, ցույց են տալիս նախ՝ 1) նույնիսկ նույն ձեռագրում գրված բազմաթիվ սովորական ձևերը. օրինակ՝ զկենսունակ, զստացող սորա և այլն, 2) նույն նախդիրի խուլ ս ձևը, որ միշտ հնչվում է ըս և ոչ սը. ինչպես՝ ըսփոփել, ըսքօղել, ըսթափիլ, կա միայն սըփռել, այն էլ արմատը դարձյալ լինում է ըսփիւռ:

ի=յ

Այս երկու նախդիրները էապես նույնն են. առաջինը գործածվում է բաղաձայնով սկսվող բառերի մոտ, երկրորդը՝ ձայնավորով։ Նախնական ձևն է ի, որ ձայնավորի մոտ մի քիչ կրճատվելով՝ դարձել է յ. այսպես՝ ի տուն, ի անուն>յանուն: Մեր արդի հնչմամբ՝ յ դառնալով հ, երկու նույնանման ձևերի մեջ ստեղծվել է ձևական մեծ տարբերություն։ Բայց հին հայերենում յ հնչվում էր գրեթե ի (եվր. y), որով երկուսի մեջ հնչական առանձին տարբերություն չկար։ Հները հն. 'Ιακόβ, 'Ιωάννης անունները տառադարձել են Յակոբ, Յովհաննէս, որից երևում է, որ յ=ի՝ ձայնավորի մոտ։ Այսօրվա գրավորն էլ մի ուրիշ տարբերություն է մտցրել արտաքին ձևի մեջ. այդ այն է, որ ի գրվում է բառից անջատ, յ միացած։ Բայց սա էլ նշանակությունից զուրկ է, որովհետև հները բառանջատում չունենալով՝ երկուսն էլ միացած էին գրում։ Մեր արդի սկզբունքն այն է, որ մի կամ մի քանի բաղաձայնով առանց ձայնավորի բառ չի կարելի կազմել. իսկ մի ձայնավորով անջատ բառ հնարավոր է ունենալ (ինչպես օ, ո, ու)։

Այս նախդիրը գործ է ածվում՝

ա. Հայցական հոլովի հետ (աննախդիր) թե՛ եզակի և թե՛ հոգնակի և ցույց է տալիս դեպի մի տեղ (շարժում). օրինակ՝ Գնաց ի տուն իւր, հոգնակի՝ Գնացին ի տուն իւրեանց: Այսպես նաև յայգի, յայգիս, ի ճանապարհս, ի Կարին, ի Հռոմ, յԵրուսաղէմ և այլն։

Այս ձևով կազմված հոլովը կոչվում է նախդրիւ հայցական:

Նախդրիվ հայցականը երբեմն սովորական տրականի արժեք ունի և երբեմն էլ նշանակում է «համար». օրինակ՝

Խնայեսցեն յիս, ի քեզ, ի նա, ի սոսա (խնայեն ինձ, քեզ, նրան, սրանց):

Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ (ճամբի համար բան մի՛ վերցնեք)։

Ո՞ւր է ոչխար յողջակէզ (զոհի համար ոչխարը ո՞ւր է)։

բ. Եզակի տրական հոլովի հետ կազմում է ներգոյական (դա-

դարում ցույց տվող, «մեջ» նշանակությամբ)։ Օրինակ՝ Բնակի ի քաղաքի. Նստի ի տան. Ագանել ի տան, ի քաղաքի. Նստաւ յայրի, ի լերին. Դև գոյ ի նմա. Քանզի յորում իցէ ոք, այն յորում էն, բան զայն որ նմա էն՝ մեծ գտանի *(Եզն. 23)։*

Ըստ այսմ տեղ ցույց տալու համար գրաբարի մեջ ունենք երկու հոլով. Նախդրիվ հայցական (շարժում—դեպի մի տեղ) և ներգոյական (դադարում—մի տեղում, մեջը)։

Բայց հաճախ պատահում է, որ երբ ըստ օրինի կազմենք ներգոյական, ստացվում է բացառական։ Այսպես գետ *բառի տրականն է* գետոյ, *որի վրա դնելով* ի *նախդիրը, ստացվում է* ի գետոյ, *որ է բացառական։ Բացառական և ներգոյական հոլովները* (գետից *և* գետում) *այնքան տարբեր գաղափարներ են, որ անկարելի է պահել միևնույն ձևի տակ։ Ուստի և ամեն անգամ, որ նման թյուրիմացություն պիտի ծագեր, ներգոյականի տեղ գործածել են նախդրիվ հայցական։ Նախդրիվ հայցականը և ներգոյականը համենայն դեպս շատ ավելի հեռու են իրարից իմաստով, քան ներգոյականը և բացառականը։*

Ներգոյականը բացառականին նման լինում է միշտ՝

1. ա *և* ո *հոլովների մեջ։*

2. Բոլոր հոլովների հոգնակի թվում։

Այս բոլոր դեպքերում ներգոյականի տեղ գործ է ածվում ուրեմն նախդրիվ հայցական, որ այսպիսով ցույց է տալիս թե՛ դադարում և թե՛ շարժում։ Տարբերությունը պետք է իմանալ տեղից. օրինակ. Բնակի ի քաղաքս. Նստի ի տունս. Հեղձան ի ջուր, ի գետ:

3. Տեղանունները մեծ մասամբ գործածվում են հոգնակի (Հայք, Վիրք, Պարսք, Յոյնք, Աթենք, Խաղտիք, Անձևացիք, Ասորիք, Կորդուք *և այլն), կամ հոլովվում են* ա, ո *հոլովմամբ (ինչպես՝* Վանայ, Մշոյ, Կարնոյ, Տարօնոյ, Հռոմայ *և այլն)։ Հետևաբար այս բոլորը ներգոյականի փոխարեն պիտի գործածվեին և գործ են ածվում նախդրիվ հայցական հոլովով. ինչպես՝* ի Հայս, յԱթէնս, ի Հռոմ, ի Վան, ի Մուշ, ի Կարին, ի Վիրս *և այլն։*

Բայց օրինակների այս բազմությունը ազդել է նաև այն տեղանունների վրա, որոնք հետևում են ի *հոլովման և սրանք էլ նմանողությամբ ներգոյականի դեպքում ստանում են նախդրիվ հայցականի հոլովաձև. ինչպես՝* յԵգիպտոս, յԵրուսաղէմ, ի Սիոն, ի Բաբելոն *(որոնց սեռականը լինում է* Եգիպտոսի, Երուսաղեմի, Սիոնի, Բաբելոնի *և այլն)։*

Ըստ այսմ բոլոր տեղանունները ներգոյականի տեղ ստանում են նախդրիվ հայցական հոլով (շատ քիչ անգամ ասվում է ի Բաբելոնի *և նմաններ)։*

4. Անձնական դերանուններից տրական մեզ *և* ձեզ *նման են հայցական* զմեզ *և* զձեզ *ձևերին. այնպես որ սրանց ներգոյականը և նախդրիվ հայցականը հավասարապես լինում են* ի ձեզ, ի մեզ*։ Այս նմանությունը պատճառ է դարձել, որ մյուս դերանուններից էլ մի քանիսը ստանան միայն նախդրիվ հայցական հոլով. այսպես՝* յիս, ի նոսա, ի դոսա, ի սոսա *(բայց անփոփոխ* ի նմա, ի նմին *և այլն). օրինակ՝* Գոյ յիս զօրութիւն. Մնացէ ի նոսա։

5. Ներգոյականը բացառականից զանազանելու համար հին հայերենում մտածվել է նաև մի ուրիշ միջոց։ Քանի որ շփոթության առիթը կազմում է ո *հոլովումը, ուստի ներգոյականը կազմել են* ի *հոլովման համաձայն։ Այսպես,* գիշեր *բառի տրականն է* գիշերոյ, *ներգոյականը պիտի լիներ* ի գիշերոյ, *որ բացառականի ձևն է. ուստի վերացվում է այդ ձևը և փոխանակ նախդրիվ հայցականի, ներգոյականը դառնում է* ի գիշերի։

Այս հնարագետ միջոցը դժբախտաբար չի տարածվում ո *հոլովման հետևող բոլոր բառերի վրա, այլ միայն մի խմբի, այսպես՝*

անդ «արտ»	*անդոյ*	*յանդի*
բերան	*բերանոյ*	*ի բերանի*
գիշեր	*գիշերոյ*	*ի գիշերի*
գուբ	*գբոյ*	*ի գբի*
թուղթ	*թղթոյ*	*ի թղթի*
ծոց	*ծոցոյ*	*ի ծոցի*
պատիժ	*պատժոյ*	*ի պատժի*
պատիւ	*պատուոյ*	*ի պատուի*
տիղմ	*տղմոյ*	*ի տղմի*

Օրինակ՝

Ունէր տէրն ծիթենեաց շիղ ի բերանի *(այլ ձև* ի բերան) իւրում *(Ծննդ. Ը 11)։*

Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ
Ի պատժի կաս
Գործէր յանդի
Գրեա՛ ի թղթի
Ի գբի անդ ջուր ոչ էր

Եւ կայր Երեմիա ի տղմին
խօսեցայ ի գիշերի ընդ սրտի իմում (Սաղմ. ՀԶ 7)։

Կան բառեր, որոնց ներգոյականը այս երկու ձևերի միջև տատանվում է. օրինակ՝ վերևում տեսանք, որ Ծննդ. Ը 11 ի բերանի բառը ունի այլ ձև՝ ի բերան: Նույնպես փոր բառը, որ ըստ Համաբարբառի 6 անգամ է գործածված Աստվածաշնչում ներգոյական նշանակությամբ, 4 անգամ դրված է ներգոյական ձևով ի փորի (Սաղմ. ԼԸ 4, Ծ 12, ԾԸ 22, Յոբ Ի 14), և 2 անգամ նախդրիվ հայցական ի փոր ձևով (Յովհ. Բ 1, Մատթ. ԺԲ 40)։

Ներգոյական ի միջի ձևի համար տե՛ս ստորև։

6. Ներգոյականը բացառականից զանազանելու անհաջող և բացառիկ ձևեր են հետևյալները.

Յաթոռ իւրում
Ի տաճար սուրբ իւրում
Ի ճշմարտի որդւոյ նորա (փխ. որդւոց)

Անեզականների եզակի նշանակությունը հայտնի դարձնելու համար ասվում է երբեմն՝ ի կառս իւրում (իր կառքում), փխ. ի կառս իւր:

Անորոշ դերբայի ներգոյականը լինում է երկու ձևով.

Ի տեսանելն քո (կամ քում)
Ի կարդալ իմում լուար ինձ (Սաղմ. Դ 1)։

7. Ներգոյական հոլովը նշանակում է նաև ժամանակ. ինչպես՝

Ի նեղութեան «նեղության ժամանակ»
Ի տօնի «տոնի ժամանակ», հոգ. ի նեղութիւնս, ի տօնս
Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի

գ. Այս նախդիրը կարող է կցվել-միանալ նաև զանազան բայերի վրա, բայց այս դեպքում միայն ձայնավորով սկսող բայերի վրա, հետևաբար և միայն յ ձևով. ինչպես՝ յերկուանալ «կասկածել, երկմըտել», յանցանել (կտր. յանցեայ, մինչդեռ անցանեմ տալիս է կատարյալ անցի), յառնեմ (կտր. յարեայ. արմատը ցույց է տալիս արի՛ «վե՛ր կաց». առանց յ նախդիրի), յաւելում (առ մասնիկով էլ՝ առաւելուլ), յատանել (բուն ձևը ճատանել, ճատի) և այլն։

Գործածության ժամանակ այս բայերը կարող են նորից ստանալ նախդիր. ինչպես՝ Արեմն ի յերկուանալոյ անտի (Եզն. 114). ի յաւելուածոյ սրտի խօսի բերան:

դ. ի նախդիրը գործածվում է նաև անխափան բացառական հոլովը կազմելու համար. ինչպես՝

Ելանել ի ջրոյ, ի գետոյ
Հալածել յայգւոյ, ի Կրետեայ, ի Ծուրայ
Պատմել ի բերանոյ (*բերանացի, բանավոր պատմել*)
Երկնչել յօձից, ի շանց, ի տանկաց:

Դ ի տ ո ղ ո ւ թ յ ո ւ ն.— Երբեմն կարելի է ձայնավորով սկսվող բառի վրա յ նախդիրը դնելուց հետո՝ նաև իբր զարդ ավելացնել ի *նախդիրը, ինչպես՝* ի յԱնի, ի յերկինս, ի յերկիրն *և այլն։ Բայց հակառակը, այսինքն բաղաձայնով սկսվող բառի վրա յ և* ի *նախդիրները դնել՝ անհնարին է. օրինակ՝* յ ՚ի քաղաքն *և այլն։*

Նախդիրի այս հավելումը շատ հին է և հաստատուն։

Այժմ պիտի խոսենք ի=յ *նախդիրի ծագման մասին։*

Ասացինք, որ այս երկու ձևերից հնագույնը և նախնականն է ի, *որի իսկական նշանակությունն է «մեջ»։ Այս իմաստով նա անմիջապես կապվում է հնխ.* en *ձևին, ուր* e *ձայնավորը ռնգականի մոտ ըստ օրինի դարձել է* ի *(հմմտ.* հինգ <pénkwe, հին <sénos*)։ Այս ձայնավորն ենք գտնում լտ.* in, *գոթ.* in *ձևերի մեջ։ Այնուհետև բառավերջի* n *ընկել է։*

Հունաբան հեղինակների մոտ ներգոյական նախդիրն է ն *կամ* ըն. *ինչպես՝* ն'ենթակայում *«ենթակայի մեջ»։* Հիւանդութիւն և ողջութիւն ըն մարմնոջ կենդանեաց. իսկ սպիտակութիւն և սևութիւն պարզաբար ըն մարմնոջ. իսկ արդարութիւն և անիրաւութիւն ն'ոգւոջ մարդոյն (*Արիստ. Հակակ. Թ*)։ Որպէս ըն ձայնի ստորասութիւնս՝ ըն խորհրդում ինչ լինիցի. *Անյ. ՚պերիարմ.*

Օրինակներից երևում է, որ ըն *գործածվում էր բաղաձայնով սկսվող բառերի մոտ, իսկ* ն՝ *ձայնավորով։*

Բայց այս ն *կամ* ըն *ունի նաև երկու տարբեր գործածություն. այն է մեկ՝ բացառականի համար և երկրորդ՝ տրականի համար. այսպես՝*

Բցռ.— Ըն տեղւոյր, ըն տուն *«ի տեղւոջէ, ի տանէ» (Թարկ. քեր.)*

Տրկ.— Ասէ սուրբ առաքեալն ըն ցերանելին. Ասէ ըն ցայնոսիկ (*Ծառընտ.*). Ասեն ըն ցնա աշակերտքն. Ասէ ըն ցնոսա յայտնապէս (*Ոսկ. ՂՁԸ*)։

Այս երեքից վերջինը ՆՀԲ համարում է ձևացած ընդ *նախդիրից, որ և դատելով գործածությունից, շատ հավանական է։ Երկրորդը անշուշտ առաջինի հետևողությամբ է. եթե* ի *նախդիրը գրաբարում ներգոյական է և միանգամայն բացառական է կազմում,*

նրան համապատասխանող ըն ձևն էլ պետք է որ բացառականի նախդիր լինի։ Ըստ այսմ ըն կամ ն հունաբան նախդիրը մնում է միակ համապատասխանը ներգոյականի ի նախդիրի։

Կարելի չէ ճիշտ որոշել, թե այս ն նախդիրը հունաբանների հնարած կեղծ մի ձև՞ն է, թե հնխ. en մասնիկի ավելի հարազատ ներկայացուցիչը, որ պահված էր մնացել որևէ հայ բարբառում, որից և օգտվել են հունաբանները։ Meillet հայագետը այս վերջին կարծիքին է, որին ի նպաստ է խոսում այն հանգամանքը, որ այդ ն մասնիկը մինչև այժմ էլ կենդանի է ներգոյականի իմաստով մեր արտակենտրոն բարբառներից մեկում, որ է Ագուլիսի բարբառը։

Սակայն եթե ներգոյականի ի նախդիրը դրինք հնխ. en «մեջ» բառից, նույնը չպիտի կարողանանք ասել նաև բացառականի ի նախդիրի համար, իմաստի տարբերության պատճառով։ Ճիշտ այս կետն ի նկատի ունենալով, Meillet հայագետը բացառականի ի նախդիրը կցում է հնխ. eks, հն. ἐξ. լտ. ex, e, հսլ. ı.zü, ռուս. изъ «միջից, դուրս» ձևերին (Meillet, Rev. des ét slaves, V, 8. Ernout-Meillet, Dict. lt, 300). Հալերենի համար ամենահարմարն է լտ. e ձևը։

Մնում է քննել, թե ի՛նչ կարիք կար բացառականի վրա դնելու այս ի նախդիրը, քանի որ նացէ, քաղաքէ և այլն ձևերը ինքնին բավական էին բացառականի գաղափարը արտահայտելու և ո՛չ մի հոլովի հետ էլ շփոթվելու երկյուղի տակ չէին։ Այսօր էլ արևմտահայ լեզուն, ինչպես և արևմտահայ և արևելահայ նոր բարբառներից շատերը գործ են ածում –է, –էն ձևը անշփոթ և կարիք չեն զգում որևէ օժանդակ միջոցի։

Ճիշտ է, որ գրաբարում ի, ի—ա, ն, ր և այլն հոլովաձևերի մեջ շփոթություն չկար, բայց շփոթությունը ընդհանուր էր ա, ո հոլովումների և բոլոր տեսակի հոլովումների հոգնակիի մեջ, նույնիսկ վերոհիշյալ ի, ի-ա, ն, ր. և այլն հոլովումները։ Այս բոլորի մեջ բացառականը նույնանում էր տրականի հետ միշտ և անհրաժեշտ էր որևէ միջոցով զանազանել նրանք իրարից։ Այդ միջոցը եղավ ի նախդիրը, որ և միօրինակության համար դրվեց նաև ի, ի—ա և այլն հոլովումների բացառականի վրա, ուր ավելորդ էր։

Գրաբարի մեջ և հատկապես բառերի կրկնության ժամանակ ի=յ նախդիրը չի դրվում. օրինակ՝

Յիշատակ ազգաց յազգս. Ելք Գ 15.
Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս. Ղուկ. Ա 50.

Ընդ Ամաղեկայ ազգաց յազգս. *Ելք ԺԷ 16.*
Իմացարուք զամսն յազգաց ազգս. *Բ օր. ԼԲ 7.*
Յիշատակ լինին յազգս ազգս. *Եսթ. Թ 28.*
Սուրհանդակքն երթային քաղաք ի քաղաքէ. *Բ Մնաց. Լ 10.*
Փախիցէ նա և անկցի ի մի քաղաքացն այնոցիկ. *Բ օր. ԺԹ 5։*

Աղոթքների մեջ սովորական ձև է յաւիտեանս յաւիտենից, *որ է* ի յաւիտեանս յաւիտենից:

Նկատի ունենալով այս երևույթը, կարելի չէ ասել, թե սրանք ներկայացնում են նախդիրի կրճատվա՞ծ ձևը, թե՞, ինչպես հավատացած եմ, հին աննախդիր ձևերն են։

Վերջերս գրաբարի անգիտության պատճառով այս կանոնը շփոթվեց և նախդիրները սկսեցին միացնել բառին. օրինակ՝ իզուր, ինկատի, իհարկին։

Նույնիսկ Մալխասյանի Խորենացու պատմ. թարգմանության մեջ, էջ 324, տող 11 (տակից) և էջ 325, տող 8 (վերից) կարդում ենք. իմիջիայլոց *(իբրև մի բառ)։*

Այս կարգի բառերը եթե մի բառ լինեին, բառարանում էլ իբրև առանձին բառ պիտի նշանակվեին, մինչդեռ այդպիսի բան չեն անում. հետևաբար զուր են դրանք համարում առանձին բառ։

ց

ց *նախդիրը նշանակում է՝*

ա. «մինչև». գործ է ածվում աննախդիր հայցականի հետ. ինչպես՝ ցդուռնն *«մինչև դուռը».* Կերիջիք *ցյագ «մինչև կշտանալը կերեք».* Ցայդ վայր եկեսցես *«կգաս մինչև այդ տեղը».* Ցմեծ ժամս *«երկար ժամեր».* Ոչ եհաս նմա ցաւուրսն ցայնոսիկ ի մէջ ցեղին Իսրայելի ժառանգութիւն *(Դատ. ԺԸ 1).* Կասկածեմ ցառաւօտն և ճասեալ յառաւօտն՝ երկնչիմ ցերեկոյն *(Փարպ.)։*

Գործածվում է նաև մակբայների հետ. ինչպես՝ Ցե՞րբ է այդ *«մինչև ե՞րբ է այդ».* Ցայսօր, ցայժմ, ցայնժամ, ցարդ:

Այս մասնիկն է, որ կցվելով այգ *և* երեկ *բառերին, տալիս է նոր գոյականներ.—*ցայգ *«մինչև առավոտ, որ է գիշեր»,* ցերեկ *«մինչև երեկո, որ է օրը ցերեկ»։*

ց *թեև ինքը մենակ նշանակում է արդեն «մինչև», բայց կարող է նաև* մինչև *բառի հետ միասին գործածվել. ինչպես՝* ցդուռնն *կամ* մինչև ցդուռնն:

բ. Կցվելով անորոշ հայցականի հետ, կազմում է տրական և այս ձևով գործածվում է միայն մի քանի բայերի հետ. ինչպես են՝ ասեմ, հարցանեմ, տամ: *Օրինակ՝* Ասա՛ ցիս *(այսինքն՝ ասա՛ ինձ).* Հարցին ցնա *(Նրան հարցրին).* Ասաց ցհայր իւր. Ասաց տէր ցտէր իմ. Տէր ցտէր ասէ զայս. ո՛չ եթէ տէր ցծառայ, այլ տէրն ամենայնի ցորդի իւր *(կոչ ԺԱ).* Ետ ցորդին ցմայր իւր, ցնոսա, ցմշակս *և այլն։* Զբարսմունսն՝ զոր ի ձեռին իւրում ունէր, ետ ցորմիզդ... և ի տալ Զրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ *(Եզն. 115)։*

ց *նախդիրի ծագումը անշուշտ բնիկ հայ է. հավանաբար նա առաջանում է հնխ.* ad *նախդիրից, որ նշանակում է «մոտը, դեպի, առ, ց»։ Ժառանգներից հմմտ. փռյուգ.* ad-, *լտ.* ad *«դեպի, մոտը, առ, մինչև* (omnes ad unum *բոլորը մինչև վերջինը), միջոցին, ըստ»,* atque, ac *«նաև, և», հիռլ.* ad-, *կիմր.* add-, *գոթ.* at, *հիսլ.* at, *անգսք.* œt, *հբգ.* az *և այլն։ Մեր մեջ հնխ.* ad- *ստացել է* s *աճականը (այսպես է նաև օսկ.* az*), հմմտ. լտ.* abs, ex *և այլն)* (s *աճականով)։ Բայց* ads>ats *չէր կարող տալ* ց, *ուստի ավելի հարմար եմ կարծում* ad-sk'- *ձևը։*

ց *նախդիրը պահված է արևելյան գրականում* ցտեսություն *ձևի մեջ, որի կրճատ ձևն է պարզապես* ցը. *ոմանք էլ ասում են* ցո, *որ* ց *տառի անունն է այբուբենի մեջ։ Այս ձևը անցել է նաև արևմտյան գրականին և հետզհետե տարածվում է։*

առ

Առ *նախդիրը՝*

ա. աննախդիր հայցականով նշանակում է՝

1. «դեպի մեկը շարժում». ինչպես՝

Գնաց առ հայր իւր
Գնաց առ թագաւորն
Եկայք առ իս «ինձ մոտ եկեք»
Առաքեցաք զնա առ եղբայր իւր
Առաքեսցես առ իս, առ նոսա, առ այրն, առ իշխանս
Ածեալ զնորարարսն առ նորաստեղծն *(Եզն. 68).*

Այս բոլոր օրինակների մեջ, ինչպես տեսնվում է, դիմումը կատարվում է դեպի մի անձ։ Իր լինելու դեպքում պիտի գործածվեր ի *նախդիրը. հմմտ.*

Գնաց առ հայր իւր=Գնաց ի տուն իւր:

2. Իր նշանակող բառերի հետ՝ առ *նախդիրը հայցականով*

նշանակում է «մոտը» (դադարում) և կամ տալիս է տեղ ցույց տվող զանազան նշանակություններ. ինչպես՝

Նստաւ առ ոտսն Տեառն (Ղուկ. Ժ 39)
Առ ոտս կայ
Առ եզր, առ ափն ծովու
Առ ոտն, առ աթուր կոխել կամ ճարկանել «ոտքի տակ առնել, կոխոտել»։

3. «Համար, նկատմամբ, համեմատությամբ» (թե՛ իրերի և թե՛ անձերի համար). ինչպես՝

Եթէ այսպէս առ մարդիկ, քանիօ՞ն առաւել առ Աստուած
Նկանակ մի առ այր (մարդագլուխ, ամեն մի մարդու համար)
Գառն մի առ օր (օրը մի գառն)
Առ մի օր (մի օրվա համար)
Եւ այն զի՞նչ իցէ առ այս (սրա հետ համեմատած)։

4. «Համար, պատճառով» (կարելի է թարգմանել աշխարհաբար նաև բացառականով) ինչպես՝

Առ նախանձ, առ ցաւս (նախանձի համար, նախանձի պատճառով, նախանձից).
Առ ատել, առ քինալ, առ չժուժալ, առ ճոգալ
Ո՞ ի ձէնչ առ ճոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի ճասակ իւր կանգուն մի. (Մատթ. Զ 27) նկատելի է իւրում տրական հոլովով, որ ցույց է տալիս, թե նախորդ անորոշ դերբայը ներգոյականի փոխարեն է։

5. Կազմում է տրական. այս գործածությունը վերցնում եմ Նորագյուտ Ա Մնացորդաց գրոց մեջ՝ Գլ. ԻԴ 7—18. Եւ ել վիճակն առաջին առ Յարիմ, և երկրորդն առ Յուդայա, և երրորդն առ Բարամ, և չորրորդն առ Գէսրիմ, և հինգերորդն առ Մելքիէլ, և վեցերորդն առ Մէիման, և ութներորդն առ Ակովս, և ութերորդն առ Աբիայ, և իններորդն առ Յիշով, և տասներորդն առ Յեքոնիայ, և մետասաներորդն առ Եղիասափ, և երկոտասաներորդն առ Յակիմ...

Այս բոլոր ձևերի դեմ Յոթանասնից մյուս թարգմանությունը դնում է սովորական տրական ձևը. ինչպես՝ Յարիմայ՝ փխ. առ Յարիմ և այլն։—Առ նախդրի այս գործածության ուրիշ տեղ չենք հանդիպում։

6. Գործ է ածվում մակբայների հետ միացած. ինչպես՝ Առ ե՞րբ արարից. ասէ. Առ վաղիւ: Դու առ այժմ երբ:— Այժմ շատ

գործածական ձևեր են՝ առ առաւելն, առ նուազն, առ հասարակ, առ երևոյթս, առ երեսս *(առառավելն, առնվազն, առհասարակ, առերևույթս, առերեսս) և այլն։*

բ. Տրականով նշանակում է «մոտը, կողքին», որ արևմտահայ լեզվով ավելի պատշաճորեն թարգմանվում է «քովը» (գործ է ածվում թե՛ անձերի և թե՛ իրերի համար). օրինակ՝

Նաւք կային առ ծովակին ։

Էին առ նմա *(Նրա մոտն էին)*

Նստոյց առ իւր *(իր կողքին նստեցրեց)*

Մտեալ է առ Սիմոնի ումեմն *(գնացել է Սիմոն անուն մեկի տունը)*

Պետրոս կայր առ դրանն արտաքոյ *(Պետրոսը դուրսը՝ դռան կողքին կանգնել էր). Յովհ. ԺԸ 16.*

Առ ծովեզրն *(ծովի ափին).*

Ո՞ւր իցէ նա արդ.—է նա առ քեռանն իւրում, առ հօր իւրում:

Ագաւ առ նմա զայն գիշեր *(այն գիշեր նրա տանը օթևանեց.)*

Ջուրն կայր առ դիականն *(ջուրը դիակի մոտ կանգնած էր)*

Այս բոլոր օրինակներում առ *նախդիրը ցույց է տալիս դադարում մինչդեռ* առ *հայցականով՝ ցույց էր տալիս շարժում։ Ըստ որում հոգնակիում դադարումը արտահայտվում է աննախդիր հայցականով. այս դեպքումն էլ, եթե գոյականը հոգնակի է, կամ ես դերանունը կա, դրվում է միշտ հայցական. օրինակ՝*

Գտին առ դուրս *(դռների մոտ գտան)*

Եգիտ ձուկն առ ձկնորսս *(ձկնորսների մոտ ձուկ գտավ)*

Առ մե՛զ ագիր *(գիշերը մեզ մոտ մնա՛)*

Եկաց առ իս *(մոտս մնաց)*

Իբրև քարինս առ քարինս՝ անմռունչ առ միմեանս նստել *(ինչպես քար քարի մոտ՝ անխոս իրար մոտ նստել)*

Նստէր առ ոտս նորա:

Ըստ այսմ առ *նախդիրը «մոտը» նշանակությունը ստանալու համար եզակի թվում ստանում է տրական խնդիր, հոգնակի թվում՝ հայցական։ Երկուսը միասին գտնում ենք հաջորդ օրինակում.*

Պարծիլ առ կնոջ և առ ծառայս *(կնոջ և ծառաների մոտ պարծենալ)։*

ՆՀԲ հիշում է երփն առ երփն «ոսկեգույն» իմաստով, իբր բարդ բառ, որի մեջ առ նախդիրը «մոտ, քովը» նշանակությունն ունի։

գ. Առ *նախդիրը սեռական խնդրով նշանակում է «համար, պատճառով. մի բանից դրդված», և աշխարհաբարում շատ հարմար է գալիս թարգմանել բացառական հոլովով. ինչպես՝*

Առ նախանձու *(նախանձից)*
Առ քինու *(ոխից, վրեժից)*
Առ երկիւղի, առ ցաւոց, առ վշտին, առ ամօթոյ, առ ահի
Ոչ յայտնեաց զանձն առ երկիւղի
Շիկնէր առ ամօթոյ

Միևնույնը կարելի է դնել նաև հայցական կամ նախդրիվ հայցական հոլովով, ինչպես՝

Առ նախանձ, առ ցաւս, առ ատել
Առ սէր քո արարի զայս
Որպէս թէ առ ի չգիտանս եկեր *(Եզն. 49)*
Ոչ առ ատել ինչ ասեմ զայս

դ. Առ *նախդիրը բացառականով (*ի *նախդիրը պահած կամ ոչ) նշանակում է՝*

1. «համար, պատճառով, իբր». օրինակ՝

Առ ի չապստամբելոյ նոցա յինէն
Առ ի չգոյէ կերակրոյ *(կերակուր չլինելու պատճառով)*
Եկեր... առ չժուժելոյ *(Եզն. 49)*
Առ ի մարմնոյ սրբութենէ *(իմա՝ առ ի սրբութենէ մարմնոյ)*

Առ ի չգոյէ մարդոյ
Առ ի հաստատութենէ բանիցն
Առ յիշատակէ *(իբր հիշատակ)*
Առ օրինակէ *(իբր օրինակ)*
Առ առակէ շրջեցուցանել *(խայտառակելու համար ման ածել)*

Առ զարդուէ *(զարդի համար)*
Առ նորա ականէ *(նրանից ակնածելով)*
Առ ակնհարէ *(չար աչքից պահելու համար)*
Առ ականէ ծառայել
Առ ի քաւելոյ զմեղս

2. *«կողմից, քով, քովեն». ինչպես՝*

Եղբայր առ ի մօրէ *(մոր կողմից եղբայր)*

Լեր դու նոցա առ յինէն *(նրանց մոտ դու իմ կողմից՝ իմ ներկայացուցիչս եղիր)*

Առ ի քէն ելի *(քեզանից դուրս եկա)*

Առ ի նոցանէ *(նրանց մոտ, նրանց կարծիքով)*

Առ ի ծառոյն *(ծառի կողքից)*

Անհնարինք առ ի մարդկանէ՝ առ ի յԱստուծոյ հնարաւորք են *(ինչ որ մարդկանց համար անհնար է՝ Աստուծո համար հնարավոր է)*

Նա խօսեսցի առ ի քէն *(թո՛ղ նա քո կողմից խոսի)*

Առ ի մէնջ *«մեր կողմից»*

ե. Գործիական հոլովով նշանակում է՝

1. «մոտը, մոտով (քովը, քովերը, քովեն), մի քանի երկարությամբ». ինչպես՝

Առ ափամբ ծովուն

Առ եզերբ գետոյն

Առ որմովն

Նստէր առ նոքօք

էր որ անկաւ առ ճանապարհաւ *(Ղուկ. Ը 5)*

Առ ծովեզերբն

2. «համեմատած, բաղդատմամբ» (որ աշխարհաբարում կարելի է նմանապես «մոտը կամ քովը» թարգմանել). ինչպես՝

Զի՞նչ է յարդ առ ցորենով

Տգէտ է նա առ քեւ

Աղմուկս չէ ինչ՛ առ այնու որ երէկն եղեւ

3. «ժամանակ, նրա օրով». ինչպես՝

Առ Թարայիւ՝ հարբն Աբրահամու *(Աբրահամի հոր՝ Թարայի օրով)*

Առ Եղիսէիւ մարգարէիւ

Առ ջրհեղեղաւ

Առ նորա կենդանեօք *(կամ նաև* Առ կենդանեօք, *կամ* Կենդանեօք և յետ կենդանութեան, Կենդանեաւ մերով)

Առ ինեւ, առ քեւ *(իմ օրով, քո ժամանակ)*, առ նովաւ *(նրա օրով)*

Առ կենդանութեամբ
Առ Տրդատաւ, Առ Սողոմոնիւ

գ. Նախդրիվ հայցականով նշանակում է «մի բանի համար, նպատակով». ինչպես՝

Եկեալ եմ առ ի լսել
Առ ի դարման
Առ ի պէտս
Առ ի բժշկութիւն
Առ ի բժշկել, առ ի տեսանել
Եղիջիք արագ առ ի լսել և ծանր առ ի խօսել

Նույնը կա նաև առանց ի նախդիրի՝

Առ ի մտանել ի տուն Տեառն *(Նորագյուտ Ա. Մնաց. ԻԴ 19, ուր մյուս թարգմանությունն ունի պարզապես «մտանել ի տունն Տեառն»)։*

է. **Առ** *նախդիրը դրվում է նաև բայերի վրա իբրև նախամասնիկ. ինչպես՝* **առածելում, առլնում, առածիլ** *«իբր վրա դառնալ» (Եզն),* **առականել** *«փակել»,* **առանցանել, առեղծանել** *կամ* **առեղծուլ, առմատուցանել** *(Ծննդ. Իէ 25) և այլն։*

Առ *նախդիրը ծագում է հնխ.* pr̥ *կամ* par- *ձևից և պատկանում է հնխ.* perə *«առաջը» բնին. հմմտ. հն.* παρα *«առ»։*

Ընդ

Գրաբարի մեջ ամենասովորական մասնիկն է, որ հատկապես գործածվելով՝

ա. Աննախդիր հայցականով՝ նշանակում է «մի բանի կամ մի տեղի միջով անցնել, մտնել կամ ելնել», «մի բան մի ուրիշ բանի կապել, կցել կամ միացնել», «մի ընդարձակ տարածությամբ տարածվել, փռվել կամ ման գալ» և այլն, և աշխարհաբարում թարգմանվում է զանազան հոլովներով կամ բառերով. ինչպես՝

Եմուտ ընդ պատուհանն *«պատուհանից մտավ»*
Մտէք ընդ դուռն. *«մտեք դռնով»*
Անց ընդ դուռն պարտիզին *«պարտեզի դռնով անցավ»*
Անցին ընդ ծով, ընդ ջուրս
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն *(վիպաս.)*
Եւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն *«նրա անունը ամբողջ երկրով տարածվեց»*

Ընդ խաւար գնալ *«մթան մեջ քայլել»*

Շրջեցայ ընդ ամենայն քաղաքն *«ամբողջ քաղաքը ման եկա»*

Հայէին ընդ նա, ընդ երկինս, ընդ արևելս, ընդ պատուհանն, ընդ դրունսն, ընդ ծակ մի

Ընդ ամենայն արշաւել.

Ընդ երեսս դաշտին

Ընդ բնաւ ջուր էր *«ամեն կողմ ջուր էր»*

Ընդ ճանուր արշաւեն, ընդ բնաւ սլանան *(եզն. 18)*

Կախել ընդ պարիսպն, ընդ պատուհանն

Ընդ ո՞ր գնացին *«ո՞ր ճամբով գնացին»*

Ընդ ո՞ր կոյս, ընդ ո՞ր կողմն *«ո՞ր կողմով»*

Ընդ այս, ընդ այն, ընդ այս ճանապարհ, ընդ այն ճանապարհ, ընդ այլ, ընդ նոյն, ընդ նոյն տեղի *«այս ճամբով, նույն տեղով» և այլն։*

Գրաբարում շատ որոշ կերպով զանազանվում են մի տեղից *և* մի տեղով, *որոնք արևմտյան աշխարհաբարում և թուրքերենում միևնույն են։ Առաջինը ցույց է տալիս մի տեղից հեռացում, այն տեղը թողնելու պայմանով (ֆրանս.* de *ռուս.* от, из*), իսկ երկրորդը՝ այն տեղի միջով կամ միջոցով (ֆրանս.* par, *ռուս.* через*). Արևելյան հայերենում շատ լավ զանազանվում են առաջինը բացառական հոլովով՝*

Ուստի՞ գնացին.— Ելին անտի և փախեան յանտառէն *(անտառից փախան) իսկ երկրորդը՝ գործիական հոլովով.*

Ընդ ո՞ր գնացին.— Ելին ընդ այն և փախեան ընդ անտառն *(անտառով փախան)*

Ջարմանայ, ճաճի, խնդայ, նախանձի ընդ բարիս

Թքանել ընդ երեսս

Ընդ գետինն մտանել *(գետինը մտնել)*

Ընդ գլուխդ կապեա

Կապէին ընդ նաւն

Կապեաց զջորին ընդ մացառն *(ջորին մացառից կապեց)*

Ընդ ելանել նորա *(նրա դուրս եկած ժամանակը)*

Ընդ արևուն մտանել *(որ և ի մտանել արևու «արևի մայր մտած ժամանակ»)*

Ընդ այն ժամանակս *«այն ժամանակները»*

Ընդ նոյն աւուրս *«նույն օրերում»*

Ասէ ընդ միտս *«մտքովն ասում է»*

Ծիծաղի ընդ միտս իւր *«մտքումը ծիծաղում է»*
Ամենքին ընդ մի բերան *«բոլորը միաբերան»*
Ընդ ոտն, ընդ աթոռ կոխել

բ. Աննախդիր հայցականի հետ կրկնելով նշանակում է՝

1. Նրա և մյուսի մեջտեղը, ինչպես՝

Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո *(Ծննդ. ԺԳ 8). «Թող իմ ու քո միջև և իմ հովիվների ու քո հովիվների միջև կռիվ չլինի»*

Ընդ քեզ և ընդ նա
Ընդ այր և ընդ կին *«մարդու և կնոջ միջև»*
Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր *«Երկնքի և երկրի միջև կախված մնաց» (Բ Թագ. ԺԸ 9)։*

2. «միասին հաշված», ինչպես՝

Ընդ այր և ընդ կին՝ այսչափ *(մարդ ու կին միասին հաշված)*
Տարի մի՝ ընդ շատ և ընդ պակաս *(ավել-պակաս մի՛ տարի)*

գ. Ընդ *սեռականով նշանակում է «տեղը, փոխարեն, փոխանակ». օրինակ՝*

Զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո *(Մատթ. ԺԷ 26)*
Երթ ընդ իմ *«Իմ տեղը դո՛ւ գնա»*
Թագաւորեաց ընդ նորա որդի նորա *«նրա տեղ որդին թագավորեց»*
Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման *«Աչքի փոխարեն աչք և ատամի փոխարեն ատամ»*
Ընդ բարեաց չար հատուցումն
Ընդ միոյ չորս *«մեկի տեղ չորս»*
Ընդ եղբօր իւրոյ *«իր եղբոր փոխարեն»*

դ. Ընդ *տրականով նշանակում է՝*

1. «հետը, միասին». բայց այս օրենքը գործադրվում է միայն եզակիում. իսկ հոգնակիում և ես *անձնական դերանվան հետ դրվում է միշտ աննախդիր հայցական՝ ըստ դադարում ցույց տալու օրենքի։*

Ընդ եղբօր իւրում *«Իր եղբոր հետ»*
Երթա՞ս ընդ առն ընդ այսմիկ *(այս մարդու հետ կգնա՞ս)*
Ընդ հնոյն չմիաբանի կապերտն *(Ղուկ. Ե 36)*

Գնացին ընդ նոսա *(գնացին նրանց հետ)*
Ե՛կ դու ընդ իս *(հետս արի՛)*
Բազմեալ ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա
Մարտնչել ընդ Երուսաղեմի և ընդ այլ քաղաքս
Ընդ եղբարս իւր
Ոչ կարէր խօսել ընդ նոսա *(Ղուկ. Ա 22)*։

Քիչ անգամ հոգնակիումն էլ հայցականի տեղ դրված կա տրական. ինչպես՝

Ճակատեցան չորք թագաւորք ընդ հնգից *(չորս թագավոր հնգի հետ կռվելու դուրս եկան)*։

2. Ունի երբեմն սովորական տրականի նշանակություն. ինչպես՝

Նախանձել նմա ընդ նախաստեղծ մարդոյն *(Եզն. 47)* *«Նրա նախանձելը Ադամին»*

Նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր *«Եղբայրները նախանձեցին նրան» (Ծննդ. ԼԷ 11)*

Համբուրեաց *ընդ նմա*
Զաւեն ինչ ընդ դմա
Նայեցեալ ընդ Յիսուսի

ե. Ընդ բացառականով ցույց է տալիս տեղ և գործ է ածվում բացառականի իմաստով. ինչպես՝

Ընդ աջմէ, ընդ ձախմէ, ընդ աճեկէ *«աջից, ձախից»*
Ընդ աջմէ սեղանոյ. Ղուկ. Ա 11 *(Հույնը դնում է պարզապես բացառական)*
Ընդ հարաւոյ կողմանէ
Ընդ արևելից կողմանէ
Ընդ երեսաց լուսոյն *(լույսի դիմացը)*

զ. Ընդ գործիականով նշանակում է «տակը, ներքևը». ինչպես՝

Ունիմ ընդ իւև զինուորս
Գունդն երկրորդ ընդ իմով ձեռամբ է
Նստայ ընդ ծառովն
Ընդ որո՞վ ծառով *(Դան. ԺԳ 54, 58)*
Ընդ որթով և ընդ թզենեաւ
Ժողովէ ընդ թևովք
Եմուտ ջրին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ *(Բ Թագ. ԺԸ 9)*
Ընդ հերձեաւն, ընդ սղոցեաւն *«հերձի ծառի տակ, սղոցի ծառի տակ» (Դան. ԺԳ 54, 58)*

Չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես (Ղուկ. է 6)

Ընդ արեգակամբ «արևի տակ, երկրիս վրա»

է. Իբրև նախամասնիկ դրվում է նաև բայերի վրա, ձայնավորից առաջ մնալով ամբողջությամբ, բաղաձայնի մոտ դառնալով ըն, իսկ շրթնային բաղաձայնի մոտ՝ ըմ. ինչպես՝

Ընդունիմ (կտր. ընկալայ), ընդելուզանել, ընկողնիլ, ընկլուզանել, ընկնել (=ընգնել), ըմբերանել, ըմբռնել:

Ընդ նախդիրը ծագում է հնխ. anti ձևից, որ ներգոյականն է ant- «երես, ճակատ, առաջակողմ» բառի։ Հայերենի զանազան նշանակությունների համար հմմտ. ցեղակից ձևերից սանս. ánti դեմ, ընդ առաջ, adhi վրա, մոտ, դեպի, բարձրից, adhás տակը, զնդ. aδarō տակինը, հն. ἀντί փոխարեն, դեմը, ἀντίος առջևի, դիմացի, լտ. ante նախ, դեմ, գոթ. and երկարությամբ, վրա, վրայից, und փոխարեն, undar տակը, հբգ. unt, նբգ. ant, ent-, հլիտ. anta վրա, դեպի, լիտ. añt վրա, անգլսք. and, ond, հիսլ. and անգլ. and և, under տակը և այլն։ Հայերեն ասությանց շատ համապատասխան ձևեր են՝ հուն. ophthalmòn anti ophthalmoû kai odónta anti odòntos =Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, գոթ. tundu und tundau ատամն ընդ ատաման (Մատթ. Ե 38). and all gawi =Ընդ ամենայն կողմանս (Ղուկ. Ա 14), and allans stadins =Ընդ ամենայն տեղիս (Ղուկ. Դ 37), հն. anti emoû kai soû =Ընդ իմ և ընդ քո (Մատթ. ԺԷ 27).. այսպես նաև գոթական բայերի սկիզբը. ինչպես՝ and-niman, որ ճիշտ համապատասխանում է հյ. ընդունել բային։

Հունաբան հեղինակների հնարած ձևն է ենթ– նախամասնիկը, իբր համապատասխան հն. hypo- մասնիկի. ինչպես՝ ենթադրել= hypo-tithēmi, ենթակա= hypò-stasis և այլն։ Կա նաև ընթ ձևով. ինչպես՝ ընթադրել, ընթակա և այլն։

Առընթեր

Կազմված է թեր «կողմ» բառից առ և ընդ նախդիրներով, իբր առ–ընդ–թեր: Սակայն նախադասության մեջ կարող է ստանալ նաև զ կամ յ նախդիրները. ինչպես՝

Դիտելով զառաջ և զառընթեր գալուստն իմ (Կիրղ. Ղուկ.)։

Յառընթեր դաւանանութեանց խոյս տալ (Նիւս Բն.)։

Իսկ եթե ունենայինք այսպիսի մի օրինակ՝

Առ ի զաղընթերակայսն ճեռացուցանելոյ *«կողքին եղած-ները հեռացնելու համար»,*

կունենայինք հինգ նախդիր միասին միևնույն արմատի վրա, որից առ և ի պատկանում են բային, ինչպես ունի Եզնիկը՝

Առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօրոց ի բաց ի միջոյ փարատելոյ:

Ըստ

ա. Ըստ նախդիրը տրականով նշանակում է «համեմատ, համաձայն». ինչպես՝

Եղիցի ինձ ըստ բանի քում *«Թող լինի քո խոսածի համաձայն» (Ղուկ. Ա 38)*

Ըստ նմա *«Նրա կարծիքով, նրա ասածի համաձայն»*

Ըստ օրինացն Մովսիսի *(Ղուկ. Բ 22)*

Տալ պատարագս ըստ ասացելոյն *(Ղուկ. Բ 24)*

Ըստ չափոյ, ըստ թուոյ

Ըստ բանիս, ըստ այսմիկ

Որ շատ խօսի՝ ըստ նմին և լուիցէ *«Շատ խոսողը նրա չափով էլ պիտի լսի»*

Ըստ վաստակոց իւրոց

Այս իմաստով հոգնակիում երբեմն կարող է նաև հայցական դրվել. ինչպես՝

Հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր *(Սաղմ. ԿԱ 13)*

Ըստ աչս դատել

Գնալ ըստ կամս, ըստ միտս:

Անորոշ դերբայը կարող է դրվել թե՛ տրական և թե՛ հայցական. ինչպես՝

Ըստ յանախելոյ *կամ* ըստ յանախել *«շատանալու չափով»:*

բ. Ըստ հայցականով նշանակում է «մի տեղից կամ մի բանից անց, դուրս, այն կողմ, անդր քան, ավելին», ինչպես՝

Անցին ըստ գետն *«գետից այն կողմ անցան»*

Ելին ըստ քաղաքն *«քաղաքից դուրս՝ ավելի այն կողմ ելան»:*

Ըստ երկիր անդր ոչինչ է *«Երկրի այն կողմ ոչինչ չկա»*

Ելին ըստ չափ *«Չափից անցան»*

Անցի ըստ նոսա «նրանցից անցա, գերազանցեցի»
Անցին ըստ պան մի և ըստ երկուս «Մի և երկու պահա-
նորդ անցան»
Ելից ըստ քաղաքս «Ես այս քաղաքից դուրս պիտի ելնեմ»
Ելանէ ըստ ձեռն «ձեռքից կպրծնի»
Ըստ ակն անկանել «այլևս աչքին չերևալ»

գ. Քիչ անգամ գործ է ածված աննախդիր բացառականով և
նշանակում է «կարգով շարունակելով, հետևելով». ինչպես՝

Եւ զքաղաքսն՝ որ ըստ նմանէ էին. (Ա Մակաբ. Ը 8)
Այր ըստ առնէ ի վերայ գործոյ իւրեանց (Թուոց, Դ 49)
Այր ըստ առնէ մոլորեցան (Ես. խէ 18). «Ամեն մարդ իրար
ետևից»

Զի ըստ սմանէ այսպէս և մերձաւոր նորա (Սիր. Զ 17)
Եճաս ի վերայ նորա և որ ըստ նմանէն էին (Կոչ. ժԵ.)
Կարգ ըստ կարգի (Եւսեբիոս, Քրոնիկոն, ա)
Մի ըստ միոջե «մեկը մյուսի ետևից»։

դ. Մի անգամ գտնում եմ «վրա» նշանակությամբ գործած-
ված Բուզանդ, Ե, Լէ։ Տասն տասն խրասախ բերէր ըստ անձին
(վրան առած, շալակած) զայնչափ այրն անհեդեդ զանարի։

ե. Ըստ գործածվում է նաև իբրև նախամասնիկ բայերի վրա.
ինչպես՝

ըստգիտ կամ ստգիտ Կոչ. Ոսկ. յհ. Ա 10, 5 բ, 15 բ, Կոր.,
Բ Տիմ, ըստգտանել կամ ստգտանել Ս. Գր., Եւս. Քր., Ոսկ.
ըստերիւրել կամ ստերիւրել Ս. Գր., Եզն., Ոսկ. ստունգանել Ս.
Գր., Եզն., Ոսկ., որոնք, ինչպես տեսնվում է, կարող են գրվել
թե՛ ըստ- և թե՛ ստ- ձևով (երկուսն էլ ունեն միևնույն հնչու-
մը)։

Ըստ մասնիկը ծագում է հնխ. posti ձևից, որի այլ ժառանգ-
ներն են լտ. post «հետո», ռսկ. post, ումբր. pust «հետո»։ Հնխ.
posti բառի ծագումը հետևյալն է.— հնխ. apo «մի բանից» բառը
(որի ժառանգներն են սանս. âpa, զնդ. հպրս. ɛpa, հն. ἀπό, գոթ.
af, հբգ. aba, ab, գերմ. ab, հիսլ. af, անգլսք. af, of, լտ. ap>ab)
կրճատվելով դարձավ հնխ. po, որից աճմամբ հնխ. pos (հմմտ.
լիթ. pàs «մոտը, առ», սանս. paçča «ետևը, հետո», զնդ. pasča
«հետո, ապա», հպրս. pasā, pasāva «հետո», լիտ. páskui «հետո»)
և այս pas ձևն էլ՝ իր հականիշ հնխ. anti «առջևը» (> հյ. ընդ)
բառի նմանությամբ ստանալով -ti մասնիկը՝ դարձավ posti>post:

Այն բոլոր նախդիրները, որ քննեցինք մինչև այժմ (զ, ի=յ, ց, առ, ընդ, ըստ) կարող ենք կոչել անկախ նախդիրներ, որովհետև ամեն տեսակ բառերի հետ գործ են ածվում՝ տալով նրանց զանազան իմաստներ։ Նրանք միևնույն ժամանակ կցվում են մի խումբ բայերի վրա և դառնում նախամասնիկ։ Բայց նրանցից դուրս կան նաև երկու ուրիշ նախդիրներ (ամ=յամ *և* նի), *որոնք անկախ գործածություն չունեն և գործ են ածվում միայն իբրև նախամասնիկ՝ մի քանի, այն էլ շատ սակավաթիվ բայերի վրա. այսպես՝*

ամ, յամ.— ամբառնամ *կամ* յամբառնամ, ամփոփիմ, յամբերեմ, յամարձակիմ *և այլն։*

նի.— նայիմ *(իբր* նի-ճայիմ), ն-ստիմ *(իբր* նի-sed*)*, նշողել *կամ* նշուլել *(իբր* նի-շող).— նզովել, նպաստել *և* նուիրել *նույնպես կազմված են* նի *մասնիկով, բայց ամբողջությամբ փոխառություն են պարսկերենից։*

Իբրև ընդհանուր կանոն թվարկված նախդիրները դրվում են իրար հետ մի միություն կազմող ամբողջ բառախմբից առաջ. ինչպես՝

Ի միոջէ պարզ բնութենէ. *Եզն. 32*
Ի միտս մարդկան. *Եզն. 28*
Ի չարեացն խնդիր. *Եզն. 34*
Յեբրայեցւոց և Յասորւոց լեզուէ. *Եզն. 52*

Նախդիրը կարող է շատ հեռանալ. ինչպես՝

ԱՌ Ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ ՓԱՐԱՏԵԼՈՅ. *Եզն.*

Նախդիրը կարող է կրկնվել խմբի յուրաքանչյուր անդամի վրա. ինչպես՝

Զերկոսեան Զեղբարսն. *Բուզ. Գ 19*
ԸՆԴ գետն մեծ ԸՆԴ Կուր. *Բուզ. Գ 7*
Դու Զիմ Զոտս լուանաս. *Յովհ. ԺԳ 6*
Գտի Զոչխարս իմ Զկորուսեալ. *Ղուկ. ԺԵ 6*
Զզատուցեալ նմա Զշարժումսն. *Եզն. 40*
Մի ինչ Ի պատուիրանացս Յայսցանէ Ի փոքունց. *Մատթ. Ե 19*
Յաստուածպաշտութեան Յօրինակէ անտի. *Եզն. 38*
ՅԱստուծոյ ինչ Ի փառս. *Եզն. 80*
Յամենայն Ի փառս իւրում. *Մատթ. Զ 29։*

Հետադաս ցուցականների վրա այս կրկնությունը պարտադիր է. ինչպես՝

Ի լերինս Յայսմիկ. *Յովհ. Դ 20*

Մի . . .

Բայց ոչ ուրիշ կարգի բառերի համար. և կարելի է հակառակ վերիններին, ազատ կերպով ասել՝

Ի սահմանելոյ նմա տեղւոյն. *Եզն. 40*

Զամենայն աւուրս կենաց իմոց.

Երբ տարբեր հատկացուցիչների հետ հարկ է լինում կրկնել միևնույն հատկացյալը, նախդիրը միայն կրկնել բավական է. օրինակ՝

Յէզոց մարդկան և Յանասնոց անկեալ. *Եզն. 210*

Կալաւ Զօրէնս մազդեզանցն, այսինքն Զմոգուցն. *Բուզ. Դ 23*

Որպէս թէ արդարոցն մեռանելոց ոգիք Յայլ Ի սուրբ մարմինս փոխիցին, կամ Ի մարդկան կամ Յանասնոց սրբոց. *Եզն. 221.*

Սրանք համասար են մեր արդի -ինը, -ինները դարձվածին։

Կարող է նաև հատկացյալը իսպառ հապավվել և ենթադրությամբ իմացվել «բանը, ինչը». օրինակ՝

Տուք Զկայսերն՝ կայսեր, և ԶԱստուծոյն՝ Աստուծոյ. *Մատթ. ԻԲ 21.*

Ոչ խորհիս ԶԱստուծոյսն, այլ Զմարդկան. *Մատթ. ԺԶ 23.*

Ոչ առցուք Զայլոյ. *Բուզ. Գ 6.*

Աչս և բերան և լսելիս վասն այնորիկ ետ մեզ Աստուած, զի Զնորայսն խօսեսցուք և Զնորինսն արասցուք. *Ոսկ. . . .*

Նախդիրի կրկնությունը տալիս է շեշտ կամ սաստկություն. ինչպես՝

Ոչ զիջանելն ոք տեսանէ զնորա և ոչ զամբառնալ. *Եզն. 218.*

Ի նիւթոյ ինչ իմեքէ Յրնքբերակացէ. *Եզն. 26.*

Նախդիրի այսպես կրկնությունը հաճախ միջոց է խնդրի և խնդրառուի կապը և երկիմաստ նախադասությանց միտքը որոշելու. ինչպես՝

Ոչ թողոյր Զերկոցունց տոհմացն Զօրծ կորիւն և ոչ Զմի. *Բուզ. Գ 4 (զերկոցունց տոհմացն եթե չունենար* **զ**, *կարելի էր համարել տրական և կապել* **թողոյր** *բայի հետ).*

Կին... զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն. Գործ. ԺԶ 14. **(զորոյ**

եթե չունենար գ, կարող էր կապվել Տէր բառի հետ՝ իբրև սեռական. «որի տերը»)։

Կարելի է միատեսակ բառերի նախդիրը առաջ գրել և մի՛ անգամ դնել, ուրիշ խոսքով երկրորդի նախդիրը հապավել, օրինակ՝

Ստացաւ իւր գնդս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ (Բուզ. Ջժ), այսինքն ի լինելոյ և ի բառնալոյ։

Բոլոր վերոհիշյալ անկախ նախդիրները հնդեվրոպական ավելի ընդարձակ ձևերի ամենակրճատ վիճակն են, բաղկացած մի կամ երկու բաղաձայնից, գրեթե առանց ձայնավորի։ Նրանք շեշտ չունեն, ըստ որում առանձին չեն կարող գործածվել և անհրաժեշտ կերպով կցված են հաջորդ բառին։ Այս կողմից շատ որոշ են զ և ց.—յ՝ հենց ի նախդիրի ավելի կրճատ ձևն է՝ մի միակ բաղաձայնի վերածված.— ընդ և ըստ ունեն ը՝ որ հայերենի ամենաստոր ձայնավորն է.—առ նախդիրն ունի սկզբից ա ձայնավորը, որովհետև հայերենում ռ բաղաձայնով բառ չի սկսվում (այս նախդիրի ավելի հին ձևն է առա-, ինչպես ցույց են տալիս առա-սպել և առա-ստաղ բառերը, որոնք կազմված են առ- մասնիկով՝ սպել և ստաղ արմատներից).— Վերջապես ի չի կազմում բացառություն, որովհետև անշեշտ ի՝ հայերենի օրենքով, մի բաղաձայնից առաջ անփոփոխ մնում է. ինչպես՝ իժ, սեռ. իժի և ոչ թե ըժի:

Հայերենի նախդիրները իբրև նախամասնիկ այնպիսի անձուկ և սերտ կերպով միացած են բային, որ հաճախ անկախ բայը կորցրել է իր առանձին գոյությունը, այլևս գործածական չէ և միայն ստուգաբանական միջոցներով և համեմատական եղանակով կարելի է գտնել։ Այսպիսով հայերենի այս նախամասնիկները ամենևին նման չեն սանսկրիտի, հունարենի և մանավանդ գերմաներենի նախամասնիկներին, որոնք ուզած րոպեին կարող են բաժանվել և անկախ գործածվել. ինչպես՝ aussprechen և ich spreche aus «արտասանում եմ»։

Այսպես, օրինակ՝ հյ. ընդարմանամ և զարմանամ ծագում են արմ «ծառի բունը, փայտը» արմատից՝ ընդ և զ նախդիրներով.— բայց արմանամ և մանավանդ արմ քիչ են գործածական։ Զայրանամ կազմված է զ նախդիրով՝ այր արմատից, որից և այրել. բայց չկա բնավ այրանալ «այրվել, բորբոքվել»։—Զգենում բայը ծագում է *գենում «հագնվեմ» բայից՝ զ նախդիրով. իսկ այս *գենում բայը կարելի է հաստատել միայն հնխ. ves արմատով. հմմտ. հատկապես հն. ἕννυμαι (<fεσ-νυ-μαι) և արդի բարբառներից՝ Ղրբ.

կէճալ (<գենալ) ձևով։ Ավելի վատ են ամփոփեմ և սփոփեմ բառերը, որոնք ծագում են ամ և զ նախդիրներով. *փոփեմ բայից, որ բոլորովին անգործածական է և որի գոյությունը այլուստ ո՛չ մի կերպով կարելի չէ հաստատել։

Այնուամենայնիվ նախդիրի զգացումը կորած չի եղել հին հայոց մեջ և զանազան պարագաներում իրեն զգալ է տվել։ Օրինակ՝ թեև գենում կորել է, բայց զգենում բայի մեջ զ նախդիր լինելը զգացվել է միշտ, որովհետև ապառնին լինում է զ-գեց-ցիս (իբրև միավանկ) և ո՛չ զգեսցիս (իբր բազմավանկ)։

Լինում է դեպք, երբ միայն այսպիսի եղանակով կարելի է իմանալ նախդիրի գոյությունը։ Օրինակ՝ ընթեռնուլ բայի ապառնին լինում է ընթերցցիս (զույգ ցց և ոչ սց), ուստի ծագած պիտի լինի ընդ մասնիկով՝ թեռնուլ բայից։ Բայց այս թեռնուլ բայը ո՛չ մեր լեզվի մեջ ծանոթ էր և ո՛չ էլ այլուստ բացատրելի. մինչև որ երևան եկավ հնխ. ter «կանչել, բարձր ձայն հանել» արմատը, որով և նրա գոյությունը հաստատվեց (հմմտ. Արմ. բառ., Բ 1046 և Է 131)։

Երկու և ավելի նախդիր միևնույն բառի վրա կարող են դրվել և չդրվել։ Չեն դրվում, եթե մի հոլով ենք կազմում. օրինակ՝ պատմականը մի հոլով է, ուստի կարելի չէ երկու նախդիրով միասին ասել ի զնմանէ կամ զ՚ի նմանէ (ինչ որ պիտի լիներ հայցական-բացառական!)։ Դրվում են այն դեպքում, երբ տարբեր հոլովներ ենք կազմում կամ եթե նախդիրը այնպես սերտ կպած է բառին, որ այլևս մի ամբողջություն է կազմում։ Այսպես՝ ի յերկուանալոյ (Եզն. 114), ի զգենուլ, ի զգեստ, զցայգ և զցերեկ բառերն ունեն երկ-երկու նախդիր, որովհետև յերկուանալ, զգենուլ և զգեստ բառերի վրա յ և զ նախդիրները, ինչպես և այգ և երեկ բառերի վրա ց նախդիրը այնպես են միացած, որ ամբողջությամբ մի բառ են կազմում։

Առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ (Եզն. 14)։— Այստեղ երեք նախդիր՝ առ, ի, զ թվում են շարված մի բառի վրա. բայց այդպես չէ. զ նախդիրը պատկանում է խաւար բառին և ի նախդիրը պատկանում է փարատելոյ անորոշ դերբային. միայն առ նախդիրն է՝ որ կից է դրված ի նախդիրին։

Ավելորդ դրվում է նաև ի և յ նախդիրը իբր զարդ, ինչպես որ տեսանք վերևում։

Մանաւանդ խսկ և խսկ վասն առ ի ընդ շարսն չճաղորդելոյ. Ոսկ. Կողոս. 625։— Այստեղ էլ երեք նախդիր՝ առ, ի, ընդ թվում է թե հա-

վաքված են շարան բառի վրա, բայց իրոք շարան ունի միայն մի նախդիր (ընդ), իսկ առ ի նախորդի նման պատկանում է չնադոր-դելոյ բառին։

Քանի գնում ենք դեպի հինը, գտնում ենք, որ նախդիրները ավելի մեծ դեր են ունեցել հայերենում, և նույնիսկ բայերից ան-կախաբար գործ են ածվել անունների կազմության մեջ։ Այսպես ունենք, օրինակ՝

զգեստ (արմատը *գեստ<հնխ. vesti-)
զ-արդ (արմատը արդ<հնխ. art-)
ն-ետուկ (արմատը յետ՝ նի մասնիկով)

առաջինը անկախ է զգենուլ բայից, երկրորդը պահում է արմատը, մինչդեռ բայը՝ զարդ-ար-եմ ստացել է -ար մասնիկը, երրորդի համար կա յենում բայը, բայց չկա *նենում:

Գրաբարում հենց Ե դարից սկսվեց նախդիրների հապավումը. օրինակ՝ աղոթքների մեջ այնքան սովորական յաւիտեան, յաւի-տեանս, յաւիտենից, յաւիտեանս յաւիտենից ձևերի մեջ կորած է ի նախդիրը, ըստ որում պիտի լինեին ի յաւիտեան, ի յաւիտեանս, ի յաւիտենից, ի յաւիտեանս յաւիտենից: Նախդիրը զեղչված է նաև տուն ի տանէ, տանէ ի տուն, տարւոյ տարի, ամ յամէ, առաջոյ կողմանէ և այլն ասութեանց մէջ։

Իբրև ամփոփումն նախորդ ասածների, տալիս ենք այստեղ առ, ընդ, ըստ նախդիրների գործածության համառոտ պատկերը։

Առ հայցականով նշանակում է 1) դեպի մեկը (շարժում). 2) մի բանի մոտը, տեղ (դադարում). 3) համար, նկատմամբ, հա-մեմատությամբ. 4) համար, պատճառով. 5) կազմում է տրական։

Առ տրականով նշանակում է 1) մոտը, կողքին, քովը (դադա-րում).— նույնը նաև հոգնակի հայցական խնդրով։

Առ սեռականով նշանակում է «համար, պատճառով»։

Առ բացառականով նշանակում է 1) համար, պատճառով. 2) կողմից, քով, քովեն։

Առ գործիականով նշանակում է 1) մոտը, մոտով (քովը, քո-վերը), մի բանի երկարությամբ, 2) համեմատած, բաղդատմամբ. 3) ժամանակ, նրա օրով։

Առ նախդրիվ հայցականով նշանակում է «մի բանի համար, նպատակով»։

Ընդ նախդիրը հայցականով նշանակում է «մի բանի միջով, մի տեղի տարածությամբ»։

Ընդ հայցականով կրկնվելով նշանակում է «երկուսի միջև, միասին հաշված»։

Ընդ սեռականով նշանակում է «տեղը, փոխարեն»։

Ընդ եզակի տրականով և հոգնակի հայցականով նշանակում է «հետը, միասին».— երբեմն էլ կազմում է պարզապես տրական։

Ընդ բացառականով նշանակում է «տեղ»։

Ընդ գործիականով նշանակում է «տակը, ներքևը»։

Ըստ տրականով նշանակում «համեմատ, համաձայն»։

Ըստ հայցականով նշանակում է «մի տեղից անց, դուրս, այն կողմը»։

Ըստ բացառականով նշանակում է «կարգով շարունակելով, հետևելով»։

Միջին հայերենում նախդիրները սկսում են հետզհետե վերանալ գործածությունից. զ և ի նախդիրները հոլովման մեջ շարունակում են դեռ իրենց գոյությունը. այսպես՝ հայցականի մեջ զ, բացառականի մեջ ի (օրինակ՝ զհայրենիք, ի հայրենեաց), բայց մյուս նախդիրները, ընդհանրապես գրաբարի ազատ և սովորական գործածությունից զրկված, սահմանափակված են միայն մասնավոր դեպքերի համար։

Այստեղ խոսում ենք նախդիրների միջին հայերենում թողած հետքերի մասին՝ քաղելով Այտընյանի «Քննական քերականությունից», էջ 125—127, ավելացնելով նրանց վրա Karst-ի հիշատակած սակավաթիվ ձևերը (էջ 253—255)։

զ նախդիրը թեև գրաբարի պես դրվում էր հայցականի վրա, բայց հաճախ նաև ուղղականի, բացառականի և այլ հոլովների վրա. երբեմն էլ բոլորովին զեղչվում էր. օրինակ՝

Զայս Զամէնէս կարէս ճանաչել, որ աւելի Զամէնն:

Ըմպելիք Զոր օգտակար են, մեղրն և գինին, և այլ Զոր ինչ նման են այսոց:

Զպնչերն ի ներս սրբէ ծիթով (այսինքն՝ քթի ներսը. ինչ որ հիշեցնում է գրաբարի զգետն խոնարհ «գետից դեպի ներքև կամ նրա երկարությամբը»։

Տարաք Զհետ մեր (այսինքն՝ ի հետ «մեզ հետ»)։

ի նախդիրը բացի բացառականից, գործ է ածվում նաև զանազան նախադրությանց և մակբայների հետ, որոնցից ոմանք նաև իբրև ածական են գործածվում. այսպես են՝

ի յար *«շարունակ, անընդհատ, հար»,*

ի կից *«կողքին, կից, քովը, անընդհատ»*. ի յար և կից լինի, *որ և* յար է և կից

ի ժիր *«միշտ» (արգի գվռ.* ամէն ի ժիր)

ի լման և ի յերևան *«կատարյալ և հայտնի»*

յուշ *«ուշ»*

ի զատ *«հեռու, ջոկ, զատ». ինչպես՝* ի զատ պահել *«հեռու պահել»*, ի զատ կենալ *«մեկդի կենալ»*, ի զատ առ *«մեկդի առ»*

յերկար *«երկար ժամանակ»*. խիստ յերկար քաշէ

ի հետ *«հետ, միասին». ինչպես՝* ի հետ երթալ *(է դար). երբեմն էլ «հետևից» (իբր գրբ.* զհետ) *տե՛ս* յետ

ի հոն, ի հոս *«հոն, հոս, այնտեղ, այստեղ»*

ի թիւ *«թիվ՝ առանց երգի»*. ի թիւ ասել

ի լման *«ամբողջ, մինչև վերջը»*

ի լի *«լիքը»*. ի լի լնուլ *«ամբողջ լցնել»*. ի լի լինի *«ամբողջ կլցվի»*

ի զոյգ *(ռմկ. ի զուգ) «միասին, միատեղ»*

ի դրացէ *«դրսից»*, ի դուրք *«դուրս»*

ի զամէ, ի զամուց, ի զամաց *«կամաց»*

յանգամ *«հանդարտությամբ». օրինակ՝* ի զամէ և յանգամ

ի ներքև *«տակը»*. ի ներքև մեր հրամանացս

ի յանօթից, ի յանօթուց *«անոթի՝ փորանց, անոթուց»*

ի կշտելեց, ի կշտելեաց *«կուշտ ժամանակ»*

ի յետև *«ետքը, հետո»*

ի քիթն ի վայր *«քթեն վար, քթից ներքև»*

ի ներք *«ներս»*

Սրանցից մեծ մասի մեջ ի *նախդիրը համապատասխան է գրաբարին. բայց երբեմն էլ ավելորդ և անճահ է լինում. ինչպես՝*

Ի կարիք լինի *«պետք լինի, կարիք լինի»*

ի բերանն Ի մօտ լինի

ի յինքն Ի նման լինի

Ի յառաջ քան զայս

Դարձաւ Ի յետ

Նմանեցուցին Ի բաղանիսն *(բաղնիսի նմանեցրին)*

Դիր Ի աման

Ջէաք Յիմացեր

Մահօրն Ի մօտ է *(մահվան օրը մոտ է)*

Ի շուրջ գալ

Այսօր նշաննին այլ ի բաց են և այլ ի յերևան *(սրա նշանները ավելի բաց են և ավելի հայտնի)*։

Ց *նախդիրը գրաբարից բոլորովին տարբեր գործածություն ունի. ինչպես՝*

ցներքս *«ներսը, ներսից»*
ցներքսև, ցներքև *«մեջը, ներսը»*
ցներքսէ *«ներսից, միջից»*. Ցներքսէ երակացն լինի
ցդրուց *«դրսի կողմը, դրսի կողմից»*. Ցդրուց մարմնոյն
ցդրուցէ *«դրսից»*
Մինչև ցմիջաւուրք *«մինչև կեսօրվա մոտերը»*
Յորքան աւուրք *«քանի օր որ տևե»*

Առ *նախդիրը վաղուց սկսել էր վերանալ. Է դարում* առ *նախդիրի փոխարեն արդեն գործ էին ածում տրական հոլով. այսպես՝*

Ի՛նձ մատիր *փխ.* Առ իս մատիր
Մատեան միմեանց
Հասաք զօրացն

Նրևի ԺԱ դարից արդեն իսպառ անհետացել էր. այնպես որ ԺԴ դարի սկզբին ասվում էր՝

Գնաց ի քոյրն՛ իւր ի տես *(փխ.* առ):

Ընդ *նախդիրը կորցրած է նույնպես իր սովորական գործածությունը զանազան հոլովներով և պահված է միայն* ի *նախդիրի փոխարեն զանազան դարձվածների մեջ, որոնցից ոմանք գրաբարին համապատասխան ձևեր են, ոմանք էլ նոր. այսպես՝*

Ընդ այն տեղւոյն ի վեր *(է դար) «այն տեղից վերև»*
Ընդ առաջքն, ընդ յառաջքն, ընդ առաջսն *«առաջները, սկզբներում»*
Ընդ երեկածքն, դէպ ընդ երեկածքն *«երեկոյան դեմ»*
Ընդ Ջանուն և ընդ Գենոնի մէջ
Ընդ բազումքն (բոյլք) և ընդ լուսնին մէջ
Ի կապանէն ընդ մէկայլ կապանն ի մեջ. Ի միջավայր ընդ երկուան
Ի Լևոն թագաւորէն ընդ այս *(Լևոն Թագավորից մինչև այժմ)*
Ընդ երկու ցեղ բաժանին *(երկու տեսակի են բաժանվում)*
Կանթեղ մի պլոր (բիւրեղ) ընդ բիւր մի ոսկի դեկանի *(մի բյուր ոսկի դահեկանանոց բյուրեղյա մի կանթեղ)*

Ընդ ներfոյ *«տակից»*
Ընդ դրուց մարմնոյն *«մարմնի դրսի կողմից»*
Կախեալ էր ընդ փողից և ընդ ճանկ երկաթի *(փխ. գփո-ղից)*
Ընդ պարիսպն ի վայր
Ընդ տակfն ի վեր *«արմատից վերև»*
Ընդ երեf ճաղ *«երեք անգամից»*
Ընդ տասնևչորս օր անցնի *«տասնչորս օրից որ անցնի»*
Ընդ fուն լինելն զքաղի *«թող քնով անցնի»*
Ընդ ցերեկոյ *«ցերեկով»*
Ընդ ներfս *«ներսը, մեջը»*, ընդ ներfսէ, ընդ նեfսէ
Ասէր ընդ ամէնն *«ասում էր բոլորին»*։
Զկարեմf ասել ընդ իւր դստերն թէ ե՛լ ի բերդէս
Ընդ դրացէ, ընդ դրուցէ *«դրսից»*

Շատ հետաքրքիր է նախդիրների ճակատագիրը բարբառնե-րի մեջ։ Երեք բարբառ, իրարից չափազանց հեռու, առաջինը բուն Հայաստանի հողի վրա (Մշո բարբառ), երկրորդը Կիլիկիայի մոտ, բայց օտար հողի վրա (Սուրիայի բարբառ), իսկ երրորդը Եվրոպա-յում (Սուչավայի և Հունգարիայի խոսվածքները) հայցականում կանոնավոր կերպով պահում են գրաբարի զ նախդիրը. օրինակ՝

Մշոյ բարբառ.— Ըզճաց *«հացը»*. Ըզմըր տուն *«մեր տունը»*. իմալ Զfո մատաղ fաշիր բ՛երիր, Զմըկէլ լէ կը fաշես բ՛երես. Առաւ Զտղէն ու մտան կոfատուն. Մենf Զfո կոfի զօրութեն չընf գինե. Առեց Զգուրզն ու ինգավ մէջ կոfերուն, Զըմէն լէ ջարդեց. ու առավ Զարծըթներ լցեց ուր փէշ:

Սուրիո բարբառ.— Զմիր ճո՛ւցա ի ամէն շո՛ւf դաւղա մի՛ ըսgor *(Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր)*. Ու դղշէ Զմիր բուրfա *(Եւ թող մեզ զպարտիս մեր)*. Ու չը սալմէս Ըզմի ի փուրցունfա *(Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն)*. Լաfին ճաշշի Ըզմի ի չուրfէյն *(Այլ փրկեա զմեզ ի չարէ)*. Յա Աստուծ, Զիմ բռունգունգա բ՛ուց *(Ով Աստված, իմ շրթունքը բաց)*. Զիմ գլուխա բ՛անցրացնողա դ՛ուն իս *(Իմ գլուխը բարձրացնողը դու ես)*. Սատկեցո՛ Զիմ չարգումա *(Սատ-կեցրո՛ւ իմ չարկամը)*։ Շատերա ասեցայն Զիմ զունձայն *«Շատերն ասացին իմ անձի մասին» (պատմական հոլով)*։

Սուչավայի բարբառ.— Կուզէ ճամ Ըզճարսը բերէ. Զիյտիմ Ըզվօ՞ խրկիմ *(Զգիտեմ զո՞վ ուղարկեմ)*. Խրկէ Ըզվերի *(ռում.* ver *հորեղբորորդի)* Գ՛ոգօրը. Զինfը կխնդրիմ. Պէտf է խնդրինf Զfա-ճանճան. Հաfի՛գը Ըզիքըրցի՛րը *(գերմ.* überzieher *վերարկու)*։

Հունգարիայի բարբառ.— Ըձձերը մի՛ թողուf, Ըձօզկայինը *(ուրիշինը)* մի՛ կամենաf. Ցեցառ մարդը ըլլա ու դիմաց Ըձսըր-տերդ բանաf. Սիրեցէf զԱստուած, բռնեցէf Ըձիրեն պատվիրանf-ները. Պահեցէf Ըձիմ անունը ու յիշատակը. Ճորով քաղիլ ին Ըձմե-ռածը. Վարիլ է *(վռնդել է)* տանէն Ըձպիզտիկը. Աղfատ աղբարը կառնու ըզաշխարհը ափը:

Խախուտ գիրքի մեջ է Տիգրանակերտի բարբառը, որ կարող է դնել հայցականի վրա զ նախդիրը կամ հապավել. ինչպես՝ Զfու ցա՞նկն իմ կոտրի, fու էզի՞ն իմ մտի. Գլուխսի դնեմ բարձին, ճո-գիս իտամ Աստըծուն.— *Դերանուններից մեջ* զմի *«զմեզ»,* զfի *«զքեզ» ունեն զ նախդիրը, մյուսները չունեն։*

Երկու ուրիշ բարբառներ հայցականի զ նախդիրը պահում են կանոնավորապես՝ միայն դերանուններից մեջ։ Այսպես են Ոզմիի և Զեյթունի բարբառները. օրինակ՝

Ոզմ.—ըզձը *«զիս»,* զմի *«զմեզ»,* ըզքյի *«զքեզ»,* ըզձյի *«զձեզ»*

Զթ.—ձսձզ *«զիս»,* ձզքիզ *«զքեզ»,* զը̈ն *«զայն»,* ձզմիզ *«զմեզ»* ձզձյիզ *«զձեզ»,* զենիյ *«զնոսա, զանոնք»,* զի՞ւվ *«զո՞վ».*

Մյուս բարբառներում վերացված է զ նախդիրի գործածությունը. կան միայն աննշան հետքեր այս ու այն մասնավոր դեպքերում. ինչպես՝ Վանա բարբառով՝ ուղղական հոլով՝ զինfյ *«ինքը», Համշենի բարբառով՝* զըն *«զայն, զնա»,* զէնիր *«զնոսա, զանոնք», Պլ.* մէկըզմէկ *«իրար»,* ինfզինfը *«ինքն զինքն»,* տեղնըզտեղօf *«մանրամասն, տեղը լավ որոշած»,* նօփըզնոր *«շատ նոր»,* խա-չանըստա ընել *(ըստ Թեոդիկի) «բամբասել» (իմա՛* ի խաչ ճան գդա), անունը սանունը *(իմա՛* անունը զանունը), *Ղրբ.* զիրաւ տալ *«վրան փաթաթել», Ջղ.* դաբզարակու, դամզարակու *«դէպ զերեկոյ, իրիկնադէմին», Պրտ.* փողնըզփողը *«գողունի կերպով»։*

Այս դեպքում գտնում ենք նաև զարմանալի կերպով՝ ուղղականի վրա դրված զ նախդիրը, ինչ որ հայցական ձևի ընդհանրացմամբ է. ինչպես՝ Վն. զինfյ *«ինքը», Մրղ.* զըմմըʻն *«ամենքը» (սեռ.* զըմմըʻնը՛, *բցռ.* զըմմըʻնէն), զինfʻտ *«ինքը»,* զինfʻիրտ *«իրենք». կամ նաև* ումի՞ն է. զիմն է *«ո՞ւմն է. իմն է» (Այտն. 126)։ Պոլսի բարբառով էլ* մէկըզմէկ *թեև հայցական է, բայց նաև ուղղական է, և հոլովվում է սեռ.* մէկըզմէկու, *բցռ.* մէկըզմէկէ, *գրծ.* մէկըզմէկով: *Սուչավայի բարբառով ասվում է բոլոր բանը* զիմ *գլխուս վրա է (Բարբ., էջ 274)։*

ի *նախդիրը զ-ից շատ ավելի սահմանափակ գործածություն ունի։ Հոլովական գիտակցությունը քիչ թե շատ պահվում է դեռ Մշո*

բարբառում և Սուրիո բարբառում։ Առաջինում ունենք նախդրիվ հայցականի համար ի=յ ձևերը. ինչպես՝ Ջուր օրիկն ի մաճուն «մինչև մահվան օրը», Կէրթամ-յարտ «արտ եմ գնում»։— Սուրիո բարբառում էլ բացառականի և ներգոյականի համար ունենք ի նախդիրը. ինչպես՝ ի գիտեյնֆա «ի գետին», ի փուրցունֆա «ի փորձանաց, փորձանքից», ի չուրֆէյն «ի չարէն, չարիքից»։ Այսպես է նաև Սուեդիայի բարբառում, ուր նախդրիվ հայցականի համար ունենք ի նախդիրը. ինչպես՝ Ի տօն արի «Տուն արի», Ի տօն գնօ «Տուն գնա», Ի տօն պըր ուրթում «Տուն պիտի երթամ»։

Մյուս բարբառներում ի իբրև նախդիր ջնջված է և կարելի է միայն գտնել մի քանի քարացած ձևերում. ինչպես՝

Պլ. Մութն ի լուսուն «լուսադեմին, երբ մութն ի լուսույն բաժանվում է»։

Պլ. Մրսի վրադ (մուրս ի վրադ. նախատական խոսք, որի իմաստը չեն գիտակցում)։

Պլ. Վախնիվախը (վախենալով), փոխնիփոխ, վերէն ի վար, գողնիգողը, մէկէնիմէկ «հանկարծ», տեղնիտեղօֆ, լեռն ի վեր, երեսս ի վար, ականջն ի վար, փորսիվար (հոգս չէ), երեսն ի վար, պատն ի վեր, ծառն ի վեր:

Ալշ. Սարն ի վեր, Դէմ ի տուն

Ղրբ. փրսըվէր «բերանս ի վայր», կըլխըվէր «գլխիվայր», կըլխըյէր «գլխիվեր», պրտըտիս «բուրդ ի դուրս» (այն է՝ շրջված ձևով)։

Զթ. իտուն «նորահարսի առաջին այցելությունը դեպի ծնողների տունը»։

Պրտ. Գիշերս ը բուն «ամբողջ գիշերս», Աս օրս ը բուն «Այսօրս ի բուն, ամբողջ օրս»։

Դ ի տ ո ղ ո ւ թ յ ո ւ ն.— Թե ինչո՞ւ ի նախդիրը այսչափ կրճատված է, իսկ զ նախդիրը շատ ավելի սովորական է՝ կարելի էր թերևս բացատրել նրանով, որ անշեշտ ի ձայնավորը ավելի ենթակա է սղման, քան որևէ բաղաձայն։ Այս հանգամանքը կարող է դեր խաղացած լինել, բայց այնուամենայնիվ միայն այդ չէ անկման պատճառը, այլ նախդիրների ընդհանուր ճակատագիրը։

ց նախդիրը բոլորովին ջնջված է և կա միայն ցերեկ բառը իր զանազան ձևերով (ցօրէկ, ցէօրէկ, ցիրեկ, ցերիկ, ցըրիկ):

Ես կարծում եմ սակայն, որ ց նախդիրը պահված է մի ուրիշ խումբ բառերի մեջ, որոնք հատուկ են զանազան բարբառների (մա-

նավանդ կը ճյուղի), որոնցից էլ անցել են գրական լեզվին։ Այս բառերն են՝

ճօսկէց, ճօդկէց, ճօնկէց «այստեղից, այդտեղից, այնտեղից»
ասկէց, ադկէց, անկէց «սրանից, դրանից, նրանից»
սկէց, դկէց, նկէց } նախորդների հետ նույն
սվկէց, դվկէց, նվկէց }
վօ՞ւրգէց, օ՞ւսկէց «ո՞րտեղից»

Սրանք ըստ երևույթին բացառական են, բայց չեն ծագում ում ճյուղի բարբառների բացառականի -ից ձևից, այլ առաջանում են ց նախդիրից։ Նախապես ասել են ճօսկէ ցճօն, ասկէ ցճօն, ուսկէ՞ ցուր, ճօսկէ ցտուն և այլն, հետո ց միանալով նախորդ բառին, ենթադրվել է էց մասնիկը։ Այս նույն երևույթը տեսնում ենք հատկապես օրէց օր, տարէց տարի ձևերի մեջ, որոնք նույնպես նշանակում են և են բուն օրէ ցօր, տարէ ցտարի։

Առ նախդիրը պահված է միայն Ղարաբաղի (նաև Ղաղախի) և Մեղրու բարբառում՝ տարօրինակ ձևերով, այն է. առիս «մոտս», առիտ «մոտդ», առին «մոտը» (քովս, քովդ, քովը)։ Սրանցից առաջինը գրաբարի առ իս ձևն է, ուր նախդիր և դերանուն միանալով մի բառ են կազմել, իբր թե ուղղականը լիներ առի՝ վրան ավելացած ս դիմորոշ հոդը։ Այսպես ըմբռնվելուց հետո, կազմվել են մյուս ձևերը՝ առիտ, առին, հոգ. առընէրս, առընէրդ, առընէրը «մեզ մոտ, ձեզ մոտ, նրանց մոտ» (Պլ. քովերնիս, քովերնիդ, քովերնին)։

Առ նախդիրը իբրև մասնիկ պահված է նաև մի խումբ գավառական բառերի մեջ, ինչպես՝ առատամ, առափ, առկող, առնկող, առնստիկ, առաւել և այլն, որոնց ոչ մեկի մեջ ժողովուրդը չի գիտակցում մասնիկը։ Սրա գեղեցիկ ապացույցը տալիս է առաւել բառը, որ ժողովրդական լեզվով նշանակում է 1. «արտի ծայրին անվար մնացած մասը», 2. «գութանի երգ»։ Բառիս վկայությունը տալիս է Տաթև. ամ. 360. «Ջառաւելս որ գլուխն է արտին, մի՛ հնձիր, այլ աղքատին թող»։ Սրանից երևում է, որ բառիս ճիշտ ձևն է առաւել. բայց բարբառներում նա դարձել է ռաւել, ռաւալ, ռնել, ռօվուլ, ճօռօվել, ճռօվօւլ, ճլօվուր, ճառալօ, ճօռօլօ, ճելել, մինչև անգամ փոխառությամբ դարձել է վրաց. ճօրօվելօ, որոնց մեջ առ նախդիրի պատկերը իսպառ անհետացել է։

Ընդ նախդիրի անկախ գործածության համար Աւետ. ըստ Մարկոսի (Զեյթունի գւռ. Պոլիս 1913), գլ. ժԵ 4 և ժԶ 7 տալիս է երկու օրինակ. ինդ իրիսիդ «քու դէմդ, քո առաջ», էնդ ձիգ էռաշ «յառաջագոյն քան զձեզ»։

Մնացյալ բոլոր բարբառների մեջ էլ անկախ գործածությունը կորցրել է. բայց ծածկված մնում է մի խումբ բառերի մեջ, այն է՝ ընդօր, ինդօր տեղ-տեղ նաև ընդըր, ընդըր օր, Ակն. ինդէօր («ինչպես» այս իմաստով գործածական է այժմ Արբ., Ատ, Զմ., Խրբ., Հնգ., Չրս., Պլ.)։— Բուն նշանակում էր «ո՞ր տեղով, ո՞ւսկից». իմաստի զարգացման համար հմմտ. Ոսկ. Յհ. Ա 2, էջ 32. Զարմանա՞մ ուստի ընդ որ եկեալ ի նոյն բանս թաւալեալ գտանիմ: Ըստ Այտն. 127, այժմ էլ գործածական է գվռ. «ո՞ր ճամբով» նշանակությամբ. ինչպես՝ Ընտո՞ր կ'երթաս Մարաշ:

Ինգան (Հնգ.), ինդան (Զթ., Կս., Մրշ.) «այնպէս» (<ընդ այն)

Ինդաս (Հնգ.), ինդաս (Զթ., Կս, Մրշ.) «այսպէս» (ընդ այս)

Ինդէդ (Կս.) «դրանց պես» (<ընդ այդ)

Ինդիյօզ (Զթ., Մրշ.) «երազի մեջ» (<ընդ երազ)

Ինդիրգոց (Զթ., Մրշ.) «երեկոյան դեմ» (<միջ. հյ. «ընդ իրիկացքն», ըստ Նորայր, Բառ. ֆրանս. 1149բ)։

Ընդալ խօսըլ (Զթ.) «զառանցել» (<ընդ այլ խօսել). հմմտ. Թլկր. 30 Խև Յովհաննէս Թուլկուրանցի, զօրն ի բուն ընդ այլ կասես: Ավելի հավատարիմ ձև է Ակն. ընդալը խօսիլ, և մեկ բառով՝ Արբ. անդլել (<ընդայլել)։

Այս բոլորի մեջ ընդ նախդիրը կորցնելով իր ռնգային մասը, կարող է մնալ պարզապես դ. այսպես են Ջղ. դօր «ինչպես» (<ընդօր), Վն. դո՞ր «ո՞ւր», Մրղ. դո՞ւ ր «ո՞ւր», Ջղ. դո՞րն և Նախաձայնը ռ-ի պատճառով թավանալով՝ Ղրբ. թօռն «ո՞ւր», դէն «այնտեղ» (ինդան «անդին, ընդ այն» ձևը գիտե Դրնղ. 182), դէս «այստեղ», դէդ «այդտեղ» (ծագում են հնագույն ընդ այն, ընդ այս, ընդ այդ ձևերից (տե՛ս Այտն., Ներած., 215)։

Նույն ընդ նախդիրով են կազմված նաև Ղրբ. դի՛ւրիւր տալ «շարժել», դի՛ւրիւր կ․ալ «երերալ», Շմ. դիւրին տալ «շարժել», դիւրիւն կ․ալ, Ջղ. դիրուր տալ, դիրուր գալ, Գնձ. տուրուր կալ, Մրղ. տիրար տալ, իրար տալ, որոնք, ինչպես վերջին ձևը հայտնի կերպով ցույց է տալիս, առաջանում են ընդ իրեար տալ, ընդ իրեար գալ դարձվածներից։

Ըն– նախավանկի այս կորուստը գտնում ենք նաև ընկեր>Սչ. գեր, ընկոյզ>Ալշ.գուզ, Մկ. գ․իւզ, Վն. գիզ բառերի մեջ ևս, ինչ-

պես նաև անկողին>ընկողին> *Կր.* գօղինf, *Ախց.* գօ՛ղինf, *Տփ.* գօղէնf, *Վն.* գ՚օղվանf՚ *բառերի մեջ։*

Այտն. 127 իրավամբ տեսնում է սրանց մեջ ստորին դարերի տաղաչափների ծանոթ կրճատումը, ինչպես օրինակ՝ 'դ որում *«ընդ որում», '*դ այս *«ընդ այս», '*դ առաջ *«ընդ առաջ» և այլն։*

Ըստ *նախդիրը ո՛չ մի հետք չի թողած ինչպես միջին հայերենում, նույնպես և բարբառներում։*

Նոր Ջուղայի բարբառում գործածվում է ֆի *«ի գին, յուրաքանչյուրն արժելով» նշանակությամբ նախդիրը, իբր ռուս.* по, *գերմ.* e, *օրինակ՝* Ծախեցի ֆի 2 ղռան *«վաճառեցի հատը 2 ղռանով»։— Ծագում է արաբ.* فی fi *ներգոյականի մասնիկից (=մեջ), որ և պարսկերենում ստացել է այդ նշանակությունը։*

Միջին հայերենի վերջին շրջանում նախդիրները հաճախ բոլորովին ջնջվում էին. օրինակ՝ իրավի, վաղուց նեռէ, ներfռէ, ներfոյ տանն, ձի՛ նեծիր, պատերազմ ելան, սկիզբն *(իմա՛ ի սկզբան)։ Այս երևույթը կատարելության հասցրեց աշխարհաբարը, որ ընդհանրապես ջնջեց բոլոր նախդիրները։ Սրանով այն բոլոր հոլովները, որոնք գրաբարում կազմվում էին նախդիրով, աշխարհաբարում պահում են վերջահոլով ձևը՝ առանց նախդիրի։ Այսպիսով, հայցականը՝ թեկուզ որոշյալ, նույնանում է ուղղականի հետ, նախդրիվ հայցականը դառնում է պարզ անորոշ հայցական, կամ որ նույն է՝ ուղղական, ներգոյականը նույնանում է տրականի կամ նաև ուղղականի հետ, և միայն բացառականն է, որ իր վերջավորության պատճառով պահում է առանձին ձև. օրինակ՝*

գրաբար	աշխարհաբար
հալածել զթշնամին	*թշնամին հալածել*
գալ ի տուն, երթալ յանապատ	*տուն գալ, անապատ երթալ*
դարձաւ յանապատէ	*անապատէն դարձաւ*
բնակիլ յԵրուսաղէմ	*Երուսաղէմ բնակիլ*
լինել ի քուն	*քուն ըլլալ*
ելանել ի դուրս	*դուրս ելնել*
գիտեմ ես զքեզ	*գիտեմ ես քեզ*
մնալ ի ճանապարհին	*ճանապարհին մնալ*
*ընդ գետին մտանել**	*գետին մտնել*

* *Այս և հաջորդ մի քանի օրինակների մասին խոսում է Ցնտքլյան, «Մասիս», 1892, սեպտեմբեր 19։*

ընդ երեսս թքանել	*երեսը թքնել*
ի գլուխ հանել	*գլուխ հանել*
առ ժամանակ մի	*ժամանակ մը*
հայեա՛ց յիս	*ի՛ս նայէ (Պլ.)*
անց ընդ գետն	*անցաւ գետը*

Հետագրքրական մնացորդ է ներգոյականի ձևը՝ ի շաբաթու>*շաբթու (ինչ.* անցած շաբթու, *եկող շաբթու),* յողջութեան>*ող-ջությանը և այլն։*

Եթե աշխարհաբարի մեջ այս հոլովները առնենք ըստ իրենց ձևի, կհասնենք բացարձակ անտրամաբանության. տուն *բառը թե՛ ուղղական է, թե՛ հայցական, թե՛ նախդրիվ հայցական և թե՛ ներգոյական. օրինակ՝* տունը քանդվեց *(ուղ.),* տունը նորոգեց *(հյց.),* տուն գնաց *(նխ. հյց.),* տունը նստեր է *(ներգ.)։*

Նախդիրների անկման այսպիսի երևույթ գտնում ենք նաև արդի պարսկերենում։

Գրական պարսկերենում նախդրիվ հայցականը կազմվում է be *նախդիրով և ներգոյականը* der *«մեջ» նախդիրով։ Սակայն ժողովրդական լեզվի մեջ այս երկուսը հաճախ ջնջվելով՝ մնում է լոկ ուղղականը (ինչպես հայերենում). օրինակ՝*

գրակ.	be xāne reftem	*ի տուն գնացի*
ժող.	xāne reftem	*տուն գնացի*
գրակ.	der xāne budem	*ի տան էի*
ժող.	xāne budem	*տունն էի*

Պարսկերենում այս բանը սովորական է հատկապես՝ ժամանակ ցույց տվող բառերի համար. ինչպես՝

şab āmadam	*գիշերը եկա*
tābistan biyā	*ամառը արի՛*

Այսպես է նաև քրդերենում. օրինակ՝

hāt a māli, dirāf da bi žinka, čū bi čīan.

Եկավ ի տուն, դրամ տվեց ց կին, գնաց ի լեռներ։

Այս խոսքի մեջ կարելի է ջնջել a *«ի»,* bi *«ց» և* bi *«դեպի» նախդիրները և ասել պարզապես, առանց նախդիրների՝*

hāt māl, diraf da žinka, čū čian.

Երկու ձևերն էլ ուղիղ են և սովորական (Soane, *103)։*

Աբխազերենում էլ ներգոյականը մնում է ուղղականի ձևով՝ առանց վերջավորության, ուրեմն որևէ նշանից զուրկ. ինչպես՝

abna sara ams[u] zbit
անտառ ես արջ ես տեսա
«անտառում մի արջ տեսա»։

(Dirr. Einf. 42)

Կորցնելով նախդիրները, որոնցով այնպես առատ ու բազմազան էր գրաբարը, աշխարհաբարը դարձավ պարզ, միապաղաղ, չոր ու ցամաք մի լեզու, հեռու հին լեզուներից և զուրկ արդի եվրոպական լեզուների ճկունությունից, նման ալթայական լեզուներին, որոնց մեջ կան շատ նախադրություններ, բայց նախդիր չկա։ Նա մասամբ մոտեցավ չինարենին, ուր հոլովում չկա և բոլոր հոլովները ուղղական են։ Արդի աշխարհաբարում էլ 4 հոլով ուղղականի ձև ունի։

Այտընյան, Բ 18, այսպիսի հոլովները կոչում է աննախդիր հոլով *և զանազանում է՝*

Աննախդիր հայցական.— Սա գիրքը *կարդա՛. Սամփսոնի* աչվըները *փորեցին։*

Աննախդիր տրական.— Բռնաւորի ձեռք *ինկայ. Մեր* վրանը *հրաւիրեցինք.* Փարիզ *հասանք։*

Աննախդիր ներգոյական (ուղղականի ձևով).— Յունաստան *մնաց. Դուք* սա տեղը *նստեցէք։*

Աննախդիր ներգոյական (տրականի ձևով).— Ատենին *չհասաւ.* Տղայութեանս *դժուարաւ կսորվէի։*

Աննախդիր բացառական (տրականի ձևով).— Շփոթելուն՝ *լեզուն կապուեցաւ.* Գրոց *խօսիլ։*

Սրանցից առաջինը մեր սովորական հայցականն է, ուստի աննախդիր *կոչումը ավելորդ է, ճիշտ ինչպես որ բացառականն էլ, թեև աննախդիր, չի կրում սակայն այս անունը։ «Աննախնդիր տրականը» կոչվել է տրական, որովհետև թուրքերենի մեջ արտահայտվում է տրականով. այսպես՝ վերի օրինակներում* ձեռք*=թրք. էլինէ,* վրանը*=թրք. չատըրա։ Բայց էապես նա տրական չէ, և աննախդիր տրական կոչումը ավելի է դժվարացնում գործը։ Ըստ իս պետք է պահել* նախդրիվ հայցական *անունը, ինչպես է գրաբարի մեջ։ Անհարմար եմ գտնում նաև «աննախդիր ներգոյական՝ ուղղականի ձևով» և «աննախդիր ներգոյական՝ տրականի ձևով» հորջորջումները, որոնք շատ երկար են. բավական է կոչել պարզապես ըստ իրենց ձևի առաջինը նախդրիվ հայցական, երկրորդը՝ տրական։*

Գալով աննախդիր բացառականին, սա ավելի հարմար է դասել մակբայների շարքը։

Ինչպես բարբառներում, նույնպես և գրական լեզվում նախդիրները պահված են միայն որոշ դարձվածներում. ինչպես՝

Ի նախդիրով

Երեսն ի վեր կը պոռայ	*գետն ի վար*
վերէն ի վար	*գառիվայր*
ձմեռն ի բուն	*գառիվեր*
ցերեկն ի բուն	*գլխիվայր*
գիշերն ի բուն	*գլխիվեր*
*օրն ի բուն**	*հև ի հև*
լեռն ի վեր	*վազն ի վազ*
սարն ի վեր	*մէկէն ի մէկ*
բարձր ի գլուխ	*անկէ ի վեր*
խառն ի խուռն	*շաբաթէ մը ի վեր*
բարդ ի բարդ	*պզտիկուց ի վեր*
բերանն ի վար	*մանկութենէ ի վեր*
ականջն ի վար	*բացէ ի բաց*

Դիտողություն 1.— Այս բոլոր բառերը, ինչպես տեսնում ենք, ուղղական հոլովի ձևն ունեն. բայց իրոք հայցական (նախդրիվ) են, որովհետև ներկայացնում են գրաբարի ընդ երեսն ի վեր, ընդ բերանն ի վայր *և այլն ձևերը, որոնց մեջ ընդ ջնջված է։*

Դիտողություն 2.— Այս հայցականները միշտ հոդ են ստանում. ինչպես՝ երեսն ի վեր, երեսդ ի վեր, երեսս ի վեր *և այլն։*

Դիտողություն 3.— Բացի, դէպի *ձևերի վրա տե՛ս նախադրության բաժնում։*

Առ նախդիրով

բառ առ բառ	*շիթ առ շիթ*
գիւղ առ գիւղ	*կաթիլ առ կաթիլ*
դէմ առ դէմ	*վայրկեան առ վայրկեան*
երես առ երես	*տառ առ տառ*
ժամ առ ժամ	*վանկ առ վանկ*

* *Այտն. 121 հիշում է նաև* օրն ի գլուխ, ձմեռն ի գլուխ, գիշերն ի գլուխ. *բայց նման ձևեր արդի լեզուն չգիտե։ Իսկ* գլխէ ի գլուխ *այժմ անգործածական է և ասվում է առանց նախդիրի* գլխե գլուխ:

ժամանակ առ ժամանակ	տուն առ տուն
խիտ առ խիտ	տող առ տող
կէտ առ կէտ	րոպէ առ րոպէ
կաթիլ առ կաթիլ	քայլ առ քայլ
կոպէկ առ կոպէկ	փոքր առ փոքր
մաս առ մաս	առհասարակ
մի առ մի	առնուազն
մէկ առ մէկ	առ առաւելն
էջ առ էջ	առ ժամանակ
	մի առժամանակ

Այտն. 121 առ նախդիրի գործածության համար տալիս է նաև հետևյալ օրինակները, բոլորն էլ իբր տրական, երթալու կամ ուղարկելու իմաստով.

Դեսպաններուն առ թագաւորն եկած իրիկունը
Ժողովքին առ փիլիպպոս [գրած] թղթերը
Առ Աստուած դիմել
Պօղոսի առ Հռովմայեցիս թուղթը

Այս բոլորը ջնջված են արդի լեզվից. վերջինը կարելի է պահել դեռ իբրև գրքի անուն։

Արևմտահայերը գործածում էին իբրև հասցե՝
Առ մեծապատիւ Ա. Ա.

Բայց այժմ այդ ձևն էլ վերացված է և ասվում է առանց առ նախդիրի։

ԸՆԴ նախդիրով	ԸՍՏ նախդիրով
ակն ընդական	օր ըստ օրէ
տող ընդ մէջ	ըստ արժանւոյն
որոտընդոստ	ըստ օրինի
ընդհակառակը	ըստ որում
խոչընդոտ	ըստ մեծի մասին
ուսընդանութ	ըստ այսմ
մերթ ընդ մերթ	ըստ այդմ
օր ընդ մէջ	ըստ այնմ
հակընդդէմ	ինքն ըստ ինքեան
անընդհատ	մի ըստ միոջէ

Նախդիրների կորուստը զգալի եղավ մանավանդ արևմտյան քան թե արևելյան գրականում։ Արևելյան գրականը ստեղծելով

ներգոյականի –ում ձևը՝ ազատորեն գործ է ածում ուր պետք է և ուր երկյուղ կա շփոթելու ուղղականի հետ։ Արևմտյան գրականը ստիպված է միշտ նման դեպքերում գործածել մէջ նախադրությունը։ Բայց արևելյան գրականը ստեղծել է նաև տրական․ հոլով սեռի խնդիր՝ փոխանակ հայցականի, որով ուղղականի և հայցականի շփոթությունից զերծ է մնում։ Մինչդեռ արևմտյան գրականը, չունենալով այս միջոցը, ստիպված է կա՛մ մնալ շփոթության մեջ և կա՛մ ծայրահեղ դեպքում գործածել զ նախդիրը․ օրինակ՝

Մեր բանակը զթշնամին ցրուեց
Զանի իր քով կանչեց
Ոչ ձեռք տնկեց զանի, ձեռք բարեկամի կամ սիրուհւոյ (Օտյան)
Թոյլ տուր որ միշտ զնէ երազեմ (Դուրյան)
Փրցուց քաղեց զանոնք սրտէս (Դուրյան) և այլն։

Բ. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերը խոսեցինք նախդիրի, նախադրության և մակբայի տարբերության մասին։

Նախադրություն բառը ծագում է թարգմանաբար հն. πρόθεσις բառից, որ նշանակում է «առաջ դնել»։ Նույնը լատիներեն դարձել է praepositio և ֆր. préposition: Այս մասն բանին ստացել է այս անունը, որովհետև հունարեն քերականության մեջ ընդհանրապես գոյականից առաջ է դրվում։

Բայց գոյականից առաջ դրվելը ո՛չ այդ մասն բանիի էական հատկությունն է և ոչ էլ իրոք ամեն նախադրություն գոյականից առաջ է դրվում անհրաժեշտաբար։ Կան լեզուներ, որոնց մեջ նախադրությունները պարտադիր կարգով գոյականից հետո են դրվում։ Այսպես են հունգարերենը, ֆիններենը, թուրքերենը և ընդհանրապես ուգրո-ֆիննական և ալթայական լեզուները։ Նկատի առնելով այս հանգամանքը, լեզվաբանները այդ լեզուների համար ստեղծել են հետադրություն բառը։

Դրավիդյան բրահուի լեզուն ունի թե՛ նախադրություն և թե՛ հետադրություն (Bray, 203)։

Բայց նույնիսկ կան հնդեվրոպական լեզուներ, որոնց մեջ նախադրությունները հետադաս են լինում, ինչպես, օրինակ, հինդուստանի լեզվում, որ հնդկերենի զավակն է։ Շվեդերենում նախադրու-

թյունները թեև գոյականից առաջ են դրվում, բայց կան մի խումբ նախադրություններ, որոնք հաճախ գոյականից հետո են դրվում. ինչպես՝

dig förutan *քեզ առանց (իմա՝ առանց քեզ)*։
(Poestion, Schwed., *145, 148*).

Իսկ երբ նախադրությունը գտնվում է հարցական կամ հարաբերական նախադասության մեջ, ո՛չ միայն գոյականից, այլև բոլոր բառերից հետո՝ նախադասության վերջն է դրվում. ինչպես՝

Vad tanker du på? *«ինչի՞ վրա ես մտածում»*։

Նույնիսկ հին հունարենում նախադրությունները թեև գոյականից նախադաս են, բայց ահա ἕνεκα *«պատճառով» նախադրությունը հաճախ հետադաս է լինում։*

Լատիներենում cum *«հետը»*, tenus *«մինչև»* *և* versus *«դեպի» նախադրությունները ո՛չ միայն գոյականից հետո են դրվում, այլև* cum*-ը անձնական և հարաբերական դերանունների հետ միանալով՝ մի բառ է կազմում. ինչպես՝* mecum *«ինձ հետ»*, tecum *«քեզ հետ»*, secum *«իր հետ»*, vobiscum *«ձեզ հետ»*, quocum *«որի հետ»*, aurium tenus *«մինչև ականջները»*, orientem versus *«դեպի արևելք»*։

Գրաբարում նախադրությունները ընդհանրապես գոյականից նախադաս են դրվում. օրինակ՝ հանդերձ *նախադրությունը կարող է երկու դիրքն էլ ստանալ, իսկ* աղագաւ *նախադրությունը միշտ հետադաս է. ինչպես՝*

Նստարուք դուք այդր հանդերձ իշովդ
Զիսրայէլ քեւ հանդերձ
Հանդերձ Մարեմաւ մարբն իւրով. *Մատթ. Բ 11.*
Եղբարբքն հանդերձ
Իմաստութեանն աղագաւ. *Եւս. Քրոն. Ա.*

Այսպես, ուրեմն, հետադաս նախադրությունները հայերենի մեջ նույնիսկ Ե դարում են պատահում։

Ահա մի քանի ուրիշ օրինակներ էլ՝ Ե դարի ընտրելագույն հեղինակներից.

Այլ և այլ վիճեալ ևս պնդին ի բանիցն վերայ. *Եզն. 99.*
Զարքայիւ շուրջ. *Նորագյուտ Բ. Մնաց. ԻԳ 7.*
Արծաթոյ վասն. *Ոսկ. Մ. Գ., 94.*
Յայնր հարուածոց վերայ. *Ոսկ. Մ. Գ., 122*

Ի Քրիստոսի սակս. *Ոսկ. Եփես. 760*
Ի գայլոց մէջ են. *Ոսկ Եփես. 864.*

Ուշ շրջանի օրինակներ են հետևյալները.

Բուսեալ դալար խոտ ի ծողի վերայ. *Վրք. հրց. Ա 346*
Յայսմ լերին վերայ. *անդ՝ 349*
Ի թագաւորաց սրբոց միջի. *անդ՝ 366*
Քո պէս. *անդ՝ 119*
Սմին վասն. *Ոսկ. Գրծ. 65, 76 և Յաճախ.*
Պետրոս Յովհաննու ճանդերձ. *Ոսկ. Գրծ. 72*

Ամենահին օրինակները (Ե դար) համարվում են հեղինակնեի քմահաճույքի համաձայն իբր զարդ դրված ձևեր։ Քանի գալիս ենք դեպի նոր շրջանը, բացառությունների թիվը մեծանում է և գերակշռում։ Հավանաբար այս գերակշռությունը թուրքերենի ազդեցությամբ է, այնպես որ այսօր հայերենի մեջ նախադրությունը ընդհանրապես հետադաս է։

Այնուամենայնիվ արդի բարբառներում ունենք նախադաս նախադրության բազմաթիվ օրինակներ։ Այսպես՝ Մշո բարբառում շատ նախադրություններ, որոնք ուրիշ բարբառներում հետադրություններ են դարձել, պահում են իրենց բնիկ տեղը, երբեմն իբրև մասնիկ. օրինակ՝

Վըր մըր տան *«ի վերայ մերոյ տան, մեր տան վրա»*
Մըշ մըր տան *«ի միջի մերոյ տան, մեր տան մեջ»*
Մըտ ընձի *«մոտ ինձ, ինձ մոտ»*
Քանի՞ տարի առաջ fգնէ *«քեզնից քանի՞ տարի առաջ»*

Ոզմիի բարբառում ճետ *և* մօտ *նախադրությունները նախադաս դրվելով այնպես են կրճատվել, որ վերածվել են իսկական նախամասնիկի։ Առաջինը ստանալով* խա *ձևը՝ ծառայում է կազմելու դերանունների գործիականը. ինչպես՝*

խաձէյ *«ինձ հետ»,* խամի *«մեզ հետ»,* խաfյի *«քեզ հետ»,* խաձ՛ի *«ձեզ հետ»։*

Սրան նման է մօտ, *որ ստացել է* մա *ձևը և միանալով նույն դերանունների հետ, տալիս է հետևյալ ձևերը.*

մաձէյ *«ինձ մոտ»,* մամի *«մեզ մոտ»,* մաfյի *«քեզ մոտ»,* մաձ՛ի *«ձեզ մոտ»։*

Հնում նախադրությունը թեև ընդհանրապես հետադաս է, բայց ոճով ասում ենք՝

Հեռու սուրբ սեղանից
Հեռու քեզանից
Հեռու լսողաց

Բայց նույնիսկ գրական լեզվի մեջ, ուր նախադրությունը հետադաս է, կան այնպիսիները, որոնք նախադաս էլ են.— մինչև, առանց, դէպի, փոխանակ, իբրև *նախադրությունները միշտ նախադաս են. ինչպես՝*

Հանդերձ ընտանեօք, ընտանեօք հանդերձ
Փոխանակ օտարին տալու. Փոխանակ իր եղբօր
Դէպի տուն, դէպի մեզ էին գալիս
Առանց քեզ, առանց հացի, առանց ջրի
Մինչև երեկոյ, մինչև տուն հասնելը

Ի նկատի ունենալով այս բոլորը, ավելորդ է փոխել հայերենի մեջ նախադրություն *բառը և դարձնել* հետադրություն, *ինչպես արին ոմանք։ Այս ձևափոխությունը պիտի ստիպեր մեզ ասելու* նախադաս հետադրություն *և* հետադաս նախադրություն, *կամ առաջին դեպքում* նախադրություն, *երկրորդ դեպքում* հետադրություն: *Այսպիսով մի մասն բանին պիտի ստանար երկու տարբեր անուն՝ համաձայն իր դիրքի, ինչ որ շատ անտեղի է։ Ածականն էլ կարող է թե՛ նախադաս լինել և թե՛ հետադաս։ Բայց սրա համար երկու անուն չի ստանում։ Հետադրություն բառի հեղինակները, զգալով այս անպատեհությունը, հետո էլ հնարեցին* կապ *բառը* (նախադրություն *իմաստով), որ բաժանվեց սակայն երկու տեսակի.* նախադրություն *և* հետադրություն: *Այսպիսով ստեղծվեց մի ուրիշ գլխացավանք։ Բացի սրանից,* կապ *բառը հեշտությամբ կարելի է շփոթել* շաղկապ *բառի հետ։ Այս բոլոր անպատեհությունները կվերանան, եթե պահենք* նախադրություն *բառը, որ միջազգային համատարած բառ է։ Ո՞վ է մտածում նրա ծագման և* նախ *բառի մասին։ Ինչպես որ ասում ենք* նախադասություն, *առանց երբեք մտածելու և մտածելու դեպքումն էլ առանց երբեք ըմբռնելու, թե ի՛նչը և ինչո՞ւ է «նախ դասվում», նմանապես կարող ենք և պետք է որ պահենք* նախադրություն *բառը՝ իբրև պայմանական նշան՝ հատկացված այդ մասն բանիին, առանց նրա կազմության խորը թափանցելու։*

Նախադրությունները նախկին գոյականներ են, որոնք հաճախական գործածությամբ ի վերջո այս վիճակին են հասել և առանձին մասն բանիի վերածվել։ Այս բանը շատ լավ երևում է զանա-

զան լեզուների մեջ. օրինակ՝ սումերերեն լեզվի մեջ նախադրությունները հայտնի կերպով պահում են դեռ իրենց նախկին վիճակը. այսպես՝

šag	«սիրտ. մեջ»
utu	«ժամանակ. երբ»
igi	«աչք. առջև»
aga, agir	«հետևը. ետև»
gab	«կուրծք. դեմ»

(Autran, Sumér. et indo-eur., 61)

Հոտենդոտյան կորանա բարբառով՝

(nā-b «փոր») na «մեջ»
kx'ai-b «դեմք» kx'ai «վրա»

(առաջիններին մեջ b արականի վերջավորությունն է, որ կրճատվել է)։

(Meinhof, 55—56)

Զիրյեններեն լեզվի մեջ (ֆիննական) մակբայներն ու նախադրությունները մեծ մասամբ ուղղակի գոյականից են կազմվում և ունեն գոյականի հոլովական վերջավորությունները (Wiedemann, 111).

Մելանեզյան լիֆու լեզվով՝

hnine	«սիրտ>մեջ»
gēmeke	«երես>առջևը»
hutrō	«կռնակ>ետևը»

(Rag, 130)

Կովկասյան ախվախերեն լեզվի մեջ էլ նկատում ենք նույն բանը. ինչպես՝

գլուխ (նշ. վերև)
աչք (առաջը, առջևը. հառաջ, նախ)
ներքան, գարշապար (տակը)
թիկունք, կռնակ (հետևը, հետո)

(Жирков, 112)

Ֆիններենում, ինչպես և թուրքերենում, նախադրությունները գոյականների հոլովյալ ձևերն են, որոնց ուղղականն էլ շատ անգամ գործ է ածվում լեզվի մեջ։ Այսպես, օրինակ՝

Թրք.	ait	«տակ»,	altanda	«տակը, ներքև»
	ič	«մեջ»,	ičinde	«մեջը»

üst	*«բարձր»,*	üstünde	*«վրան»*
dib	*«հատակ»,*	dibinde	*«տակը»*
yer	*«տեղ, երկիր»,*	yerinde	*«փոխարեն»*

Հայերենի մեջ էլ շատ հաճախ նախադրությունները մատնում են իրենց ծագումը գոյականից. ինչպես՝

Առաջ, առաջի<աջ *բառից*
Արտաքս, արտաքոյ *«դուրսը»*<արտ *բառից*
Համար «վասն»<համար *«հաշիվ» բառից.*
Հետ, զհետ, յետոյ, յետս<*հնխ.* pedo- *«ոտք»*
Ցաղագս—աղագ *«ճանապարհ» բառից*
Սակս—սակ *«չափ» բառից*
Վասն—*զնդ.* vasna, *հպրս.* vašna *«շնորհիվ, կամոք» բառից*
Դուրս—*հյ.* դուռն *բառի հոգնակի հյց.* դուրս *ձևից։*

Կան լեզուներ, որոնք ո՛չ մի նախադրություն չունեն. այսպես են այն լեզուները, որոնք շատ հարուստ են հոլովներով և նախադրությունների դերը տվել են նրանց։ Օրինակ, կովկասյան լեզուներից աբխազերենը չունի նախադրություն և իր նախադրությունները արտահայտում է գոյականի վերջում դրված հոլովական մասնիկներով և կամ բայերի վրա դրված մասնիկներով. այսպես տակը, մինչև, մոտը *կամ* մեջը *կամ* վրա (-gnə), դեպի, առջևը, ետևը *և այլն.* (Dirr, Einführ., *38, 42*)*։ Այսպես է նաև կովկասյան ագուլերեն լեզուն, որ ունի ընդամենը 9 նախադրություն. սրանք են* «վրա, տակը, առաջի, ետևը, մեջը, մինչև, մոտ, պես, համար». *մնացյալները հոլովներով են բացատրվում։*

(Шаумян, Грам. агуль. 111—113)

Նմանապես Ավստրալիայի տուրրուրուլ լեզուն նախադրություն չունի. նրանց փոխարեն դնում են զանազան հետամասնիկներ (Rydley, *63*)*։*

Ընդհակառակը՝ կան լեզուներ, որոնք հարուստ են բազմաթիվ նախադրություններով և նույնիմաստ նախադրությունների բազմատեսակ նրբություններով։

Այսպես, օրինակ, ամերիկյան չիկիտա լեզվի մեջ միևնույն «մեջ» նախադրությունն ունի հետևյալ երանգները և առանձին բառերը.

icu —*մեջ՝ ինչպես անկողնում*
ita —*երբ իրը մեծ է, ընդարձակ է*

iquitipi — երբ իրը լայն է
api — երբ իրը ձգված՝ դարձած է դեպի վեր
iti — երբ իրը ծառի կամ սյան ոտքին է
içu — երբ իրը հեղուկ է և այն իրը որ նրա մեջն է, լողում է նրա երեսին. օրինակ՝ ջրում
cana — երբ իրը հեղուկ է նույնպես, բայց իրը գտնվում է նրա միջում, ինչպես, օրինակ՝ ձուկը ջրում
oto — երբ իրը կրակումն է
equi — երբ իրը անտառումն է
ituru — երբ տան դռան մեջ է.
iclu — երբ ճամբին, ճամբի վրա է։

Այս բոլոր 11 ձևերը միևնույն «մեջ» գաղափարի տարբերակներն են։

(L. Adam—V. Henry, 27)

Թեև նախադրությունները պատկանում են անհոլով բառերի շարքին, բայց կան շատ լեզուներ, որոնց մեջ նախադրությունն էլ գոյականի նման հոլովվում է. օրինակ՝ ամերիկյան չիկիտա լեզվում նախադրությունը ո՛չ միայն հոլովվում է, այլև ստանում է ստացական հոդ, ճիշտ ինչպես հյ. վրաս, վրադ, վրան, վրանիս, վրանիդ, վրանին, վրայի, վրայից և այլն։

(L. Adam—V. Henry, 27)

Ուրիշ լեզուներ ունեն բազմատեսակ նախադրություններ. հայերենն էլ պատկանում է այդ լեզուների շարքին։

Նախադրությունների թվարկումը քերականները կատարում են երեք տարբեր ձևերով։ Ոմանք դասակարգում են ըստ ցույց տված պարագայի։ Օրինակ, ֆրանսերեն նախադրությունները Brachet—Dussouchet (Gram. fr., Paris, 1903, 260) բաժանում է 5 տեսակի. այն է՝ 1) ձգտում կամ հեռացում ցույց տվող, 2) պատճառ, հատկություն կամ ծագում ցույց տվող, 3) եղանակական, 4) ժամանակական, 5) տեղական։ Բայց այս ձևի բաժանումը, ինչպես հեղինակն էլ ասում է, վճռական չէ. ըստ որում նախադրությունները ըստ պարագայի փոխում են իրենց իմաստը։ (Հեղինակը այս դեպքում ի նկատի ունի հատկապես այն նախդիրները, որ մենք բաժանեցինք նախադրություններից)։ Կան էլ, որ այնպիսի իմաստ ունեն, որ դժվար է այս կամ այն խմբի տակ դնել։ Գազանճյանը (Նոր քերակ., Պոլիս, 1909, 84) նախադրությունները բաժանում է ըստ 9 պարագաների, այն է՝ 1) տեղ, 2) ժամանակ, 3) քանակու-

թյուն, 4) նմանություն, 5) պատճառ, 6) միություն, 7) բաղդատություն, 8) անջատում, 9) հակադրություն։ Սակայն նախադրությունները չի բաժանում ըստ այս խմբերի, և բոլորը դնում է միատեղ, մի խմբի մեջ։

Երկրորդ ձևի դասակարգությունն է ըստ խնդրառության, այսինքն նայելով, թե յուրաքանչյուր նախադրություն ի՛նչ հոլովով խնդիր է ստանում։ Այսպես է արել Չալխյանը, որ գրաբարի նախադրությունները (էջ 136—146) դասավորել է 7 բաժնի տակ. 1) սեռական խնդրով, 2) տրական խնդրով, 3) նախդրիվ հայցական խնդրով, 4) հայցական խնդրով, 5) բացառական խնդրով, 6) գործիական խնդրով, 7) պարառական խնդրով։ Ոչ մի նախադրություն չկա ուղղական հոլով խնդրով։ Բայց կան նախադրություններ, որոնք կարող են ստանալ մի քանի տեսակ խնդիրներ։ Օրինակ՝ հակառակ նախադրությունը, որ Չալխ. 139 դրել է սեռականի շարքում, կարող է ստանալ նաև տրական հոլովով խնդիր. ինչպես՝ Եզն. 6 և ոչ էութիւն հակառակ նմա: Բացի սրանից, խնդրառությունը լեզվից լեզու տարբերվում է.— ուգրո-ֆիննական լեզուների մեջ նախադրությունները առնում են ընդհանրապես սեռական հոլով.— ֆրանսերենում՝ մեծ մասամբ հայցական հոլով.— ռումիներենում ընդհանրապես հայցական հոլով, բայց և կան նախադրություններ, որ ստանում են սեռական հոլովով խնդիր. այսպես են՝ վրան (asupra), փոխանակ (în locul), առջևը (înaintea), դեմը (în fata), շուրջը (împrejurul). երկարությամբ (înlungul), հետևը (îndosul), համար (din pricina) միջոցին (pe timpul) և այլն։

Մինչև անգամ գրաբարից աշխարհաբար և բարբառից բարբառ նախադրությանց խնդրառությունը փոփոխվում է։ Ուստի անհարմար է դասակարգել նախադրությունները ըստ խնդրառության։

Երրորդ ձևի դասակարգությունը լինում է ըստ ծագման։ Այս դրության է հետևում Այտն. 119։ Նա նախադրությունները բաժանում է երեք կարգի. 1) բուն նախադրություններ, ինչպես՝ համար, հետ, դեմ և այլն. 2) գոյականից նախադրություններ, ինչպես՝ առջև, ետև, վերևը, վրայ, տակ և այլն. 3) մակբայից նախադրություններ, ինչպես՝ ներս, դուրս, վար, վեր, հեռու, գաղտուկ և այլն։

Բայց այս բաժանումն էլ շատ անճիշտ և անգիտական է. նույնիսկ այն նախադրությունները, որ բուն նախադրություններ է կոչում, նույնպիսի գոյականներ են, ինչպես երկրորդ կարգինները.

օրինակ՝ համար *«թիվ, հաշիվ, համրանք»;* հետ (ոտք *իմաստով),* դէմ (երես *կամ* դէմք *իմաստով) և այլն։*

Ըստ այսմ երեք դրությունների էլ անհարմար համարելով, մենք որոշեցինք նախադրությունները դասավորել պարզ այբուբենական կարգով։

Ստորև տալիս ենք՝

1. Գրաբարի նախադրությունները՝ դասավորված արմատական ձևի այբբենական կարգով (նախդիրները հապավված համարելով)։

2. Միջին հայերենի նախադրությունները

3. Նախադրությունները բարբառներում

4. Թուրքերենից փոխառյալ նախադրությունները

5. Աշխարհաբարի նախադրությունները

Այս հինգ ցանկերի վրա ավելացնում ենք

6. Նախադրությունների բացատրությունները, ուր №-ներով ուղարկում ենք նախորդ ցուցակների բառերը՝ հարկավոր դեպքում։

1. ԳՐԱԲԱՐԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ս=սեռական խնդրով, Տ=տրական, Հ=հայցական և այլն)

Ակամայ. *մակբայ է. բայց ստանալով յ նախդիրը՝ սեռական խնդրով դառնում է նախադրություն։ Կա մի անգամ գործածված՝ Ոսկ. Մտթ.* Զմարիամ յակամայ Մովսէսի պատժեաց Աստուած *(նշ. Մովսեսի կամքին հակառակ)։*

Աղագաւ *Ս. 1*	Առ ընթեր *Տ. 4*
Առանց *Ս. 2*	Արտաքոյ *Ս. Հ. Բ. 5*
Առաջի *Ս. 3*	Արտաքս *Ս. Բ.* արտաքս քան *Հ. 5*
Առաջոյ քան *Հ. 3*	Բաց, բայց *Հ. 6*

Գաղտ *«գաղտնի, գաղտուկ, գողտուկ». ստանում է բացառական խնդիր ինչպես՝* Գաղտ ի մօրէն երթայր յեկեղեցին. *Վրք. հրց. ԻԶ*

Գերիվերոյ *Ս. Հ. 29*	Զհետ *Ս. 8*
Գունակ *Ս. 25*	Զօրէն *Ս. 25*
Դէպ *Տ. նխ. հյց. 7*	Ընդ առաջ *Ս. 3*
Զկնի *Ս. 8*	Ընդդէմ *Ս. 18*

Թանց, թարց *Ա. 2*
Ի թերէ *10*
Իբրև *Հ. 25*
Լու ի լու *Տ. 9*
Կողմն *10*
Կոյս *10*
Հակառակ *Ա. Տ. Հ. 18*
Ի ճամար *Ա. 27*
Հանգոյն *Ա. 25*
Հանդերձ *Գ. 11*
Հանդէպ *Ա. 18*
Հերի *Բ. 12*
Հետէ *Բ. 8*
Ի ձեռն *Ա. 13*
Ընդ ձեռն *Ա. 13*
Մեկուսի *Բ. 14*
Մերձ *ՆՀ. Տ. Գ. 15*
Մէջ, ընդ մէջ *Ա. 16*
Ի մէջ, ի միջի *Ա. 16*
Ի միջոյ *Ա. 16*
Մօտ *ՆՀ. Տ. Գ. 15*
Մինչ *ՆՀ. 17*
Մինչև *ՆՀ. 17*
Յաղագս *Ա. 1. 27*
Յառաջ *Բ. 3*
Յառաջ քան *Հ. 3*
Յանդիման *Ա. 18*
Յետ *Ա. 19*
Յետոյ *Ա. 19, 20*
Յետուստ *Ա. 20*
Յետս *Ա. 19, 20*
Ներքոյ, ի ներքոյ *Ա. 21*
Ի ներքուստ *Ա. 21*
Նման *Տ. 25*
Շուրջ պար. *22*
Ուրոյն *Բ. 14*
Որպէս *Հ. 25*
Չափ *Գ. Ա. 23*
Ի չափ *Ա. 23*
Պատճառաւ *Ա. 24*
Ի պատճառս *Ա. 24*
Պէս *Ա. 25*
Պէսգունակ *Ա. 25*
Սակս, ի սակս *Ա. 1, 26, 27*
Վասն *Ա. Հ. 1, 27*
Ի վերայ *Ա. 28*
Ի վերուստ *Ա. 28*
Ի վերոյ *Ա. 29*
Ի վերոյ քան *Հ. 29*
Ի տեղի *Ա. 30*
Փոխան *Ա. 30*
Փոխանակ *Ա. 30*
Փոխանակ ընդ *Ա. 30*
Քան զ *Հ. 31*

2. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առանց *2*
Առջև, յառջև 3

Զարդ, զարթ, զարթէլ *«բացի» 6. սրա ավելի հին ձևն է* զատել *«բացի», որի համար տալիս եմ հետևյալ վկայությունները.* Զատել թէ շատ լինի *«բացի այն պարագայից, երբ շատ լինի» Մխ. բժշ. 82*. Զատել թէ խարտէշ մաղձն խառնած լինի· *(էջ 83)*. Զատել թէ տեսանես *(էջ 84)*։

Ջերք 25
Ի դուրf *«դուրս»*, ընդ դրացէ, ընդ դրուցէ *«դրսից»*
Ինչու, ինչուի, ինչվի, ինչֆի *«մինչև»* 17
Ի խէչ *«մոտը, կողքին, քովը»*
Հետ *«հետևից»*, ի հետ, ի հետ ի հետ, ի հետ ու ի հետ, հետ մի այլ 8
Յետև *«ետևը»*
Ներfև *«տակը»*, 21, ի ներf, ընդ ներfսէ, ընդ նեfսէ *«ներսը»* 21
Պէս 25
Վանց *«վասն, համար»* 27
Վերև *«վրան»*
Ի վեր *«ի վեր, հետո»*
Ցուր *«մինչև»* 17
Քանց *«քան»* 31

3. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Անց *«բացի». գործածական է Ջուղայի բարբառում. օրինակ՝* տուցից անց յուրիշ չկէր. *գրաբարի* առանց *բառն է՝ առանց* առ *նախդիրի։ Սրա հետ նույն է* անցել *Երև. «բացի». օրինակ՝* Քեզանից անցել էս աշխարհումն էլ ո՞ւմ ունեմ: *Կազմված է ո՛չ թե* անց+էլ *շաղկապով, ինչպես կարծում էր Թումանյանը, այլ առաջանում է գրբ.* անցեալ>*մհ.* անցել *ձևից։ Եթե* էլ *հանգը շաղկապ լիներ, այլևս նորից չէր կրկնվի* էլ *շաղկապը քիչ հետո։ Միջին հայերենով կային այս կազմությամբ ուրիշ ձևեր էլ. ինչպես՝* զարթել, fաւել *«բացի»։*

Առանց. *գործածական է Ննխ.* առանց *ձևով. պահանջում է սեռական կամ հայցական հոլովով խնդիր. ինչպես՝* առանց հացի *կամ* առանց հաց: *Ջուղայի բարբառով՝* առանց *կամ* առանցի, *որի* ի *վերջավորությունը հաջորդ բառի սեռականի նշանն է՝ նախադրության վրա անցած։ Ագլ. լինում է* ա՛ռանց, ըռընց, *Ցղ.* ըռունց, ո՛ւռունց *«առանց»։ Չկա Պոլսի բարբառում։ Մյուսները տե՛ս № 2։*

Առաչ. *ունենք «առաջ, յառաջ, նախ» իմաստով՝ Պլ.* առաչ *(ինչպես՝ ասկէ առաչ, քեզմէ առաչ).— Մրղ.* առոչ, առոնչ *«առաջ, նախ» (բաղաձայնի մոտ* առոշ*).— Ջղ.* յառէչ *«առաջ».— Իսկ Ագլ.* ա՛ռաչը *«առջևը»,* բըըչկի՛ *«առջևից».— մյուսները տե՛ս № 3։*

Առջև. *տեղ ցույց տալու համար, գրբ. «առաջի,* devant» *իմաստով գործածական է նախ Պլ.* առչէվ. *որոշիչ և դիմորոշ հոդերով* առչէվը, առչիս, առչիդ, առչին *և այլն.— Ննխ.* առչէվը, առչօվը.— *մյուսները տե՛ս № 3։*

Գաղտուկ *«ծածուկ, գաղտնի, գրբ. գաղտ». գործածական է Պլ. նույն ձևով. ինչպես՝* Իզմէ գաղտուկ էլեr էկեr եu:— *Ննխ.* գաղտուկ, գաղտոտ *«գաղտ, գաղտնի»։— Ջղ.* գ՛ոխտիկ *«գաղտ, գաղտնի, գաղտնապես»։*

Դեն, *գրաբարի* դեն *«կողմ» բառն է, որ գործածվում է Մրղ.* թէխ *«դեպի» իմաստով։*

Դէմ. *ունի երկու նշ. «1. դեմ, հակառակ». 2. հանդիման». ստանում է զանազան ձևեր. ինչպես՝* դէմը, դիմաց, դիմացը, դէմդիմաց, դիմացէ դիմաց, դէմուդէմ, դէմդէմ.— *ավելին տե՛ս № 18։*

Դէպի. *այս ձևով ունեն Պլ., Ննխ.— դարձել է Ջղ.* դաք. *իսկ Ագլ.* դի՛րբ, դիբինա՛, դընք՛ըմա՛, դինք՛ինա՛, *որոնց վերջին մասի ծագումը ինձ անհայտ է.— մնացյալը տե՛ս № 7։*

Դոr, դoror *«պես, ինչպես». գործածական է Ջուղայի բարբառով. ինչպես՝* դոr *քար «քարի պես»,* Ճarմակ է դoror ձ՛ուն *«սպիտակ է որպես ձյուն».* Դoror չoraթան *«չորթանի պես».* դո՞r *«ի՞նչպես».* դո՞rն *«ո՞ր կողմով, ո՞ր ճամբով».— ծագում է գրբ.* ընդ or *ձևից, որի մի այլ ժառանգորդն է Պլ.* ընդor, ինդor *«ինչպես»։*

Դուրս *«արտաքոյ, արտաքս». գրբ.* ի դուrս *ձևից, որ* դուռն *բառի հնագույն նախդրիվ հայցականն է. հմմտ. պրս.* بدر ba-dar *դուրս, որ ծագում է* در dar *«դուռ» բառից. նաև ֆրանս.* porte *«դուռ» բառից ասվում է ոճով* je vous metterai à la porte *«քեզ դուրս պիտի անեմ»։ Պահված է Պլ.* դուrս *ձևով, որից* դուrսը, դուrսէն *«դեպի դուրս, դրսից», Ննխ.* դուս, դուսը, դուսէն.— *Ջղ.* դ՛ուս.— *Ագլ.* դիւս.— *Մրղ.* տիւս, տի՛ւսա տիւսէն *«դուրս, դուրսը, դրսից»։*

Եա, եաև, եաf. *տե՛ս № 19։*

Զատ *«բացի». գործածական է Պլ. հին ձևն է* իզատ. *ինչպես՝* ասկէ զատ. fէնէ իզատ *(քեզնից զոկ)։ Ավելին տե՛ս № 6։*

Ինչկլի, ինչուկ, ինչվան. *տե՛ս* մինչև:

Կուշտը *«կողքին, մոտը, քովը» իմաստով դարձել է նախադրություն և գործածական է Ագլ.* կէշտ, *Ցղ.* կօշտ, *Մրղ.* կը՛շտա, *Ջղ.* fշտին, *Ղրբ.* կօշտը, fշտէն *ձևերով։— Ավելին տե՛ս № 15։*

Հակառակ, *իբրև նախադրություն գործածական է Ննխ. Պլ.* ճագառակ, *Ջղ.* ճակառակ *կամ* խակառակ *ձևերով։*

Համար. տե՛ս № 27։

Հեռու. տե՛ս № 12։

Հետ «միասին» իմաստով գործածական է շատ բարբառներում. ինչպես՝ Ննխ., Պլ. ճէդ հնչմամբ, Մրղ. խէտ, խէ՛տո — Ագլ. ճիտ, սղված ձևով իտ. ինչպես՝ նրօ՛ իտ «նրա հետ»։ Կարող է որոշիչ և դիմորոշ հոդ ստանալ. ինչպես՝ ճետս, ճետդ, ճետը, ճետներս=ճետերնիս, ճետներդ=ճետերնիդ...։ Կարևոր է շեշտել Ջղ. խտուր «միասին», որ կազմված լինելով ճետ իւր ձևից, պիտի համարվեր միայն եզակի Գ դեմքին, բայց ընդհակառակը դարձել է մի՛ բառ և կարող է կապվել ամեն դեմքի. օրինակ՝ ընդուր խտուր «նրա հետ», Յուսէփիս խտուր. խտուրս «ինձ հետ», խտուրդ՝ «քեզ հետ», խտուրն «իր հետ»։ Ավելին տե՛ս № 8։

Հետի «համար, վասն». այս հետաքրքրական բառը գործ է ածվում Ղրբ. և Շմ. այս ձևով. նույնը գտնում ենք Ագլ. ճո՛տի, Ցղ. ճէ՛տի ձևով. օրինակ՝ քիզ ճո՛տի «քեզ համար», սղմամբ ասվում է իճծո՛տի «ինձ համար» և այլն։ Անշուշտ տարբեր է ճետ «միասին» բառից, որ Ղրբ. լինում է ճըճէտ և Ագլ. ճիտ, իտ. բայց թե ի՛նչ ձևից է առաջանում՝ չգիտեմ։

Մէջ. գործ է ածվում մէչ ձևով Ննխ., Պլ., Ջղ., Մրղ., Ցղ. դառնում է Ղրբ. մաչ և Ագլ. մաջ, մաճջ. ստանում է որոշիչ և դիմորոշ հոդ. ինչպես՝ Պլ., Ննխ. մէչը, Մրղ. մէ՛չտ, Ղրբ. մա՛չը, Պլ. մէչս, մէչդ, մէչերնիս, Երև. մէչներս, հոլովվում է Մրղ., Պլ. մէչէն, Ղրբ. մա՛չան. ստանալու համար «երկուսի միջև» իմաստը՝ բարդվում է տեղ բառի հետ և դառնում է Պլ. մեջտեղ, Ագլ. մա՛չտեղ, որոշիչ հոդով՝ Պլ. մէչտեղը, ստացական հոդով՝ մէչտեղերնիս, մեչտեղերնիդ, մէչտեղերնին.— գրբ. կոյս «կողմ» և թրք. ղօլ «կողմ» բառերով կազմված բարդեր են՝ Ղրբ. մա՛ջքիւս, մա՛ծղօլ, Ագլ. մա՛չղօլ «մեջը»։— Ավելին տե՛ս № 16։

Մինչև. այս նախադրությունը պահված է երկու ձևով. առաջին խմբի ներկայացուցիչներն են Ագլ. մինչէ՛վ, մինչի՛, մինչինո՛, մինչն ո՛, Ննխ. մինչէվ, մինչվաքի, Խ. մինչվա՛նքի, երկրորդ խմբի ներկայացուցիչներն են՝ Ագլ. չիւրխս, Ջղ. ընշուր, շուր, շուրիկօր, շուկօր, շկօր (օրինակ՝ շուր էս կէրս «մինչև այժմ»), Ղրբ. չը՛ւռու, չքո՛ռանը և այլն։ Այս երկու խմբերի միջև են կանգնած Ննխ. ինչօքի, Մրղ. ունչույ, ունչուն, Պլ. ինչվան (օրինակ՝ ինչվան ասօր, ինչվան նուսա), որոնք ցույց են տալիս, թե երկրորդ խումբը կազմված է առաջին խմբից՝ նախաձայն մ-ի կրճատմամբ։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ միևնույն բարբառի մեջ երկու ձևերն էլ միա-

ժամանակ գոյություն ունեն. ինչպես Ազլ. և Ննխ.— Մնացյալը տե՛ս № 17։

Մօտ, մօտիկ, *տե՛ս № 15։*

Յանդիման, *տե՛ս № 18։*

Նայելով *«ըստ, համաձայն, համեմատ». Պլ. օրինակ՝* Անոր բսածին նայելով։

Ներս. *գրաբարի* ի ներfս *ձևից կրճատված, դարձել է նախ մակբայ և ապա նախադրություն։ Պահված է պլ.* նէրս *ձևով (որից* ներսէ ներս, ներսիդիս, ներսիդին, ներսի, ներսէն, ներսերը), *Ջղ.* ներսը., *Ննխ.* նէս, նէսը, նէսէն, նէսթի, *Մրղ.* նիս, նի՛ստ նիսէն *«ներս, ներսը, ներսից»։ Տե՛ս և № 21։*

Ներfև, նեfսև, *տե՛ս № 21։*

Չափ, *տե՛ս № 23։*

Չօրս դին *«շուրջը», դառնում է Պլ.* չօրսդի, *որ կարող է ստանալ որոշիչ և դիմորոշ հոդ. ինչպես՝* չօրսդին, չօրսդիս, չօրսդիդ, չօրսդինիս, չօրսդինիդ, չօրսդինին.— *Ազլ. ասվում է* չուրf բի՛վլիւ-րը, *որ է «չորք բոլորը»։ Գրական լեզվով ասվում է* չօրս կողմը։ *Տե՛ս № 22։*

Պէս, *արտասանվում է Պլ., Ննխ.* բէս. *ածանցմամբ տալիս է Ննխ.* պէսնակ, պէսնայիկ, պէսնարիկ *հոմանիշ ձևերը։— Ստանում է սեռական խնդիր. օրինակ՝* մարդու պէս, էշու պէս.— Ես *և* դու *դերանունների հետ տրական խնդիր. օրինակ՝* fեզի պէս, ինծի պէս, մեզի պէս, ձեզի պէս. *հոգնակին մի բառ ըմբռնվելով դառնում է միշտ* -ներ. *օրինակ՝* fեզի պէսները, մեզի պէսները, ինծի պէսները *և այլն։ Ավելին տե՛ս № 25։*

Ջօկ *«զատ, առանձին». հնչվում է Ննխ.* չօզ. *ստանում է բացառական խնդիր. ինչպես՝* դարամէն ջօկ, նարամէն ջօկ։

Վար *«ի վայր, դեպի ցած». հատուկ է* կը *ճյուղի բարբառներին. այսպես Պլ.* վար, *հոլով՝* վարը, *հոլովված՝* վարի, վարէն, վարերը, վարերէն, *որից* վարօf *«մի քիչ ավելի ցած». ստանում է բացառական խնդիր. ինչպես՝* ասկէ վար, վերէն վար։— *Ննխ. նույնպես ունի* վար։— *Ում ճյուղի բարբառներում՝* այ>է *ձայնափոխությամբ դարձել է* վէր. *օրինակ՝* վէր *«ի վայր, վար». սրանով նույնացել* վեր *«ի վեր, բարձրը» բառի հետ։ Այս հակասության առաջքը առնելու համար* վեր *դարձել է* վերև, *իսկ* վայր *մնում է* վեր. *բայց սրա տեղ ավելի շատ գործ է ածվում* ցած՝ *իբրև նախադրություն, մինչդեռ* վէր *մակբայ է. ինչպես՝* նրանից *ցած՝* վէր ընկաւ։

Վեr, գրբ. ի վեr ձևն է, որ նախ մակբայ է և հետո ստանալով բացառական խնդիր՝ դառնում է նախադրություն. ինչպես՝ Պլ. վեr, ſեզմէ վեr, լեռնէն վեr, ասկէ վեr. հոլովված՝ վեrի, վեrէն, վեrեrը, վեrեrէն. նաև վեrof «մի քիչ ավելի վեր»։— Ննխ. նմանապես վէr, վէrը, վէrէն։— Մրղ. վիr, վի՛rտ, վիrէն «վերև, վերևը, վերևվից»։— Ում ճյուղի բարբառներում դարձել է վեrև՛ չշփոթվելու համար վէr «վայր, վար, ցած» նույնաձայն բայց հականիշ բառի հետ։ Այս և վերջավորությունը գտնում ենք նաև նեrfև, ստօrև, մինչև, դrսև, նեrսև, նեrfսև բառերի մեջ։

. Վrայ. հին ձևն է վէrայ, որ պահում է Ջղ. վեrա, բցռ. վեrնից «վրայից». նույնը ցույց են տալիս Յղ. վէ՛rա, Ագլ. վօ՛rօ.— Կրճատմամբ դարձել է վrա. այսպես են Պլ., Ննխ. վrա, որ կարող է որոշիչ և ստացական հոդ էլ ստանալ և հոլովվել. ինչպես՝ վrան, վrաս, վrադ, վrանէrս, վrանէrինս, վrայէն, ինչպես և վrայof «մասին».— Մրղ. դառնում է վիrտ, իսկ Ղրբ. յըrա, յըrան «վրա, վրան»։ Ավելին տե՛ս № 28։

Տակ, գործ է ածվում գրաբարի ընդ (գործիականով) կամ նեrfոյ նախադրության փոխարեն։ Այս ձևի գործածության ո՛չ մի հետք չունենք ո՛չ գրաբարում և ոչ էլ միջին հայերենում։ Բարբառներում էլ դեռ ընդհանուր գործածություն չունի և ում ճյուղի մեջ հաճախ ասվում է նեrfև։— Բառիս գավառական ձևերն են՝ Ախց., Գոր., Երև., Կր., Ղրբ., Մկ., Մրղ., Շմ., Ոզմ., Ջղ., Սլմ., Վն., Տփ. տակ, Ալշ., Մշ. տագ, Խրբ., Հմշ., Ննխ., Պլ., Ռ., Սեբ., Սչ. դագ, Ասլ. դագ (դայ, դա*), Տիգ. դօգ, Ագլ. տօկ, Հճ. դօգ, Զթ. դօf, դօf, Սվեդ. դիւf, որոնք ներկայացնում են թե՛ տակ «հատակ» գոյականը և թե՛ տակ «ներքևը» նախադրությունը։ Կարող է ստանալ որոշյալ և ստացական հոդ և հոլովվել. ինչպես՝ տակս, տակդ, տակը, տակեrնիս, ակեrնիդ, սեռ. տակի, ներգ. տակին, բցռ. տակէն. Ղրբ. տա՛կան.— Ագլ. հոլովվում է տօկ, տա՛կին.— Մրղ. տակ, տա՛կա «տակը», տակըէն «տակից»։

Տեղ «փոխարեն». այս բառի գավառական ձևերն են՝ Ալշ., Մշ., Ջղ., Սլմ., Վն. տեղ, Ագլ., Գոր., Ախց., Երև., Կր., Ղրբ., Մկ., Մրղ., Շմ. տէղ, Զթ., Հճ., Սչ. դեղ, Ակն., Խրբ., Հմշ., Ննխ., Պլ., Ռ., Սեբ. դէղ, Ասլ. դե՛ղ, Տփ. տիղ, Տիգ., Սվեդ. դիղ։— Օրինակ՝ Պլ.՝ Ասfան ատեն պանելուս դէ՞ղն է։— Ղրբ. գործ է ածվում տեղաf ձևով. օրինակ՝ նա՛ցի տեղաf «հացի փոխարեն»։ Մնացյալը տե՛ս № 30։

Ցած. բուն իմաստն է «խոնարհ» (իբր հակադիր բարձրի, որի նմանությամբ էլ տեղ-տեղ ստացել է ցածr ձևը)։ Մի քանի բար-

բառներում գործածվում է իբր նախադրություն՝ «ի վայր, վար» նշանակությամբ։ Գրաբարում այսպիսի գործածության հետք չկա. բայց ՆՀԲ տալիս է մի օրինակ՝ իբր մակբայ գործածության, որ է Եղիշ. խաչել. Աչf զգաստանան՝ ցած նայելով:— Ցած *«ի վայր» իբր նախադրություն գործածական է Երևանի բարբառում (փխ.* վէր. *ինչպես՝ Նրանից ցած=անկէ վար) և հատկապես Մարաղայի բարբառում, ուր իմաստի տարբերացմամբ ձևի էլ տարբերացում ստեղծվելով՝ իբր ածական դարձել է* ցա՛նձր, *իսկ իբր նախադրություն՝* ցած. *ինչպես՝* Ցանձր մարթը *«խոնարհ մարդ է»,* Ծնգէս ցած *«Ծնգիցս ցած, ծունգէս վար»։*

Քամակ *«ետևը». գրաբարի* fամակ *«թիկունք, կռնակ» բառն է, որ տեղ-տեղ դարձել է նախադրություն. ինչպես՝ Սլմ.* fամակ *«ետևը», Մրղ.* fամա՛կա *«ետևը»,* fամկըէն *«ետևից»։*

Քանց, *տե՛ս Ս՞ 31։*

Քով. *1. բուն իմաստն է «կողք, կուշտ», որ թեև գրաբարում չկա, բայց ավանդված է միջին հայերենում. օրինակ՝* օգտէ fովուցն ցաւուն և լերդի. *Վստկ. 119.* Հարեալ Նիզակովն ի վերայ fովիցն. *Ուռհ. 292.* Ձձախոյ fովն նորա. *Ուռհ. 329.* Քովէն և այլ տեղեստան. *Մխ. բժշ. 36. այս նշանակությամբ կա նաև այժմ՝ Պլ., Տիգ.* Քովս կը ցաւի *(կողքս ցավում է). բարդությամբ էլ ունենք* fովացաւութիւն *«կողքի ցավ» Վստկ. 119։ Երկրորդ իմաստով գտնում ենք Վստկ. 190. Ի կոճակին քովքն հինգ վեց ծակ այլ թող (կոճակի կողքերին, մոտերը)։ Իբրև նախադրություն գործ է ածվում Ախց., Ակն., Ասլ., Սեբ., Երզ., Եվդ., Ջթ., Խր., Խրբ., Կս., Հզ., Մշ., Ննխ., Զրս., Պլ., Սչ., Տր. և համապատասխանում է Երևանի բարբառի* կողfին *ձևին. նշանակում է «առ եքի, մոտիկը». ինչպես՝* ծառին fով, աղբյուրին fով. *2. «համեմատությամբ». ինչպես՝* Աս անոր fով շա՛տ մեծ է. *Կարող է ստանալ որոշիչ և ստացական հոդ և հոլովվել. ինչպես՝* fովս, fովդ, fովը, fովերը, fովերնիս, fովերնիդ, fովէն, fովօf:

4. ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, թե որքան շատ փոխառյալ բառեր ունեն մեր բարբառները թուրքերենից (հետն առնելով նաև պարսկերեն և արաբերեն լեզուները)։ Այս փոխառյալ բառերի շարքում կան նախադրություններ և մակբայներ։

Տալիս եմ այստեղ առաջինների այբբենական ցանկը.

Աթիլ *«փոխարեն» Ջղ. ծագումն ինձ անհայտ. թվում է պրս. գավառական ձև։*

Ոլոզ *Մրղ.* ովոզը *Ղրբ. «տեղը, փոխարեն» <արև. թրք.։*

Գօրա *«համեմատ» Ննխ. որ և* գէրէ. *իսկ Պլ. արտասանվում է* գէօրէ *(գրվում է կէօրէ) <թրք.* كوره gōre *հոմանիշից. առնում է սեռական խնդիր. ինչպես՝ Ննխ.* տվածին զօրա*=Պլ.* տուվածին գէօրէ *«տվածի համեմատ»,* ըսածին գէօրէ *«ասածի համեմատ կամ համաձայն»։ Ննխ. բարբառում կարող է առնել նաև հայցական խնդիր. ինչպես՝* ան զօրա *«նրա համեմատ, ըստ այնմ»։*

Դէյի, դիի *Պլ. «որպես, իբր»=*դէյին *Ննխ. <թրք.* ديو deyu *«ասելով, որպես, իբր». ինչպես՝* Դուն ալ մարդ դիի օրթան էլեր ես *(Դու էլ իբր մարդ մեջտեղ ես ընկել)։*

Դեյ, *որ և* nr *շաղկապով միացած՝* դէյօր *«մինչև» <թրք.* دك dey, *ինչպես՝* դէյ իրիկուն *«մինչև երեկո»,* դէյօր նոն *«մինչև այնտեղ» և այլն։*

Խդար *«չափ» Պլ. <թրք.* قدر gadar *«չափ». վերցնում է սեռական խնդիր. ինչպես՝* Մատնոցի խտար գաւաթ մը. *բայց ասվում է* ասխդար, ադխդար, անխդար *«այսչափ, այդչափ, այնչափ»,* ի՞նչխդար *«ո՞րչափ»։ Նույնպես և Ննխ.* խդար, *որ և* խդա, խդայիգ, խդարիգ. *վերջինը գործածական է նաև Պլ.* խդարիգ՝ *իբրև փաղաքշական. ինչպես՝* սա՛խդարիգ *(մատով ցույց է տալիս) բան մը։*

Կաբաղ *«առջևը, առաջի, առաջ, նախքան». գործածական է Մրղ. <արև. թրք.* قباغ qabaġ *հոմանիշից։*

Կըման *«բացի» Ղրբ. թվում է թրք.։*

Ղաբաղարշու *«դեմուդեմը» Ղրբ. <թրք.* قارشو garšu *«դեմը»։*

Մադդէ *«բացի». առնում է բացառական խնդիր. <թրք. (իմա՛ արաբ.)* ماعدا mäada *«բացի»։*

Յան *«կողմը, կողքը» Երև., Մրղ. <թրք.* يان yan *հոմանիշից. որոշյալ հոդով՝* յա՛նը *(Մրղ.* յա՛նա). *ստանում է սեռական խնդիր. օրինակ՝* Սեղանի յանը, փէչի յանը *(վառարանի կողքին). կարող է և հոլովվել.* էս յանից, էն յանից. մի յանի վէրայ *և այլն։*

Ո՛ւչա, ո՛ւչի, նի՛ւչm, նի՛ւչի *«պատճառավ, համար» Ագլ. ինչպես՝* ֆիզ ո՛ւչի *«քո պատճառավ». սրանից է* ընդըրո՛ւչի *«որովհետև, նրա համար».— թվում է թե թրք.* ايچون ičun *«համար» բառից է։*

Չախ *«մինչև» Ննխ. <թրք.* چاغ čaγ *«ժամանակ». առնում է հոլով։*

Սավայի *«բացի» Երև.*= սվայի *Ագլ.*, սուվայ *Մրղ.* արաբ. سیوی sivay *«բացի», որ անցել է մեր բարբառներին՝ արև. Թրք.* savayi *ձևի միջոցով։ Վերցնում է բացառական խնդիր և կարող է լինել թե՛ նախադաս և թե՛ հետադաս. ինչպես՝* Սավայի էս շորից՝ մի ուրիշն էլ ունեմ. Քեզանից սավայի:

Սօղրա, սօղրամ *«հետո» Պլ. <Թրք.* صکره sonra *ձևից, որ հին արտասանությամբ հնչվում էր* սօնղրա *«հետո». վերցնում է բացառական խնդիր. ինչպես՝* Ուտելէն խմելէն սօղրա. ասկէ սօղրա. անկէ սօղրա: *Նույնը ունի Մրղ.* սօրա *ձևով. նշանակում է «հետո», բայց նաև «բացի». ինչպես՝* մարթէն սօրա *«բացի մարդուց»։*

Վերի *«ի վեր, հետէ». գործածական է Ննխ.* վէրի, վէրիէ՛ *ձևով. Նույնը ունենք Պոլսի բարբառում* բէրի *ձևով, որ հայտնապես Թրք.* برى beri *«ի վեր» հոմանիշից է փոխ առնված. ստանում է բացառական հոլով խնդիր. ինչպես՝* տասը տարիէն բէրի. էրկու սահաթէն բէրի. եփէն բէրի. *«որքան ժամանակէ ի վեր»։ Զարմանալի է, որ նույն բառը ո՛չ միայն Ննխ. հնչվում է վ-ով, այլև Ջղ. կա* վերայ *ձևով և «ի վեր» նշանակությամբ. ինչպես՝* չեփէ՞ն վերայ ա *«երբվանի՞ց ի վեր է».—* Էշերէն վերայ *«գիշերվանից ի վեր»։* Будагов, Срав. слов. *254 Թրք.* beru *ձևի դեմ չի հիշում որևիցե ձև, որ ունենա* v *նախաձայնը. ինչո՞ւ ուրեմն* b *դարձել է հայերենում* վ: *Ենթադրել պետք է ուրեմն, որ հյ.* ի վեր *կամ առանց նախդիրի* վեր *բառն է, որ Թրք.* beri *ձևի հետ խաչաձևմամբ դարձել է* վերի, վերայ:

5. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղդին *«այդ կողմը»,* ադդիէն *«այդ կողմից». կազմված է* այդ+դի *«կողմ» բառից. գործածական է միայն արևմտյան գրականում։*

Անդին *«այն կողմը»,* անդիէն *«այն կողմից». օրինակ՝* Պատէն անդին անցաւ. Լեռան անդիի երեսը. Անդիէն մէկը եկաւ. Անդիները մի՛ երթար. *Քիչ մը անդիօք նստէ.— Կազմված է* այն+դի *«կողմ» բառից. հատուկ է արևմտյան գրականին։*

Առանց, *№ 2։*

Առաջ, *№ 3. Այտն. 124 երկու իմաստները տարբերելու համար դնում է* յառաջ *(ժամանակով),* առաջ *(տեղով). ինչպես՝* Քեզմէ յառաջ եկայ. *Անոնցմէ առաջ անցայ։— Այժմ* յառաջ *ձևը գրաբար և հին է համարվում։*

Առջև, *№ 3. սրա փոխարեն արևմտյան գրականում գործածվում է նաև* առջի *(որ գրբ.* առաջի *բառի աղված ձևն է). բայց միշտ ստանում է հոդ. ինչպես՝ Պարիսպին առջին. քու առջիդ. վկաներու առջին։*

Ասդին *«այս կողմ»,* անդիէն *«յաս կողմից». կազմված է* այս+դի *«կողմ» բառից. հատուկ է արևմտյան գրականին. ինչպես՝* Բլրակէն ասդին, Անկէ ասդին. Ասդիէն անդիէն հաւաքեր է:

Բացի, *№ 6։*

Բոլորտիքը, *№ 22։*

Բուն. *ստանալով* ի *նախդիրը՝ գործածվում է իբրև նախադրություն՝ «ամբողջ» իմաստով. ինչպես՝* Օրն ի բուն, ձմեռն ի բուն, ցերեկն ի բուն, գիշերն ի բուն *(Այտն. 121)։*

Գաղտուկ. *ստանում է բացառական խնդիր. ինչպես՝* Մօրմէն գաղտուկ ճամբայ ելաւ *(Այտն. 124)։*

Դէմ. *ունի չորս նշանակություն. 1) դիմացը, ինչպես՝* Մեր տունը աղբիւրի դէմն է. *2) առաջը. ինչպես՝* Իշխանի դէմ դուրս եկան *(իշխանին դեմն ելան).* Արևի դեմ նստել են. *3) հակառակ, ինչպես՝* Ինձ դեմ են խօսում. *4) մոտերը, մոտավորապես այն ժամանակ. ինչպես՝* առաւօտեան դէմ, երեկոյեան դէմ. Գարնան դէմ օրերը կը սկսին երկարիլ:— *Տե՛ս և № 18։*

Դէպի, *№ 7։*

Դուրս *«արտաքոյ, արտաքս». առաջին իմաստով են՝* Դուրսը ման է գալիս. Դրսում ավելի հով է. Դրսից ձայն եկավ. *երկրորդ իմաստով են՝* Այս տնից դուրս ել, սենյակից դուրս կորիր, խանութից դուրս փախավ: *Կարելի է դնել նաև հոգնակի. ինչպես՝* Բանակի դրսերը ման է գալիս: *Սրանից է նաև* դրսև, *ինչպես ունենք* վերև, ներքև, առջև, յետև, ներսև, միջև:

Ետ, յետ, ետև, ետքը, ետին. *տե՛ս № 20. Այտն. 124 դնում է երկու իմաստով. ինչպես՝* Մեզմէ ետև մնաց *(տեղով).* Կերակրէն ետև հանգչէ *(ժամանակով). բայց միայն ժամանակի իմաստով է* Զքեզ տեսնելէն ետքը: *Նմանապես միայն դեպի իմաստով է* ետի, *որ ըստ Այտն. 122 կազմված է* առջի <*գրբ.* առաջի *բառի նմանությամբ և գործածվում է միշտ հոդով. ինչպես՝* Ծառերուն ետին. Գլխուս ետին. Քու ետիդ:

Զատ, *№ 6*

Իբրև, *№ 25*

Կողմ, *№ 10*

Հակառակ, № 18

Համար, № 27

Համեմատ, *ածական է և խնդիր առնելով դառնում է նախադրություն. ինչպես՝* Սրա ճամեմատ. Աշխատությանս ճամեմատ:

Հանդերձ, № 11

Հանդէպ, № 18

Հեռու, № 12

Հետ, № 8

Ձեռքով, ձեռօք, № 13

Մէջ, № 16

Մինչև, № 17

Միջոցով, միջոցաւ, № 13

Մօտ, № 15

Յետոյ, № 20

Նայելով, *թարգմանաբար թրք.* baqaraq *ձևից կազմված. համապատասխանում է գրաբարի* ըստ *նախդիրին. ինչպես՝* Ջերմութեան աստիճանին նայելով ծոն ապրիլն անկարելի կ'երևայ: *Սրա բացասականն է* չնայելով, *որ արևելյան գրականում կազմված է թարգմանաբար ռուս.* не смотря *«ֆր.* malgré *հակառակ» ձևից. ինչպես՝* Չնայելով բացառությունների շատության՝ կանոնը ստույգ է:

Ներս, *գրաբարի* ի ներքս *ձևից կրճատված. ինչպես՝* դռնէն ներս մտաւ. *բցռ.* Տանտիրանին ներսէն ճանեցին. *Հոգնակին լինում է* ներսերը. *ինչպես՝* Անտառին ներսերն էին ապաւինած:

Ներքև, № 21

Նկատմամբ *«մասին, վերաբերմամբ». ինչպես՝* Ձեր նկատմամբ բարեճան զռնվեց:

Նման, № 25

Շնորհիւ, *ի շնորհս,* № 24

Շուրջ, № 22

Որպէս, № 25

Չափ, № 23

Պատճառաւ, № 24

Պէս, № 25, *թե՛ արևմտյան և թե՛ արևելյան գրականում ստանում է* -ներ *մասնիկով հոգնակի. ինչպես՝ արևմտյան՝* Քեզի պէսները ինծի պէսներուն չեն ճաւնիր.— *արևելյան՝* Մեզ պեսներին ջուրն է տարել:

Վեր, ի վեր.— *Թեև հները այս երկուսի միջև զանազանություն չէին դնում, բայց նորերը առաջինով հասկանում են «դեպի բարձր», իսկ երկրորդով՝ «այն ժամանակից սկսած». ինչպես՝* ժայռերէն *(կամ* ժայռերից) վեր մագլցելով. Մանկութենէ ի վեր. Պզտիկուց ի վեր. Շաբաթէ մը ի վեր. Անկէ ի վեր *և այլն։ Քիչ անգամ ունինք նախդիրով և համարյա առաջին իմաստով՝* Երեսն ի վեր, Պատն ի վեր *և այլն։— Ավելին տե՛ս № 29։*

Վար *«դեպի ցած». ինչպես՝* Լեռնէն վար թաւալեցին. *Նախդիրով՝* ի վար. *ինչպես՝* Բերանս ի վար *(կամ* ի վայր). Ականջդ ի վար. Գետն ի վայր նաւեցին իջան:

Վրայ, *№ 28. սրանից՝* վրայօք *(այժմ ավելի սովորական է* վրայով) *«մասին». ինչպես՝* Այս խնդրի վրայօք կ'ուզէի լսել ձեր կարծիքը:

Տակ, *№ 21*

Տեղ, *№ 31*

Փոխան, փոխանակ, փոխարէն, *№ 30*

Քան, քան թէ, *№ 31*

Քով *«1. մոտը, կողքին. 2. համեմատությամբ». ինչպես՝*

—Հովիւն նստած ջրին քով՝
Կերգէր անուշ սրինգով:
—Նէ զիս իր քով նստեցուց
Գորգի վրայ դալարեայ:
—Նէրա քով վարդն որչափ
Էր անշուք ու գունաթափ *(Դուրյան)։*

6. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Աղագաւ, յաղագս

Ծագում են աղագ *բառից, որի առաջին նշանակությունն է «ճանապարհ». այս իմաստով մեկ անգամ ունի Ոսկ. Փիլիպ. 411.* Արտաքցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղագ լինի *«այգու պատի համար է ասում, որ քանդվելով՝ ամենքի ազատ անցուդարձի ճանապարհ է դառնում»։ Երկրորդաբար նշանակում է «հնարք, ճար, միջոց» (գործածված հետնաբար). ինչպես՝* Ելի աղագս գտանել *(դուրս գալու մի միջոց գտնել)։ Նույն բառը կա նաև* եղագ *ձևով՝ «ճամբա». Ոսկ. Եփես. 808 և Ես. «միջոց, հնար». Ագաթ. կա նաև*

եղանգ ձևով, որ գիտէ միայն ԱԲ։ Այս բոլորը ցույց է տալիս, որ բառի բուն ձևն է ղաւգ. իսկ ա և ե ձայնավորները հենարան են։

Այս աղագ բառի գործիականն է աղագաւ և հոգ. նախդրիվ հայցականն է յաղագս։ Հետնաբար գրված կա յաղակս Անկ. գիրք Նոր Կտ. էջ 360, 364, 367, 371, 375։ Երկուսն էլ նշանակում են «համար, պատճառաւ»։ Երկուսն էլ սակավ են գործածվում դասական շրջանում, իսկ հետին մատենագրության մեջ շատ հաճախ։ Դասական շրջանի գործածության պայմանները տե՛ս վասն բառի տակ։

Աղագաւ վերջնում է սեռական խնդիր և միշտ հետադաս է. ինչպես՝

Կարգի իմն աղագաւ յարեաց զնոսա յառակն. Ոսկ. Մ. Բ. 22

Քաղդէացւոց իմաստութեանն աղագաւ այսչափ ինչ. Եւս. Քր. Ա

Պատրանաց աղագաւ. Կոչեցաւ Նիկանովր այնորիկ աղագաւ. Խոր.

Նորին աղագաւ. Որոյ աղագաւ. Սորին վարկեալ աղագաւ. Պիտ.

Ձեր աղագաւ տանջեցայ. Ձեր աղագաւ ի վերայ փայտին բացախ արբի. Վրք. հրց. Ձ։

Կարող է գործածվել նաև վասն բառի հետ միասին. ինչպես և սակս, որոնք հոմանիշ են. օրինակ՝

Վասն այնր աղագաւ յոյժ աշխատի. Վրք. հրց. Բ։

Վասն այսորիկ աղագաւ. Վրք. հրց. Ա 631։

Սակս ո՞ր աղագաւ. Ճառընտ.։

Վասն ո՞յր աղագաւ ինճն ոչ մկրտէր. Ոսկ. Յովհ.։

Ոչ վասն աշակերտս զրաւելոյ աղագաւ. Ոսկ Գաղ.։

Յաղագս նախադրությունը նույնպես վերջնում է սեռական խնդիր և միշտ նախադաս է, հակառակ իր հոմանիշ և համարմատ աղագաւ ձևին, որ հետադաս է։ Երկուսը միասին տե՛ս հաջորդ օրինակում.

Յաղագս ձեր մարմնացայ, ձեր աղագաւ տանջեցայ. յաղագս ձեր թուք առի, վասն ձեր ապտակեցայ. յաղագս ձեր խաչեցայ. Եփր. Գալստ.։

Կարող է յ նախդիրը բաժանվել և նախորդ բառից առաջ անցնել. այս դեպքում յաղագս հետադաս է լինում, բայց այս ձևը շատ անսովոր է.

Մի՛ ինչ պատճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան աղագս. *Ա Տիմ. Ե 14.*

Յայն աղագս զմեզ զուր դատիք. *Եղիշ. Ը։*

Երկու ձևերից ո՛չ մեկը չի գործածվում այժմ ո՛չ գրական լեզվում, ոչ էլ բարբառներում, թեև մի քանի բարբառներում (Երև., Լ., ԼՀ., Ղզ., Ղբբ., Ղրգ., Սր., Տփ.) աղագ գործածական է «առջևը» և «առաջ» նշանակությամբ. օրինակ՝

Աղագս մի՛ կանգնիր:

Նրա աղագիցը փախչում էր:

Աղագ այստեղ մեծ քաղաք է եղել:

2. Առանց

Ծագում է անց (-անել) արմատից՝ առ նախդիրով. բուն նշանակությունն է «չեղած, զուրկ, որ չկա կամ չունի». գործ է ածվում սեռական խնդրով. ինչպես՝

Առանց իմ ոչինչ կարէք առնել:

Առանց թագաւորի, առանց իշխանի, կամ պատարագաց, յայտնութեանց:

Առանց նենգութեան է մանուկն:

Որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան. *Մատթ. Ե 32։*

Հաճախ համապատասխանում է ան- բացասական մասնիկին. ինչպես՝

Առանց երկիւղի (*=աներկիւղ*)։

Առանց նենգութեան (*=աննենգ*)։

Այր առանց պաճուճանաց (*=անպաճոյճ*)։

Առանց թագաւորի է մարախ (*=հն. անթագաւոր*)։

Արար գնա գլուխ խօսուն ի վերայ այնոցիկ՝ որ առանց բանից (*=անբան*) են. *Եփր. Ծն.*

Այսպես նաև Մշակ առանց ամօթոյ (*=անամաչ, որ տեղ չունի ամաչելու և ո՛չ թե անամոթ*)։

Այս իմաստով գործածական է հատկապես աներևույթի հետ. ինչպես՝

Քակս առանց ճնանելոյ (*=աննհանալի*)։

Առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն (*=անանց, անանցանելի*)։

Առանց ուրուք հալածելոյ (*այսինքն* առանց հալածելոյ ուրուք*=անհալած*)։

Առանց ճասանելոյ *(=անհաս)*։
Առանց շիջանելոյ *(=անշեջ)*։
Առանց պատասխանի տալոյ *(=անպատասխանի)*։
Առանց գող ական ճատանելոյ է բնակութիւնն *(տունը գողից ապահով է)*։

Երբեմն նշանակում է «թո՛ղ, չհաշված, բացի». ինչպես՝

Ամենայն ոգիք՝ առանց կանանց *(բոլորը՝ առանց հաշվելու կանանց)*։
Առանց արանցն կարգեցելոց *(բացի...)*։
Առանց ընծայից ծերոց։

Կամ նաև «արտաքոյ, դուրս, հակառակ». ինչպես՝

Առանց Աստուծոյ կամաց ի ծառոյն ճաշակել. *Եզն.*։

Երևի այս նույն բառից կազմված հետին հունաբան ձևեր են թանց *և* թարց, *որոնք նշանակում են «առանց, բացի, զատ». ինչպես՝*

Ոչ եթէ առանց մտաց և թանց բնութեան զմերն ընկալաւ ի կնոջէ. *Յովհ. Իմ.*։
Թարց միոյ երկրայութեան *(անկասկած)*. *Պիտ.*։

Միջին հայերենում շարունակվում է առանց *(Karst, 256)*։
Առանց *բառը կենդանի է արդի բարբառներում հետևյալ ձևերով.*

Ալշ., Ախց., Երև., Կր., Ղրբ., Մրղ., Ննխ., Շմ., Սեբ., Սչ., Սլմ., Վն., Տիգ. առանց
Ջղ. առանց, առանցի
Հճ. Տփ. արանց
Ակն. առօնց
Հմշ. օռօնց
Ագլ., Խրբ. ըռընց
Յղ. ըռունց, ուռունց
Ղրդ. ուռուց
Ասլ. ըռաշ։

Գրական լեզուն գիտի միշտ առանց *ձևը, որ առնում է սեռական հոլով և գոյականին նախադաս է լինում. ինչպես՝*

Առանց ընկերի. Առանց բան տեսնելու. Առանց ճացի ու ջրի։ *(Դերանունով լինում է տրական.* առանց ինձ, քեզ, նրան, մեզ)։
Առանց մարելու, լվանալու և կեղևը ճանելու կերավ։

Կովկասի ժողովրդական լեզվով հաճախ առանց *գործածվում է հայցական խնդրով. ինչպես՝*

Առանց ճաշ, առանց աղ, առանց ո՛չ մի բան:
Ծորերը առանց կարել մնաց:

Այսպիսի գործածության հին օրինակը գտնում եմ Առաք. Լծ. սահմ. 527.

Ունդ առանց մայր ի հօրէ կին ծնաւ, իսկ աստ առանց հայր ի մօրէ այր ծնաւ:

Երևանի բարբառում ստանում է ուղ.-հյց. հոլով. առանց տուն, առանց ճաշ: *Սա այնքան է տարածվել, որ նույնիսկ Լեոն գործ է ածել իր «Անի» աշխատության մեջ, էջ 222.* Քաղաքն… առանց իսլամական աղօթարան մնաց:

3. Առաջի, ընդ առաջ, յառաջ, առաջոյ

Այս բառերը կազմված են աչ բառից՝ առ *նախդիրով. բայց այս նախդիրը այնպես լավ միացել է արմատին, որ իբրև մի բառ համարվելով՝ կարելի է եղել ավելացնել* ընդ *և* յ *նախդիրները։*

Երկու իմաստ են ներկայացնում սրանք. 1) տեղի համար՝ առջևը. 2) ժամանակի համար՝ առաջ, նախ քան։ Այսպես է նաև ուրիշ լեզուների մեջ. ինչպես՝ լտ. ente *«առաջ և առջևը», ֆրանս.* devant *«առջև»,* avant *«առաջ», ռուս.* перед *«առաջ և առջև» (ինչպես՝* перед вечером *«նախ քան երեկոյ»,* перед домом *«տան առաջ»), պրս.* پیش piš, *թրք.* ileri *«առաջ և առջևը»։*

Առաջի *նշանակում է «առջևը, առջևից, ընդդեմ կամ հակառակ, մեկի աչքում»։ Ընդհանրապես նախադաս է գոյականին, երբեմն էլ կարող է լինել հետադաս. առնում է սեռական-խնդիր. ինչպես՝*

Առաջի ձեր *կամ* Ձեր առաջի:
Առաջի ձեր դատեցայ:
Քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի. *Գրծ. ԻՁ 2 («առջևը»)։*
Ես երբայց առաջի քո *(«առջևից»)։*
Առաջի ամենակալին ընդվզեցաւ *(«դեմ, հակառակ»)։*
Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ *(«աչքում»)։*

Ընդ առաջ *նշանակում է «առջևը, դեպի առջևը, դեմը». նախադաս է միշտ և ստանում է սեռական խնդիր. ինչպես՝*

Ելանիցէ ընդ առաջ իմ:
Ել Յայէլ ընդ առաջ նորա. *(կամ նաև տրական խնդրով՝* Ելին նմա ընդ առաջ, *կամ* ընդ առաջ եղեն նմա):
Յոտն եկաց արքայ ընդ առաջ նորա:
Առաքեաց զքեզ ընդ առաջ իմ:

Յառաջ նշանակում է 1) «նախ, ավելի շուտ» և 2) «մի կետից սկսելով և ավելի առաջ տանելով»: Առաջին դեպքում ստանում է քան *նախդիրով հայցական խնդիր, երկրորդ դեպքում միանում է բացառականի հետ. օրինակ՝*

1) Որ գործեցաւ յառաջ քան զձեզ:
Երկու ամօք յառաջ քան զգետնաշարժն:
2) Մինչև ի Սամուէլ և անտի յառաջ. *Գրծ. ԺԳ 21:*
Յեգիպտոսէ և յառաջ:
Յութերորդ օրէն և յառաջ:

Ունենք նաև առաջոյ, *որ իբրև մակբայ է գործածվում «առջևից» իմաստով. կա սակայն* առաջոյ քան *նախադրությունը «առաջուց» իմաստով. ինչպես՝* գտանես զնա անդ առաջոյ քան զքեզ. *Սիր. ԺԲ 17.* Այրուձի գումարեցէք առաջոյ քան զիս և յանդիման լիջիք ինձ յԱպար աշխարհի. *Եղիշ.:*

Բարբառներում և գրականում երկու իմաստները զանազանելու համար դիմել են խնդրառության. տեղի իմաստով գործ են ածում սեռական խնդիր, ժամանակի իմաստով՝ բացառական: Բացի սրանից բարբառներից մի քանիսը, ինչպես և արևմտյան գրականը, բառի ձևի մեջ էլ մտցրել են որոշ տարբերություն: Այսպես, արևմտյան գրականում ժամանակի համար գործ ենք ածում առաջ, *տեղի համար՝* առջև. *օրինակ՝*

Ասկէ առաջ. Մեզմէ հինգ տարի առաջ. Քեզմէ առաջ ուրիշը կայ:
Քու առջևդ կանգներ եմ. Անոր առջևը ասիկա ի՞նչ է որ...
Տունին առջև բարձր ծառ մը կայ:

Իսկ արևելյան գրականը երկու դեպքումն էլ միևնույն ձևով ասում է.

Մեզնից շատ առաջ կար մի թագավոր:
Քո առաջ կանգնել եմ. Նրա առաջ սա ի՞նչ է որ... Տան առաջ մի բարձր ծառ կա:

Բարբառային ձևերն հետևյալներն են.

1) Ագլ. ա՛ռաշ, յա՛ռաշ, *Ախց., Գոր., Երև., Կր., Հմշ., Ղրբ., Նխ., Շմ., Պլ., Սչ.* առաշ, *Տիգ.* առաշ, էռաշ, *Ալշ.* յառէ՛չ, *Զթ.* յա-

ռէշ., *Մկ.* հտռաչ, *Մշ.* յառաճ, *Խրբ., Սեբ., Սլմ.* տռտչ, *Մրղ.* տռտնչ, *Վն.* տռտն, *Տփ.* ա՛րաչ, *Զթ.* եռտչ, *Ակն, Ռ.* եռեչ, *Ասլ.* տռաշ, *Հվր.* հառաշկ:

2) Ախց., Ննխ., Պլ. առչէվ, *Սլմ.* տռչեվ, *Տփ.* արչիվը, *Ակն.* էռչէվ, *Ալշ., Մշ.* ըառջ՛եվ, *Հճ.* առջ՛եվ, *Ոզմ.* հէրչիվ, *Մկ.* հէրճիվ, *Հմշ.* այչիվ:

Կրկին նշանակության մեջ տարբերություն դնելու համար Հճ. ղանազանում է առօչ *«տեղով առաջ»,* առաչ *«ժամանակով առաջ», իսկ Գոր., Ղրդ.* ըռա՛չին, *Վն.* տռճին *գործ են ածվում տեղի համար (=Պլ.* առջին):

4. Առընթեր

Կազմված է առ *և* ընդ *նախդիրներով* թեր *(<Հնխ.* pter *) արմատից և նշանակում է «մոտը, կողքը, քովը»: Իբրև նախադրություն առնում է տրական խնդիր և միշտ նախադաս է. ինչպես՝*

Դիցէ առընթեր սեղանոյն. *Ղևտ. Զ 10:*
Առիւծն կայր առընթեր մեռելոյն. *Գ Թագ. ԺԳ 25:*
Որ առընթեր կայ սահմանացն Մովաբու. *Թուոց ԻԱ 15:*
Երկու առիւծունք կային առընթեր ձեռացն. *Գ Թագ. Ժ 19:*
Առընթեր նմա զճիւղն դնեն. *Եզն.*
Յետ դնելոյ զսուսա սյմենեսին առընթեր միմեանց. *Եւս. Քր. Ա:*

Տրական խնդիրը երևում է Եզնիկից և ուշ ժամանակ գրված հեղինակներից. ինչպես՝

Եւ այլքն առընթեր նմին աղօթէին. *Լամբ.*
Առընթեր դմա է հատուցանել մահու դատաստան. *Պիտ.:*
Պատգամաւորն անցեալ նստէր առընթեր ինձ:

Ջնջված է միջին հայերենում և արդի հայերենում:

5. Արտաքոյ, արտաքս

Նշանակում է «դուրս, դուրսը, վեր կամ հեռու». ստանում է սեռական խնդիր և լինում է միշտ նախադաս. ինչպես՝

Կացին արտաքոյ դրանն:
Եդին արտաքոյ քաղաքին. *Ծննդ. ԺԹ. 16:*
Արտաքոյ եղբարց քոց. *Ծննդ. ԽԸ 22:*
Այրեսցեն արտաքոյ բանակին. *Ել. ԻԹ 14:*

Արտաքոյ վարագուրի խորանին. *Ել. Խ 20։*

Մարգարէ սուտ արտաքոյ մտաց իւրոց եղև. *Եւս. Պատմ. Ե 17։*

Արտաքոյ զօրութեան իմոյ է այս. *Եւս. Պատմ. Ա 1։*

Կարող է ստանալ նաև քան զ *նախադրությունը՝ հայցական խնդրով. ինչպես՝*

Հանին զնա արտաքոյ քան զայգին. *Մատթ. ԻԱ 39։*
Արտաքոյ քան զբանակն. *Ղևտ. Ժ 4։*
Արտաքոյ քայ զսեղանն. *Յես. ԻԲ 29։*
Այլ Աստուած արտաքոյ քան զնա. *Եզն.։*
Արտաքոյ քան զսեղանն. *Յես. ԻԲ 29։*
Պատուէին զնա արտաքոյ քան զարժանն. *Եւս. Պատմ. Ե 16։*

Գտնում եմ նաև բացառական խնդրով, ինչպես՝

Հանէք զդա արտաքոյ ի տանէդ. *Բ Մնաց. ԻԳ 14։*

Իբրև նախադրություն կա գործածված նաև արտաքս *մակբայը՝ սեռական խնդրով. ինչպես՝*

Զխորխն խոզի արտաքս մարմնոյ իւրոյ ի բաց ընկենոյր. *Ագաթ.։*
Արտաքս խորանին կալով. *Լամբ. Պտրգ.*
Եւ ես անպարտ և արտաքս մեղադրութեան գնացից. *Յովհ. Կթղ.*

Նույնը բացառական հոլովով. ինչպես՝

Հանէք զամենեսին արտաքս յինէն. *Ծննդ. ԽԵ 1։*
Ել Մովսէս ի Փարաւոնէ արտաքս. *Ել. Թ 33։*
Մի՛ հանիցէք ի մսոյ անտի արտաքս. *Ել. ԺԲ 46։*
Հանէ՛ք զամենայն այր յինէն արտաքս. *Բ Թագ. ԺԳ 9։*
Հանին արտաքս զամենայն այր ի նմանէ. *Բ Թագ. ԺԳ 10։*
Հա՛ն զդա յինէն արտաքս. *Բ Թագ. ԺԳ 17։*

Բայց ավելի կանոնավոր է արտաքս քան՝ *իբրև նախադրություն, հայցական հոլովով. օրինակ՝*

Զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն. *Մարկ. Ե 10։*
Չիք արարած բանաւոր արտաքս քան զայս երիս չոկս. *Եզն.։*
Իբրև ել նա արտաքս քան զդրունն. *Մատթ. ԻԶ 71։*

Երկուսն էլ անգործածական են արդի լեզվում։

6. Բաց

Կազմված է բանալ բայից և նույն է բաց *«ոչ փակ, ազատ տեղ» բառի հետ։ Իբրև նախադրություն նշանակում է «զատ, չոկ, չհաշված». միշտ նախադաս է և առնում է բացառական խնդիր. օրինակ՝*

Բաց յերկրէ քրմացն. *Ծննդ. ԽԵ 22, 26։*
Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն. *Ել. Ի 3։*
Ոչ գոյր նորա բաց ի նմանէ ուստր կամ դուստր. *Դատ. ԺԱ 34։*
Ոչ գոյ բաց ի քէն մերձաւոր. *Հռութ Դ 4։*
Ո՞վ է հզօր բաց ի քէն. *Բ Թագ. ԻԲ 32։*
Բաց ի մէնջ երկոցունց. *Գ Թագ. Գ 18։*
Բաց յայնմանէ զորս տուեալ էր նորա. *Գ Թագ. Ժ 13։*
Բաց յայնցանէ զորս ետ արքայ. *Բ Մնաց. ԺԼ 19։*

Գրված կա նաև բայց *ձևով. ինչպես՝*

Զիք ինչ զատեալ յինէն բայց ի քէն. *Ծննդ. ԼԹ 9։*
Բայց յինէն այլ աստուած քեզ մի լիցի. *Եզն. 245։*
Ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան. *Յովհ. ԺԷ 12։*

Սակայն այս ձևը շատ հազվագյուտ է։ Համաբարբառը այս իմաստով դնում է Աստվածաշնչից 24 օրինակ, որոնցից միայն մեկն է բայց *ձևով։ Ես կարծում եմ, որ հարազատ ձևն է* բաց. *իմաստի զարգացումը միշտ այն է՝ ինչ որ* զատ: *Այս բառը նշանակում է ժողովրդական լեզվով «չոկ, հեռու» և դարձել է նախադրություն՝ «բացի» իմաստով. նույնպես և* բաց *նշանակում է «հեռու», ինչպես ցույց է տալիս* բացազոյն *«ավելի հեռու». և այս նույն բառը դարձել է նախադրություն։ Հետինները դիտմամբ կամ սխալմամբ շփոթել են* բայց *շաղկապի հետ, ելնելով* բայց *միայն ձևից. դրա համար էլ* բայց *«բացի» ըստ ՆՀԲ ավելի շատ է հետին գրողների մոտ։*

Միջին դարում բաց ի *ընկավ գործածությունից և նրա տեղ անցավ* զարթ, զարթէլ (Karst, *255). այժմ այս ձևն էլ չնչված է. բարբառներում ընդհանուր ընդունված է* զատ *ձևը, տեղ-տեղ էլ* չոկ:

Գրական լեզուն վերակենդանացրեց բաց ի *ձևը, որ նախապես գրվում էր անջատ. այսպես է ուսուցանում նաև Այտն. 120 և օրինակ է տալիս՝*

Բաց ի վտանգներէն. Բաց ի մեծ չան ընելէն:

Այժմ բառն ու նախդիրը միացած՝ գրվում է բացի, ընդհանրապես նախադաս է, երբեմն էլ հետադաս (այս վերջինը նմանողությամբ հոմանիշ զատ բառի) և վերցնում է բացառական խնդիր. ինչպես՝

Բացի մէկից, բացի այս երեքից:
Բացի ուտելուց և քնելուց՝ ոչինչ չի անում:

Կամ՝

Ուտելուց բացի:
Այդ երեքից բացի:

Կովկասում այժմ ոմանք սկսել են գործածել հայցական հոլով խնդիր. ինչպես՝

Բացի այդ, Բացի այդ երկուսը և այլն։ Խոսելի ձև է։

Ավելի սովորական և ժողովրդական ձև է զատ, որ վերցնում է բացառական խնդիր և միշտ հետադաս է։ (Սրա նմանությամբ է, որ բացի նախադրությունն էլ երբեմն դրվում է հետադաս). ինչպես՝

Քեզմէ զատ, ասկէ զատ, այս երկուքէն զատ:
Սրանից զատ, այս երկուսից զատ:

Այտն. 120 ասում է, որ գործ է ածվում նաև ի զատ ձևով. օրինակ՝ Քեզմէ ի զատ: Պոլսի հին գավառական ձևն է, որ հիմա ջնջված է թե՛ բարբառից և թե՛ գրականից։

Բացի բառը երբեմն երկդիմի իմաստ է ստանում աշխարհաբարում. օրինակ՝ Բացի ինձանից ոչ ոք չգիտե: Այս նախադասությունը նշանակում է 1) միայն ես գիտեմ, ուրիշը չգիտե. 2) ոչ միայն ես չգիտեմ, այլև ուրիշներն էլ չգիտեն։ Իմաստը ճշտելու համար պիտի դնել էլ. Բացի ինձանից, էլ ոչ ոք չգիտե. Բացի ինձանից, ոչ ոք էլ չգիտե:

7. Դէպ

Նշանակում է «դեպի, այնինչ կողմը ուղղված»։ Ջախջյան չի հիշում. ՆՀԲ տալիս է Մեսրոպյան շրջանի միայն մի օրինակ. Յորժամ կշիռ դէպ արեգական պատանիցէ (Եզն. 201)։ Համարաբերան էլ չունի դէպ: ՆՀԲ համարում է նախադրություն՝ տրական խնդրով, ինչպես ցույց է տալիս Եզնիկի օրինակը։ Ուշ շրջանից ունի 3 օրինակ. Փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց. Խոր. Ա 10. Ի միջօրէի դէպ արեգականն ընկենով. Ճառընտ. Խելացն տեղի դէպ գլխոյն է. Փիլ. Եղ. Բ 224. այս բոլորը տրական խնդրով են։

Նախդրիվ հայցական խնդրով է Փարպ. Դէպ 'ի մեզ դիմեալ գան, *որ ՆՀԲ համարում է ռամիկ. իսկ Գարագաշյան (Գործ. քեր. Պլ. 1890, 135) ընդունում է* դէպ *նախադրությունը* ի *նախդիրով և օրինակ է տալիս՝* Նաւէաւ դէպ յարևելս:

Բարբառներում սովորական է դէպ *նախադրությունը և ստացել է հետևյալ ձևերը.*

Նոխ., Պլ. դէբի, *Սչ.* դ'է'բի. *Տփ.* դիբա, *Շմ.* տիբա, *Ղրբ.* դիբի՛, բըդի՛, *Ջղ.* դաբ, *Ագլ.* դի՛բի, դիբինտ՛, դընբըըմտ՛, դինբ՛ինտ *(ներն այս վերջին երկուսը այստեղ են պատկանում), Ալշ.* դ'էմի, *Մշ.* դ'էմ, *Երև.* դըա:

Այս բոլորը նշանակում են «դեպի»։

Սրանք, ինչպես և գրականի ընդունած դէպի *ձևը, կազմված են* դէպ *բառից+հաջորդ գոյականի* ի *նախդիրը, որ եկել միացել է նախադրության, ճիշտ ինչպես* բացի, *որ է* բաց ի: *Երկու դեպքումն էլ նախդիրը դարձել է արմատական։ Անցյալ դարում դեռ անջատ դրում էին* դէպ ի, *ինչպես և ուսուցանում է Այտն. 120։ Բայց այժմ այլևս վերացված է։*

Դեպի նախադաս է և պահանջում է հայցական խնդիր. ինչպես՝ դէպի տուն, դէպի մեզ *և այլն։ Այտն. անդ, համարում է տրական և տալիս է օրինակ* դէպ ի անոնց, դէպ ի մեզի կուգային: *Այս օրինակները արդի հայերենի համար ճիշտ չեն։*

8. Զկնի, զհետ (հետէ)

Այս երկուսը հոմանիշ են և նշանակում են «հետևից, ետևից». ստանում են սեռական խնդիր և նախադաս են սովորաբար. ինչպես՝

Եկայք զկնի իմ:
Որ զկնին իմ գայ:
Զդուռն ձգեաց զկնի իւր:
Գնաց զկնի նորա:
Զկնի վարագուրին:
Արձակեաց զաղաւնին զհետ ղեբայպ իւրոց:
Աղաղակէ զհետ մեր:

Զկնի *և* զհետ *կազմված լինելով* զ *նախդիրով, կարող է այս նախդիրը բաժանվել և կցվել նախորդ խնդրին. ինչպես՝*

Զմեր կնի ոչ շրջէր:
Մի զմիոյ կնի կցեալ:

Քանզի զնորին կնի ածէ. *Կիւրղ. Ել.*։
Քանզի ասէ զնորին կնի. *Կիւրղ. Թգ.*։
Զմիմեանց կնի կարգեալ տողեցին. *Ագաթ.*։
Զառաքելոցն նետ պարտ է երթալ. *Ոսկ. Գաղ.*
Զնորին նետ զնովիմբ ածեալ ասէ. *Կիւրղ. Ել.*։

Կարող է նաև նախդիրը կրկնվել թե՛ նախադրության և թե՛ խնդրի վրա.

Զերիս ամս՝ ամ զամի զկնի:
Զփառաց զկնի արձակեաց զիս յազգսն:
Զմիմեանց զկնի գային. *Խոր.*։
Զորոց զնետ երթայ և այն. *Կիւրղ. Ծն.*։
Այր զեղբօր զնետ երթիցէ. *Յոբ ԽԱ 7*։

Զկնի *բառը տեղ-տեղ կարելի է հասկանալ նաև «հետո» (ժամանակի իմաստով), ինչպես որ* զնետ *բառն էլ նշանակում է «հետ, միասին» Ոսկ. Յովհ. Ա 37՝* Զնաց ոչ առաք զնետ մեր: *Սակայն երևի սա հետին գրչագրական ուղղում է. հմմտ.* Պակասեաց ջուրն և արմաւն, զոր ունէի զնետ իմ *(այն է ովկ.* նետ):

Զնետ *բառի հետ նույնարմատ են* նետէ *և* նետև. *առաջինը գործածվում է իբր անկախ բառ, երկրորդը՝ միայն* այսունետև *և* այնունետև *մակբայների և* նետևել, նետևակ *և այլն բառերի մեջ։ Բոլորն էլ ծագում են հնխ.* pedo *«ոտք, հետք» բառից.* զնետ *հայցական հոլովն է,* նետէ՛ *բացառական և* -նետև՛ *գործիական։*

*Հ*նետէ *նշանակում է «ի վեր, սկսած այն ժամանակից». վերցնում է բացառական խնդիր և միշտ հետադաս է. օրինակ՝*

Ի սկզբանէ նետէ. յԱդամայ նետէ:
Ի վաղուց նետէ *«շատոնց, շատոնց ի վեր»*։
Ի ննոց ժամանակաց նետէ. *Գ Մակ. Գ 11*։
Յաւուրցն ժամանակաց նետէ, յորմէ... *Ա Մակ. Ա 12*։
Յայնմ ժամանակաց նետէ. *Ա Եզր. Զ 20*։
Յայգուէ իսկ նետէ անապակին տան զանձինս. *Ոսկ. Ես.*։
Զմարգարէսն ամենայն ի Սամուէլէ նետէ. *Ոսկ. Յովհ.*։

Աշխարհաբարում և բարբառներում զկնի, զնետ, նետէ *բոլորովին չնչված են. մնում են գրականում* այսունետև, այնունետև *իբրև մակբայ. և բոլորի փոխարեն ձևացել է* նետ *բառը, որ նշանակում է «միասին, միատեղ»*։

Միջին հայերենում գործածական էին նետ *«անգամ»,* նետ մի այլ *«նորից, է՛լ մի անգամ»,* ի նետ, նետ *«միասին, միևնույն ժա-*

մանակ, դրա վրա, դրանից հետո», ի հետ ի հետ *կամ* ի հետ ու ի հետ *«հետզհետե, փոքր առ փոքր»* (Karst, *254—255) ձևերը։*

Արդի բարբառներում կա հետ *«անգամ» ձևը. ինչպես՝* երկու հետ, հինգ հետ. *Նաև* խետ. *ինչպես՝* էրկու խետ, խինգ խետ *«երկու անգամ, հինգ անգամ»։ Բայց ընդհանուր տարածված է* հետ *«միասին» բառը, որի գավառական ձևերն են.*

Ախց., Երև. հէտ, *Ալշ.* հեդ, *Մշ.* հեդ, հըտ, *Խրբ., Հճ., Ննխ., Պլ., Սեբ., Սչ* հէդ, *Ասլ.* հէ՛դ, հէ՛*, *Ագլ.* հիտ, *Հմշ. Սվեդ.* հիդ, *Տփ.* հիդ, իդ, *Վն.* խետ, *Ջղ., Սլմ.* խէտ, *Ոզմ.* խէ՛տ, *Մկ.* խիտ, *սկիզբը ավելացնելով* նի *մասնիկը, Գոր. Ղրբ.* նըհէտ, *դիմորոշ հոդերով միացած՝ Շմ.* հէտնաս, հէտնատ, հէտնէն *«հետս, հետդ, հետը». վերջածայնը կորցնելով՝ Մկ.* խտ, *Ոզմ.* խա. *ինչպես՝ Մկ.* խտճի *«ինձ հետ»,* խտք՛ի *«քեզ հետ», Ոզմ.* խաձէ՛ *«ինձ հետ»,* խաքի *«քեզ հետ»։*

Սրանց վրա պետք է ավելացնել Խտչ. հետրար *«հետ իրար, իրար հետ». Նույնը ուրիշ բարբառներով լինում է՝ Հմշ.* հիտրար, *Ք.* հէյրանց, *Զրս.* հետիրաց, *Մշկ.* հետրանց, *Ալշ., Բլ., Մշ., Վն., Տիգ.* հիտրաց, *Ակն.* հիրաց, հերացուկ, *Մկ., Վն.* հտրաց, *Շտ.* հտրանց, *և վերջապես Ջղ.* խտուր *(<հետ իւր), որ գործածական է սովորական «հետ» նշանակությամբ, կցվելով ամեն դեմքի հետ։*

Գրական լեզվում հետ *նախադրությունը վերցնում է սեռական խնդիր. ինչպես՝* սրա հետ, նրա հետ, մարդու հետ, իր եղբոր հետ, ո՞ւմ հետ. Որսորդների հետ համբայ ընկաւ. *բայց* ես, մենք, դու, դուք *դերանունների հետ դրվում է տրական խնդրով. ինչպես՝* ինձ հետ, մեզ հետ, քեզ հետ, ձեզ հետ:

9. Լու ի լու

Լու *«լսել» արմատից է և նշանակում է «լսելի ձևով, այնպես որ ուրիշը կամ ուրիշներն էլ լսեն»։ Իբրև նախադրություն գործ է ածվում ոչ հաճախ. դրվում է նախադաս և վերցնում է տրական խնդիր. օրինակ՝*

Ասէ լու ի լու որդւոցն Քետայ. *Ծննդ. ԻԳ 10։*

Պատմեցից ձեզ լու ի լու. *Յոբ ԺԳ 17։*

Ասացից ձեզ լու ի լու. Յոբ. *ԼԲ 11։*

Լու ի լու ամենայն ժողովրդեանն ասէ ցաշակերտսն. *Ղուկ. Ի 45։*

Եւ տաէ ցնոսա ինձ լու ի լու. *Եզեկ. Թ 5։*
Աստուած ցՄովսէս աաէ՝ Լու ի լու Հրէիցն. *Ոսկ. Մ. Բ. 10։*
Գրաբարում քիչ գործածական, վաղուց չնչված է լեզվից։

10. Կողմն, կոյս

Այս երկու հոմանիշները նախդիրվ հայցական, ներգոյական և բացառական հոլովներով գործածվում են իբրև նախադրություն. Նրանք հետադաս են և ունեն այն զարմանալի հատկությունը, որ իրենց խնդիրը փոխանակ սեռական հոլով դրվելու, ստանում է կողմն *և* կոյս *բառերի հոլովը. օրինակ՝ «դարձավ կնոջ կողմը», որ պիտի լիներ սովորական լեզվով* Դարձաւ ի կնոջ կողմն, *դառնում է* Դարձաւ ի կինն կողմն: *Նույնպես «իմ կողմից», որ ըստ սովորականին պիտի լիներ* յիմմէ կողմանէ, *դառնում է* յինէն կողմանէ: *Այսպես և «տան կողմից», որ սովորական լեզվով պիտի լիներ* ի կողմանէ տան *կամ* ի տան կողմանէ, *դառնում է* ի տանէ կողմանէ: *Այս զարմանալի երևույթը, որ կոչվում է* նոլովական ձգողություն, *մենք այստեղ քննության չենք առնում և թողնում ենք Շարահյուսության բաժնին։ Իսկ այստեղ կբավականանանք տալով մի քանի օրինակներ.*

Դարձաւ ի կինն կողմն *«կնոջ կողմը դարձաւ»։*
Դարձաւ ի թիկունս կոյս *«դեպի ետև դարձաւ»։*
Յափն կոյս *«դեպի ափը»։*
Յարևելս կոյս *«դեպի արևելք»։*
Ի տանէ կողմանէ *«տան կողմից»։*
Յինէն կողմանէ *«իմ կողմից»։*
Ի քէն կուսէ *«քո կողմից»։*
Ի մէնջ կուսէ *«մեր կողմից»։*
Ի Գանձակէ կուսէ *«Գանձակի կողմից»։*
Յարևմտից կուսէ *«արևմուտքի կողմից»։*
ՅԱրևմտից կողմանէ » »
Յորմէ կուսէ արեգակն իջէ, յայնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել. *Եզն. 200։*

Ասում են նաև՝

Ի մեր կոյս է *«մեր կողմն է»։*
Ի ձեր կողմն է *«ձեր կողմն է»։*
Ի Տեառն կողմն *(Տիրոջ կողմը)։*
Ի Թերէ Իսրայելի *(Իսրայելի կողմից)։*

Աշխարհաբարում նման երևույթ չկա. կոյս բառը ջնջված է և կողմ վերցնում է սովորական սեռական խնդիր, ինչպես վերի օրինակներում։

11. Հանդերձ

Ծագմամբ նույն է հանդերձ *«զգեստ և այլն» գոյականի հետ. երկուսը միասին գործածված են նորագյուտ Բ Մնաց. Ե 12.* Եղբարք իւրեանց հանդերձ ի հանդերձ բեհեզեղէն: *(Մյուս թարգմանության մեջ ձևափոխված է այսպես.* Ու յեղբարցն նոցա, որք զգեցեալ էին զպատմուճանս բեհեզեղէնս):

Իբրև նախադրություն ստանում է գործիական խնդիր և գոյականից կարող է լինել թե՛ նախադաս և թե՛ հետադաս։ Երբ գործածվում է անձ ցույց տվող բառերի հետ, բնականաբար թարգմանվում է «հետ, միասին, միատեղ», իսկ երբ իրերի հետ է գործածվում, գործիականի իմաստ է ստանում. օրինակ՝

Երիտասարդօք հանդերձ երթիցուք. *Ել. Ժ 9։*
Ամենայն ընտանեօք իւրովք հանդերձ. *Ծնթ. ԺԶ 18։*
Ելին գանձիւ զօրօք հանդերձ. *Ա Եզր. Բ 30։*
Շինեսցեն հանդերձ Զօրաբաբելիւ զքաղաքն. *Ա Եզր. Դ 48։*
Հանգերձ մարգարէիւքն Տեառն. *Ա Եզր. Զ 2։*
Հանդերձ ընկերօք իւրեանց առցեն. *Բ Եզր. Ա 4։*
Հանդերձ և այլ ծառայիւք. *Բ Եզր. Դ 7։*
Կանամբք և որդւովք հանդերձ. *Ծնթ. ԺԳ 6։*
Զիսրայէլ քև հանդերձ։
Տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ՝ մարբն իւրով. *Մատթ. Բ 11։*
Յեքոնիաւ հանդերձ՝ արքայիւն Հրէաստանի. *Ծնթ. ԺԱ 4։*
Դաթուրաւ հանդերձ և ընկերօք նորա. *Ծնթ. Գ 1։*

Իրերի հետ են գործածված՝

Հանդերձ ցանկալի սպասուք. *Բ Մնաց. ԼԶ 10։*
Հանդերձ գանձիւ տանն Տեառն. *Ա Եզր. Ա 45։*
Հանդերձ կիտուածովք արծաթոյ. *Երգ Ա 10։*
Արս հանդերձ զինու. *Նեեմ. Դ 13։*
Հանդերձ նուագարանօք և փողովք. *Ա Եզր. Ե 59։*
Հանդերձ երկաթի կապանօք. *Խոր. Բ է։*

Հետին հայերենում գործածված է սեռ.-տրկ. հոլովով. ինչպես՝

Ընծայ Ադամ հանդերձ Եւայի. *Գնձ.։*

Հանդերձ այսօրիկ. *Պղատ. Օրին. ԺԲ*։
Հանդերձ ամենայն ստացուածոց վնասուց. *Պիտ.*։

(Իսկ ՆՀԲ-ի հիշած օրինակը՝ Հանդերձ առանձինն մտից և ռոճկաց. *Խոր. Բ 21՝ ուղղել Խոր. Բ-ը և կարդալ* Հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց):

Միջին հայերենում ջնջված է այս նախադրությունը. բարբառներում ո՛չ մի հետք չկա. գրականում վերակենդանացել է նորից. սովորական ձևեր են՝

Այսու հանդերձ *«սրա հետ միասին, սակայն»*։
Հանդերձ ընտանեօք *կամ* ընտանեօք հանդերձ:
Այս բոլորը իմանալով հանդերձ, դարձյալ պնդեցին իրենց խոսքի վրա:

12. Հեռի

Միևնույն հեռի ածականն է, որ գործածվում է իբրև նախադրություն, ստանում է բացառական խնդիր և միշտ նախադաս է. ինչպես՝

Ո՛չ հեռի ի քէն. *Բ Օր. Լ 11*։
Հեռի՛ի մեղաւորաց փրկութիւն. *Սաղմ. ՃԺԸ 155*։
Հեռի եմ ի գիտութենէ. *Առ. ԺԳ 19*։
Չէին հեռի ի ցամաքէն:
Ոչինչ կարի հեռի էր ի տանէն:
Հեռի ի տանէ և ի բարեկամաց:
Հեռի յամպարշտաց:

Բարբառներում պահված է հեռի *կամ* հեռու *ձևով. այսպես՝ Շմ., Ցղ.* հէռի, *Ագլ.* հո՛ռի *Ջղ.* խեռի, *Խրբ.* հռռի, *Ղրբ.* հէ՛ռռէ, *Մժ.* յէռռէ, *Ախց., Գոր., Երև., Կր., Հմշ., Ննխ., Պլ., Սչ.,* հէռու, *Տիգ.* հէռու, խօռու, *ՀՃ.* հէրու, *Սվեդ.* հիռօօ, *Ալշ., Մշ.* հէռուն, *Տփ.* հի՛-րու, *Սեբ.* հ ռռու, *ՋԲ.* խօռու *և այլն*։

Գրական լեզվում ընդունված է միայն հեռու *ձևը, հետադաս է և առնում է բացառական խնդիր.*

Ամէն վտանգէ հեռու:
Աչքէ հեռու, սրտէ հեռու *(առած)*։
Տնից տեղից հեռու *(տունէ տեղէ հեռու)*։

13. Ի ձեռն

Նշանակում է «ձեռքով» և նախապես ճիշտ այս իմաստով էլ գործածվում էր. ինչպես՝ Այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին.

Մատթ. Բ 5։ Այնուհետև ստացավ «միջոցով» նշանակությունը և կապված էր դարձյալ «ձեռք»-ի հետ. ինչպես՝

Առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց. Մատթ. ԺԱ 2։
Ի ձեռն մարգարէին եհան Տէր զԻսրայէլ. Ովս. ԺԲ 13։

«Միջոցով» իմաստին հասնելուց հետո, ավելի ընդհանրացավ և կարելի եղավ ասել՝

Խօսեցաւ Տէր ի ձեռն Անգէի մարգարէի. Անգ. Բ. 2։
Զոր խօսեցաւ ի ձեռն Սամուէլի. Ա Մնաց. ԺԱ 3։
Խօսեցաւ ի ձեռն ծառայից իւրոց. Դ Թագ. ԻԴ 2։

Սրանց մեջ «միջոցով» իմաստը շատ պարզ է, որովհետև խոսքը ձեռքով չի լինի, այլ բերանով։

Մի անգամ որ հասավ բառը «միջոցով» իմաստին, այլևս ո՛չ միայն գործածվում էր մարդու և այլ բանավոր էակների համար, ինչպես է վերի օրինակների մեջ և ընդհանրապես, այլև մասամբ իրերի և զանազան վերացական առարկաների համար, որոնք ձեռք չունեն. ինչպես՝

Յայտնութեամբ ի ձեռն նոյն. Ա Եզր. Զ 24։
Ի ձեռն պաշտաման նորա. Գրծ. ԻԱ 19։
Ի ձեռն մահուան իւրոյ. Կողոս. Ա 22։
Ի ձեռն յարութեան Յիսուսի. Ա Պետր. Ա 3։
Ի ձեռն գաւազանի սրտմտութեան իւրոյ ընկլոյզ զիս:
Ի ձեռն արեան նորա. Եփես. Ա 7:
Որպէս և խոստացան ի ձեռն կտակարանացն:
Ի ձեռն հաւատոցն. Բ Տիմ. Գ 15։
Նորոգեաց ի ձեռն վարագուրին. Եբր. Ժ 20։

Այս բոլորի մեջ ի ձեռն նախադաս է, բայց կարող է դառնալ նաև հետադաս. ինչպես՝

Որպէս խօսեցաւ յիմ ձեռն. Ա Թագ. ԻԸ 17։
Յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն. Մատթ. ԺԸ 7։
Յոյր ձեռն Որդին Մարդոյ մատնեսցի. Մատթ. ԻԶ 24։

Փոխանակ ի ձեռն ձևի, քիչ անգամ կա նաև ընդ ձեռն, նույնպես նախադաս և հետադաս. ինչպես՝

Ընդ ձեռն Սահակայ (Զալխ.)։
Ընդ նորա ձեռն:
Ընդ իւրեանց ձեռն ընկեցին. (Զալխ.)։
Հաշտութիւն խօսեցեալ ընդ ձեռն Սմբատայ ասպետի. Ընդ ձեռն ո՛ր և է թագաւորի. Խոր. Գ 58, 65։

Ընդ ձեռն երևելի անդրեացն. *Յովհ. Իմ. Պաւլ.։*

Բոլորն էլ ստանում են սեռական խնդիր։

Արդի հայերենում, թե՛ բարբառներում և թե՛ գրական լեզվում գործածական է ձեռfով, բայց միայն անձերի համար. իսկ իրերի համար ասվում է միջոցով.

Նամակը կ'ուղարկեմ եղբօրս ձեռfով:

Ծառայի ձեռfով ուղարկեցի:

Այդ բոլորը փողի միջոցով եղաւ:

Մի քիչ ավելի հները գործ էին ածում ձեռօf. *ինչպես՝*

Լրտեսի ձեռօf իմացուեցաւ:

Նույնպես միջոցաւ. *ինչպես՝*

Օտար գրուածfները թարգմանութեան միջոցաւ ծանօթացան:

14. Մեկուսի, ուրոյն

Առաջինը կազմված է մի *և* կոյս *բառերից և նշանակում է ամի կողմ, առանձին, զատ, ուրիշից հեռու։ Իբրև նախադրությամբ առնում է բացառական խնդիր և միշտ նախադաս է գործածված. օրինակ՝*

Առեալ Մովսեսի զխորան իւր՝ եհար արտաfոյ բանակին՝ մեկուսի յամբոխէ անտի. *Մարկ. Է 33։*

Առեալ մեկուսի ի բանակէ անտի. *Ել. ԼԳ 7։*

Խնդրէր պարապ՝ մատնել զնա նոցա մեկուսի յամբոխէն. *Ղուկ. ԻԲ 6։*

Եւ նոfա չեն մեկուսի ի պատժոց. *Ոսկ. Մ. Բ. 23։*

Առեալ զնա մեկուսի յայլոցն և ասէ. *Եղիշ. Ը։*

Սրան հոմանիշ է ուրոյն, *որ նշանակում է 1) զատ, մեկուսի, առանձին, 2) բացի. իբրև նախադրություն նախադաս է միշտ և առնում է բացառական խնդիր. օրինակ՝*

Սովոր էր ուրոյն ի նոցանէ կալ յաղօթս. *Ոսկ. Մտթ.։*

Ի վերայ սեղանոյն՝ ուրոյն յառաւօտին ողջակիզէն. *Ղևտ. Թ 17։*

Փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ՝ ուրոյն ի կոոցն. *Խոր. Բ 37։*

Բարբառները չնչել են այս բառերը. գրական լեզում գիտե միայն իբրև ածական։

15. Մերձ, մօտ

Նույնանիշ են երկուսն էլ. գործածվում են գոյականից առաջ, ի կամ առ նախդրիվ հայցական խնդրով. ի դրվում է անշունչ առարկաների համար, առ մեծ մասամբ շնչավորների համար, բայց կա նաև անշունչների համար. օրինակ՝

Տուն իմ մերձ է յեկեղեցին:

Մերձ ի ծովն Կարմիր. Մերձ ի տունն Փոգովրայ. Մերձ ի լեառն. Որ է մերձ յԵրուսաղէմ. Մերձ ի Տէր առ ամենեսեան. Մերձ է առ դուրս. Մերձ է բանն առ քեզ յոյժ. Մերձ եղև յամուրսն. Մերձ առ նա:

Մօտ ի լեառնն, յԵդոմ, ի լալօնսն. Մօտ ի նոսա, ի քեզ. Մօտ առ նոսա, առ իս. Մօտ ի վախճան:

Կա նաև տրականով և գործիականով. ինչպես՝

Մերձ առ երկրաւն Եդոմայ:

Հոգևորականն մեզ մերձ լինիցի. *Ոսկ. Յովհ. Ա 42։*

Մօտ առ նմա. Մօտ առ տամբն իւրով:

Մօտ անցանէին առ Կրետեաւ. *Գրծ. Իէ 13։*

Միջին հայերենում, բարբառներում և գրական լեզվում իսպառ ջնջված է մերձ *բառը և կա միայն նրա հոմանիշը՝* մօտ, *որին ավելացել է նաև* մօտիկ:

Բարբառներում սրանց ստացած ձևերն են՝ Ագլ., Ախց., Կր., Մկ., Շմ., Վն. մօտ, *Գոր.* մ՛օտի, *Ղրբ.* մօ՛տըէ, *Ողմ., Ջղ., Սլմ.* մոտ, *Ալշ., Երև., Խրբ., Մշ., Պլ., Ռ., Սեբ., Սչ., Տիգ., Տփ.* մօդ, *Ջթ.* մէօդ, *Ասլ.* մէ՛օդ, մէօ*, *Սվեդ.* մուդ, *Մրղ.* մը՝ դ.— *իսկ* -իկ *մասնիկի հավելումով՝ Ախց., Կր.* մօտիկ, *Ագլ.* մօտիկ', *Շմ.* մօտիգ՛, *Տփ.* մօդիկ, *Հմշ., Ննխ., Պլ., Սչ.* մօդիգ, *Ջղ.* մոտիկ:

Սրանցից մօտի *(Գոր., Ղրբ.) ձևն իր վերջաձայնը պարտական է* հեռի *բառին։ Ուրիշ բարբառներում* հեռի *բառը դարձել է* հեռու, *բայց Ագլ., Ղրբ., Շմ. պահում են* հեռի *ձևով։* Մօտ *բառը մշտապես գործածվելով նրա հետ, նրա նմանությամբ դարձել է* մօտի: *Իբրև խնդիր՝* մօտ *բառը պահանջում է սեռական հոլով. ինչպես՝* նրա մօտ կանգնած էր. Ջրի մօտ էր բուսել. *դերանունների հետ՝ տրական. ինչպես՝* ինձ մօտ, քեզ մօտ *և այլն։ Բայց Ղրբ. դարձյալ* հեռի *բառի նմանությամբ՝ պահանջում է բացառական ! ասվում է* ինձնից մօտ, քեզնից մօտ, նրանից մօտ, տնից մօտ, *ինչպես որ ասում ենք* ինձնից հեռու, քեզնից հեռու *և այլն։*

Մոտ *բառը Երևանի բարբառում և արևելյան գրականում ոչ միայն նշանակում է «մոտ,* prés de, *մերձ», այլև «կողքին, քովը, առընթեր* auprès de», *օրինակ՝* Արի ինձ մոտ նստիր *(=քովս).* Մեր տունը համալսարանին մոտ է *(=մոտիկ)։*

Երկու գաղափարները իրարից զանազանելու համար Երևանի բարբառը գործ է ածում կշտին *(քովը), որ կարող ենք գտնել նաև արևելյան գրականում։ Իսկ բարբառներից ոմանք (ինչպես Տփ.) զանազանում են* մոտ *«կողքին, քովը» և* մոտիկ *«մոտ, ոչ հեռու,* près de»։ *Հայերենի պես պարսկերենն էլ ունի երկու ձև.* نزد nezd *և* نزدیک nezdik, *վերջինը կազմված* īk *մասնիկով. առաջինը նշանակում է «քովը», երկրորդը՝ «ոչ հեռու»։*

16. Մէջ

Բնիկ հայ բառ է, որ ծագում է հնխ. médyos *ձևից. հմմտ. սանս.* mádhya, *լտ.* medius, *գոթ.* midjis, *ռուս.* между *գվռ.* межу *և այլն։*

Հոլովվում է գոյականի պես և իր զանազան հոլովներից կազմվում են մի քանի նախադրություններ. այսպես՝ նախդրիվ հայցականից ի մէջ *կամ* ընդ մէջ, *բացառականից* ի միջոյ. *օրինակ՝*

Խաղաղութիւն կամ խնդիր է ընդ մէջ նոցա:
Ընդ մէջ բառից մի՛ անկանիր. *Սիր. ԺԱ 8։*
Սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ. *Մատթ. ԻԳ 35։*
Անց ընդ մէջ ամբոխին. *Երեմ. ԼԷ 4։*
Բարձէք ի միջոյ ձերմէ:
Ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ:
Հանել կամ փախչել ի միջոյ Բաբելոնի:

Նախդրիվ հայցական ձևն է ի մէջ, *որ սակայն նաև ներգոյական է. իսկ ներգոյականի համար կա դարձյալ* ի միջի: *Այս շփոթությունը ըստ իս այսպես պետք է մեկնել։*

Մէջ *բառը պատկանում է* ո *հոլովման, ըստ որում բացառականն է* ի միջոյ. *և այս հոլովումը համապատասխան է հնխ. ձայնավորին, որ է* o. *չկա բացառական* ի միջէ *ձևը, ուստի* ի–ա *հոլովման չէր պատկանում։ Բայց որովհետև* ո *հոլովման պատկանող բառերից ոմանք ներգոյականում անցնում են* ի *հոլովման (ինչպես՝* ի գիշերի, ի բերանի *և այլն), ըստ այսմ էլ* ի մէջ *դարձել է* ի միջի:

Ներգոյական ի մէջ *ձևը գտնում ենք Ե դարում շատ տեղեր. ինչպես՝*

Կացուցին զնա ի մէջ երկուց սեանցն. *Դատ. ԺՉ 25։*
Կացոյց զնա ի մէջ ժողովրդեանն. *Ա Թագ. Ժ 23։*
Կացոյց զնա ի մէջ նոցա. *Մատթ. ԺԸ 2։*
Առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. *Մարկ. Թ. 35։*
Ա՛ռ մանուկ մի՝ կացոյց ի մէջ նոցա. *Ղկ. Թ 47։*
Կացուցեալ զնոսա ի մէջ՝ հարցանէին. Գրծ. Դ 7:
Իջուցեալ զՊաւղոս կացոյց ի մէջ նոցա. *Գրծ. ԻԲ 30։*
Էր խաղաղութիւն ի մէջ նոցա. *Դատ. Դ 17։*
Էր ի քուն ի մէջ երկուց զինուորաց. *Գրծ. ԺԲ 6։*
Ի մէջ ծովու կամ տան
Ուր Աստուած հաշտ իցէ, և ի հրոյ մէջ ցօղ լինի. *Ոսկ. Ես.։*

Կա նաև նույնը ի միջի *ձևով.*

Արք աւազակք կային ի միջի քում. *Եզեկ. ԻԲ 9։*
Ես եմ ի միջի ձերում:
Ի միջի մերում:
Այս բան ընդ այս և ընդ այն բան ի միջի կայ. *Կիւրղ. Եղ.։*

Այս նախադրությունը կարող է նաև լինել հետադաս. ինչպես՝

Ի հրոյ մէջ ցօղ լինի. *Ոսկ. Ես.։*
Ի միջի ձերում *կամ* ի ձերում միջի:

Անսովոր է բոլորովին ներգոյական ի միջոյ *ձևը.* Քանզի թարգման կայ ի միջոյ. *Կիւրղ. Ծննդ.։*

Բարբառներում մեջ *բառի ստացած ձևերն են՝ Խրբ., Մշ.* մէ՛ջ, *Ալշ., Ախց., Ակն., Գոր., Երև., Ջթ., Կր., Հճ., Հմշ., Մկ., Մրղ., Ննխ., Շմ., Պլ., Ջղ., Ռ., Սեբ., Սլմ., Սչ., Վն., Տիգ., Տփ.* մէչ, մէջ, *Ոզմ.* մեչ, *Սվեդ.* միչ, *Հվր.* մէօջ, *Ղրբ.* մաչ, *Ագլ.* մաջ, մանջ:

Երկու գրական լեզուներում գործածական է մէջ *ձևով. բայց արևելյան գրականը բավական կրճատել է սրա գործածությունը ներգոյական -ում ձևի պատճառով. օրինակ՝*

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հօս՝ մառախուղի մէջ համր անշունչ.
Սռուէրին մէջ մինակ ու զատ՝
Ես կը դողամ քեզ մօտելու.
Եւ թող մէկ մ՛ես ալ դալկանամ
Քու հայուածքիդ մէջ կրակուքոց: *(Դուրյան)*

Այս բոլոր տեղերում կարելի էր դնել մառախուղում, սռուէրում, հայուածքում:

ի տարբերություն երկու գրական լեզուների, նկատելի է ի մէջ կամ ի միջի այլոց բացատրությունը։ Արևելյան գրականում սովորական է միայն ի միջի այլոց, որ գրաբարի երկրորդ ներգոյականի ձևն է, իսկ արևմտյան գրականում գործածվում է ի մէջ այլոց, որ գրաբարի առաջին ներգոյականի ձևն է։

Մէջ նախադրությունը երկու գրական լեզուների մեջ էլ վերցնում է սեռական խնդիր. օրինակ՝ Ի՞նչ էf գտել այդ ծերուկի մէջ, որ այդfան ճարգում էf նրան:

Մէջ նշանակությամբ ֆրանսերենում կա երեք բառ, որոնք են dans, entre, parmi. առաջինը գործ է ածվում մեկ առարկայի համար, երկրորդը 2 առարկայի համար և երրորդը բազմաթիվ առարկաների համար. օրինակ՝ ասում են dans la chambre (մի սենյակի մեջ), entre deux amis (երկու բարեկամների միջև), parmi les hommes (մարդկանց մեջ)։

Հայերենում, գրաբարի մեջ, ամեն դեպքում էլ գործածվում է մէջ. օրինակ՝ Ի մէջ փորոյ կիտին, Ի մէջ երկուց աւազակաց, Ի մէջ fաղաfաց: Աշխարհաբարում ստեղծվել է միջև բառը, որ չկա գրաբարում. օրինակ՝ Երկու բարեկամների միջև:

Ռուսերենում ևս ունենք в, между և среди, որոնք համապատասխանում են ֆրանս. dans, entre, parmi բառերին։ Ֆրանսերեն կա նաև au milieu, կազմված au նախդիրով, mi «կես»+lieu «տեղ» բառերից, որի ճիշտ համապատասխանն է հայերեն մեջ–տեղ–ում:

17. Մինչև

Բուն արմատն է մինչ, որ ըստ իս առաջանում է հնխ. smē ձևից՝ աճած -նչ (ինչպես՝ ի–նչ, որ կազմված է ի արմատից՝ -նչ մասնիկով)։ Համմտ. սանս. smā, sma սաստկական մասնիկ, հն. μα հաստատական մասնիկ, թես. μά «բայց», n ձայնով աճած՝ Հոմեր. μέν, Հոն. ատտ. μήν, լեսբ. դոր. μᾶν, Հոմեր. μᾶν «իրոք, սակայն», որից էլ -τοι մասնիկի հավելումով՝ μέντοι «սակայն»։

Մինչ արմատական ձևի վրա ավելացել է հետո և և ստացվել մինչև, ինչպես ունենք իբրև, քէև, նաև, արդարև, վերև, ներfև, յետև և այլն։

Մինչ ստանում է ի նախդիրով հայցական հոլով, գոյականին նախադաս է, բայց շատ քիչ է գործածվում։ ՆՀԲ տալիս է միայն երկու վկայություն՝

Մինչ ի սահմանս Գազիտոնայ. Ա Մակ. Դ 15։

Մինչ ի տեղի Գողգոթային. Շար.

Մինչ ի ծագս, մինչ ի սպառ
Մինչ ի կատարած...

Շատ ավելի գործածական ու սովորական է մինչև, *որ առնում է* ի *կամ* ց *նախդիրով հայցական. ինչպես՝*

Մինչև յառաւօտ *կամ* ցառաւօտ:
Մինչև յօրն, յօրում...
Մինչև ի ժամանակս:
Մինչև ցայսօր *կամ* ցայժմ:
Մինչև ի նուննս:
Մինչև ի մահ:
Յաբրահամէ մինչև ի Դաւիթ
Մինչև ի տուն, ի դուռն:
Ի ծովէ մինչև ի ծով:
Ի ծագաց մինչև ի ծագս:
Մինչև ի սպառ:
Մինչև ցե՞րբ, մինչև ցանդր:
Մինչև ցո՞ր վայր. մինչև ցայսր:
Մինչև ցաստեղս:
Երթիցուք մինչև ցԲեթղեհէմ:

Կարելի է ասել մինչև ի նա *կամ* առ *նախդրիվ՝* մինչև առ նա:

Երբ խնդիրը աներևույթ է, կարող է դրվել առանց նախդիրի, ի *նախդիրով և կամ հոլովյալ ձևով. ինչպես՝*

Մինչ նաւին ծածկել յալեաց անտի. *Մատթ. Ը 24*։
Մինչև ի սպառ նուազելոյ:
Մինչև արևուն մտանելոյ:

Միջին հայերենում այս գաղափարի համար գործածվում են ինչու, ինչուի, ինչվի, ինչֆի, *որ ըստ* Karst *102 գրաբարի* մինչ *բառն է՝ զրկված մ-ից։ Այս մասին տե՛ս և քիչ հետո։* Ինչու *ձևը առաջացել է* մինչև *բառի մեջ և փոխանակելով ժղ. ու ձևով. սրա վրա ավելանալով* ի *նախդիրը և կցվելով բառին, իբրև մասնիկ, կազմվել է* ինչուի, *ճիշտ ինչպես ունենք* դէպի, բացի, *փխ.* դէպ 'ի, բաց 'ի: Ինչուի *ձևի այլ գրչությունն է* ինչվի: *Վերջապես չ թավ բաղաձայնի ազդեցությամբ* վ *ևս թավանալով՝ ստացվում է* ինչֆի:

Բարբառներում մինչև *բառը ստացել է հետևյալ ձևերը. Երև., Կր., Սեբ.* մինչէվ, *Ագլ.* մինչէ՛վ, մինչի՛, մինչինտ՛, մինչնտ՛, *Ննխ.* մինչէվ, մինչի, մինչօր, *Եվդ.* մինչի, *Խր.* մինչվանՖի, *Ղզ., Տփ.* մինչկլի, *Ակն., Արբ., Պլ.* մինչուզ *(=մինչուկ), Ակն.* միժվի, մժվի *(<մինչուի<մինչև 'ի)*:

Արդյոք մ-ի անկումով (տե՛ս վերը) սրանցի՞ց են առաջացած, թե՞ անկախաբար ինչ բառից են ձևացած՝ Հճ. ինչի, *Արբ., Խր., Ննխ., Պլ.* ինչվան, *Ռ.* իշվան, իշվան, *Սչ.* ինչֆանի, *Ռ.* ինչվանք, *Ղրբ., Տր.* ինչաք, *Ննխ.* ինչվագ՛ի, ինչագ՛ի, *Արբ.* ինչօք, *Արբ., Կյուր., Կյ., Պլ.* ինչուք, *Սլմ.* իւնչիւկ՚, *Կս.* ինչուց, *Բղ.* ինչուր, *Տփ.* ինչրի, ինչու, *Շիր.* ինչարի, *Տփ.* ինչկէլ, ինչկլի, *Աստ., Դվ.* ինչքրի:

Սրանցից՝ ի *դառնալով* ը՛ *Երև.* ընչանք, *Ասլ.* ընչէօք, *Երև.* ըն-չում, *Ջղ.* ընչուր:

Նույնը վերածվելով ու՝ *Մրղ.* ունչոյ, ունչուն:

Հ հավելվածով՝ Մշ. հընչի, *Ակն.* հիւնչիւգ, հընչուգ, հիժվի, հըժվի, *Հմշ.* հնչագ, *Շմ.* հիւնչիւրիւ:

Նախավանկի անկումով՝ Գնձ. չվա, *Շմ.* չվանց, *Վն.* չում, *Ղզ.* չըվէլ, *Ալշ.* չանքի:

Սրանցից դուրս ունենք նաև չուր *ձևը (<մինչև որ), որ գիտեն Ալշ., Ապ., Խլ., Մկ., Մրշ., Ոզմ., Ջղ., Սր., Վն. և որի զանազան ձևափոխությունները ու աճած ձևերն են՝ Մշ.* չուրի, *Ալշ.* չոր, չորի, *Հվր.* չիր, *Ջթ.* չիւյ, չիւր, *Ջղ.* չուրիկ, չուրիկ օր, չուկօր, չկօր, *Ղրբ.* չուրու, չրա՛նը, չքօ՛րանը:

Վերջին չուր *ձևը կարելի է թեև մեկնել կրճատված* մինչև որ, ինչ որ, չոր *ձևից, բայց հմմտ.* ցուր *Մխ. բժշ. էջ 51, 52, 104 և 120.* Արկ ջուր ի վերայ մի լիտր և եփէ ցուր ջուրն հատնի և կաթն մնայ. Ցուր չես տեսել զեփելոյ նշանն. Եփէ ցուր մնայ երկու լիտր *և այլն։ Այս ձևը ենթադրել է տալիս, որ բառը կազմված է* ց՛ուր *«մինչև ուր, մինչև որ»*?

Թուրքերենից փոխառյալ է Պլ. դէյ, դէյօր *(*dey*—որ). օրինակ՝* Անկէ դէյօր հոս:

Գրական լեզուն գիտե միայն մինչև *ձևը.* Մինչև այսօր. Մինչև այստեղ. Մինչև քեզի, ձեզի, մեզի. Մինչև մահու անյիշատակ շի-րիմը:

(Այտն. 120 տալիս է նաև մինչուկ, ինչուկ, ինչուք, ինչուան. *բայց այժմ սրանցից ո՛չ մեկը չի գործածվում)։*

Ոտանավորի մեջ կարող ենք գտնել նաև մինչ *ձևը. ինչպես՝*

— Ո՜հ, կը թօթուեմ ես այս աղտոտ
Զորձն հոգւոյս՝ կեանքս, մինչ իսկ այսօր:
— Ո՜հ, մինչ ցե՞րբ, ըսէ՛, ո՜ կոյս, հոգիս ըլլայ գէղոյդ գերի,
Եւ մինչև ցե՞րբ թրթռան աղիք, ցաւած սրտիս և քնարի *(Դուրյան)։*

Մինչև թեև գրաբարում ստանում է ի կամ ց նախդիրները, բայց աշխարհաբարում ընդունված չէ։ Սխալ է ասել՝ Ես չեմ փախչիլ, այլ մինչև ի յետին շունչս մարտ կը մղեմ (Հոմերոս, Իլիական, թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 103)։

18. Յանդիման, հանդէպ, ընդդէմ, հակառակ

Յանդիման «դեմը, դիմացը, առաջը» իրանական փոխառություն է. համմ. պհլ. andēman, hendeman նույն նշանակությամբ. ստանում է սեռական խնդիր և միշտ նախադաս է. ինչպես՝

Նստէր նա... յանդիման տաճարին. Մարկ. ԺԳ 3։
Տիգրիս, նա է՝ որ երթայ յանդիման Ասորեստանի. Ծննդ. Բ 14
Ջորոջսն կացուցանէր յանդիման մաքեացն. Ծննդ. Լ 40։
Նստէր յանդիման նորա. Ծննդ. ԻԱ 16։
Բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. Ծննդ. Գ 24։
Յանդիման արեգական. Թիւք ԻԵ 4։

Սրան համանիշ է հանդէպ «դէմը», որ նույնպես ստանում է սեռական խնդիր և նախադաս է. ինչպես՝

Երթ առ Փարաւոն... կացցես հանդէպ նորա. Ել. Է 15։
Երթայք դուք ի գեօղն որ հանդէպ մեր կայ. Ղուկ. ԺԹ 30։
Բանակեցաւ հանդէպ լերինն:
Ժողովեցին հանդէպ վիմին:
Որ դիտէ հանդէպ Դամասկոսի. Երգ Է 4։
Եւ անա այր ընթանայր միայն հանդէպ իւր. Բ Թագ. ԺԸ 24։
Երեսք բոլոքիցն հանդէպ միմեանց. Ել. ԼԷ 9։
Կացցէ արդարն բազում համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց. (Իմաստ. Ե 1)։
Հանդէպ նառելոցս դնել. Եւս. Քր. Ա։

Կա նաև հոլովված ձևերով, ինչպես՝

Ուշ եղեալ ի հանդէպ երեսացն ներ արշաւեն. Եզն։
Յայնկոյս Յորդանանու ի հանդիպէ Երիքովի. Յես. ԻԱ 36։
Ի հանդիպէ անտի նորա զտանէին հեթանոսք հանգիստ նաւուց իւրեանց. Եփր. Ել.։
Կացին ի հանդիպոյ քաղաքին:

Հետնաբար կա հետադաս. ինչպես՝

Իմ ճանդէպ. *Նար. Թ։*

Այսքան շնորճացս ճանդէպ. *Լամբ. Սաղմ.*

Իբր հոմանիշ ունենք դարձյալ ընդդէմ, որ ստանում է սեռական խնդիր և նախադաս է գործածվում. ինչպես՝

Երթայք դուք ի գեղդ, որ ընդդէմ ձեր կայ. *Մարկ. ԺԱ 2։*

Առաջի տապանակին վկայութեան՝ ընդդէմ վկայութեանն։

Ընդ կողմն արևելից՝ ընդդէմ քաղութեանն։

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին. *Մարկ. ԺԲ 41։*

Բայց ընդդէմ նշանակում է նաև «հակառակ, ներհակ». պահանջում է դարձյալ սեռական խնդիր և նախադաս է դրվում. ինչպես՝

Հա՛ն զսուր քո ընդդէմ ճալածչաց իմոց։

Ոչ ոք կացցէ ընդդէմ ձեր։

Եթէ բռնասցի մին, երկուքն կայցեն ընդդէմ նորա։

Ընդդէմ մեր էր ճողմն։

Այս պարագային, կարծես իմաստի տարբերությունը երևան հանելու համար, ընդդէմ բառը կարող է երկուսի բաժանվել և կամ ուրիշ բառ ներմուծել. ինչպես՝

Ընդ ճողմոյն դէմ չկարաց ինչ զօրել. *Ոսկ. Մ. Բ. 15։*

Ոչ կարեմք մեք ընդ ճշմարտութեանն դէմ գործել ինչ. *Ոսկ. Բ Կոր.։*

Եւ ընդ այսր ընդդէմ թերևս ոք յամառէ. *Վեցօր. Բ։*

Հետին հայերենում կա դրված հետադաս. ինչպես՝

Այդ խորճուրդ դարձեալ իմոց բանից ընդդէմ է. *Եղիշ. Գ։*

Վերջապես այս իմաստով կա ճակառակ, որ իբրև նախադրություն ստանում է սեռական խնդիր և կարող է գործածվել թե՛ նախադաս և թե՛ հետադաս. ինչպես՝

Հակառակ իմ է. *Ղուկ. ԺԱ 22։*

Հակառակ ժողովրդեանն։

Ո՞վ իցէ մեր ճակառակ։

Կարող է վերցնել նաև տրական խնդիր և կամ ընդ նախդիրով հայցական. ինչպես՝

Եւ ոչ էութիւն ճակառակ նմա. *Եզն. 6։*

Որ ո՛չն է ընդ մեզ ճակառակ. *Մարկ. Թ 39։*

Հակառակ կայր նմա։

Բարբառներում և գրական լեզվում այս բոլորը փոփոխված է. յանդիման բառը պահված է միայն Նոր-Ջուղայի բարբառում յան–

դ՛իման *ձևով. օրինակ՝* Դի՛ր յուրն յանդ՛իման. *գրականումն էլ չկա։ Հանդէպ գործածվում է գրականում «վերաբերմամբ» նշանակու- թյամբ. ինչպես՝ Նրա հանդէպ ես միշտ բարեացակամ եմ եղել։* Ընդդէմ *վերածված է* դէմ *ձևին, բայց կա նաև* դիմաց: *Բարբառներում ունենք Պլ.* դէմ, *Ալշ., Ախց., Երև., Ջթ., Խրբ., Կր., Հճ., Մշ., Սեբ.* դ՛էմ, *Ոզմ.* դ՛եմ, *Մկ., Հմշ., Վն., Սլմ.* տէմ, *Ռ., Տիգ.* թեմ, *Ասլ.* դ՛ըմ, դ՛ըմ, *Ննխ., Պլ.* դիմաց, *Սչ.* դ՛իմաց, *Հմշ.* դիմաց.— *կա և Շմ.* ընդդէմ:

Դէմ նշանակում է «տեղով մի բանի դեմը, հանդիման». ինչ- պես՝ Ոռի՞ դէմ ելար. Մեր տունը դպրոցի դէմն է. *ճիշտ դեմը նշա- նակելու համար կա Ջղ.* դէմդէմ, *Տփ.* դէմուդէմ: *Բայց* դէմ *նշանա- կում է նաև «հակառակ, ընդդեմ». ինչպես՝* Մեզ դէմ են խօսել= Մեզի դէմ են խօսեր: *Երկու իմաստների տարբերացման համար հնարել են* դիմաց *«հանդիման», իսկ* դէմ՝ *երկու իմաստով՝ «հան- դիման և հակառակ». օրինակ՝* Հօրը դիմացն ելեր է. Հօրը դէմ կխօ- սի: *Փոխադարձ ձևն է* դէմ դիմաց *«իրար դեմ»։*

Հակառակ նախադրությունը պահված է մասամբ բարբառնե- րում և մանավանդ գրականում՝ տրական խնդրով և հետադաս. ինչպես՝

Նրան ճակառակ, ինձ ճակառակ:
Մեզ ու ձեզ ճակառակ:
Ծնողների ճրամանին ճակառակ:

Բայց կարելի է գտնել նաև նախադաս. ինչպես՝

Հակառակ այն բանին, որ...
Հակառակ նրա կարծիքին...

19. Յետ

Նույն է հյ. ճետ *բառի հետ և երկուսն էլ ծագում են հնխ.* pedo *«ոտք» բառից։* Յետ *ցույց է տալիս ժամանակը, իսկ* յետոյ՝ *տեղը (ետին, ետևը)։ Նշանակության այսպիսի զարգացման համար հմմտ. -պրս.* pāy *«ոտք»,* ızpay *«հետևից», բելուչ.* pad *«ոտքի հետք»,* paḍa *«հետևից, հետո, վերջը», հն.* πούς *(սեռ.* ποδός *ոտք),* πόδα *«ետևից, զկնի, հետը, միասին», լեթթ.* pèz *«հետո, հետևը» և այլն։*

Գրաբարում յետ *նշանակում է «հետո» (ժամանակի գաղափա- րով), իսկ* յետոյ *նշանակում է «ետևը» (տեղի գաղափարով). ինչ- պես՝* յետ գերութեան, յետ ճեղութեան, յետ յարութեան, յետ տա-

նելոյ, յետ իմանալոյ, յետ վեց աւուր, յետ երից աւուրց, յետ բազում ժամանակաց, յետ նորա, յետ այսորիկ, յետ այնորիկ, յետ ամենեցուն, յետ ցաւագին կենաց *և այլն։*

Բարբառներում երեք գլխավոր ձև է ստանում այս բառը. այն է յետ, յետև, յետf *(որոնք գրվում են նաև* ետ, ետև, ետf՝ *հնչման նույնության պատճառով)։ Ահա այս բառերի պատկերը զանազան բարբառներում.*

1. Յետ.— *Սլմ., Վն.* յետ, *Ջղ.* յ̈ետ, *Ախց., Կր.* յէտ, *Գոր., Ղրբ., Շմ.* յէտ, յէ՛տը, *Երև., Խրբ., Հճ., Ննխ., Պլ., Ռ., Սչ., Տիգ.* յէդ, *Սեբ.* յէդ, *Ագլ.* յիտ, *Հմշ.* յիդ, *Ոզմ.* նիտ, *Տփ.* նիդ, *Զթ.* իդ:

2. Յետև.— *Մշ.* յ̈էտեվ, *Ալշ.* յ̈էդեվ, *Մրղ.* յ̈եդեվ, *Ախց., Կր.* յ̈էդէվ, էտէվ, *Սեբ.* յ̈եդեվ, *Ասլ.* յէդէվ, *Ննխ., Պլ., Ռ.* էդէվ, *Ակն.* էդըվէն, *Հմշ., Տիգ., Տփ.* էդիվ, *Սլմ.* իտեվ, *Հճ.* իդեվ, *Զթ., Սվեդ.* իդիվ, *Մկ.* նիտիվ:

3. Յետf.— *Մշ.* յէտf, *Ախց., Կր.* յէտfը, *Սեբ.* յ̈էդfը, *Ակն.* էթգ, էfգը, *Ռ.* յէթfը, *Պլ.* յէթկ, յէթգը, *Ագլ.* յիտf:

Մասնավոր ձևեր են Տփ. էդնէն, *Ջղ.* յ̈ետնա:

Այս երեք գավառական ձևերից առաջինը համապատասխանում է գրաբարի յետ *ձևին, վերջինը գրբ.* յետս *ձևի ուղղականն է. իսկ երկրորդը* յետև *կազմված է* և *մասնիկով, որ գտնում ենք նաև* վերև, ներfև, միջև, դրսև, առջև *և այլն բառերի մեջ։*

Նշանակության կողմից սակայն գրաբարն ու աշխարհաբարը համապատասխան չեն իրար. այսպես՝ գրբ. յետ *ցույց է տալիս ժամանակ,* յետս *և* յետոյ *ցույց են տալիս տեղ. իսկ աշխարհաբարում* յետ *(ետ),* յետև *ցույց են տալիս տեղ (օրինակ՝* յետ դարձաւ= դարձաւ յետս*),* ետf *և* յետոյ *ցույց են տալիս ժամանակ (մի ամիս հետո, երկու օր ետքը, ուտելն ետք և այլն)։*

*Սակայն բարբառներում տեղ-տեղ խախտվում է այս երևույթը. օրինակ՝ Ասլ.*յէդէվ *նշանակում է «յետոյ». ինչպես՝* յէդէվ էգէօ *«հետո արի». նույնպես Ախց.* էդէվ *նշանակում է «հետո». նույնպես Ննխ.* էդէ՞վ *(հարցական) նշանակում է «հետո՞» (հետո՞ ինչ եղավ)։*

Ավելին տե՛ս յետոյ, յետս *բառերի տակ։*

20. Յետոյ, յետս

Ծագմամբ նույն են նախորդ յետ *բառի հետ.* յետ *ներկայացնում է արմատական ձևը,* յետս՝ *հոգնակի նախդրիվ հայցական*

(«դեպի ետ կամ ետև»), յետոյ՝ բացառական։ Ըստ այսմ կարելի է ենթադրել, որ սրանց նախաձևն է ի յետ, ի յետս, ի յետոյ. ապա կորել է նախդիրը՝ ինչպես յափտեանս և յափտենից բառերի մեջ։

Առաջ, առաջի, յառաջ, առջև ձևերի նման՝ այս բառերն էլ ունեն երկու նշանակություն՝ տեղ և ժամանակ։

Գրաբարում, ինչպես տեսանք, յետ ցույց է տալիս ժամանակը. իսկ յետոյ և յետս ցույց են տալիս տեղը. օրինակ՝

Կին մի... մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա... *Մատթ. Թ 20։*

Եկն ի մէջ ամբոխին յետոյ:

Լի էին աչօք առաջոյ և յետոյ:

Եւ Սառա ունկն դնէր առ դրան խորանին, քանզի յետոյ նորա կայր. *Ծննդ. ԺԸ 10։*

Կայր յետոյ դրանն:

Եկաց յետուստ որմոյն *(պատի ետևը կանգնեց). Երգ Բ 9 (այլ ձ.* Եկաց յայնկոյս որմոյն):

Յետոյ ձերմէ *«ձեր ետևից»։*

Եւ յետուստ խորանին ի ծովակողմն կուսէ արասցես վեց սիւն. *Ել. ԻԶ 22։*

Այս օրինակների մեջ յետոյ և յետուստ նշանակում են «հետևից, հետևում», այսինքն համարվում են բացառական և միևնույն ժամանակ ներգոյական (Զալխ. 137)։ Իսկ յետս, որ նշանակում է «դեպի հետ, դեպի ետև», նախդրիվ հայցական է։ Գործածվում է ընդհանրապես իբրև մակբայ. ՆՀԲ և ԱԲ չեն հիշում իբր նախադրություն. բայց կան օրինակներ. ինչպես՝

Դարձոյց զիս յետս իմ:

Երթ յետս իմ, սատանայ. *Մատթ. Դ 10։*

Աշխարհաբարում յետ=ետ արտաքին ձևով նույն է գրաբարի նետ *«հետո» բառի հետ. բայց նշանակությամբ և ծագմամբ տարբեր է. նա համապատասխանում է գրաբարի* յետս *ձևին և նշանակում է նրա նման «ետև, դեպի ետև»։ Ստանում է բացառական խնդիր և գոյականին հետադաս է։ Այսպես նաև* յետոյ *(ետք, ետքը)։*

Մեզնից յետ մի՛ մնար=*Մեզմէ ետ մի՛ մնար։*

Հինգ օրէն ետքը *(հինգ օր հետո, հինգ օրից հետո)* պատրաստ են պատկերներդ *(Պարոնյան)։*

Տառերի ետևը *(ետևը, ետին)* կանգնած էր:

21. Ներքոյ, ներքուստ, ներքս

Այս բառերը երկու տարբեր իմաստ ունեն՝ «մեջը» և «տակը». բուն արմատն է ներ, *որ, ինչպես երևում է, երկու տարբեր ծագում ունի. «մեջ» իմաստով ծագում է հնխ.* en-ero *ձևից (այս էլ կազմված է* en *«մեջ»+* ero *մասնիկով), իսկ «տակը» իմաստով ծագում է* ni-ero *ձևից (այս էլ կազմված է* ni *«վերևից դեպի ցած»+* ero *մասնիկով)։ Երկուսն էլ* enero *և* niero *հայերենում տալիս են ըստ օրինի «ներ», որ հների մոտ առանձին գործածված չէ, բայց հունաբան դպրոցում դարձավ ամենասովորական նախամասնիկը՝ «մեջ» իմաստով։*

Իբրև նախադրություն ի ներքոյ *վերցնում է սեռական խնդիր և լինում է միշտ նախադաս. նշանակում է «տակը». ինչպես՝*

Ի ներքոյ քո մէցս տարածեսցեն և ի վերայ քո որդն յարկցի. *Ես. ԺԴ 11։*
Խլուրդ ի ներքոյ երկրի շրջի:
Ի ներքոյ հաստատութեանն թևք իւրեանց. *Եղեկ. Ա 23։*
Ի ներքոյ երկնից:
Զի էիր ի ներքոյ թզենւոյն. *Յովհ. Ա 48։*
Տեսի ի ներքոյ թզենւոյն. *Յովհ. Ա 50։*
Ի ներքոյ կաթսային այրեսջիք:
Նեցուկք ի ներքոյ նորա. *Գ Թագ. Է 24։*
Ուսք նոցա ի ներքոյ աւազանացն. *Գ Թագ. Է 30։*

Նշանակում է նաև «տակից». ինչպես՝

Ելանէր ջուր ի ներքոյ վարագուրաց. *Եզեկ. ԽԷ 1։*

Ուշ ժամանակի հայերենում կարող է ջնջվել ի *նախդիրը և մնալ միայն* ներքոյ. *ինչպես՝*

Հաւաքեալ ի սայլսն՝ ներքոյ եղեգանն. *Խոր. Գ 32։*
Ներքոյ վարագուրին մնայ. *Յճխ. Զ։*
Ամրացեալք ներքոյ պահոցն. *Յճխ. Թ։*
Ներքոյ խնամոց նորա կարգէ. *Յճխ. ԺԱ։*

Բայց իբրև մակբայ կան ներքոյ *և* ի ներքոյ *ձևերը՝ թե՛ «տակից» և թե՛ «ներսից, միջից» նշանակությամբ։ Գարագաշյան, Գործ. քեր., 1890, էջ 135 դնում է* ի ներքոյ *«ներսը». ինչպես՝* էր ի ներքոյ վարագուրին:

Ի ներքոյ *ձևի բացառականն է համարվում* ի ներքուստ *«տակից», որ իբրև նախադրություն չունի ՆՀԲ, բայց հիշում է Ջախ.*

139 ի ներքուստ ձեռինն» *«ձեռքի տակից»։ Իբրև մակբայ ՆՀԲ տալիս է բազմաթիվ օրինակներ «տակից» և «ներսից, միջից» իմաստով։*

Մակբայ է նաև ի ներքս, *որ նշանակում է «ներսը, մեջը»։*

Միջին հայերենում ներքոյ, ներքուստ, ի ներքս *ձևերը չնչվում են և նրանց փոխարեն գործածական են դառնում* ներքև, ընդ ներքսէ, ընդ նեքսէ *«մեջը, տակը»,* ի ներք *«ներսը, տակը»* (Karst *253, 255)։*

Ում ճյուղի բարբառներում գործածական են ներքև *«տակը»,* նեքսև *«ներսը». առաջինը անցել է նաև արևելյան և արևմտյան դրականին. իսկ* նեքսև *մնում է գավառական ձև։*

Այտն. 121 արևմտյան գրականի համար օրինակ է տալիս՝ Պատին ներքևը. Ձեր բռնութեան ներքևն ընկնել:

Արդի արևմտյան գրականը չի սիրում գործածել ներքև, *այլ սովորական* տակ *բառը. ինչպես՝* Պատին տակը, պատի տակ, Ձեր բռնութեան տակ ընկնուած:

Բայց արևելյան գրականում սովորական է։

Ի ներքս *մակբայը դառնում է բարբառներում* նէրս *կամ* նէս, *աշխարհաբար* ներս *և գործածվում է իբրև նախադրություն. ինչպես՝* Տունէն ներս=տնից ներս, ներսից դուրս=ներսէն դուրս *և այլն։*

22. Շ ո ւ ր ջ

Նշանակում է «չորս կողմը, բոլորտիքը». վերցնում է պարառական հոլով և դրվում է միշտ գոյականից առաջ. ինչպես՝

Ածին պարիսպ շուրջ զքաղաքաւն:
Վառեցից հուր և կերիցէ շուրջ զԵրուսաղեմաւ:
Շուրջ զդովաւ բրեցից:
Ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր:
Հայեցաւ շուրջ զիւրև յաշակերտսն:
— Շուրջ եղեն զինև:
Շուրջ զգետով, զքանակաւ, զաշխարհաւ:

Պատահաբար կա նաև հետադաս գործածված. ինչպես՝ Զարքայիւ շուրջ *(Նորագյուտ Բ Մնաց. ԻԳ 7)։*

Ինչպես տեսնում ենք, այս բոլորի մեջ շուրջ *նախադրությունը կցված է պարառական հոլովին, որ առանց նրա օգնության էլ պիտի նշանակեր «շուրջը». նույնը համտ.* մինչև ց…:

Շուրջ բառը չնջված է միջին հայերենում և բարբառներում. նրա տեղ գործ են ածվում չորս կողմը, չորս դին, չորս բոլորը, բոլորտիքը։ Գրական լեզուն ֆրանսերենի նմանությամբ ստեղծել է շուրջ «մոտավորապես», իբրև թարգմանություն environ բառի. ինչպես՝ Շուրջ ժամը 5-ին, Շուրջ 3 կանգուն բարձր։

23. Չափ

Միևնույն չափ գոյական բառն է, որ իբրև նախադրություն էլ է գործածվում, «չափ, անգամ, մինչև» իմաստով, դրվում է միշտ հետադաս և առնում է գործիական հոլովով խնդիր. ինչպես՝

Արեամբ չափ պատերազմեալ։
Չարչարիմ կապանօք չափ. *Բ Տիմ. Բ 9։*
Են մեզ որ մահու չափ են. *Ա Յովհ. Ե 16, 17։*
Վրէժ մահու չափ դովաւ խնդրեսցի. *Զաք. Ե 3։*
Բարձրացաւ թիկամբք չափ ի վեր. *Ա Թագ. Ժ 23։*
Որ ինչ ուխտիցէ մարդ երդմամբ չափ. *Ղեւ. Ե 4։*
Միջովք չափ, ուսովք չափ, գոյիւ չափ «մինչև մեջքը, ուսը...»։
Հնգիւ չափ, յիսնիւ չափ։
Գալով չափ բանին քոյոյ։
Ջանն Տեառն գիտելով չափ։
Նոցա՝ ընչիւք չափ իցէ վնաս ծախուցն, իսկ սոցա՝ ոգւովք չափ իցէ մահս վշտագին. *Ոսկ. Յովհ. Ա 2։*
Թոյլ ետ Աստուած՝ բանիւք չափ միայն ճոխանալ թշնամեացն. *Ոսկ. Ես.։*
Զեւք չափ ո՞չ գիտիցեմ «ձեզ չափ չգիտե՞մ»։

Հետևաբար ստանում է սեռական կամ տրական խնդիր (այսպես անորոշ է թողնում ՆՀԲ, որովհետև գրաբարում սեռականը տրականից չի զանազանվում). բայց Վրք. հրց. օրինակում միոյ ցույց է տալիս սեռական.

Հարիւր դահեկանի չափ. *Եղիշ.*
Ժողովեսցես ի նոյն տեղի՝ հարիւր արանց չափ. *Ջենոբ։*
Արեան չափ և մարտիրոսութեան ապաշխարեսցէ. *Մագ.։*
Եւ ոչ միոյ ոսոսրդի աշխարհականի չափ գործեցեր. *Վրք. հրց.։*
Բրեցին զտեղին իբրև առն չափ. *Վրք. հրց.։*

Կա նաև պարառական հոլովով՝ «շուրջ», մոտավորապես» իմաստով. ինչպես՝ Զհասարակ գիշերաւ չափ. *Եղիշ. Ը։*

Չափ գործածվում է նաև ի չափ ձևով. ինչպես՝ Չիք անդ տեղի արտասուաց, թէև յովկիանոսի չափ հեղու. *Մեկն. Ղուկ.։*

Բարբառներում և գրականում կենդանի է չափ ձևով և ստանում է սեռական խնդիր. ինչպես՝ նրա չափ, ծովի չափ, ամպի չափ *«շատ»,* յիսունի չափ, երկու մետրի չափ, աչքի զարնելու չափ:

Դերանունների հետ լինում է տրական խնդրով. ինձ չափ, քեզ չափ, մեզ չափ, ձեզ չափ:

24. Պատճառ

Պատճառ *բառը զանազան ձևեր ստանալով դառնում է նախադրություն։ Ամենից ավելի հին և ընտիր ձևն է հոգնակի նախդրիվ հայցական* ի պատճառս *«համար, պատճառով», որովհետև* պատճառ *բառը հնագույն գործածության մեջ անեզական էր. քիչ հետո, նույն V դարում, եզակին էլ տարածվեց։ Գործածվում է նախադաս և ստանում է սեռական խնդիր։*

Եւ ոչ ի պատճառս ագահութեան. *Ա Թես. Բ 5։*

Ի պատճառս սովոյն. *Նխ. ԾՆ.։*

Ի պատճառս սիրոյ. *Եղիշ. Բ։*

Քիչ անգամ գործածվում են եզակի նախդրիվ հայցական ձևով ի պատճառ *և գործիական ձևով* պատճառաւ *և հետադաս. ինչպես՝*

Առաքեցաւ խնդրել զէշսն և եաս յայս պատճառ մինչ առ Սամուէլ. *Եփր. Թագ.։*

Սովոյն պատճառաւ, որ լինին. *Ագաթ.։*

Հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշէ, և զնետ մտանելով զօրացն Պարսից՝ առ պատճառէ, որպէս թէ փախստական վարելով զնա. *Խոր. Բ 74։*

Նկատելի է առ պատճառ *ձևը, ինչպես և հայցական խնդիրը* (յայս պատճառ):

Նոր գրականում սովորական է պատճառաւ *նախադրությունը, որին համապատասխան կազմված է նաև* շնորհիւ *(երբեմն էլ* ի շնորհս), *երբ թարգմանության ֆրանս.* grâce à, *ռուս.* благодаря *ձևերի։ Առաջինը* պատճառ *բառից է կազմված, ուստի կարելի է ամեն բառի հետ էլ անխտիր գործածել. իսկ երկրորդը կազմված լինելով* շնորհ *բառից, անշուշտ պետք է գործածվի միմիայն լավ բաների համար։ Օրինակ՝* Շնորհիւ իր գեղեցկութեան, իր իմաստու-

թեան, իր ճանճարին *և այլն։ Ուստի սխալ է ասել* շնորհիւ սովի, տգիտութեան շնորհիւ *և այլն, ինչպես անում են հաճախ կովկասահայ գրողներ՝ կուրորեն հետևելով ռուս.* благодаря *բառին, որ երկուսի համար էլ ընդհանուր է։ Բայց ի՞նչ պետք է ասել, երբ արևմտահայ գրողն էլ գրի.*

Իր համարձակախօսութեան շնորհիւ տուժեց կեանքը խեղդամահ սպանումով *(Դուրյան, Ազգ. պատմ. 232)։*

25. Պէս

Այս իմաստով 8 բառ կա հին հայերենում, որոնք են՝ պէս, պէսգունակ, գունակ, զօրէն, որպէս, իբրև, հանգոյն, նման:

Պէս *ստանում է սեռական խնդիր. գործածվում է մեսրոպյան շրջանում շատ քիչ անգամ. ուշ շրջանում ավելի հաճախակի է դառնում և այսօր բարբառներում և գրականում ամենից ավելի գործածված ձևն է։ Լինում է միշտ հետադաս. օրինակ՝*

Գետոյ պէս սահի անցանէ. *Ոսկ. Փիլ. Ժ։*

Աղօթս առնէ ի վերայ նոցա աղքատաց պէս. *Ղուկ. Փիլ. ԺԷ։*

Ո՛չ վասն այսորիկ ետ մեզ ոտս, զի անճաճս ափսոսեմք և ուղտուց պէս անհեթեթս վազիցեմք. *Ոսկ. Մ. Բ. 23։*

Ճայից պէս. *Վեցօր. Ը։*

Օձից պէս:

Իսրայելացւոցն պէս. *Պիտ.։*

Զկանց պէս կեան. *Փիլ. Նխ. Բ։*

Եզանց և իշոց պէս գոչել. *Նիւս Կազմ.։*

Այր մի աստուածապաշտ քո պէս. *Վրք. Հրց. Ա 119։*

Միջին հայերենից Այտն. 129 տալիս է իբր օրինակ՝ Քո ընկերին պէս:

Պէսգունակ *ձևը շատ ավելի հազվագյուտ է. ՆՀԲ տալիս է մի օրինակ, սեռական խնդրով և գոյականին նախադաս.*

Սա պէսգունակ Բաբելովնի. զի և ընդ սորա մէջն անցանէ գետն Կինդոս. *Ասող. Գ 42։*

Պէսգունակ Տրդատայ Բագրատունւոյ. *Խոր. Գ 55։*

Գունակ *շատ ավելի քիչ է ծանոթ դասական հեղինակներին. հաճախանում է ավելի ուշ. ստանում է սեռական խնդիր և գոյականին թե՛ նախադաս է և թե՛ հետադաս. ինչպես՝*

Գունակ Արածանւոյ. *Եւս. Քր. Ա։*

Գունակ եղբօրն թշուառականի. *Ճառընտ.։*

Գունակ արհանոսացն. *Նանայ.։*

Գունակ նոցա գրել. *Կիւրղ. Ղուկ.։*

Եւ ես գունակ ձեզ գիտեմ. Խայտա՛ Դաւթի գունակ. *Լուծ. ածար.։*

Շանց գունակ. *Խոսր.։*

Զօրէն *առաջանում է* օրէնք *բառից, որ թեև անեզական է, բայց* օրէն *է,* չէ օրէն *անդեմ բայերի, ինչպես և ածանցմանց մեջ եզակի է։ Գոյականին նախադաս է և առնում է սեռական խնդիր. ինչպես՝*

Զօրէն բարուց Հայաստան մարգկան. *Բուզ. Դ 20։*

Զօրէն երէոց, չարագործաց, տղայոց անմտաց. *Բ Մակ. Ժ 6, Գ Մակ. Զ 10, Իմ. ԺԲ 24։*

Զօրէն խոզի, քաջ բժշկի, բոցոյ, աղբեր. *Փիլ.։*

Որպէս *գոյականին նախադաս է և առնում է հայցական խնդիր. բայց կարող է ստանալ նաև զանազան հոլովով խնդիրներ՝ համաձայն հարակից բառերին. ինչպես՝*

Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին:

Համարեցաք որպէս զոչխար ի սպանումն:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի և որպէս ճնճղուկ միայն ի տանիս:

Առաջնորդեցեր որպէս խաշին՝ ժողովրդեան քոյ:

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր:

Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղջերուի *և այլն։*

Այս վերջինները պետք է հասկանալ՝ Աւուրք մարդոյ են որպէս զաւուրս խոտոյ, Հաստատեցեր զոտս իմ որպէս զոտս եղջերուի *և այլն։*

Իբրև *(որ և* իբր, իբրու) *գործածվում է գոյականին նախադաս և նախորդի նման առնում է հայցական խնդիր. բայց կարող է ստանալ նաև զանազան հոլովով խնդիրներ՝ համաձայն հարակից բառերին։ Ավելի գործածական ձևն է* իբրև. *մյուսները հազվադեպ են. ինչպես՝*

Ադամ եղև իբրև զմի ի մէնջ. *Ծննդ. Գ 22։*

Տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի. *Յովհ. Ա 14։*

Կերպարանօք գտեալ իբրև զմարդ:

Իբրև մոլարք և ճշմարիտք, իբրև անծանօթք և ծանուցեալք. *Բ Կոր. Զ 8։*

Լինիջիք իբրև զաստուածս. *Ծննդ. Գ 5։*

Գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի, իբրև աւետարանչի բարութեանց. *Ես. ԾԲ 7։*

Իբրև նողմավա՞ր խոտոյ կայցես ինձ նակառակ. *Յոբ. ԺԳ 25։*

Յենուն ի նա իբրև ի Տէր նաստատութեամբ. *Առակ. Գ 18։*

Իբրև ի նետէ ձգելոյ ի նպատակ. *Իմ. Է 12։*

Խաղայցե՞ս նովաւ իբրև նաւու. *Յոբ Խ 24։*

Զիա՞րդ նամարիցին զԱստուած, իբրև ի տեղւոջ ինչ յամենայն ի յիւղն լինել. *Եզն. 23։*

Առի զձեզ իբրև ի վերայ թևոց արծուոյ. *Ել. ԺԹ 4։*

Յիւրմէ ազգէն իբրև ի թշնամւոյ վերայ խոստանայր վրէժ խնդրել. *Ագաթ.։*

Ի պաշտօն առեալ երկիր պագանիցէ իբր Աստուծոյ. *Եզն. 39։*

Նոքա նալածեալք փախիցեն, և սոքա իբր զարզարովք փարիցեն. *Կող. Ա։*

Ես ընդ ձեզ իբրու զմի ի ձէնջ խնդրեցից զձեր օգուտ. *Ագաթ.։*

Գոչէ մարգարէն առ Հայր իբրու յամենեցունց բերանոյ. *Ագաթ.։*

Ցույց է տալիս նաև մերձավոր քանակություն, որ այժմ թարգմանում ենք «չափ», ինչպես. էին որք կերան՝ իբրև չորք նազարք. *Մարկ. Ը 9։*

Հանգոյն գործածվում է գոյականին նախադաս և առնում է սեռական խնդիր. ինչպես՝

Բարեկամ նանգոյն անձին քո. *Բ Օր. ԺԳ 6։*

Մարդ մանկանացու՝ նանգոյն ամենեցուն:

Պերճութիւնք ձեր նանգոյն մոխրոյ:

Լինիցի քեզ նանգոյն մանու. *Առակ. ԻԵ 10։*

Բովանդակի առ Կիւրոսիւ՝ նանգոյն Երեմիայի բարբառոյն. *Եւս. Քր.։*

Նման *ածական է և կարող է գործածվել իբրև նախադրություն՝ տրական խնդրով, գոյականին նախադաս. քիչ է գործածվում մեսրոպյան շրջանում, իսկ հետին դարերում ավելի է հաճախում. ինչպես՝* Զնոյն և Որդին նմին նման գործէ:

Ստանում է տրական հոլով խնդիր. ինչպես՝

Ո՞վ իցէ նման քեզ. *Ել. ԺԵ 11։*

Որ ինչ նման իցէ նմա. Բ Օր. ԺԴ 14։
Երկրորդն նման սմին. Մատթ. ԻԲ 39 և այլն։

Աստվածաշնչում կա բացառաբար մի օրինակ սեռական խնդրով. Ոչ գոյ նման դորա յամենեսին ի ձեզ. Ա Թագ. Ժ 24։ Ավելի ուշ օրինակները շատանում են. ինչպես՝

Զի ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա. Սեբ. (Հրատ. Մալխ. էջ 6)։

Այս բոլոր ձևերը ջնջվում են միջին հայերենում և բարբառներում. մնում է միայն պէս, որ ընդհանրապես պահում է անփոփոխ իր ձևը (Ղրդ. լինում է տէս, Ննխ. պէս, պէսնակ, պէսնարիկ, պէսնայիկ, Ագլ., Դվ.—պէստ)։ Գրական լեզուն վերանորոգել է մի քանի հին ձևեր, ինչպես՝ նման, որպէս, իբրև, նանգոյն. բայց ամենից ավելի շատ գործածական ձևերն են արևմտյան գրականում պէս, իսկ արևելյան գրականում պէս և նման. մյուսները բարձր գրական սեռերի համար են. ինչպես՝

Ձեզի պէս բարերար է։
Ինձ պէս տկար մէկը։
Թռչունի պէս անցաւ։
Երազ տեսածի պէս։
Գանձ գտածի պէս եղայ։
Եկուր քովս, մարդու պէս նստէ և ըսէ (Պարոնյան)։
Կառք մը կանցնի դագաղի պէս յամրընթաց (Դուրյան)։
Տնանկ կնոջ տանարն վառած ճրագին պէս (Դուրյան)։
Լանջն է յուզեալ ովկէանի մը նման (Դուրյան)։
Մեղրամոմէ անդրիանդի մ'է նանգոյն (Դուրյան)։
Ամէն մեռել զիս իրեն հետ կը թաղէ,
Իբր ողջ կու լամ, իբրև մեռել կ'որդնոտիմ (Տեմիրճիպաշյան)։

Ես, որպէս աշակերտ, յարգում եմ ձեզ՝ որպէս իմ ուսուցչին, և դուք էլ, որպէս իմ ուսուցիչը՝ գիտեմ որ հոգ էք տանում իմ մասին։

Սխալ է այս բառից հետո դնել միշտ սեռական, ինչպես տարածվեց վերջերս Երևանում, նմանողությամբ պէս բառի. ասում ենք ուսուցչի պես, բայց կարելի չէ ասել Դուք որպես ուսուցչի. կարելի է միայն ասել Ձեզ՝ որպես ուսուցչի և Դուք՝ որպես ուսուցիչ։

Գրաբարի զիա՞րդ մակբայից ձևացած հետին բառ է միջին հայերեն զերդ (Շնորհ. Յս. Որդի և Երգն. Այբ.), որ առաջացած է ի և ա ձայնավորների միացումով և ըստ հնչման էլ գրված է զերթ

(Մագ.)։ Նշանակում են «ինչպես, պես, նման»։ Հասել է մինչև մեր ժամանակները և գործածված է Դուրյանի տաղերում.

— Երկինքն աստղեր զերթ սիրոյ վէրք ցոլային...
— Զերթ նուր ամպոց զոյգ մը նիւս...
— Մենք զերթ երկու տժգոյն բոցեր
Իրարու մէջ կ'այրէինք սոսկ:
— Ստուեր մ'էր նա, որ սահեցաւ զերթ թախիծ:

Ինչպես Այտն. 129 նկատում է, զերդ *բառը իբրև նախադրություն հաջորդեց գրաբարի* պէս *նախադրության, որ ԺԱ—ԺԲ դարերում սկսեց անհետանալ և կամ գոնե անսովոր դառնալ։ Այս շրջանում և ավելի հետո* զերդ *դարձավ միջին հայերենի միակ նախադրությունը՝ երկու իմաստով. «1. պէս, նման. 2. ինչպես, զորօրինակ, օրինակի աղագաւ»։ Տաղաչափներն էլ վերցրին այս նախադրության գործածությունը. օրինակ՝* զերդ ջուր, զերդ զապակին, զերդ զառաջինն: *Դարձավ նաև շաղկապ. ինչպես՝* Զերթ որ վկայքն ասացին: *Ավելի ուշ այս* զերդ *ձևն էլ կրճատվեց և եղավ* զեդ *կամ* զետ:

Այտն. անդ տալիս է նաև մի փոքր նմուշ զերդ *ձևի գործածության.—* Այն իրուին ի դուրս են ի բնութենէն զերդ որ խոցտիլ լինի մարմնոյն՝ զերդ ասղամբ: Կան իրուի որ իւրեանց բնութիւնն ծորին, զերդ մեղրն և գինին: Հայնց ճանդիպի զերդ որ ասացաք:— Զերդ զդարապղպեղն, զերդ զքարն *և այլն։*

Գրաբար զիա՞րդ *թեև հարցական էր, բայց* զերդ *նույն վիճակին չհասավ։*

26. Սակս

Ծագում է սակ «պայման, հաշիվ» *բառից, որ շատ սովորական գործածություն ունի դասական շրջանում։ Սրանից են առաջացել նաև* սակայն *և* սակաւ *բառերը (վերջինս գործիական ձևով, ինչպես են* աղագաւ, պատճառաւ): *«Հաշիվ, համար» իմաստով ունի Շիր. 44.* Նոցին սակի են *(նույն հաշվումն են, նույն բանն է)։*

Նախնական ձևն էր ի սակս *(հոգնակի նախդրիվ հայցական), հետո՝ հաճախակի գործածությամբ դարձավ* սակս *«համար, պատճառաւ». վերցնում է սեռական խնդիր և թե՛ նախադաս է գոյականին և թե՛ հետադաս. ինչպես՝*

Ի ձեր սակս Սիոն արօրադիր լիցի. *Միք. Գ 12։*
Քոյինն սակս բանի. Քակելոյ սակս. Ո՛չ դատելոյ սակս, այլ

պատմելոյ աղագաւ. Սակս որոյ. Սակս *(այնորիկ)* զի իմ է, գոհանամ. *Նխ. Ա Մկ. Վրք. Հրց. Ժ, Խոր. Գ 57.* Յաւանդի սակս տուաւ. *Փիլ. Յովհ.։*

Մի քանի ասույթյանց մեջ վերցնում է հայցական խնդիր. ինչպես՝ յո՞ր սակս *«ինչո՞ւ համար»,* յայն սակս *«նրա համար». Հետնաբար՝* սակս այս *«սրա համար» Մաղ. ԿԵ.— Բայց սեռականով է* սակս է՞ր *«ինչո՞ւ». Նանայ.։*

Յո՞ր սակս սպան զնա. *Ա Յովհ. Գ 12։*

Դիտեմք զի նա յայն սակս յայտնեցաւ. *Ա Յովհ. Գ 5։*

Միջին հայերենում չնչված է և այսօր էլ բարբառներում ո՛չ որևէ հետք է թողել, ո՛չ էլ գրականում գործածական է։

27. Վասն

Վասն *«համար», փոխառյալ է պհլ.* *vasn *ձևից, որի հետ նույն են սոգդ.* wasᵊn, *մանիք., պհլ.* vasnād *հպրս.* vəšna, *զնդ.* vasna. *(վերջին երկուսը նշանակում են «շնորհիվ, ըստ կամաց, կամօքն». իսկ մյուսները՝ հայերենի պես «համար»)։ Շատ սովորական է Ե դարի հայերենում. ինչպես՝* Վասն իմ, վասն մեր, վասն մարդոյ, վասն անուան իմոյ, վասն եղբարց, վասն օգտի, վասն բանին, վասն արքայութեան:

Հալածեալ վասն արդարութեան:

Վասն այսորիկ, վասն այդորիկ, վասն այնորիկ:

Դու եթէ խոնարհիս, վասն քո խոնարհիս. իսկ ես *(տէրս)* ո՛չ վասն իմ ինչ, այլ վասն քո *(օգտի). Ոսկ. Մ. Գ. 12։*

Բառերի անջատմամբ՝

Վասն զթշնամիս սիրելոյ *(իմա՛* Վասն սիրելոյ զթշնամիս):

Կարող է լինել հետադաս. ինչպես՝

Լեզուք՝ նշանակի վասն են *(լեզուները բան նշանակելու համար են)։*

—Երդման պէտք՝ հաւատալոյ վասն են:

Արծաթոյ վասն. *Ոսկ. Մ. Գ. էջ 94։*

Թե՛ անջատվել և թե՛ իր վրա նախդիր է ստացել՝ Խոր. Ա 1 հետևյալ հատվածում. Զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս *(իմա՛* յարմարել զբանս վասն կշտամբութեան նոցա):

Ուշ շրջանում, հունաբան հեղինակների մոտ ստանում է նաև «շնորհիվ, միջոցով, միջնորդությամբ» իմաստը. ինչպես՝ Վասն

խաչի քո պատուականի. *Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին, Տէ՛ր, ընկալ զաղաչանս մեր (Ժմ.)։*

Այս բոլոր օրինակների մեջ վասն *ստացել է սեռական խնդիր. բայց մի քանի տեղ, հետևողությամբ հունարենի, դրվում է աներևույթի հետ՝ հայցական հոլովով. այսպես՝*

Վասն զանկեալսն յարուցանել. *Սեբեր. Բ։*

Ամենայն քահանայ վասն մատուցանել զուխտսն և զպատարագս ճաստատի. *Եփր. Եբր.։*

Ուշ ժամանակի ձև է նաև վասն այն. *Վրք. Հրց. ԺԳ (փոխանակ ասելու* վասն այնորիկ):

Սրանից կազմված ձևեր են՝ վասն որոյ *«որի համար, ուստի»,* վասն զի *«որովհետև»,* վասն է՞ր *«ինչո՞ւ համար»։*

Վասն *բառի հոմանիշներն են յաղագս, աղագաւ, սակս, որոնք բոլորը պատճառ ցույց տվող նախադրություններ են գրաբար լեզվի մեջ։*

Այս հոմանիշներից առաջինը ընդհանուր և սովորական ձևն է մեսրոպյան շրջանի հայերենում. մյուս երկուսը գործածվում են միայն կրկնությունից խուսափելու համար։ Համտ.

Վասն համբերութեան առաքելոցն, զոր յաղագս Քրիստոսի համբերեցին բազում և մեծամեծ վշտաց. *Եւթաղ, 170։*

Գոհութիւն յեկեղեցոյն վասն առաքելոցն յաղագս հաւատոյն ժուժկալութեան. *Եւթաղ, 175։*

Վասն խռովութեան որ եղև ի Թեսաղոնիկէ յաղագս քարոզութեան և փախստեան Պաւղոսի. *Եւթաղ. 179։*

Վասն յուսոյ և սրբութեան զոր պարտիմք յաղագս որդեգրութեան. *Եւթաղ. 198։*

Վասն զգուշութեան հաւատոցն որ ի Քրիստոս յաղագս յառնելոյ ի վերայ ամպարշտաց. *Եւթաղ. 206**։

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս առնէր. միթէ կակա՞ծ ինչ ուտէք էր նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել. *Եզն. 129։*

Կարող է գործածվել նույնիսկ կրկնությամբ. ինչպես՝ Վասն այսօրիկ աղագաւ. *Վրք. Հրց. Ա 631։*

Կիլիկյան շրջանում դեռ ապրում է վասն *բառը, բայց ձևափոխված և դարձած* վանց *(Կոստ. Երզն. 135, 138. Անսիզք 13, 19)։*

* *Այս մասին տե՛ս Վարդանյան, Եւթաղ, 206, որտեղից քաղել եմ և օրինակները։*

Սրա ծագումը Karst *106 բացատրում է* վասն *բառից շրջված* վանս, *հետո* վանտս, *հետո էլ* վանց:

Արդի բարբառներից միայն Մշ. և Ջթ. պահել են այս բառը, առաջինը վասն, *երկրորդը՝* վանց *ձևով։ Ուրիշ ո՛չ մի բարբառում և գրականում նույն երեք ձևերից ո՛չ մեկը կենդանի չէ մնացած և նրանց փոխարեն առաջացել է* համար, *որ ծագում է* համար *«հաշիվ» բառից։ Սրա համար հնագույն օրինակներն են՝*

Ճաշոյ իւրոյ համար. *Վրք. հրց. Ա 271։*
Վայելչութեան և գեղոյ համար. *Վրդն. Սաղմ.։*

Ավելի հին ձևն է ի համար *«ի հաշիվ», որ գտնում ենք Խոր. Բ 7, 87.* [Զանդրանիկն] պահէ առ իւր ի համար թագաւորութեան. Շինեալ և տուն ի համար թագաւորութեան. Շինեալ և տուն ի համար fեռ իւրոյ խօսրովիդխտոյ:

Բարբառներում պահվում է միշտ համար, *որի ստացած ձևերն են՝*

Ալշ., Ախց., Խրբ., Կր., Ննխ., Պլ., Ռ., Սեբ., Սչ. համար, *Ասլ.* hմար, *Տիգ.* hումըր, *Հմշ.* hօմար, hումար, *Ջթ.* համօյ, hամոր, *Սվեդ.* hումուր, *Տփ.* համա, ամա, *Մկ., Ոզմ., Վն.* խամար, *Ջղ., Սլմ.* խմար (*փղքշ. Ջղ.* խմարիկ), *Մրղ.* խամա, խմա, *Գոր., Ղրբ.* մhար, *Հճ.* hամօ, *Հւր.* մար:

Վերջինը գտնում ենք նաև Հվր. չումա՞ր, *Շմ.* չմա՞ր *«ինչո՞ւ համար» ձևերի մեջ։*

Գրական լեզվի մեջ համար *ունի երկու նշանակություն. մեկը ցույց է տալիս պատճառ, մյուսը նպատակ. առաջինը եղածի արդյունքն է, երկրորդը դեռ չէ եղած և պիտի լինի. ուրիշ բառով՝ մեկը* պատճառով, որովհետև, *մյուսը՝* որպեսզի, նպատակով, *օրինակ՝*

— Ինչո՞ւ էf հանդիմանում սրան:— Այս երեխային ծեծելու համար (*որովհետև*)։

— Ինչո՞ւ հաց չես ուտում:— Կուշտ եմ՝ նրա համար. Կուշտ լինելուս համար (*որովհետև*)։

— Այս ոչխարը ինչո՞ւ մորթեցիf:— Միսը ծախելու համար (*որպեսզի*)։

— Այս գիրfը ինչո՞ւ առիր:— Կարդալու համար (*որպեսզի կարդամ, դեռ չեմ կարդացած*)։

Այս երկու հակառակ իմաստները շարունակ շփոթվում են արևելյան հայերենում, հետևողությամբ Թուրքերենի, որ երկու դեպքումն էլ գործածում է ičun *«համար». իսկ արևմտյան հայե-*

ընը զանազանում է այդ երկուսը՝ առաջին դեպքում դերբայի վրա դնելով ն դիմորոշ հոդը։

Ահա մի գեղեցիկ օրինակ Պարոնյանի «Ազգային ջոջեր»-ից. Կյանքին մեջ երբեք փողպատ և ողջմտություն գործածած չունի. ոչ թե չունենալուն համար (=պատճառով), այլ ինքզինք ճեղության հպատակ չընելու համար [=*որպեսզի*] (*Պարոնյան, Երկերի լիակ. ժող., Հ. Գ. 1932, 48*)։

Երկու գրական լեզուներն էլ գիտեն միայն համար, *որ սեռական հոլովով խնդիր է ստանում միշտ և նշանակում «հատկացում, պատճառով, նպատակով». ինչպես՝*

Լրագրի վերջին երեսը յայտարարութեանց համար է:
Խիստ բնութեանդ համար քեզ չեն սիրում:
Քեզ տեսնելու համար եկայ:
Սրա համար=սոր համար *«այս պատճառով»։*
Ինչի՞ համար=ինչո՞ւ համար *«վասն է՞ր»։*

28. Ի վերայ

Գործ է ածվում նախադաս և ստանում է սեռական հոլովով խնդիր. նշանակում է

1) «վրա». օրինակ՝

Ե՛լ ի վերայ լերինդ:
Օձ ի վերայ լանջաց և որովայնի գնայ:
Ի վերայ հնացեալ ձորձոյ. *Մատթ. Թ 16։*
Որ էր ի վերայ երեսաց երկրի. *Ծննդ. Է 23։*
Ծագէ զարև ի վերայ արդարոց և մեղաւորաց. *Մատթ. Ե 45։*
Հրամայեա՛ ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոյս. *Մատթ. ԺԴ 28։*
Ետես թզենի մի ի վերայ ճանապարհին. *Մատթ. ԻԱ 19։*
Իբրև ի վերայ աւազակի ելաք. *Ղուկ. ԻԲ 52։*

2) Գործ է ածվում նաև «համար, սիրուն, խաթրու» իմաստով. ինչպես՝

Խրատել զձեզ եօթնապատիկ ի վերայ մեղացն ձերոց. *Ղևտ. ԻԶ 18։*

Կոչեցին զմանուկն Վայքաբովթ՝ ի վերայ տապանակին Աստուծոյ և ի վերայ սկեսրայրին նորա և ի վերայ առն իւրոյ. *Ա Թագ. Դ 21։*

Զանձն իմ իսկ եդից ի վերայ քո:

Մեռանել ի վերայ ազգին:

Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, զի զՈրդի իւր միածին ետ ի վերայ նորա. *Ագաթ.*։

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց. *Յովհ. Ժ 11*։

Ես եմ ասէ հովիւ քաջ, որ ի վերայ խաշանց իմոց մեռանիմ. *Ագաթ.*։

3) Գետի համար գործածվելիս՝ հասկացվում է «ափին, եզերքում». ինչպես՝

Ի յաւանին Վարդգիսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. *Խոր. Բ 16*։

Կարող է գործածվել նաև խնդրին հետադաս ձևով. ինչպես՝

Ի մեր վերայ, յիւր վերայ:

Յոյր վերայ տեսանիցես:

Յորոց վերայ աշտարակն անկաւ:

Հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ:

Եւ ինքն ի ճշմարտութեան վերայ չև է հասեալ. *Եղիշ. Ը*։

Ի պատոյն վերայ և այլ ևս պարգևս մեծամեծս ի նմանէ գտանէր. *Եղիշ. Գ Ը*։

Ի վերայ *կարող է մնալ առանց խնդրի և այն ժամանակ ունի մակբայի արժեք. այս դեպքում նա բռնում է նախադրության և մակբայի միջին տեղը. օրինակ՝*

Եւ ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա մինչև եկն եկաց ի վերայ ուր էր մանուկն *(Մատթ. Բ 9)*։

Այսպես է նաև հույն բնագիրը, որի ճիշտ թարգմանությունն է հայը.

Καὶ ἰδοὺ ὁ ἀστὴρ ὃν εἶδον ἐν τῇ ἀνατολῇ, προῆγεν αὐτούς, ἕως ἐλθὼν ἔστη ἐπάνω οὗ ἦν τὸ παιδίον.

Նույն կարգը պահում է նաև լատինը. Usque dum veniens staret supra ubi erat puer. *Նույնը շատ լավ տվել է նաև անգլերենը.* Till it came and stood over where the young child was. *բայց ֆրանսերենը շեղվելով այս ձևից, ավելացրել է խնդիրը և ասում է՝* Jusqu'à ce qu'étant arrivé sur le lieu où était le petit enfant, elle s'y arrêta. *Թեև կարող էր նույն ձևը համարեցնել* au dessus *«վրան» բառով (Թիրյաքյան, Հայ-Երան. ռուս., էջ 172—173)*։

Ուշ ժամանակ, քերթողական ազատությամբ, առանց ի *նախդիրի ունենք՝*

Ռան արքունանեմ վերայ ծովու քայլ. (*Նար. Տաղ.*)։

Ի վերայ *բառի իբրև բացառականն է գործածվում* ի վերուստ, *որ կազմված է* -ուստ *մասնիկով. ինչպես՝*

Ի վերուստ երիւարացն *«ձիերի վրայից». հմմտ.* յետուստ:

Արդի բարբառներում նախդիրը կորցնելով ստացել է հետևյալ ձևերը. Ջղ. վերա, *Շմ.* վէրա̈, *Ախց., Ասլ., Խրբ., Կր., Մշ., Ննխ., Պլ., Ռ., Սչ., Տփ.* վրա, *Սլմ.* վրա̈, *Ագլ.* վա̈'րա̈, *Տիգ.* վրա̈ն, *Մշ.* վրէն, *Վն.* վէրէն, *Մրղ. Հւր.* վիրա̈, *Զթ.* վիյա̈, վիրա̈, *Հճ.* վիյօ, *Գոր., Ղրբ.* յըրա:

Մշո բարբառում ի վերայ *ավելի կրճատվելով դարձել է* վըր *և գործածվում է նախադաս։*

Աշխարհաբարի մեջ ի վերայ *կորցնելով նախդիրը դարձավ* վերա, *ինչպես գործածվում էր արևելյան գրականում երկար ժամանակ։ Այժմ ե ձայնավորն էլ կորցնելով՝ դարձել է* վրա, *որ հավասարապես գործածական է երկու գրական լեզուների մեջ։*

Այս բառը առաջինն եղավ, որ գրության մեջ անձայն յ *կորցնելով՝ գրվեց* վրա:

Ես դողդողամ իր վրայ,
Նէ իմ վրայ գորովի... (*Դուրյան*)։
Շուշանին պէս դալկութիւն
Եթէ ըլլար քու վրայ (*Դուրյան*)։

29. Ի վերոյ, գեր ի վերոյ

Ծագում են վեր *արմատից, ինչպես և* ի վերայ. *այս* վեր *ձևն էլ առաջանում է հնխ.* uper *ձևից (պարզական* upo > *հյ.* հուպ *արմատից*+ ero *մասնիկով). հմմտ. սանս.* upari, *խոթանի իրան.* vira, *հն.* ὑπέρ, *լտ.* s-uper, *գալլ.* ver. *գերմ.* über, *անգլ.* over *«վեր, ի վերայ» նշանակությամբ։*

Իբրև նախադրություն առնում է սեռական խնդիր և դրվում է միշտ նախադաս. նշանակում է «վերը, վերևը, վերի դին». ինչպես՝

Ի մէջ ջրոյն որ ի ներքոյ հաստատութեանն և ի մէջ ջրոյն որ ի վերոյ հաստատութեանն. *Ծննդ. Ա 7*։

Ի վերոյ երկնից *«երկնքի վերևը»*։

Կարող է ստանալ նաև քան զ *նախադրությունը և նշանակում է «ավելի վերև կամ բարձր քան...». ինչպես՝*

Բայց միայն աթոռովս ի վերոյ եղէց ես քան զքեզ. *Ծննդ. ԽԱ 40*։

Որոյ իցեն կարթք ի վերոյ քան զոտս. *Ղևտ. ԺԱ 21։*
Ի վերոյ քան զհաստատութիւնն. *Եզեկ. Ա 26։*
Որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս։
Ի վերոյ քան զօրէնսն առաքինանայր. *Ոսկ. Մ. Ա. 4։*

Ավելի բարձր աստիճան է ցույց տալիս գեր ի վերոյ, *որ նույնպես ստանում է* քան զ՛ *հայցականով խնդիր. ինչպես՝*

Գեր ի վերոյ լինիցին ախոյանին. *Եզն. 57։*
Ճոխանամք նոքօք գեր ի վերոյ քան զարժանն. *Շար.*

Աշխարհաբարում չնչված են այս ձևերը. կարելի է ասել միայն վերը, վեր, վերև *և այլն։* Տունէն վեր, լեռնէն վեր=Տնից վերև, սարից վերև, գլխուս վերևը *և այլն։*

30. Փոխանակ

Ծագում է փոխ *արմատից* -ան *և* -ակ *մասնիկներով. իբրև նախադրություն ստանում է սեռական հոլովով խնդիր և ընդհանրապես գոյականին նախադաս է։ Նշանակում է «փոխարեն, մեկի կամ մի բանի տեղ». ինչպես՝*

Փոխանակ այնորիկ անաւադիկ ես. *Եզեկ. ԻԸ 7։*
Փոխանակ այնորիկ լուարուք. *Եզեկ. ԼԴ 9։*
Փոխանակ այնր տանջանաց դիւրեցեր. *Իմաստ. ԺԶ 2։*
Փոխանակ միոյ գլխոյն իմոյ. *Բ Մակ. ԺԲ 24։*
Փոխանակ ձկանն օ՞ձ տայցէ նմա. *Ղուկ. ԺԱ 11։*
Փոխանակ պղնձոյն բերից քեզ ոսկի, և փոխանակ երկաթոյն բերից քեզ արծաթ, և փոխանակ փայտի բերից քեզ պղինձ և փոխանակ քարի տաց քեզ երկաթ. *Ես. Կ. 17։*

Քիչ անգամ գործածվում է ընդ *նախդիրով. ինչպես՝*

Հատուցին չար փոխանակ ընդ բարւոյ. *Ա Մակ. ԺԶ 17։*
Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. *Սաղմ. ԼԴ 12։*
Ոյք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. *Սաղմ. ԼԷ 21։*
Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ. *Սաղմ. ՃԸ 5։*
Փոխանակ ընդ քո զիմ անձնս տայցեմ. *Եւս Պտմ. Գ 23։*
Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն. *Եզն.։*
ԶՇմաւոնն եթող փոխանակ ընդ իւր Քրիստոս. *Եփր. Աւետ.։*

Հազվագյուտ է հետադաս գործածությունը։ Համաբարբառն ունի միայն մի օրինակ.

Ես քո փոխանակ եղէց ի Տէր. *Փիլիմ. 20։*

Փոխանակ *և* փոխարէն *միևնույն նշանակությունն ունեն։ Այժմ գրական լեզվում առաջինը գոյականից առաջ է դրվում, իսկ երկրորդը՝ հետո. ինչպես՝*

Փոխանակ հացի=հացի փոխարէն:

Փոխանակ սղոցի տապար են գործածում=Սղոցի փոխարէն տապար են գործածում:

Փոխանակ խրատելու հանդիմանում է=Խրատելու փոխարէն յանդիմանում է:

Ուշ շրջանի հայերենում կա սրա կրճատ ձևը՝ փոխան՝ *հետադաս կամ նախադաս. ինչպես՝*

Փոխան գառինն. փոխան սիրոյ. փոխան գառանցն. փոխան Յոբայ ջանին. *Շար. և Յս. Որդի։*

Մեր փոխան միշտ պատարագի. *Լմբ. Պտրգ.։*

Փոխանակ բառին հոմանիշ է նաև ի տեղի, *որ իբրև նախադրություն գործածվում է թե՛ այս և թե՛ ի* տեղւոջ *ձևով. ինչպես՝*

Յիւր տեղի թագաւորեցուցանել. *Ա Մակ. Ջ 16։*

Եղև նոցա աղիւսն ի տեղի քարի և կուպր ի տեղի շաղախոյ. *Ծննդ. ԺԱ 3։*

Լեր որբոց որպէս հայր և յառն տեղի. *Սիր. Դ 10։*

Դա ձեզ լիցի ի տեղւոջ հօր. *Ա Մակ. Բ 65։*

Յանիծից տեղւոջ կայ. *Կիւրղ. Օրին. (անեծքի տեղ է գործածվում)։*

Ուշ շրջանի հայերենում դարձավ ի տեղ. *ինչպես՝*

Ի տեղ մօր զմանկունսն գրել գգուել և սնուցանել պարտի. *Բրսղ. Թղթ.։*

Ի հօր տեղ դու ես *«հորս տեղն ես». Վրք. և վկ. Ա 183։*

Ուստի հետին գրչագրական սխալ եմ համարում Եփր. Թուոց և Ծննդ. Ահարոն էր Մովսեսի ի տեղ մարգարէի. Եղիցի արմտիքն յիսուն ամի ի տեղ գնոց *(փխ. ի տեղի)։*

Բարբառներում վերացված է այս ձևը և նրա փոխարեն գործ է ածվում տեղը, տեղաք. ինչպես՝ Անոր տեղը. հրա տեղաք:

Գրական լեզուն ընդունում է փոխանակ, փոխան, փոխարէն, տեղ, տեղը. *բոլորն էլ սեռական խնդրով, առաջինը նախադաս, երկրորդը թե՛ նախադաս և թե՛ հետադաս, մյուսները միշտ հետադաս. ինչպես՝*

Փոխանակ իր եղբօր։
Փոխանակ լսելու իմ խօսքը։
Փոխանակ հացի և շաքարի։
Վարդի փոխան քեզ փուշ...
Փոխան ամպոյ հուր հիւսքի՝
Տեղայր մարգրիտ և ոսկի *(Դուրյան)*։
Իմ փոխարէն, քո փոխարէն, իմ խօսքերը կատարելու փոխարէն։
Հացի տեղ, ջրի տեղ։
Եղբօրը տեղն ինքը թագաւորեց։
Հօրս տեղը մարդ ես։
Քու տեղդ ե՛ս պատասխանեմ։
Փախչելու տեղ՝ դէմ դնելու էր։

31. Քան

Բնիկ հայերեն բառ է և ծագում է հնխ. K^{w}an *ձևից, որից նաև լտ.* quam, *օսկ.* pan, *ումբր.* pane, *գոթ.* han, *հպրուս.* kan, *լիթ.* ka *և այլն։*

Իբրև նախադրություն միշտ նախադաս է և պահանջում է հայցական խնդիր և հատկապես զ նախդիրով որոշյալ։ Նշանակում է՝

1) «Չափ, այնքան որքան». ինչպես՝

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ. *Մատթ. ժէ 19։*

2) Ցույց է տալիս համեմատություն, որ կարող է լինել ավելի կամ պակաս. ինչպես՝

Փոքր է քան զամենայն սերմանիս. *Մատթ. ժԳ 32։*
Մեծ է քան զամենայն բանջարս. *Մատթ. ժԳ 32։*
Հզօրագոյն քան զնա. *Ղուկ. ժԱ 22։*
Սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. *Յովհ. Գ 19։*
Սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի. *Յովհ. ժէ 24։*
— Լաւ է մեռանել քան զմուրանալ. *Սիրաք. Խ 29։*
Բուռն էր քան զմեզ. *Դան. ժԳ 39։*
Քան զաւազ ծովու ծանրագոյն լինէր. *Յոբ Զ 3։*
Էին աւելի քան զքառասուն. *Գրծ. ԻԳ 13։*

3) «Փոխանակ» իմաստով. ինչպես՝

Քան Զրուանայ որդի արարիչ տայր, ինքն իսկ իւրովի չկարէ՞ր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՝ առնել. *Եզն. 130։*

Կարող է ստանալ նաև զանազան հոլովով խնդիրներ՝ համաձայն նախադասության կազմին. այս դեպքում աշխարհաբարում հաճախ թարգմանվում է «քան թե». օրինակ՝

Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց...քան քաղաքին այնմիկ. *Մատթ. Ժ 15։*

Վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի. *Մարկ. ԺԴ 5։*

Հզօր է բորբոքումն նորա քան զհրոյ. *Ոսկ. Յովհ. Բ 27։*

Քրիստոնեայն յաղքատութեանն առաւել պայծառանայ քան ի մեծութեան. Յաղքատութեանն քան ի մեծութեանն դիւրին է զառաքինութիւնն կատարել. *Ոսկ. Եբր.։*

(Տե՛ս նաև քան *իբր շաղկապ)։*

Բարբառներում քան *նախադրությունը պահվում է շատ տեղ, բայց միանալով հաջորդ հայցական խնդրի զ նախդիրի հետ և կազմելով մի բառ։ Այս բառը շատ զանազան ձևեր է ստացած. ինչպես՝*

Ագլ., Ջղ., Տփ. քանզ, *Տփ.* քանս, *Ագլ., Հւր., Սչ.* քանց, *Մշ.* քանծ, *Տփ.* կանց, ղ'անց, *Մկ.* քյոնց, *Ջղ.* քանչ, *Վն.* չանձ, *Ջղ.* քինչ (<քան ինչ), *Ալշ., Բլ., Խրբ., Մշ.* քընց, *Մշ.* քընծ, *Սեբ.* քընձ, *Մշ.* խընծ, *Բլ., Մշ.* խընց, *Բլ.* կըց, *Ալշ.* քըն.— *Կրճատ ձևով էլ ունենք՝ Պրտ.* քըզմէզ, քըզքէզ *«քան զմեզ, քան զձեզ». օրինակ՝ Ջղ.* Քինչ քեզ լէէվ ամ խբար *«Քեզնից լավ գիտեմ»։*

Քան *մասնիկը Ատափազարի գավառականում գործածական է. ցույց է տալիս վիճակ. օրինակ՝*

Նստելուքա՞ն գործ է չէ նէ կայնելուքան:

Ուտելուքան չեն խօսիր:

Արդյոք հայերեն քան *նախադրությո՞ւնն է, թե թրք.* کن iken, Ken (?):

Քան *նախադրության տեղ սխալ է գործածել* քանս *ձևը. օրինակ՝* Կեանքն առաւել թանգ բան է, քանս Տրոյայի մէջ դիզուած բոլոր գանձերը *(Հոմերի Իլիակ., թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 112)։ Կամ՝* Դուք սիրելի էք ինձ առաւել, քանս բոլոր յոյները *(անդ, էջ 107)։*

Քան *գործ է ածվում նաև իբր մակբայ. ինչպես՝*

Եւս քան զևս զարմանային. *Մարկ. Է 37։*

Քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն. *Բուզ. Գ 21։*

Արդի գրականում ընդունված է քան *նախադրությունը. Հին գրողները տալիս էին նրան նաև զ նախդիրով խնդիր. ինչպես՝*

Քան զպատմական անձինս աւելի կ'արժէր նա *(Օտյան)*։
Յանդուգն ըլլալ է լոկ քան
Զաշխարհակալն Արտաշէս *(Դուրյան)*։
Նա աշխարհի քան զկերտ:
Մտածեց ոգի տալ կնոջ *(Դուրյան)*։

Արդի գրականում այս զ նախդիրն էլ վերացված է և պարզապես ասում ենք՝ քան Արտաշեսը *և այլն։*

7. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Վերն ասացինք, թե նախադրությունները նախկին հոլովյալ բառեր են, որոնք իրենց ինքնությունը կորցրած, մի որևէ քարացած ձևի տակ շարունակում են իրենց գոյությունը։

Կան նախադրություններ, որոնք հեշտությամբ մատնում են իրենց ծագումը, բայց կան նախադրություններ էլ, որոնց ծագումը երևան հանելու համար լեզվաբանական ու բանասիրական երկար քննության կարիք կա։ Օրինակ, երբ գրաբար ասում ենք՝ Զմիջոցաւ ճանապարհին *«ճամբի կեսերքում»,* Զհասարակածաւ գիշերոյ *«գիշերւայ կեսերքին», զգում ենք անմիջապես, որ* մէջ *և* հասարակ *բառերի հետ է մեր գործը. բայց երբ ասում ենք ֆրանս.* chez *«մոտը» (հնչվում է* še *), ո՞վ կարող է գուշակել, թե նա լտ.* in casa *«տանը, տնում» ձևն է, որ դարձել է նախ ֆրանս.* en chez *«տան մեջ», հետո կորցրել է* en *նախդիրը և դարձել սոսկ* chez=še *«մոտ», որ ո՛չ մի նմանություն և հիշողություն չի պահում լտ.* in casa *«տան մեջ» ձևից։*

Երբ կազմում ենք գրաբար նախադրությունների համեմատական դասավորությունը, տեսնում ենք, որ նրանք սեռական, հայցական, նախդրիվ հայցական, ներգոյական, բացառական, գործիական և պարառական հոլովներ են։ Ահա մի փոքր օրինակ.

Սեռ.	—			*առաջի*				
Հյց.							*զհետ*	
Նխ.	*Հյց.*	*ի մէջ*	*ի ներքս*	*յառաջ*	*յետ*	*յաղագս*		
Բցռ.		*ի միջոյ*	*ի ներքոյ*	*առաջոյ*	*յետոյ*		*հետէ*	*արտաքոյ*
Գրծ.						*աղագաւ*		
Պր.				*զառաջեաւ*				
Ներգ.		*ի միջի*						

Այս փոքրիկ ցանկից երևում է, որ նախադրություններից մի քանիսը, հատկապես տեղ ցույց տվողները, հոլովական զանազան ձևեր պահել են. այսպես մէջ, ներքոյ, առաջ *և այլն։ Այսպես է նաև* հանդէպ *նախադրությունը, որ ունի նախդրիվ հայցական* ի հանդէպ, *բացառական* ի հանդիպոյ *և ներգոյական՝ ի հանդիպոջ. օրինակ՝*

Գիւղն որ հանդէպ մեր կայ:
Ի հանդէպ երեսացն նեթ արշաւին. *Եզն. 18։*
Կացին ի հանդիպոյ քաղաքին *(դիմացը)։*
Տեսին ի հանդիպոյն *(դիմացից)։*
Կացին ի հանդիպոջ *(դիմացը)։*

Վերոհիշյալներից դուրս կան նաև անսովոր հոլովներ. այսպես զ *նախդիրով սեռական է ներկայացնում* զկնի, *որի արմատն է* կինք *«հետք» Յոբ ԺԸ 12. համմտ.* զքարի հարկանել:— *Առանց նախդիրի հայցական են* պէս *և* օրինակ *նախադրությունները.* Շանց օրինակ *«շների նման»,* Օձից պէս *«օձերի նման». ինչպես որ որոշյալ հայցական է* զօրէն:

Հետաքրքրական են հատկապես -ուստ *մասնիկով կազմված նախադրությունները, որոնք բացառականի (երբեմն էլ ներգոյականի) արժեք ունեն. ինչպես՝* յետուստ, ի վերուստ, ի ներքուստ, արտաքուստ, ի հեռուստ:

Նախդիրների գոյությունը զգալու պատճառով է, որ հները կարող էին անջատել նախդիրը բառից. ինչպես՝ զմեր կնի, մի զմիոյ կնի, ի ձեր վերայ, յիմ ձեռն, ի հայհոյութեան աղագս *և այլն։*

Միջին հայերենում, երբ նախդիրները սկսեցին ընկնել և հոլովական վերջավորությունները խանգարվեցին, նախադրությունները նորից սկսեցին հոլովվել. օրինակ՝ դուռն *բառից հոգնակի հայցական* դուրս, *նախդրիվ հայցական* ի դուրք, *բացառական* ընդ դրացէ, ընդ դրուցէ, ընդ ներքսէ *և այլն։*

Բարբառներում և աշխարհաբարում ավելի զարգացավ այս երևույթը և բոլոր տեղ ցույց տվող նախադրությունները սկսեցին որոշյալ հոդ ստանալով հոլովվել, այսինքն դարձան սովորական գոյական։

Մենք գիտենք, որ նախադրությունները, մակբայների, շաղկապների և ձայնարկությունների հետ կազմում են քերականության մեջ անփոփոխ մասունք բանիների ջարքը։ Եվ եթե վերևում տեսանք գրաբար նախադրությանց մեջ հոլովյալ ձևեր (ի միջի, ի

միջոյ, յետոյ, ի վերայ *և այլն), սրանք ո՛չ թե նախադրություններ են, որ հոլովվել են, այլ գոյականներ, որոնք այսինչ կամ այնինչ հոլովյալ ձևի տակ նախադրություն են դարձել. ճիշտ ինչպես, օրինակ,* ձեռամբ, *որ* ձեռն *գոյականի գործիականն է, վերածված անկախ նախադրության և ո՛չ թե նախադրություն՝ հոլովված։*

Նախադրությունը անհոլով է. գրաբարում, ինչպես և ռուսերենում կամ եվրոպական այլ լեզուներում նման երևույթ չկա. օրինակ՝

Յարեաւ թագաւորն և կանայք իւր, և ի բաց եդին զթագն ի վերայ գլխոյ թագաւորին *(Եփր. Դ 119), փոխանակ ասելու «գլխի վրայից»։*

Քարոզքն առաջի աղաղակեն *(Բրսղ. Վեցօր., էջ 85—86), թեև կարելի է թարգմանել «առջևում», բայց կարելի է հասկանալ նաև «առջևից»։*

Եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջուրցն *(Մատթ. ԺԴ 29), այսինքն «ջրերի վրայից կամ վրայով»։*

Եւ ահա կին մի... մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ... *Մատթ. Թ 20 (Նշ. հետևից)։*

Կայր յետոյ առ ոտս նորա. *Ղուկ. Է 38 (Նշ. հետևից)։*

Սակայն կան լեզուներ, որոնց մեջ նախադրությունները անփոփոխ մասն բանի չեն, այլ գոյականի նման հոլովվում են։ Այսպես են, օրինակ, հունգարերենի նախադրությունները, որոնք ունեն երեք հոլով. ներգոյական, նախդրիվ հայցական և բացառական։ Ֆիններենի նախադրությունները ո՛չ միայն հոլովվում են գոյականի պես, այլև ստանում են բաղդատական ու գերադրական աստիճան՝ ածականի պես։ Այսպես նաև մակբայները։

Թուրքերենի մեջ էլ նախադրությունները հոլովվում են. օրինակ՝ altə *տակը,* altəna *(տր.) դեպի տակը,* altənda *(ներգ.) տակում,* altəndan *(բցռ.) տակից,* aitlarə *տակերը,* altlarəna *դեպի տակերը,* altlarənda *տակերում,* altlarəndan *տակերից։ Կարող են ստանալ նաև ստացական հոդ և նրա հետ հոլովվել. ինչպես՝* üstü *վրա,* üstüm *վրաս,* üstün *վրադ,* üstümden *վրայիցս,* üstünden *վրայիցդ,* üstlerinden *նրանց վրայից։ Վերջապես կարող են այս կամ այն հոլովի վրա ավելացնել հարաբերական դերանունը, այս ձևով կազմել մի նոր գոյական և ամեն ձևով հոլովել։ Օրինակ՝ նույն* üstü *«վրա» նախադրության սեռականն է* üstünün *«վրայի» և ներգոյականն է* üstünde *ի վերայ (իբր թե վերայում!)։ Այս բառերի վրա ավելացնելով* Ki *«որ» հարաբերականը, ստանում ենք՝*

üstününki   նա որ նրա վրայինին է պատկանում,
üstündeki   նա որ նրա վրա է գտնվում։

Սրանք կարող են հոլովվել. ինչպես՝

սեռ. üstününkinin   նրա վրային պատկանողին
բացռ. üstününkinden   նրա վրային պատկանողից
սեռ. üstündekinin   նրա վրա գտնվածին
բացռ. üstündekinden   նրա վրա գտնվածից և այլն և այլն։

Թուրքերեն քերականության այս դրությունը ազդել է նաև հայերենի վրա և մեր նախադրություններն էլ սկսել են հոլովվել. օրինակ՝

Արևելահայ գրական

Ո. Հ.	ներքևը	ներքևները
Ս.	ներքևի	ներքևների
Տ.	ներքևին	ներքևներին
Բ.	ներքևից	ներքևներից
Գ.	ներքևով	ներքևներով
Ն.	ներքևում	ներքևներում

Արևմտահայ գրական

Ո. Հ.	տակը	տակերը
Ս. Տ.	տակի	տակերուն
Բ.	տակէն	տակերէն
Գ.	տակով	տակերով

Արևելահայ գրականում միավանկ նախադրությունները կարող են հոգնակի դառնալ նաև -երք ձևով և այն ժամանակ նշանակում են «այնտեղ և նրա շուրջը». ինչպես մէջերքը, տակերքը, մօտերքը, մօտերքից, կողքերքը և այլն։

Արևմտահայ բարբառներում կա -օք վերջավորությամբ մի ձև, որ նշանակում է «մի քիչ ավելի այնտեղ». ինչպես՝ մէջօք, քովօք, ներսօք, դուրսօք, առջևօք, ետևօք... օրինակ՝ քիչ մը անկէ ներսօք դիր «նրանից մի քիչ ավելի դեպի ներս դիր». Սա պատին քովօքը շարէ։— Նույն ձևն ունի վրայօք, որ սակայն նշանակում է «վրայով, մասին». ինչպես՝ Անթառամին աղջկանը վրայօք խել մը խօսքեր ըսած է (Պարոնյան)։

Հայերեն նախադրությունները կարող են առնել ստացական հոդ՝ փոխանակ իմ, քո և այլն ստացականածականների. ինչպես՝

իմ վրայ — վրաս — իմ վրաս
քո վրայ — վրադ — քու վրադ
նրա վրայ — վրան — անոր վրան
մեր վրայ — վրանիս — մեր վրան
ձեր վրայ — վրանիդ — ձեր վրան
նրանց վրայ — վրանին — անոնց վրան

Առաջին շարքը արևելահայ ձևն է, երրորդը հատկապես արևմըտահայ. իսկ երկրորդ շարքի եզակին ընդհանուր է երկուսին, հոգնակին՝ միայն արևմտահայ է, որի փոխարեն արևելահայն ունի վրաներս, վրաներդ, վրաները:

Արևմտահայը ունի նաև վրաներնիս, վրաներնիդ, վրաներնին, *որոնք նշանակում են «մեր վրաները, ձեր վրաները, նրանց վրաները»։*

Այսպես են նաև դէմս, քովդ, առջևը, վերևս, քովերնիս, մէջերնին, առջևնիս, առջևներնիս *և այլն։*

Սրանք կարող են հոլովվել. ինչպես՝

Արևելահայ ձևով

Եզակի	*Ո. Հ.*	*ներքևս*	*ներքևդ*	*ներքևը*
	Ս. Տ.	*ներքևիս*	*ներքևիդ*	*ներքևին*
	Բ.	*ներքևիցս*	*ներքևիցդ*	*ներքևիցը*
	Գ.	*ներքևովս*	*ներքևովդ*	*ներքևովը*
	Ն.	*ներքևումս*	*ներքևումդ*	*ներքևումը*
Հոգնակի	*Ո. Հ.*	*ներքևներս*	*ներքևներդ*	*ներքևները*
	Ս. Տ.	*ներքևներիս*	*ներքևներիդ*	*ներքևներին*
	Բ.	*ներքևներիցս*	*ներքևներիցդ*	*ներքևներիցը*
	Գ.	*ներքևներովս*	*ներքևներովդ*	*ներքևներովը*
	Ն.	*ներքևներումս*	*ներքևներումդ*	*ներքևներումը*

Արևմտահայ ձևով

Եզակի	*Ո. Հ.*	*վրաս*	*վրադ*	*վրան*
	Ս. Տ.	*վրայիս*	*վրայիդ*	*վրային*
	Բ.	*վրայէս*	*վրայէդ*	*վրայէն*
	Գ.	*վրայովս*	*վրայովդ*	*վրայովը*

	Ո. Հ.	վրանիս	վրանիդ	վրանին
Հոգնակի	Ո. Հ.	վրաններնիս	վրաններնիդ	վրաններնին
	Ս. Տ.	վրաններնուս	վրաններնուդ	վրաններնուն
	Բ.	վրաններնէս	վրաններնէդ	վրաններնէն
	Գ.	վրաններովնիս	վրաններովնիդ	վրաններովնին

Թուրքերենի ոճով, կարելի է այս նախադրությունների եզակի սեռականի վրա դնել որոշիչ հոդ և կազմել նոր ստացական, որ եզակի և հոգնակի թվով կարող է դարձյալ հոլովվել. ինչպես՝

վրայինը, վրայինի, վրայինին, վրայինէն=վրայինից, վրայինով, վրայինում,

վրայինները, վրայինների=վրայիններու, վրայիններին=վրայիններուն, վրայիններէն=վրայիններից, վրայիններով, վրայիններում։

Ծառի վրայինը, եղբօրդ քովինը=եղբօրդ մօտինը, պարտէզի մէջինը (միջինը), տանս առջևինէն=տանս առաջինից, ծովուն տակիններուն=ծովի ներքևիններին և այլն։

Կամ ստացականով՝ իմ առջևինը, քո մօտինը, նրա միջինը, ձեր վրայինների, մեր վրայիններից,

Կամ պարզ ստացական հոդով՝ առջևինս, քովինդ, մէջինը, վրայիններնուդ, վրայիններնէս, և կամ ստացականածականով ու ստացական հոդով միասին՝

իմ առջևինս, քու քովինդ, անոր մէջինը, ձեր վրայիններուն, մեր վրայիններէն և այլն և այլն։

Այտն. 122 տալիս է նախադրությանց հոլովման հետևյալ պատկերը՝ իրենց խնդիրներով միասին.

Ո. Հ. քաղքին առջևը

Ս. քաղքին առջևի (իբր ածական գործածված)

Բ. քաղքին առջևէն

Գ. քաղքին առջևովը

Հոգնակի՝ քաղքին առջևները, առջևներուն, առջևներէն, առջևներովը։

Այսպես նաև՝

Ո. Հ. դռան ետևը, տանս մէջը, սեղանին տակը, ձեռքիս վրան.

Ս. ծառին քովի կողովը, դռան ետևի (կամ ետի) երկաթը, անտառին մէջի գուբը, սեղանի տակի փշրանքը.

Բ. պարսպին վրայէն իջան, գեղին մէջէն անցէք, ջրին

տակէն փախցուցին, լեռան քովէն պտտելով, առիւծին առջևէն առեր է, գետին քովէն, եղբօրս դիմացէն.

Գ. ձեռքին վրայովը դպչիլ, ոտքին տակովը ճմլեց, թրին քովովը զարկաւ.

Հոգ. Անտառին մէջերը կը թափառէր, պատին ետևները պահուըտիլ, ձեանց մէջերէն կ'ելլէին, տներու քովերէն և այլն։

Ըստ Այտն. 123 արևմտահայ գրականում անհոլով են վերև, ներքև, բայց կարող են ստանալ ստացական հոդ։ Իսկ արևելահայ գրականում սրանց հոլովումը սովորական է։

Հոգնակի գործածությամբ նախադրությունները նշանակում են նաև «մոտավորապես նույն տեղերը, այնտեղ և շրջակայքը». ինչպես՝ ետևները, առջևները, վրաները, քովերը, դուսերը, վերերը և այլն։

8. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Այն գոյականը (կամ դերանունը), որ անմիջապես կապված է նախադրության հետ, կոչվում է նրա խնդիրը։ Խնդիրը լինում է զանազան հոլովներով, որ լեզվից լեզու տարբեր է։

Վերը տեսանք, որ ֆրանսերենում նախադրության խնդիրը մեծ մասամբ լինում է հայցական, այսինքն թե բառի ուղիղ ձևը պահվում է։ Այսպես է նաև ռումիներենում, անգլերենում և այլն։ Հոլանդերենում ամեն նախադրություն վերցնում է հայցական խնդիր՝ բացի մեկից, որ է te "zu" (Valette, 42)։ Թուրքերենում շատ նախադրություններ (և հատկապես տեղ ցույց տվողները) ստանում են սեռական խնդիր, մյուսները տրական, բացառական և գործիական։

Գրաբարի 72 նախադրություններից 46 հատը ստանում է սեռական խնդիր, մյուսները հայցական, տրական, բացառական, նախդրիվ հայցական, գործիական, մեկն էլ պարառական։ 60 նախադրություն ստանում է միշտ միևնույն հոլովը, մնացյալը ըստ իմաստի կամ ըստ հարմարության զանազան խնդիրներ։ Այնուամենայնիվ գրաբարում նախադրությունների խնդրառությունը որոշ և հաստատուն է։

Միջին հայերենում, երբ հոլովները շփոթվեցին, բնականաբար նախադրությունների խնդրառությունն էլ շփոթվեց։ Գլխավոր շփոթությունը սեռականի և տրականի մեջ է. օրինակ՝ Ընդ մօր իւրոյ ծերոյ (իր ծեր մոր հետ). Վրք. հրց. Ա, 631 (սեռական փոխանակ տրականի)։

Աշխարհաբարում նախադրությունների խնդրառությունը հաստատուն ձև չունի. ապրում ենք անցման շրջանը՝ սեռականի, տրականի և հայցականի միջև։

Այտնյանն իր Քննական քերականության մեջ տալիս է շատ վճռական կանոններ՝ նախադրությունների խնդրառության համար։ Ըստ իրեն՝ ա) «բուն նախադրությունները» առնում են տրական հոլով (էջ 120), բ) գոյականից կազմված նախադրությունները առնում են սեռական հոլով (էջ 121), իսկ գ) մակբայներից կազմըված նախադրությունները առնում են բացառական հոլով (էջ 124)։

Այտնյանի որոշած այս կանոնները դժբախտաբար չեն հաշտվում իրականության հետ։

Ամենից առաջ ինչպե՞ս պետք է զանազանել իրարից «բուն» նախադրությունը, գոյական նախադրությունը և մակբայ նախադրությունը։ Մենք գիտենք, որ մակբայ և նախադրություն միևնույն բաներն են և իրարից զանազանվում են միայն խնդրառությամբ. «բուն» կոչված նախադրությունները նույնպես գոյական են, ինչպես ուրիշները. օրինակ՝ համար (որ է հաշիվ), հետ (որ է հետք), դէմ (որ է դէմք), չափ (որ զուտ գոյական է) և այլն։ Դուրս բառն էլ, որ Այտնյանը դնում է մակբայից դարձած նախադրություն, նույնպես գոյական է՝ դուռն բառից ձևացած։ Այտնյանը ինքն էլ դժվարության մեջ է ընկնում այս կետում և մօտ և հետ բառերը (էջ 24) համարում է մակբայ՝ դարձած նախադրություն (էջ 119—120) և «բուն» նախադրություն։

Ուրեմն նախադրությունների այս երեք դասակարգությունը հաստատուն հիմք չունի, ոչ էլ գիտական ճշտություն։

Արևմտահայ լեզուն ձևական զանազանություն չի դնում սեռականի և տրականի միջև. այս հանգամանքից օգտվելով՝ Այտնյանը «բուն» կոչված նախադրությունների խնդիրը տրական է համարում։ Մեկնելով ինծի հետ, մեզի դէմ, ձեզի չափ և այլն ձևերից, որոնց մեջ ինծի, մեզի, ձեզի հայտնապես տրական են, հետևցնում է, թե թշնամւոյս հետ, որո՞ւ դէմ, գայլի չափ և այլն ձևերի մեջ էլ խնդիրը տրական է, ուստի և հանում է այն ընդհանուր կանոնը, թե «բուն» նախադրությունները տրական հոլովով խնդիր են պահանջում։ Բայց արևելահայ գրականը, որ գիտե զանազանել սեռականը տրականից, այս վերոհիշյալ դեպքերում սեռական է դնում. այսպես՝ թշնամու հետ, որի՞ դէմ, գայլի չափ և ո՛չ թե թշնամուն հետ, որի՞ն դէմ, գայլին չափ. կամ ավելի հարմար օրինակով՝ նրա հետ, նրա դէմ, նրա չափ: Սրանից հետևում է, թե այդ նախադրություն-

ները (հետ, դեմ, չափ և այլն) պահանջում են սեռական խնդիր և ո՛չ թե տրական։ Միայն Ա և Բ դեմքի դերանունները վերցնում են տրական։

Հետաքրքիր է, օրինակ, Այտնյանի վերաբերմունքը (էջ 124) Ուսուցիչներուն հետ ճամբայ ելանք և (նույն էջ) Ուսուցիչներուն հետը ձևերի մասին. առաջինում ուսուցիչներուն համարում է տրական, երկրորդում սեռական! Մինչդեռ արևելյան հայերենով երկուսն էլ պիտի լինեին սեռական՝ ուսուցիչների:

Այս պատճառներով պետք է փոխել Այտնյանի տված կանոնները և աշխարհաբարի նախադրությունների խնդրառությունների համար տալ հետևյալ կանոնները.

Ա) Վեց նախադրություն (ի բուն, դէպի, մինչև, քան (կամ քան թէ), իբրև, որպէս) ստանում են հայցական խնդիր. վերջին երկուսը թեև ստանում են հայցական, բայց իմաստի ճշտությունը պահանջում է հոլովել դրանք իրենց խնդրի հետ. օրինակ՝ Ես ձեզ, իբրև=որպէս իմ ուսուցչին, մատուցում եմ խորին հարգանքներ. Ես ձեզանից, իբրև=որպէս կրթված մարդուց, պահանջում եմ պատշաճաւոր վերաբերմունք ցույց տալ. Ես քո պատուէրը, իբրև=որպէս իմ հօր, կը լսեմ ու կը կատարեմ:

Բ) Մի նախադրություն (հանդերձ) վերցնում է գործիական խնդիր։

Գ) Տասնմեկ նախադրություն ստանում են բացառական հոլով. սրանք են՝ առաջ (ժամանակի իմաստով), բացի, գաղտուկ, դուրս, յետ (ետ), զատ, հեռու, յետոյ (ետք), ներս, վեր (վերև, ի վեր), վայր (վար):

Դ) Երկու նախադրություն (հակառակ, նայելով) վերցնում են տրական հոլով։

Ե) Մնացյալ նախադրությունները ստանում են սեռական հոլով. բայց սրանք էլ բաժանվում են երկու խմբի.

1) Մի խումբը միշտ և ամեն տեղ վերցնում է սեռական. այսպես են՝ առաջ կամ առջև, բոլորտիքը, ետևը, կողմը, ձեռքով, մէջ, միջոցով, ներքև, շնորհիւ, շուրջը, պատճառաւ, վրայ, տակ, տեղ, փոխանակ, փոխարէն:

2) Մյուս խումբը թեև ամեն տեսակ գոյականի և երրորդ դեմքի դերանունների հետ գործածվելիս վերցնում է սեռական, բայց առաջին և երկրորդ դեմքի դերանունների հետ գործածվելիս վերցնում է տրական. օրինակ՝ ասում ենք Գրիգորի համար, գործի համար, փորձի համար, ուտելու համար, նրա համար, բայց՝ ինձ հա-

մար, մեզ համար, քեզ համար, ձեզ համար: *Այս խմբին են պատկանում հետևյալ նախադրությունները.* առանց, դեմ, համար, համեմատ, հանդեպ, հետ, մոտ, նկատմամբ, նման, չափ, պես:

Զ) Ամեն նախադրություն, ինչ հոլովով խնդիր էլ ստանա, եթե «տեղ, վայր» նշանակություն ունենա, խնդիրն էլ փոխում է սեռականի. օրինակ՝ ներս *և* դուրս *ստանում են բացառական հոլով. ինչպես՝* սրտից ներս, խելքից դուրս. *բայց՝* տան ներսը, տան դուրսը. *կամ տան մասին խոսելու ժամանակ՝* նրա ներսը, նրա դուրսը: *Այս դեպքում նախադրությունն ստանում է դիմորոշ հոդ. այսպես՝* տակը, վրան, դուրսը, ներսը *և այլն։*

Ծանոթ. 1.— *Ըստ այսմ նախադրությունների ստվար մեծամասնությունը ստանում է սեռական հոլով։ Այս հանգամանքը, ինչպես և վերի Զ կանոնը, պատճառ են դարձել, որ նորագույն սերունդն սկսել է տրական խնդիրն էլ վերածել սեռականի, ուրիշ խոսքով՝ սեռական խնդիրը ընդհանրացնել. այսպես՝* ինձ դեմ, ինձ նկատմամբ, ինձ հանդեպ, ինձ հետ, ինձ մոտ *ասելու փոխարեն պատահում ենք* իմ դեմ, իմ նկատմամբ, իմ հանդեպ, իմ հետ, իմ մոտ *և այլն։*

Ծանոթ. 2.— *Ինչպես վերևն էլ նկատեցինք, հոլովների որոշումը հնարավոր է գլխավորապես արևելահայ լեզվի միջոցով.* Գրիգորի համար, նրա համար *ձևերը հայտնապես սեռական են (տրական լինելու դեպքում պիտի ասեինք* Գրիգորին, նրան): *Բայց արևմտյան հայերենում* Գրիգորի *և* Գրիգորին, *ինչպես և* անոր *ձևերը հավասարապես թե՛ սեռական են և թե՛ տրական։ Ըստ այսմ, վերի Ե կանոնի 2-րդ խումբը կարող է ուրիշ բացատրություն ստանալ կամ քայքայվել։*

Ծանոթ. 3.— Ինձ, մեզ, քեզ, ձեզ, նրան, նրանց *դերանունները թե՛ տրական են և թե՛ հայցական. ուստի երբ ասում ենք* մինչև քեզ *և* քեզ համար *առաջին օրինակում* քեզ *հայցական է, երկրորդում՝ տրական։*

Ծանոթ. 4.— *Նախադրություններից չորսը* (ասդին, անդին, անդին, քովը) *գործածական են միայն արևմտահայ բարբառում. առաջին երեքը ստանում են բացառական հոլովով խնդիր, վերջինը՝ սեռական։*

Ծանոթ. 5.— Դեպի *նախադրությունը վերցնելով հայցական խնդիր, շնչավորների հետ պիտի լիներ* դեպի նրան, *անշունչների հետ՝ դեպի նա. այս ձևերը գործածական են. բայց շատ սովորական է դարձած շնչավորների համար էլ ասել* դեպի նա, *նույնիսկ* դեպի այդ անձը, դեպի այդ կինը, դեպի այն կանայքը *և այլն։*

ԳԼՈՒԽ Գ

ՄԱԿԲԱՅ

1. ՄԱԿԲԱՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Անփոփոխելի բառերի մեջ ամենակարևոր տեղն են բռնում նախադրությունններն ու մակբայները։ Այս երկու կարգի բառերը իրապես միևնույն են, միայն թե առաջինները ցույց են տալիս առարկայի հանգամանքն ու պարագաները (տեղ, ժամանակ, եղանակ և այլն), իսկ երկրորդները՝ գործողության։ Քերականության լեզվով խոսելով, նախադրությունները վերաբերում են գոյականներին, իսկ մակբայները՝ բայերին։ Այսպես՛ յետոյ բառը նախադրություն է, երբ ասում ենք Երկու տարի յետոյ, և մակբայ է՝ երբ ասում ենք յետոյ կգամ:

Ավելացնենք նաև, որ մակբայը կարող է ո՛չ միայն բայի հանգամանքը որոշել, այլև մի ածականի կամ մի ուրիշ մակբայի. օրինակ՝ Այս երեխան շատ է խաղում, շատ գեղեցիկ է, շատ արագ է վազում խոսքերի մեջ շատ մակբայը առաջին դեպքում բայի հանգամանքն է ցույց տալիս, երկրորդ դեպքում՝ գեղեցիկ ածականի և երրորդ դեպքում՝ արագ մակբայի։

Մակբայների գործածության այս խտրությունը (մակբայ կամ նախադրություն) հետո առաջացած երևույթ է և սկզբնապես նախադրություն և մակբայ միևնույնն էին (Meillet, Traité, 480)։

Քերականներից ոմանք (այսպես Ջալխյան, 167), չանդրադառնալով նախադրության ու մակբայի նախավոր միության, համարում են, թե նախադրությունն է, որ առանց խնդրի դառնում է մակբայ, և մակբայն է, որ խնդիր առնելով դառնում է նախադրու-

թյուն։ Այսպես ըստ Ջալխյանի (անդ), առանց խնդրի մնացած կամ խնդիրը զորությամբ իմացվելու նախադրություն են՝ մակբայ դարձած.

Երթայք շուրջ ի շէնսդ։
Բեր ի մէջ, չիք ի միջի, բառնալ ի միջոյ։
Հուպ երթալ *(մոտը գնալ)*։
Ընդդէմ բախեցաւ։
Առաջի և զկնի ընթանային։
Ետես զնա և ընթացաւ ընդ առաջ։
Եկն թշնամին և ցանեաց ի վերայ որոմն։
Եկաց ի վերոյ։

Ընդհակառակը մակբայ են և խնդիր առնելով նախադրություն են դառնում՝ հեռի, ուրոյն, մեկուսի, զատ *և այլն, որ ստանում են բացառական խնդիր։ Իսկ սեռականով են՝* յայնկոյս որմոյն, արտաքոյ շինին, արտաքոյ նորա, ակամայ նորա *և այլն։*

Նմանապես քան *նախադրությամբ՝*

Արտաքոյ քան զքաղաքն ելանել։
Ի վերոյ քան զերկինս։

Ըստ այսմ միևնույն բառը խնդիր առնելով նախադրություն է, բայց հետ՝ մակբայ. ինչպես՝

Իբրև զմայր, որպէս զոսկի։
Իբրև տեսին, որպէս ասացեր։

Ըստ կազմության մակբայները երեք տեսակ են.

1. Նրանք, որ կազմված են նախավոր հոլովյալ ձևերից.
2. Նրանք, որ բոլորովին անկախ բառեր են։
3. Նրանք, որ կազմված են մակբայակերտ մասնիկներով։

Լեզուների մեջ հոլովյալ կամ խոնարհված զանազան ձևեր հաճախ ենթակա են մի որոշ գործածության կամ ստանում են մի մասնավոր առում և այդ վիճակի մեջ քարանալով՝ խուսափում են լեզվի ձևաբանության ընդհանուր օրենքներից։ Շատ անգամ հոլովական ու խոնարհման այն ձևը, որով ներկայանում է հիշյալ բառը, կարող է ամբողջապես ջնջվել լեզվից, բայց նա շարունակում է իր գոյությունը, կամ երբեմն էլ հոլովական ու խոնարհման ձևը փոխվում է, բայց նա դարձյալ անփոփոխ շարունակում է իր գոյությունը. վերջապես մինչև անգամ այն բառը, որից կազմված է

հիշյալ ձևը, կարող է բոլորովին անհետանալ լեզվից, բայց նա իր թեքյալ վիճակը շարունակում է։ Այսպես՝ ներգոյական հոլովը վերացված է հունարենից, բայց οἴκοι, οἴκει *«ի տուն, ի տան» և նման ձևերը, որոնք հին ներգոյական են, շարունակում են իրենց գոյությունը իբրև առանձին մակբայ։ Այսպես է նաև ռուսերեն* дома *«տանը»։ Լատիներենից վերացված է գործիականը, բայց* certe *«ստուգիւ» և նման բառեր շարունակում են իրենց գոյությունն իբրև առանձին մակբայ։ Հայերեն աշխարհաբարից ջնջված են գրաբարի հոլովման զանազան ձևերը և խոնարհման մեջ էլ հրամայականի, ապառնիի և ստորադասականի կազմության ձևերը. բայց* այնու ամենայնիւ, յամենայն դէպս, ի վերայ այսր ամենայնի, հարկաւ, ի հարկէ, մեծաւ մասամբ, հրապարակաւ, գոնեա, համարեա, գոգցես, դիցուք թէ, գուցէ, յանկարծ *և ուրիշ շատ նման ձևեր շարունակում են իրենց գոյությունը, թեև աշխարհաբարի քերականությամբ անբացատրելի են։* Զօրէն *գրաբարի մեջ նշանակում է «ձևով, կերպով», բայց դա* օրէն *բառի եզակի հայցական հոլովն է, որ անգործածական է գրաբարի մեջ (ասվում է անեզական ձևով* զօրէնս*):* Հազիւ *բառը գործիական հոլով է (ինչպես* ստուգիւ, հրապարակաւ, *որոնք գրաբարաձև գործիականներ են), բայց նրա արմատը* հազ *կորած, ջնջված է լեզվից և կարելի է գտնել միայն* հազիւ հազ *դարձվածի մեջ։ Արևմտյան հայերը գործածում են* հարկաւ, *որ* հարկ *բառի գործիականն է, բայց ո՛չ առանձնապես* հարկ *բառն է սովորական արևմտահայոց մեջ և ոչ էլ -աւ գործիականը։ Նույն բառը արևելյան հայոց մեջ ունի* ի հարկէ *ձևը, որ նույն բառի բացառականն է, գրաբարի հին հոլովաձևով, որ գոյություն չունի այժմ, իսկ հատկապես արևելահայոց մեջ առհասարակ -է ձևով բացառական չկա։* Մեծաւ ուրախութեամբ *մակբայական սխալ-թյուն է, որ զուտ գրաբարի համաձայնության օրենքով է. միավանկ ածականը գոյականից առաջ դրված և համաձայնած. այնքան անսովոր բան նոր լեզվի համար, որ ագետներից շատերը հնչում են* մեծաուրախութեամբ, *իբր թե* ա *հոդակապով մի բարդություն լիներ։* Դիտմամբ, *որ* դիտումն *բառի գրաբարի գործիական հոլովն է, այժմ գործածվում է իբր մակբայ, իսկ նույն բառի գործիականն է* դիտումով: *Առաջինը երկրորդի տեղ գործածելով պիտի ստանայինք լեզվական անհարթություն. այսպես է, օրինակ, «Բռնապետներ երբոր կաթողիկոսի մը կեանքին կը դաւաճանէին, արգելք չէին դներ ուրիշի մը յաջորդելուն, նոր որս մը ունենալու* դիտմամբ*» (Ազգապ. 3175), ուր պետք էր ասել* դիտումով:

Եթե գնանք ավելի վեր և մտնենք լեզուների հնագույն շրջանը, այս կարգի մակբայների թիվը ավելի կշատանայ, միանգամայն բացատրությունը կլինի ավելի դժվար և առանց համեմատական լեզվաբանության անկարելի։ Այսպես հյ. հերու «անցյալ տարի» բոլորովին անկախ և արմատական բառի երևույթն ունի. իրեն նման են նաև նրա ցեղակիցները՝ սանս. parut, հն. πέρυσι, դոր. πέρυτι, մբգ. vert, հիռլ. -urid «նույն նշանակությամբ»։ Սակայն այս բոլորը հնխ. per-ut- բառի ներգոյական հոլովներն են, սանսկրիտը զրո վերջավորությամբ. per-ut ձևն էլ կազմված է per «հեռու, անցած գնացած» և ut «տարի» բառերի բարդությամբ. հմմտ. սանս. pāras «հեռացած, մեկուսի» և հն. ἔτος «տարի»։ Պրս. ասվում է pār-sāl, ուր pār մեր քննած բառն է, իսկ sāl նշանակում է «տարի»։

Ըստ այսմ բոլորովին անկախ համարված մակբայներից շատերը սխալմամբ կամ անգիտությամբ համարվում են այնպես, և իրապես հոլովյալ ձևեր են։

Այսպես է նաև ուգրո-ֆիննական լեզուների մեջ, ուր հետադրությունները նախկին գոյականների հոլովյալ ձևեր են. օրինակ՝ vieressā «քովը», առ նախադրությամբ vieri «եզերք, կողք» բառի ներգոյականն է. կամ չինարեն šəng[1] «մակերես»>«վրա», çia «հատակ»>«տակը», tsai[4] «մէջը գտնուիլ»>«մէջ», ts'ung[2] «ծագիլ»>«ից», wang[4] «դիմել»>«դէպի», kei[3] «տալ»>«համար», tao[4] «հասնիլ»>մինչև, kən «հետևիլ»>հետ։

Հնդեվրոպական նախալեզուն ուներ բազմաթիվ ու բազմազան հոլովական մասնիկներ, որոնք գոյականների հոլովման մեջ չէին գործածվում, բայց կազմում էին մակբայներ։ Այս կարգի մասնիկներից հիշենք մի քանիսը.

Հնխ. -tos, կազմում էր բացառականի նշանակությամբ մակբայներ. հմմտ. սանս. mukha-tas «ի բերանոյ», լտ. fundi-tus «ի հիմանց», հն. ἐν-τος «ի ներքս, ներքուստ», ἐκ-τος «արտաքս»։ Հայերենի մեջ -t վերջավորությամբ ունենք աստ և անդ։

Հնխ. -dha, որից մնացել են սանս. -dha, հն. θα, նաև -θι (ներգոյականի իմաստով), -θεν (բացառականի իմաստով) և այլն. հմմտ. սանս. kú-ha (<*kú-dha), զնդ. ku-dā, հսլ. kû-de, ումբր. pu-fe, լտ. ubi «ուր», սանս. iha (հին idha), լտ. ibi «այստեղ», հն. ἄνω-θα «ի վեր». ἄνω-θεν «ի վերուստ», οὐρανόθι «յերկինս», οὐρανόθεν «յերկնուստ», ἠῶθι «առաւօտու», ἠῶθεν «առաւօտից», հսլ. nadû «ի վերայ» (արմատը na «վրայ») և այլն։

Հնխ. -r, որից լիթ. r̃, հյ. r (տեղական մակբայ կազմելու համար). Հմմտ. հյ. ո՞ւր (հնխ. k^wur)=լիթ. ku-r̃ «ո՞ւր»։ Գերմանական ընտանիքում գտնում ենք գոթ. k^war «ո՞ւր», her «այստեղ», jainar «այնտեղ»։ Նույն r մասնիկը գտնում ենք նաև այսր, այդր, անդր մակբայների մեջ, այն տարբերությամբ, որ սրանք շարժում են ցույց տալիս, իսկ ուր՝ դադարում (Meillet, MSL, 20. 93)։

Ասացինք, որ հնդեվրոպական նախալեզվում մակբայները մեծ թիվ էին կազմում։ Բայց մակբայը այնպիսի մի քերականական տարր է, որ շատ մեծ փոփոխության է ենթարկվում ամեն լեզվի մեջ։ Շատերը կորչում անհետանում են լեզվից և նրանց փոխարեն ստեղծվում են նորերը։ Դրա համար էլ հնդեվրոպական նախալեզվի մակբայներից շատ շատերը չնչված են ժառանգ լեզուներից։ Զարմանալի չէ ուրեմն, եթե ասենք, թե հնդեվրոպական նախալեզվի այն մակբայները, որոնք քիչ թե շատ ընդհանուր են ժառանգ լեզուներին, շատ սակավաթիվ են. հիշենք դրանցից կարևորները.

Հնխ. peruti «հերու, անցյալ տարի», տե՛ս վերևը։

Հնխ. anti «դիմը, առջևը», որ ant- արմատի i-ով ներգոյական է. սրանից են սանս. ànti, հն. ἀντί, լտ. ante, գոթ. and, հգգ. unt, հյխթ. anta և հյ. ընդ։ Հնխ. արմատի հայցական ձևը պահում է հն. ἀντα։

Հնխ. ĝhi «երեկ», որ նույնպես ներգոյական է և որի ժառանգներն են սանս. hyas, պհլ. dīk, պրս. di, հն. χθές, լտ. herī, գոթ. gistra, հգգ. gestaron, իռլ. -dē, գալլ. doe, ալբան. dje. հայերենի մեջ կորած է։

Հնխ. k^wu «ո՞ւր», որից վեդ., զնդ. kū «ո՞ւր», վեդ. kva, լտ. quo, ավելի սովորական է a, dha, r մասնիկներով զարգացած ձևով՝

Հնխ. k^wudha «ո՞ւր» > սանս. kúha (հինը *kúdha), զնդ. kudā. հսլ. kŭde, ռուս. куда, ումբր. pufe, լտ. ubī:

Հնխ. k^wur «ուր» > լիթ. kur, հյ. ո՞ւր.

Հնխ. N «այժմ» > հն. νῦν, սանս. nū «այժմ», թոխար. nāke.

Ինչպես նախադրությունների, նույնպես և մակբայների դասակարգության համար կան զանազան դրություններ։ Ոմանք մակբայները դասակարգում են ըստ տեսակի. այսպես ունենք որակական, քանակական, ժամանակական, տեղական, հաստատական ժխտական, երկբայական, հարցական, ցուցական (ընդամենը 9) մակբայ։ Այսպիսի բաժանման է հետևում Ջալըխյանը։

Գարագաշյանն իր Գործնական քերականության մեջ (Պլ. 1890, էջ 79) ընդունում է հինգ մակբայ.

1. Տեղական, *ինչպես* աստ, անդ, ի ներքոյ, արտաքոյ, արտաքս, շուրջ, ի մէջ, առաջի *և այլն*։

2. Ժամանակական, *ինչպես* այժմ, արդ, յորժամ, այսօր, վաղիւ, յետոյ, ապա, նախ, երբեմն, միշտ, հանապազ *և այլն*։

3. Եղանակական, *ինչպես* բարւոք, չարաչար, դառնապէս, փութով, մեղմով, հաւաստեաւ, ճշդիւ *և այլն*։

4. Քանակական, *ինչպես* յոյժ, կարի, ստէպ, հաճախ, դուն ուրեք, անօսր, այսչափ, այնչափ *և այլն*։

5. Հարցական, *ինչպես* ընդէ՞ր, զի՞, հի՞մ, վասն է՞ր, է՞ր վասն, զիա՞րդ, որպէ՞ս, ո՞րչափ, քանի՞ *և այլն*։

Ուրիշ լեզուներ էլ ունեն այսպիսի բաժանում. օրինակ՝ ֆրանսերենում մակբայը ունի 7 տեսակ. տեղական, ժամանակական, եղանակական, քանակական, հաստատական, ժխտական, երկբա*յական* (adverbes de lieu, de temps, de manière, de quantité, d'affirmation, de négation, de doute)։

Ռուսերենում մակբայները բաժանվում են 6 տեսակի. ա) ժամանակական, *բ)* տեղական, *գ)* եղանակական, *դ)* քանակական, *ե)* պատճառական, *զ)* նպատակական:

Բայց այս դրությունը հարմար չէ այն տեսակետից, որ միևնույն մակբայը հաճախ ունենալով զանազան նշանակություններ, կարող է պատկանել զանազան խմբերի։ Օրինակ, հատկապես հարցական մակբայները, որոնք միաժամանակ թե՛ հարցական են և թե՛ իրենց էության համեմատ՝ քանակական, տեղական, ժամանական և այլն. ինչպես՝ քանի՞, ո՞ւր, ե՞րբ, ի՞նչպես *և այլն*։

Երկրորդ դրությունն է մակբայները դասակարգել ըստ ծագման։ Այս դրության է հետևում Այտնյանը և մակբայները բաժանում է 6 տեսակի. ա) բուն մակբայներ, *բ)* գոյականից կազմված մակբայներ, *գ)* հոլովյալ մակբայներ, *դ)* ածականից կազմված մակբայներ, *ե)* դերանվանական մակբայներ *և զ)* կրկնավոր մակբայներ:

Նույն դրությունը գտնում ենք նաև ֆիննական զիրյեն լեզվի մեջ, որ ունի 8 կարգի մակբայներ, այն է՝ ա) բուն իսկական մակբայներ, *բ)* մակբայական դարձվածներ և ասություններ, *գ)* գոյականների մեջ մի առանձին հոլով, որ կոչվում է մակբայական (adverbial) հոլով, *դ—ը)* հինգ տեսակ առանձին կազմությամբ մակբայներ, որոնք կազմվում են բայերից և կոչվում են բայական մակբայ (verbal adverbe). *սրանից մի մասը թուրքերենի ազդեցությանն են վերագրում. ինչպես հյ.* կարդալէն կ'երթայ (W edemann, 139):

Բայց Այտնյանը մակբայները այս ձևով բաժանելուց հետո, յուրաքանչյուրը ստորաբաժանում է որակական, քանակական, ժամանակական, տեղական և այլ ստորաբաժանումների։

Մենք այս դրությունն էլ հարմար չհամարեցինք. նախ ամեն անգամ ստորաբաժանումներ դնելը անտեղի գտանք նախորդ պատճառաբանությամբ. երկրորդ՝ մակբայի ծագումը որոշել բավական վիճելի խնդիր է։ Օրինակ՝ Այտնյանը (էջ 106) սաստիկ *բառը դնում է բուն մակբայների շարքը. բայց* սաստիկ *միանգամայն ածական է (սաստիկ քամի) և միաժամանակ ծագում է* սաստ *գոյականից։ Ըստ այսմ նա կարող էր դրվել նաև գոյականից կազմված մակբայների շարքում և մանավանդ ածականից կազմված մակբայների շարքում։*

Մենք մակբայները նախադրությունների նման դասավորեցինք այբբենական կարգով։ Բայց ավելորդ կրկնություններից և օրինակներից խուսափելու համար դրինք նախ մակբայների կազմության քննությունը, որով կազմած եղանք միջին մի օղակ Այտնյանի դրության և մեր այբուբենական դասավորության միջև։

2. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Առաջին հերթին հիշատակելի են այն մակբայները, որոնք ներկայացնում են հայերենի պարզ արմատները. ինչպես՝ այլ, այո՛, անագան, ապա, արդ, գաղտ, դեռ, երբ, երէկ, իբր, իսկ, հեռու, մերթ, մի՞ (մի՞թէ, մի՞ եթէ), մի՛ *(արգելական)*, մինչ, մօտ, յաճախ, յամր, յոյժ (ոյժ *բառից, որ իրանյան է)*, նախ, շատ, ոչ, ստէպ, վաղ, քան:

Սրանց հետ պետք է հիշել իրանյանից փոխառյալ մի խումբ մակբայներ, որոնք հայերենի մեջ անկախ արմատ են. այսպես՝ կամայ, ակամայ, կարի, գունակ, զուր, հանապազ, միշտ, յափտեան, վասն:

2. Հայերենի մեջ կազմված բարդ բառեր. ինչպես՝ յայնժամ, յայսկոյս, յայնկոյս, զիա՞րդ, հանապազօր, միւսանգամ *և այլն։*

3. Երկու մակբայի գումարումից կազմված մակբայներ. ինչպես՝ արդ ևս, դուք ուրեք, ուր ուրեմն, զի՞ ևս, իբրև զի, մի՞թէ, մինչդեռ, մինչև:

4. Եւ կամ ու շաղկապով միացած կամ վերջում շաղկապ ավելացած բառեր. ինչպես՝ լիուլի, հարևանցի, զիարդուպէտ, իսկ և իսկ. մինչև, արդարև, իբրև, իբրու:

5\. *Ցուցականներից կամ դիմորոշ հոդերով կազմված մակբայներ. ինչպես*՝ այսչափ, այդգունակ, այնfան, այժմ, այսունետև, այսպէս, այսor, աստ, անդ, յայսմնետէ, աւասիկ, աւադիկ, աւանիկ *և այլն։*

6\. *Զանազան նախդիրներով կազմված մակբայներ.*

առ *նախդիրով.*— առ այժմ, առաւել, առերեկս, առժամայն, առ ժամ մի, առ իմէ՞, առ նարկէ, առտնին, առorէն, առ ժամանակ մի...

ընդ *նախդիրով.*— ընդ այգն, ընդ առաւօտն, ընդ երեկս. ընդէ՞r, ընդ նուպ, ընդ վայr, մերթ ընդ մերթ, ընդ նանուr,

ըստ *նախդիրով.*— or ըստ orէ, մի ըստ միոջէ,

ց *նախդիրով.*— ցայգ, զցայգ, ցայժմ, ցայսor, ցorfան, ցբուն, ցկեանս, ցման, ցմիշտ:

7\. *Հոլովական ձևեր.*

զ *նախդիրով հայցական.*— զառաջինն, զկնի (կինf *բառից*). զor ամենայն, զorնանապազ, զorէն *«կերպով, ձևով»*, զցայգ և զցերեկ, զգիշերն ողջոյն *«ամբողջ գիշերը»*, զor ամենայն *«ամեն օր»*, զorն ամենայն *«ամբողջ օրը»*, or fան զor *«օր օրի վրա»*, զնանապարնայն.

յ *նախդիրով հայցական.*— յայնժամ, յայնկոյս, յայսկոյս, յանկարծ, յառաջ, յամենայն ժամ, յանգէտս, յանծանօթս, յանզգոյշս,

ի *նախդիրով հայցական.*— ի մասին, ի բուն, ի ներfս, ի ծածուկ, ի մէջ, ի սպառ, ի վայr, ի զուր, ի ձիr, ի տոկ *«երկար ժամանակ»*, ի նանիr, ի գաղտնիս *«ծածուկ» և հոգնակի թվով*՝ ի նետիոտս, յակամայս.

Բացառական հոլովով.— ի նարկէ, ի լրջէ, ի ներուն նետէ *(անցյալ տարվանից)*, ի բնէ, ի մօտոյ, *կամ* ի մօտէ, ի տուէ, յայսմնետէ, յայնմնետէ, յorմենետէ, ի սկզբանէ, ի նեռաստանէ, ի վաղուց նետէ, առ նարկէ *(առ նախդիրով բացառական)*։ *Հոգնակի բացառական են*՝ ի յափանեից, յանպատրաստից, յայլակարծուց, յանզգաստից, յարբելեաց, ի լրջեաց, յոտնկելեաց, ի սնարից, յանոտից.

Գործիական հոլովով.— նազիւ, վաղիւ, կանխաւ, նարկաւ, նենգաւ *կամ* նենգանաւ, կամաւ, սակաւ, ստիպաւ, տակաւ, տագնապաւ, է՞r աղագաւ, բնաւ. լիով, լիովին. ժամանակաւ *(այժմ*՝ ժամանակով), բոլորովին, գլխովին, մեղմով, պնդով, խնամով, փութով, արդեօf=արդեաւf *(հոգ. գրծ.)*, ամենևին, նետևաբար, որովնետև, շնորնիւ, ստուգիւ, այսունետև, այնունետև, նշդիւ, նշմարտիւ, ող-

ջամբ, բարեաւ, փոխանակաւ, *հոգ. գրծ.* նենգանօք, հնարիւ, մարթանօք. *Նույնիսկ* իցի՜ւ, *որի կազմությունը տարօրինակ է.*

Ներգոյական հոլովով.— ի գիշերի և ի տուընջեան, ի կատարածի, ի վախճանի, ի սկզբան, յիրաւի, յանիրաւի.

Երբեմն նախդիրները կտրված են և բացառականը կամ ներգոյականը միանում են սեռական-տրական հոլովաձևի հետ։ Այդ երևում է նրանից, որ միևնույն բառը կա թե՛ նախդիրով և թե՛ առանց նախդիրի. օրինակ՝

վաղուց և ի վաղուց
զուր և ի զուր
տարապարտուց և ի տարապարտուց
խոտորնակի և ի խոտորնակի
հետիոտս և ի հետիոտս
այլուստ և յայլուստ
արքունուստ և յարքունուստ
երկեամ և զերկեամ
գիշերի և ի գիշերի
վերոյ և ի վերոյ

Ըստ այսմ աննախդիր ձևեր են առաջոյ, յետոյ, ժամս ժամս, է՞ր սակս, ևս, թերևս, յաւիտեանս, ատուր ատուր, վեր ի վերոյ, ժամ ի ժամ, ժամէ ի ժամ, օր յօրէ, օր քան զօր, օր ըստ օրէ, այգուն, այգուցն, առաւօտու, առաւօտուց, ժամու, տարաժամու, վաղու *և այլն։*

Այն բոլոր հոլովական ձևերը, որ հիշեցինք այստեղ, կարող են բացատրվել հայերենով իսկ, ըստ որում կազմված են հենց հայերենի մեջ։ Բայց կան նաև այնպիսի բառեր, որոնց հոլովական կազմությունը մի քիչ ավելի խոր քննության է կարոտ։ Այսպես յետ *և* յետոյ *միևնույն բառերն են և ծագում են* հետ *«ոտք» բառից. առաջինը նախդրիվ հայցական է և երկրորդը բացառական* (ետ=հետ *ձևից)։ Երբեմն էլ հոլովական կազմությունը մի այնպիսի ձև ունի, որ արդեն ջնջված էր Ե դարի հայերենում։ Օրինակ՝* այսուհետև, այնուհետև, որովհետև *բառերը բարդված են* այսու, այնու, որով *գործիական ձևերով, որոնք Ե դարում էլ սովորական էին, և* հետև *ձևով, որ* հետ (f) *բառի գործիականն էր, բայց Ե դարում արդեն չկար (փոխանակված էր* հետով *ձևով)։ Նմանապես* յայսմհետէ, յայնմհետէ, յորմէհետէ *բարդված են* յայսմ, յայնմ, յորմէ *բացառականներով (որոնք Ե դարում էլ կային), և* հետէ (=ի հետէ) *բացառականով, որ Ե դարում արդեն չկար (փոխանակվել էր* ի հե–

տոյ=ի նետոց ձևով)։ *Այսպիսով վերոհիշյալ վեց բառերը (երբեք բացառական, երբեքը գործիական) ներկայացնում են մեզ ճիշտ այն դրությունը, որի մեջ գտնում ենք այժմ* ի հարկէ *և* հարկաւ *բառերը։— Ավելի հասկանալի լինելու համար հիշեցնենք նաև այն, որ* յայսմ, յայնմ, այսու, այնու *բացառական-գործիական կարճ ձևերն են* այս, այն *ցուցականների, որոնց համապատասխան երկար ձևերն են* յայսմանէ, յայնմանէ, այսուիկ, այնուիկ։— Ներքոյ, արտաքոյ, ի ներքս, արտաքս *ծագում են* արտ, ներ *արմատներից, առաջին երկուսը բացառական են (առանց նախդիրի), վերջին երկուսը հոգնակի նախդրիվ հայցական, որոնցից* ի ներքս *նախդիր ունի դեռ՝ աշխարհաբարում կորցնելու համար* (ներս), արտաքս *արդեն կորցրել է նախդիրը և աշխարհաբարում էլ բոլորովին չնչվել է (այժմ ասում ենք* դուրս, *որ է* ի դուրս)։

Գործիականի ձև ունի իցի՛ւ, իցի՛ւ թէ, *որ այժմ աշխարհաբարում էլ գործածական է (հմմտ.* հազիւ, առթիւ)։ *Բայց այստեղ կա այն տարօրինակ երևույթը, որ բայն է հոլովվել գոյականի պես հմմտ.* իցեմ, իցես, իցէ *և այլն։*

8. Զանազան հետամասնիկներով կազմված մակբայներ.

-իկ *մասնիկով.*— աւասիկ, աւադիկ, աւանիկ, ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ, այժմիկ, սաստիկ, վայրիկ մի

-էն *մասնիկով.*— այժմէն, այսրէն, այդրէն, անդրէն, անդէն, ապաքէն, արդէն

-եալ *մասնիկով.*— դարձեալ

-եայ *մասնիկով.*— յերեկորեայ

-եմն *մասնիկով.*— երբեմն, ուրեմն

-եք *մասնիկով.*— երբեք, ուրեք, ուստեք

-ում *մասնիկով.*— էրո՞ւմ, յեղակարծում

-ին *մասնիկով.*— նոյնօրին, առտնին, առօրին, գլխովին, տակաւին, վերստին, անդստին, աստստին, լիովին, ամենևին, բնաւին, բոլորովին

-ի *մասնիկով.*— ձրի, բռնի, հետի

-աքի *մասնիկով.*— արմատաքի, փանաքի

9. Քիչ անգամ բայական ձևերից են առաջանում. ինչպես՝ թող, գուցէ. *ինչպես՝*

Զերծի՛ր ի լեառն, գուցէ ընդ նոսա ըմբռնիցիս։

Թո՛ղ ինձ նախ երթայր և առնոյր զթագաւորութիւնն. *Ծնն.։*

Այս բոլորից դուրս Զալխ. 163 և Նրա հետ Այտն. 117 ընդունում են մակբայակերպ անունով մի խումբ դարձվածներ, որոնք ֆրանսերեն քերականության մեջ ծանոթ են մակբայական ասություն (locution adverbiale) *անունով։*

Ահա՛ դրանց հավաքածուն.

Սակաւ մի, սակաւիկ մի, վայր մի, վայրիկ մի հանգերուք *«Մի քիչ հանգստացէք»։*

Որ զամ մի յանձն էառ *«Ով որ մի անգամ հանձն առավ»։*
Փոքր ի շատէ գիտեմք *«Քիչ ու շատ գիտենք»։*
Զոր օրինակ ծառք, յորժամ... *«Ինչպես ծառերը, երբ...»։*
Զայս օրինակ, Ըստ նմին օրինակի, Զսոյն ձև *«այս ձևով»։*
Օրինակ իմն *«Իբր օրինակ»։*
Զօրն ցերեկ *«Ամբողջ ցերեկը»։*
Տային նմա աւուրն նկանակ մի:
Ի բերանոյ պատմել:
Յունկանէ խոսել *«Ականջն ի վայր ասել»։*
Ո՛չ ի կարծեաց ասեմ:.
Յականէ, Յանուանէ, Յականէ յանուանէ:
Ամենայնիւ, Ամենայն իրօք, Ըստ ամենայնի:
Ամենայնիւ եղբարց նմանել:
Բազմօք գովէին *«Շատ գովեստներ տվին»։*
Սակաւուք գրեցի *«Կարճ գրեցի»։*
Եւ ոչ իւիք նուազեալ *«Ոչ մի բանով պակաս չէր»։*
Մի՛ իւիք ասայցէք պատճառս *«Ո՛չ մի առիթ չտաք»։*
Սրտի մտօք ծառայել:
Կամակոր Մտօք: *«Սիրով, հոժարությամբ»։*
Աստուածապաշտ մտօք:
Աստուածապաշտ կարգաւ:
Յայսմ վայրի, Յայնմ վայրի *«Այստեղ, Այնտեղ»։*
Առ աչօք առնէն զոր առնէնն *«Աչքի խաբէություն է արածները»։*
Անդէն առ ետեղ սպանանէին *«Հենց տեղն ու տեղը սպանեցին»։*
Ի գալ տարւոյն *«Հաջորդ տարի»։*
Զայն ութ օրն ի գլուխ *«Ամբողջ այդ ութ օրը»։*
Կայր ուրույն ծալեալ ի մի կողմն:
Կախեալ գլխիվայր:

Գլխիվայր կոռացեալ:
Ձեռս յետս կապեցին զնա «Ձեռները ետև կապեցին»։
Գայլ ի բերան տարան ի ներքս:
Հող ի գլուխ լինէին:
Հեծեալ գայր՝ սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարն զմիջովն:
Սիրտ ի բերան շրջէաք խնդրէաք:
Ափ ի բերան լինիցիմ «Պապանձվեմ»։
Ձեռս ի գլուխ ելանիցես անտի «Գլուխդ ծեծելով՝ լալով պիտի դուրս գաս այնտեղից»։
Եթէ իցէ ուղղիցես զսիրտ քո:
Իցէ թէ քեզ դէպ ինչ տայցէ «Եթե քեզ մի բան պատահի»։
Եթէ իցէ և մեք ապրեսցուք «Եթե լինի որ մենք էլ ազատվենք»։
Իցէ՞ թէ արդարասցի «Կարդարանա՞ արդյոք»։
Է զի շիջանի «Երբեմն հանգում է» (նույնը նաև է երբեք զի, է ուրեք զի.— անցյալի համար ասվում է էր զի, ապառնիի համար՝ իցէ զի):
Զի՞ է զի ծիծաղեցաւ «Ինչո՞ւ համար ծիծաղեց»։

Ընդ ամենայն՝ թէ քաջ՝ իցեն եւթանասուն, և եթէ և՛ս քաջ՝ ութսուն. «Բոլորը միասին ամենաշատը յոթանասուն, է՛լ ավելի շատ՝ թո՛ղ լինի ութսուն»։
Յե՞րբ, առ օր մի և առ վաղիւն, թերևս քաջ՛ զերիս աւուրս «Մինչև ե՞րբ, մի օր և հաջորդ օրը, ամենաշատը երեք օր»։

Փոքր միւս ևս և... «Քիչ մնաց որ...»։
Սակաւիկ միւս ևս... «Քիչ մնաց որ...»։
Մինչ այս մինչ այն «Այդ միջոցին»։

Այնպիսի դարձվածներ անվերջ են բոլոր լեզուների մեջ և նրանց ժողովածուն կազմում են մեծ բացատրական բառարանները և համաբարբառները։

3. ԱԾԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ՄԱԿԲԱՅ

Ածականի պաշտոնն է որոշել գոյականի որպիսությունը. ուստի պարտադիր կարգով նա պիտի գտնվի գոյականի կողքին և կապված պիտի լինի նրա հետ։ Իսկ եթե նա կապված է լինում մի բայի կամ մի ուրիշ ածականի հետ և նրանց մի որևէ պարագան, հան-

գամանքը կամ որպիսությունն է որոշում, քերականորեն դառնում է մակբայ. օրինակ՝

Բարձր տուն, բարձր սարեր:
Բա՛րձր խոսիր:

Այստեղ միևնույն բարձր *բառը առաջին երկուսի մեջ ածական է, ըստ որում* տուն *և* սարեր *գոյականների հետ է կապված, երկրորդի մեջ մակբայ է, որովհետև* խոսել *բայի հետ է կապված։ Նմանապես՝*

Շատ երկիրներ ման եկայ, շատ քաղաքներ այցելեցի, շատ մարդիկ տեսայ, շատ բաներ սովորեցի...— *այս բոլորի մեջ* շատ *միշտ ածական է. իսկ եթե ասեմ՝*

Շատ ման եկայ, շատ տեսայ, շատ լսեցի, շատ սովորեցի...— *այս բոլորի մեջ* շատ *մակբայ է։*

Ըստ այսմ կարելի է միևնույն գաղափարը թե՛ ածականով և թե՛ մակբայաձև արտահայտել. օրինակ՝

1) Այս բառերը կատարելապես հոմանիշ են.
2) Այս բառերը կատարեալ հոմանիշներ են:

Առաջին դեպքում կատարելապես *մակբայ է, որովհետև վերադիր է* հոմանիշ *ածականին. իսկ երկրորդ դեպքում՝* կատարեալ *ածական է, որովհետև գործածված է* հոմանիշներ *գոյականի հետ։ Նույնիսկ եթե* հոմանիշ *բառը առնենք իբրև ածական և ասենք՝*

3) Այս բառերը կատարյալ հոմանիշ են,

այս դեպքում կատարեալ *նույնպես կդառնա մակբայ, որովհետև ծառայեց իբրև վերադիր* հոմանիշ *ածականի։*

Կարելի է նաև մակբայը վերածել զուտ ածականի. օրինակ՝ բարձր խոսիր *ասելու փոխարեն, կարող ենք ասել՝* բարձր ձայնով խոսիր.— *առաջինում* բարձր *մակբայ է, երկրորդում՝ ածական. իսկ եթե ասենք՝* Բարձրաձայն խոսիր, *դարձյալ կստացվի մակբայ։*

Այսպես է նաև ժողովրդական լեզուն, որ մակբայակերտ մասնիկ չունենալով, ածականը գործածում է իբր մակբայ. ինչպես՝ Ըրի՛, կատարեալ մտիկ ըրի *(Պարոնյան, Մեծ. Մուրաց., Թիֆլիս, 1891, էջ 64). ուր* կատարեալ *ածականը դրված է մակբայի փոխարեն, իբրև* կատարելապէս:

Ինչ որ ասացինք հայերենի համար, նույնը գտնում ենք նաև ուրիշ լեզուներում։ Օրինակ՝ ճապոներենում ամեն ածական դառնում է մակբայ, եթե գործածվի բայի հետ. բայց այն ժամանակ

ստանում է առանձին վերջավորություն։ Այսպես՝ ածականի վերջավորությունն է -l, *մակբայինը՝* -ku։ *Նույնիսկ ասելու համար «ցուրտ չէ», «տաք չէ» և այլն, պետք է դնել մակբայական ձևը, որովհետև «ցուրտ և «տաք» ածականները գործածված են բայի հետ* (Plaut, 25)։

Հունարենում էլ կարելի է ածականը դարձնել մակբայ՝ հոգնակի սեռականի -ῶν *վերջավորությունը դարձնելով* -ῶς. *ինչպես՝*

		հոգն. սեռ.	մակբայ
καλός	*լավ*	καλῶν	καλῶς
βαρύς	*ծանր*	βαρέων	βαρέως

Ռուսերենում ածականը դառնում է մակբայ՝ -ий *վերջավորությունը փոխելով* -о, *ինչպես՝*

ածական		մակբայ
громкий	*բարձր*	громко
красивый	*գեղեցիկ*	красиво

Այսպես ուրեմն զանազան լեզուներ ածականը վերածում են մակբայի, երբեմն մի փոքր մասնիկ ավելացնելով, և երբեմն էլ բոլորովին անփոփոխ պահելով նույն ածականը։ Այսպես՝ Թրք. berk *«ամուր» թե՛ ածական է և թե՛ մակբայ. ինչպես՝* berk qale *«ամուր բերդ»,* berk söyle *«բարձր ասա»։ Պարսկերեն* xūb *«գեղեցիկ, լավ» ածական է և մակբայ. ինչպես՝* xūb mibinem *«լավ եմ տեսնում»։ Ֆրանսերեն* juste *«արդար, ճշմարիտ»,* clair *«պայծառ»,* bas *«ցած» ածական են, բայց երբ ասենք* chanter juste *«ճիշտ երգել»,* voir clair *«հստակ տեսնել»,* parler bas *«ցածր խոսել», մակբայ են։*

Գրաբարի մեջ ածականը առանց որևէ փոփոխության, ուղղական-հայցականի ձևով կարող է գործածվել իբրև մակբայ. ինչպես՝

Բարւոք ասացեր։
Ճշմարիտ ազատ լինիջիք։
Շատ խօսել. Սակաւ խօսել։
Շատ ճակառակ եկաց։
Մեծաձայն կարդացէք։
Ջայգ արդար ասացեր։
Ճարտար գիտեն։
Քաջ գիտեմ. Քաջ եռաց։

Քաջ ուրախ առնէր զնա:
Քաջ կռուասէր *(շատ կռվասեր)*։

Նույնը նաև աշխարհաբարում. ինչպես՝
Բարձր խօսել. ազատ երգել, ծանր քայլել. Շատ ճամարձակ է խօսում. Հանդարտ կաց:

Այսպես նաև բարբառներում. ինչպես՝

ամուր *Ննխ. «բարձրաձայն».* ամուր կը կանչէ:
կամկար *Ննխ. «կամաց, դանդաղ»։*
խիստ *Ննխ. «հույժ, շատ».* խիստ fաիրիմ:
խօշք, խօշք օր, խօշք օր fի *Ննխ. «ճշմարիտ, իրոք որ»* Հուդղորդ *բառից*։

մեծ *«շատ, հույժ» Ննխ.* Մեծ ուրախ էր *«Շատ ուրախ էր».* Մեծ աչfբաց տղայ է *«շատ աչքաբաց տղա է»*։
շատ, շատկեկ *Ննխ., Պլ. «շատ, բավական շատ»*։
fիչ, fիչ մը *Պլ., Ննխ. «սակավ ինչ»*։

Ածականի իբր մակբայ գործածությունը կարող է երբեմն իմաստի շփոթություն առաջացնել, և պետք է զգուշանալ նրանից, փոխելով բառը կամ դարձվածը. օրինակ՝
Շատ խոշոր թերթեր իրենց առաջնորդող յօդուածներում ընդգծում են...

Այստեղ շատ բառը պատկանում է թերթեր *գոյականին և ածական է. մինչդեռ դրվելով* խոշոր *բառի մոտ՝ դարձել է մակբայ։ Շփոթությունից խուսափելու համար Սով. Հայաստ. 1943, № 151, հուլիսի 23, սյունակ 5 դրել է՝* Խոշոր շատ թերթեր...

Բայց այս դարձվածն էլ անդուրեկան է, ուստի պետք է բառը փոխելով՝ ասել Բազմաթիւ խոշոր թերթեր...

Մակբայն էլ կարող է գործածվել իբրև ածական. օրինակ՝ Նա յիշեց իր այնպէս յանպատրաստից այցելութիւնը *(Սիրաս, Չգրուած օրէնք, 103.— գրված է* յանպատրաստի*, պետք է ուղղել այսպես)*։

Երբեմն էլ ածական և մակբայ ներկայացնում են երանգի մի փոքրիկ փոփոխություն նշանակության կողմից. օրինակ՝ առանձին *իբրև մակբայ նշանակում է «մենակ, մենավոր», բայց երբ ասում ենք՝* Նա մի առանձին fաջութիւն չի գործել, *այստեղ* առանձին *ածականը նշանակում է «երևելի, աչքի ընկնող, նշանավոր»*։

Սակայն որչափ էլ որ ածական և մակբայ այսպես կարող են իրար փոխանակել, բայց ոչ միշտ. հատկապես մակբայը չի կարող գործածվել իբր ածական. սխալ է հետևյալ նախադասության մեջ

յաճախակի *բառի գործածությունը*. Կալուածատէր ազնուականների միջամտութիւնը յաճախակի մի երևոյթ էր միջնադարեան նաև ուրիշ երկիրներում (*Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 142*).— յաճախակի *նշանակում է «շատ անգամ», ուստի կարելի չէ ասել «շատ անգամ երևույթ»*. *պետք է ասել կամ* յաճախադէպ (*ածական*) *և կամ* յաճախակի (*մակբայ*) պատահող:

Նմանապես ածականը ամեն դեպքում չի կարող գործածվել իբրև մակբայ. օրինակ՝ կարելի է ասել «մեղմ վարվել, մեղմ է վերաբերվում» (մակբայ), բայց սխալ է ասել՝ Աշխատել է չեզոքացնել իրան թշնամի տարրերը և մեղմ ու աստիճանաբար ուժեղացնել իրանական կուլտուրան (*Մանանդյան, անդ, էջ 263*). *պետք է ասել «մեղմ կերպով, մեղմով, մեղմությամբ»։*

Անճիշտ են նույնպես հետևյալները.

Բարկացած, սակայն զննող նայում էր իրեն (*Սիրաս, Զգրված օրէնք, 114*)։

Ինչո՞ւ ուշացար,— հարցրեց հրամայական Ռաֆայէլը (*անդ, 114*)։

Նա զննող նայեց Մուշեղին (*անդ, էջ 237*)։

Նա ջղային թափ էր տալիս բարակ ճիպոտը (*էջ 260*) *և այլն։*

Նույնպես և կարելի է ասել՝

Բացարձակ սուտ է, բացարձակ ճշմարտութիւն է, բացարձակ զրպարտութիւն է, *որովհետև այս բառերը գոյական են և* բացարձակ *բառը ածական է։*

Բայց կարելի չէ ասել՝

Կենիշինի արձանագրությունների նշանակությունը բացարձակ մեծ է (*Ղափանցյան, Ուրարտուի պատմ., Երևան, 1940, էջ 142*)։

4. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Կան լեզուներ, որոնց մեջ մակբայը, ճիշտ ածականի նման, ստանում է համեմատության երեք աստիճանները։

Առաջին հերթին հիշենք նոր հունարենը, ուր մակբայն ունի դրական, բաղդատական և գերադրական աստիճանները. օրինակ «ծանր» բառից՝

βαρέω	*ծանրապես,*
βαρύτερον	*ավելի ծանր կերպով,*
βαρύτατα	*ամենածանր կերպով։*

(C. Capos, N. Gram. gr., 206)։

Նմանապես հին հն. ἄνω *«վերև» (նախադրություն և մակբայ) բաղդատական լինում է* ἀνώτερος, *գերադրական* ἀνώτατος.

Լատիներենն ունի մի խումբ մակբայներ, որոնք ունեն իրենց երեք աստիճանը. այսպես՝

դրական	բաղդատական	գերադրական
docte	doctius	doctissime
գիտնականորեն,	*ավելի գիտնականորեն,*	*ամենագիտնականորեն։*
cito	citius	citissime
արագ կերպով,	*ավելի արագ կերպով,*	*ամենաարագ կերպով։*
saepe	saepius	saepissime
հաճախ,	*հաճախագույնս,*	*ամենահաճախ կերպով։*
prope	propius	proxime
մոտիկ,	*ավելի մոտիկ ձևով,*	*ամենից մոտիկ կերպով։*
bene	melius	optime
լավ, լավատես	*լավագույնս*	*ամենալավ կերպով։*

Դանիերենում մակբայն ունի աստիճաններ. օրինակ՝

դրական	բաղդատական	գերադրական
ofte	oftere	oftest
հաճախ	*ավելի հաճախ*	*հաճախագույնս*

Եվրոպական նոր լեզուներից տալիս ենք հետևյալ օրինակները.

Իտալ. sapientemente *գիտնականորեն,* più sapientemente *ավելի գիտնականորեն,* sapientissimamente *«ամենագիտնական կերպով»։*

Գերմ. wenig *քիչ,* weniger *ավելի քիչ,* am wenigsten *ամենաքիչը.—ինչպես՝* Sie hatten noch länger warten sollen *Ավելի երկար պիտի սպասեին.* Der thörichte fehlt am häufigsten *Հիմարը կսխալի ամենից ավելի հաճախ։*

Անգլ. you run fast, he runs faster, I run fastest of all *Դուք արագ եք վազում, նա ավելի արագ, ես ամենից արագ։*

Շվեդ. bra *լավ,* bättre *ավելի լավ կերպով,* bäst *ամենալավ կերպով.* flitigt *աշխատասիրաբար,* flitigare *ավելի աշխատասիրաբար,* flitigast *ամենաաշխատասիրաբար* (Poestion, Schwed., 140)։

Չեխ. slepě *կուրորեն,* slepeji *ավելի կուրորեն,* nejslepěji *խիստ կուրորեն։*

Սերբ. pāmetno *խելոք կերպով,* pametnijē *ավելի խելոք կերպով,* mājpamètnijē *ամենախելոք կերպով։*

Լատիշերենն էլ ունի բաղդատական և գերադրական աստիճանի մակբայներ. առաջինը կազմվում է -ak *հետամասնիկով, իսկ երկրորդը* vis- *նախամասնիկով. ինչպես՝* labi *լավ,* labak *ավելի լավ,* vislabak *ամենալավ* (Паэглэ, 198):

Ֆրանսերենն ածականի համեմատական աստիճանները կազմելով վերլուծական ձևով, նույնն անում է նաև մակբայների մեջ. օրինակ՝

clairement, plus clairement,
հստակորեն ավելի հստակորեն
le plus clairement *կամ* très clairement
ամենից ավելի հստակորեն շատ հստակորեն։

Արևելյան լեզուներից հիշատակենք՝

Պարս. firuter *ավելի ցած,* firūterin *ամենացած,* berter *ավելի վեր,* berterin *ամենից ավելի վերև։*

Տունգուսերենում մակբայը դառնում է բաղդատական՝ ածականը դնելով գործիական հոլովով. ինչպես՝ beki *ուժեղ,* béki-ǰi *ավելի ուժեղ կերպով* (Adam, Gr. tong., 50)։

Ամեն լեզու չունի մակբայի մեջ համեմատության երեք աստիճանները. այսպես թեև սլավական լեզուներից չեխերենը և սերբերենը համեմատության երեք աստիճանները դիտեն, ռուսերենը գիտե միայն դրականը և բաղդատականը. ինչպես՝

Я бегу быстро *ես վազում եմ արագ,*
Я бегу быстрее *ես վազում եմ ավելի արագ։*

Այն լեզուները, որոնք չունեն մակբայի մեջ համեմատության երեք աստիճանները, կարիքը լրացնում են ուրիշ միջոցով։ Օրինակ՝ ռուսերենը գերադրականը կազմելու համար ավելացնում է всех *«բոլորից». ինչպես՝* Я бегу быстрее всех *ես վազում եմ բոլորից արագ։*

Գոթերենում ածականի բաղդատական աստիճանը առանց որևէ փոփոխության կարող է դառնալ մակբայ. ինչպես՝ hauhis *ավելի բարձր,* framis *ավելի հեռու,* nēhis *ավելի մոտ։*

Ռումիներենը ածականի վրա ավելացնում է mai *ավելի բառը. ինչպես՝*

Vapoarele cu elice merg mai repede
Շոգենավերը պտուտակավոր գնում են ավելի արագ
decât vapoarele cu roate.
քան շոգենավերը անվավոր։

Այս վերջին երկու ձևերին դիմում է նաև Հայերենը։ Գրաբարում -գոյն վերջավորությամբ բաղդատականը կարող է գործածվել թե՛ իբրև նախադրություն և թե՛ իբրև մակբայ. ինչպես՝

Յառաջագոյն քան զնոսա երթայր. *Թիւք. Ժ 33։*
Առաքեսցուք յառաջագոյն քան զմեզ *արս. Բ Օր. Ա 22։*
Որպէս յառաջագոյն պատմեցաւ. *Գրծ. Գ 18։*
Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. *Յովհ. Բ 10։*
Ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս. *Յովհ. Ի 4։*
Եթէ վաղագոյն գայցէ՝ տեսից զձեզ. *Եբր. ԺԳ 23։*

Կամ ավելի մակբայական ձևով (ավելացրած ս վերջավորությունը)՝

Վինէին ընդ նմա սաստկագոյնս. *Դատ. Ը 1։*
Հզօրք եզօրագոյնս պահանջեսցին. *Իմաստ. Զ 7։*
Նաև արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն եզօրագոյնս կոծին. *Եղիշ.։*

Գերադրական մասնիկի համար ուշ ժամանակ հնարված արվեստական ձևեր են՝ ամենաճենարապէս, ամենապատկապէս, ամենապէս, ամենաարբապէս, ամենավայելչապէս *և այլն։*

Աշխարհաբարում ընդունված է երկու ձև. կա՛մ պարզ վերլուծական ձևը. ինչպես՝

Դու արագ ես վազում, նա ավելի արագ է վազում, իսկ ես ամենից (ավելի) արագ եմ վազում:

Եվ կամ բաղդատական ու գերադրական ածականի վրա դնելով մակբայական նշաններ, այն է՝ կերպով, ձևով, եղանակով *և այլն. օրինակ՝*

_Նա լավագոյն ձևով մեկնեց:
Նա ամենալավ եղանակով բացատրեց:

Հատկապես գերադրականի ամեն- *մասնիկի համար պետք է ասենք հետևյալը.*

Ամեն- *իբրև գերադրական կազմող բառ դրվում է ամեն մի ածականի վրա, բայց կարելի չէ նրանով գոյական կամ մակբայ կազմել. օրինակ, կարելի է ասել* ճիշտ—ամենաճիշտ, *բայց չի կա-*

բելի ասել ամենաճշտությին. ավելի սխալ է մակբայորեն ասել ամենաճշտութեամբ. *ինչպես՝* Այն տողերն ուրիշ բան չեն, բայց եթէ ամենաճշտութեամբ յունարէն բնագրին համաձայնող և հաւատարիմ թարգմանութիւններ *(Հ. Բ. Սարգիսյան, Ուսումնասիրությինք Հին Կտակարանի անվաւեր գրոց, Վենետիկ, 1898, էջ 126)։ Այսպիսի դեպքերում պետք է դնել* ամենայն.— *վերի խոսքը պետք է ուղղել* ամենայն ճշտութեամբ յունարէն բնագրին համաձայն են:

5. ԲՆԱՁԱՅՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Շատ լեզուներ սովորություն ունեն կազմելու բազմատեսակ բնաձայն բայեր, այսինքն այնպիսի բայեր, որոնց արմատը բնության ձայների նմանությամբ է կազմված։ Մեր Լիակատար քերականության Հատ. IV, Բ էջ 462—473-ում ընդարձակ խոսեցինք այդ մասին և մեջ բերինք 802 այս կարգի բայեր։

Արևելյան լեզուները սովորություն ունեն նաև այդ բայերի արմատի կրկնությամբ (երբեմն էլ առանց կրկնության) կազմել բնաձայն մակբայներ և շատ անգամ էլ ուրիշ բայերի հետ միացած։

Ահա մի փոքր ցանկ այս կարգի մակբայների՝ ճապոներեն լեզվից.

gūgū	*մշմշալով (քնել)*
dekudeku	*հաստ, հույր*
čoročoro	*գլգլալով, կարկաչելով (հոսել ջրի)*
čokočoko	*շտապելով, աճապարանոք*
hyūhyū	*ռռնալով (փչել քամու)*
odoodo	*վախից դողդողալով*
gorogoro	*գռգռալով (որոտման, կառքի). և այլն, և այլն։*

(Plaut, 251)

Պարսկերենի մեջ էլ կան նույնպիսի նմանաձայնությամբ կազմված մակբայներ. ինչպես՝ fisā:fs *փսփսոց (խոսելու),* fəşāfaš *նետի, շորի, ջրի կարկաչելու ձայն,* funjfunj *փսփսոց,* fūsāfūs *(բացատրությունը տե՛ս ԳԴ, էջ 709բ) և այլն։*

Բայց շատ ավելի առատ և մեզ համար հետաքրքրական են Թուրքերենի այս կարգի մակբայները, որոնցից տալիս ենք այստեղ մի քանի օրինակ.

čatər-čatər čatərdamaq	*ուժգին ճարճատել*
teker-meker tekerlemek	*ուժգնապես գլորել*

parəl-parəl parlamaq — *փայլ ի փայլ փայլփլել*
zangər-zangər zangərdamaq — *կափկափելով դողալ, դողդողալ*
zərp zečramaq — *հանկարծ վեր ցատկել*

Գրաբարում այսպիսի բնաձայնական կրկնություն չկա. բայց բնաձայն բայերը և գոյականները կարող են գործիական հոլովով գործածվել իբրև մակբայ. ինչպես՝

Յանդնդոցն լցեալ խռռոչեալ խոխոջելով. *Ագաթ.*։
Իբրև մոմռալովն և մռնչելով հարցանէին. *Ոսկ. Յովհ. Բ 11*։
Թնդան դղորդմամբ ամենայն հիմունք. *Ճառընտ.*։
Անագին դղրդմամբ զմիմեանս հարկանէին. *Լաստ.*։

Արդի բարբառներում բնաձայն մակբայների գործածությունը շատ սովորական երևույթ է.

խաթուր-խութուր *(կուտև վարունգը)*
կլտր-կլտր=*պիշ-պիշ (նայել)*
կռըլ-կռըլ *(շարունակ խոսել)*
կոթ-կոթ *(ուտել)*
կտ-կտ, կտկտակ *(հավի)*
հռնկ-հռնկ *(սպասել)*
ղինջ-ղինջ *(լալ)*
հանկռ-հանկռ հանկռտել
հաուլ-հուվուլ *(լալ, կանչվռտել)*
հը՛ռ *(դուռը—արաւ)*
հը՛րթ *(սիրտս—ըրաւ)*
հլո՛մփ *(ինկաւ ջուրը)*
հլտր-հլտր=*պիշ-պիշ (նայել)*
հլտ-հլտ
հմպլ-հմպլ *(լողալ)*
հնկլ-հնկլ *(զանգի ձայն)*
հո՛ւ ջո՛ւ
հվլ-հվլ հվլտալ
մշ-մշ քնանալ
մռլ-մռլ մռլտալ
շաթըռ-շաթըռ *(կոտրատել)*
չաթ-չութ *(կոտրել)*
չարթ-չուրթ *(վառուել)*
չթռ-չթռ *(կոտրտել)*

չլը՛մփ *(ընկաւ ջրի մէջ)*
չրթ–չրթ *(ուտել)*
չփ–չփ *(լուալ)*
պա՛ռ–պա՛ռ *(կանչել, պոռալ)*
պատռ–պատռ *(պատռոտել)*
պլթ–պլթ *(նայել)*
պլ–պլ *(վառուել)*
պղլ–պղլ *(լուացվել)*
պոռ–պոռ *(պոռալ)*
պտռ–պտռ *(խօսել)*
վզտ–վզտ *(մտնել-ելնել)*
վը՛զ–վը՛զ *(փչել քամու)*
վը՛ռ–վը՛ռ վռվռալ
տզ–տզ *(ձայներ հանել)*
փխր–փխր *(եփուել)*
փնտռ–փնտռ փնտռել
ֆթր–ֆթր *(ծամել)*
և այլն։

6. ԿՐԿՆԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Գրաբարում ածական կամ գոյական նույնությամբ կրկնվելով գործ են ածվում իբրև մակբայ։ Սրանցից ոմանք հաճախական են, ուրիշներ՝ սաստկական։

Տալիս ենք սրանց այբբենական ցանկը.

Անդամ անդամ.— Զմիս անդամ անդամ յօշել *«Միսը կտոր-կտոր ջարդել»։*

Արագ արագ հասանել *«Շուտով հասնել»։*

Գէշ գէշ պատառել *«Մարմինը պատառ պատառ անել»։*

Երբեք երբեք խաւարի *«Երբեմն խաւարում է»։*

Յոյժ յոյժ մեծացաւ *«Զափազանց հարստացաւ»։*

Ոտն ոտն յառաջ մատչել *«Ոտք-ոտք առաջանալ»։*

Ուստեք ուստեք *«Այստեղից այնտեղից»։*

Ուրեք ուրեք *«Տեղ-տեղ»։*

Տակաւ տակաւ մաշի մարմինն *«Կամաց-կամաց մարմինը մաշվում է»։*

Ստէպ ստէպ ի վերայ յարձակել *«Հաճախ-հաճախ հարձակում գործել»։*

(Զալխ. 160)

Մի քանի օրինակներ էլ միջին հայերենից.

Ի կից կից *«Ստէպ-ստէպ, մոտ-մոտ»։*
Կում կում խմել *(ոմկ. պուտ-պուտ)։*
Ուշիկ ուշիկ մարձէ *«մեղմով շփիր»։*
Քիչ քիչ յաւելնայ։
Զատ ի զատ զամէն մէկ *«Ամեն մեկը առանձին-առանձին»։*
Ի դեն ի դեն շրջի *«Դես-դեն ման է գալիս»։*
Ժամ ժամ հազայ *«Երբեմն-երբեմն հազում է»։*
Օր աւուր *«Օրից օր»։*

(Այտն. 130)

Նույն երևույթը գտնում ենք նաև աշխարհաբարի մեջ. կրկնվում են թե՛ գոյականներ և թե՛ մակբայներ։ Ահա այբբենական մի ցանկ այս կարգի կրկնավորների.

Դաս դաս կ'երգէին։
Ետ ետ քաշուեցան։
Երբեմն երբեմն հաւաքւում էին։
Երկու երկու առաջս հանեցին։
Թել թել կախուած էր։
Խումբ խումբ կանգնել էին։
Ծանր ծանր քայլել։
Ծուռ ծուռ նայում էր։
Կախ կախ պտուղները շարուած էին։
Կամաց կամաց առաջանում էր։
Կարգ կարգ եկան շարուեցան։
Հատ հատ քաղեց կերաւ։
Մաս մաս կը վճարեմ։
Մանր մանր կտրատեց։
Մէկիկ մէկիկ պատմեց։
Յիմար յիմար մի՛ դուրս տա։
Շուտ շուտ շուռ էր տալիս թերթերը։
Ոլոր ոլոր շոգին բարձրացաւ։
Ոտք ոտք վայր իջանք։
Ստէպ ստէպ աներևոյթ էր լինում։
Վեր վեր կը ցատկէ։
Տեղ տեղ փոսեր փորեցին։

Այս նույն երևույթը գտնում ենք նաև ուրիշ լեզուների մեջ. ինչ-

պես՝ հն. ɔıγá ɔıγà *կամաց-կամաց, պրս.* āheste āheste *կամաց-կամաց, թրք.* yavaš yavəš *«կամաց-կամաց» և այլն։*

Գրաբարում կրկնված բառերի միջև հաճախ մտնում են ի, առ. ընդ, ըստ *նախդիրները, քան նախադրությունը կամ* և *շաղկապը։ Ահա այս կարգի մակբայների այբբենական մի ցուցակ.*

Ամ ըստ ամէ երթային *«Ամէն տարի գնում էին»։*

Այլ ընդ այլոյ *«սուտ-մուտ, ծուռ ու սխալ». բուն նշանակությունն է «ուրիշի տեղ մի ուրիշ բան». այլոյ սեռական է և ընդ նախդիրով նշանակում է «ուրիշի փոխարեն». իսկ այլ՝ ներգործական բայի մոտ հայցական է և չեզոք ու կրավորական բայերի մոտ ուղղական.— օրինակ՝* այլ ընդ այլոյ պատմել, տեսանել, կարծել, ասել.— Այլ ընդ այլոյ երևել *և այլն։* Սերմն ոչ այլ ընդ այլոյ գայ, այլ զոր սերմանեցեր զնոյն հնձեցեր:— *Ասվում է նաև՝* Այլք ընդ այլոց երևին *«Աչքին ուրիշ բաներ են երևում».* Այլում ընդ այլոյ տալ *«Մեկին տալիք բանը ուրիշին տալ»։*

Անդէն և անդ յղեաց *«Տեղն ու տեղը՝ իսկույն ուղարկեց»։*

Բան առ բան պատասխանի *«կետ առ կետ պատասխան»։*

Բերան ի բերան խօսել *«Երես երեսի խոսել»։*

Գամ քան զգամ յաւելոյր *«Հետզհետե ավելացնում էր»։*

Ետ ընդ ետ յղեաց *«Անմիջապես ուղարկեց»։*

Եւս քան զեւս սաստկանայր *«Հետզհետե ավելի էր սաստկանում»։*

Թուփ առ թուփ բուսեալ *«մոտ-մոտի թփեր բուսած»։*

Խառն ի խուռն գումարեաց զամենեսին *«Խառնիխուռն հավաքեց բոլորին»։*

Խիտ առ խիտ խարոյկս վառել *«Խիտ-խիտ խարույկներ վառել»։*

Ծայր ի ծայր լցաւ տունն *«Տունը ծայրից ծայր լցվեց»։*

Կաղս ի կաղս գնան *«Կաղեկաղ քայլում են»։*

Կարգ ըստ կարգէ *կամ՝* Կարգ ըստ կարգի պատմէ *«կարգով պատմում է»։*

Կարճ ի կարճոյ պատմել *«Համառոտ պատմել»։*

Կէս ի կէս և ոչ կատարեալ *«Կիսատ պռատ և ոչ թե կատարյալ»։*

Հաղ քան զճաղ յաւելոյր *«Հետզհետե ավելի էր շատացնում»։*

Հասարակ առ հասարակ լինիցին *«Հավասար չափով լինեն»։*

Հուպ ընդ հուպ եկից *«Շուտով՝ քիչ հետո կգամ»։*

Ձեռն ի ձեռն տալ ինչ ումեք *«Իր ձեռքով մեկին մի բան տալ»։*

Ճակատ առ ճակատ յարդարէր *«Դեմ-դեմի զորք շարեց»։*

Ճեպ ի ճեպոյ *«Շտապով»։*

Մերթ ընդ մերթ *«Երբեմն-երբեմն»։*

Մերձ ընդ մերձ եկից *«Շատ շուտով կգամ»։*

Մի առ մի՝ *կամ*

Մի ըստ միոջէ թուել *«Մեկ-մեկ թվել»։*

Միայն ընդ միայն *(Երկուսով առանձնացած, առանց ուրիշի ներկայության). ինչպես՝* Առեալ զեղբայր քո միայն ընդ միայն խրատիցես:

Մօտ ի մօտոյ *(քիչ ժամանակ հետո). ինչպես՝* Մօտ ի մօտոյ եկից այդր:

Նոյն ընդ նոյն *(անմիջապես). ինչպես՝* Նոյն ընդ նոյն յղեաց:

Վեր ի վայր տապալել, ճարկանել, եղծանել *«Տակնուվրա անել»։*

Փոյթ ի փութոյ *«Շտապով, շուտ»։*

Օր ըստ օրէ՝ *կամ*

Օր քան զօր ապականի *«Օրից օր փչանում է»։*

Նույն երևույթը կա նաև աշխարհաբարում, ուր գտնում ենք ի, առ, ընդ *նախդիրները (գրաբարից փոխառությամբ) և ավելի շատ միևնույն բառը իր հոլովով կրկնված։ Այս վերջինը հատուկ է բարբառներին, որոնցից և անցել է գրական լեզվին։ Ահա այբբենական մի ցուցակ այս երկու տեսակ կրկնավոր մակբայների.*

Բառ առ բառ օրինակել:

Գլխէ գլուխ կարդացի:

Դաս առ դաս երգել:

Դարէ դար=Դարից դար *(հին ձև է՝* դարէ ի դար*)։*

Դէմ առ դէմ կանգնած էին:

Դիմացէ դիմաց. *ինչպես՝ Մեր տունը և ձեր տունը* դիմացէ դիմաց են:

Դիմաց դիմացի բաժակները շարուեցան:

Ետև ետևի կանգնած էին *(տեղի պարագա)։*

Ետևէ ետև թղթեր հասան *(ժամանակի պարագա)*

Ժամէ (ի) ժամ մահուան սպասել:

Խիտ առ խիտ բուսած:

Ծայրէ (ի) ծայր=Ծայրից ծայր կարդացի:

Կէս առ կէս զարի է խառնած *(Այտն. 117 դնում է* Կիսոյ ի կէս, *որ այժմ անգործածական է. գրք.* կիսոյ կէս=*գվռ.* կէսուակէս, *որի դեմ Այտն. դնում է* կէսուայիկէս*)։*

Կույր զկուրայն հետևել:

Հազիւ հազ հասանք:

Հետզհետէ բարձրացաւ *(Այտն. գրում է նաև* հետ զհետէ, *որ՝ այժմ չի գործածվում)։*

Ձեռք ձեռքի մահ են գալիս:

Ձեռքէ ձեռք=Ձեռքից ձեռք անցաւ:

Մերթ ընդ մերթ պատահում ենք:

Մէկէն ի մէկ *(հանկարծ)* վեր ցատկեց:

Մէջ ընդ մէջ երգեր էին երգում:

Վազէ վազ, վազնիվազը վրաներս եկաւ:

Վեր ի վերոյ=Վայր ի վերոյ պատմեց:

Վերէն ի վար սւզած:

Տակաւ առ տակաւ սաստկանում է:

Տեղն ի տեղը *(մանրամասն)* պատմեց:

Տեղն ու տեղը *(հենց նույն տեղում՝ իսկույն)* սպանեց:

Տուն առ տուն երգել, սաղմոսել:

Փոխն ի փոխը պահապան կեցանք:

Փոխ առ փոխ երգում էինք:

Քայլ առ քայլ յառաջանալ:

Քով քովի *(կամ* քովէ քով*)* կանգնած էին:

Օրէ օր (օր օրի, օրէցօր) շատացաւ:

Օր օրի վրայ *(ամէն օր ավելանալով, աստիճանաբար)* հիւանդությունը սաստկացաւ:

Բարբառներում ևս կան նման ձևեր, որոնք արդի գրականում չեն գործածվում. ինչպես՝

էվել էվելօք կ'արտորամ *«Շատ ու շատ կշտապեմ»։*

Հիմակուհիմայ *(առ այժմ). օրինակ՝* Հիմակուհիմայ կերակուրէն ուրիշ բան չեմ ուզեր *(Պարոնյան, Մեծ. մուրացկ., Երևան, 1931, էջ 21)։*

Օր աւուր կ'աճելնայ:

Կրկնավոր մակբայների նախդիրով թե առանց նախդիրի գործածությունը սակայն բոլորովին ազատ չէ, և նրանց միակ կանոնը սովորությունն է։ Գրաբարում կարելի է ասել տակաւ տակաւ, *բայց արդի գրականում ասում ենք* տակաւ առ տակաւ: *Արդի գրականում ասում ենք* երբեմն երբեմն, *բայց չենք ասում* մերթ մերթ *(ինչպես գրում է Սիրաս, Ձգրուած օրէնք, 114.* Մերթ մերթ մօտենում էր լուսամուտին), *այլ ասում ենք* մերթ ընդ մերթ:

Այսպես և ուրիշներ։

7. ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐ

Մակբայների մի ստվար մասը կազմված է զանազան մասնիկներով. այդ կարգի ածանց մակբայները ընդհանրապես մենք չենք հիշում մեր ցուցակում։ Գլխավոր մասնիկները հետևյալներն են.

1. -աբար. *առաջանում է* բարք *«բնավորություն» գոյականից. սկսած մեսրոպյան շրջանից, շատ սովորական է մեր լեզվում։ Լավագույն օրինակներից մեկն է այն բառերի շարքում, որոնք ցույց են տալիս, թե ի՛նչպես գոյականը մասնիկ է դառնում։ Դասական շրջանում շատ հաճախ չի գործածվում. ըստ Համաբարբառի՝ Ս. Գրքում գործածված ունենք միայն 9 բառ, որոնցից մեկը դեռ զուտ մասնիկ չի ներկայացնում, այլ միայն բարդ բառ է և գործածված իբրև ածական. այսպես՝*

Կանայք նոցա անմիտք և չարաբար մանկունք նոցա. *Իմաստ. Գ 12։*

Այր չարաբար՝ բազումս տուժեսցի, *Առակ. ԺԹ 19։*

Այնպես որ կարելի պիտի լիներ թերևս ուղղել չարաբարոյ, *եթե չլինեին* չարաբարութիւն *բառը 3 անգամ վկայված Ս. Գրքում և ուրիշ վկայություններ* չարաբար *ձևի համար։ Ս. Գրքի մյուս 8 օրինակներն են.*

առիւծաբար *Բ Մակ. ԺԱ 11։*
—աւարաբար *Ա Մակ. Ջ 3։*
բռնաբար *Օր. ԻԲ 25, 28։*
գազանաբար *Բ Մակ. Ժ 35, ԺԲ 15, Ես. Ե 29։*
դայեկաբար *Գ Մակ. Գ 9։*
ընտանեբար *Փիլիպ. Բ 20։*
տիրաբար *Բ Մակ. ԺԳ 23։*
օտարաբար *Ես. ԻԸ 21 (երկիցս)։*

Դասական շրջանի այլ գրություններից ունենք ուրիշ օրինակներ այս մասնիկով. ինչպես՝ հայրաբար *Ագաթ.* հայկաբար «*Հսկայի նման*» *Ագաթ.* տղայաբար *Ոսկ. Յովհ. Ա 1.* անզգուշաբար *Ոսկ. Եբր. և այլն։ Ավելի ուշ բառերի մի ահագին բազմություն է հետևում սրանց. ինչպես՝* անմտաբար, անընդմիջաբար, անմիջնորդաբար, բարեբախտաբար, եղբայրաբար, երկրորդաբար, երրորդաբար, զգուշաբար, զանխլաբար, թշնամաբար, իշխանաբար, խրոխտաբար, ծնողաբար, հսկայաբար, հաւանականաբար (հաւանաբար), մարդասիրաբար, միամտաբար, հանդիմանաբար, յիմարաբար, սովորաբար, տգիտաբար *և այլն և այլն։*

Ջամբռ (էջ 191) ունենք մինչև անգամ ո՞րպիսաբար: *Բարբառներում այս մասնիկով բառ չկա և չի կազմվում. իսկ արդի գրական լեզվում ո՛չ միայն հներն են կյանքի կոչված, այլև բազմաթիվ նորերն են ստեղծված. ինչպես՝* ենթադր*աբար, զգալաբար, անզգալաբար, երախայաբար, անձնվիրաբար, դժբախտաբար, մակերեսաբար, հարկադրաբար, վայրկենաբար, ստիպողաբար, աստիճանաբար, վճռաբար և այլն և այլն։ Այս բոլորը կարող ենք վերածել երեք խմբի. ա) -*աբար *մասնիկը դրվում է ածականի վրա. ինչպես՝* բռնաբար. *բ) ածականաբար առնված գոյականի վրա. ինչպես՝* հայրաբար, *հայկաբար. գ) այլ կարգի բառերից՝ զանազան գեղչումներով. ինչպես* յանդիմանաբար *(իբր* յանդիմանողաբար*), վճռաբար (իբր վճռականաբար)։*

Արևմտահայերը այս մասնիկով կազմված բառերը շեշտում են սովորաբար նախավերջընթեր *(վերջից հաշված երրորդ) վանկի վրա, այսինքն շեշտը դնում են* -աբար *մասնիկից անմիջապես առաջ. այսպես՝* խրո՛խտաբար, յիմա՛րաբար *և այլն, ինչպես հնչում են նաև ֆրանսերեն համապատասխան բառերը. ինչպես՝* heureusement, facilement.

2. -ակի. *այս մասնիկով ունենք մեսրոպյան շրջանից* վաղվաղակի, հանկարծակի, փութանակի, կրկնակի *և այլն։ Ավելի ուշ շրջանից՝* երկակի, եռակի, երրակի, եզակի, յոգնակի, բազմակի, խոտորնակի, յաճախակի, շեշտակի, բոլորակի, մեկնակի, որոշակի, անորոշակի, աներևակի, շուրջանակի, ուղղակի, թեքևակի, յոլովակի, *նոր գրականում կազմված՝* շեղակի, փոփոխակի, երբեմնակի, անուղղակի *և այլն։*

3. -այն. *այս մասնիկով մեսրոպյան շրջանից ունենք՝* միայն, գիշերայն, լռելեայն, առժամայն, նոյնհետայն, նոյնժամայն, վա-

ղորդայն, զճանապարհայն, միանգամայն, յանկարծայն, *ուշ ժամանակից՝* համանգամայն, *այժմ գործածական չէ իբր մասնիկ։— Այս մասնիկի մի ուրիշ ձևն է* –ոյն, *որից ունենք* յանկարծոյն, միահաղոյն, իսկոյն, կենդանւոյն, ողջոյն.— *Ագլ. ունի* մույնիտոն *ձևը, որ կարծում եմ այն է, ինչ որ* նոյնհետայն:

4. –ապէս *(հյ. պէս բառն է, հոդակապով միացած). ճիշտ իր հոմանիշ* –աբար *մասնիկի պես շատ քիչ է գործածված մեսրոպյան շրջանում, ըստ Համաբարբառի ունենք միայն 7 բառ Ս. Գրքում. այն է՝* ճշմարտապէս *Սիրաք ԽԲ 1, 8,* պնդապէս *Գ Մակ. Դ 12,* սքանչելապէս *Սաղմ. ԽԴ 5, ՀԵ 5,* մեծապէս *(15 անգամ),* յայտնապէս *(15 անգամ գործածված),* փութապէս *(4 անգամ),* դառնապէս *(6 անգամ). ավելի ուշ սովորական է դառնում. ինչպես՝* այլապէս, ուղղապէս, համարձակապէս, հաստատապէս, ամբողջապէս, քաջապէս, հաւասարապէս *և այլն, իսկ նոր գրականում շատ ավելի ազատ գործածություն ունի. ինչպես՝* անմիջապէս, հանդիսաւորապէս, ամրապէս, խորապէս, վայրկենապէս, ռոպէապէս, ընդհանրապէս, մտաւորապէս. *մինչև անգամ գտնում ենք* հուճէքապէս *«մուրհակի ձևով» (Ջամբռ, էջ 266)։ Ամենահին շրջանում կազմում էր բարդ բառեր՝ առանց հոդակապի. ինչպես՝ այսպէս, այդպէս, այնպէս,* սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, որպէս, *որոնցից՝* այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, որպիսի: *Արևմտահայոց մեջ ընդհանրապես շեշտվում է նախավերջընթեր (վերջից հաշված երրորդ) վանկը՝ ճիշտ* –աբար *մասնիկի նման։*

Առհասարակ կցվում է ածականի վրա. քիչ անգամ նաև մակբայի վրա. ինչպես՝ մշտապէս։ *Կարելի չէ ըստ օրինի կցել գոյականներին. բայց արդի հայերենը երբեմն շեղվում է այս կանոնից և հորինել է* վերջապէս, պաշտօնապէս, վայրկենապէս, ռոպէապէս. առժամապէս *և նման բառեր, որոնք այժմ սովորական են դարձել։ Գրողների հնարած ձևերից նշենք՝* վերջնապէս *(Շիրվանզադե, Երկերի լիակ. ժողովածու, Երևան, 1930, հտ. Դ, 232, 349.—*Վճռեց... վերջնապէս բացատրութիւն խնդրել հօրեղբօրից: Այժմ դուռս է գալիս մի ատելի աղջիկ և վերջնապէս խորտակում է նրա յոյսերը).— գործնապէս, պատմապէս *(Անիծեալն, Թրգմ. Մամուրյան, Զմյուռնիա, 1875, հտ. Ա, 59, 189)։ Սրանք կրճատ ձևեր են* վերջնականապէս, գործնականապէս, պատմականապէս *բառերի, բայց չեն ընդունված գրականության մեջ։*

5. –օրէն *(ձևացած* օրէնք *բառից և դարձած մասնիկ). ունի նույն նշանակությունը, ինչպես* –աբար *և* –ապէս. *ցույց է տալիս*

եղանակ. քիչ անգամ գործածված մեսրոպյան շրջանում. ինչպես՝ մարդկօրէն *Հռոմ. Չ 19. Եւս. Պտմ. 2. Ոսկ. Մ. Ա. 2.* վարազօրէն *Բուզ. Ե 43.* յանկարծօրէն *Յես. ԺԱ. 7. Սիր. ԺԱ 29. Բուզ. Բ 12* (այլ բառ է նամօրէն). *շատ մեծ գործածություն ստացավ նոր գրականում, ուր կազմվեցին բազմաթիվ բառեր. ինչպես՝* լայնօրէն, լիօրէն, զգալիօրէն, դիւցազնօրէն, ընդարձակօրէն, մանրամասնօրէն *և այլն և այլն։*

Բայց կարելի չէ ամեն մի բառի վրա ազատորեն դնել այս մասնիկը, ինչպես և նախորդները։ Երեք մակբայակերտ մասնիկներն էլ (-աբար, -ապէս, -օրէն) *միևնույն իմաստն ունեն. կարելի է համասարապես ասել* բնականաբար, բնականապէս, բնականօրէն. *բայց ոչ այսպես ամեն բառ։ Օրինակի համար՝ խորթ է* անակնունելիօրէն *(Սիրաս, Չգրուած օրէնք, 452)։ Այսպիսի դեպքերում պետք է ածականին կցել* կերպով, ձեւով, եղանակով, *և ասել* անակնունելի կերպով *և այլն։*

6. -ցի *կամ* ացի. *պետք չէ շփոթել այն* -ցի *մասնիկի հետ, որ ցույց է տալիս «բնակիչ». այս մասնիկը քիչ է գործածված և նշանակում է «միջոցով, -ով». այսպես ունենք հին լեզվից* նշանացի *(խոսելու համար ասված),* բռնցի, աքացի *«ոտքով» (հարկանել),* ձերբացի *կամ* ձեռամբացի *«ձեռքով»,* մուրցացի *«բռունցքով»,* մագլցի, *նոր լեզվով՝* բառացի *«բառ առ բառ, բառական,* mot à mot„*։ Տարբեր են* բառացի *կամ* փառացի *«փառավոր»,* խելացի *«խելոք», որոնք ածական են և ոչ մակբայ։*

7. -իցս. *թվականներից կազմում է մակբայ, «այնքան անգամ» նշանակությամբ. ինչպես՝* երկիցս, երիցս, չորիցս, հնգիցս *և այլն. մեծ մասամբ համապատասխանում են* -ի *հոլովման (հոգ. սեռ.* երից, չորից, հնգից). *բայց* երկու *բառը նույնպես տալիս է* երկիցս *և ո՛չ թե* *երկուցս.— հանի *բառը տալիս է* հանիցս *և ո՛չ թե* հանեացս.— *աշխարհաբարումն էլ կազմվել է* բազմիցս *և ո՛չ թե* *բազմացս:— *Ավելին տե՛ս թվականների մեջ։*

8. -ուստ. *տալիս է բացառականի իմաստ. ինչպես՝* յետուստ, արտաքուստ, յարքունուստ, յԱստուածուստ, ի բացուստ, ի հեռուստ, ի ներքուստ, ի վերուստ, յառաջուստ, յերկնուստ, այլուստ, ուստի. *նաև* -ին *մասնիկի հավելումով՝* անդստին, աստստին, վերստին:

Մակբայներ կազմվում են նաև՝

-արէն, -երէն *մասնիկով. ցույց է տալիս լեզու. ինչպես՝*

յունարէն, եբրայեցերէն, հայերէն:

-էն *մասնիկով (դուք ինքներդ և այլն իմաստով). ինչպես՝*

ինձէն, քեզէն, ձեզէն. *օրինակ՝*

Առէք զդա ի ձեզ և ձեզէն հանէք ի խաչ. *Յովհ. ԺԹ 6։*

Ես ինձէն աչօք տեսի. *Եղիշ. 50։*

Հոգնակի բացառական հոլովով. ինչպես՝

յանպատրաստից *(ճիշտ չէ ասել* յանապատրաստի*).* տարապարտուց *կամ* ի տարապարտուց:

Բարբառներում էլ կան մի քանի նոր մակբայակերտ մասնիկներ, որոնցից կարևոր են հետևյալները.

1. –անց. *ինչպես՝* գիշերանց, երեսանց, ճեռվանց, մէկանց, մօտանց, ներսանց, սրտանց, դըսանց, ետևանց, քովանց, օր մը օրանց, անօթի փորանց, առտվանց, *նաև Ագլ.* քօլանց *«ցածրից, ներքևից»։*

Այտն. 113 –անց *մասնիկի համար տալիս է նաև* դըսուանց, դըսուօրանց, ետևօրանց *ձևերը, ավելացնելով միևնույն ժամանակ, թե այդ ձևերը (դեռ այն ժամանակ) անսովոր են։*

–անց *և* –ուց *հանգով կազմված մակբայներն էլ ոմանք կրկին հոլովմամբ են գործածվում. ինչպես՝* պզտիկուցվընէ, շատոնցվընէ, ննուցմէ, առտուանցուան *և այլն (այս ձևերն էլ այժմ խորթ են)։*

2. –օք, *որ հաճախ դրվում է նախադրության վրա, ինչպես նաև մակբայների վրա. ինչպես՝* վարօք, վերօք, տեղնիտեղօք *«մանրամասն»,* օրօք *«ժամանակին»,* անդիօք *«մի քիչ աւելի այն կողմ»,* էվելօք *«շատ ավելի»,* շատվընօք *Հմշ. «վաղուց, շատ ժամանակ առաջ»,* առէնօք տկվընօք: *Թեև գրաբարում հոգն. գրծ. է, բայց բարբառներում միշտ եզակի է։*

3. –ուց. *օրինակ՝* առաջուց, վաղուց, էգուց *(այսինքն* այգուց, առաւօտուց), պզտիկուց, փոքրուց, ննուց:

4. –ճան. *օրինակ՝* ծնկնաճան *«մինչև ծնկները» Երև.,* առաւօտաճան *Երև. (որի դեմ Ղրբ. ունի* բռուքանա, *այն է* առաւօտնանա, տն=բ*) «առաւօտը շուտ»*. *նույնը Ջղ.* –խան *ձևով. ինչպես՝* քշերախան, դ'ըսախան, իրեսախան, կողախան, միջքախան, յետքախան (<յետկոյս-աճան), յետնախան, ետկարախան *«հեռվից»,* ներսախան, վորմախան *«պատն ի վեր»,* տակախան, քաշախան *«ցածից»։*

5. –ուկ *(որ մեր սովորական նվազական մասնիկն է և մակբայի իմաստը մի քիչ մեղմացնում է). ինչպես՝* կամացուկ, մինակուկ, մինչուկ *«մինչև որ»,* գաղտուկ, ճմայեկուկս *(Ակն) «այժմ»։ Կարծում եմ, որ սրանից են կազմված նաև* խորունկ, երեսկունկ:

Թուրքերենից առնված մասնիկներ են.

-jık *(նվազական կամ փաղաքշական), որից ունենք* ճիմաջուկ *«այժմիկ»,* ֆիչիչիկ *«քչիկ»,* կառչիկ *«մի քիչ»։*

-den *(բացառականի մասնիկ), որից Նխ.* ճոռ–ճոռտէն *«նորից», իբր Թրք.* yeni-den *«նորից» բառի նմանողությամբ։*

-əna, ine *(առաջինը ծանր ձայնավորով, երկրորդը թեթև ձայնավորով). մասնիկ տրականի, որից կազմված ունենք Հմշ.* գէսիճտ, *«մինչև կեսը» (Թրք.* yarəsəna*) և Պլ.* տաւք'–տաւքնա *«դեռ բոլորովին տաք ժամանակը», որ ձևացած է Թրք.* səjaγə-səjaγəna *ձևի վրայից թարգմանաբար։*

Յուցականից կազմված ձևեր են սաչափ, սապէս, սախըդար, ...

Սախադար *Պլ.* սախըդար, *Պլ.*=զըղըդար *Ար. նվազականը* զըզըդարուկ *Ար. «սաչափ»։*

Սվեդ. դըրզիդօ, դըրզիճօ, դըրըսսօ *«այսպես, այդպես, այնպես»։*

Ամենևին *բառը, ինչպես և իր հոմանիշը՝* բոլորովին, *ծագում են* ամէն, բոլոր *բառերից, բայց նշանակում են բացասականություն (ո՛չ, բնավ)։*

Նույն երևույթը նկատում ենք նաև ռուս. все, *գերմ.* alle, *ֆրանս.* du tout *բառերի մեջ, որոնք բոլոր նշանակում են «բոլոր» և միաժամանակ. «էլ չկա»։*

Նույնը զարմանալի կերպով տեսնում ենք ալթայական կումուխ լեզվի մեջ, ուր tugul *«ամբողջ, բոլոր» բառը դարձել է տճկ.* degil, deyil *«դէ», որ «է» էական բայի բացասականն է* (Дмитриев, 46)։

8. ԳՐԱԲԱՐԻ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ

Ակամայ *«չուզելով».* Ակամայ յանցեայ:

Անա. Անա լուայf *«Ահա լսեցիք»։*

Անաւասիկ, աւասիկ, անաւադիկ, աւադիկ, անաւանիկ, աւանիկ:

Ամենևին *«բոլորովին».* Շառադրյն ամենևին.— *կամ «բնավ».* Ամենևին մի՛ երդնուլ:

Այգուն }
Այգուցն } *«առավոտը լուսադեմին»։*

Այդգունակ

Այդչափ

Այդպէս
Այդքան
Այժմ
Այժմէն
Այժմիկ
Այլ *«է՛լ, է՛լ ավելի»։*
Այլ ևս *«է՛լ ավելի»։*
Այլազգ *«ուրիշ կերպ»*. Այլազգ խօրնել:
Այնգունակ
Այն ինչ *«դեռ նոր»*. Այն ինչ մեռեալ էր:
Այն օր
Այնունետև
Այնչափ
Այնպէս
Այնքան
Այո
Այսգունակ
Այսունետև
Այսչափ
Այսպէս
Այսքան
Այսօր
Անագան *«ուշ»*. Վաղ կամ անագան:
Անդէն *«այն տեղում», 2. «շուտով»*. Անդ կեաց և անդէն թագատրեսջի՞ր:
Ապա թէ ոչ *«թե չէ»։*
Ապա *«հետո»*. Ապա գիտասցես *«հետո կիմանաս»։*
Ապաքէն *«անշուշտ», իրոք»*. Ապաքէն լուարուք:
Առ այժմ
Առ այժմիկ
Առաջոյ *«առջևից»*. Հասին առաջոյ և զկնի *«առջևից հետևից հասան»։*
Առաւել *«ավելի»*. Առաւել փութասջիք:

Առաւօտու Առաւօտուց	*«առավոտուն»*. Առաւօտու(-ց) տեսջիք:

Առ երեկս *«երեկոյան դեմ»։*
Առժամայն

Առ ժամ մի

Առ իմէ՞

Առ հարկէ *«ստիպված»։*

Առտնին *«տնումը».* Առտնին ուսուցանէր։

Առօրին

Արդ *«հիմա»։*

Արդարև *«իրոք որ».* Արդարև երդուաւ։

Արդ ևս *«դեռ նոր, դեռ հիմա».* Արդ ևս վախճանեցաւ։

Արդեօք

Արդէն. Արդէն իսկ երևի։

Աւուր աւուր

Աքացի *«քացով».* Աքացի հարկանել։

Բիւր *«շատ» (իբր թե բյուր անգամ). օրինակ՝* Չի թէ բիւր չար իցէ, սակայն աստուածապաշտ է. Եւ թէ բիւր աճապարեցին հայք, սակայն զօրքն պարսից արշաւէին յերկիրն...

Բարւոք *«լավ».* Բարւոք խորհել։

Բնաւ. Բնաւ մի՛ երդնուլ։

Բռնցի *«բուռով».* Բռնցի հարկանել։

Գաղտ. *«գաղտուկ».* Գաղտ կոչեաց։

Գիշերայն *«գիշերով». տե՛ս գիշերի։*

Գիշերանց *բառը չկա ո՛չ ՆՀԲ, ոչ ԱԲ և ոչ էլ Համաբարբառում, բայց այս վերջինը (էջ 1263բ) հիշում է Ա Մակ. ԺԲ 28* Գիշերանց պատրաստեցան ի պատերազմ։

Գիշերի, ի *նախդիրի զեղչումով, «գիշերով», սովորական ձև է.* Գիշերի գողացան. Սա եկն առ նա գիշերի *(Յովհ. Գ 1)։*

Գլխովին, ի գլխովին *«հենց ինքը».* Եւ զիս իսկ գլխովին։

Գունակ

Գուցէ, գուցէ թէ, Մի՛ գուցէ *«չլինի թե».* Գուցէ թէ լուիցեն *«չլինի որ լսեն».* Գուցէ թէ ի զուր ինչ վաստակեցի. *Ասվում է նաև* Գուցէ երբեք։

Գրեթէ *մակբայը նախնական* գրեա՛ թէ *ձևն է, որի հոգնակին էլ կա. ինչպես՝* Գրեսցուք թէ կատարեցի զիրսն. զի՞նչ օգտեցայ *(ենթադրենք թե կատարեցի, ի՞նչ օգուտ). Վրք. Հրց. Ա 633. Թեև բայի հրամայական ձևը արևելյան գրականում դարձել է* -ի՛ր, *բայց չենք ասում* գրի՛ր թէ. *նույնպես հոգնակի քաղաքավարական խոսակցության մեջ* գրեցէ՛ք թէ *չկա։*

Դարձեալ

Դեռ. Դեռ երե՛ք ժամ են աւուր *(դեռ ժամը 3 է)։*

Դոյնգունակ
Դոյնչափ
Դոյնպէս
Դուն ուրեք *«քիչ անգամ»*. Դուն ուրեք դիպեցի:
Եռանդ *«նախորդ օրը»*։
Ե՞րբ. Ե՞րբ եկիր այսր:
Երբեմն
Երբեք. Ոչ երբեք կերայ. Մի՛ երբեք ստեր:
Երէկ:
Եւ այլ ևս *«է՛լ»*. Արարի և այլ ևս արարից:
Եւս. *«ավելի»*. Եւս մեծ, մեծ ևս քան զայս:
Զառաջինն *«նախ»*. Զառաջինն ոչ իմացաւ:
Զի՞
Զիա՞րդ
Զիարդուպէտ
Զկնի *«ետևից»*. Հասին առաջոյ և զկնի *«առջևից ետևից հասան»*։
Զի՞ ևս *«էլ ի՞նչ»*. Զի՞ ևս աշխատ առնէք *«էլ ի՞նչ եք հոգնեցնում»*։
Զճանապարհայն *«ճամբում»*. Զի՞նչ վիճէիք զճանապարհայն:
Զմէ՞
Զուր *«պարապ տեղը»*. Զուր, ի զուր ջանացայ:
Զօր ամենայն
Զօրէն
Զօրհանապազ
Է՞ր
Է՞ր աղագաւ
Է՞ր սակս
Է՞ր վասն
Էրո՞ւմ
Ընդ այգն *«լուսադէմին»*. Ընդ այգն եկն:
Ընդ առաւօտն } *«առավոտվա դեմ»*։
Ընդ առաւօտս }
Ընդ երեկս *«երեկոյան դեմ»*։
Ընդէ՞ր
Ընդ ճաշ *«շուտով»*. Ընդ ճաշ եկից:
Ընդվայր *«իզուր»*։

Թերևս. Թերևս ամաչեցեն. Թերևս քարկոծ իսկ առնէին:

Թո՛ղ

ժամէ ի ժամ

ժամ ի ժամ

ժամու

ժամս ժամս

Ի բաց «*հեռու*». Ի բաց կացէք:

Ի բացուստ «*հեռվից*». Տեսե ի բացուստ:

Իբր

Իբրև

Իբրև զի

Իբրու

Ի խոնարհ «*ցածր, դեպի ցած*» (*շարժում և դադարում*)։

Ի ծածուկ «*գաղտնի*». Ի ծածուկ գործի «*գաղտնի է արվում*»։

Ի հարկէ

Ի հեռաստանէ *կամ* ի հեռուստ «*հեռու տեղից*»։

Ի հերուն հետէ «*անցած տարվանից*». Ի հերուն հետէ պատրաստ են:

Ի մէջ «*մեջտեղ*». Արի՛ անց ի մէջ:

Ի մօտոյ «*մոտերս*». Ի մօտոյ եկից:

Ի մօտէ «*մոտ տեղից*». Ի մօտէ ելանէ «*մոտ տեղից դուրս կգա*»։

Ի ներքուստ «*ներքևից*». Ի ներքուստ մինչև ի վեր:

Ինքնակամ «*իր կամքով*». ինքնակամ չարչարի:

Իսկ «*հենց, իրոք էլ*». *Եւ էր իսկ այնպէս. Եւ պահէ իսկ.*

Իսկ և իսկ «*շուտով*»։

Իսկոյն

Ի սպառ «*բոլորովին*». Իսպառ շիջանի:

Ի վաղուց հետէ «*Շատոնց*» ի վաղուց հետէ գիտէիր. ի վայր «*դէպի ցած, վար*», Անկաւ ի վայր, վերուստ ի վայր:

Ի տուէ «*ցերեկով*». Ի տուէ կամք. Ի տուէ և ի գիշերի «*գիշեր-ցերեկ*»։

Լռելեայն «*անձայն, անխոս*». Լռելեայն կոչեաց:

Կամաւ «*սիրով*». Կամաւ զայն առնեմ:

Կանխաւ «*առաջուց*». Կանխաւ պատմեաց:

Կարի «*շատ*». Կարի զօրաւոր. Կարի քաջ լնուն «*լավ են լցվում*»։

Կրկին

Հազիւ, հազիւ թէ. Հազիւ ոք թէ մնացին: *Ասվում է նաև* Հազիւ ոք ուրեք:

Հանապազ

Հանապազօր

Ի հարեանցի «վեր ի վերոյ»։

Հարկաւ

Հերու «անցյալ տարի». Հերու այսմ ամի սպասէիր:

Հի՞մ

Հուսկ յետոյ, Հուսկ ուրեմն «ամենավերջը»։ Դրվում է նաև ածականի վրա. ինչպես՝ Հուսկ կրտսերն «ամենափոքրը», Հուսկ յետինն «ամենահետինը»։

Ձրի «անվարձ». Ձրի բաշխէ. Ձրի առէք՝ ձրի տուք:

Մեծապէս «շատ». Մեծապէս ուրախ լինէին:

Մերթ. ասվում է կրկնությամբ՝ Մերթ այսր և մերթ անդր:

Մերթ ընդ մերթ

Մի՛

Մի՛ եթէ

Միայն

Միանգամ. ընտիր հայերենում այս բառը գործածվում է հաճախ ավելադրությամբ։ Մինչև անգամ Ավետարանում, Ղուկ. Ը 39, կարդում ենք. Դարձ ի տուն քո և պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած (Անգլիական պաշտոնական հրատարակությունը չունի այս բառը)։

Մի՞թէ

Մինչ «երբ». Մինչ նստէր ի տան:

Մինչդեռ «երբ դեռ». Մինչդեռ ուտէին:

Մինչև «մինչև որ, քանի որ». Մինչև եկեսցէ նա. Մինչև եմ ես (քանի ես կամ)։

Մինչչև «դեռ չ». Մինչչև իցէ հատու խօսեալ. Մինչչև բնաւ էր ինչ:

Միշտ. Միշտ երկնչէիր:

Միւսանգամ

Մտադիր «սիրով». Մտադիր զայն առնեմ:

Մօտ «մոտիկ». Թե՛ շարժում է ցույց տալիս և թե՛ դադարում. օրինակ՝ Մօտ եկ «մոտ արի», Մօտ կայ, ի մօտ կայ «մոտ տեղումն է»։

Յաճախ «շատ անգամ». Յաճախ պահեն:

Յամենայն օր

Յամր «կամաց». Յամր ընթանալ:

Յայլակարծուց

Յայնժամ

Յայնկոյս *«այն կողմ, դեպի այն կողմ, այն կողմում (շարժում և դադարում)»։*

Յայնմ հետէ *«այն ժամանակից հետո»։*

Յայս կոյս *«այս կողմ, դեպի այս կողմ, այս կողմում (շարժում և դադարում)»։*

Յայսմ հետէ *«սրանից հետո»։*

Յայտնապէս *«հայտնի կերպով»*. Յայտնապէս ասաց:

Յանիրաւի *«անիրավ տեղը»*. Յանիրաւի տանիցի վշտաց:

Յանկարծ

Յանկարծակի

Յանկարծայն |

Յանկարծոյն |

Յանկարծօրէն

Յանպատրաստից

Յառաջ. Յառաջն թշնամիք էին. Յառաջ խաղալ *«դեպի առաջ շարժվել»։*

Յառաջագոյն *«առաջուց»*. Յառաջագոյն գիտաց:

Յաւիտեան. Յաւիտեան ոչ մոռացայց. *որ և* յաւիտեանս, ի յաւիտեան, յաւիտեանս յաւիտենից:

Յեղակարծում *«անակնկալ»*. Յեղակարծում ժամու:

Յետոյ. Յետոյ զղջացաւ:

Յետուստ, Յետոյ յետուստ *«ամենից հետո»*. Յորժամ առնէ Աստուած զարարածս, յետուստ արար զմարդն. «Զի գոնեա ապա յետոյ յետուստ բղխելով ծանիցուք զշնորհս». *Բուզ.* Գ 5։

Յերեկորեայ *«երեկոյին»*. Յերեկորեա՞յ թէ ի մէջ գիշերի:

Յերիր աւուր *«երրորդ օրը, վաղը չէ մյուս օրը»*. Յերիր աւուր կատարի:

Յիրավի *«իրավամբ»*. Յիրաւի ասաց. Յիրաւի կրէ պատուհաս. *(Զալխ. 15) շեշտում է* յիրաւի *«իրավամբ» և* արդարև *«իրոք» բառերի տարբերությունը։*

Յորժամ

Յորմէ հետէ *«այն ժամանակից որ»*. Յորմէ հետէ մտեալս եմ *«քանի մտել եմ»։*

Յոյժ *«շատ»*. Զարմացան յոյժ:

Նախ *«առաջ»*. Հա՛րց նախ իմա՛ և ապա խօսեաց:

Նշանացի *«նշաններով»*. Նշանացի խօսել:

Նոյնգունակ

Նոյնժամայն
Նոյնչափ
Նոյնպէս
Նոյնօրին
Նոյնօրինակ
Շատ. *«շատ»*. Ժողովեցին որ շատ եոր սակաւ.
Ոչ, ո՞չ
Ոչ այլ
Ո՞չ ապաքէն
Ոչ ևս
Ոչ ևս այլ
Որգունակ
Ո՞րչափ
Որպէս
Որքան
Ուր ուրեմն *«վերջապէս»*. Ուր ուրեմն եբաց զբերան իւր:
Ուստի՞ *«ո՞րտեղից»*. Ուստի՞ ճանաչես զիս:
Չարաչար *«վատ, սաստիկ»*: Չարաչար խօսել. Չարաչար տանջել:
Չև *«դեռ չ»*. Չև մտեալ:
Չև ևս. *«դեռ չ»*. Չև ևս էր ճասեալ. Չև ևս իցեն ուսեալ:
Սայապէս
Սակաւ *«քիչ»*. Ժողովեցին որ ջատ և որ սակաւ:
Սապէս
Սաստիկ. Սաստիկ տանջէ:
Սոյնգունակ
Սոյնչափ
Սոյնպէս
Սոյնօրինակ
Ստէպ *«շատ անգամ»*. Ստէպ պաճենն:
Վաղ *«շուտ»*. Վաղ կամ անագան:
Վաղու ևս *«շատոնց»*։
Վաղուց. *«շատոնց»*։
Վաղվաղակի *«շուտով»*. Վաղվաղակի ճասանէր:
Վաղիւ *«վաղը»*. Վաղիւ լուիցես. Ի վաղիւն, *կամ* Ի վաղիւ անդր *«երկրորդ օրը»*։
Վաղվաղ *«շուտ»*. Վաղվաղ ընթանալ:
Վայրապար *«ի զուր»*։

Վայր մի *«մի քիչ ժամանակ», որ և՝*

Վայրիկ մի *«նույն նշ.»*. Ա՛նց նիստ վայրիկ մի։

'վասն է՞ր

Վարկպարազի *«հարևանցի»։*

Վեր ի վերոյ *«հարևանցի»։*

Վերուստ *«վերևից»* Վերուստ ի վայր, Ի վերուստ մինչև ի վայր. Ի վերուստ են իջեալ։

Վերստին

Տակաւ *«քիչ-քիչ»*. Սկսանի տակաւ նուազել։

Տակաւին *«դեռ»*. Տակաւին ո՞չ իմանայք։

Տարաժամ

Տարաժամու

Տարապարտ

Տարապարտուց } *«զուր տեղը»։*

Ցայգ, Զցայգ *«գիշերը»*. Զցայգ թաքչի։

Ցայժմ

Ցայսօր

Ցանգ *«միշտ»*. Ցանգ կայիք ընդ իս։

Ցերեկ. Ցերեկ արթուն կամք. Զցայգ և զցերեկ գործէաք։

Ցորքան

Փութանակի *«շտապով»*. Եկին փութանակի։

Փութապէս *«շտապով»։*

Փութով *«շտապով»։*

Քանի՞

Քաւ, Քաւ լիցի *«ոչ բնավ»։*

Օր ըստ օրէ

Օր յօրէ

Օր քան զօր

Օրինակ զայս

9. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ինչպես ուրիշ հին լեզուների, նույնպես և գրաբարի մեջ տեղական մակբայները երեք ձևով են գործածվում, այն է՝ դեպի մի տեղ, այն տեղում և այն տեղից։ Սրանք պիտի համապատասխանեին գոյականների նախդրիվ հայցական (շարժում), ներգոյական (դադարում) և բացառական հոլովներին։ Բայց որովհետև մակ-

բայները հոլով չունեն, ուստի այս ձևերն էլ ո՛չ թե հոլովներով, այլ առանձին բառաձևերով են արտահայտվում։ Օրինակ առնենք ո՞ւր *բառը, որի իմաստը լավ ըմբռնելու համար օգնության կառնենք նաև ռուսերենը։* «Ո՞րտեղ ես, ո՞րտեղ ես բնակվում, где» *հարցման ձևն է* ո՞ւր *(դադարում)*.—«Դէպի ո՞ւր, դէպի ո՞րտեղ, ո՞ր կողմ ես գնում, куда»*հարցման ձևն է* յո՞ *(շարժում) և «ո՞րտեղից,* от куда»*հարցման ձևն է* ուստի՞. *օրինակ՝*

Ո՞ւր էիր այսօր. Ո՞ւր են օթևանք քո:

Յո՞ երթաս *կամ* Յո՞վ երթաս «Ո՞ւր ես գնում», Յո՞ փախեաց *«Ո՞ւր փախչեմ»։*

Ուստի՞ գաս *«Ո՞ր տեղից ես գալիս»։*

Ինչպես գոյականների, նույնպես և մակբայների համար լեզուների մեջ վաղուց ի վեր ձգտում կա շարժումն ու դադարումը միացնելու և երկուսի համար միևնույն բառը գործածելու։ Այսպես, եթե լատիներենը զանազանում է

ubi es ? *ո՞րտեղ ես,*

quo vadis ? *ո՞ւր ես գնում,*

ֆրանսերենը համասարապես ասում է՝

où es-tu ? *ո՞րտեղ ես,*

où vas-tu ? *ո՞ւր ես գնում։*

Նմանապես Երևանի բարբառում, եթե շատերը դեռ զանազանում են՝

ո՞ւր ես գնում (շարժում),

ո՞րտեղ ես ապրում (դադարում),

ուրիշներն անխտիր ասում են՝

ո՞րտեղ ես գնում, ո՞րտեղ ես ապրում.

ինչպես որ շատերն ասում են՝

ո՞ւր ես գնում—տուն եմ գնում.

եղբայրդ ո՞րտեղ է—տունն է (փոխանակ ասելու տանն է):

Ռուսերենը պահել է ինչպես в Москве *Մոսկվայում (դադարում) և* в Москву *դեպի Մոսկվա (շարժում), նմանապես* где *ո՞րտեղ (դադարում) և* куда *ո՞ւր (շարժում) ձևերը։ Բայց բարբառներում հաճախ կարելի է լսել* где идёш *«ո՞րտեղ ես գնում», փոխանակ ասելու* куда идёшь *(ո՞ւր ես գնում)։*

Արևմտահայերենը բոլորովին վերացրել է դադարման և շարժման տարբերությունը և երկուսի համար էլ գործածում է ո՞ւր, *ինչպես ֆրանսերենը* oùş *(Թուրքերենը պահում է շատ հստակ կերպով*

nereye ? *դէպի ո՞ւր և* nerede ? *ո՞ր տեղում)։*

Գրաբարն էլ թեև հարցականի մեջ ո՞ւր *և* յո՞ *զանազանում է, բայց առանց հարցման գործածելու ժամանակ երկուսը միանում են և գրվում է* ուր. *ինչպես.*

Ուր սէր իցէ՝ չիք նախանձ (где)
Հողմ ուր կամի՝ շնչէ (куда)
Ուր ինքն երթալոց էր (куда)

Ստորև տալիս ենք մի խումբ տեղական մակբայների դադարման, շարժման և բացառականի ձևերը.

1	2	3
Շարժում	Դադարում	Բացառական
ուրեք	ուրեք	ուստեք
ուրեմն	ուրեմն	ուստեմն
այլուր	այլուր	այլուստ
ի ներքս	ի ներքս	ի ներքուստ
արտաքս	արտաքոյ	արտաքուստ
ի վեր	ի վեր, ի վերոյ	ի վերուստ
ի ներքոյ	ի ներքոյ *«ցածրը»*	ի ներքուստ
յառաջ		յառաջուստ
յետս		յետուստ
ի բաց		ի բացուստ

Առանձին կարևորություն ունեն՝

1	2	3
այսր, այսրէն	աստ, աստէն	աստի, աստուստ, աստստին
այդր, այդրէն	այդր, այդրէն	այտի,
անդր, անդրէն	անդ, անդրէն	անտի, անդուստ, անդստին
Ա դէմք	*Բ դէմք*	*Գ դէմք*

Ահա օրինակներ այս բոլորի մասին.

2. Վկայեաց ոք ուրեք:
2. Ասէ ուրեք:
2. Յորժամ ուրեք յամիցէ:
1. Ոչ ուրեք առաքեցայ:
1. Մի՛ ուրեք հեռի երթայցէք:
3. Մի՞թէ կասկած ինչ ուստեք էր:
3. Ոչ ուստեք է իշխանութիւն:
3. Այլուստ լինի օգնականութիւն
2. Ի ներքս զոք ոչ գտեք:

1. Եմուտ ի ներքս, մինչև ի ներքս:
3. Ի ներքուստ տայ պատասխանի:
2. Արտաքոյ ի փողոցի անդ:
1. Դիմեաց արտաքս:
2. Համբաւն ի դուրս յաճախէր:
1. Ել ի դուրս. Ի դուրս կորզեցից:
3. Արտաքուստ մտեալ:
2. Յերկինս ի վեր:
1. Ի վեր մատիր «Վերև համեցէք»:
3. Ի վերուստ են իջեալ:
3. Ի ներքուստ *«ցածրից»* մինչև ի վեր:
1. Յառաջ խաղալ:
3. Յետուստ և յառաջուստ:
1. Յետս դառնալ:
2. Պսակեցան ամենայն շինուածքն վիմօք ի ներքոյ և ի վերոյ. *Մծբ. Ա։*
2. Աստ մնացէք:
1. Ածէք այսր:
1. Էջ և ել այսրէն:
3. Երթիցուք աստի:
2. Ոչ ելանեմ, այլ աստէն մեռանիմ:
1. Նստարուք դուք այդր:
1. Եկեսցուք այդր:
3. Ել այտի:
1. Այդրէն առ ձեզ:
2. Մնասցէ այդրէն:
2. Անդ կեաց և անդէն թագաւորեսցի:
1. Եհաս անդր:
1. Այսր անդր դեգևել:
1. Դարձաւ անդրէն:
1. Դարձիր անդրէն և ննջեա:
3. Գնացին անտի:

Ծանոթ. 1.— *Ինչպես տեսնվում է,* աստ, այդր, անդ *և այլն շարքերը կազմված են* ս, դ, ն *դիմորոշ հոդերի օգնությամբ և քերականության մեջ զանազանվում են Ա դեմք, Բ դեմք, Գ դեմք, անուններով։*

Ամեն մի դեմքի վրա կա 5 ձև, այն է 2 շարժում, 2 դադարում, 3 բացառական։

Կանոնավոր և լրիվ են այսր, այդր, անդր, այսրէն, այդրէն, անդրէն,— աստի, այտի, անտի *շարքերը, մյուսները թերի են կամ իրարից են փոխ առնված։*

Ինչպես ուր, ուրեք, ուրեմն, այլուր, ի ներքս *և այլ մակբայների մեջ տեսանք, այստեղ էլ կա շարժման և դադարման ձևերի շփոթություն (Բ դեմքի մեջ)։*

Ծանոթ. 2.— *Հինգ ձևերից երեքը կազմված են* -էն *կամ* -ին *մասնիկով. այսպես՝*

այսրէն, այդրէն, անդրէն
աստէն, այդրէն, անդէն
աստստին, անդստին

Ըստ Ջախ. 157 այս -էն, -ին *մասնիկը նույն է* սոյն, դոյն, նոյն, սորին, սմին, սոքին, սոցին *դերանունների ծայրին երևցած* -ին *մասնիկի հետ (բոլորն էլ առաջացած են* սա, դա, նա *դերանուններից և նրանց հոլովական ձևերից)։ Այս մասնիկը ցույց է տալիս նույնություն, այնպես որ* այսրէն, անդրէն *նշանակում են դարձյալ* այսր, անդր, *այսինքն «դարձյալ այստեղ, դարձյալ այնտեղ», նույնպես և* աստէն, անդէն *«դարձյալ այստեղ, դարձյալ այնտեղ»,* աստստին, անդստին *նշանակում են «նույն այստեղից, նույն այնտեղից» և այլն։ Այնպես որ սովորություն դարձավ մինչև անգամ* այսրէն, այդրէն, անդրէն *մակբայները գործածել «նորից, դարձյալ, հետո» նշանակությամբ։*

Ծանոթ. 3.— *Վերոհիշյալ մակբայներից մի քանիսը տեղ ցույց տվող գոյականների ներգոյական, նախդրիվ հայցական և բացառական հոլովների հետ գործածվում են* այս, այդ, այն *ցուցականների փոխարեն։ Այսպես՝*

Աստ, անդ՝ *ներգոյականի հետ. օրինակ՝*
Ի քաղաքի աստ=Ի քաղաքիս յայսմիկ:
Ի քաղաքի անդ=Ի քաղաքին յայնմիկ:
Այսր, այդր, անդր՝ *նախդրիվ հայցականի հետ. օրինակ՝*
Ի քաղաք այսր=Ի քաղաքս յայս:
Ի քաղաք այդր=Ի քաղաքդ յայդ:
Ի քաղաք անդր=Ի քաղաքն յայն:
Աստի, այդի, անտի՝ *բացառականի հետ. օրինակ՝*
Ի քաղաքէ աստի=Ի քաղաքէս յայսմանէ:
Ի քաղաքէ այտի=Ի քաղաքէդ յայդմանէ:
Ի քաղաքէ անտի=Ի քաղաքէն յայնմանէ:

Սրանց գործածության այսպիսի ձևը համարվում է գրաբարի գեղեցիկ ղարդերից մեկը։

Ահա վկայություններ.

Յանապատի անդ. *Ղուկ. Գ 2։*
Նա ելանէ ի ջուր անդր. *Ելք. Ը 20։*
Եւ այսդ պիղծ ի մարդոյ այտի. *Մարկ. Ե 8։*
Երկեան ի ժողովրդենէ անտի. *Մարկ. ԺԲ 12։*
Ի տօնի աստ. *Մարկ. ԺԴ 2։*
՚Վկայեալ յօրինաց անտի և ի մարգարէից. *Հռովմ. Գ 21։*
Ի մի ի գբոց աստի. *Ծննդ. ԼԷ 20։*

Ծանօթ.— *Մակբայների և որոշիչ հոդի նույնությունը երևում է հատկապես հաջորդ օրինակներից.*

Աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ անտի և մի յազատէն. *Գաղ. Դ 22։*

Յորո՞ց օրինաց, ի գործո՞ց անտի. ոչ, այլ ի հաւատոցն օրինաց. *Հռովմ. Գ 27։*

Մինն ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր և միւսն յաոժամայն յերկուանալոյ անտի. *Եղն.։*

Անդստին յորովայնէ. *Ղուկ. Ա 15։*
Աստէն ի սմին երկրիս. *Ելք Ը 25։*

Ծանօթ. 4.— *Տեղական մակբայներից* ուրեք, ուրեմն և ուստեք, ուստեմն *կարող են միանալ մի ածականի և կամ մի ուրիշ մակբայի հետ և կազմել այսպիսի բաղադրություններ.*

Անդր ուրեմն մօտ հասին:
Անդ ուրեմն *«այնտեղ մի տեղում»։*
Ամենայն ուրեք *«ամեն տեղ»։*
Այլ ուրեք *«մի ուրիշ տեղ»։*
Ի մօտ ուրեք *«մոտ մի տեղ»։*
Հեռի ուրեք երթալ *«հեռու մի տեղ երթալ»։*
—Հեռագոյն ևս ուրեք երթալ *«է՛լ ավելի հեռու մի տեղ երթալ»։*
Յո՞ ուրեք *«դեպի ո՞ւր» (շարժում)։*
Ո՞ւր ուրեք *«ո՞րտեղում» (դադարում)։*
Ո՞ւստ ուստեք *«ո՞ր տեղից»։*
Այլ ուստեք, Այլուստ ուստեք կամ Յայլուստ ուստեք *«մի ուրիշ տեղից»։*

Անտի ուստէք *«այն տեղից, որևէ տեղից»:*
Բազում և այլ ուստէք *«շատ ուրիշ տեղերից էլ»:*

Երբեմն էլ այս ուրեմն *և* ուստեմն *մակբայները իբր զարդ ավելացվում են տեղ կամ ժամանակ ցույց տվող բառերից հետո. ինչպես՝*

Վաղ ուրեմն *«առաջները»:*
Անագան ուրեմն *«ուշ ժամանակ»:*
Երբեմն ուրեմն *«մի ժամանակ»:*
Ի Հռոմայ ուստեմն *«Հռոմի կողմերից»:*

(Ջախ. 162)

Ծանոթ. 5.— *Տեսանք, որ մակբայների մի մասը կազմված է* ս ,դ, ն *դիմորոշ հոդերով և ըստ այսմ պատկանում է Ա, Բ կամ Գ դեմքին: Զգուշալի է դեմքերը շփոթել և մի դեմքը մի ուրիշ դեմքի հետ գործածել: Օրինակ, կարելի չէ ասել՝* Տաց քեզ այսրէն կամ անդրէն, *որովհետև* այսրէն *լինելով Ա դեմք,* անդրէն *Գ դեմք, չեն համարվում* քեզ *դերանվան, որ Բ դեմք է. պետք է ասել ուրեմն* այդրէն, *որ նույնպես Բ դեմք է:*

Նմանապես չի կարելի ասել՝

Դարձուցից այսրէն առ նոսա, *այլ՝* անդրէն, Աւադիկ նոքա հեռի կան այտի, *այլ՝* աւանիկ. Զի՞ կայք անդ, *այլ՝* այդր, Աւասիկ սուտ խօսեցար, *այլ՝* աւադիկ:

Այսպիսի սխալները հաճախ աշխարհաբարի մտածողության պատճառով են, ուր չկան միշտ երեք դեմքերի պահանջած ձևերը, այլ միայն մի. այսպես, օրինակ, աշխարհաբարը գիտե միայն ահաւասիկ *և չգիտե* ահաւադիկ, ահաւանիկ *(թեև բարբառները գիտեն* հրէսիկ, հրէդիկ, հրէնիկ): *Աշխարհաբարը գիտե միայն* նոյն, *առ առավելն նաև* սոյն, *բայց չգիտե* դոյն. *բարբառը չգիտե սրանցից ո՛չ մեկը, բայց կարող է ասել* հէնց էս, հէնց էդ, հէնց էն: *Այսպես են նաև նոր եվրոպական լեզուները, որոնք ընդհանրապես չունեն երեք դեմքի ցուցական, այլ երկու:*

Տեղական մակբայների կապը դերանունների հետ բավական պարզ է. օրինակ՝

Զի ճշմարիտ է բանս յայտ անտի է զի. *Եզն. Բ 3:*
էր ոմն ի վեր քան զնա զօրագոյն... ուստի ի նա փառքն հասին. *Եզն. Բ 3:*

Առաջին օրինակում անտի *«այն տեղից» իմաստով նույնն է* այն

դերանվան բացառականի հետ, երկրորդ օրինակի մեջ ուստի «որտեղից» նույն է որ դերանվան բացառականի հետ։

Տեղական մակբայների ծագումը առհասարակ մութ է. նրանց կազմիչ հիմնական տարրերն են՝

1. դ կամ տ մասնիկը. բուն ձևը հայտնի չէ. աստ բառի մեջ տ կարող է դրված լինել ս-ի պատճառով, իսկ անդ բառի մեջ դ կարող է դրված լինել ն-ի պատճառով։ Meillet, MSL 10, 259 կարծում է, թե այս երկուսի նախաձևն է հնխ. t, որովհետև հնխ. t ն̣-ից հետո տալիս է դ. իսկ հնխ. dh չի կարող տալ տ, միևնույն ժամանակ հյ. դ չի կարող առաջանալ հնխ. d-ից։

Ըստ իս այտի կազմված լինելով այդ-տի ձևից, ենթադրել է տալիս, որ բուն մասնիկն է տի, որ գտնում ենք նաև անտի «այն տեղից» բառի մեջ։ Իսկ ինչո՞ւ այստեղ էլ ն ռնգականը չի ազդել տ-ի վրա և չի դարձրել դ, ինչպես այլուր։ Պատճառն այն է, որ ինչպես այտի ծագում է այդ-տի ձևից, նմանապես անտի ծագում է անդ-տի ձևից, ուրիշ խոսքով այստեղ տ գումարն է դտ-ի։

Այսպիսով նախաձևը դառնալով տի, անփոփոխ դրված կգտնենք ուստի, աստի բառերի մեջ։ Հետևաբար տի վերջավորությունը ծագած է հնխ. *di ձևից, որ գտնում ենք նաև հիռլ. ɛnd «անդ» և լտ. inde, unde «այնտեղից» բառերի մեջ։

Անհայտ է մնում միայն տի վերջավորության ի ձայնավորը։

2. ր մասնիկը, որից կազմված են այուր, անդր, ինչպես և ուր. վերջինս ցեղակից լինելով լիթ. kur համանիշի հետ, հայտնում է ր մասնիկի ծագումը։

Գալով աստէն, անդէն, այուրէն, այդրէն, անդրէն բառերին, բոլորն էլ կազմված են -էն վերջավորությամբ, որ ծագում է ե -ին նախաձևից. առաջինը (ե) գտնում ենք նաև երբէֆ, ուրէֆ, ուստէֆ, երբեմն, ուրեմն, ուստեմն բառերի մեջ, իսկ երկրորդը՝ (ին վերջավորությունը) գտնում ենք նոյն, նմին, նորին և այլ բառերի ծայրին։

Բարբառներից Համշենը ներկայացնում է գեղեցիկ օրինակներ տեղական մակբայների ձևափոխության. այսպես՝

Նէ՞օր «ո՞ւր». ցույց է տալիս շարժում. օրինակ՝ նէ՞օր գէշտաս «ո՞ւր ես գնում». վօ՞յդէխ, վօ՞յդըխ «ո՞ւր, ո՞րտեղ». ցույց է տալիս դադարում. վո՞ւստի կամ վո՞ւյդեղէն Տր. վօ՞յդըխըն «ո՞րտեղից».— հին ժամանակ գործածվել է նաև նիւրըն «ո՞րտեղից»։

Նէ՞ օր կամ նի՞ ւր (Մալա) «ո՞ւր, դեպի ո՞ւր»։ Բառի ծագումը պետք է բացատրել հետևյալ ձևով։— Ո՞ւր դարձել է նախ էօր կամ

իւr, *շարժում ցույց տալու համար բարբառս գործածում է* ն *նախդիրը. այսպես ունենք* նոս *«յայսկոյս, դեպի այս կողմ»,* նոդ *«յայդկոյս, դեպի այդ կողմ»,* նըն *«յայնկոյս, դեպի այն կողմ»։ Ըստ այսմ էլ ավելանալով* ն *նախդիրը* էօr, իւr *բառի վրա, ստացվել է* նէօr *կամ* նիւr:— *Համշենի բարբառը շատ լավ է վանազանում շարժում ցույց տալու գաղափարը դադարում ցույց տալու գաղափարից։ Ուստի այս բառի հետ կա նաև* վօ՞յդէխ, վօ՞յդըխ *(դադարում ցույց տալու համար)։— Բառիս հնագույն ձևը* (նօւr) *դեռ գործածական է, բայց հազվագյուտ. միջին սերունդը ասում է* նէ՞օr, նի՞ւr, *նոր սերունդը՝* նի՞r, նէ՞r.— *որոշ բաղաձայնների մոտ դառնում է* նիյ, նէյ, նօւյ, նէօյ, նիւյ:

Ունենք դարձյալ նէ՞րինտօւս *«դեպի ո՞ւր». օրինակ՝* նէ՞րինտօւս գէշտաս *«դեպի ո՞ւր ես գնում»։— (Ըստ այսմ պատահական է թրք.* nere ? *«ո՞ւր» հոմանիշի գործածությունը)։*

Շարժում ցույց տալու համար ունենք դարձյալ այստեղ՝ տստօւս, տտտօւս, ընտօւս, *որ և* իստօւս, իտտօւս, ինտօւս *«այստեղ, այդտեղ, այնտեղ» (Կյուլեսերյան, Բիւրակն, 1899, 511* իստօւս *մեկնում է գրբ.* աստուստ *ձևից)։*

Դադարում ցույց տալու համար էլ ունենք տստին, տտտին, ընդին, *որ Տր.* էստին, էտտին, էնտին, *բցռ.* էստիէն, էտտիէն, էնտիէն:

Սրանց դեմ կան նաև՝ տստէղ, տտտէղ, ընդէղ, *որոնք գործածվում են թե՛ դադարման իմաստով և թե՛ շարժման։ Այժմ ավելի շատ գործածական են այս վերջի երեք ձևերը՝ փոխանակ նախորդ երկուսի։ Այսպիսով մենք ունենք մի կենդանի օրինակ՝ գեղեցիկ կերպով ցույց տալու համար, թե ի՛նչպես լեզուներից վերանում է դադարման և շարժման տարբերությունը։*

Ընդհանուր գործածություն ունեն նաև Համշենի բարբառում՝

նօզ, նօդ, նօւն *կամ*
նօզա, նօդա, նօւնա *կամ*
նօզտստէղ, նօդ տտտէղ, նօւնընդէղ,

որոնք բոլորը նշանակում են «այստեղ, այդտեղ, այնտեղ». օրինակ՝ նօւն է, նօւն կնաց, նօւնընդէղ գրագ լուանի գու *«այնտեղ կրակ է վառվում»,* նօւնընդէղ նէդվիմ ինի *«այնտեղ պիտի ցատկեմ»։*

Սրանցից դուրս կան նաև 5 ուրիշ ձևեր, որոնք են՝

նօզաստօւս, նօզընտօւս, նօդտատօւս, նօդինտօւս, նօնընտօւս:

Սրանց մեջ ո, ը ձայնավորները կարելի է դարձնել նաև ի, որով կունենանք 5 նոր ձև, այն է՝

ճօզիստուս, ճօզինտուս, ճօդիտտուս, ճօդինտուս, ճուճինտուս:

Սրանք նշանակում են «դեպի այստեղ, դեպի այդտեղ, դեպի այնտեղ, կամ նաև այստեղով, այդտեղով, այնտեղով»։

10. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Զանազան լեզուներ հաստատական (այո՛, մակբայի փոխարեն սովորություն ունեն հարցական նախադասությունը կրկնել, բայց ամբողջը կրկնել դժվար է, ուստի կրկնում են կարևորագույն բառը. և որովհետև կարևորագույն բառը հաճախ բայն է, ուստի կրկնում են բայը և կամ բայի օժանդակը (մասնիկը). այսպես են հունգարերենը, չինարենը, աննամերենը և այլն (Dirr, Gr. ann. ***34****). օրինակ՝*

աննամ. an^y ko yüa k'y
Դուք ունենալ ձի ? } *(Ձի ունե՞ք)։*

պատասխ. ko, toi ko.
Ունենալ, ես ունենալ. } *(Այո, ունեմ)։*

Պորտուգալերենում փոխանակ **այո՛, ո՛չ** *ասելու, բայը կրկնում են. օրինակ՝*

Tem algem dinheiro ?
Ունե՞ք (ինչ-որ) փող։

պատասխ. Tenho.
Ունեմ։

Quer algum dinheiro ?
Ուզո՞ւմ էք (ինչ-որ) փող։

պատասխ. Não quere.
Չեմ ուզում։ (Anstett, 52)։

Հայերենում հաստատականն է **այո**, *ժխտականը՝* **ոչ**:

Սուչավայի և Հունգարիայի հայերի մեջ **պի, կի** *նույն ձևով. «այո՛»։*

Կովկասում ոմանք քաղաքավարական ձևով ասում են «այո՛»։

Այո՛, ո՛չ ասելու տեղ մի ուրիշ հարցականով են պատասխանում.

Գնացե՞լ ես.— Բա չե՞մ գնացել (այո՛)։
Ինչպե՞ս չէ։
Գնացե՞լ ես։— Ո՞վ է գնացել որ (ո՛չ)։
Ինչո՞ւ պիտի գնայի որ։
Հե՞շտ է գնալը որ։
Ինչպե՞ս չէ։

«Այո» առաջանում է «այսպէս» բառից. օրինակ՝ si «այո», լտ. si, sic «այսպես» բառից.— ռուս. да «այո՛» <հսլ. da «այսպես», այսօր հաճախ ռուս. так «այսպես» գործածվում է «այո՛, այսպես է» իմաստով։

Բացասական հարցականի պատասխան «այո՛»-ն տարբեր ձև ունի եվրոպական լեզուներում։ «Չեք գնացել» խոսքի պատասխանը եթե տանք «այո՛», հավասար է «ո՛չ»-ի։ Հակառակ դեպքում գործածվում է ֆրանս. si, գերմ. doch, ռուս. а как же, պրս. چیرا čīrā, հայերենի մեջ էլ կազմված ունենք ժողովրդական չումար «ինչո՞ւ համար» և գրականում էլ ինչո՞ւ, որ այս դեպքում նշանակում է «այո՛»։

— Չես գնացե՞լ։
— Ինչո՞ւ (=այո՛, գնացել եմ)։

Հավանությունը («այո») կարելի է զանազան դարձվածներով արտահայտել, փոխանակ մի բառով ասելու «այո՛»։ Օրինակ՝

1. — Գնա պառկիր։
— Հապա ի՞նչ պիտի անեմ (որ)։

2. — Կ'երթա՞ս։
— Ինչո՞ւ չէ։

3. — Գնա այն գիրքը բեր։
— Ես էլ այդպէս պիտի անէի։

Սրա հակառակ, «ոչ» ասելու փոխարեն, կարելի է ասել.

1. — Այսքանը կբաւէ։
Ոտներ կ'անէ։

2. — Գնա բեր։
— Ինչո՞ւ պիտի բերեմ որ։

Ֆրանսերեն «այո» ասվում է mais oui! այն դեպքում, երբ հարցումը համապատասխան է. հայերենում այսպիսի ձև չունենք

և կարող ենք ասել միայն «ինչպե՞ս չէ»։ Ջուտ Ֆրանսերենի թարգմանություն է Բոլ դը Գոգ, Կին, խաղ, գինի (Պլ. 1880), էջ 125.— Ո՞, բայց այո՛ պարոն։

Այո և ոչ մակբայները այնչափ մեծ արժեք են ստացել Ավստրալիայի ժողովուրդների մեջ, որ նրանցով են որոշել ցեղերը. օրինակ՝

	Kamilaroi	ցեղը	կոչվել	է kamil	«ոչ»	բառից
	Wolaroi	»	»	» wol	»	»
	Weilwun	»	»	» wail	»	»
	Wirajere	»	»	» wira	»	»
իսկ	Pikumbul	»	»	» pika	«այո»	»

(Ridley, *14)*

Վրացերենում կա 3 տեսակ «ոչ».

ნუ «մի՛», որ գործ է ածվում արգելականի հետ.
არ, არა, բացասական չ, բացասում է մի իրողություն.
ვერ, ვერა, ցույց է տալիս անկարելիությունը։

(Vogt, *92)*

և 3 տեսակ «այո՛».

diaˇ (դիաղ) այո՛ (հարգական անձանց մոտ).
კი, ჰო՛ (արևմտյան բարբառով).
ჰო, ჰა՛ (արևելյան բարբառով)։

(Vogt, *98)*

ხო, ხომ կա և վրացերենում. օրինակ՝
էս կացի խոմ քարթվելիա.
Այս մարդը ևս վրացի է։

Այսպիսի խոսքերը այնպիսի հարցականներ են, որոնց պատասխանը գիտենք որ այո՛ է։

(Vogt, *98)*

Մենք այնպես ենք վարժված և մեզ համար այնքան սովորական են այս բառերը (այո՛ և ո՛չ), որ կարծում ենք, թե միշտ էլ եղել են։ Հնդեվրոպական նախալեզուն չուներ այդ բառերը. ռոմանական լեզուները իրար համապատասխան չեն այս բառերի համար, նույնպես և սլավական լեզուները իրար մեջ։ Ուշ ժամանակի երևույթներ են սրանք. առաջ հնարվել է «ոչ» բառը, որին հետևել է նաև «այո» (Meillet, BSL, № 67, էջ 195)։

11. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ
(Աւասիկ, աւադիկ, աւանիկ)

Այս բառերը ներկայացնում են ահա բառի երեք տարբեր հեռավորությունները և կապված են երեք դեմքերի հետ։

Ահաւասիկ *կապված է առաջին դեմքի հետ. օրինակ՝*

Համբոյր իմ դու ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ. *Ղուկ. Է 45։*

Ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի. *Մատթ. Գ 10։*

Ահաւադիկ *կապված է երկրորդ դեմքի հետ. օրինակ՝*

Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք... այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ. *Կողոս. Ա 21։*

Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո. թող հանից զշիւղ յականէ քումմէ. և ահաւադիկ ի քում ական գերան կայ. *Մատթ. Է 4։*

Ահաւանիկ *կապված է երրորդ դեմքի հետ. օրինակ՝*

Ո՞չ աւանիկ կայ Ահարոն եղբայր քո Ղեւտացի. *Ելք Դ 14։*

Ահաւանիկ որ ի հանդերձս երևելիս և ի փափկութեան են, յարքունիս են. *Ղուկ. Է 25։*

Երեք դեմքերի խառնուրդով ունենք՝

ԶՅիսուս խնդրէք *(դուք)* զնազովրեցի զխաչելեալն *(նա)*, յարեաւ, չէ աստ *(առաջին դեմք)*. ահաւադիկ տեղին *(Գ դեմք)* ուր եդին զնա. *Մարկ. ԺԶ 6։*

Աշխարհաբարում երեք դեմքերից Բ և Գ ջնջվեցին և մնաց միայն ահաւասիկ *և կամ պարզապես* ահա *բոլոր երեք դեմքերի համար. օրինակ՝*

Ահա ես, ահա դու, ահա նա:

Ահաւասիկ ես, ահաւասիկ դու, ահաւասիկ նա:

Դեմքերի պակասը գտնում ենք նաև ֆրանսերենի և ռուսերենի մեջ, ուր ունենք միայն voici, voilà — вот, вон.

Այլ

Այլ, *աշխարհաբար «այլ ևս, է՛լ». օրինակ՝*

Նա ըստ այն մի գիշեր այլ ոչ եմուտ առ կինն իւր. *Բուզ.* Գ 5. *(այս օրինակում հայտնի երևում է, որ* այլ *«ուրիշ» բառն է)։*

Այսու

Այսու *(որ գրաբար այս բառի գործիականն է) գործ է ածվում*

իբր մակրայ «սրանով, այս ձանուցմամբ, այս հայտարարությամբ, այս ծրարի մեջ» նշանակությամբ. օրինակ՝

Այսու յայտարարում ենք յարգոյ հասարակութեան, թէ...

Այսու ուղարկում եմ ձեզ այն գրութեան պատճէնը, որ...

Իսկ այսու հանդերձ, *որ իսկապես նշանակում է «սրա հետ, սրանով միասին», գործ է ածվում «սակայն, բայց սակայն» իմաստով. օրինակ՝*

Թէև հանիցս անգամ յայտարարել ենք, որ անցորդները պէտք է մայթով գնան, աջից ու ձախից, այսու հանդերձ ոմանք...

Այսպէս, այդպէս, այնպէս, ինչպէս

Այս բառերը գործ են ածվում իբր մակբայ. իսկ այսպիսի, այդպիսի, այնպիսի, ինչպիսի՝ *իբր ածական. օրինակ՝* Այդպէ՞ս կ'ասեն. Ի՞նչպէս կ'ուզէք. Այնպէ՞ս կըխփեմ. Այդպիսի մարդ. *կարելի չէ ասել* այդպիսի՞ կը խփեմ. *Հասարակ ժողովուրդը մի ձև միայն գիտե, որ է երկու դեպքում էլ* այսպէս, այդպէս, այնպէս:

Հնից անսովոր ձևեր. Այնպիսի զգաստացաւ և եղև այնպիսի ողորմած. *Վրք. Հրց. Ա 272։*

Այստեղ

Գրվում է իբր մի՛ բառ և կարելի է բաժանել միայն որոշ դեպքերում։ Ուստի սխալ է՝

Հրամայել էր քեզ հետ այս տեղ արշաւելու *(Հոմերի Իլիակ., Թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 113)։*

Առմիշտ կը հեռանամ այս տեղից *(111)։*

Անգամ

«Միանգամ, մի անգամ». մեկից ավելի անգամ «շատ անգամ» իմաստով ասում են՝ տասն անգամ, հարյուր անգամ, հազար անգամ. ֆրանսաբանություն է։

Քսան անգամ այս նուիրական բառերը—կը սիրեմ քեզ—Վէրտըլօնի շրթերէն պիտի թռէր, քսան անգամ՝ երբ սիրասուն օրիորդը կը հայտնէր իր հեռացումն... *(Անիծեալն, Թրգմ. Մամուրյան, Զմ. 1875, Ա, 161)։*

Ապա

Գործ է ածվում «հետո, այնուհետև» իմաստով. ինչպես՝

Ձմիջնաշխարհն հանդեպ բրեալ զօրն Պարսից՝ ապականէին. ապա զօրաժողով լինէր Վասակ. *Բուզ. Դ 23։*

Ապաքէն

«Արդարև» իմաստով. կազմված է ապաք արմատից՝ էն մասնիկով.

Որոց մտանելն՝ ապաքէն գնալով լինիցի, և ոչ առանց գնացից. *Եզն.։*

Հաճախ է գործածվում ոչ ապաքէն ձևով՝ «չէ՞ որ» իմաստով։

Աստ

Վերը ցուցականների մասին խոսելիս տեսանք, թե լեզուները ի՛նչքան զանազանություն են հասցրել նրանց թվումը սկսած երկուսից (նույնիսկ միմիայն մեկից) մինչև տասնյակներ։

Ցուցականների հետ կապված է նաև տեղական մակբայների թվումը։ Արդի եվրոպական լեզուները ընդհանրապես ունենալով երկու աստիճանի ցուցական, ունեն նաև երկու աստիճանի տեղական մակբայ. այսպես՝

Ֆրանս. ici այստեղ *և* là այնտեղ.

Անգլ. here այստեղ *և* there այնտեղ. *և այլն։*

Աստ, անդ և այլն

(Վկայություններ)

Զոր արարեր ի Կափառնաում, արա և աստ ի քում գաւառի. *Ղուկ. Դ 23։*

Մատո այսր զորդին քո. *Ղուկ. Թ 41։*

Ասացիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր. *Մատթ. ԺԷ 19։*

Եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան. *Ղուկ. Թ 27։*

Յոյս մի ունիմք զանմանն նուաստոց ձերոց այդրէն ի ձեզ մեծանալոյ. *Բ Կորնթ. Ժ 15։*

Ել այտի. *Գ Թագ. Բ 30։*

Եւ ասէ Յովաբ. չելանեմ, քանզի աստէն մեռանիմ. *Գ Թագ. Բ 30։*

Երկեաւ երթալ անդր. *Մատթ. Բ 22։*

Դարձաւ անդրէն. *Ղուկ. Է 37։*

Հիպերբորյան չուքչի լեզուն ունենալով 9 ցուցական, նրանց համեմատ էլ բազմացրել է իր տեղական մակբայները և հասցրել վեցի. այսպես՝

1. Այստեղ, 2. այդտեղ, 3. այնտեղ (այն ինչ առարկայի կիսաճամբին), 4. խոսակից անձի կողքը, 5. խոսող անձի հետևը, 6. խոսող անձից հեռու։ (Bogoras, 727)

Գրաբարը, ինչպես և բարբառներն ու աշխարհաբարը ունեն 3 աստիճան՝ համաձայն այս, այդ, այն ցուցականներին. այն է՝

աստ, այդր, անդ

ասս, ասդ, ասն

(Ավելին տե՛ս տեղական մակբայների հոլովումը)։

Արդ

Գործ է ածվում «այժմ» իմաստով. օրինակ՝

Իսկ արդ իմ արդ ես վախճանեցայ. *Մատթ. Թ 18։*

Արդեօք

Հնագույն ձևն է արդեւք, հետո եղավ արդեաւք, որ է արդեօք (արդյոք)։ Դրական ձևով նշանակում է «իրոք, անշուշտ, իհարկե». օրինակ՝

Եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք և ինձ *(Յովհ. Ե 46)։*

Եթէ Աստուած էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս *(Յովհ. Ը 42)։*

Ոչէի արդեօք արժանի համբուրել զարդեակս իմ. *Ծննդ. ԼԱ 28։*

Հետնաբար գործածված է նաև «այժմ, առ այժմ» իմաստով. ինչպես՝

Գնա արդեօք ռողջեա դու, և ի գիշերի ողջեմ և ես. *Վրք. հրց. Դ։*

Գնա արդեօք և ընդ այգն եկեսցես փութով. *Վրք հրց. Գ։*

Հարցական նախադասության մեջ ցույց է տալիս, որ հարցնողը չգիտե և տարակույս ունենալով՝ ճշմարիտը իմանալ է ուզում։ Սրա հակառակն է միթէ, որ ցույց է տալիս, թե հարցնողը գիտե և հայտնի ու անտարակուսելի մի բան է հարցնում (Չալխ. 150). օրինակ՝

Զարթեա՞ւ արդեւք. Արդեւք իմացա՞ւ. Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ. Իսկ արդ որ ննջեցինն ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք:

Աւելի շուտ

Ռուս. скорее = *Ֆրանս.* plus tôt *մակբայը թարգմանաբար մտել է արևելյան հայերենում և ասվում է* աւելի շուտ. *օրինակ՝*

Վաղարշապատը այնքան է մեծացել, որ աւելի շուտ քաղաք կարելի է կոչել, քան թէ գիւղ:

Բայց այս ձևը երբեմն անպատեհ հակադրություն է կազմում,

հատկապես, երբ ժամանակի մասին է խոսվում. ինչպես՝ Կէս ժամից կը գամ, աւելի շուտ մէկ ժամից (այստեղ կես ժամը և ավելի շուտ մեկ ժամը հակասում են իրար)։ Արևմտահայերը չունեն այս ձևը, ասելով, թե ուշի-շուտի հարց չկա և գործ են ածում ճիշտ ձևը։

Գունակ

Ծագում է ո՛չ թե գոյն բառից, այլ պհլ. gonak, gūnak (=պրս. گونه gūna) «ձև, կերպ, տեսակ» բառից։ Իբրև նախադրություն տե՛ս վերը. իբրև մակբայ ունենք գունակ «պես, նման». օրինակ՝

Ճանատակելով գունակ ի խաղս գնդակաց. Արծր. Գ 17։

Գունակ գունակ «պեսպես ձևերով». օրինակ՝

Ջաչսն գունակ գունակ յեղուցուն. Ոսկ. Ա Տիմ.։

Գունակ գունակ խայտառակեալս. Կոր.։

Գունակս գունակս յեղյեղու զբանսն. Ոսկ. Մ. Ա. 24։

Սրանից են կազմված՝

Այսգունակ «այսպես». Որոց պայազատութիւնն ունի զայսգունակ ձև օրինակի։ Եւս. Քր. Ա։

Որգունակ «ինչպես». Պատմի թէ զիարք և որգունակ անկաւ ի մտաց. Եւս. Քր. Ա։

Նոյնգունակ «նույնպես». Ընդէր բամբասէր չարի անուամբ, որ զբնութիւնն նոյնգունակ՝ որպիսի եղեն՝ պահէր. Եզն. Նա...

Նոյնպէս առաքինի մնայ... նոյնգունակ առաքինի. Ոսկ. Փիլիպ.։

Ոչ նոյնգունակ հայր նորա և հայր մեր. Սեբեր. Ե։

Ջառաջին բարբառն զնմանն ամենեցուն նոյնգունակ լացեալ. Իմաստ. Ե 3։

Այսգունակ և նոյնգունակ մակբայների գոյությունը ենթադրել է տալիս, որ կային նաև այդգունակ, այնգունակ, սոյնգունակ և դոյնգունակ մակբայները, բայց մատենագրության մեջ չեն ավանդված. այդգունակ կա հետնաբար (Պիտ.), իսկ այնգունակ կա իբր ածական (Ոսկ. Մատթ.). իբր մակբայ՝ նույնպես հետին է։

Զի՞

Իբրև հաստատական՝ նշանակում է «որովհետև» և այս դեպքում շաղկապ է։ Իբրև հարցական՝ մակբայ է և նշանակում է «ինչո՞ւ». օրինակ՝

Զի՞ կայք աստ «Ինչո՞ւ եք կանգնել այստեղ»։

Զի՞ կոչեցեր զիս «Ինչո՞ւ կանչեցիր ինձ»։

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. Մատթ. Զ 28։

Զի՞ տեսանես զշիղ յական եղբօր քո. *Մատթ. Է 3։*

Արդ՝ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ շշիջանիս. *Եղիշ.։*

Երբեմն գործածվում է տրականի հետ միասին. օրինակ՝

Զի՞ է զի առանց Աստուած. *Ծննդ. Գ 1։*

Զի՞ է զի ծիծաղեցաւ Սառա. *Ծննդ. ԺԸ 13։*

Ըստ ՆՀԲ զի՞ *գոյական է և նշանակում է «ի՞նչ, ի՞նչ բան». օրինակ՝*

Զի՞ է, որդեակ. *Ծննդ. ԻԲ 7։*

Ոչ գիտեմք զի՞ եղև նմա. *Գրծ. Է 40։*

Զի՞ կայ մեր և քո. *Մատթ. Ը 29, Մարկ. Ե 7։*

Քեզ զի՞ փոյթ է. *Յովհ. ԻԱ 22։*

Զի՞ *(զարմացական) ձայնարկություն է (տե՛ս անդ)։*

Զիա՞րդ

Կազմված է զի՞ *«ինչ»* - արդ *«ձև» բառերից և նշանակում է «ինչպես», բայց երբեմն հասնում է «ինչո՞ւ» իմաստին. օրինակ՝*

Զիա՞րդ լինիցի ինձ այդ:

Զիա՞րդ թուի քեզ:

Զիա՞րդ ասես եղբօր քում:

Զիա՞րդ ոչ իմանայք:

Եւ արդ զիա՞րդ է զի ոչ պանեցեր զերդումն Տեառն:

(Իսկ եթե Մարկ. ԺԲ 35 Զիա՞րդ ասեն դպիրքն *համապատասխանում է ՀՆ. ու նույն «ինչո՞ւ այժմ» ձևին ըստ ՆՀԲ, կարելի է, ըստ իս, վերի բառը կարդալ* զի՞ արդ *(երկու բառ)։*

Գործածված է նաև իբր գոյական «ինչպես, որպիսություն» իմաստով. օրինակ՝

Զամենեցուն զուստն և զիարդն յայտնելով. *Խոր. Ա 1։*

Ոչ ոք գիտէ զզիարդն և զորպէսն Աստուծոյ. *Վրդն. Ծննդ.։*

Այս բառից է կազմված զիարդապէտ *«ինչպես պատահի, ըստ կամս, իր ուզածի պես». օրինակ՝* Ինքնին իւրովի զիարդապէտ ըստ իւրեանց նեշտի գնայցեն. *Ոսկ. Մ. Ա. 6։*

Հետին ձև է զիարդապէս *«որևէ ձևով կամ կերպով» Բրս. Ծննդ.։*

Էլ

Էլ մակբայն *ունի երկու նշանակություն. 1) այլ ևս, 2) դարձյալ, նաև, որոնք արտահայտվում են շեշտի տարբերությամբ. ինչպես՝*

Մի քի՛չ էլ միս կեր *(մինչև հիմա կերել է միսը, առաջարկում է, որ դարձյալ, այլ ևս ուտի)։*

Մի քի՛չ է՛լ՝ մի՛ս կեր *(մինչև հիմա միս չի կերել, այլ ուրիշ բան. հիմա առաջարկում է, որ նախորդ կերածը թողնի և միս ուտի)։*

Մի քի՛չ է՛լ նստիր *(մինչև այժմ նստել է, ուզում է գնա, չի թողնում և ուզում է, որ մի քիչ ևս նստի)։*

Մի քի՛չ էլ նստի՛ր *(մինչև այժմ չէր նստել, կանգնած է եղել, այժմ խնդրում է որ նստի)։*

Էլ չխոսե՛ց Արաքսը *(մինչև այժմ խոսում էր, այլևս վերջ է տվել խոսելուն)։*

Է՛լ չխոսեց Արաքսը *(մինչև այժմ չէր խոսել, խնդրեցինք, բայց դարձյալ չխոսեց)։*

Է՞ր

Զի՞նչ բառի սեռական հոլովն է և նշանակում է «ինչո՞ւ, ինչո՞ւ համար» (Թավրիզի բարբառում սովորական է այժմ ճէ՞ր *ձևով)։ Գրաբարում ավելի գործածական է* ընդ *նախդիրով միացած* (ընդէ՞ր) *կամ հոլովյալ ձևով* (էրո՞ւմ, *որ և գրված* երո՞ւմ) *և* վասն, սակս, աղագաւ *նախադրություններով. օրինակ՝*

Եթէ նա գրգռեաց, իսկ է՞ր, ընդէ՞ր դատի. *Եփր. Եղ.։*
Է՞ր եղև այս. *Հմբ. Ատեն.։*
Վասն է՞ր եղև ընդ քեզ այդ անցք. *Յուդիթ Զ 12։*
Է՞ր վասն ոչ ասաց զայդ. *Ոսկ. Յովհ. Ա 30։*
Է՞ր աղագաւ սա առաջին ասի կոչել զԱստուած. *Խոր. Ա 13։*
Է՞ր սակս զմեզ առնեն աշխատ. *Խոր. Ա 31։*
Էրո՞ւմ ոչ ասաց. *Ոսկ. Մ. Բ. 28։*
Ընդէ՞ր արտում են երեսք ձեր. *Ծննդ. Խ 7։*
Ընդէ՞ր տրտում ես, անձն իմ. *Սաղմ. ԽԱ 6, 12։*

Իսկ յէ՞ր վերայ *պետք է հասկանալ «ի՞նչ բանի վրա» (նախդիրը դնելով* վերայ *բառի վրա, իսկ* է՞ր *առնելով իր իսկական իմաստով՝ «ի՞նչ բանի», իբր* զի՞նչ *բառի սեռականը.—* ի վերայ է՞ր). *օրինակ՝*

Յէ՞ր վերայ հաստատեցան ագխք դորա. *Յոբ ԼԸ 6։*

Մի՛ ինչ խնդրիցես, եթէ յէ՞ր վերայ կայցէ երկիրս. և կամ յէ՞ր վերայ հաստատեալ իցէ, յորժամ Աստուած իւրով ձեռամբ ունիցի. *Ոսկ. Ես.։*

Ժամ

Այժմ *«հիմա», որ առաջացել է այս ժամ ձևից՝ կրճատմամբ. ինչպես՝*

Այժմ գիտացի թէ երկիւղած ես դու:
Յուցից նմա և ոչ այժմ:
Այժմ յայսմ ժամանակի:
Թոյլ տուր այժմ:

Հոդով և նախդիրներով՝

Այլ որ այժմս կեամ մարմնով. *Գաղ. Բ 20։*
Բարձցի որ այժմդ ունի. *Բ. Թես. Բ 7։*
Յառաջ քան զայժմ. *Եւս. Պատմ. Թ 11։*
Ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ:
Յայժմ ես վասն քո յաշտ առնէի. *Եզն. 115։*
Դու առայժմ երթ. *Գրծ. ԻԴ 25։*
Առ այժմ աստ ճանգուսցուք զբանս. *Ոսկ. Մ. Ա. 1։*
Այժմէն *(Նար., Շնորհ. «այժմվանից»)։*
Այժմիկ *«այժմ».* Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմ. *Ծննդ. Բ 23։*
Առ այժմիկ առէք դուք շնորհս՝ որչափ կարէք ընդունել. *Կոչ. ԺԵ։*

Հետևաբար՝ այժմուս, յայժմուս, զայժմուս, առ այժմուս, *բոլորն էլ «այժմ, առ այժմ» նշանակությամբ։*

Յայնժամ *«այն ժամանակ». ինչպես՝*

Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն. *Մատթ. Բ 7։*
Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ:

Յորժամ *«այն ժամանակ որ, երբ». օրինակ՝*

Յորժամ դարձցիս և ճգունց ճանիցես, յայնժամ կեցցես:
Յորժամ զանհրևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք. *Եզն. 5։*

(Ըստ. Ջախ. 152 այժմ, յայնժամ, յորժամ *դերանվանական մակբայ են. եթե հոլովել պետք լինի, ժամ բառը կհոլովվի. ինչպես՝* այժմու, յայնժամու. *իսկ* յորժամ *անհոլով է)։* Կարելի է *ասել* յորում ժամու:

Հարցական է յո՞րժամ *«ե՞րբ, ո՞ր ժամանակ». ինչպես՝*

Յո՞րժամ ժամանեսցես դու և կամ ե՞րբ դարձցիս. *Նէեմ. Բ 6։*

Ժամու *«հարմար ժամանակին». ինչպես՝*

Հաս ի վերայ ժամու և տարաժամու. *Բ Տիմ. Դ 2։*

Առժամայն *«հենց այն միջոցին, րոպեապես». օրինակ՝*

Հատուսցես առժամայն. *Յոբ Դ 15։*

Եւ առժամայն չորացաւ թզենին. *Մատթ. ԻԱ 19։*

Նոյնժամայն *«իսկույն, նույն րոպեին». օրինակ՝*

Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոցն՝ ետես ցելեալ զեր-կինս: Տարաժամու *«անհարմար ժամանակ, ժամանակից շուտ կամ նաև ուշ»։*

Հա՛ս ի վերայ ժամու և տարաժամու. *Բ Տիմ. Դ 2։*

Եկիր տարաժամ տանջել զմեզ:

Չի մի տարաժամ մեռցիս:

Ժամ *բառով կազմված մակբայներ.*

Առ ժամ մի *«առ այժմ».* Բանիւք կամաւորացն վարիմք առ ժամ մի. *Վեցօր.։*

Ժամ ի ժամ *«րոպե առ րոպե».* Հրեայքն ժամ ի ժամ ան-ցեալ զօրնաստւն. *Գ Մակ. Ե 13։*

Քսան սիկղ յաւուր՝ ժամէ ի ժամ կերիջիր անտի *(ժամը մի անգամ).* *Եզեկ. Դ 10։*

Ժամս ժամս *«երբեմն երբեմն».* Ժամս ժամս լուծանէ զմի ի նոցանէ. *Մծբ. Գ։*

Իբր, իբրև, իբրու

Երեք ձև ունի՝ իբր, իբրև, իբրու: *Գործածվում են իբրև նա-խադրություն, մակբայ և շաղկապ. առաջինը տեսանք վերևում, երրորդը կտեսնենք. իբրև մակբայ գործ է ածվում հետևյալ ձևերով.*

Իբր *«երբ, երբոր, յորժամ». ինչպես՝*

Իբր շինեաց Սողոմոն զՏաճարն:

Իբր մեռանի մարդ, թաղի ի բուն իւր *(Մծբ.)։*

Ի՞բր *«ի՞նչպես». օրինակ՝*

Զմիս որդին թէ ժանտանոտ և խաւարին իցէ՝ իբր ոչ գի-տաց. *Եզն.։*

Իբրև *«երբ, երբոր». ինչպես՝*

Իբրև տեսին զաստղն:

Իբրև այգն զառաւօտն մերկացաւ. *Ագաթ.։*

Բազումք յաշակերտացն իբրև լուան, ասեն. *Յովհ. Զ. 61։*

Իբրու *«երբոր». օրինակ՝*

Իբրու տեսանենն նայք՝ թուլացեալ զգեւս նօրն իւրեանց. *Վեցօր.։*

Զցորեանն ուտէին իբրու չէր աղացեալ. *Եւս. Պատմ. Գ 6։*

Մուրվալյանն (Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի «Գիտական աշխատությունները» № 2, էջ 238) ասում է, որ վրացերեն երբ *երկու տարբեր մասնիկների սղումից է առաջացած, այն է* եբ *և* ուր, *որոնց կարող է ավելանալ նաև* իվ. *ուստի նմանությունը պատահական է. բայց օրինակ չի տալիս. ասում է չեմ–եբ–ուր–ի «իմի նման», բայց առանձին չկա։*

Դիմեցի Աբուլաձեին և իմացա, թե այդ բոլորը սխալ է. եբ *և* ուր *առանձին մասնիկների գոյությունը սուտ է, ուստի ենթադրությունս կմնա անփոփոխ։*

Ավելի ընդարձակ տե՛ս Արմ. բառ. իբր:

Իսկ

Բուն իմաստն է «իրոք, իսկապես». ինչպես՝

Դուք կոչէք զիս վարդապետ և տէր, և բարւոք ասէք. քանզի եմ իսկ. *Յովհ. ԺԳ 13։*

Երկրորդ՝ «հենց» իմաստով՝ զորացնելու համար նախորդ բառը. ինչպես՝

Ո՞չ ես իսկ տեսի զքեզ. *Յովհ. ԺԸ 26։*

Ես յայդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ. *Յովհ. ԺԸ 37։*

Յօրէնս իսկ ձեր գրեալ է. *Յովհ. Ը 17։*

Կրկնությամբ՝ իսկ և իսկ *«անմիջապես». ինչպես՝*

Եւ իսկ և իսկ ետես ի տեսլեանն. *Բուղ. Գ 5։*

Աշխարհաբարում իսկ և իսկ *գործ է ածվում «հենց նույն, ճիշտ այն» նշանակությամբ։*

Հի՞մ

Հի՞մ «ինչո՞ւ». վերջաձայնի անկումով չէ, այլ ուղղակի նախավոր հի՞ *ձևից է արդի մեռյալ* խի՞ *«ինչո՞ւ» ձևը.— նախավոր պարզական* հի՞ *ձևը գտնում ենք հոմաբանների* հի՞կէն, հի՞բար *ձևերի մեջ։*

Նույն է նաև առ իմէ՞ *և* զ *նախդիրով* զմէ՞ *«ինչո՞ւ», որոնք* զի՞նչ *բառի բացառականն են համարվում. բուն նշանակությունն է «ի՞նչ բանից». օրինակ՝*

Հի՞մ ոչ զտի շնորհս առաջի քո. *Թուոց ԺԱ 11։*

Եթէ զայլ էր, զգառնն զՈրմիզդ հի՞մ ծնանէր. *Եզն.։*

Զմէ՞ դարձուցանես զերեսս քո ի մէնջ. *Սաղմ. ԽԳ 25։*

Զմէ՞ մոլորեցուցեր զմեզ. *Ես. ԿԳ 17։*

Զմէ՞ ճայեցար յարճամարճոտս. *Ամբ. Ա 13։*
Զմէ՞ առաջիցի ի խաւարճ արտաքիճ. *Եզն.։*
Առ իմէ՞ իցեճ ինձ այճ անդրաճկութիւճ. *Ծննդ. ԻԵ 32։*
Առ իմէ՞ զգուշացաւ ճմա Տէր. *Իմաստ. Դ 17։*

Մի՞թէ

Կազմված է մի «արդեօք» և թէ բառերից. ուստի գործածական է պարզական մի՞ ձևով և գրվում է նաև մի՞ եթէ: Բուն իմաստը տե՛ս արդեօ՞ք *բառի տակ։ Օրինակ՝*

Մի՞ անկար է առաջի Աստուծոյ բանս, } *Փիլ.*
Մի՞ փոխանակ Աստուծոյ եմ ես: }
Մի՞, զոր սիրեաց անձն իմ, տեսէք. *Նիւս. Երգ։*
Մի՞ ամենեքեան առաքեալք, մի՞ ամենեքեան մարգարէք.
Առ որս. Ա։
Մի՞ եթէ ձրի պաշտէ Յովբ զՏէր.
Մի՞ (մի՞թէ) և ես ճրեայ իցեմ:
Մի՞թէ քար տայցէ նմա. մի՞թէ օձ տայցէ նմա:
Մի՞թէ քաղիցեն ի փշոց խաղող:
Մի՞թէ կարօտացայք իմիք:
Մի՞թէ սա իցէ Քրիստոսն:
Մի՞թէ ես իցեմ:

Հույն·ոճով նշանակում է հետևաբար «կարող է լինել որ». ինչպես՝

Գնասցուք առ նա, միթէ ճասցուք ծերոյն. *Վրք. Հրց.։*

Մի=ոչ

Աշխարհաբարում սովորական է մի՛ *արգելականի հետ դնել որևէ բացասական* ոչ *ձևով. ինչպես՝* Ոչինչ մի՛ բերէք, Մի՛ բերէք ո՛չ մի բան: *Իսկ ընտիր գրաբարում զգուշալի է այդ ձևը. մի՛ արգելականից հետո չի գրվում* ոչ, *այլ միայն* մի՛ *արգելականը (երկրորդ անգամ) և* մի *միավորը. օրինակ՝*

Մի՛ մնասցէ ի նոցանէ և մի՛ մի *(այն էլ ոչ մի հատ)։*
Մի՛ զոցէ զկնի իւր և մի ինչ *(մի հատիկ բան)։*
Մի՛ և միում շառաւղի տացես ի վեր արձակել *«Մի՛ թողնի, որ մի հատիկ շառավիղ էլ ծլի»։*

Ըստ այսմ սխալ է ասել՝ «Մի՛ մնասցէ և ո՛չ մի, Մի՛ զոցէ և ոչինչ, Մի՛ ասիցէք և ոչ ուրեք», *ինչպես գրում են արդի գրաբարագետներից շատերը (Զալխ. 175)։*

Ո՞չ

Ո՞չ իբրև հարցական մակբայ նշանակում է «չէ՞ որ»․ հաճախ գործածական է ապաքէն «իրոք» բառի հետ, որով ցույց է տրվում, թե հարցնողը ստույգ գիտե որ ոչ․ օրինակ՝

Ո՞չ ես իսկ տեսի:

Ո՞չ ապաքէն ազատ եմ:

Ո՞չ ապաքէն և մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն:

Ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր:

Ոչ *իբրև հարցման բացասական պատասխան և բայի բացասական նշան․ ինչպես՝*

Ոչ ևս զոք ուրեք տեսին:

Ոչ ևս այլ շատ խօսեցայց *«է՛լ շատ չեմ խոսելու»։*

Ոչ եղև և ոչ այլ լիցի:

Ոչ երբեք կերայ:

Մի՛ *և* ոչ *մակբայները կարող են բայից շատ առաջ դրվել․ օրինակ՝*

Զի մի՛ մթարքն, որ զբբօք շողայցեն, արգել ճայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին․ *Եզն․ 6։*

Քանզի և ոչ յորժամ տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լպիրծ տեղիս գնացեալ, և ասիցէ՝ թէ գլորելոց է, նա՛ ինչ եղև պատճառ գլորման ընկերին: Եւ ոչ, յորժամ ընդ աւազակուտ տեղիս դիմեալ զընկերն ոք տեսանիցէ, և ասիցէ թէ եղեռն գտանէ, նա ինչ իցէ պատճառ վնասուն: Եւ ոչ, յորժամ զազնուականի ուրուք զորդի յուղակատանս ճաւսեալ տեսանիցէ ոք, և ասիցէ՝ թէ կորուսանելոց է զինչսն ճայրենիս, նա ինչ իցէ պատճառ վատնելոյ ընչիցն *(Եզն․, 163—164)։*

Մինչ, մինչև, մինչև ցե՞րբ, կամ յե՞րբ, մինչչև, մինչդեռ

Այս մակբայների գործածության համար ունենք հետևյալ օրինակները․

Մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց․ *Մարկ․ ԺԳ 3։*

Սկսան սատակել և կոտորել մինչև ոչ թողին․ *Ագաթ․ § 34։*

Մի՛ ճաշակեսցին զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ․ *Մարկ․ Ը 39։*

Նաև անորոշով․

Եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմաց ինչ ասել թէ մեռաւ․ *Մարկ․ Թ 25։*

Մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ. մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. *Մարկ. Թ 18։*

Մինչ չև բնաւ էր ինչ... Զրուան ումն անուն էր. *Եզն. 113։*

Գիտէ նայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ: *Մատթ. Զ 8։*

Մինչ դեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի. *Յովհ. Թ 5։*

Մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ. *Յովհ. Թ 1։*

Յո՞

Իմաստն է ո՞ւր, դեպի ո՞ւր. *պետք է համարել յ նախդիրով կազմված* ո *արմատից։ Այս էլ պետք է կարծել, թե առաջանում է* ոյ *ձևից, ուր վերջաձայն յ կրճատվել է։ Այս* –ոյ *ձևը գտնում ենք* յու–կամ, յու–պէտ *բառերի մեջ (ըստ* Meillet, MSL, 20, *էջ 90)։*

Յոյժ

Կազմված է ոյժ *բառից, որ փոխառություն է պարսկերենից, բայց նշանակում է ոչ թե ուժեղ, ուժով, այլ* շատ սաստիկ: *Գործածվում է իբր մակբայ. օրինակ՝*

Զարմանալի է, որ գործածական է նաև իբր ածական. ինչպես՝ Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. *Յովհ. Զ 10։*

Նա

Նա, *որից* նա *և (ըստ* Meillet, Altarm. § *172 միևնույն* նա anaphorique-*ն է)։*

Ոչ, եթէ ոչ

Ոչ, *սաստկականն է* և ոչ. *օրինակ՝* և ո՛չ մէկը, և ո՛չ մի կոպէկ:

Այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երբալոց. *Բուզ. Դ ծա=աշխարհաբար չէ՞ «չկա». չէ՞ «այնպես չէ՞»։*

Եթէ ոչ... *«միայն» իմաստով գործածված. օրինակ՝* Ուրիշ բան չի ուտում, *եթէ ոչ հաց=Միայն հաց է ուտում. նույնը նաև ֆրանս.* ne... que *և* seulement. *վերջերս ստացած լինելով նաև «բայց» նշանակությունը (հմ.* միայն թէ*), այժմ հետ է քաշվում և տեղը տարածվում է* uniquement. *ինչպես՝* vous avez uniquement à frotter de cette manière = Vous n'avez qu'à frotter...

(BSL, 33, № 99)։

Ուստի

*Կազմված է –*ուստ *մասնիկով, որ նշանակում է «մի տեղից» և կազմում է զանազան մակբայներ. ինչպես՝* այլուստ, յայլուստ, վերուստ, ներքուստ, արտաքուստ, յերկնուստ, յանկարծուստ *և այլն։*

Ուրեմն կցվում է զանազան բառերի և հատկապես նախադրությունների վրա։

*Բայց ինչպե՞ս կարող է մի մասնիկ գործածվել իբրև առանձին բառ, թեկուզ կցված մի ուրիշ մասնիկի հետ, որ է –*ի:

Ուստի պետք է ընդունել, թե ուստի *բառն էլ պարունակում է իր մեջ մի ուրիշ բառ, որի բացառականի ձևն է «որտեղից» նշանակությամբ։*

Այդ անծանոթ բառն եմ համարում ո՞ւ, *որի բուն նշանակությունն է «ո՞ւր, ո՞րտեղ»։ Այս արմատը, որ հնդեվրոպական* k²ŭ *ձևից է առաջանում, բարդված ձևի տակ գտնվում է* յուկամ, յուպէտ *«ուր որ ուզես, ուր որ պետք է» բառերի մեջ և* r *հավելվածով էլ* ուր *բառի մեջ (մանրամասն տե՛ս Արմ. բառ.* ուր *բառի տակ)։*

Ահա այս ո՞ւ *«ո՞րտեղ» բառից* ուստ *մասնիկով կազմված եմ կարծում* ուստի, *որ և իբր* ու–ուստ–ի *կրկնակ ու միանալով պիտի տային անշուշտ մի* ու:

Չափ

Սրանից են կազմված այսչափ, այդչափ, այնչափ, որչափ *բոլորն էլ դասական շրջանից. բուն ածական են, բայց և մակբայ. ինչպես՝*

> Եւ ոչ այսչափ միայն. *Հռովմ. Ը 23։*
> Այսչափ և եթ գիտել. *Ագաթ.։*
> Այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկդ. *Յովհ. Զ 9։*
> Այդչափ անմի՞տ էք. *Գաղ. Գ 3։*
> Ես այդչափ ինչ կարող էի. *Բ Մակ. ԺԵ 39։*
> Ոչ այնչափ միայն, որչափ և յառաջնում նուագին:
> Ո՞չ լսես որչափ ճակառակ քո վկայեն:

Սրանից են կազմված նաև սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ. *օրինակ՝*

> Որչափ ի վեր են, դոյնչափ ի խոնարհ են, և դոյնչափ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ. *Եզն.։*

(Չալխ. 150 իբր ընտիր գրաբար հիշում է սոյնչափ, դոյնչափ,

նոյնչափ. *բայց ՆՀԲ թեև ունի և վկայում է* դոյնչափ, *բայց չունի* սոյնչափ, *իսկ* նոյնչափ *հիշում է առանց վկայության)։*

Պէս

Այս բառի և իր ածանցների մասին խոսել ենք վերևում։ Իր ածանցներն են՝ այսպէս, այդպէս, այնպէս. սապէս *(Խոր., Յովհ. կաթ., Մագ.). չիք* դապէս, նապէս. սայապէս *(օրինակ՝* սայապէս գայսօրինակ վկայեաց. *Եւս. Քր. Ա). չկա* դայապէս. *հետևաբար ունենք* նայապէս:

Որպէս *(թե՛ նախադրություն է, թե՛ մակբայ, թե՛ շաղկապ և թե՛ ձայնարկություն). օրինակ՝*

Համարեցաք որպէս զոչխար ի սպանումն *(Նխդ.)*։

Արար որպէս հրամայեաց նմա. Որպէս ընթեռնու *(մկ.)*։

Կործիցի ոմանց, որպէս յունացն հեթանոսաց և մոգուց և հերձուածողաց. *Եզն. (շղ.)*։

Որպէ՞ս սիրելի են յարկք քո. *Սաղմ. ՁԳ 1 (ձյն.)*։

Ինչպես *աշխարհաբար է. գրաբարում կա հետևաբար* զինչպիսի *ածական և ավելի քիչ՝* ինչպիսի:

Սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս,

Սոյնպիսաբար *(չիք* դոյնպիսաբար), նոյնպիսաբար,

Սոյնպիսի *(չիք* դոյնպիսի), նոյնպիսի:

Այս վերջին երեք շարքից միայն նոյնպէս *կա հնից. օրինակ՝*

Նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ՝ նոյնպէս գտանի. *Եզն. 90*։

Քանի

Իբրև հարցական համարվում է ածական. ինչպես՝

Քանի՞ են ամք աւուրց կենաց քոց:

Քանի՞ նկանակ ունիք. *Մատթ. ԺԵ 34*։

Միանգամայն ածական և մակբայ է համարվում՝

Քանի՛ գեղեցկացար և քանի՛ քաղցրացար. *Երգ Է 6*։

Տե՛ս քանի՛ ամբաստանեն զքէն. *Մարկ. ԺԵ 4*։

Քանի՛ անձուկ է դուռնն և նեղ ճանապարհն. *Մատթ. Է 14 (այստեղ շատ ձեռագրեր ունեն* քանզի, *ինչպես է նաև հույնը. տե՛ս տպ. Պոլիս, 1895)։ Այսպիսի ձևը՝* քանի՛ *Ջալխ. 150 համարում է նաև ձայնարկություն, որովհետև խոսողը հարցում չի անում և պատասխանի էլ չի սպասում. իբր թե «ինչքա՛ն, իբրև՛ զի»*։

Ջուտ մակբայ են քանի՞ անգամ, քանի՞ առաւել, քանի՞ ևս,

Քանի՞ ևս առաւել, քանիութեա՞մբ, քանի՞ չափ, քանի՞ օրինակ, քանի՞ս, *բոլորն էլ հետին։*

Հին են՝ քանիպատի՞կ, քանիցս անգամ, քանիօ՞ն:

Հետին են նույնպես որքան *(թե՛ ածական և թե՛ մակբայ) և նրանից կազմված* որքանաբար, որքանիցս *և* որքանի *բառերը։ Մի անգամ գործածված է* որքան *ընտիր մատենագրության մեջ. Որքան է զօրութիւն քո, արա՛ (Ժող. Թ 10). բայց լավագույն օրինակներն ունեն այստեղ* «Որչափ ի կարի քում իցէ՝ գործեսջիր», *ինչպես հիշեցնում է ՆՀԲ և ինչպես տպված է նաև հրտ. Պոլիս, 1895։*

Սակայն ընտիր է ցորքան *«ինչքան ժամանակ որ».*

Ցորքան ընդ ինքեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել. *Մարկ. Բ 19։*

Եվ մանավանդ՝ ցորքան ժամանակս.

Ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ. *Հռոմ. ԺԱ 13։*

Կին կապեալ է, ցորքան *(կամ* ցորչափ) ժամանակս կենդանի է այր նորա. *Ա Կորնթ. Է 39։*

Ցորքան ժամանակս ժառանգն տղայ է, չէ ինչ առաւել քան զծառայն. *Գաղ. Դ 1։*

Վերջապես հետին են այսքան, այդքան, այնքան, *չկա* սոյնքան. դոյնքան, *բայց կան* նոյնքան, նոյնքանի, նոյնքանաբար:

Ֆրանս. combien *և ռուս.* сколько *նշանակում են թե՛* ինչքան, որքան *և թե՛* քանի՞. *մինչդեռ թրք.* ne qadar *«ի՛նչքան» և* qač *«քանի». Նույնպես և չեչենները զանազանելով իրարից ասում է* miel *«ինչքան»,* masa *«քանի՞». առաջինը ընդհանուր քանակություն է ցույց տալիս, երկրորդը որոշ թիվ* (Мациев, *121)։*

Օր

Այս բառով կազմված մակբայական դարձվածներ են՝

Աւուր աւուր *կամ* աւուրց յաւուրս *«օր օրի, ամեն օր շարունակաբար».*

Զայս արասջիք աւուր աւուր զեօթն օր. *Թիւք ԻԸ 24։*

Աւուրց յաւուրս գային առ Դաւիթ. *Ա Մնաց. ԺԲ 22։*

Օր ըստ օրէ *«նույն նշանակությամբ ամեն օր».*

Խօսէր օր ըստ օրէ:

Զոր օր ըստ օրէն ժողովեցին:

Օր յօրէ *«մի օրից մի ուրիշ օր գցելով».*

Արկանէր վինակ օր յօրէ և ամիս յամսոյ. *Եսթ. Գ 7։*

Զօր ամենայն *«ամբողջ օրը»*.

Զօր ամենայն ծգեցի զձեռս իմ:

Յամենայն օր *«ամեն օր շարունակ»*.

Զի յամենայն օր խօսէին ընդ նմա և նա ոչ լսէր. *Եսթ. Գ 4*։

Օր քան զօր *«օր օրից ավելի»*։

Լինէր Յուդիթ մեծացեալ և պատուեալ օր քան զօր. *Յուդիթ ԺԶ 28*։

Հետին գործածությամբ են՝

Օր ատուր *«ամեն օր»*, օր ընդ օրն *«օրը օրին»*, օր ընդ մէջ *«մի օր բաց թողնելով»*։

Օր *բառից ածանցված բառեր են՝*

Այսօր. *գրվում է մի բառ, իսկ այն օր երկու բառ.*

Ո՛րք այսօր զործեա՛:

Ոչ է այսօր իբրև զերեկն և զեռանդն:

Այսօր է և ի վաղիւ ոչ գտանի:

Եւ առ նմա ազան այն օր. *Յով՛Հ. Ա 59*։

(Այսօր *և* այն օր *աննախդիր Հայցական են, ինչպես են նաև* այս ամ, այս անգամ *և այլն, Չալխ. 153. բայց կա նաև նախդիրով՝*

Ընդէր զօրհասսաւ անցեալ հրեայքն և զայսօր կեցեալ գտանին. *Գ Մակ. Ե 9*։

Զի ասիցեն ցայսօր. *Ծննդ. ԻԲ 14*։

Ի մանկութենէ մինչև ցայսօր ժամանակի. *Բ Մակ. ԺԶ 2*։

Որ ցայսօր պնդեալ են. *Եզն.*։

Առօրին *«նույն օրը, իսկույն»*։

Առօրին զգործն վճարէին. *Ա Մակ. Ժ 50*։

Անմիտն առօրին յայտնէ զբարկութիւն իւր. *Առակ. ԺԲ 16*։

Զօրհանապազ *1. «ամեն օր, միշտ». 2. «օրն ամբողջ»*.

Առնէին խրախութիւն զօրհանապազ. *Յոբ Ա 4*։

Վասն քո մեռանիմք զօրհանապազ. *Սաղմ. ԽԳ 22*։

Նույնը և հանապազօր.

*Հ*անապազօր ի խորհուրդ մտանել, *կամ՝* Կանխել ի Տաճարն, *Ա Մակ. Ը 15. Գրծ. Բ 46*։

Նոյնօրին *«հենց նույն օրը»*.

Նոյնօրին հատուցես զվարձս նորա և մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այնորիկ. *Թուոց ԻԳ 15*։

Նոյնօրին երթեալ պատմեաց. *Եւս. Քր. Ա*։

Միջին Հայերենի ձևեր են՝

Օր մի ելան երկուքն ի յօրս:

Օր ընդ մէջ *(երկու օրը մի անգամ)։*
Երկու օր ընդ մէջ *(երեք օրը մի անգամ)։*
(Այտն. 130)

Օրերի անունները են՝ միաշաբաթի *(հունարենից առնված է և* կիւրակէ), երկուշաբաթի, երեքշաբաթի, չորեքշաբաթի, հինգշաբաթի, ուրբաթ, շաբաթ: *Ուշ ժամանակ կազմված է* վեցշաբաթի *«ուրբաթ», որ գտնում եմ մի քանի անգամ Ալիշանի «Կամենից»-ում։ Այս բոլորը, ինչպես ուրիշ լեզուների մեջ էլ, գոյական են և հոլովվում են գոյականի պես։*

Օրերի շարքն է, դեպի անցյալը՝ այսօր, երէկ, եռանդ *(ըստ ի՛ս լտ.* heri + ante), *իսկ դեպի ապագան՝* այսօր, վաղիւ, յերիր աւուր:

Երբ մեկը ներկայի մասին է խոսում, օրերի թվումը այլ ձևով է անում, և այլ ձևով՝ երբ անցյալի կամ ապագայի մասին է խոսում։ Օրինակ՝ այժմ ես խոսում եմ իմ մասին, ասում եմ. «Այսօր ես մեկնելու եմ Երևանից, վաղը կը լինեմ Տփղիսում»: *Իսկ եթե խոսեմ անցյալի մասին, կասեմ.* «Մարտի 8-ին Տփղիսում էի. այն օրը գիշերեցի այնտեղ. նախորդ օրը Բաքումումն էի. յաջորդ օրն էլ մեկնեցի Բաքու»: *Տեսնում ենք որ՝ ներկայի համար ասում ենք* երէկ, այսօր, վաղը. *իսկ անցյալի համար՝* նախորդ օրը, այն օրը, յաջորդ օրը: *Իսկ եթե ասենք՝ «Անցեալ տարի յունուարի 1-ը կիրակի էր, վաղը երկուշաբթի՝ գնացի», դա կլինի բացարձակ սխալ։— Ոմանք այդպես գրում են!*

Ուշագրավ են աշխարհաբարի շուտուց *(անցյալ) և* շուտով *(ապառնի), ինչպես՝* Շուտուց չենք տեսել իրար, շուտով կտեսնվենք:

Գրաբարի մեջ էլ կա այդ տարբերությունը։ Երբ մեկը խոսում է ներկայի մասին, ասում է. վաղիւ, առ վաղիւ, ի վաղիւ, ի վաղիւ օր. *իսկ երբ խոսում է անցյալի մասին կամ ուրիշի մասին մի բան է պատմում, ասում է՝* ի վաղիւն, ի վաղիւ անդր:

Տարբերությունը երևում է հետևյալ հատվածներում.

Եւ ժամանակեաց Աստուած և ասէ. Վաղիւ արասցէ Տէր զբանդ զայդ ի վերայ երկրիդ. Եւ արար Տէր զբանն զայն ի վաղիւ անդր *(Ելք Թ 5—6)։*

Եւ յարուցեալ Լաբան ի վաղիւ անդր, համբուրեաց զորդիս իւր. *Ծննդ. ԼԱ 55։*

Եւ ասէ Մովսէս ցփարաւոն. Ժամ դիր ինձ. առ ե՞րբ արարից աղօթս... և նա ասէ. Առ վաղիւ. *Ելք Ը 9—10։*

Վաղիւ և վաղիւն *բառերը տարբերվում են իրարից* ն *հոդով.*

բարբառներում ունենք այժմ եռանդ *և* վաղանդ. *վերջին ձևը չկա գրաբարում. բայց* ի վաղիւ անդր *ձևը ցույց է տալիս, որ* վաղանդ *կազմված է* եռանդ *բառի նման -*անդ *մասնիկով։ Կարծում եմ, որ գրաբարի մեջ էլ* երէկ *և* եռանդ *բառերը* երէկն *և* եռանդն *բառերից այն տարբերությունն ունեն, ինչ որ* վաղիւ *և* վաղիւն. *Հմմտ. Եբր.* ԺԳ 8. Յիսուս Քրիստոս երէկ և այuor, նոյն և յաւիտեան.—*Ա Թագ.* ԺԴ 21. Եւ ծառայքն որ էին ընդ այլազգիսն երէկն և յեռանդն: *Սակայն օրինակների անորոշությունը չի թույլ տալիս ճշտել այս կետը։*

Այuor, *ինչպես նաև* երէկ, վաղիւ, եռանդ *հոլովվում են գոյականների նման. ինչպես՝* այսr աւուr, յայսմ աւուr, յայսմ orէ, վաղուի orն, երեկի և եռանդի բանfն, յերիկէ և յեռանդէ *(Ջախ. 154)։*

Ղարաբաղի բարբառը հաջորդական օրերի համար ունի հետևյալ հարուստ շարքը. էuor (uor), էգուց, էլor, մէլor, չէլor *(=մէկէլ չէ էլօր),* սէլor *(=մէկ սէլօր),* խէլor *(ծագումն ինձ անհայտ)։*

Այսպիսով, այսօրվանից սկսած մինչև մյուս շաբաթվա այսօրը (7 օր) ստանում են իրենց անունները. իսկ այնուհետև խոսում են օրվա անունով. ինչպես՝ միւս չորեfշաբթի, միւս հինգշաբթի *և այլն։*

Սխալ է այuor *բառն անտեղի կերպով բաժանել իր մասերին և գրել* այս or. *ինչպես՝*

Տեսէf մեր fաջ կառավարին. այս or նա վերջինն է գալիս *(Հոմերի Իլիակ., թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 224)։*

Շատերի լանջափոկից այս or ջերմ frտինf կը հոսուի *(51)։*

Բոլորին էլ դուրս տար այս or *(54)։*

Հնդեվրոպացիք այuor *բառը ունեին, որ ժառանգ լեզուները շարունակեցին միշտ վերանորոգելով. այսպես են հյ.* այuor, *պրս.* ımrūz, *ռուս.* сегодня, *հն.* σήμερον, *գերմ.* heute. *լտ.* hodie *և այլն։ Վերջինս տալիս է ֆրանս.* hui, *բայց որովհետև սա շատ կարճ բառ է, ուստի ավելի երկարացրին՝ դնելով նրա կողքին* au jour *«օրը» բառը, որով ստացվեց* aujourd'hui *«այսօր», բառացի՝ «այսօրվա օրը»։* Or *բառի հավելումը կատարվել է նաև ուրիշ լեզուներում, իրարից անկախաբար. այսպես հյ.* այuorվա orը, *ռուս.*сегодняшний день, *նույնիսկ ֆրանս. ժղ.* au jour d'aujourd'hui. *կարելի է նաև թրք. ասել* bugünki gun *«այսօրվա օրը»։*

Այuor, *սաստկականը* այuorուայ oru. *լտ.* hodierno diē *հն.* τῇ σήμερον ἡμέρα, *ֆրանս.* aujourd'hui, *ֆրանս. ժղ.* au jour d'aujourd'hui, *գերմ.* heutzutage, *հն.* σήμερον, *գոթ.* himma daga, *հրգ.*

hiu-tagu, *լտ.* ho-die, *սանս.* a-dya, *բոլորն էլ նշանակում են* այսօր:

Երէկ *բառի համար հնդեվրոպացիք ունեին* g'hyes, *որի ժառանգներն են հն.* χθές, *լտ.* heri, *պրս.* dī, *սանս.* hyas, *գոթ.* gistra-dagis:

Բայց այս ձևը բոլոր ժառանգներն էլ չեն պահել և ստեղծել են նոր բառեր, որոնք ծագում են երեկոյ *բառից. այսպես* երէկ *որ է* երեկ *«իրիկուն», ռուս.* вчера *որ ծագում է* вечер *«երեկո» բառից և այլն (նույնիսկ թրք.* dün *«երեկ» և թթր.* tün *«գիշեր» բառից)։*

Հնդեվրոպացիք վաղը *բառը չունեն. բայց մի ժողովուրդ, որ գիտե «*այսօր *և* երէկ*», պիտի ունենա նաև* վաղը: *Ժառանգները չեն պահել այն և նոր բառեր են ստեղծել. այնպես որ նրանց համեմատությամբ չի կարելի վերականգնել։ Այսպես հն.* αὔριον, *ռուս.* завтра, *գերմ.* morgen *և այլն, որոնք ծագում են* утро, morgen *«առավոտ» բառից։ Լտ.* mane *«առավոտ», մկ. «առտուն, առավոտը կանուխ», ավելի ուշ ստացավ* de *մասնիկը,* dēmāne. *բուն նշանակությունն էր «լավ» և* manus *«լավ» բառի կրկնակը և դարձավ «վաղ առավոտ» և «վաղը», ճիշտ ինչպես ֆրանս.* de bonne heure, de bon matin, *գերմ.* bei guter Zeit, *որից էլ ֆրանս.* demain *«վաղը»։ Հյ.* վաղիւ, վաղը *բառն էլ ծագում է* վաղ *«շուտ» բառից և կապ ունի վրաց.* ხვალ *հոմանիշի հետ։*

Աֆրիկյան basa *լեզվում* (Kamerun) *օրերը թե՛ անցյալում և թե՛ ապագայում հաշվվում են միատեսակ. այսպես իրար հետ նույն են վաղը և երեկ, 2 օր առաջ կամ 2 օր հետո, հետևյալ ձևով.*

yani	*վաղը, երեկ*
len	*այսօր*
noma	*2 օր առաջ, 2 օր հետո*
len mána	*4 օր առաջ, 4 օր հետո*
ngwálen	*5 օր առաջ, 5 օր հետո*
len matàn	*նույն նշանակությամբ*
len masàmal	*6 օր առաջ կամ հետո*
len masambōg	*7 » » » »*
len yuem	*8 » » » »*
len bő	*9 » » » »*
len yom	*10 » » » »*

(Schürle, 4)

Օրէն, օրինակ

Թեև օրէն *բառի հյց.* զօրէն *ձևը իբր նախադրություն գործածված է 6 դարում, բայց իբր մակբայ և շաղկապ հետին է ըստ ՆՀԲ։*

Օրինակ *«նման, կերպով» նույնպես դասական շրջանից է. ինչպես՝*

Եւ էր տեսիլ երազոյն օրինակ այս. *Բ Մակ. ԺԲ 12։*

Եւ մի՛ ի մարմինս մանկանացուս աստուածակերպ օրինակ բարձրանալ. *Բ Մակ. Թ 12։*

Ավելի սովորական են՝

Օրինակ զայս, զօրինակ զայս, զայս օրինակ *«այսպես».*

Զայն օրինակ *«այնպես»,* զնոյն օրինակ *«նույնպես».*

Զոր օրինակ *«որպես, ինչպես».*

Սոյնօրինակ *«այսպես»,* նոյնօրինակ *«նույնպես».*

Այս բոլորը ընտիր են. բայց հետին ժամանակից են՝ օրինակ իմն, օրինակաբար, օրինակապէս:

Միջին հայերեն ձև է՝

Այդ օրինակովդ լինի *«այդպես է լինում» (Այտն. 130)։*

12. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ

Միջին հայերենի մակբայների մի ցանկ տալիս է Այտն. (128—131), և մի փոքր հավաքածու էլ Karst *(251—255)։ Այս երկուսից քաղելով և ամբողջը այբբենական ցանկի վերածելով՝ դնում ենք այստեղ։*

Ամենովդ *«ամեն կերպով, ամեն ջանքով». գրբ.* ամենայն, ամէն *բառի գործիականն է, բայց գոյականը զարմանալի կերպով կրճատված է։*

Ամենայն դիմօf *«ամեն կերպով»։*

Ամենս *«բոլորը միասին»* Karst *254։*

Այլ *«ավելի, ավելի ևս». օրինակ՝* այլ կարն, այլ յառաջ, այլ ի յետ, այլ յուշ» *«ավելի ևս կարճ, առաջ, հետ, ուշ». համապատասխանում է ձևով գրաբարին, իմաստով Նրև. է՛լ «ավելի ևս» ձևին։*

Այլ ի *«երբեմն». սրա համար օրինակ ունենք՝* Այլ ի յառաջ գայ և այլ ի յետոյ, *որ Այտն. 128 թարգմանում է «երբեմն յառաջ կու գայ, երբեմն ետքը». դնում է նույն* այլ *բառի հետ, բայց իմաս-*

տի տարբերության պատճառով ես դրի այլ ի. ձևով նման է Երև. էլի «դարձյալ» բառին, բայց իմաստով տարբեր է։

Եւ այլ «դարձյալ». միջին հյ. և գվռ. այլուփ, ալվի «նորից, դարձյալ» բառին նման է, բայց սրանց մեջ շաղկապը հետադաս է։

Այլվայր, գրված նաև այլումվայր, այլուվայր, այլուայր, այլուփ «նորից, դարձյալ». առաջին 4 ձևերը կասկած չեն թողնում, որ բառը կազմված է այլ և վայր բառերից. բայց ի՛նչ կապ կա «ուրիշ տեղ» և «նորից» իմաստների միջև։ Ուստի արդյոք տարբե՞ր բառ է վերջին երկու ձևը, որի հետ նույն են նաև գվռ. ալվի, լեհ. ալվը «նորից»։ Նաև բառավերջի ր բաղաձայնի կորուստը անսովոր է։

Այն օր=գրբ. «յայնմ աւուր». բայց կա նաև ընտիր մատենագրության մեջ. միջին հայերենից վկայված ունենք՝ «այն օր իրք չկարաց առնել» այժմ միակ սովորական ձևն է։

Անճնար | «Հարկավ, ճար չկա, անհրաժեշտաբար». Անճարակ
Անճարակ | բժշկին կարիք ունի. Մխ. բժ. 135։

Անտից «այն տեղից». գրբ. անտի ձևից։

Առջև կամ առաջև «առաջը, առջևը». օրինակ՝ Առջև զօրաց. Յայսօր առաջև. գրբ. առաջի, առաջեաւ ձևից է. և վերջավորությունը գտնում ենք նաև ետև, նեքսև, վերև, ներքև, միջև բառերի մեջ։

Աստից «այստեղից» Kεrst 254։

Աւելի, այլ աւելի Kεrst 255։

Բաճրակ «մանավանդ, ամենից ավելի». Սմբ. Դատ. 39, 188—189։

Բարի եկիր, բարւոք գտաք զձեզ (է դար), բարով ընդունել (ժ դար), բարով ի դուրս գայ (ժԲ դար)։

Բնաւ, բնիկ «բոլորովին, ի սպառ». օրինակ՝ Ողջացան բնիկ կամ բնաւ:

Բոլոր. օրինակ՝ Բոլոր պատեցին զՏարսուս:

Բռանց «բռնի կերպով»։

Դար ի վեր. օրինակ՝ Փախչէին դար ի վեր ի բերդն:

Դէմ «ընդդեմ». օրինակ՝ Դէմ կալ, Դէմ մարտնչիլ, Դէմ մեր, Դէմ երեսաց «երեսին դեմ» և կամ հոլովված ձևով՝ Ի դէմս գալ «դեմը, դիմացը գալ»։

Դէպ ի մեզ (համարվում է Ե դարի ռմկ.)։

Դէպ ի դուրս, Դէպ ընդ երեկածքն «երեկոյան դեմ» (ժԲ դար)։

Դեռ «հենց նոր». Դեռ լինի սկսել «նոր լինի սկսված» Մխ. բժ. 134։

Դրուցև «դուրսը, դրսի կողմը». օրինակ՝ Դրուցև բերդին (և մասնիկի համար տե՛ս առջև):

Զատ ի «բացի». օրինակ՝ Զատ ի կիւրակէէս «բացի այս կիրակիից»։

Զերդ, զէտ «պես, նման կամ օրինակի համար». գրբ. զիարդ բառն է. օրինակ՝ Զերդ ուլի ոտներ (ինչպես օրինակ՝ «ուլի ոտներ»), Զէտ անհաւատ «անհավատի պես», Զէտ երբեմն եղև «ինչպես որ մի ժամանակ եղավ»։

Զի՞ «ինչո՞ւ». Զի՞ կայք սյարապ (ճիշտ գրբ.)։

էգուց, յեգուց «էգուց, վաղը» Karst 254։

Է՞ր «ինչո՞ւ». օրինակ՝ Է՞ր վախես. Է՞ր ես սև հագեր:

Ընչո՞ւ «ինչո՞ւ, ինչի՞ համար». օրինակ՝ Օրէնք ընչո՞ւ ընկալար «ինչո՞ւ ճաշակվեցիր»։

Ի լման «ամբողջությամբ» Karst, 254։

Ի կշտելեց «կուշտ ժամանակը» Մխ. բժ. 80. ի կշտելեաց, 89։

Իսկի, իսկիկ «ճշմարիտ, իրոք» Karst, 254։

Լալխառն «լալագին, լալով»։

Լոկ «պարզապես, միայն». օրինակ՝ Լոկ վկայ հշէին. ըստ Karst, լուկ:

Խիստ «հույժ, շատ». ծանոթ է արդեն ԺԲ—ԺԳ դարից (Այտն. 28). Խիստ նման է. Բերդն Կիզիստոէ խիստ ամուր. Խիստ ուրախացաւ. Խիստ սիրէաք զիրար:

Կեզլուայ «վեր ի վերո լվանալ».— կեզ բառի ծագումը ինձ անհայտ է։

Հաղ «անգամ». այս ձևի տակ գտնում ենք արդեն գրբ. միահաղոյն «միանգամայն» բառի մեջ. ասվում է նաև հեղ, որ այժմ էլ գործածական է բարբառներում. օրինակ՝ Հաղ մի, Հեղ մի «մի անգամ», Հաղ մին քանի «մի քանի անգամ»։

Հայնց, հանց, հենց «այնպես». այժմ գվռ. սանց, նանց, էսանց, էնանց (ըստ Այտն. 129). Երև. հէնց, ըսէնց, ըդէնց, ընէնց, էսէնց, էդէնց, էնէնց. ըստ Karst 252 ունի արդեն Վրդն. պտմ. 157, 160 հէնց ձևով.— Karst 105—106 կարծում է, թե հայնց կազմված է *հայնս հոգնակի հյց. ձևից՝ ներմուծելով տ, որ միանալով ս-ի հետ՝ տվել է ց, ճիշտ ինչպես քանց, վանց «վասն» բառերի մեջ։ Չեմ հավատում։ Ըստ իս հայնց կազմված է կրճատմամբ այն ցեղ ձևից, և ապա ստացել է հ հավելվածը. ինչպես՝ այնչաք, հայնչաք «այնչափ»։ Բոլոր 4 ձևերն էլ ավանդված են արդեն՝ այն ցեղ, հայնցեղ, այնց, հայնց (տե՛ս Karst, 109)։— Նման կազմություն ունեն ար-

դի բարբառներից Ախց. ի՞նչխ «ինչպես» <ի՞նչ ցեղ և Հմշ. ի՞նդսօ, ի՞նցօ, ի՞նչօ «ինչպես», որոնք կազմված են հյ. ինչ+թրք. սօյ «ցեղ» բառերի բարդությամբ (տե՛ս իմ Քնն. Հմշ. բարբ. 168)։— Այտն. 130 գիտե նաև այս ցեղ «այսպես». օրինակ՝ Այս ցեղ առին զկլայն «այսպես կամ այս կերպով առին բերդը», որի հետ կարելի է հիշել նաև Այդ օրինակովդ լինի «այդպես կլինի» (անդ)։

Հայենակ «հայերեն». օրինակ՝ Հայենակ կենայր «հայերեն էր». այսօր էլ ունենք Ննխ. նայնակ «հայերեն»։

Հաւասար «առհասարակ, բոլորը միասին». օրինակ՝ Փախեան զօրքն հաւասար:

Հէտ «անգամ». օրինակ՝ Հէտ մի «մի անգամ». Զայդ շատ հետեր արա «Այդ բանը շատ անգամներ արա՛».— Նույն է գվռ. մի հետ «մի անգամ», որ այժմ դարձաւ Երև. մի հատ. օրինակ՝ Մի հատ ասա գա՛յ:

Հետէն «հետո». Մխ. բժ. 135՝ հիւանդութիւնն հետէն զօրանայ և աճէ... հետեն վատուժի և պակասի... հետէն աճի... հետէն զօրանայ աճէ, և հիւանդին ուժն հետէն պակասի։

Հեռու. գրբ. «հեռի». օրինակ՝ Ամսու մին ճանապարհ հեռու:

Հիմա «այժմ». գրված է նաև յիմայ. օրինակ՝ Յիմայ և յայսկից ի հետ (Այտն. 128). այժմ սովորական են գվռ. հիմա, հիմի, հիմակ, հիմիկ, մինչև իսկ թրք. մասնիկով՝ հիմանուկ=հիմակուկ. հիմակուհիմա «առ այժմ». տե՛ս և Արմ. բառ. հեմ, հէմ:— Karst 252 դնում է պրս. ime հոմանիշից. բայց ըստ ԳԴ պրս. ایمه ime նշանակում է «այսպես» (էջ 145բ)։

Հիտրաց. Այտն. 129 մեկնում է «անընդհատ».— սա ձևացած է հետ իրերաց ձևից և նշանակում է «իրար հետ», ինչպես գործածական է այժմ էլ բարբառներում. օրինակ՝ Խիտրաց ապրինք, խիտրաց մեռնինք: Վերի «անընդհատ» նշանակությունը առաջանում է «իրար հետ, այսինքն՝ իրար ետևից» իմաստից անցնելով։

Հոգցի «դիտմամբ, ջանիւ», այսինքն՝ հոգատարությամբ. կազմված է հոգ բառից ցի մասնիկով։

Հոս, հոտ, հոն, որ և հօս, հօտ, հօն և ի նախդիրով ի հոս, ի հոն (պատահաբար չէ ավանդված ի հոտ). այժմ էլ գործածական են բարբառներում և ընդունված են արևմտյան գրականում հոս, հոդ, հոն ձևով։ Հոլովված ձևերով էլ ունենք հոսի, հոսկէ, հոսէն և այլն (տե՛ս հաջորդ հատվածը)։ Անշուշտ ս, դ, ն դիմորոշ են. բայց թե ի՛նչ է հո մասը՝ անհայտ է։ Այտն. 129 երկու կարծիք է հայտնում. կա՛մ ենթադրում է ի յայս, ի յայդ, ի յայն ձևերից, եթե չէ արաբ.

Արբ. hunā hunake *«այստեղ», ինչպես որ ունենք գվռ.* ճուսա, ճուտա, ճունա: *Վերջին կարծիքի դեմ է խոսում իրավամբ* Karst *252—253։ Բայց երբ նա ճ նախաձայնը հենարան համարելով ջնջում է և ո արմատ համարելով միացնում է* սոռա, նոռա, դոռա, նոյն *և այլն բառերի* ո *ձայնավորին, կամ ուզում է ինչ-որ կապ տեսնել* օ՞ն *«դե՞հ» ձայնարկության կամ* օն և օն *«այսպես այնպես» անսովոր ասացվածի հետ, իրավացի չէ։*

Ճինն, ի ճինն *«հաճախ». Վստկ. 1, Սմբ. դատ. 101, Անսիզք 35։*

Մեծ *«հույժ». մեծ օգտակար է. Մխ. բժ. 112։*

Մենակ, մինակ *«իսկույն»* Karst *254։*

Մէն *«միայն»* Karst *255։*

Միակեցնակ *«միակեցի կամ ճգնավորի զգեստ». Հռգաւ միա-կեցնակ:*

Մինչև *գրբ. ձևի փոխարեն միջին հայերենում ունենք* ինչուի, *որ պետք է հասկանալ* մինչևի *(նախդիրը միացած ինչպես* բացի, դէպի*). օրինակ՝* ինչուի յայս *«մինչև այստեղ».* Եւ այլ շատ բան ասացին ինչուի սպանել տուին:— *Պետք է ենթադրել, որ* մինչև *բառի սկզբից ընկել է* մ՝ *հաջորդական* ն-ի *տարանմանությամբ. նույնը նաև* մինչ *ձևից, որ դարձել է* ինչ.— *իսկ* որ *շաղկապի հետ միացած* մինչ որ, մինչև որ *դառնում են* ինչոր, ինչուր. *օրինակ՝ Ինչ մնայ ամէնտ Բ դրամ «մինչև որ բոլորից 2 դրամ մնա».* Ինչուի եկ *«մինչև որ եկավ»։— Սրանք ճոխաբար գործածվում են նաև բարբառներում։*

Յայսկի *«այստեղից»,* յայնկից *«այնտեղից»* Karst *254։*

Յետ, յետոյ.— *Գրաբարի այս ձևերի դեմ միջին հայերենում ունենք՝* յետ, ի յետ, ի յետու. *օրինակ՝* Յետ այնր *«նրանից հետո».* Յիմայ և յայսկից ի յետ *«Հիմա և սրանից հետո». Ի յետու «յետո». գրված նաև* ճետ. *օրինակ՝* Հետ այնոր *«նրանից հետո».* Հետ պակաս ժամու մին *«Դեռ մի ժամ չեղած».* Հետէն *«ետքեն հետո».* յետև, ճետև *(*Karst *253). նաև նախդիրով* ի ճետ *փոխանակ ասելու* յետ.— *Այտն. 129 այս* ճետ *ձևի համար համեմատում է գրբ.* զճետ (Զճետ երկուց ամաց *«երկու տարի ետք»)։*

Յառաջ *գրբ. ձևի դեմ կրկին նախդիրով ասվում է* ի յառաջ:

Ի ներf=*գրբ. «ի ներքս».* Մտան ի ներf *(է դարից էլ կա* ի ներս*).* ընգ ներfսէ Karst *253։*

Ներfև *«տակը» (=գրբ.* ի ներfոյ*). օրինակ՝* Ներfև պարսպին *«պարսպի տակ»։— Գրբ.* ի ներfոյ *«մեջը և տակը» կրկին իմաստ-*

ների գանազանության համար միջին հայերենը որոշել է ներքև «տակը», ներք կամ ներս «մեջը»։

Շատ «բազում. 2. հույժ». օրինակ՝ Շատ օգտակար է. Շատ անգամ «հաճախ»։

Շուտ (շոյտ)․ օրինակ՝ Շուտ ճարկանէր. որից շուտով, որ և պրս. բառով՝ թէզով:

Ոտին մի «մի անգամ» Karst 255։

Ուժով «բռնի», որ է գվռ. qorով (պրս. zör բառով). օրինակ՝ բերել զնոսա ուժով:

Ուստից «որ տեղից». ծագում է գրբ. ուստի ձևից, ճիշտ ինչպես աստի ձևից էլ ունենք աստից (գվռ. էլ ասկից և նրա նմանությամբ ուսկից):

Ուշինչ դիմօf «ամենևին, և ոչ մեկ կերպով»։

Ո՞ւր «ո՞ւր»։

Չաf «չափ». առաջանում է չափf ձևից, ինչպես տաf գրբ. տապf ձևից (երկուսն էլ պ, փ շրթնականների անկումով).— սրանից են այսչաf, այդչաf, այնչաf, միաչաf, որչաf և ն-ի հավելումով՝ ճայնչաf,-ճանչաf (Karst 109, 252)։

Սերտ «սաստիկ». օրինակ՝ Սերտ կռուիլ (կարելի չէ միացնել թրք. sert «կարծր» բառին, որից եթէ լիներ պիտի ունենար սարթ ձևը՝ ինչպես է այժմ արևելյան բարբառներում)։

Ստորև «տակը» Karst 253։

Վաղ «էգուց», ի վաղէ «վաղուց» Karst 254։

Վերև. օրինակ՝ գնացին իջան վերև ի լեառն:

Վերջև, յերջև Karst 253։

Վստանի «իրոք, ճշմարիտ» Karst 254։

Ցայն «այնչափ». գրաբարի ց նախդիրով կազմված՝ այն դերանունից. օրինակ՝ Ոմանք ցայն փայլեն՝ մինչ... «Մի քանիսը այնչափ են փայլում, որ...» (Ը դար)։ Սրա նման է՝

Ցուր, որ կազմված է ց նախդիրով՝ ուր մակբայից. համապատասխանում է գրբ. ցորքան, ցերբ, ցոր վայր ձևերին և նշանակում է «քանի որ, մինչև որ». օրինակ՝ Ցուր չես տեսել:

Փոխան «տեղը, փոխանակ». կրճատված է գրբ. փոխանակ բառից. ըստ Այտն. 128 հետին գրիչների ձեռքով մուծված է տեղտեղ նաև հին մատենագրության մեջ, «որ հիմայ հնագոյն և ընտրելագոյն օրինակներու միջոցաւ ուղղուած է»։ Ակնարկում է անշուշտ Ծննդ. Լ 2 և Փիլիմ. 20 (տե՛ս Արմ. բառ. Ջ 1251), որոնք Ս. Գրքի Պոլիս 1895 հրատարակության մեջ դարձած են փոխանակ:

Միջին հայերենի օրինակներ են՝ Իւր փոխան *«իրեն տեղ»,* Մեր փոխան, Ջրին փոխան: *Բարգությամբ ունենք* երեսփոխան *Մխ. դատ. և արդի բարբառներում* փոխան *«վարտիք»։ Բառիս հնագույն անկախ գոյության ապացույց է* փոխանորդ, *որ գործածված է Ս. Գրքում։— Դուրյանն իր տաղերում գործածում է այս բառը՝*

Փոխան ամպոց ճուր ճիւսփի,
Տեղայր մարգրիտ և ոսկի:

Քանի *«որչափ որ, գրբ. ցորքան». օրինակ՝* քանի կարես *«որչափ որ կարող ես»։*

Քաւէլ *«բացի, միայն թե» (գրբ.* քա՛ւ, քաւեալ *բառից). Անսիզք 21, 51։*

Քիչ *«սակավ», փղքշ. քչիկ «սակավիկ». փոխառություն պրս.* کیچ kīč *հոմանիշից. օրինակ՝* Քիչ գտնոյր. Քչիկ կռուեալ. Քիչ մի գրեցի:

Քով. *ըստ Այտն. 129 կա միջին հայերենում իբր գոյական անուն՝* քովս, *այսինքն «կուշտս, կողս». այսպես է նաև Պլ. քիչ անգամ, իսկ սովորաբար նշանակում է «առ եր, կողքին»։*

Այտն. 116 ունի տեղական մակբայների մի ցուցակ ԺԱ դարից մինչև այսօր, որ հետևյալն է.

անտի, անտից
այնկէ, այնկէց, այնկից
անկէ, անկի, անկից, անկէց
ուստի, ուստից, ուսկէ, ուսկէց, ուսկից
ուրկէ, ուրկէց, ուրկի, ուրկից

Եթե մի ընդհանուր հայացք գցենք միջին հայերենի մակբայների այս ցանկի վրա, կտեսնենք, որ ընդհանրապես նույն են գրաբարի հետ։ Մի մասն էլ շեղվելով գրաբարից՝ միանում է արդի բարբառներին. այս կարգից են՝ դրուցև, ընչո՞ւ, եզուց, իսկի, ի լման, ճայնց, ճայնակ, ճիմա, ճիտրաց, ճոս, ճոտ, ճոն, քիչ, քով: *Ամենից անսովոր և նոր ձևերն են* բաճրակ *«մանավանդ» և* ճիճն *«ստեպ», որոնց ծագումն էլ հայտնի չէ ինձ։ Առաջին վկայությունները՝ տե՛ս Սմբ. դատ. 39, 188, 189։ Երկրորդի վկայություններն են՝*

Իւր տէրն ստէպ *(այլ ձեռագիր* ճիճն) ճայի ի յինքն և կառկոտ երթայ տեսանէ և պէտ առնէ. *Վստկ. 1։*

Եւ զայս ճիճն կարդալ պարտ է. *Սմբ. դատ. 101։*

Ճիճն ճանդիպած. *Անսիզք 35։*

13. ՄԱԿԲԱՅՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Անդ

Նխ. ճա՛նա «աՀավասիկ»։
Ջղ. ճրէս, ճրէդ՝ ճրէն «աՀավասիկ, աՀավադիկ, աՀավանիկ»։
Մրղ. ընգօ. ընգօճա, ընգօճանա «աՀաւանիկ».
սկօ, սկօճա, ըսկօճանա «աՀավասիկ».
ուկօ. ուկօճա, ուկօճանա «աՀավադիկ»։
Ագլ. ճրէ՛սիկ՛, ճէ՛սիկ՛, ճէ՛սէ, ճէ՛սէf «աՀավասիկ» (Սարգըսյան, էջ 28, 37 ունի և ճէս, ճէտ, ճէն ձևերը, որոնք սովորական չեն)։
ճրէ՛տիկ՛, ճէ՛տիկ՛, ճէ՛տէ, ճէ՛տէf «աՀավադիկ».
ճրէ՛նիկ՛, ճէ՛նիկ՛, ճէ՛նէ, ճէ՛նէf «աՀավանիկ»։
Կա նաև Հօկա «աՀա», որ բուն նշանակում է «այս է»։
Հմշ. օսկօ «աՀավասիկ», օթկօ, օտկօ «աՀավադիկ», ընգօ «աՀավանիկ». սրանք ներկայացնում են գրաբարի երեք աստիճանները և կազմված են բնականաբար այս, այդ, այն ցուցականներից՝ կօ մասնիկով, որ ռնգականից Հետո դարձել է գօ: Ջեմ գտած ճօսկօ, ճօտկօ, ճօնկօ ձևերը, բայց կա ճըն, որ անՀայտ իմաստով գործածական է. ինչպես՝ Աստին ճը՛ն թէ միf էշտալ «ասացին թե մի՛ գնաք». Իրաց ճէդ ույմիշ կօնf ճը՛ն ու «իրար Հետ Համաձայնության գանք և...»։ Այս անորոշ իմաստով ճը՛ն բառն է աՀա, որ միանալով ու շաղկապի Հետ, ձևացրել է ճնու «և» շաղկապը, ինչպես և միանալով ոr շաղկապի Հետ, կազմել է ճնօr, ճնօյ «որպէսզի». օրինակ՝ Դափնին գու, ճնօr գընձնէրը չիպ փշօrfին «Տափանում են, որպեսզի գուղձերը բոլորովին փշրվեն»,— ճնօյ յազդը թէմիզ ըլլի «որպեսզի լապուտը մաքուր լինի»։

Ամառ

Ագլ. ըմըռնա՛նուն «ամռան, ամառը»։
Հմշ. օմռօն «ամառը»։

Ամենայն

Պլ. ամմէն ադէն «միշտ»։
ամմէն իժիr «միշտ»։
ամմէնէվին «իսկի, բնավ»։
Նխ. ամէնէվին
Ջղ. ամմէնօվի «ամենքը միասին»։

Ամիս

Պլ. Ննխ. ամսէ–ամիս *«ամեն ամիս շարունակ»։*
Համշ. օմսա օմիս:

Այգ, այգուց

Երև. էfուց *«վաղը»։*
Ջղ. ñէfսի օrը *«հետևյալ օրը, հաջորդ օրը»։*
    *յ*կուց *«վաղը»։*
Ագլ. յէօ՛գ՛ից, ñէօ՛գ՛ից *«վաղը».*
    է՛fսի օrը, յէ՛fսի օrը *«մյուս օրը»։*
Համշ. öկուց էfուց, էfունց *(Մալա) «վաղը».*
    öկը՛ն *«այգուն, առավոտը»,* öկվօն, էfվօն, öկվընö öկվըմա, էfվընէ, öկվընօվ, öկվընցու *«առավոտը»,* öկվընցվըմö, öկվընցուէրը *«առավոտները»,* öկվընօք *«առավոտը շուտ»։*
    öկընը *«քիչ առաջ» (նույն բառի՞ց է)։*

Այլ

Պլ. ա՛լ *«այլ ևս». օրինակ՝* ա՛լ մի՛ fար, ա՛լ չիfաս:
Մրղ. ելö *«նորից, կրկին»։*
Ագլ. ա՛լմա *(<այլ մի) «դարձյալ»։*
Համշ. öլ *«այլ ևս». օրինակ՝* öլ մի՛ կալ. öլ կալ մի՛. öլ կաս ե՛չ:

Անդադրում

Ննխ. անթաբրում

Առաջ «նախ»

Պլ. առաչ, առաչուց, առաչվընէ, առաչվան, առչէվէ, առաչնէrը,
    առչի օrը, էrէգ չէ առչի օr:
Ննխ. առաչ, առչէվէ, առաչվանէ
    առչիմէգութ *«նախ և առաջ»։*
Ագլ. ա՛ռաջ, յա՛ռաջ *«նախ»,*
    առա՛չուց, յըռա՛չուց *«նախապես»։*
Համշ. առաչ, առաչուց, առաչվընö, առաչվընէrը, առաչէն,
    առաչը՛ն, առաչմէն *կամ* առաչմը՛ն *«նախապես»։*

Առաջի «առջևը»

Պլ. առչէվ, առչէվը, առչէվէն, առչէվօf:
Ննխ. առաչ, առչէվէ, առչօվը, առչօվէ:

Ջղ. յառջ՞կիս, յառջ՞կիդ, յառջ՞կին *«իմ առաջ, քո առաջ, նրա առաջ»։*

Հմշ. այշէվ, այշէվը, այշէվը՛ն, այշէվօվը:

Առաւօտ

Պլ. առդուն, առդըվան, առդըվքնէ, առդըվքնօվ. առդըվանց, առդըվանց զանուխ, առդունէրը:

Ննխ. առավդուն, առայդուն *«առավոտուն»։*

Ջղ. սաուալուաէնց *«առաւօտուն»։*

Մրղ. առատո՛ւնա *«առավոտուն»։*

Ասել

Պլ. ըսէլն իfէն *«այդ միջոցին»։*

Աստի «այստեղից»

Պլ. ասկէ, ատկէ, անգէ.
սըգէ, դըգէ, նըգէ.
սըգէ–նըգէ *«այս ու այն տեղից».*
ասկէ յէտկը, ատկէ յէտկը, անգէ յէտկը:

Ննխ. ասկից էղէվ *«այսուհետև».*

Հմշ. ըստի յէտկը *«սրանից հետո».*
ըստիվէղէվ *«այսուհետև»։*
ճոսկէ, ճոդկէ, ճընկէ, ուrկէ.
ճոսկէց, ճոդկէց, ճոնկէց, ուrկէց.

Սրանց վրայի ց *բացառականի* -ից *մասնիկը չէ, այլ* ց *նախդիրը. սկզբում ասել են* ճոսկէ ցճոն, *հետո* ճոսկէց ճոն. *այսպես նաև* ասկէց *և այլն։*

Ատեն

Պլ. ադէն–ադէն *«երբեմն, մերթ ընդ մերթ».*
ադէնօվ, ադէնօf *«էր երբեմն, կար ժամանակ որ».*
մէյմէգ ադէն *«երբեմն»։*

Ննխ. ադէն–ադէն, մէմէգ ադէն *«երբեմն».*
ադէնօվ–ժամանակօվ *«կար ժամանակ որ».*
վէrշադէն *«վերջը»։*

Արտորալ բայից

Պլ. աrդօrնօf *«շտապով»։*

Ավելի, առաւել

Պլ. էվէլ, էվէլի, էվէլօf.

օրինակ՝ էվէլ էվէլ ֆաշեցի *(կշիռքի մէջ)։*

Ննխ. ավէլի *«ավելի» (Ջալթր), «շատ, հույժ» (քաղաքում).*
օրինակ՝ Ավէլի ուդէլը աղէգ չէ *«Շատ ուտելը լավ բան չէ»։*
ավէլօֆ, ավէլօֆօվ *«առավելոք».*
օրինակ՝ Ավէլօֆօվ դօֆդէ *«Բավականից էլ ավելի է»։*

Ջղ. յավել, իվել, իվելի «հույժ».
օրինակ՝ Իվելի շօֆ ա *«Շատ տաք է».* Շատ իվելի նեղ ա *«Ջափազանց նեղ է»։*

Ագլ. իվել *«ավելի»։*
Հմշ. ավէլի, ավէլի-բագաս:

Աւելի *մակբայը չի կարող իր հարակից ածականից բաժանվել մի ուրիշ բառով. օրինակ՝*

Նա ջատ աւելի գեղեցիկ էր *(չի կարելի ասել* Նա աւելի ջատ գեղեցիկ էր):

Ինձանից տասնապատիկ աւելի յաջող ընտրութիւն կարող է անել *(չի կարելի ասել* Ինձանից աւելի տասնապատիկ յաջող..., *ինչպես ունի Շիրվանզադեն, Երկերի լիակ. ժող., 1930, էջ 315)։*

Բերան

Ջղ. բ՛արազվէր *«գլխիվայր շրջված, բերանսիվայր»։*
Պլ. բէրնէ բէրան.
օրինակ՝ Բերնէ բերան կըլնի գերան *(առած)։*

Բնաւ

Մրղ. պնավըՙն *«իսկի, ամենևին, բնավին»։*

Բուն

Հմշ. արտասանվում է պուն *և* ի *նախդիրով միանում է նախորդ բառին, որ լինում է սովորաբար ժամանակ արտահայտող բառ. ինչպես՝* Դարին ի պուն, Կիշէրն ի պուն, Օրն ի պուն, Ը̀կընն ի պուն, Յօրէգն ի պուն *«ամբողջ տարին, ամբողջ առաւոտը...». բոլորն էլ ստանում են* ն *հոդը։*

Գաղտ

Պլ. գաղդուգ, գաղդուգ մը, գաղդուգէն:
Ննխ. գաղդուգ, գաղդուգէն *(Ջլ.* գաղդօդ, գաղդօդէն) *«գաղտ, գաղտնի կերպով»։*
Ջղ. գ՛օխտիկ *«գաղտնապես»։*

Գեղվրայ

(Թrqմ. prf. üstün köyü)

Պլ. գէղվրա *«վեր ի վերոյ».*

(Թրք. և Պլ. տրված իմաստը համապատասխան չէ բառի կազմության. ընդհակառակը շատ հարմար է Նրև. (գյուղերում) գեղի վրա *բառին տրված իմաստը, որ կարելի է հասկանալ հետևյալ խոսքից. Դու ասում ես «Տօ, արի ըստէղ». էդպէս գեղի վրա մի՛ խօսիր. կանչած մարդիդ անունը տուր, որ իմանանք, թէ ո՛ւմ ես կանչում»։— Ուրեմն* գեղի վրա *նշանակում է «ամբողջ գյուղին ուղղված անորոշ և ո՛չ թե հականե հանվանե ասված որոշ մի բան»։*

Գիշեր

Պլ. fիշէrը, fիշէrօվ, fիշէrվընէ, fիշէrանց:

Ննխ. fըշէrօվ *«գիշեր ժամանակ»։*

Ջղ. fշեrախան *«գիշերանց»։*

Ագլ. քշոլոով, քշոլոց *«առավոտը շուտ»։*

Հմշ. գ՚իշիrը *(Մալա),* կիշէrօվ, կիշէrվօնցու *«գիշերային»։*

Դարիվայr, դարիվեr

Պլ. դարվար, դարվէr:

Ննխ. դէrվար, դէrվէr:

Ջղ. դարվեr «դարիվեr»:

Հմշ. տարիվոr, դարիվիr:

Դարձեալ

Բալ. ալվա *«դարձյալ» (Նաթանյան, Արտօսր, 94)։*

Դեռ

Ջղ. դառ *«դեռ, տակավին»։*

Դէմ

Պլ. դէմը, դիմաց, դիմացը, դիմացէն:

Ննխ. դէմ դէմի, դէմ դիմաց,

դիմացէ դիմաց *«երես առ երես»։*

Ննխ. դէմը, դիմացը, դիմացէն:

դիմաց դիմաց, դիմադէմ *«դէմ դէմի»։*

Ջղ. դէմդէմ *«դեմը, դիմացը»։*

Հմշ. տէմ, տիմաց, տէմ-տիմաց, տիմացտ-տիմաց:

Դի «կողմ»

Պլ. անթին *«այն կողմը»*, անթիէն, անթիօf:
անթինէրը *«այն կողմերը»*,
աստին, ատտին, անթին,
աստիէն, ատտիէն, անթիէն.
չօրստի *«բոլորտիքը»*, չօրստին, չօրստինիս, չօրստիէն,
չօրստինէրնիս, չօրստինէրնիդ, չօրստինէրնին:
մէկտի *«մի կողմ, դեն»*. *օրինակ՝ մէկտի դեցիր.*
նէրսիթին *«ներսի կողմը»*, fօվընդի:
Նխ. անթի, անթին, անթինէրը,
անթինօվ *«մի քիչ այն կողմ»*,
աստի, աստին, աստինէրը, աստին,
աստինօվ *«մի քիչ ասդին»*,
նէսթի *«ներսը, ներսիդին»*։
Մրղ. վոռտի *«ո՞րտեղ, ո՞ւր»*։
Հմշ. տսաին, տստին, ընտին *«այստեղ, այդտեղ, այնտեղ» (դադարում ցույց տալու համար). որ և էստին, էտտին, էնտին.*
տր. բցռ. էստիէն, էտտիէն, էնտիէն *(սրանց մասին տե՛ս էջ 323բ)*։
մէգտի, մէգտիօնը *«մի կողմերը»*.
էդէտին *«հետի դին, ետևը»*.
չէօյստին, չէօյստիօնս *«շուրջս»*։
Այտն. 111 հիշում է նաև դիաց՝ *իբր եզ. սեռ., օրից էլ* այս դիաց, այն դիաց, ամէն դիաց, *որոնք հին ձևեր են*։

Դիր

Մրղ. տիր *«անգամ, հեզ»*։

Դուրս

Պլ. դուրս, դուրսը, դուրսէն, դուրսէրը:
Նխ. դուս, դուսը դուսէն *«դրսից»*։
Ջղ. դ'ուս *«դուրս»*, դ'ռուց *«դուրսը»*, դ'ըրսախան *«դրսից»*։
Ագլ. դիւս:
Հմշ. տուս *(սրանից կազմված մի քանի ձևեր տե՛ս էջ 323բ—գ).*
տուսը'ն, *տուսունք «դրսերը»*։

Եռանդ

Մրղ. յառանգ *«նախորդ օրը»*։

Երբ

Պլ. յէ՞փ «ե՞րբ», յէփէ՞ն, յէփէ՞ն բէրի «ո՞ր ժամանակից ի վեր. 2. վաղուց». յէփօր չէ նէ «հապա», յէփօր, յէփօր օր «երբոր». օրինակ՝ յէփօր օր գա, գըսեմ «երբ գա, կասեմ»։

Նխ. յէփ:

Ջղ. յեփ «երբ» յեփոր «երբոր», յեփեն «երբի՞ց». օրինակ՝ յեփեն չինած ա:

Մրղ. յի՞փ, յիփոր ֆի:

Ագլ. իբ «երբ», ի՛բօր «երբոր», է՞րբի, է՞րբmց «ե՞րբ»։

Յղ. իփ, ի՛փօր:

Հմշ. յէփ, յիփ, յէփվօն, յէփու կամ յէփվօնէ, յէփվօն , ճօփօ-րօր «երբոր որ»։

Երեկոյ

Պլ. իրիգունը, իրիգվան, իրիգվան դէմ:

Ջղ. դաբզարակու, դամզարակու «երեկոյան դեմ». յառջ‘ արակու «ճրագվառոցին»։

Հմշ. իրիգունը, իրիգվօն, իրիգվընէ:

Երես

Պլ. էրէսանց, էրէսգունդ, էրէս էրէսի:

Նխ. էրէսանց:

Ջղ. յիրեսախան «երեսանց, առ երեսս»։

Հմշ. էրէսօնց, էրէսկ «ոչ խոր»։

Երէկ

Պլ. էրէգ, էրէգ չէ առչի օր, էրէգ չէ մէգալ օր. էրէգ իրիգուն «երեկ երեկո»։

Նխ. էրէգ:

Ջղ. յէրէկ, յէրէկի «երէկ»։

Մրղ. յէրէկ :

Ագլ. յըրկէ՛, յըրկէ՛ց:

Յղ. ըրկէ՛ «երեկ, երեկվա»։

Հմշ. էրէգ, էրէգվօն, էրէգ չm այչի օրը, էրէգ չm մէգէլ օր (Տր.)։

Երթալ

Պլ. էրթալօվ «հետզհետե» (Թրգմ. Թրք. gitmekje նույն նշ). օրինակ՝ Արզէվը էրթալօվ գը շատնա գօր «Անձրևը հետզ-հետե շատանում է»։

Համշ. էշտալօվ *«հետըհետե»։*
Նույնը Երև. ֆանի գնում:

ն̃է՞ր

Մրղ. ն̃է՞ր *«ինչո՞ւ»։*

Սրա տրական ձևն է՝

ի՞մ

Ագլ. ի՞մ *«ինչո՞ւ», որից՝*
· դրբ. ն̃ի՞մ *և սրանից էլ՝*
Երև. խի՞ *«ինչո՞ւ»։*

Թե՛ սեռ. և թե՛ տր. ստացել են ն̃ հավելվածը, զանազանելու համար էր *էականից և* իմ *ստացականից։*

Ընդ այս, այդ այն

Երև. }
Ջղ. } դէս, դէդ, դէն *«այն կողմ, այդ կողմ, այն կողմ»։*

Ջղ. դէզդէս *(<*դէսդէս) «վերջերս, այժմ».*
Մրղ. դէսա նէնէնց, դէսա՛նէտէնց, դէսա՛նբէլա, դէ՛սընցա, դէ-սանէսթի *«այստեղից այնտեղ, այսուհետև».*
ինդէ՛նէնէնց, ինդէ՛նէտէնց, ինդէ՛նընցա *«այնտեղից այն-տեղ, այնուհետև».*
տէտա՛նէնէնց, տէտա՛նէտէնց, տէտա՛նընցա, տէտա՛նէսթի *«այնտեղից այստեղ, այնուհետև».*
տէտ, տէտան *«այստեղից, այդտեղից»։*
Ագլ. դէս *«այս կողմ»,* դին *«այն կողմ» (չկա* դէդ*), բցռ.* դէ՛սից, *դինից. տր.* նէս, նէդ, նէն.
Համշ. նոս, նոդ, նըն:

Ընդ օր

Պլ. ընդօր, ինդօր *«ինչպես». օրինակ՝* Ընդօ՞ր էս, աղէ՞գ էս *«ի՞նչպես ես, լա՞վ ես».* Ընդօր օր գամ, անանգ էմ *«ինչ-պես որ կամ, այնպես եմ»։*
Ջղ. դո՞րն *«ո՞ր կողմով» տե՛ս էջ 3023։*
Մրղ. դուէր *«ո՞ւր, ո՞րտեղ»։*

Ընդուստ?

Հնդ. մզդոստ, մեդոստ, դոստ *«հանկարծ»։*

Ժիր

Հմշ. (Մալա գյուղում կա իժիր *ձևը՝ «միշտ» նշանակությամբ. ուրիշ բարբառներում ասվում է* ամէն իժիր, *որ տե՛ս)։*

Ի՞նչ

Պլ. ի՞նչ *«ինչո՞ւ համար». օրինակ՝* Ի՞նչ էս գէցէր *«ինչո՞ւ ես կանգնել».* Ի՞նչ գը ձէձգըվէիf. ի՞նչ *«ինչքա՞ն». օրինակ՝* Ի՞նչ աղվօր է *«ինչքա՞ն գեղեցիկ է».* ինչո՞ւ, ինչո՞ւ համար. ի՞նչ դէյի *«իբր ի՞նչ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար». օրինակ՝* Պարտf չունիմ, ի՞նչ դէյի պիտի տամ: *(Թարգմանաբար էլ ասվում է* Ի՞նչ ըսէլօվ, *որովհետև ֆրք.* ... deyu *ծագում է* de *«ասել» արմատից)։*

Տե՛ս և ինչfան, ինչչափ, ինչխգար *(դդար ձևի տակ)։*

Ննխ. ի՞նչ *«ի՞նչ, ինչքա՞ն».*

ինչի՞, ինչի՞ համար, ինչի՞ դէյին *«ինչո՞ւ».*

ինչէ՞ս, ինչէսնա՞կ *«ի՞նչպէս»։*

Ջղ. խո՞վ *«ինչո՞ւ» (գործածված է Ջմյուռն. աղերսագրում, էջ 157.* Ինfն խո՞վ տալման չէ).

չումա՞ր, չո՞ւմ *«ինչո՞ւ համար» 2.* այո՛ *(բացասական հարցականի դրական պատասխանն է, իբր ֆրանս.* si!*). սրա միջին ձևն ունի Ջմյուռնիայի աղերսագիրը, էջ 157.*

Չո՞ւմա դու եվել աս ուզում:

Ագլ. ընչո՞ւ *«ինչո՞ւ»։*

Հմշ. ի՞նչ, ինչո՞ւ հօմար, ի՞նչ հօմար, օրի՞նչ *(=որ ի՞նչ) «ինչո՞ւ»։*

ինչի՞ մը (Մալա) «մի քիչ»։

Բլ. ի՞նչթուր *«ի՞նչպես»*

(Նաթանյան, Արտօսր, 94)։

Իսկ

Ննխ. ի՛սգը *«ճիշտ ու ճիշտ»։*

Մրղ. իսկի *«բնավ, ամենևին»։*

Ագլ. սկի *«բնավ»։*

Հմշ. իսկի *«բնավ»։*

Իսկ *բառի վրա տե՛ս նաև իմ Ձեռ. սրբագրթ. Բուղ. էջ 74։*

Իրաւ

Պլ. իրավ *«ճշմարիտ». օրինակ՝* Իրավ գըսէմ.

իրավ ալ *«ստուգիվ»։*

իrավ օr *«ճշմարիտ որ»։*
Իrա՛վօrա (<իrաւ ոr ալ) *«ստուգիվ»։*
իrավցուճէ *«ճշմարիտ, ոչ կեղծյոք»։*

Լինել

Պլ. ըլլա fի ըլլա *«թերևս հաջողվի»։*
չըլլա՛ fի *«մի՝ գուցէ»,* ըլլա ըլլա *«առ առավելն»։*
Նխ. չիլա վօr *«մի գուցէ»։*
Հմշ. չըլլի թօ *«չլինի թե, մի գուցե»։*

Լոկ «միայն»

Հմշ. լօգօr, լօգէօr, լօգէr (*<լոկ որ*) *«քիչ առաջ, հենց հիմա, նոր». օրինակ՝* լօգէօr եգավ *«նոր եկավ»։*

Խիստ «յոյժ»

Նխ. խիստ *«շատ, հույժ». օրինակ՝* Իդա բանը խիստ fսիrիմ *«այդ բանը շատ եմ սիրում»։*

Ծայր

Պլ. ձarէ ձar *«ծայրե ծայր, ամբողջապես»։*
Նխ. ձarէ ձar:
Հմշ. ձօրտձօր:

Կամաց

Պլ. գամաց *«մեղմ». օրինակ՝* գամաց խօսէ. գամաց էգուr (*ծղր.*) *«մի հոխորտար».* գամաց մը, գամացուգ մը, գամաց գամաց, գամացուկ գամացուգ:
Երև.
Ջղ. } կամանց, կամանց կամանց:
Նխ. գամաց:
Հմշ. գօմաց, գօմաց գօմաց, գօմաց մը:

Կամիմ, կամենալ

Հմշ. գօմօռ (*Մալա*), գօմմօ (*Ճանիկ*) *«քիչ էր մնում». այս այն բառն է, որ Հայկունի, Արրտ. 1892, էջ 432 գրում է «կոմոյ թէ» և թարգմանում «հազիւ հազ».* Կօմոյ թէ տուն ճասօնf. *բայց նույնը էջ 433* Կօմոյ թէ լէյի *«քիչ էր մնում լայի».— ծագում է գրբ.* կամէr թէ *ձևից։*

Կամկար

Նխ. գամգար *«կամաց, դանդաղ». օրինակ՝* գամգար fալէ՛:

Կանուխ

Պլ. գանուխ, գանուխէն, գանուխգէգ, առտուն գանուխ, վաղը առտու գանուխ:
Ննխ. գանօխ, գանօխգէգ:
Ջղ. կանուխ *«շուտ, շուտով».* կանուխ արա՛:

Կերպ

Ջղ. կէրպին *«կանոնավոր կերպով».* *օրինակ՝* Շորէրս կէրպին կարէլ ա:

Կէս

Պլ. գէսվգէս *«կեսվակես, կէս առ կէս»:*
Հմշ. գէսինմ *«մինչև կեսը»,* գէսվգէս *«կէս առ կէս»:*

Կող

Ջղ. կողախան *«կողքով, քովնտի»:*

Կողմ

Ագլ. չուrf կումունը *«չորս կողմը»,* նի՛սկումուն *«ի ներքս»:*
Ջղ. ցածտգման *«ներքևի՝ վարի կողմը»:*

Կուշտ

Ջղ. fշտին *«կողքին, քովը»:*

Կտոր

Պլ. գըդօր մը *«քիչ մը»,* գըդօր գըդօր, գըդօրչիգ մը:
Ջղ. մտկա *«մի քիչ», որ կազմված է հյ. մի+պրս.* թէfէ *«կտոր» բառից:*

Հա «այո՛»

Պլ. հա, հա յա՞ *«իհարկե այո»,* է հա՛ յա, հա՛ ալ. հա՞ քա, հաքա՞ *«իհարկե այո՛» (հաճախ ծղր.):*
Ննխ. հա *«այո՛» հայա՞լ «իհարկե այո՛, բայց...».*
հաքա, հաքայի *«իրոք որ» (հաճախ ծղր.):*
Մրղ. հա *«այո՛»:*
Ագ. հօ *«այո՛»:*
Հմշ. հա *«այո՛»:*

Հատ

Պլ. հատ-հատ, հատիգ-հատիգ. *օրինակ՝* Հատիգ-հատիգ fրէր է:
Հմշ. հադ, հադ, հադիգ հադիգ:

Հենց

(Ծագում է միջին հայերենի հայնց *ձևից, որ նշանակում է «այնպես» և սղված է* այն ցեղ *ձևից)։*

Երև. հէնց *«նույնիսկ».* ըսէնց, ըդէնց, ընէնց *(*էսհէնց, *էդ-հէնց, *էնհէնց):*

Ջղ. սէնց, ստէնց *«այսպես»,* դէնց, տէնց *«այդպես»,* նէնց *«այնպես»։*

Մրղ. էնէնց *«այնպես» (բաղաձայնի մոտ* էնէս). էտէնց *«այս-պես, այդպես»* (*չկա* էսէնց). *բաղաձայնի մոտ* էտէս:
նէնց *«հենց». բաղաձայնի մոտ լինում է* հէս, *կրճատմամբ* էսս:
Հէնց ինտս, էտէնց ինտս *«կարծես թե»։*

Ագլ. Գործածական չէ, բայց կա Ցղնայի ենթաբարբառում հտնց, հինց *ձևով. տե՛ս և* մա:

Հեռու

Պլ. հէռու, հէռույէն, հէռվանց, հէռվանց հէռու *«շատ հեռու» (ազգականի համար)։*

Նխ. հէռու, հէռույէն:

Հմշ. հէռու, հէռվօն, հէռույը՛ն:

Հետ «միասին»

Պլ. հէդը *«միասին». օրինակ՝* Հէդը նստէր գը խօրաքէ.
ասօր հէդ մէկզէղ *«այնուամենայնիվ, և սակայն»։*

Մրղ. խէտ *«անգամ, հեղ»։*

Ագլ. հիտ *«անգամ».* ֆանի՞ հիտ *«քանիցս»։*

Հմշ. հիդրար *(միասին» (=հետ իրար). օրինակ՝* հիդրար էշ-տօնֆ *«միասին երթանք».* հէդնուհէդը *«նույնհետայն, իս-կույն ևեթ»։*
մէզհէդ *«միասին»։*

Հերիք

Պլ. հէրիֆ *«բաւական». օրինակ՝* Հէրիֆ ըսէս:

Մրղ. խէրիֆʼ:

Ագլ. հէ՛րիֆʼ *(Ն.* հրտքʼ, *Ցղ.* հրէֆʼ*)։*

Հմշ. հէրիֆ:

Հերու

Պլ. հէրու *«անցած տարի»,* հէրվընէ:

Նխ. հէրու:

Ջղ. խերվու:

Մրղ. խէօրիւ *«հերու»*, խէօրիւզնամ *«նախանցյալ տարի»*։
Ագլ. հտրվի, *Ցղ.* հէ՛րվի *«հերու»*։
Հմշ. հէրու, հէրվի, հէրվօն, հէրվընտ, հէրվընու։

Հիմայ «այժմ»

Պլ. հիմա, հիմագ, հիմաշուգ, հիմագուհիմա *«առ այժմ»*, հի-մագվան, հիմագվընէ, հիմագուց։
(Հնգ. ասվում է ներկա. *օրինակ՝* Ներկա ցաման ա գ՛լուխս *«Այժմ գլուխս ցավում է»*։
Մրղ. մկա *«հիմա»*, մկավանէն սօրա, մկասնուկէն սօրա *«այ-սուհետև»*։
Ագլ. հրդէօ՛, հրդէօ՛քս *«հիմա»*, հյդտտի *«այժմ»*, հրդտտն *«այժմվա»*, հրաըտտնից *«այժմվանից» (հայտնի չէ ինձ սրանց ծագումը)*։
Իսկ հօկ ա *«հենց նոր, ահա, հիմա, քիչ առաջ» նշ. բուն «այս է»*։
Հմշ. հիմի, հմի, հմիգվօն, հմիգվօնու, հմիգվընուց։

Հոս, հոդ, հոն
(սրանց ծագումն անհայտ է)

Պլ. հօս, հօդ, հօն. *բցռ.* հօսկէ, հօդկէ, հօնկէ *կամ* հօսկէց, հօդկէց, հօնկէց։
հուսա, հուդա, հունա.
հուսադէղ, հուդադէղ, հունադէղ.
հօստէղ, հօտտէղ, հօնդէղ.
հօստէղվանքը, հօտտէղվանքը, հօնդէղվանքը.
հօնդէղվանքը չէ *«ասածիս կարևորություն չի տալիս»*.
հօսկէ հօն, հօնգէ հօս, հօս–հօն, հուսա–հունա *և այլն*։
(Կարելի չէ հոլովել հօս, հօդ, հօն, *այլ միայն՝* հօստէղ, հուսադէղ *եռյակ շարքերը. օրինակ՝ սեռ.* հօնդէղի, հու-դադէղի, *բցռ.* հօնդէղէն, հօտտէղէն, հուսադէղէն, *հոգ.* հօսդէղէրը, հուսադէղէրը, հօտտէղվանքը *և այլն. կարելի է միայն ասել բցռ.* հօսկէ, հօսկէց *եռյակ շարքերը)*։
Ննխ. հօս, հօդ, հօն. *սեռ.* հօսի, հօդի, հօնի. *բցռ.* հօսէն, հօդէն, հօնէն. *հոգ.* հօսէրը, հօդէրը, հօնէրը. *բցռ.* հօսէրէն, հօդէ-րէն. հօնէրէն. *կրկնությամբ ասվում է* բէ՛րօսօս *«բե՛ր հոս, բե՛ր այստեղ»*։
Հմշ. հիմնական ձևերն են՝ հօզ, հօդ, հուն. *սրանցից* հօզ *հա-մապատասխանում է մյուս բարբառների* հօս *ձևին. բայց*

ս վերջաձայնը համարվելով մյուս երկուսի դ, և թրթռուն վերջաձայներին, ինքն էլ վերածվել է զ:

Հճ. ճէս, ճէդ, ճէն *կամ* ճէսդէղ, ճէդդէղ, ճէնդէղ. *սրանց մեջ* ռ> է *անկանոն է, ուստի կարծում եմ, որ աղդվել են* էս, էդ, էն *ձևերից։*

Ակն. ճոդիկ *(հող)։*

Ձմեռ

Ագլ. ձըմըռա՛նքին, ձըմըռնա՛նուն *«ձմռան, ձմեռը»։*

Հմշ. ծմռօն *«ձմռանը»։*

Ճոռով

(Ստույգն է ջոռով, *որովհետև ծագում է արաբ.* جور jaur *«դժվարություն» բառից)։*

Պլ. ջօրօվ-մօռով *«դժվարավ», որ և* ջօրօվէն:

Ննխ. ջօրօվ, ջօրօվ-մօրօվ:

Մա

Ագուլիսում գործածական է մա, մաճ *«հենց» ձևը. օրինակ՝ հաճախ ասում են* Մա ըս գ'ի՛դոմ *«հենց կարծում ես». սրա ծագումն ինձ անհայտ է։*

Մատ

Պլ. մատ-մատ, մատիգ-մատիգ. *օրինակ՝*

Հատ-ճատ չամիչիկ,
մատ-մատ մեղրիկ,
տուն էկանք դարտակիկ *(առած)։*

Մարտ

Հմշ. մաշնագ *«լավ». օրինակ՝* Մաշնագ գաշտա *«լավ կարդա» (ծագում է* *մարդանակ, *մարդնակ *ձևից)։*

Մեծ

Ննխ. մէձ *«շատ, հույժ». օրինակ՝* Մէձ ուրախ էր *«շատ ուրախ էր».* Մէձ աչքպաց տղա է *«շատ աչքաբաց տղա է»։*

Մեկն

Ջղ. մեկն *«շիտակ»։*

Մէջ

Պլ. մէշ, մէշը, մէշէն, մէշէ մէշ, մէշ մէշի:

Ննխ. մէշը, մէշէն, մէշէմէշ:

Ջղ. մէշ:

Մէջf

Ջղ. միջfախան *«մեջքի վրա»։*

Մի, մէկ

Պլ. միրզմէշէ *«մի ըստ միոջէ, մանրամասն». օրինակ՝*— պատմել *(Թեոդիկ, էջ 1466)։*
մէգանց, մէգէն, մէգէն ի մէգ *«հանկարծ» (նույն ձևով թրք.* birden, birden tire)․
մէկդէղ *«միասին».*
մէգիգ-մէգիգ *«մի առ մի»։*
մէ՛յմալ, մէ՛յմա *«մէկ էլ, այլ ևս». օրինակ՝* մէյմա, մէյմալ նայիս ճօս չիfաս *«հանկարծ».*
մէյմէգ աղէն *«երբեմն».*
մէկտի *«մեկդի, մի կողմ. դեն». օրինակ՝* Մէկդի գնա:
Ննխ. մէգէն, մէգէնիմէգ, մէգէնմէգ *«հանկարծ».* մէգդէղ *«միասին».* մէգfիշմէն *«մի քիչ հետո».* մէղօմը *«քիչ, մի քիչ».* մէղօմէն *«մի քիչ հետո» (<*մէկ կտոր մը):
մէգթի *(Զլ.* մէկտի) *«մի կողմ, մեկուսի».*
մէմալ *«դարձյալ, այլ ևս». օրինակ՝* մէմա՞լ ասիմ.— մէմալ չասիմ:
Ջղ. մի՛մին *«մերթ, երբեմն երբեմն».* մինէկ *«միայնակ, մենակ»։*
Ագլ. մույն ալ *«հանկարծ».*
մու՛յնիդոն, մո՛ւյնտոմ *«միանգամից» (ըստ իս կազմված է ինչպես գրբ.* նոյննետայն. *տե՛ս էջ 3202)։*
Հմշ. մէգէն, մէգընմէգ *«հանկարծ».*
մէկնէդ *«միասին».*
մէգ-մէգ *«մի առ մի. 2. երբեմն երբեմն».*
մէմոլ *«մէկէլ, դարձյալ» (իսկ* միգոլ *«մյուս»)։*
մէմալ աղէս *«մեկ էլ նայես, հանկարծ»։*

Մի՛ (արգելական)

Պլ. մի՛, մը՛ մ՛ *(բացի հետ, կից. օրինակ՝* մի՛ տար, մը՛ բերեր, մը՛սեր, մը՛ներ). *կարելի է նաև առանձին գործածել. օրինակ՝* մի՞ *(այսինքն* մի՛ ընեr):
Ննխ. մի:
Հմշ. մի՛. *օրինակ՝* մի՛ աշէլ, աշէլ մի՛, մի՛f աշէլ, աշէլ մի՛f *«մի նայիր...»։*

Մինակ

Պլ. մինագ, մինագը, մի՛նագուգ, մի՛ս-մինագ, մի՛ս-մինագուգ:
Ջղ. մինէկ:
Ագլ. մՠնՠկ:
Հմշ. մըննագ, մէն-մէնագ, մըն-մըննագ:

Մինչև

Պլ. ինչվան, իշվան, իշվան fի *«մինչև որ» (ըստ Թեոդիկի՝ կան և քիչ գործածական՝* մինչof or, մինչէf or, մինչիկ):
Ջղ. *ընգարձակ տե՛ս էջ 3085։*
Մրղ. ունչուն ախըr *«մինչև վերջը»։*
Հմշ. ննչուկ *«մինչև»*. ննչուկ or *«հազիվ»։*

Միշտ

Ննխ. միշտ, միշտ ճանապազ *«միշտ»։*
Ջղ. միշտ:

Մոտ

Պլ. մօդ, մօդը, մօդիգ, մօդէն, մօդօվ, մօդիգէն, մօդանց, մօդ մօդի *«մոտիկ»։*
Երև. մօտ *(տարբերվում է նախորդից, որ նշանակում է «ուշ-հեռու, մերձ»* (ճեռու *բառի հակառակն է. մինչդեռ Երև.* մօտ *նշանակում է թե՛ այդ և թե՛ «կողքին», որ Պլ. ասվում է «քովը»)։*
Ննխ. մօդը, մօդիգ, մօդիգէն:
Ջղ. մոտ, մոտիկ:
Հմշ. մօդ, մօդիգ, մօդիգվօն, մօդիգօնց:
Մօտիկ *կազմված է* -իկ *մասնիկով, ինչպես որ պրս. էլ ունենք* näzd *և* näzdik, *երկուսն էլ «մոտ» իմաստով։*

Ցետ

Պլ. յէդ *(օրինակ՝ յէդ էգավ, յէդ գնաց)*. յէ՛դ դարցի.
էդէվ, էդէվէն, էդէվէ էդէվ *«հետզհետե»*.
յէթկը, յէթկէն *«հետո»*.
յէ՛թկը յէ՛թկը *«վերջ ի վերջո»։*
Ննխ. ասկից էդէվ *«այսուհետև»*.
էդէվ *(թե՛ ժամանակի և թե՛ տեղի գաղափարով) «ետևը, հետո»*.
էդէվէն *«հետևից»*. էդէվ էդէվի *«հետզհետե»*.
էդէվառանց *«հետս հետս»* (<եռևոռանց).

յէբfէն (*Չլ.* յէտկէն *«հետո»*)։

Ջղ. յետ, յետնա, յետնէն *«հետև, հետևից»*.

յետfսին *«հետևում»* (յետ կոյս *ձևից*).

յետfսախան *«յետս յետս, ետևից»* (=*յետկոյսահան*).

յառնախան *«հետ հետ»*. *օրինակ՝* յետնախան է գ‘նում.

յետի *«ուշ»*.

յետկարախան, յետկարուց *«հեռվից»*. *օրինակ՝* յետկարուց *կամ* յետկարախան նայում էր:

Ագլ. յոււնոն, յոտով, յէ՛տօվ, *Ցղ.* յէ՛տfան, յէ՛տավ *«յետոյ»*.

յիտ *«հետ»*, յիտf *«հետ»*։

Հմշ. էդէվ, ոստիվէդէվ, էդվօնց.

յիդ, յէդ. *օրինակ՝* յէդ դարցի *«հետ դարձի՛ր»*.

յէտf, յէտկը, էտկը՛ն էտկըն, էտէտին *«հետի դեն, ետևը»*։

Ներս (=նէրfս)

Պլ. նէրս, նէրսը, նէրսէն, նէրսօf, նէրսանց, նէրսկէց, նէր-սէրը... նէրսէն-դուրսէն *«այլ ընդ այլոյ»*. *օրինակ՝* Նէրսէն դուրսէն մը՛ խօսիր). նէրսէ-նէրս *«շատ խորը, ներսում»*։

Նխ. Նէս, նէսը, նէսէն, նէսթի *«ներսի դին»*։

Ջղ. նե, ներսը, *Հնդ.* նեյ *«ներս, ներսում»*. ներսախան *«ներ-սից»*։

Ագլ. նիսկումուն *«ի ներքս»*։

Հմշ. նէս, նէսը, նէսը՛ն, նէսէրը, նիստնէս:

Նման

Ջղ. էսնման, էդնման, էննման *«այսպես, այդպես, այնպես»*։

Հմշ. տսմուն, տդմուն, ըմուն=*իմուն* (*Տր.* էսմօն, էդմօն, էմօն) *«այսպես, այդպես, այնպես»*։

Նոր

Պլ. Նօր *«այժմ միայն»*. *օրինակ՝* Նօր էգա. նօ՞ր դէսար. նօրէն *«դարձյալ»*. գէնէ նօրէն (*նույն նշանակությամբ*). նօրէն նօրէն *«դարձյալ և դարձյալ»*։

Երև. նոր, *բացի «այժմ միայն» իմաստից, նշանակում է նաև «հետո»*. *օրինակ՝* Կերակուրս եփեմ, նոր կգամ.— Անձրևը դադարի, նոր:

Նխ. նօրէն *«դարձյալ»*. նօր-նօրդէն *«նորից, ծայրից, դեռ նոր»* (*Թրք.* دن den *բացառականի մասնիկով*)։

Ջղ. նոր *«դեռ նոր»*, նորմէ *«նորից»*։

Հմշ. նօրը՛ն (<նօրէն) *«հենց նոր. 2. դարձյալ»*։

Նորէն անգամ

Նորէն անգամ *«դարձյալ». օրինակ՝* Նորէն անգամ աշխարհ գալու կամ վերստին ծնանելու պատեհութիւնը իր առջև միշտ ալ բաց պիտի գտնէ *(Ա. Տեր-Մկրտչյան, «Տարերք Հոգեգիտութեան, Ամերիկա, 1945, էջ 46)։*

Նորա, նրա

Այս ձևից են առաջացած՝

Ջղ. ընդուր, նուր *«այն պատճառով». օրինակ՝* Թոռ աս պախում, նուր ա ժանգոտում:

Համտ.

Մրղ. ատրմեն սօրա, ատրմեն ե'նթի, ատրմեն է'սթէ *«դրանից հետո».* նորմեն սօրա, նորմեն ենթի, նորմեն էսթէ *«այնուհետև, նրանից հետո»։*

Նour

Հմշ. նourը *«քիչ անգամ, հազվագյուտ կերպով»,* raremeut *օրինակ՝* նourը դէսնունf գու իրար:

Շատ

Պլ. շադ, շադ մը, շադգէգ, շադօնց *«վաղուց»,* շադօնցվընէ. շադ շադ *«առ առավելն».* շադը *«մանավանդ, հատկապես». օրինակ՝*

Շադը fեզի համար էգա:

Ննխ. շադ, շադգէգ *«բավական շատ»։*

Հմշ. շադ, շադ մը, fիչ մը շադ մը, շադ մը fիչ մը, շադէօդ *«շատկեկ, բավական շատ».* շատվընտ *«վաղուց».* շադ շադ *«առ առավելն».* շադը *«առավելապես, մանավանդ». օրինակ՝* Շադը fու հօմար էգա. շադվընօf *«վաղուց, շատ ժամանակ առաջ»։*

Շիտակ

Պլ. շիդագը *«ճշմարիտ սաած» (նաև ծղր. թրք.* դօղրուսու, է դօղրուսու. շիդդէ շիդականունը fրել չիյդէ:

Հմշ. շդագը, շդագը սատած *«ճշմարիտ սաած»։*

շիդգա շիդագ *«ճշտիվ»։*

Շուտ

Ննխ. շուդ, շուդ մը թէզ *«իսկույն»։*

Ջղ. շուտ *«շուտ, կանուխ»։*

Շուտով

Բլ. քուրկաՇ *«շուտով» (Նաթանյան, Արտօսր, 94)։*

Ոռ

Ջղ. վռռախաՇ *«Հետույքի վրա սողալով»։*

Որ

Կրկնությամբ նշանակում է «երբեմն». օրինակ՝

Պլ. վor զուfա, վor չի fաr *«երբեմն գալիս է, երբեմն չի գալիս»։*

Հմշ. օrի՞ *«ինչո՞ւ». օրինակ՝* օrի՞ էզաr:

Որմ

Ջղ. վorմախաՇ *«պատից վեր, պատն ի վեր»։*

Ուզել

Պլ. ուզէս չուզէս *«կամա ակամա» (նույնպես և թրք.* ister istemez*)։*

Ննխ. ուզէՇամ–չուզէՇամ, ուզէՇաս–չուզէՇաս *և այլն (իբր բայ խոնարհելով).*

Հմշ. ուզէս չուզէս *«կամա ակամա», որ և* ուզէս–ուզէս էօշ, ուզտ-չուզտ:

Ուժ

Ջղ. ուժժի *«բռնի, զորով»։*

Ուղղորդ

Ննխ. խօշք, խօշք oր, խօշք oր fի *«ճշմարիտ, իրոք, իրոք որ». խօշքմուղէՇ «արդարև, իսկապես, լուրջ կերպով (կարծում եմ կազմված է* սուտ–մուտէՇ *ձևի վրայից, որ* սուտ *բառի կրկնականն է)։*

Ջղ. ղoրդ՝մաՇց *«իրոք»։*

Ագլ. աղուրդ *«իսկապէս, ղորդ որ»։*

Ուշ

Պլ. ուշ, ուշգէգ *«բավական ուշ». օրինակ՝* Ուշ էգու, աՇուշ էգու *(առած)։*

Ննխ. ուշ, ուշգեգ:

Ջղ. տես յետի.

Հմշ. ուշ. *օրինակ՝* Ուշ մՇաց, ուշ *էգավ։*

Ուստի

Ջղ. նուստ *«ուստի, ո՞ր տեղից» (Գիլանենց, ժամանակագրթ., 99)։*

Տր. վո՞ւստի:

Ո՞ւր

Պլ. վո՞ւր *«ո՞ւր»։*

վո՞ւրդէխ, վօ՞րդէխ *«ո՞ւր»։*

բցռ. վո՞ւրգէ, վո՞ւրդէխէն, վօ՞րդէխէն.

վո՞ւրգէ վուր *«տարբերությունը մեծ է» (թրք. ևս նույն ձևով ասվում է* nerden nereye:

Ջղ. յուր *«ո՞ւր. 2. ինչո՞ւ»*.

վոշուր *«ո՛չ մի տեղ». օրինակ՝* վոշուր չի գնում:

Մրղ. յո՞ւր *(հնագույն բարբառով* վի՞ր) *«ո՞ւր»։*

Ագլ. նօ՞ր *«ո՞ւր»,* նի՞ւր *«ի՞նչպես»։*

Հմշ. նէ՞օր *«ո՞ւր». օրինակ՝* նէ՞օր գէշտաս *(շարժում).*

նիւրը՞ն *«ուրկե, ո՞րտեղից» (հին ձև).*

վօ՞յդէխ, վօ՞յդըխ *(ո՞ւր. դադարում).*

վո՞ւստի *կամ* վո՞ւյ դէղէն *Տր.*

վօ՞յդըխըն *«ո՞րտեղից»։*

Չափ

Պլ. ասշափ, ատշափ, անշափ, ի՞նշշափ:

Ջղ. էսշանf, էտշանf, էնշանf:

Ագլ. շունf *(թեև իբր գոյական լինում է* շօփ):

Չէ

Պլ. չէ, չէ fի *«ո՛չ թե».* չէ-նէ *«թե ոչ, ապա թե ոչ»։*

Ննխ. չէ:

Մրղ. չէ:

Ագլ. չէ *«ոչ».* չէ օր չէ *«ամհննին ոչ»։*

Հմշ. չէ, օչ, չm *օրինակ՝* չm fի յէս *«ո՛չ թե միայն ես».* օ՛չ էգավ, օչ կնաց:

Պան

Պլ. մէզ բանէգէն *«մի քիչ հետո»։*

Ննխ. բամալ (=պան մի այլ) *«մի քիչ առաջ». օրինակ՝* Բամալ նօս էր:

Պզտիկ

Պլ. բըզդիգուց *«ի մանկութենէ անտի»։*

Նխ. բըգդիգուց, բիգդիգուց:
Ջղ. միստիկ, մստիկ *«մի քիչ»։*
Հմշ. (այլ հոմանիշով) բիչիգիֆը՛ն *(Թրք.* ایکن iken *«միջոցին» բառով),* բիչիգուց, բիչիգվընու:

Պէս, այսպէս, այդպէս, այնպէս (տե՛ս ցեղ)

Պլ. ասանգ, սդանգ, անանգ *«այսպես, այդպես, այնպես».*
ասանգօվ, աղանգօվ, սնանգօվ.
անանգ ա՛ անանգ, անանգ ա՛ *«այլևս եղածը եղավ, ուրիշ ճար չկա»։*
ասպէս, ատպէս, անբէս.
սանգ, դանգ, նանգ.
սաբէս, դաբէս, նաբէս:
Նխ. ասպէս, ասպէսնագ *«այսպես».* սաբէս, սաբէսնագ.
իդբէս, իդիբէս, իդբէսնագ.
իսպէս, սպէս, սիբէս, սիբէսնակ.
ինբէս, ինբէսնագ:
Ջղ. ինչպէս, էսպէս, է՛դպէս, էնպէս. *տե՛ս և* նման:
Ագլ. ա՛նմաս *«այնպես», բայց ունենք նաև Ագլ.* ա՛նգի, նոտի. *Ցղ.* ընգի՛, *Ղրբ.* ... *«այնպես», Ագլ.* ա՛նդի մույն *«այնպե՞ս մը», որոնց ծագումն ինձ անհայտ է։ Սրանց հետ և՝ Ագլ.* ա՛ստի, հոտի, ա՛սմաս, *Ցղ.* բստի *«այսպես», Ագլ.* ա՛տի, դոտի, ա՛տմաս, *Ցղ.* բտի՛ *«այդպես» (հող ստանալու ժամանակ լինում է* ատինըն *«այդպիսին».—* ո՛ւնչպէս, ո՛ւնչմաս, ո՛ւոտի *«ինչպես» (վերջին վանկը նույն է* աս–դի, ան–դի*)։*
Հմշ. իսուբէս, իդուբէս, ընուբէս, ոսուբէս, ոդուբէս, ինուբէս *«այսպես, այդպես, այնպես»։*

Պոչ

Ջղ. պոչին *«ծայրին». օրինակ՝* Աթոռին պոչին նստէլ ա:
Պլ. բօչ–բօչի:

Սիրտ

Պլ. սրդանց *«ի սրտե»։*
Նխ. սըրդանց:
Հմշ. սըյդվօնց:

Վազել

Պլ. վազէվազ, վազնիվազը, վազելով *«շտապով»։*

Վաղ

Ջղ. վաղուց=*Հնդ.* վաղէց *«շատոնց»։*
Մրղ. վուղից *«շատոնց»։*

Վաղը

Պլ. վաղը *«էգուց»,* վաղվան, վաղվընէ, վաղվընէ թէզը չիճա *«հենց վաղվանից»,* վաղը չէ մէգալ օր:
Ննխ. վաղը:
Մրղ. վողո *«վաղը, էգուց».* ճոպվողո *(=նրա վաղը) «հետևյալ օրը»։*

Վայr

Պլ. վար, վարը, վարէն, վարօֆ. վարդանֆ *«վարի կողմերը»։*
Ննխ. վար, վարը, վարէն:
Ագլ. վէր:
Հմշ. վոր, վորը՛ն, վորյունքը, վորունքը՛ն, վորունքմը՛ն:

Վեr

Պլ. վէր, վէրը, վէրէն, վէրօֆ, վէրէն ի վար:
Ննխ. վէր, վէրը, վէրէն:
Ջղ. դավէր *«դեպի վեր»,* դավերախան *«վերևից»,* դավերզման *«վերի կողմը»։*
Ագլ. վիր:
Հմշ. վիր, վիրը՛ն, վիրունֆը, վիրունֆը՛ն, վիրունֆմը՛ն. *սրանից նաև՝* բսիվիր, իդիվիր. իճիվիր *կամ* ըճիվիր *«այստեղից դեպի վերև...»։*

Վեrջ

Ննխ. վէրշը, վէրշէն, վէրշադէն *«հետո, վերջը»։*

Վrայ

Պլ. վրա, վրան, վրայէն, վրայով, վրայօֆ *«մասին»։*
Ննխ.
վրա անցած *«չափազանց».* *օրինակ՝* Վրա անցած ճամար-ցազ *մաշթ էր.* վրա գուլխու *«իսկույն, հանկարծ»։*
Ջղ. վերա *«վրա»,* վերնից *«վրայից»։*
Հմշ. վրա, վրըն *«վրան».* վրանը՛ն *«վրայից».* վրայունֆ, վրա-նունֆ, վրայունֆը՛ն, վրանունֆը՛ն. *օրինակ՝* Վրանը՛ն ճեդվա *«վրայից ցատկիր»։*

Տակ

Պլ. դագը, դագէն, դագօվը, դագնիվրա, դագօվ-վրայօվ, դագէ դագ:

Ջղ. տակ, տակը, տակին, տակախան *«տակից»*։

Հմշ. դագը, դագը՛ն, դագունքը, դագունքը՛ն, դագունքնուն *«տակերից»*։

Տարի

Պլ. դարվէդարի *«տարուց տարի»*։

Ջղ. տարէցտարի *«ամ յամէ»*։

Հմշ. դարվոդարի:

Տեղ

Պլ. ասդէղ, ատտէղ, անդէղ.

սադէղ, դադէղ, նադէղ.

սըդէղ, դըդէղ, նըդէղ.

սասըդէղը, դադըդէղը, նանըդէղը.

սընդէղ, սընդէղէն.

սասընդէղը, դադընդէղը, նանընդէղը.

սասընդէղները, դադընդէղնէրէն.

սադէղէն, սըդէղէն *և այլն, և այլն*։

Նաև պարզապես սկէ, դկէ, նկէ:

դէղ, դէղը *«փոխանակ»*. *օրինակ՝* Դէղը ի՞նչ դամ:
փոխարեն

դէղնիզդէօf *«մանրամասն»*.

դէղ դէղ, դէղէ դէղ *«տեղից տեղ»*.

ամմէն դէղ, fանի մը դէղ:

Նոխ. դէղօվ *«մանրամասն»*.

իդդէղ, ինդէղ, սիդէղը, սյադէղը.

սիդէղէն, սյադիղէն.

վըդէ *«ուր»*, վըդէյէն, վըդէ՞խ, վըդէխէն *«ո՞ւր, ո՞րտեղից»*։

Ջղ. էդ՚դեղ, ստեղ, տեղ *«այդտեղ»*.

ընդեղ *«այնտեղ»*, սդեղ *«այստեղ»*.

վո՛րտեղ, վո՛րդեղ *«ո՞ւր»*։

Մրղ. էնթի, էնթէ, էնթիխ, է՛նթըխ, էնթխտ, էնթխէն *«այնտեղ, այնտեղից» (շարժում և դադարում նույն են)*.

էսթի, էսթէ, էսթիխ, է՛սթըխ, էսթխտ, էսթխէն *«այստեղ, այստեղից» (շարժում և դադարում նույն են)*.

էստէնթի *«այս ու այն տեղ, հոս-հոն»*.

մէտէղ *«միասին»*. ի՞շտէղ *«ո՞ւր, ի՞նչտեղ»*.
տաղա, տաղանա *«այստեղ»*. տաղանայը՛ *«այստեղի»*, տաղանայէն *«այստեղից»*.
նաղա, նաղանա *«այնտեղ»*, նաղանայը՛ *«այնտեղի»*, նաղանայէն *«այնտեղից»* (*այս երկուսը առաջացած են կրճատմամբ* այդ տեղը, այն տեղը *ձևերից. իսկ ավելի կրճատ ձևերն են՝*
տր *«այստեղ, այդտեղ»*, տոյի *«այստեղի, այդտեղի»*, նո, [ինդո *«այնտեղ»*, նոյի *«այնտեղի»*, վուրտէն *«ո՞րտեղից»*, նէն (<*նոէն*), նէնան *«այնտեղից»*. *տե՛ս և* ընդ- այն.
Նույն է նաև նոյին *«այն ժամանակ»*։
Ագլ. անդէ՛ղ, ընդէղ, նըտէ՛ղ *«այնտեղ»*.
աստէ՛ղ, ըստէ՛ղ, եըտէ՛ղ *«այստեղ»*.
ատէ՛ղ, ըտէ՛ղ, դըտէղ *«այդտեղ»*.
դըտէ՛ղուց, դըտէ՛ղոնց, ըտէղուց *«այդտեղից»*.
ընդէ՛ղոնց, նըտէ՛ղուց, ընդէ՛ղուց, նըտէ՛ղոնց *«այնտեղից»*.
ըստէ՛ղոնց, եըտէ՛ղուց, ըստէ՛ղուց, եըտէ՛ղոնց *«այստեղից»*.
ըշտէ՛ղոնց, ըշտէ՛ղուց *«ո՞րտեղից»*.
մո՛ւյնտեղ *«միասին, միատեղ»*.
ո՞ւնշտէղ, ըշտէ՞ղ. *Ցղ.* ի՞նշտէղ, իշտէղ, ըշտէղ *«ի՛նչտեղ, ուր»*։
Հմշ. իսադէղը, իդադէղը, ինադէղը, եօզախստէղ, եօզախոտէղ, եուեաինդէղ. *տե՛ս և էջ 3236 բ—գ*։
դէղ, դէղնիդէղof, դէղնուդէղը, դէղ դէղ, վէր մը դէղ *«որոշ տեղեր»*։
Այտն. 11 կա տեղաց *ձևը (իբր եզ. սեռ.), որից էլ* այս տեղաց, այդ տեղաց, այն տեղաց, եոս տեղաց, եոդ տեղաց, եոն տեղաց, ո՞ր տեղաց, ո՞ւր տեղաց, ամէն տեղաց, եեռու տեղաց, մօտ տեղաց, մէջ տեղաց:

Տոտիկ

Պլ. դօդիգ դօդիգ *«մանրաքայլ»*։
Հմշ. դօդիգ դօդիգ:

Ցած

Երև. ցած, ցածր *«դեպի ներքև». օրինակ՝* Ցածր իջավ:

Ջղ. ցածազման *«ներքևի՝ վարի կողմը»։*

Ցեղ *(տե՛ս* պէս, ենեց*)*

Մրղ. ընցա, ընցը *«այնպես».*
   ի՞նչօխ, ը՞նչօխ *«ի՞նչպէս»։*

Հմշ. ի՞նդսօ, ի՞նցօ *«ի՞նչպես». բաի՞նցօ «այո՛, իհարկե,* si !*».*
   նաև ի՞նչէ *(Մալա). առաջանում է Թրք.* soy *«ցեղ, կերպ» բառի բարդությամբ և ցույց է տալիս որ Ախց.* ի՞նչխ *բառն էլ ծագած է* ի՞նչյեղ *ձևից։*

Ցերեկ

Պլ. gorէցին
Հմշ. gorիցին } *«ցերեկին». օրինակ՝— էգավ։*

Պլ. gorէցնէրը *«ամեն ցերեկ». օրինակ՝* Յorէցնէրը գը ճնանա՞ս:

Փշուր, փսոր «փշուր»

Պլ. փսօր մը, փսօր փսօր *«քիչ քիչ»։*
Հմշ. փշէrf մը, փսէr մը *«մի փշուր, մի քիչ»։*

Փոխ

Պլ. փօխն ի փօխը *«փոխ առ փոխ, հերթով»։*
Ննխ. փօխփօխ *«փոփոխակի»։*
Հմշ. փօխնիփօխ:

Փոfr

Ջղ. փոfr *«քիչ, մի քիչ». օրինակ՝* գ'նա փոfr խաղա. Շատ փոfr ապrէց. Շատ ու փոfr *«քիչ-շատ»։*

Քան

Պլ. ասfան, առfան, անfան.
   ի՞նչfան, ի՞չfան.
   fանի՞, fանի՞ի՞ *«ի՞նչ գնով». օրինակ՝* fանիի՞ առիr:
Ննխ. ի՛նչfան. fանի՞.
   fանի՞ մէջ *«քանիցս», ինչչա՞փ ժամանակ.*
   (Թրգմ. Թրք. neče bir *ձևից)։*
Ջղ. էսfան, էդ'fան, էնfան.
   fանի՞ *«քանի»։*
Մրղ. էսfան, էթfան, էնfան.
   ի՞չfան *«ի՞նչքան»,* f'ոնի՞ *«քանի՞»։*
Ագլ. ա'նfան, նօ'կfան *«այնքան».*
   ա'սfան, նօ'կfան *«այսքան»։*

ս'տfան, դօ'կfան *«այդքան»*։
ո'ւնշfան, *Յղ.* ի'նշfան, ի'շfան.
fա'նի, fնա', *Յղ.* fնէ' *«քանի՞ է»*։
Հմշ. տ̄սfան, տ̄տfան, ընfան.
fօնի՞. *օրինակ՝* Քօնու զույօն *«քանի՞ կտան»*։

Քաշ

*(*վեր և վայր>վէր *համանուն բառերը իրար հետ չշփոթելու համար հնարված մի բառ է, ինչպես և* ցած, ցածր*)*։
Ջղ. fաշ *«դեպի վայր».* fաշախան *«ցածից»,* fաշգման *«վարի կողմը»*։
Ղրբ. fաշ, fաշղօլ *«դեպի վայր»*։
Ագլ. fօ'շանց *«ցածրի կողմից»*։

Քիչ «սակավ»

Պլ. fիչ, fիչ մը, fիչիգ մը, fիչ fիչ, fիչիգ fիչիգ, fիչիչիգ մը, fիչ շադ, fիչէն fիչ *«առ նվազն».*
(ըստ Թեոդիկի կա նաև fիչիտիկ, fիչիլիկ*)*։
Ննխ. fիչ, fիչ մը, fիչմէն *«քիչ հետո»*։
Մրղ. մէfիչ. *կրճատված՝* մէշ *«մի քիչ».*
(հոմանիշ ձևեր են՝ մէ պծառ, մէ բալա, մէ թիպ'տ̄:
Հմշ. fիչ, fիչ, fիչիգ, fիչիգ մը, fիչ մը, fիչ շադ, fիչ մը շադ մը, շադ մը fիչ մը:

Քով «կողքին»

(Գտնվում է միայն արևմտահայ բարբառներում)
Պլ. fօվ, fօվը, fօվէն, fօվէfօվ *«կողք-կողքի»,* fօվընդի, fօվանց, fօվնիվէր, fօվէրօվը, fօվդանf *«քովերը».* fօվ fօվի *«կողք-կողքի»*։
Ննխ. fօվը, fօվէ fօվ. fօվի վrա *«հարևանցի, առ երեսս»*։
Հմշ. fօվ, fօվտ̄fօվ, fօվը'ն, fօվունfը, fօվնիվտ̄ր *«նրա մոտ դեպի վար».* fօվնիվէr *«քովնիվեր դեպի նրա քով».* fօվնինտուս *«դեպի նրա կողմը»*։

Օr

Պլ. անօrը, անօrէrը.
ասօr, աս օrէrը, աս օrէrս.
օrէ օr, օr օrի, օr օrի վrա.
օrէ Երքալ-գալ *(երեկոյին չմնալով).*
օr մը օrանց *(գրբ.* օr մի յաւուրց*). (ըստ Թեոդիկի նաև* օr մը զօrանց*).*

օր մը չէ նէ օր մը «յաւուր միում».

մէգալօր, մէգալնօրը «մյուս օրը» (թե՛ առանդ և թե՛ վաղանդ)։

Նխ. անօրնէրը «յաւուրսն յայնոսիկ».

ասօր, ասօրէրը, աս օրէրս, օրէ օր «օրից օր».

էլլօր «վաղը չէ մյուս օր, վաղանդ».

է՛մին օրը «այսօրվանից առաջ կամ հետո 4-րդ օրը».

ընօր «այն օրը», ըսօր, սօր «այսօր».

հէֆսի օրը «հետևյալ օրը, հաչօրդ օրը».

մկէլ օրը «առանդ».

յօրէցօր «օրեցօր»։

Մրղ. մէկօլօրա, մօկօլօրա «մյուս օրը».

օսօր «այսօր»։

Ագլ. ա՛սար «այսօր», ա՛սըրան, ա՛սրան «այսօրվա».

մկէ՛լ օրը «անցյալ օր»։

Համշ. տսօր, տդօրը, ընօրը, տսօրէրը և այլն.

այչի օրը, էդօյտ «նախորդ օրը» (Բիւրակն, 1899, էջ 604).

մէգ·տլօր, միգ·տլօր, օրտ օր.

օրէցօր, օր մը օրէց, մէգ օր մը.

գօրը «ցերեկով»։

Կեսարիայի բարբառում կան նաև հետևյալ մակբայները.

անանց «ահավասիկ».

ընցա «այսպես».

ըննա «այնպես».

քաման «չէ՞ որ» կամ «ինչպես որ».

ինչամօր «մինչև հոն».

ինչումօր «մինչև որ».

ինչա՞ց «ինչպե՞ս».

ինտէս, ինտէդ, ինտէն «այսպես, այդպես, այնպես».

խէչը «քովը».

հանտան «հետո».

հուսա, հուտա, հունա «այստեղ, այդտեղ, այնտեղ» (նաև Պլ.).

միատր «առանձին».

նեֆ «ներսը».

պէյմէկ «քիչ առաջ».

տինանց, տինադ, տինան «ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ»։

օրի՞ *«ինչո՞ւ համար»*.

ինո՞ւ *«ինչո՞ւ համար»*.

ինա՞ց, ինչա՞ց *«ի՞նչպես»*։

Մակբայների այս ցուցակը կարող է հետզհետե ավելի ճոխանալ, քանի ավելացնենք նրանց վրա նորանոր բարբառներ։ Բայց ինչքան էլ երկար լինի այդ ցուցակը, բարբառների մակբայները կարելի է բաժանել հետևյալ 5 կարգի.

1. Գրաբարից մնացած մակբայներ, որոնք անփոփոխ կամ թեթև ձայնական փոփոխությամբ շարունակում են իրենց գոյությունը։ Այսպես են՝ ամենևին, այլ (ալ, էլ), առաջ (յառաջ), առաւօտ,˙ բնաւին, դեռ, եռանդ, երբ, երէկ, է՞ր, ի՞մ, իսկ ճերու, մէջ, մի՛, միշտ մօտ, շատ *և այլն*։

Մակբայների մեծագույն մասը այս խմբին է պատկանում։

2. Միջին հայերենից մնացած մակբայներ, նույնպես համարյա անփոփոխ կամ թեթև ձայնական փոփոխությամբ. ինչպես՝ դէմ, ի՞նչ, ինչո՞ւ, էգուց, լոկ, խիստ, ճենց, ճետ, ճիմայ, ճոս, ճոդ, ճոն, չափ, fիչ, fով *և այլն*։

Ընդհանրապես կարելի է ասել, որ ամեն մի գրաբար մակբայ անցել է նախ միջին հայերենին և եթե այնտեղ չի մաշվել, նոր միայն անցել է բարբառներին։ Այսպես գրբ. այգուցն *գտնում ենք ՄՀյ.* եգուց, յեգուց *ձևով (Karst, 254), ապա Երև.* էգուց: *Գրբ.* չափ *նախ դառնալով անեզական* չափf, *ապա ՄՀյ.* չաf, *տվել է Ջղ.* էսչաճf, էտչաճf, էնչաճf *և վերջապես* ա *ձայնավորը ռնգականի մոտ ըստ օրինի դառնալով* ու, *ստացվել է Ագլ.* չուճf:

3. Գրաբարի այն մակբայները, որոնք ունեին առ, ընդ, զ, ի, յ *նախդիրները, մի ժամանակ միջին հայերենում այդ նախդիրները պահելուց հետո, ուշ շրջանում կորցրին դրանք և այգ ձևի տակ անցան բարբառներին. օրինակ՝* ընդդէմ>դէմ, զատ ի>զատ, ի ճոս. ի ճոդ, ի ճոն>ճոս, ճոդ, ճոն, ի ներfս, ի ներս>ներս, ի լմաճ (Karst, *254*)>լման, յիրաւի>իրաւ *և այլն*։

4. Գրաբար մակբայների մի մասն այնքան է փոխված և փոփոխված, որ գրեթե անճանաչելի է դարձած և նրանց նախաձևը գտնելու համար ձայնաբանական քննությունն անհրաժեշտ է։ Մենք այս կարգի բառերը հիշել կամ մեկնել ենք իրենց տեղում, ուստի պետք չկա այստեղ կրկնելու։ Միայն պարտք ենք համարում հիշել նրանցից մի քանիսը, ավելի մանրամասն քննության համար ընթերցողին ուղարկելով նույն տեղերը։ Այսպես գրբ. ընդ այս, ընդ այդ, ընդ այն, ընդ որ *նախ կազմելով մի բառ և ապա* ըն *մասը*

կորցնելով բաղաձայնից առաջ՝ դարձել են դէս, դէդ, դէն, դօր *(Երև., Ջղ., Ագլ.). այլուր կորցնելով* դ *բաղաձայնը՝ դարձել են Տր.* նէս, նէդ, նէն, *Հմշ.* նոս, նոդ, նըն:— *Գրբ.* աստի *«այստեղից» դառնում է* ոստի, ասկէ, սկէ:— *Գրբ.* ուղղորդ *դառնում է* աղուրդ, ղորդ, խորք, խօշք:— *Գրբ.* պէս *(որից* այսպէս, այդպէս, այնպէս*). բացի սրանից ստանում է* -մաս *ձևը, ապա փոխանակվելով* նման (ման, մուն, մօն), ցեղ, *նույնիսկ Թրք.* soy *բառով՝ տալիս է բազմաղան ձևեր։— Գրբ.* ի վայր *բառը* այ> է *ձայնափոխության պատճառով համանուն դուրս գալով* վեր *բառի հետ, Ուռ ճյուղի բարբառներում ստիպվել են փոխանակել* ցած, ֆաշ, *նույնիսկ* ֆօլ *«անտառ» բառով։—* Կողմ, կողմն *բառը ստացել է* կման, գման, կումուն *ձևերը (եթե ճիշտ է այս մեկնությունս) և տվել է* նիսկումուն *«ներս»,* ցածագման *«վար» և այլն ձևերը։— Իսկ* աճաւասիկ, աճաւադիկ, աճաւանիկ *բառերը այնքան են ձևափոխվել, որ հասել են* ճէս, ճրէս, սկօ *անճանաչելի ձևերին։*

5. Կան մակբայներ էլ, որոնք կազմված են բարբառներում գրաբար արմատների վրայից. այսպես են՝ անդադրում, ատեն (=ատեան), բէրանճիվայր, գաղտուկ, ետքը (=յետ), դարիվայր, դի (ասդին, անդդին, անդին), դիր *«անգամ»,* դուրս *(գրբ.* ի դուրս *«դուռը», փոխ.* արտաֆս, *ինչպես պրս.* ba-dar*),* ծայր, կամկար, կանուխ (=կանխաւ), կերպ, կէս, կուշտ, կտոր, կողաճան, մէջֆաճան, որմաճան, ճբրիֆ, մաշնակ (=մարդանակ), մեծ *«շատ»,* մեկն *«շիտակ»,* նոր *«այժմ, հետո»,* ճօւր *«հազվադեպ»,* ուժ, ցեղ, պամալ (պաճ մի այլ), ժիր *«միշտ»,* կամաց, ուշ (<յուշ), պոչ, տակ գեղվրայ, կոմօր (կամէր քէ), պզտիկ=պստիկ *(պրս.* pest ցած*).* ֆաշ=ֆարշ *«ցած» և մինչև իսկ բառեր, որոնց ծագումը անհայտ է. ինչպես՝* արտորալ, շիտակ, ճա *«այո՛»,* մա *(Ագլ.),* մզդոստ *(Ջղ.* ընդոստ?*). ագլ.* ճրդէօ *«այժմ, հիմա»։*

Ձմեկնված բառերի շարքումն են ճոս, ճոդ, ճոն, *որոնք սովորական են միջին հայերենում և արդի արևմտահայ բարբառներում, բայց չկան Ուռ ճյուղի բարբառներում։*

Այս առթիվ կարևոր է անել հետևյալ դիտողությունը.

Այս տեղական մակբայները ամեն լեզվի մեջ էլ կարելի է բացատրել ցուցականի և «տեղ» գոյականի հարադրությամբ. բայց այդ ձևերը բավական երկար լինելով՝ ամեն տեղ էլ ստեղծվել են կարճ մակբայներ. ինչպես՝ գրբ. աստ, անդ *փոխանակ ասելու* յայսմ վայրի, յայսմ տեղւոջ, յայդմ վայրի, յայդմ տեղւոջ, յայնմ վայրի, յայնմ տեղւոջ *և այլն։ Նմանապես՝*

Ֆրանս. ici *փոխ.* dans cet endroit-ci.
la » „ „ „ -la
Ռուս. здесь » в этом месте.
Գերմ. hier » in diesem ort.
dort » „ jenem „
Անգլ. here » in this place.
there » „ that „
Իտալ. qui » in questo luogo.
Թրք. burada » bu yerde.

Արևմտահայ բարբառներն էլ ասում են հոս, հոդ, հոն *փոխ.* աս տեղ, ադ տեղ, ան տեղ. *միայն արևելահայ բարբառներն են, որ ասում են երկարաբանությամբ* էստեղ, էդտեղ, էնտեղ.— *վրացին էլ ունի* աք, մանգ, իք *կրճատ ձևերը, թեև երկար ձևերն էլ կարող է գործածել։ Միայն պարսկերենն է, որ թեև կարող է ասել* aydar *«աստ», բայց սովորական չէ և նրա փոխարեն ասում են* īn-jā *«այստեղ»,* ān-jā *«այնտեղ», որոնց նմանությամբ էլ կազմվել են Հայերեն* այստեղ, այդտեղ, այնտեղ *ձևերը (տե՛ս Հայոց լեզ. պատմ., Ա, 314)։*

Ըստ կազմության՝ բարբառների մակբայները 5 տեսակ են.

1. Գոյականից կազմված մակբայներ. ինչպես՝ Պլ. քիշերանց, սրտանց, ծարէծար, տեղնիտեղը *և այլն.— Ննխ.* քշերով, օրէ օր, ամսէ ամիս, ծարէ ծար, տեղով, սրտանց *և այլն։—*

2. Ածականից կազմված մակբայներ. ինչպես՝ գաղտուկ, նոր, նորէն, ամուր, անդադրում, խօշքմուտէն *«ճշմարիտ» և այլն։*

3. Բայից կազմված մակբայներ. ինչպես՝ ուզենամ-չուզենամ, ըսելն իքէն *«այդ միջոցին»,* էրթալով *«հետզհետե»,* չըլլա քի *«մի՛ գուցե»,* ըլլա քի ըլլա *«թերևս»,* ուզես-չուզես *«ակամա»,* վազէվազ, գիտնալս *«կարծեմ թե, կարծյոք»,* ըլլա ըլլա *«առ առավելն»,* ցքէ որ *«բացի սրանից»,* վրա անցած *«չափազանց»,* էղավ արթըխ *«էլ բավական է, հերի՛ք»։*

4. Նախադրություններից կազմված մակբայներ. ինչպես՝ տակը, տակից=տակէն, մէջը, միջից=մէջէն, միջով=մէջով, քովը, քովէն, քովէքով *և այլն։*

5. Բուն մակբայներ. ինչպես՝ չէ, նա, մի՛, խիստ, սկի, նոս *և այլն։*

Ինչպես վերևում ասացինք, բարբառներումն էլ մակբայները

կարող են կազմվել կրկնությամբ։ Կրկնությունը կարող է լինել՝

1. Անփոփոխ հարադրությամբ. ինչպես՝

օտկ–օտկ վնr էլա վէrտիվէնէն *(սանդուղքից)*։
օխն–օխն թաղեցին. ատեն–ատեն կ'երևայ.
մէկիկ–մէկիկ fաշեցի *(կշռեցի)*. կամաց կամաց.
շատ–շատ *«առ առավելն»*, տեղ տեղ, fիչ fիչ:

2. Առաջինը դնելով բացառական հոլովով, իսկ երկրորդը նախդիրով հայցական, որ ձևով նույն է ուղղականի հետ. ինչպես՝

ամսէ ամիս, տունէ տուն, օrէ օr, ծառէ ծառ, տեղէ տեղ, վրայէ վրա, մէջէ մէջ, fովէ fով, տակէ տակ, ներսէ ներս, ճեռուէն հեռուե ճեռու, ետևէ ետև, բերնէ բերան, դիմացէ դիմաց, շիտկէ շիտակ, պատէ պատ, fիչէն fիչ *«առնվազն»*։

3. Առաջինը դնելով ուղղական հոլովով, երկրորդը սեռական-տրական հոլովաձևով. ինչպես՝ դէմ դէմի, աչf աչfի, բերան բերնի, ետև ետևի, երես երեսի, ծառ ծառի *(ծայր ծայրի)*, ծունկ ծունկի, ձեռf ձեռfի, մէջ մէջի, մօտ մօտի, պոչ պոչի, fիթ fիթի, fով fովի, օr օrի:

Առանձին ձև ունեն կէսվակէս, տարվէտարի=տարուց տարի:

Բարբառներում մակբայ կազմելու ուրիշ ձևեր են՝

1. Անորոշ դերբայի վրա դնելով բացառականի -էն *մասնիկը. ինչպես՝* լալէն, վազելէն, fսվելէն, ճազալէն, *Հմշ.* պգէլը՛ն, թոչելը՛ն *«վազելով» և այլն. օրինակ՝*

էrկան fաճանայ,
Կարդալէն կ'երթայ:

(Հանելուկ—գետ)։

Թեև Երևանի բարբառը բացառականի համար չունի -էն, *այլ* -ից, *բայց այս դեպքում նա էլ դնում է* -էն. *ինչպես՝*

խօսէլէն էթում ա *«խոսելով գնում է»*։

2. Անորոշ դերբայի վրա դնելով գործիականի -ով *մասնիկը. ինչպես՝*

Ասչափ ճամփան fալէլօ՞վ պիտի էrթանf.

Նույնը նաև Երև. խօսելով է գնում:

3. Այս երկու ձևերն էլ կարելի է գործածել նաև գոյականով և ածականով. ինչպես՝

Պլ. Ցածէն երգէ=*Երև.* Ցածրից երգի'r.
Պլ. Շէնfօվ–շնօrfով խօսիլ գիտէ.
Պլ. Օտfօ՞վ պիտի էrթանf, չէնէ թռանվայով:

4. Նոր-Նախիջևանի բարբառում մակբայ կարելի է կազմել նաև

բայերի անցյալ դերբայի վրա դնելով -ով գործիականի մասնիկը. ինչպես՝ տեսածովս «հենց որ տեսա», տեսածովը «հենց որ տեսավ»։

5. Զարմանալի ձև է Պլ. զօռովէն «բռնի, բռնաբար, դժվարավ». օրինակ՝ Զօռովէն խալըսեցայ ձեռfէն.— կազմված է պրս. زور zor «բռնություն» բառից՝ իր վրա վերցնելով հայերենի թե՛ գործիական ով և թե՛ բացառական -էն մասնիկները միանգամայն ։ Այս տարօրինակ երևույթը կարծում եմ կարելի է բացատրել հետևյալ ձևով։ Բարբառներում կա ճօրով «հազիվ, դժվարավ, ·զօռով» բառը, որ ըստ իս կազմված է արաբ. جور javr «բռնություն, հարստահարություն» բառից՝ հյ. գրծ. -ով մասնիկով (տե՛ս Գվռ. բառ., 731)։ Այնուհետև մասնիկը այնպես է միացել բառին, որ մի ամբողջություն է կազմել։ Այդ վիճակում կազմվել է նրանից ճօրովցնել Լհ. «բռնադատել, ստիպել» և ճօրովէն Ննխ., Պլ. «հազիվ, դժվարավ»։ Վերջինիս օրինակով էլ կազմվել է նրանից զօռովէն:

6. Կան բառեր, որոնց հոգնակին գործածվում է իբր մակբայ, ավելացնելով նրանց վրա ս (եթե ներկայի մասին է խոսքը) և կամ ը (եթե անցյալի մասին է)։ Օրինակ՝ անցածները, օrեru, առաջները, ետfերը և այլն. ինչպես՝ Առաջները կը ծխէի, ետfերը այդ սովորութեան վերջ տուի: Ձևով սրանք հոգ. ուղ. հոլով են, բայց պետք է առնել ներգոյականի իմաստով, ինչպես ունեն ուրիշ լեզուներ. ինչպես՝ ֆրանս. dans ces derniers jours, թրք. bu günlerde և այլն։ Արևելյան գրականում այդ կարգի բառերը գործածական են երկու ձևով էլ. այսպես՝ անցյալները կամ անցյալներում, վերջերը, վերջերu կամ վերջերfում, ճօրերu, մօտերu (ասվում է ժամանակի համար. բայց նաև տեղի համար էլ՝ մօտերfում, էս մօտերfում և այլն)։

7. Ածականը մակբայ դարձած ժամանակ, իմաստի մեղմության համար, արևմտյան բարբառներում ստանում է երբեմն մը անորոշ հոդը, որ իմաստով համապատասխանում է գրաբար իմն ձևին. ինչպես՝ շատ մը, շուտ մը, fիչ մը, fիչիկ մը, կամաց մը, կամացուկ մը, աղէկ մը, շնորհfով մը, նաև գոյականներ՝ եթե ածականի իմաստ ունեն. ինչպես՝ կտոր մը, կտորճիկ մը, փսոր մը, որոնք բոլոր նշանակում են «քիչ մը». օրինակ՝ Կտորճիկ մը սպասէ. Փսոր մը կեր. Կտոր մը fիչ եփէիր և այլն։ Սրանց հետ կան նաև խէլ մը, էզ մը, որոնք թրքական ծագում ունեն, ինչպես կտեսնենք։ Այս բոլորը պատկանում են արևմտյան հայերենին. բայց արևելյան հայերենն էլ ասում է՝ մի լաւ կերայ; մի կուշտ խմեցի, մի fիչ տրոrեցի և այլն։

Մակբայական ասույթյունները հաճախ գործածությամբ իրենց բուն նշանակությունը կորցրած են. օրինակ՝ Աստուած գիտէ «չգիտեմ» իմաստով գործածված է նույնիսկ Աստված բառի հետ, ինչպես՝ Ի մարդոյ եղև եթէ յԱստուծոյ՝ Աստված գիտե. Վրք. Հրց. Ա, 96։

14. ԹՐՔԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Թեև լեզվաբանության մեջ կարծիք կա, որ նախադրություն, մակբայ և շաղկապ փոխ չեն առնվում լեզվից լեզու, բայց այդ ճիշտ չէ մեր լեզվի համար։ Գրաբարը շատ քիչ փոխառություններ ունի այս կարգի բառերից, բայց արդի բարբառները ընդհակառակը լիքն են այսպիսի փոխառություններով։ Պատճառը, իհարկե, ժողովուրդների կողք-կողքի կենակցությունն է։ Մեր բարբառների մեջ առաջին տեղը բռնում են թրքերենից փոխառյալ մակբայները, նրանց հետ հաշվելով պարսկերենից ու արաբերենից փոխառյալ ձևերը, որոնք ընդհանրապես թուրքերենի միջոցով են անցել մեզ։ Նոր-Ջուղայի բարբառում կան, իհարկե, զուտ պարսկերեն փոխառություններ, բայց ես այստեղ նրանք էլ միացնում եմ թուրքական փոխառությունների խմբին։ Կան փոխառյալ մակբայներ նաև ռուսերենից, որոնք գործածական են Նոր-Նախիջևանի բարբառում։ Դրանք հիշում եմ առանձին ցուցակում.

Ըզկազա «պատահմամբ» Մրղ., <պրս. ز‌ا āz բացառականի նախդիր+արաբ. قضا qazā «պատահար»։

Ալայ-մալայ Ննխ., «բոլորովին». <թրք. الای alay «գումդ, խումբ, բազմություն» բառից՝ կրկնված մ նախաձայնի հավելումով։

Ալա՛չիլա Ննխ. «ուրիշ բան չգտնելուց, ակամա». ծագումն ինձ անհայտ է. թվում է թե թաթարերեն է։

Ըլբահալ Մրղ. «իսկույն» <թրք. albāhal արմատն է. արաբ. حال hāl «վիճակ»։

Ա՛լլահալէմ Պլ., ալլալէմ, ալալէմ, ալլէմ «կարծյոք, կարծեմ» Ննխ. <արաբ. الله عالم Allah ȧlim «Աստված է գիտուն, Աստված գիտե», որ թուրքերենի մեջ այս իմաստն է ստացել. հայերենի մեջ էլ Աստված գիտե նշանակում է «չգիտեմ», ինչպես և ֆրանս. Dieu sait, ռուս. Бог знает.

Ախրի Հմշ., «ի վերջո», ախըր Ննխ. «չէ՞ որ» (իբր հաստատական է գործածվում), ախըր Մրղ. որ նույն է Երևանի բարբառում սովորական և նույնիսկ արևելյան գրականի մեջ գործածական ախր

բառի հետ, որ հաճախ թարմատար է. օրինակ՝ Ախր տվել ե՞մ: Մրղ. կրճատ ձևով ասվում է ախ. ինչպես՝ Ախ ինչօ՞խ տամ «Ախր ինչպե՞ս տամ» (արդեն տվել եմ). բայց կա նաև ախը՛ռա Մրղ. «վերջապես».— բոլորի աղբյուրն է արաբ. اخر axir «վերջ», որ պարսկերենի և արևելյան թուրքերենի մեջ այսպիսի իմաստ ստանալով անցել է արևելյան հայ բարբառներին։

Ամմա, տե՛ս 5587։

Ա՛նիսէ Պլ., անիսէ, անիստէ Ննխ. «մինչդեռ». թարգմանաբար կազմված է Թրք. o «այն, նա» + ise (մասնիկ ստորադասականի) ձևից, որ Թուրքերենի մեջ էլ նույն իմաստն ունի։

Աննան Մրղ. «այնուհետև».— Թրք. اندن andan «նրանից» բառն է, որ արև. Թրք. ɛnnan ձևն ու «նրանից հետո, հետո» իմաստն է ստացել։

Ա՛նջաղ, ա՛նջաղ ֆի Մրղ., ա՛նջախ Պլ. «հազիվ, հազիվ թե», անջախ Ննխ. (Չլ. անջա) «միայն, միայն թե», անջա, անջաֆ Հմշ., «հազիվ, 2. դեռ նոր» (օրինակ՝ Անջա տտղար մը ըղավ «Հազիվ այդքան եղավ»), ա՛նջախ ա՛նջախ Պլ., «մեծ դժվարությամբ, հազիվ հազ» <Թրք. انجق anǰaq «միայն, հազիվ թե»։

Ա՛նսէիլդին Ննխ. (Չլ. ա՛ն սէիլին, սյա սէիլին, ինա սէիլին, իդա սէիլին) «նույն ժամանակ».— բոլորն էլ կազմված են սէիլ կամ սէիլդ «ժամանակ» բառից, որ թվում է թե թաթարերեն է։

Անֆըման, անֆուման Ննխ., «մերթ ընդ մերթ», անֆըման մէ մը «քիչ անգամ, հազարից մեկը» Ննխ.— ծագում է պրսկ. كمان gumān «կարծիք» բառից և անցնելով «հանկարծ, հանկարծակի» իմաստից՝ հասել է այս երկրորդական նշանակության։

Աշըրըմ Ննխ. «չափազանց» <Թրք. اشورى aşurı նույն նշանակությամբ։

Աշխառնա Ննխ. «քաղցած փորով, անոթիփորանց, Թրք. ɛjqarnəna նույն նշանակությամբ, որ կազմված է ɛj «անոթի» + qarn «փոր» բառերից։

Ա՛ջաբ, ա՛ջաբա Պլ., աջաբ Հմշ., աջափ Ննխ. «արդյոք» <արաբ. عجب àǰab, عجبا àǰaba նույն նշանակությամբ։

Ասլըբիր Ննխ. «ի բնե» <Թրք. aslə «բունը» + bir «մեկ» բառերից։

Ասխալդը, ասխալթը Ննխ. «քիչ մնաց որ, чуть чуть» <Թրք. از قالدى āz qaldə «քիչ մնաց»։

Արալըխտա Ննխ. «այդ միջոցին, ի մեջ այլոց, երբեմն» <Թրք. ارالقده araləqda.

Արթըխ, ալթըխ *Պլ.*, արթըխ, աշթըխ, աշտըխ *Ննխ.*, արտուկ *Հմշ.* «այլ ևս» *<Թրք.* ارتق ārteq.

Ափաստան *«հանկարծ, մի՛ գուցե» Ննխ. <Թրք.* اپانسز apansəz *«հանկարծ»* + dan *մասնիկ բացառականի. բոլորը իբր* apansəzdan *«հանկարծուստ»։*

Աքըր աքրէ՛ք *Հմշ. «վերջապես, վերջ ի վերջո» <արաբ.* اخر axīr *«վերջ»* + عاقبت āqibet *«վերջապես»։*

Բայաղ *Մրղ. «մի քիչ ժամանակ առաջ». օրինակ՝* Բայաղ վի՞ր իս էր կինծցի *«Բիչ առաջ ո՞ւր էիր գնացել» արև. Թրք.* بر *«մի»* + اياغ ayaɣ *«ոտք» բառերից։*

Բալմա *«գոնե» Ջղ. <պրս.* ?

Բաշխա *Հմշ. «բացի. 2. առանձին, ջոկ». օրինակ՝* գաթը՛ն բաշխս *«բացի կաթից».* բաշխա նստած ա *«առանձին նստած է» <Թրք.* باشقه bašqa *«ուրիշ», ղաա» բառից, որից և Պլ.* բաշխա, *որ ածական է «ուրիշ» իմաստով։*

Բարէ, բարէմ *Պլ.*, պարի *Հմշ. (այստեղ պ խուլ է փոխ. բ) «գոնե»,* բարըմ *Մրղ. «արդյոք, գոնե» <պրս.* بارى bārī, *աղավաղված Թրք.* بارم barim *«գոնե»։*

Բէդիհավա *Հմշ., Ննխ., Պլ. «ձրի» <Թրք.* bedihava *«ձրի», որ առաջանում է պրս.* باد هوا bād-i-hava *«օդի քամի» ձևից։*

Բէթէր *Ննխ. «վատ, հույժ», իսկ* բէթէր *Պլ. «ավելի վատ» <պրս.* بدتر badtar *«ավելի վատ» <Թրք.* better.

Բէլքի, բէլքիմ *Պլ.*, բոլկի *Հմշ.*, *բէքիմ Ննխ*, բոլքմ *Ագլ. «Թերևս, գուցե» <պրս.* بلكه balke, *Թրք.* belki.

Բէրէքէթ վէրսին *Ննխ., Պլ., որ և* բէրէքէթ վէրսին քի *Պլ. «բարեբախտաբար» <Թրք.* bereket versin *նույն նշանակությամբ (բուն իմաստն է «(Աստված) օրհնություն տա»)։*

Բիլէ *Պլ. «մինչև անգամ» (օրինակ՝* հա՛րըս բիլէ ըլլա, հա՛րըս ըլլա նէ բիլէ *«մինչև անգամ եթե հարս լինի»),* բիլէ *Ննխ. (գյուղերում* բլիէ), բիլտ *Հմշ. <Թրք.* bile *«մինչև իսկ»։*

Բիրդէն *Պլ.*, բիրդըն *Հմշ., Մրղ.*, բըռդըն *Ագլ. «հանկարծ» <Թրք.* بردن birden *«հանկարծ» (բառացի նշանակում է* մեկեն*)։*

Բիրդէ՛նբիրէ *Պլ.*, բիրդընբիրտ, բիրլանբիր *Հմշ. «հանկարծ» <Թրք.* birden-bire *(բուն նշանակությունն է «մեկեն ի մեկ»)։*

Բույոլ *Մրղ. «այժմ, արդ». շատ հաճախ գործածվող բառ է խոսակցության մեջ. <արև. Թրք.* بو يول bu yol *(բուն նշանակությունն է «այս անգամ»)։*

Բօթէն դէղը Զլ. (*գյուղ Նոր Նախիջևանի*) *«զուր տեղը». ծագումն ինձ անհայտ. Թվում է թաթարերեն։*

Գահ *«ժամանակ», փոխառյալ է պրս.* گاه gāh *համանիշից։ Մրղ.* ինգ՛ոխտ *«այն ժամանակ, քիչ ժամանակ առաջ»։*

Գէթինգէրի *Ննխ.* (կօտընկէրի *Զլ.*) *«հետս հետս (դեպի վատը)». օրինակ՝* Մին կօտընկէրի կնաց *«Ջին հետզհետե վատացավ փչացավ».* < *Թրք.* گوت göt *«հետույք»* + گرى geri *«հետս, դեպի ետ»։*

Գէժդոնգէչ *«շատ հետո» Մրղ.* < *Թրք.* geǰ *«ուշ» բառից* geǰ-dengeǰ *«ուշից ուշ, շատ ուշ»։*

Գէնէ *Պլ., Ննխ.,* գէնօ *Մրղ. «նորից, դարձյալ».* գէնէ գէնէ *Պլ. «այնուամենայնիվ»* < *Թրք.* كينه

Գէօյա, գէօյամ, գէօյա քի, գիւյա քի *Պլ.* գօյա *Ննխ.,* գօյօ-թօ *Հմշ. «իբր թե» պրս.* گويا guyā *«ասելով, իբր թե», Թրք.* gūya, gūya ki.

Գիւջբէլա, գիւջբէլագիւջ, *նաև* գիւժբէլա *«հազիվ հաղ, մեծ դժվարությամբ» Պլ.* < *Թրք.* gūǰbelaguǰ. *սրա պարզ արմատը ցույց է տալիս՝*

Գիւջօվ *Պլ. որ ավելի ասվում է զօռօվ-գիւջով. նույնը Երև. ասվում է* զօռով-գիւջով. *բոլորն էլ նշանակում են «դժվարավ, մեծ դժվարությամբ». արմատն է* گوج guǰ *«դժվարություն», որ* زور zor *«բռնություն» բառի գրեթե համանիշն է։*

Գօզ, գէօք *Հմշ. «բոլորը, բոլորովին». օրինակ՝* գէօք մէռօն *«բոլորը մեռան».* գէօք զօդրէցօն:

Դադէգէնդէ *(Ղրիմ) «իսկույն»=տճկ.* deyinde *«անմիջապես որ ասաց» (այլ բարբառներում կա* y*-ի տեղ* g *ձայնով. ինչպես՝* ديكونجا degunǰa, ديكانجه diganǰa *«հենց որ ասաց». հմմտ.* Будагов, Сравн. словарь турк-татар нареч., *էջ 580բ)։*

Դահա *Հմշ., Ննխ., Պլ. «դեռ, տակավին, դեռ ևս».* դահա կա *«էլի՛ կա».* դահա չեկավ *«դեռ ևս չեկավ»* < *Թրք.* داها daha.

Դայմա *Հմշ., Ննխ., Պլ. «միշտ»* < *արաբ.* دائما daima.

Դառհալաթ *Ննխ. «դժվարավ, հազիվ»* < *Թրք.* دار dār *«հազիվ, նեղ»* + *արաբ.* حالت hālet *«վիճակ»։*

Դէ՛ *«մինչև» Հմշ.* դէյ *Պլ.,* դէյօր, դէյօր քի, դէյօր օր *Պլ.* էդէք *(Մալա)*=ըդակ *Հմշ. «մինչև». օրինակ՝* էդէք ցօրէզ=ցօրէզ ըդակ *«մինչև կէսօր».* ծօվն ըդակ *«մինչև ծովը»,* ոսօր ըդակ *«մինչև այսօր».* գէսնըդակ *«մինչև կեսը»,* սօղըդակ *«ցվերջ» (Թրք.* صوك son *«վերջ»).—Թե՛ իբր նախադրություն և թե իբրև մակբայ*

են գործածվում. օրինակ՝ դէյօր տունը «մինչև տունը», դէյօր էկավ, դէյօր օր էկավ «մինչև որ եկավ»։— Բոլորի մայրն է թրք. دك dek, որ սատանում է արական հոլով. օրինակ՝ eve dek «մինչև տուն». Համշենի բարբառը թրք. արականի e վերջավորությունը բաժանելով գոյականից՝ միացրել է dek բառին, որով ստացվել է edek էդէք=ըդակ։ Պոլսի բարբառում վերցնելով թրք. dek, dey ձևը, հայկական ոճով ավելացրել են որ շաղկապը, որ ապա կցվելով dey ձևին, պետք է եղել նորից կրկնել շաղկապը, ինչպես ունենք էրր, էրրօր, էրրոր որ։

Դէգմէ Ննխ., դէյմէ ճալով Պլ. դայմա ճալով Երև. «հեշտիվ, դյուրայի». գործածվում են միայն բացասականով. օրինակ՝ դէգմէ մաշքու չասիմ «Ամեն մարդու հեշտությամբ չեմ ասի». դէ՛յմա ճալօվ չիս կրնար վերցունէլ<Թրք. دكمه dégme! déyme.

Դէմին Պլ. «քիչ առաջ»<Թրք. دمين demin.

Դիբինէջէս (Ղրիմ) «բոլորովին»<Թրք. dibinejek «մինչև տակը»։

Դօղրու Համշ. «ուղիղ դէպի». օրինակ՝ Միյ դօղրուն «Ուղիղ դեպի մեղ». Մաշտու դօղրու պոնէլ մի՛ «Մարդու դեմ մի՛ բռնիր» (Նախադրություն է). դօղրուսու Ննխ. «շիտակը, ուղիղ խոսելով, ճշմարիտն այն է որ», Պլ. «շիտակն ասելով» (ծաղրական)<Թրք. طوغرو doqru «ուղիղ», doqrusu «շիտակը, արդարև»։

Զաթը Պլ., զաթի Երև., զատը Համշ. «արդեն». օրինակ՝ Զաթի դու էդէնց էս.<արաբ. ذاتا zaten.

Զահիր Ննխ. «ակներև է որ, ըստ երևույթին», զէհէր Պլ. «կարծես, հավանաբար»<արաբ. ظاهر zāhir «ակներև»։

Զըխի Ննխ. «արագ». օրինակ՝ Զըխի կը վազէ.<Թրք. صيقى səqə «խիստ, պինդ, ամուր».—Նույն բառը կա և Պլ. սըխը, ՙՆն. սըխի ձևով, բայց իբր ածական է գործածվում։— Ղրբ. Սը՛խ կաց «Պինդ կաց»։

Զօռաքի Ննխ., Պլ., զօրաքի զօրով «բռնի», սաստկականն է զօռ զօռաքի Պլ.<Թրք. زوراكى zōraki.

Զօռով, զօռով-մօռով Ննխ., զօռով, զօռովէն, զօռ-զօռընա Պլ. «դժվարությամբ, բռնի, հազիվ»<պրս. زور zōr «ուժ, բռնություն», Թրք. zorile, zoraki, zor-zorəna «բռնաբար»։

Էզ մը Պլ. «մի խումբ, շատ» Թրք.<بر آز bir āz «մի քիչ», օրինակ՝ Էզ մը սպասցուց։

Էնգ «բոլորովին, ճիշտ, իսկ», է՛ն Պլ. «ամենա-». օրինակ՝ Է՛նգ թէփէն ճատիլ է Ննխ.=Է՛ն թէփէն նստեր է Պլ. «բոլորովին

ծայրը, ամենից վերևը նստել է»։ Էնգ փլաթիխ իրա գախիլ է Ննխ. «Շրջազգեստիս ճիշտ վրան է կախել» (այս վերջին ձևը չունի Պլ.)<Թրք. ان en, գվռ. eng մասնիկ գերադրականի, որ տես անդ։

Էնգօլմադըմ (Ղրիմ) «առնվազն»<Թրք. eng ամենա+ölma-dəm «չեղա»։

Էնդի (Թոխմախ գյուղ Նոր Նախիջևանի) «արդեն» <Թրք. ایمدی imdi, ամկ. indi «այժմ», Կազանի թթր. «արդեն»։

Է՛նջամը Ննխ. (Զլ. ընջամը) «վերջապես, ի մի բան»<պրս. انجام enjam «վերջ, վախճան»։

Էվէլքի Ննխ. «նախկին, առաջվա»<Թրք. اولکی evvelki.

Է՛փէյի, է՛փէյի մը, է՛փէյիջէ Պլ., էպէյի, էպէյջօ, էպէյջը մը Հմշ. (Պլ. նաև թարգմանաբար է՛փ-աղէկ) «բավական, ըստ բավականին»>Թրք. epeyi. օրինակ՝ էփէյի կերաւ, էփէյիջօ ալ ճէ-տը տարաւ:

Թազզա Մրղ. «դեռ նոր»<Թրք. تازه tāza, tāze (Պլ. թազէ «թարմ»)։

Թազզադան Մրղ. «նորից, դարձյալ»<Թրք. tazeden.

Թարափ «կողմ» Մրղ. որից կազմված են է՛սթարափ, է՛տթա-րափ, էնթարափ «այս կողմ, այդ կողմ, այն կողմ», նույնը Պլ. ա՛ս թարաֆ, ա՛տ թարաֆ, ա՛ն թարաֆ<արաբ. طرف taraf «կողմ». Հմշ. չօյս մէգ թարաֆը (Մալա) «շուրջը»։

Թաքի Ագլ. «միայն թե»<պրս. تك كى tek ki.

Թէ՛գարան Ննխ. (Զլ. տէկարանկ) «մի քիչ». Թվում է թե Ղրիմի թթր. բառ է։

Թէզ Երև., Հմշ. Պլ. «շուտ», թէզօվ «շուտով» Ննխ., շուտ մը թէզ Ննխ. «շուտ, իսկույն», թէզ արի Երև. «շուտ արի», թէզ ըրէ Պլ. «շուտ արա»<պրս. تیز tiz>Թրք. tez.

Թէմէլդէն Ննխ. «հիմնովին, հիմնապես»<Թրք. تملدن temel-den «հիմքից, ի հիմանց» (հն. θεμέλιον «հիմք» բառից)։

Ի՛լլաքի, ի՛լլաքի թէ Երև., ի՛լլէքի Պլ. ի՛լլոքիմ Ագլ., իլլէքի, իլլայի Ննխ., իլլանըմ Մրղ. ի՛լլօքի Հմշ. «մանավանդ, հատկապես, անպատճառ»<արաբ. illa «բայց միայն», Թրք. ille, ille-ki «մանավանդ որ»։

Իշտէ Պլ., Հմշ., շտէ Ննխ. «ահա» (շատ հաճախ իբր թարմատար է գործածվում) Թրք. اشته ište «ահա»։

Լայլաջ Ննխ., Պլ., իլլա-իլլաջ (Զլ.) «ակամա, ճարահատյալ» <արաբ. لا علاج lā ilāj «չիք դարման, անճար»։

Լաք *Մրղ. «բոլորովին»<արև. թրք.* لاپ lār.

Խադապ, խդար *տե՛ս* ղդար:

Խաթի *(Ջլ.) «շատ, հույժ». օրինակ՝* Խաթի քսիրիմ *«Շատ եմ սիրում»<թրք.* قتى qatə, *որ թեև սովորաբար նշանակում է «թանձր» (այսպես Պլ.* խաթը*), բայց նաև «հույժ» (տե՛ս Աբիկյան, Ընդարձակ բառ. տաճկ. հայ., Պոլիս, 1892, էջ 446ա):*

Խալվութ *Հմշ. «ծածուկ». օրինակ՝* Ինձմէ խալվութ եգած ես *«Ինձնից ծածուկ ես եկել»<արաբ.* خلوت xalvat *«առանձնակի, թաքուն»:*

Խայխայդան *Ննխ. «շատ ուշ, վերջապես» թթր.* قاى قايدان qay-qaydan *«ուր-ուրկից»:*

Խել մը *Պլ., Հմշ. «մի խումբ, բավական, շատ»<պրս.* خيلى xeyli, *թրք.* بر خيلى bir xeyli *նույն նշանակությամբ. օրինակ՝* Խել մը փնտռելէն ետքը:

Խեյր *Մրղ. «ո՛չ»<արաբ.* خير xayr *«բարիք» բառն է, որ պրս. և թրք. ստացել է «ոչ» նշանակությունը:*

Խըթ *Ննխ., Պլ. «հազվագյուտ կերպով, քիչ անգամ». օրինակ՝* Խըթ քուքա *«Քիչ անգամ է գալիս» Ննխ.,* Խըթ կը գտնվի *Պլ. «հազվագյուտ է»<թրք.* قيت qət.

Խիւտիւրիւ *Մրղ. « իզուր». ծագումն ինձ անհայտ. թվում է արևել. թրք.:*

Խօբ *Ջղ. հաճախ է գործածվում խոսակցության մեջ «1. շատ լավ. 2. արդ» իմաստներով.<պրս.* خوب xōb *«գեղեցիկ» բառն է, որ պարսից մեջ էլ նույն իմաստով է գործածվում:*

Խօրսամ *«իբր թե» Ննխ., Պլ.<թրք.* قورسم qorsam *«եթե դը-նեմ» (այն է ենթադրեմ թե):*

Կարաղըրկ՚էն *Մրղ. «առաջուց, կանխավ»<արև. թրք.* قباغ qabɛq *«առաջ»:*

Կալդի քի *Հմշ. «սակայն, միայն թե»<թրք.* قالدى كه qalde ki *«մնաց որ=սակայն»:*

Հազիրամ *Ջղ. «դիցուք թե»<պրս.* گيرم giram *(բուն նշանա-կում է* բռնենք, *իմա՛* ընդունենք թէ*):*

Հախընա *Ննխ. «իրավամբ»<թրք.* حقّنه haqqəna *(արաբ.* حق haqq *«իրավունք» բառից):*

Հոմին *Մրղ. «հաղիվ»<թրք.* ?

Հանիգուա *Ջղ. «իբր թե» պրս.* گويا guyā *«իբր թե». տե՛ս վերը* գէօյա:

Հաչան *Պլ. Տր. «երբոր, հենց որ»<թրք.* qačan, *ժղ.* hačan.

Հասէլէթդէն *Ննխ. «հատկապես» Թրք.* حاصلاتدن hāsəlatdan *«հասույթից»* ?:

Հարգիզ *Ջղ. «իսկի, բնավ»* < *պրս.* هرگز hɛrgız.

Հէ՞ *Պլ. «ի՞նչ, ի՞նչ ասացիր» (անքաղաքավար ձև չէ)* < *Թրք.* he ?

Հէ՛լբէթ, հէ՛լբէթդէ, հէ՛լբէթդէնէ *Պլ.* հոլբոտ ստ *Հմշ.* հոլբոթ *Մրղ.* հէլբէթ, հէլբէթ օր, հէբէթ *Ննխ. «անշուշտ, հարկավ, իհարկե»* < *արաբ.* البت elbett.

Հէլէ *Պլ.* հոլո *Մրղ.* հալա *Հմշ.*, հլա *Երև., «դեռ, առավելին»*, հոլո *Ագլ. «դեռ»*, հոլոթոքի *Ագլ. «այժմ էլ»* < *արաբ.* حالا ḥala, *տճկ.* hele.

Հէօյհման *Մրղ. «անշուշտ, ենթադրելի է»* < *արաբ.* حکم ḥukm *«վճիռ» բառից՝ արևել. Թուրքերենի միջոցով:*

Հէ՛մէն, հէ՛մէնդէ, հէ՛մէնդէնէ *Պլ.*, հա՛ման, հա՛մանտէն *Հմշ.*, համան, հա՛ման ալ, հա՛մանա *Ննխ. «անմիջապես, իսկույն»* < *պրս.* همان hɛman > *Թրք.* hémen, hémende.

Հիչ *Պլ.*, հէչ, հիչ *Հմշ.*, հէչ *Ննխ. «բնավ, ո՛չ մի ժամանակ»* < *պրս.* هیچ hīč. *սրանից նաև* հիչ օր չէ նէ *Պլ. «գոնե»:*

Հիչօլմ՛ասա *Պլ., Հմշ.*, հէչօլմասա, հօչօլմասա, հօչիմասա, հօչըմասա, հօչիմասըմ, հօչըմասըմ *Ննխ. «գոնե»* < *Թրք.* هیچ اولمازسه hič olmaz-sa *«գոնե» (բուն նշանակությամբ՝ եթե բնավ չլինի):*

Հլդա, *հլա Ջղ. «այժմ»* < *պրս. (արաբ.)* حالا hala *տե՛ս վերը* հէլէ:

Ղդար *«չափ» Հմշ.=արաբ.* قدر qadar *«չափ» բառն է, որ Թուրքերենի միջոցով անցնելով մեր բարբառներին, ավել է զանազան նախադրություններ և մակբայներ: Պլ. լինում է* խադար *կամ ավելի* խըդար, *որ գործածվում է նախ իբր նախադրություն. ինչպես՝* էրգու սահաթի խադար *«երկու ժամի չափ»,* Սա բզդիզ տղուն խդար ա՞լ չիքաս *«Այս փոքրիկ տղի չափ էլ չկաս»: Դառնում է մակբայ. օրինակ՝* ա՛սխադար, ա՛թխադար, ա՛նխադար, սա՛խադար, ա՛սխըդար, ա՛թխըդար, ա՛նխըդար, ի՛շխըդար. *նաև փաղաքշական* ա՛սխդարիկ, աթխդարիկ, անխդարիկ *և այլն: Ննխ.* ինչխըդա, ինչդա, ինչխադա, ինչխադար *(Ջալթր գյուղում Նորագույն սերունդի մեջ՝* ի՛շտա*) «ի՞նչքան»:—Ավելի ճոխ է Հմշ.* ղըդար *կամ ավելի հաճախ շրջմամբ* դըղար *«չափ». ինչպես՝* ցօյնի զդար *«ցորենի չափ»,* լազդի ղդար *«լազուտի չափ». սրանք նախադրություն են. կազմում է նաև մակբայ և այն ժամանակ ավելի գործածական է* դղար *շրջված ձևով, ինչպես՝* տստըղար *կամ* տս-

դըղար, տստըղար, ընդըղար, ընղըդար. *օրինակ*՝ տոդըղար խօսե-ցա *«այսչափ խոսեցի»*. *Նաև հյ. հոմանիշի հետ բարդված*՝ տոդ-ղայչափ *«այսչափ»*, տստըղայչափ *«այդչափ»*, ընդըղայչափ *«այն-չափ»*: Ինչղըդար *կամ* ինչդըղար *«ինչքան»*: *Վերջաձայն* ր-*ի կըր-ճատումով ձևացած է Մրղ.* *կէթա ձևը, որից կազմված են* եսկե-թա, ետկեթա, ենգեթա *«այսչափ, այդչափ. այնչափ»*:

Մալլափ *Ագլ. «բոլորովին». օրինակ*՝

Շոռ ա սվեծ, մալլափ ծալեծ
Միր ըշխա՛րքի ի՛ւլիւրը.

անշուշտ արևել. թուրքերեն է. հմմտ. լափ *Մրղ. «բոլորովին»*:

Մա՛նի մանի *Ննխ. «շուտ շուտ, արագ»* <*ննն.* mani mani *(արդյոք Ղրիմում հույների՞ց են փոխ առել, թե երկուսը միասին իտալական մի բարբառից)*:

Մեյեր *Պլ. «դուրս է գալիս որ»*, մեգեր *Ննխ. «իբր թե»*, մո-ղոր *Հմշ. «մինչդեռ»*<*պրս.* مکر meger.

Մեգ-որոն *Մրղ. «մի քիչ ժամանակ, մի առժամանակ». օրի-նակ*՝ Մեգ-որոն տորմեն ռռոնչ *«Մի քիչ դրանից առաջ»*, Մեգ-ո-րոն կե՛ղո մնացըմ *«մի քիչ ժամանակ գյուղը մնացի»*.<*արևել. թրք.* bin gʸaran.

Մի՛ջերեթ *«անպատճառ»*<*արաբ.* مجرد mūjerred.

Մո՛ւթլախ *Ննխ., Պլ.*, մո՛ւթլախա *Պլ.*, մըթլախ *Ննխ. «ան-պատճառ»*<*արաբ.* مطلق matlaq *«անպատճառ»*:

Յանի *Երև., Պլ.*, յանի, յանի *Ջղ.*, յանի քի *Երև. «այսինքն, իբր թե»*<*արաբ.* يعني yani.

Յօ՛րիթա, յօ՛րթա, յօ՛շթա *Ննխ. «դիտմամբ».—թվում է թա-թարերեն*:

Նաֆիլե *Պլ., Ննխ.*, նաֆիլտ *Հմշ.*, նաֆիլե դեղը *Պլ. «ի զուր, զուր տեղը»*<*արաբ.* نافله nafile.

Նե *(կրկնությամբ) «ոչ» Պլ., Ննխ. օրինակ*՝ նե նոս, նե նոն *«ոչ այստեղ, ոչ այնտեղ»* նե խնդայի, նե լայի. նե կ՚ուտե, նե կը կերցունե *(առած)*. *Նո... նո Մրղ. պրս.* نه...نه ne...ne *«ոչ... ոչ»*:

Նեդե՛ն սօյրա *Ննխ. «արդեն շատ ուշ». Ննխ. թրք.* neden sonra.

Նիմ մը *«մի քիչ» Պլ. օրինակ*՝ Կերակուրը նիմ մը անլի ե. նիմ մը *աշվըները գոցեց*.<*պրս.* نيم nim *«կես»*.

Նիջո *Հմշ. «քանի որ, ցորչափ, ինչքան ժամանակ որ». օրի-նակ*՝ Նիջո նօզ եր, բետկը գաբռեյքը *«Քանի այստեղ էր, լավ էինք ապրում*<*թրք.* نيجه nīje *«ինչքան»*:

Շընդըխ, շինըխ, շընդըխվանէ, շինըխվանէ Ննխ. «այժմ, հիմա, այժմվանից»<Թրք. شمدى šimdi, ժղ. šimdig.

Շինդըխալդա (Ղրիմ) «առ այժմ»<Թրք. šimdiki halda «այժմվա վիճակում, առ այժմ»։

Շինէնգէրի Ննխ. «այսուհետև»<Թրք. šimdiden geri «սրանից հետո»։

Ուսուլի Հմշ. ուսուլով Հմշ., Պլ., ուսուլիկ մը Պլ. «կամացուկ», սուլօվէն Ննխ. «մեղմօրէն»<արաբ. اصول usul «եղանակ, կերպ», որից Թրք. اصوللين usullayen «մեղմով, կամացուկ»։

Ջալտ (Ջալթր գյուղ) «շուտ, արագ». օրինակ՝ Ջալտ գնա.<արևել. Թրք. jald, որից և Երև. ջալդ «շուտ», օրինակ՝ Ջալտ արա.

Ջաղ «ժամանակ», ընչաղը «այն ժամանակ», ընչաղըդաք «մինչև այն ժամանակ». Հմշ., ընչաղն Ջղ. «այնժամ»։<Թրք. چاغ čaq.

Ջափուխ, չաբուխ Պլ. «շուտ, արագ»<պրս. چابك čābuk>Թրք. چابوك čabuk.

Ջափու ջախ, չաբուջախ Պլ. չափուջախ Հմշ. «շուտով»<Թրք. چابوجق čabujaq.

Ջէ՛քիլթէ, չէ՛քիլքի, չէ՛քիլքիմ Ննխ. «ո՛չ միայն» թվում է Ղրիմի թաթարերեն։

Ջիւնքի, չիւնքիմ Պլ., չուն, չունքի Ջղ., չունքի, չունկիմ, չունկիտ «որովհետև»<պրս. چون čūn چونکه čūnki.

Ջօխտան Ննխ. «շատոնց, վաղուց»<Թրք. چوقدن čoqdan.

Ջէմը Ննխ. «ընդ ամենը»<արաբ. جمع jem' «գումար»։

Ջիպ, ջիփ Հմշ. «բոլորովին»։

Սալթ Պլ., սալթը Ննխ., սալտ, սալտը Հմշ. «միայն, միմիայն»<Թրք. صالت salt.

Սախըն Ննխ., Պլ., սակը՛ն Հմշ. «մի՛ զուցե, չլինի թե»<Թրք. صاقين saqən նույն նշանակությամբ (բայց բուն իմաստն է «զգուշացիր»)։

Սադէ Պլ., սադա Հմշ. միայն<պրս. ساده sādā, sāde.

Սանքի, սանքիմ Պլ. սանկի, սանկիմ «իբր թե, այսինքն», սամքի, սամքին Ննխ. «կարծես թե»<Թրք. صانكه sanki, ժղ. sankim նույն նշանակությամբ (բուն իմաստն է «համարի՛ր թե»)։

Սարամաթ, սարմաթ Ջղ. «պատճառով». օրինակ՝ Քո սարամաթ ընդուր իտուր կռվեցի «Քո պատճառով նրա հետ կռվեցի»< թվում է պարսկերեն բարբառային ձև։

Սաֆ Հմշ. «սխալ». օրինակ՝ Սաֆ լսեցիր «Սխալ ես լսել» < արաբ. سهو sahv «սխալ»։

Սբայի «առավոտուն» Ջղ. արաբ. صباح şabāh «առավոտ» բառից։

Սերե քի Պլ. «գրեթե, համարյա թե». օրինակ՝ Սերե քի ակռադ ելավ. < արաբ. حساب hisāb «հաշիվ» բառն է, որ նախ ավել է սայրել Պլ. (անցնելով հիսաբել ձևից) «հաշվել, համարել», ապա սերել (բայ), որից հրմ. սերե՛ քի:—Նույնը Հմշ. հըսըբըր քա:

Սեօզդե Պլ. սէօզգա Հմշ., սէզդէ Ննխ. «իբր թե, որպես թե» < թրք. سوزده sözde նույն նշանակությամբ (բուն՝ «խոսքի մեջ»)։

Սըդըռդի Ննխ. «շարունակ» < անշուշտ թթր. համմտ. քումուք sidiryw «մի շարք»։

Սըխ սըխ Հմշ., Ննխ., Պլ. «հաճախ, հաճախակի» < թրք. صيق صيق seq seq.

Սըխը Պլ. «պինդ, ամուր». օրինակ՝ Սըխը կապեցիր. «2. խըստիվ». օրինակ՝ Սըխը սըխը թենբեհ ըրի «Շատ խստիվ պատվիրեցի» < թրք. صيقى seqa «ամուր, պինդ»։

Սըրայօվ Պլ., սըրօվ Հմշ. «կարգավ». օրինակ՝ Սըրայօվ կայներ են «շարքով կանգնել են». < թրք. صره səra «շարք, կարգ» բառի գործիական հոլովն է։—Ըմըն սըրա Հմշ. «շարունակ, միշտ»։

Սըրա՛վարդի Պլ. «կարգով, շարքով», Ննխ. «շարունակ». օրինակ՝ Սըրա՛վարդի կայներ են «Շարքով կանգնել են» < թրք. صره واردى səra vardə «կարգով»։

Սօնը «վերջը», սօնը սօնը «վերջ ի վերջո», ե՛ն սօնը «ամենավերջը» Պլ., սօղը Հմշ. «հետո» < թրք. صوڭ son «վերջ» (գվռ. sonq)։

Սօղըդակ Հմշ. «մինչև վերջը» < թրք. صوڭه دك soñqa dek «մինչև վերջը»։

Սօղռա «հետո» Պլ. օրինակ՝ Սօղռա կու գամ. < թրք. صوڭره soñqra.

Վ.ա՛րիսա «թերևս» Ննխ. < թրք. واريسه vár ise «եթե կա»։

Վ.ի՛րա Ննխ. Պլ., Հմշ. «միշտ, շարունակ». կրկ. վի՛րա վի՛րա. < թրք. ويره vıra «շարունակ, անընդհատ»։

Վ.ա՛խտը Ջղ. վախտին Պլ. «ժամանակին» < արաբ. وقت vaqt.

Փա՛թդիյի Պլ., փա՛թ մը դեյին Ննխ. փա՛թդեյի, փառթդեյի Հմշ. «հանկարծ» < թրք. پات ديو pat-deyu.

Քօ՛ռքօռընա Ննխ. քյօ՛ռքյօռընա Պլ. «կուրզկուրայն»<Թրք. körkorine.

Օնդան սօրա Հմշ. «այնուհետև»<Թրք. اوندن صوكره ondan soñra «նրանից հետո»:

Օնչուն Մրղ. «վասն այնորիկ»<Թրք. اونن ايچون onən ičun «նրա համար»:

Օռթան, օռթատեղը Պլ., օշտան Ննխ., օտտըն Հմշ. «մեջտեղը». օրինակ՝ Օռթան նստեր է:<Թրք. اورته orta «մեջտեղ»:

Թուրքերենի միջոցով մակբայ կարելի է կազմել նաև հետևյալ ձևով.

1) Ավելացնելով Թրք. soy «տեսակ, ցեղ, ձև, կերպ» բառի հյ. բացառական հոլովը. այն է Պլ., Ննխ. սօյէն, Հմշ. սօյը՛ն. դրվում է թե՛ հայերեն և թե՛ թուրքերենածականների վրա. ինչպես՝ Պլ., Ննխ. Աղէկ սօյէն ծեծեցի «Մի լավ ծեծեցի», Պլ., Ննխ. Ըռահաթ սօյէն, Հմշ. Ըռահաթ սօյը՛ն «հանգիստ կերպով, հանդարտությամբ». Հմշ. Թըմիզ սօյըն ավիլէց «մաքուր ավլեց»:

2) Vari մասնիկով, որ զարմանալի ձև է ստացել հայերենում: Այս մասնիկը բուն պարսկերեն է և ունի واره vare ձևը՝ «նման է, հանգոյն» նշանակությամբ (տե՛ս ԳԴ, 523ա): Մտել է թուրքերենի մեջ واری vari «պես, նման» ձևով, որով և կազմված են xačvari «խաչաձև», avropavari «եվրոպականաձև», səravari «կարգավ» (Ջ. Կարապետյան, էջ 912ա): Անցել է հայերենին և տվել է այստեղ բազմաթիվ բառեր. ինչպես Երև. մարդավարի, իշավարի, ֆաղաֆավարի, մեծավարի, գազանավարի, խանըմավարի և այլն.— Ղրբ. ճայավարի «հին հայկական տարազով (կին)», ֆաղաֆավարի «վրացուհու տարազով», ռուսավարի «եվրոպացի կնոջ տարազով»: Համշենի բարբառով ունենք մարտավարի «մարդու պես» (Նոր փոխառություն կովկասյան բարբառներից), ճօյըվարի «հայի ձևով», դաջգըվարի «տաճկի ձևով», յաճուդիվարի «հրեայի ձևով», ճօմըվարի «հույնի ձևով», խրիստիյանվարի «քրիստոնեաբար», մաճմէդանվարի «մահմեդականի ձևով», աբազավարի «ափխազի ձևով», չօրկեզըվարի «չերքեզի պես», գիւրջըվարի «վրացու նման» և այլն:— Նույն մասնիկը հանդիպելով հյ. վար-ք բառին, վերածվել է վար ձևին և տվել է Պոլսի բարբառում, ինչպես նաև ուրիշ բարբառներում, «լեզու» նշանակող հետևյալ բառերը.— ճայէվար «հայերեն», ճօմէվար «հունարեն», դաջգէվար «տաճկերեն» և այլն (բոլորի մեջ էլ -վար միացած է ազգ նշանակող բառի հետ):

3) Թուրքերենից փոխառյալ մակբայների մեջ առանձին կարևո-

րություն ունեն այն կրկնակ ձևերը, որոնք գործածվելով զանազան բայերի հետ, իբր թե ներկայացնում են նրանց ձայնական պատկերը։ Այսպիսի կրկնակ մակբայներ ունեն Կը ճյուղի բարբառները, իսկ Ում ճյուղի մեջ չկան։

Ստորև դնում եմ այս կարգի մակբայներից մի խումբ՝ Նոր Նախիջևանի, Պոլսի և Համշենի բարբառներով.

Նխ. խըփըռ-խըփըռ *(եփել)*
ժըվըռ-ժըվըռ *(կարդալ)*
լըբըռ-լըբըռ *(խոսել, կարդալ)*
փըխըր-փըխըր *(եփվել)*
ջավուլ-ջավուլ *(լալ, պոռալ, կանչել)*
ճըռըճգ-ճըռըճգ *(սպասել)*
շաբըռ-շուբուռ *(ջարդել)*
բըլդըր-բըլդըր *(արտասվել)*
բառ-բառ *(բղավել)*
բըլբ-բըլբ *(նայել)*
սըլըճֆ-սըլըճֆ *(թափառել)*
ֆըսդըռ-ֆըսդըռ *(քայլել)*
գօլբ-գօլբ *(խմել)*
գառուլ-գուռուլ *(գլորվել կառքից)*
ջըլբ-ջըլբ *(նայել) և այլն։*

Համշ. Վըզըր վըզըր գէշտա կու ֆա *(երթալ, գալ)*
Տըռ տըռ ցըյդըճ տօղա գու *(դողալ)*
Ձուրը խըռըլ-խըռըլ լխա գու *(հոսել)*
Ապալ-թապալ ճէս մտավ
Հէօճգիւր-ճէօճգիւր վոյտ գու *(լալ)*
Խապըռ-խուպուռ ձօմա գու *(ծամել)*
Ղըռտ-ղըռտ խմտ գու *(խմել)*
Ֆըկըր-ֆըկըր ճուրը գըլգըլա գու
Շակըռ-շուկուռ գոդըյդէց *(ջարդել)*
Վըէգը շըռ-շըռ լխա գու *(անձրևել)*
Շըռ-շըռ կօռկօռա գու
Ջայիր-ջայիր պօճի գու *(բանել)*

Պլ. Վըզըր-վըզըր կէրթա կու գայ *(արագ-արագ)*
Դիռիլ-դիռիլ կը դողայ ցուրտէն *(դողալ)*
Ջուրը ճառըլ-ճառըլ կը վազէ *(առատահոս)*
Ափալ-թափալ ճերս մտավ
Հէօճգիւր-ճէօճգիւր կու լայ *(լալ)*

Խաթըռ-խութուռ կը ծամէ
Գառթ-գառթ կը խմէ
Խըփըռ-խըփըռ կ'եփի
Ֆըռըլ-ֆըռըլ կը դառնայ
Շախըռ-շախըռ կոտրտեց
Շառըլ-շառըլ արզէվը կը թափի
Շափըռ-շուփուռ ուտել, պագնել
Մըզըր-մըզըր կը ցափ
Բառ-բառ կը պօռայ
Քըստըր-ֆըստըր կը ֆալէ
Ջայիր-ջայիր կը վառի
Խըռըլ-խըռըլ կը ֆնանա:

Ինչպես ասացինք, այս կարգի մակբայները, իբրև թուրքերեն, մուտք չեն գտած ոչ միայն արևելյան բարբառներում, այլև արևմըտյան գրական լեզվի մեջ։ Իբրև բացառություն հիշատակելի է միայն հոնգուր-հոնգուր *«աղիողորմ», որ գործածել է Ա. Իսահակյանը իբրև շիրակցի և նրա հետևողությա՛մբ էլ Հ. Թումանյանը։*

«Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կու լամ ես...»:
«Էն ո՞ւմ եարն է նստած լալի,
Հոնգուր-հոնգուր էն սարում»:

Թուրքական այգ մակբայները մեծ մասամբ երկվանկ են. բառի առաջին մասը բուն արմատն է (բնաձայն), որի վրա ավելանում է ir, il *մասնիկը, որ ըստ թուրքերենի ձայնափոխության օրենքների ստանում է* ər, əl, ür, ul *ձևերն էլ։ Այսպես օրինակ՝* č a t, p a t, š a r *բնաձայն արմատներից* čatər, patər, šarəl *և այլն։ Արմատը իր մասնիկով միասին կարող է կրկնվել պարզապես և կամ ներքին ձայնավորը դարձնելով* u, ü *և այլն։ Ահա այդ կարգի մակբայներից զուտ թրքական ձևերը քաղված տաճկական գրական լեզվից.*

ابور جبور abur-ǰubur
اپال طاپال apal-tapal
زانغر زانغر zanger-zanger
جاير جاير ǰayir-ǰayir
جانغل جونغول ǰangəl-ǰungul
جارت جورت ǰart-ǰurt
پارل پارل parəl-pərəl

کورل کورل gürül-gürül
شاقر شاقر šaqər-šaqər *կամ* شاقر شقور šăqər-šuqur
چاتر چاتر čatər-čatər
پاتر پاتر patər-patər *կամ* پاتر کتور patər-kütür
شارل شارل sarəl-sarəl
تیرل تیرل tiril-tiril

Նմանօրինակ մակբայների ուրիշ տեսակներ գտնում ենք ուրիշ լեզուների մեջ, որոնցից ահա երկու օրինակ.

Աֆրիկյան գանգ լեզուն ունի բազմաթիվ բնաձայն բառեր, որոնք մեծագույն մասամբ կազմված են կրկնությամբ. սրանք կարող են գործածվել թե՛ իբր ածական և թե՛ իբր մակբայ։ Նրանք ունեն երկու ձև. կարող են արտասանվել բարձր տոնով կամ ցածր տոնով. ցածր տոնը խոշոր կամ մեծ անձանց համար է, իսկ բարձր տոնը մանր և փոքր անձանց համար. օրինակ՝

blāyi blayi } *կաղալով (գնալ)*
blàyi blayi }

առաջինը խոշոր կանանց համար է ասված, երկրորդը փոքր կանանց և քնքուշ աղջկանց համար։

(Westermann, 166)

Աֆրիկյան էվե լեզուն ունի բազմաթիվ բնաձայն կրկնավոր մակբայներ, որոնք գործածվում են բայերի հետ և ցույց են տալիս գործողության եղանակը. ինչպես՝ zo *«երթալ, գնալ» բայից.*

zo bofobafo *մի կարճահասակ մարդու գնալը (գնալու ժամանակ մարմնի մասերը աշխուժորեն շարժելով).*

zo kpudukpudu *մի կարճահասակ մարդու արագ-արագ գնալը.*

zo takataka *առանց ուշադրություն անելու գնալ.*

zo wiatawiata *բարձրահասակ մարդու հաստատ և ուժեղ քայլերով քայլելը.*

և այսպես միևնույն zo *«երթալ» բայից 38 ձևով բայ!*

*(*Westermann, *83—84)*

Բայց թուրքերենը այս կարգի բառերը ո՛չ միայն իբր բնաձայն մակբայ կարող է գործածել, այլև կարող է նրանցից բայական ձևեր կազմել և խոնարհել. ինչպես՝ baγərmaq *«բղավել»,* čaγərmaq *«կանչել»,* čəγərmaq *«ճչալ, գոչել»,* haykərmaq *«կանչվռտել»։*

Նոր Նախիջևանի բարբառում կան նաև ռուսերենից փոխառյալ մակբայներ, ինչպես՝

Թօ *«մերթ» (կրկնությամբ). օրինակ՝* **Թօ աս կասէ, թօ ան կասէ**

«Մի անգամ այսպես է ասում, մի անգամ այնպես» *Հռուս.* то.

Նաfանէց *«վերջապես»* наконец

Սավսէմ *«բոլորովին»* совсем

Փանէվօ՛լ է *«ակամա, ուզես չուզես»* поневоле

Փաշթի՛շթօ *«գրեթե»* почти что

15. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ

Ա՛լ *(շեշտը դրվում է՝ զանազանելու համար* ալ *շաղկապից). Հատուկ է արևմտյան գրականին, իսկ արևելյան գրականում դրվում է* էլ, *որ տե՛ս առանձին։ Անցյալ դարի գրականում գործածական էր թե՛ածականի, թե՛ մակբայի և թե՛ բայի վրա. օրինակ՝* Ա՛լ աղէկ է. Ա՛լ շուտով. Ա՛լ կուզեմ. Լռէ կըսեմ, ա՛լ կը պոռայ *(Այտն. 108)։ Արդի արևմտյան գրականում սրանք ռամկաբանություն համարվելով՝ ջնջված են։* Ա՛լ *գործածական է միայն «այլ ևս» իմաստով և մեծագույն մասամբ բացասական բայի հետ. ինչպես՝* Ա՛լ յոյս չկայ. Ա՛լ չեմ սպասեր. Ա՛լ մի՛ փնտռէf. Ա՛լ երկար բարակ մտածելու պետf չկայ։— *Դրականով էլ ասում ենք՝* Ա՛լ երկար ըրիր ճա՜։ *Նույնպես նաև հարցականի հետ.* Ալ ո՞ւր կ'երթաս։ Ալ ի՞նչ ընեմ. Ալ ինչո՞ւ կը շտապես. Ալ ի՞նչ կ'ուզես։— *Իսկ ածականի, մակբայի և դրական բայի հետ դրվում է պարզապես* աւելի *կամ* ա՛լ աւելի. *ինչպես՝ Աւելի աղէկ է. Ա՛լ աւելի աղէկ է.* Լաւ կ'ըսեմ, աւելի կը պոռայ կամ ա՛լ աւելի կը պոռայ։

Ակամա. օրինակ՝ Ակամայ յանձն առի. դիմադրել կարելի չէր։

Ամբողջ *և* բոլոր. *ըստ իմաստի երկուսը միևնույնն են և օտար լեզուների մեջ արտահայտվում են միևնույն ձևով։*

Ամենևին. *գրաբարում նշանակում է «բոլորովին, ամբողջությամբ» և կարելի է ասել, օրինակ՝* ամենևին գեղեցիկ *«ամեն կերպով գեղեցիկ, շատ գեղեցիկ». բայց արդի հայերենում* ամենևին *բացասական գաղափար է և գործածական է միայն բացասական բայի հետ թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրականում. օրինակ՝* Ամենևին գեղեցիկ չէ. Ամենևին ճամարձակություն չունեցայ. Ամենևին մի՛ խօսիր։— *Մինչև իսկ եթե միայն* ամենևին *բառը գործածենք, առանց ուրիշ հավելվածի, կհասկացվի «ո՛չ, բնավ ոչ». օրինակ՝* Ուևէ բան գտա՞ր.—Ամենևին *(այսինքն ոչինչ չգտա)։— Բացի սրանից* ամենևին *բառը արևելյան գրականում քիչ է գործածական և ընդհանրապես նրա փոխարեն գրվում է* բոլորովին.

իսկ արևմտյան գրականում բոլորովին *դրական է, որի բացասականն է* ամենևին:

Հայերենում ամբողջ *ցույց է տալիս մի՛ միություն, ուստի գործածվում է եզակիի հետ. իսկ* բոլոր *ցույց է տալիս բազմություն, ուստի գործածվում է հոգնակիի հետ. օրինակ՝*

Ամբողջ մարդկութիւնը. *բայց՝*

Բոլոր մարդիկ եղբայր են.

Ամբողջ աշխարհ ման եկայ, բոլոր երկիրները տեսայ:

Սխալ է ասել՝

Ես բոլոր Պետերբուրգի մեջ միայնակ և որբ եմ *(Պատկ. ընտիր. երկաս., 1893, Բ, 140)։*

Ամուր *«պինդ, ուժեղ».* Նա ամուր սեղմեց իմ ձեռքը. Սիրտդ ամուր բռնէ. Դռները ամուր փակեցէք որ չփախչի.— *Այտն. 113 իբր օրինակ դնում է* Ամուր կանչեցէք. *այս ձևը գործածական էր անցյալ դարում արևմտյան հայերենում, ինչպես և* ամուր ձայնով *և այլն. այժմ գավառաբանություն է համարվում։*

Այժմ, *տե՛ս Հիմայ։*

Այսպէս, այդպէս, այնպէս. *օրինակ՝* Այսպէս խօսեց Զրադաշտը. Այսպէս աւելի լաւ է. Այնպէս էր երգում... Այդպէ՞ս են պատասխանում: *Սրանց ժողովրդական ձևերն են արևելյան գրականում* էսպէս, էդպէս, էնպէս, էսէնց, էդէնց, էնէնց, *իսկ արևմտյան գրականում՝* ասանկ, ատանկ, անանկ, սանկ, տանկ, նանկ: *Սրանց գործածությունը այժմ խոտելի է համարվում։ Արևմտյանը գիտե նաև* սապէս, դապէս, նապէս, *որոնք նույնպես հաճելի ձևեր չեն համարվում։ Իբրև մակբայ՝ գործածական են նաև ածականի հետ. ինչպես՝* Այնպէս գեղեցիկ է երգում. Այնպէս սիրուն տղայ է. Այդպէս բարձր մի՛ գոռար.— *իբր ածական ավելի գործածական են* այսպիսի, այդպիսի, այնպիսի. *իսկ երբ ասենք՝* Այնպիսի չար տղայ է, Այնպիսի լաւ ձայն ունի *և այլն, դրանց մեջ այնպիսի իբրև ածական՝ վերաբերում է* տղայ, ձայն *գոյականներին և ո՛չ թե* չար, լաւ *ածականներին։ Այդ երևում է նրանից, որ երբ ասում ենք* Այնպիսի՜ լաւ ձայն ունի, *և ուզում ենք նույնը կրկնել, ասում ենք՝* Այնպէս լաւ, այնպէս լաւ, որ խսկի լսած չկաս:— *Այս մակբայները կարող են գործածվել նաև գործիական հոլովով. արևելյան գրականում* այսպիսով, այդպիսով, այնպիսով, *իսկ արևմտյան գրականում* այսպէսով, այդպէսով, այնպէսով, *ժողովրդական ձևով՝* ասանկով; ատանկով, անանկով, *ռամիկ և խոտելի են համարվում* սանկով, (տանկով), նանկով: *Այս*

բոլորը նշանակում են «այս ձևով, այդ ձևով և այլն»։ Օրինակ՝ Այսպէսով մենք մեր հաշիվը փակեցինք։

Այսուհետև, այնուհետև *(չկա* այդուհետև*). սրանք սովորական են այժմ արևելյան գրականում և անցյալ դարում սովորական էին նաև արևմտյան գրականում, ուր այժմ գրաբար են համարվում։ Արևմտյան գրականում ավելի ընթացիկ են այժմ* ասկէ ետքը, ադկէ ետքը, անկէ ետքը, *ինչպես որ արևելյան գրականում էլ ասում ենք* սրանից յետոյ, դրանից յետոյ, նրանից յետոյ։

Այսչափ, այդչափ, այնչափ,

Այսքան, այդքան, այնքան։

Այստեղ, այդտեղ, այնտեղ, այստեղից, այդտեղից, այնտեղից, այստեղով, այդտեղով, այնտեղով *(քիչ անգամ ասվում է* այստեղում, այդտեղում, այնտեղում), այստեղերքը, այդտեղերքը, այնտեղերքը, այստեղերքից, այստեղերքում, այստեղերքով *և այլն. գործածական են արևելյան գրականում։ Արևմտյանը կարող է ասել* այստեղ, այդտեղ, այնտեղ, *բայց ավելի՝* աստեղ, ադտեղ, անտեղ, սատեղ, (դատեղ, նատեղ), *և մանավանդ* հոս, հոդ, հոն, *որ տե՛ս վարը։*

Այսօր. *օրինակ՝* Այսօր ի՞նչ օր է. Այսօր չորեքշաբթի է. Այսօր չէ, վաղը կը բերեմ։ Այսօր գալու էին։

Անդադար. *օրինակ՝* Լալիս էի անդադար մօրս քունը խանգարած. Անդադար սիրտ կը մաշեցնէ։

Անշուշտ. *օրինակ՝* Խոստացաւ, անշուշտ կը գայ. Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի *(Դուրյան). հին ձև էր արևմտահայերի մեջ՝* անշուշտ եմ *«տարակույս չունեմ, վստահ եմ, ապահով եմ»։*

Անօթի. *օրինակ՝* Անօթի մեռաւ խեղճը. *գործածական է արևմտահայերի մեջ. արևելահայերի մեջ գործածական է* քաղցած. *օրինակ՝* Շուտ ճաշ բերէք, քաղցած *(կամ* սոված) կոտորվեցինք։

Առ այժմ. *օրինակ՝* Առ այժմ այսքան. Առ այժմ այսքանով բաւականացէք. *(հին ձև է արևմտահայերի մեջ* առ ժամս. *օրինակ՝* Առ ժամս հոս ենք *(Այտն. 109). ժողովրդական է* հիմակուհիմայ)։

Առաջ. *ցույց է տալիս թե՛ տեղ և թե՛ ժամանակ. օրինակ՝* Առաջ գնա. Առաջ անցիր. *երկու իմաստով էլ հասկացվում են. նույնիսկ եթե ասենք* «Դու նրանից առաջ անցար=Դուն անկէ առաջ անցար», *դարձյալ անորոշ է մնում, թե խոսքը ժամանակի՞ թե տեղի մասին է։ Տարբերությունը հասկացվում է հակադրությամբ. ինչպես՝* Դու առաջ անցար, նա յետոյ=Դուն անկէ առաջ անցար, ան քեզմէ ետքը»։ *Կամ նաև հոլովական ձևերով. ինչպես՝* Առաջուց նա անցաւ

(ժամանակ), Նա առաջից անցաւ *(տեղ)*. Առաջուց *կամ* առաջվընէ գուշակեց *(ժամանակ)*. Առջևէն կ'երթար *(տեղ)*։— *Հին ձևեր են, որ հիշում է Այտն. 109, 112* Յառաջ մենք աւետեցինք, Յառաջագոյն ըսեր էի, Յառաջ լսէ, յետոյ խօսէ. Յառաջվընէ գուշակեց:

Առաւօտ, -ուն. *օրինակ*՝ Առաւօտ արի. Առաւօտուն եկաւ.— *Արևմայան*՝ Առտու մարդ չկար. Առտուն կանուխ թէ ելլենք *(երգ)*. *ավելի հին են Այտն. 113* Առտուան *կամ* Առաւօտան իմացուեցաւ:

Ասդին, ադդին, անդին *«այս կողմ, այդ կողմ, այն կողմ». օրինակ*՝ Ասդին նայեցան. Ասդին նստայ. Անդին իջան. Անդին թառեր է. Ասդիէն եկէք. Անդիէն շրջան ըրէ. Մէյ մը անդին, մէյ մը անդին կ'երթար կուգար:— *Բոլորն էլ արևմտահայերեն*։

Ասկէ, ադկէ, անկէ. *Թեև* այս, այդ, այն *ցուցականների բացառականն են, բայց հաճախ տեղի իմաստ ունեն. իբր «այստեղից, այդտեղից, այնտեղից». օրինակ*՝ Ասկէ ելլես, Ադկէ փախան, Անկէ նեծան: Ասկէ անդին ճամբայ չկայ:— *Բոլորն էլ արևմտահայերեն*։

Ատենօք *«ժամանակ» բառից կազմված մակբայներ են*. Ատեն ատեն *«ժամանակ առ ժամանակ, երբեմն երբեմն»*, Ատենին *«ճիշտ ժամանակին»*, Ատենօք *«ժամանակավ, հին ժամանակ, էր երբեմն». օրինակ*՝ Ատեն ատեն իրարու կը հանդիպինք. Ատենին եկար հասար. Ատենօք թագաւոր մը կայ եղեր:— *Բոլորն էլ արևմտահայերեն*։

Արդյօք. *գործածվում է չիմացած բանի պատասխանը սպասելու համար. օրինակ*՝

Արդյօք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ:

(Րաֆֆի)

Ոչ ոք ըսաւ,— Հէգ տղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մխայ...

(Դուրյան)

Թե՛ նախադաս է և թե՛ հետադաս. ինչպես՝ Արդեօք գիտէ՞ին, Գիտէ՞ին արդեօք *(Այտն. 110)*։

Արդէն *ասվում է առաջուց եղած մի բանի համար*. Երբ ես մօտեցայ, նա արդէն հեռացել էր. Ես արդէն իմանում էի. Արդեն մեռած էր. Արդէն փոքր էր, մի քիչ էլ դու փոքրացրիր:— Արդեն ներեալ է *(ասում են արևմտահայերը՝ «ներեցէ՛ք» բառին ի պատասխան)*։ Արդէ՞ն *(հարցական ձևով, երբ անսպասելի մի բան տեսնում ենք կատարված)*։

Արտաքուստ *«դրսից, դրսանց»*. Արտաքուստ լաւ է երևում:

Արտորնօֆ *«շտապով, անապարանքով». օրինակ՝* Արտորնօֆ վեր բարձրացան.— *արևմտյան հայերենում (այժմ շատ գործածական չէ)։*

Աւելի, *որի սաստկական ձևերն են՝* աւելի ևս, է՛լ աւելի—*արևմտահայերեն* ա՛լ աւելի. *տե՛ս* ա՛լ: *Օրինակ՝* Աւելի գեղեցիկ. Նրանից աւելի սիրուն է. Է՛լ աւելի է լաւացել գեղեցկացել. Շուտ եկուր ըսի, աւելի ուշացար:— *Արևելահայերը սովորաբար գործածում էին աւել ձևը, որ շփոթվում էր «աւելու, աւել» բառի հետ. այժմ արդեն աւելի ձևը սովորական է դարձել. բայց դեռ կարելի է ասել՝* աւել-պակաս. *օրինակ՝* Աւել-պակաս մի՛ խօսիր:— *Արևմտահայոց մեջ գործածվում է նաև մի իմաստով, որի համապատասխանն է «ֆրանս.* plutôt*», և որի դեմ արևելահայերը դնում են «աւելի շուտ». օրինակ՝*

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կը նուաղի,
Սիրտը խունկի պէս կը մխայ սիրավառ:
(Դուրյան)

Արևմտահայերը խուսափում են գործածելուց աւելի շուտ *ձևը, ասելով թե ուշի-շուտի հարց չկա այստեղ։— Թամիկ է* եւելի, էվէլի *ձևը, որ տալիս է Այտն. 108. այժմ բոլորովին վտարված է։*

Բարով. *օրինակ՝* Բարով եկար, նազար բարով. Երթաս բարով. Դնաս բարով. Բարով եկար, խոսքի ներոս, գործի գանան. Բարով վայելես:

Բարձրաձայն *«բարձր ձայնով». օրինակ՝* Բարձրաձայն կարդալը օգտակար է:

Բնաւ, բնաւ ոչ. *օրինակ՝* Բնաւ չեմ հիշում. Բնաւ չերևաց: *Գործածվում է միշտ բացասականի հետ, ուստի երբ հարցնում են* Տեսե՞լ ես նրան.— *պատասխանը եթե լինի «բնաւ», հայտնի է որ նշանակում է «բնաւ ոչ»։— Սաստկական ձևն է* բնա՛ւ երբեք, բնաւ ամենևին: *Հարցականով էլ կարելի է ասել. «Դու նրան բնաւ տեսե՞լ ես». և նշանակում է «երբևիցե»։*

Բոլորովին. *օրինակ՝* Բոլորովին մոռացայ. Ես նրան գտայ բոլորովին թմրած վիճակում:— *Այս բառի մասին տե՛ս* Ամենևին:

Բռնի *«զոռով».* Բռնի տարին. Բռնաբար վարեցին *(Այտն. 108).* Բռնութեամբ դռնից դուրս արին.— *միջին ձև է՝* Բռնի ուժով քշեցին:

Գաղտնի *«ծածուկ». օրինակ՝* Ականջին գաղտնի փսփսաց: *Գրբ.* գաղտ, *ժողովրդական են* գողտուկ, գաղտուկ:

Գիշերանց, գիշերով *«գիշեր ժամանակ».* Ուշ գիշերանց ո՞ւր ես գնում: Գիշերով տունը կոխեցին:

Գուցէ և թէրևս, *երկուսն էլ նշանակում են «կարելի է, կարող է լինել որ». առաջինը գործածվում է այն դեպքում, երբ խոսողը հույս չունի որ դեպքը կկատարվի և կամ չի ուզում որ կատարվի. իսկ երկրորդը ընդհակառակը. օրինակ՝* Գուցէ հիւանդ հայրս մեռնի. Թէրևս հայրս լաւանայ: *Այժմ Երևանում նոր սերնդի մեջ սովորական գործածություն է ստանում* մի՛ գուցէ, *որ բուն նշանակում է «չլինի թե», իսկ այժմ նշանակում է «թերևս»: Օրինակ՝ Հայրս* մի ամիս է հիվանդ պառկած է. շատ լաւ խնամք ենք տանում. մի՛ գուցէ լաւանայ: *Մինչդեռ* մի՛ գուցէ *ասվում է վատ բանի համար, որ չես ցանկանում. օրինակ՝* Հովանոցդ վերցրու, մի գուցէ անձրև գայ. Ձեռքերդ հետդ առ, մի գուցէ աւազակները յարձակուեցին:

Գրեթէ, *որ և* Համարեա՛ թէ. *առաջինը ընդհանուր է. երկրորդը միայն արևելյան գրականում, որի դեմ ունենք արևմտյան* սեպէ թէ. *օրինակ՝* Սեպէ թէ ակռադ ելաւ *(Պարոնյան). բայց այս ձևը այժմ հարգի չէ, որովհետև օտար է (=արաբ.* ḥisāb *«հաշիւ» բառից. առաջ ասվում էր* սայպէլ *«հաշվել», հետո դարձավ* սեպել *«համարել», հմմ. սեպէ՛):*

Դեռ *«մինչև այս ժամանակ». օրինակ՝* Դեռ չեմ տեսել. Դեռ յոյս կայ. Դեռ պիտի սպասե՞նք.

Ջերմ համբույրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատս դալկահար...
Դեռ չգրկած էակ փունջ մը՝
Ժպտէ, գեղէ, հուրէ շաղեալ...

(Դուրյան)

Դժուար, դժուար թէ, դժուարաւ. *ասվում է երբ շատ հուսալի չէ գործողության կատարումը. օրինակ՝* Դժուար կը լուծես այդ խնդիրը. Այսօր կը գա՞յ.— Դժուար *կամ* դժուար թէ. Մեծ չարչարանքով, դժուարաւ հասանք տեղ:

Դիւրաւ *«դյուրին կերպով, հեշտ». օրինակ՝* Դիւրաւ կը կոտրի. Խէժով աւելի դիւրաւ կը կպչի, քան թէ սոսնձով:

Դիմաց *«դեմը». օրինակ՝* Դիմաց անցաւ. Դէմ դիմաց նստել են. Դիմացէ դիմաց նստած էինք. Դիմացից (դիմացէն) ակնարկեցին:

Դուրս. *օրինակ՝* Դո՛ւրս կորիր, անպիտան. Աղուէսը ներս մտաւ, պոչը դուրսը մնաց. Քաղաքը ներսից (ներսէն) ու դրսից (դուրսէն) պաշարեցին:

Ետ *«դեպի հետև». օրինակ՝* Ետ դարձաւ. Դարձի՛ր, ե՛տ դարձիր *(Օտյան).* Ետև մնացինք. Ետևէն պտտելու էինք.— *Սրանք արևմտա-*

հայ ձևեր են, որոնց համապատասխանում են արևելահայ յետ, յետև, յետևից, յետևում, կրկնությամբ յետ յետ: Այժմ սկսեցին գործածել արևմտահայ ետ, ետև ձևերը։ Այս բոլորը ցույց են տալիս տեղը, ինչպես նաև ետին, ետի դին և այլն։ Իսկ ժամանակ ցույց տալու համար ասվում է ետք, ետքը, ետքէն. օրինակ՝ Քսան տարի ետք. Անկէ ետքը ոտքս ներս պիտի չդնեմ. Ետքէն իմացայ թէ հայ էր: Այս բոլորի դեմ արևելյան հայերենում դրվում է յետոյ. այսպես՝ Քսան տարի յետոյ. Սրանից յետոյ. Յետոյ իմացայ և այլն։

Երբ «ո՛ր ժամանակ». թե՛ հարցական և թե՛ հաստատական. վերջին դեպքում կարող է ստանալ նաև որ շաղկապը (կցվում է անբաժան). օրինակ՝ Ե՞րբ եկար.

Երբ ալեկոծ ծովի վրայ իմ մակոյկը խորտակուի.
Երբոր բացուին դռներն յուսոյ (Ռուսինյան).

Համբոյր մ'առի ներանէ,
Երբ կարմիր շողք մարէին
Հորիզոնին վերևի (Դուրյան)։

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել (Նալբանդյան).

Երբոր վարդի փունջք հայեցի
Ծլան դժգոյն ճակտիդ վերև (Դուրյան)։

Թուրքական ձև է սրա փոխարեն գործածել միայն որ. ինչպես՝

Ըմբշամարտի կարգն որ հասաւ (Հոմերի Իլիակ., Թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 230).

Նշանակուած տեղն որ հասաւ (216).
Հեկտոր այս որ ասաց (152).
Գլաւկոս Հեկտորի փախչիլն որ տեսաւ (151)։

Նախորդից տարբեր է երբ որ «այն ժամանակ որ», ուր որ շաղկապ է և գրվում է առանձին։ Հնչմամբ էլ տարբերվում են. Երբոր = yerpor, երբ որ = yerp vor. մինչև իսկ կա երբոր որ, որ հին ձև է և այժմ խոտելի։ Ունենք դարձյալ մինչև ե՞րբ, որի հին ձևն է մինչև ցե՞րբ.

Ո՜հ, մինչև ցե՞րբ, ըսէ՛, ո՜ կոյս, հոգիս ըլլայ գեղոյդ գերի,
Եւ մինչև ցե՞րբ թրթռան աղիք ցաւած սրտիս և քնարի:

(Դուրյան)

Երբեմն *«ո՛չ միշտ, լինում է ժամանակ որ, մերթ»*. Երբեմն գալիս է, երբեմն չի գալիս. *ասվում է նաև կրկնությամբ. ինչպես՝* Երբեմն երբեմն *այցելության գալիս է։— Առաջ գործածվում էր նաև «կար ժամանակ որ, հին ժամանակ, էր երբեմն» իմաստով. օրինակ՝*

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եւ թիթեռնի մ'ունէր թևեր *(Դուրյան)։*

Բայց այժմ այս իմաստով չի գործածվում։

Երբեք *«ո՛չ մի ժամանակ». (առաջ գրվում էր* Երբէք, *այժմ գրում են* երբեք, *ինչպես ունենք* ուրեք, ուստեք՝ -եք *մասնիկով). օրինակ՝*

Երբեք մէկին չեմ նախանձ.
Ե՞րբ էք գալու մեզ մոտ.— *Երբե՛ք։*

Նշանակում է նաև «երբ և իցէ, որևէ ժամանակ». օրինակ՝

Երբեք դուք նրան հանդիպե՞լ էք.— Երբեք:

Ասվում է նաև բնաւ երբեք՝ *իբր սաստկական։*

Երեսանց *«առ երեսս, միայն արտաքուստ, կեղծաբար». օրինակ՝* Երեսանց բարեպաշտ մարդ է երևում, բայց... Երեսանց սիրով բարևեց ու անցաւ:

Երէկ *«այսօրվա նախորդ օրը». օրինակ՝*

Երէկ երբ պաղ քրտանց մէջ
Ցուրտ մրափ մը կ'առնէի *(Դուրյան)։*

Երէկ չէ առաջի *(=առջի) օր «նախորդ օրը»։*

Երկար. *օրինակ՝* Երկար նստեցինք, երկա՜ր շատ երկար խօսեցինք. Շա՜տ ապրես, երկա՜ր ապրես *(այսինքն «երկար ժամանակ, երկար տարիներ»)։*

Զուր. *տե՛ս* Պարապ տեղը:

Թերևս. *տե՛ս* Գուցէ:

Էլ. *համապատասխանում է արևմտահայերենի* ալ *ձևին, որ տե՛ս վերը. բայց տարբերվում է նրանից այն բանով, որ մինչդեռ* ալ *գործածվում է գլխավորապես բացասական ձևով,* էլ *թե՛ բացասական և թե՛ դրական. օրինակ՝*

Է՛լ չխօսեց Արաքսը *(Պատկանյան).*
Գնաց, գնաց սիրելիս, գնաց,
Էլ մի՛ փնտրէք, էլ մի՛ որոնէք *(երգ).*
Է՛լ լցրու. էլ ուզո՞ւմ ես:

Առաջինների մեջ է՛լ *նշանակում է «այլ ևս». դրականում սաստ-կական ձևն է* է՛լ ավելի:

Այս բոլորի մեջ՝ էլ *նախադաս է. իսկ հետադաս* էլ (ես էլ, դու էլ, տեսայ էլ, կերայ էլ) *շաղկապ է։— Այս* էլ *ձևից է առաջացած* էլի *«դարձյալ, նորից». օրինակ՝* է՛լի եկաւ այս մարդը. էլի՞ ես ուզում:

Ի բնէ *«բնականից». օրինակ՝* Ի բնէ ծոյլ է:

Ի զուր, *տե՛ս* Պարապ տեղը:

Ի ծնէ *«ծնունդից, ծնված ժամանակից». օրինակ՝* Ի ծնէ կոյր էր:

Ի յաւիտենից *«աշխարհի սկզբից». օրինակ՝* Ի յաւիտենից սահմանված է *(Այտն. 113)։*

Ի՞նչ. *սովորական իմաստով միջակ անուն է. իսկ երբ նշանա-կում է «ինչո՞ւ», մակբայ է. օրինակ՝* Ի՞նչ ես կանգնել, երեսս նայում. Ի՞նչ ես բղաւում, ի՞նչ ես գոռում. Ի՞նչ կը ծեծկուիք:

Ինչո՞ւ, *ասվում է նաև* ինչո՞ւ համար. *հարցնում է մի բանի պատճառը. օրինակ՝*

Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական.
Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սէգ, հպարտ աչերից *(Պատկանյան)։*

Ինչո՞ւ ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քու ալեակք:
Ոչ ոք ըսաւ. Հէգ տղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մխայ *(Դուրյան)։*

Ի՞նչչափ, ի՞նչքան. հարցական են. օրինակ՝ Ի՞նչչափ տխուր ես. Ինչքա՞ն դժուար է. Ինչչա՞փ մանեցիր. Ի՞նչքան հաւաքեցիր այսօր: *Սրանց պատասխանը կարող է լինել դրական. ինչպես՝* Ինչքան որ կարողացայ. Ինչքան ուզես. Ինչչափ ցանկանաս. Հերիք ինչքան խօսեցիր:

Սրանց հետ նույն են որչափ, որքան. օրինակ՝ Որչա՞փ վճարեցիր. Որքան դառն է այս բաժակը. Որքան էլ որ համոզես...

Ինչպէս. *հարցական է կամ դրական.* Ինչպէ՞ս իմացար այս բոլորը. Ինչպէս պիտի ուրախանայ, երբ լսէ. Բարդ բառերը կազմ-ված են երկու կամ ավելի բառերից. *ինչպես՝* շոգենաւ, շոգեկառք և այլն. Ինչպէս դժուար է:

Իսկապէս *«իրօք, ճշմարիտ». օրինակ՝* Իսկապէս դու նրան տեսել ես: Իսկապէս նա ճիշտ էր ասում:

Ի սկզբան *«սկզբում, նախ». օրինակ՝* Ի սկզբան ձայն չհանեց,

բայց յետոյ բարկացաւ. Ի սկզբանէ աշխարհը այսպէս է ստեղծուել. Ի սկզբանէ անտի օդն ու ջուրը գոյութիւն ունէին:

Իսկոյն *«անմիջապես»*. *օրինակ՝* Այս որ լսեց, իսկոյն դուրս թռաւ. *գործ է ածվում ապագա մի գործողության համար, ըստ որում նշանակում է «անմիջապես հետո»։ Չի գործածվում անցյալի համար, ուստի սխալ է ասել՝* Ներս մտավ մոխրոտ Վախվախյանը և ձայնեց թե իսկույն փողոցում հանդիպել է Սահառունիին *(Շիրվանզադե, Երկերի լիակ. ժող., 1930, Դ, 360)։ Պետք էր ասել «քիչ առաջ, մի քիչ առաջ»։ Սրանից մի աստիճան բարձր է* Իսկոյն եւեթ:

Ի սպառ *«բոլորովին, ամբողջապէս»*. *օրինակ՝* Այդ սովորութիւնը ի սպառ վերացաւ. Ի սպառ ջնջուեց. Ի սպառ մոռացանք:

Իսկի, *որ և* սկի. *հարցականով նշանակում է «երբևիցե», իսկ բացասականով՝ «բնավ, ամենևին»*. Իսկի դու թատրոն գնացե՞լ ես.— Իսկի չեմ գնացել. *որ և* Իսկի ոչ, *կամ պարզապես* Իսկի, *որոնք միևնույն նշանակությունն ունեն։— Արևմտահայերենում գործածական չէ։*

Իրապէս, իրաւ, իրօք *«ճշմարիտ որ, ստուգիւ». արևմտահայոց մեջ ժողովրդական ձև է* իրաւցնէ. *օրինակ՝* Թէեւ այդպէս են կարծում, բայց իրապէս այդպէս չէ. Իրօք քանի՞ հոգի հաւաքուած կային. Իրա՞ւ կըսես.— Սուտ ըսելու պարտականութիւն չունիմ: Իրաւցնէ խոստացեր է *(Այտն. 108)։*

Լռելեայն *«առանց ասելու էլ»*. *օրինակ՝* Լռելեայն հասկացւում է:

Խիստ *«շատ, սաստիկ»*. *օրինակ՝* Խիստ բարձր աշտարակ. Նա խիստ յամառեց. Ծխելը խստիւ արգելուած է:

Ծախու *«վաճառելու». ածական է՝ երբ գոյականի հետ է գործածվում. օրինակ՝ Ծախու տուն, ծախու ապրանք. իսկ մակբայ է, երբ բայի հետ է գործածված. օրինակ՝* Այս տունը ծախու է. Ծախու տալ, ծախու առնել, ծախու հանել *(հմմտ. Այտն. 113)։*

Ծանր. *օրինակ՝* Ծանր ծանր կը քալես, սիրտս վեր վեր կը հանես. Ծանր նստէ, որ լիր գաս *(առած)*. Ծանր ծանր է խօսում. Ուրիշների հետ ծանր վարուելու ձեւը գիտէ:

Կամաց. *օրինակ՝* Դուռը կամաց փակել! Շատ կամաց է խօսում. Կամաց քայլել. Կամաց կամաց հասանք տուն:

Կամաւ *«իր կամքով, կամ աւելի՝ դիտմամբ»*. *օրինակ՝* Կամաւ ասացի.— *ավելի լավ է՝*

Կամովին. *օրինակ*՝ Կամովին անձնատուր եղաւ.— *այլ է*՝

Կամայ ակամայ *«ուզես չուզես»*. *օրինակ*՝ Կամայ ակամայ պարտաւոր ենք ընդունել.— *Այտն. 108 նկատում է, որ առանձին չի գործածվում կամայ բառը. ինքը օրինակ է տալիս սակայն*՝ «Կէս կամայ կէս ակամայ», *որ այժմ նույնպես չի գործածվում։*

Կանուխ *«շուտ, վաղ»*. *օրինակ*՝ Վաղը առաւօտ կանուխ կը հասնի. Կանուխ գարնան ժամանակ. Խանութը այսօր կանուխ փակեցի.— *Արևմտահայերենում* կանուխկեկ *նշանակում է «բավական կանուխ»։*

Հազիւ, հազիւ թէ *«դժվարությամբ, ոչ ճիշտ, դեռ պակաս, դեռ նոր»*. *օրինակ*՝ Հազիւ ազատուեցինք. Հազիւ պրծանք. Հազիւ հասանք տուն. Հազիւ մթնել էր. Կէսը հազիւ կարդացի. Ժամը հազիւ 9 կլինէր. Աղջիկս հազիւ 16 տարեկան կայ:— *Սաստկականն է* հազիւ հազ:

Հանդարտ. *օրինակ*՝ Հանդարտ խօսիր, մի՛ բղաւիր. Հանդարտ քայլելով մի ժամ կտեւէ:

Հապա *«ի հարկե»*. *օրինակ*՝ Լաւ գիտե՞ս.— Հապա՛.— *հաճախ ծաղրական է. ինչպես*՝ Քեզ տնից դուրս կանեմ.— Հապա: *Տե՛ս նաև իբր շաղկապ։*

Հաւանցի *«վեր ի վերո»*. *օրինակ*՝ Հաւանցի կարդացի:

Հարկաւ *(արևմտահայերեն)* =ի հարկէ *(արևելահայերեն) «անշուշտ»*. *օրինակ*՝ Պատասխանը գրեցի՞ր.— Ի հարկէ *(կամ* հարկաւ*)*. Լրագրի մէջ հարկաւ կարդացիք. Քսան տարեկան կլինի ի հարկէ:

Հեռուստ *«հեռվից». հնացած ձև։*

Հետ *«միասին»*. *օրինակ*՝ Հետը գնա, մենակ մի՛ գնա:

Հերու *«անցյալ տարի»*. *օրինակ*՝ Հերու դեռ ողջ էր:

Հիմայ. բուն *արևմտահայ ձև է. բայց այժմ գործածվում է նաև արևելահայերի մեջ, ուր ավելի սովորական է* այժմ. *ժողովրդական ձևեր են* հիմակ *և* հիմի. *օրինակ*՝

Հիմի՞ էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ.

սրանցից կազմված են առ այժմ *(տե՛ս վերը)*, այժմէն, հիմակուց *«այժմվանից»* և հիմակուհիմայ *«առ այժմ»*. *օրինակ*՝

Այժմէն թող որ շանթ մ՚ըլլամ դալկահար,
Պլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար:

(Դուրյան)

Հիմակուընիմայ կերակուրէն զատ ուրիշ բանի մը պէտք
չունիմ:

(Պարոնյան)

Ո՞ւր մնացիր մինչև հիմայ:

Հիմայ նոր արթնցաւ:

Այժմ ո՞ւր պէտք է գնաք.— Առ այժմ ո՛չ մի տեղ:

Հիմակուց սկսեր է ծխել:

Հնուց *«Հին ժամանակից սկսած». օրինակ՝* Հնուց սովորություն էր եղած: *Ավելի հին ձևեր են* ի հնուց, ի հնուց անտի, ի հնուց հետէ:

Հոս, հող, հոն *«այստեղ, այդտեղ, այնտեղ». զուտ արևմտահայ ձևեր են, որոնք գործածվում են թե՛ իբր դադարում և թե՛ իբր շարժում. սրանց բացառականն է* հոսկէ, հողկէ, հոնկէ. *մյուս բոլոր ձևերը համարվում են ուղիղ. օրինակ՝* Հոս վազեց. Հոս մնաց. Հոսկէ անցան.

Հող ղրկեցին. Հող ո՞վ կայ. Հողկէ հալածեց.

Հոն հասայ. Հոն կը բնակի. Հոնկէ դարձաւ.

Իսկ թէ կորնչի պիտի հուսկ իմ շունչ

Հոս, մառախուղի մէջ համր, անշշունչ...

(Դուրյան)

Հոս ջրվէժ, հոն ջրի առուակ, հոս կը դդըշէ, հոն կը կարկաչէ, ...հոն կը փրփրայ, հոս կը փայլփլայ... *(Օտյան)։*

Ձրի *«առանց դրամի, անվճար». օրինակ՝* Ձրի առիք, ձրի տուէք:

Մանր *«1. մանր. 2. մանրամասն». օրինակ՝* Մանր ջարդեցէք. Մանր քննեցին:

Մեծապէս *«շատ». օրինակ՝* Մեծապէս շնորհակալ եմ:

Մերձուստ *«մոտիկից». հնացած ձև։*

Մէկանց *կամ* մէկէն *«հանկարծ». օրինակ՝* Մէկէն (մէկանց) անոնց վրայ յարձակեցան: *Արևմտահայ ձև է, որին համապատասխանում է արևելահայ* մի անգամից:

Մէկդի *«մի կողմ». օրինակ՝* Մէկդի՛ կեցիր. Մէկդի՛ կայնէ:— *Արևմտ.։*

Մերթ *«երբեմն». գործածվում է միշտ կրկնությամբ. ինչ.* Մերթ ուրախ է, մերթ տխուր. *բուն կրկնական ձևն է* մերթ ընդ մերթ:

Մի՛ *(արգելական մակբայն է, որ թե՛ եզակի և թե՛ հոգնակի միևնույն ձևն ունի). օրինակ՝* Մի՛ տանիր, Մի՛ տանիք:

Միանգամ. *հաճախ գործածվում է գրաբարում իբրև բոլորովին ավելորդ բառ. օրինակ՝* Երթ ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա որ ինչ միանգամ Տէր արար քեզ *(Մարկ. Ե 19)։*

Այս բառը գոյություն չունի ֆրանսերեն և անգլերեն թարգմանությունների մեջ. Այսպես ֆրանս. que le Seigneur t'a faites, *անգլ.* the Lord hath done for thee. *Այսօր էլ, մեր սովորական խոսակցության մեջ, նույնպիսի ավելադրությամբ ասում ենք* մի, մէկ, *Պլ.* մէյ մը. *օրինակ՝* Գնա մէկ տես, Գնա մի տես, Գնա մէյ մը տես. *այս վերջին մի քանի տարիներում Երևանում* մի-*ի փոխարեն սկսեցին գործածել* մի հատ *ձևը փոխանակ ասելու* մի. *օրինակ՝* Գնա մի հատ տես: *Այս անհարմար ձևը (որովհետև* մի հատը *ոչ տեսնելուն է հարմար, ոչ գնալուն) տարածվեց խուսափելու համար* մի՛ *արգելականի հետ շփոթելու երկյուղից.* մի՛ գնա *նշանակում է* մի՛ երթար: *Արևմտահայերի մեջ այս փոփոխությունը տեղի չունեցավ, որովհետև* մէյ մը *ձևը կարելի չէր շփոթել* մի՛ *արգելականի հետ։*

Միայն *«լոկ, մենակ». սաստկականն է* միմիայն. *գործածվում է թե՛ անձի, թե՛ իրի և թե՛ գործողության համար. օրինակ՝* Ե՛ս միայն *կամ* Միայն ե՛ս էի այնտեղ. Ես միայն ջուր եմ խմում, գինի չեմ խմում. Ես միայն արտասանեցի, չերգեցի.— *այս բոլոր դեպքերում կարելի է ասել* մենակ. *բայց ավելի լավ է գործածել* մենակ *բառը միայն անձի համար (իբր «առանձին»). Ծնողներս մեռան, ես մենակ մնացի. Մենակ վախենում եմ։*

Միասին, միատեղ, մէկտեղ. *օրինակ՝* Բոլորս միասին ենք բնակվում. Մէկտեղ լացինք, մէկտեղ խնդանք. Վառօդը կրակի հետ միատեղ՝ անպատճառ կը պայթի:

Մի՞թէ *«արդյոք». օրինակ՝*

Միթէ հայլոյդ մէջ անձկաւ՝
Գեղուհի՞ մը նայեցաւ.
Եւ կամ մի՞թէ կը զմայլին
Ալեակքդ երկնի կապոյտին...

(Դուրյան)

Միշտ *«ամեն ժամանակ». օրինակ՝* Երկինքը միշտ կապույտ, ծառերը միշտ կանաչ, հոգիս միշտ զուարթ: Նրա քաղցր ձայնն ո՞վ էր միշտ լսում *(Երգ)։*

Մէջ, միջից, միջև, մէջտեղ, մէջտեղում, մէջտեղից *(արևմտ.* մէջէն, մէջտեղէն*). օրինակ՝*

Դուք մէջէն, ես քովէն անցնինք միասին *(պարերգ).*

Դու է՞լ մէջ ընկար. Մի կերպ միջից դուրս եկա. Այդ ճոփիտը գտնվում է երկու լեռների միջև:

Մոտուստ *«մոտից». հնացած ձև է։*

Յաճախ *«ստէպ, շատ անգամ». օրինակ՝* Յաճախ պատահում ենք միմեանց. Շատ յաճախ տեսնում եմ նրան. Վերջերս այդպիսի դեպքեր յաճախակի դարձան:

Յամր *«կամաց, դանդաղ». հիշում է Այտն. 114. բայց հետզհետե վերանում է՝ նամր բառի հետ շփոթվելու պատճառով. կարելի է գտնել բարդության մեջ. ինչպես՝*

Երեկոյ է. բոցավառ է ճորիզոն.
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամրընթաց:

(Դուրյան)

Նույն հեղինակը գործածում է նաև յամր, բայց իբր ածական.

Դագաղս առնէ իր յամր քայլ:

Յայտնի. *օրինակ՝ Երկու օր յետոյ եղելությունը ամէնքին յայտնի դարձաւ Սրանից է* յայտնապէս, *որ հիշում է Այտն. 108. Յայտնապէս խօսեցայ. այժմ ավելի սովորական է ասել* յայտնի կերպով:

Յանկարծ *«չսպասած տեղը, անակնկալ կերպով». օրինակ՝* Գետնի տակից ճանկարծ մի դղրդիւն լսուեց. երկրաշարժ էր: Յանկարծ ներս մտաւ. Յանկարծակի եղաւ նրանց յարձակումը:

Յաւիտեան. *օրինակ՝* Նրա յիշատակը յաւիտեան անմահ պիտի մնայ պատմութեան մէջ. Ասորեստանցոց պետութիւնը յաւիտենապէս ջնջուեց:

Յետոյ. *ցույց է տալիս ժամանակը (տե՛ս*ետ*). օրինակ՝* Յետոյ կգամ. Դարեր յետոյ այս բոլորը պիտի յիշեն.— *Նախադրության մեջ ժամանակը շփոթվում է տեղի հետ, որ կարգն է ցույց տալիս. ինչպես՝* Ինձնից ճետո նա էր գալիս *(կարգի մեջ)։*

Յիրաւի *«իրոք». գրաբարում այլ իմաստով է. տե՛ս անդ։*

Նախ *«առաջ». օրինակ՝ Նախ ես մտայ, յետոյ նա. սովորական գործածություն ունի թվումների ժամանակ. օրինակ՝* Հայաստանի նահանգների մեջ նշանավոր էին՝ նախ Այրարատը, երկրորդ՝ Վասպուրականը, երրորդ՝ Սիւնիքը *և այլն. ուժեղացրած ձևն է* նախ և առաջ. *սովորական է նաև նախապես, որ նշանակում է «հին ժամանակ, ավելի առաջ». օրինակ՝* Նախապէս այս երկրում բնակվում էին խալդերը, ապա եկան արմէնները:

Ներս, ներսը, ներսից (ներսէն), ներսում. *տեղ ցույց տվող մակ-*

բայներ են. օրինակ՝ Ներս ու դուրս անդադար ելումուտ է անում. Ներսն էր, դուրս ելավ. Ներս գնաց. Մենք ներսն էինք, երբ նա եկավ. Յարձակումը ներսից եղավ. Ներսում ոչ ոք չի մնացել:

Ներքուստ *«ներսից»:*

Նոյնպէս, *որ և* նմանապէս. *գրաբարում այս մակբայն ունի երեք աստիճան.* սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, *որոնք կազմված են* սոյն, դոյն, նոյն *ցուցականներով. բայց աշխարհաբարում սովորական են միայն* նոյն *և* նոյնպէս. *պաշտոնական գրությանց մեջ հաճախ կարելի է գտնել* սոյն *և սրանից էլ երբեմն* սոյնպէս. *իսկ* դոյն *և* դոյնպէս *իսպառ ջնջված են:*

Շատ. օրինակ՝ Շատ խոսեցինք, շատ ճամոզեցինք, բայց ի զուր. Շատ շուտ եկար. Դաշտերը շատ բերրի են. *կրկնությամբ՝* շատ ու շատ.

Ճակատագիրս սև տեսավ շա՛տ... *(սև ճակատագիրս շատ համարեց).*

Անյուսութի՛ւն, գերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք:
(Դուրյան)

Շատոնց *«շատ ժամանակ առաջ, շատ ժամանակե ի վեր». արևմտահայերի մեջ ավելի սովորական է. արևելահայերը գործ են ածում* վաղուց. *օրինակ՝* Շատոնց գիտէինք այդ. Վաղուց է իրար չենք տեսել:

Շարունակ *«միշտ իրար ետևից». օրինակ՝* Շարունակ անձրև է գալիս. *կամ* Անձրևը շարունակ գալիս է. *սրանից է* շարունակաբար. Թշնամին շարունակաբար իր ուժերը ավելացնում էր:

Շուտ. *երկու իմաստ ունի. 1. կանուխ, վաղ. 2. արագ. ռուս.* 1. быстро 2. рано, *օրինակ.* Վաղն առավոտ շուտ արի. Շո՛ւտ արա: *Երկդիմության պատճառը թուրքերենն է, որ* tez *բառը գործածում է երկու իմաստով էլ: Երբեմն ժողովուրդը երկուսը իրարից զանազանելու համար, առաջին իմաստով ասում է* շուտ, *երկրորդ իմաստով՝* շուտ շուտ: *Օրինակ՝* Շուտ արի, չուշանաս. Շուտ շուտ արի:— *Գործիական ձև է* շուտով, շատ շուտով. *օրինակ՝* Շուտով բժշկեց:

Ոչ *և* Չէ. *ըստ հին գործածության առաջինը մակբայ է* (non), *երկրորդը բայ է* (n'est pas). *օրինակ՝* Տեսա՞ր.— Ոչ: Այնտե՞ղ է.— Չէ: *Երկուսը միասին երևում են՝ երբ ասենք.* Ոչ, նա այնտեղ չէ: *Այժմ երկրորդն էլ, բացի իր բուն իմաստից, ստացել է նաև առաջին*

իմաստը. պատճառը Թուրքերենն է, ուր yoq *թե՛ մակբայ է (ոչ) և թե՛ բայ է (չկա)։ Այնուամենայնիվ միշտ էլ մեր մեջ համարվել է* ոչ *աղնիվ և չէ ընտանեկան և հասարակ։ Սաստկական ձևերն են՝* Բնաւ ոչ, Ոչ բնաւ, Ամենևին ոչ, Երբեք ոչ, Ոչ երբեք. *հին ձև է* Ո՞չ ապաքէն, *որի տեղ այժմ գործածվում է* չէ՞ որ:

Որչափ. *տե՛ս* Ինչչափ:

Որտեղ. *տե՛ս* Ուր.

Ուշ. *օրինակ՝* Խաղողը այստեղ ուշ է հասնում. Այս առաւօտ ուշ վեր կացայ. Շատ ուշ է. Ուշ գիշերին. Ուշ գիշերով. Երեկոյան ուշ հասանք տուն. Ուշ ես մնացել: Արդէն ուշ է. Ուշ ուշ ես երևում:

Ուստի՞ *«ո՞ր տեղից». օրինակ՝* Կոունկ ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ. *հին ձև է, որ հիշում է դեռ Այտն. 109. առաջանում է գրաբար* ուստի՞ *հոմանիշ ձևից և խառնվելով* ասկէ, ասկից, ասկէց *ձևերի հետ, դարձել է նաև* ուստից, ուսկից, ուսկէց, ուսկէ. *այս բոլորը համարվում են ռամիկ և գրականության միջից վտարված են. այժմ* ուստի *գործածում են միայն իբր շաղկապ։*

Ո՞ւր, ո՞րտեղ. *ընդհանրապես հարցական են, թեև կարելի է ասել նաև առանց հարցականի և այդ դեպքում հաճախ դրվում է նաև* էլ, որ. *ինչպես՝* Ուր որ գնաս, Ուր էլ գնաս, Ուր որ էլ գնաս *և այլն։ Ոմանք դեռ զանազանում են* ո՞ւր *շարժում և* որտե՞ղ *դադարում ցույց տալու համար. օրինակ՝* Ո՞ւր ես գնում. Որտե՞ղ ես դրել. *շատերը սակայն երկուսը հավասարապես գործածում են միևնույն իմաստով. հատկապես արևմտահայերը, որոնց մեջ խաչաձևմամբ կազմված է նաև* ո՞ւրտեղ *«ո՞ւր»։ Բացառականն է արևել.* ո՞րտեղից, *իսկ արևմտ.* ո՞ւրկէ (ուրկէց, ուրկից *հնացած ձևեր են և այժմ չեն գործածվում. այսպես նաև* ո՞ւր տեղէն, ո՞ր տեղաց):

Չարաչար. *թեև ըստ ծագման և ըստ իմաստի ճիշտ է ասել* չարաչար տանջեցին, չարաչար վիրաւորեցին *կամ* ծեծեցին, չարաչար մահով սպանեցին, *բայց որոշ պատկերավորությամբ ասվում է նաև* չարաչար խաբեցին, չարաչար սխալւում էք:

Պակաս. *օրինակ՝* Պակաս թողեց, Պակաս շարեց, Պակաս գործեց, Պակաս լարեց *և այլն։*

Պարապ տեղը *(թրք.* boš yere*),* զուր, ի զուր *(գրք.* ընդվայր, վայրապար*). օրինակ՝* Պարապ տեղը այնքան աշխատեցինք. Պարապ տեղը մի՛ հոգնիր.

Քեզ սպասող չմնաց, զուր ես գալիս, ա՜յ գարուն

(Հ. Հով.)

Ի զուր գրեցին աստղերն ինձի սէր,
Եւ ի զուր ուսոյց բլբուլն ինձ սիրել,
Ի զուր սիւքեր սէր ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց չինչ ալին...

(Դուրյան)

Պզտիկուց *«մանկությունից սկսած»*. Պզտիկուց այնպես եմ սորվեր. *արևմտահայ ձև է, որին համապատասխանում է արևելա-հայ* փոքրուց. *բայց այս բոլորն այժմ հնացած են. ավելի հարգի է ասել* մանուկ հասակից, փոքր հասակից, մանկությունից *(գրբ.* ի տղայ տիոց*)*։

Պինդ *«ամուր կերպով»*. *օրինակ՝* Պինդ սեղմեց կրծքին. Պինդ պինդ համբուրեց.— *իսկ այն գործածությունը որ հիշում է Այտն. 113 իբր գերադրական կազմելու ձև (պինդ առաջ «շատ առաջ» և այլն) վաղուց վերացված է արևմտյան գրականից*։

Սաստիկ *«խիստ շատ»*. *օրինակ՝* Սաստիկ տանջեց. Սաստիկ բարկացաւ. Սաստիկ հալածում էր. Սաստիկ ցուրտ է:

Սիրով. *օրինակ՝* Սիրով լսեց իմ խնդիրքը. Սիրով բարևեց. Սիրով կ'աշխատիմ:

Ստէպ *«հաճախ, շատ անգամ»*. *օրինակ՝* Ստէպ բղթակցում էինք. Ստէպ թուղթ գրեցէք. Ստէպ ստէպ նույն խօսքերը կրկնում էր:

Ստուգիւ *«ճշմարիտ, իրոք որ»*. *օրինակ՝* Ստուգիւ մեռաւ. Ստուգիւ այնպէս է.— *հնացած ձև է*։

Սրտանց. *օրինակ՝* Սրտանց սիրում էր. Բոլոր սրտանց կըպաղատին. Սրտանց ցանկանում եմ տեսնել նրան. Սրտանց բարևում եմ:

Վաղը. *այլ է* վաղ *«շուտ, կանուխ», որ հատուկ է արևելյան գրականին, և այլ է* վաղը *«էգուց», որ թեև արևմտյանի սովորական ձևն է, բայց գործածվում է նաև արևելյանում։ Հաջորդ օրը կոչվում է* վաղը չէ, միւս օր:

Վար, վարը, վարէն *«ներքև, ցած»*. *ձևացած են գրբ.* ի վայր *բառից և հատուկ են արևմտյան գրականին. արևելյան բարբառները ունենալով* վէր *«ի վայր, ցած» և* վեր *«ի վեր, վերև» միշտ շփոթվում են իրար հետ. ուստի հնարել են մի կողմից* վերև *ձևը, մյուս կողմից* ներքև, ցած, ցածր *բառերը։ Բայց այս բոլորը շոմեն* վեր, վար *ձևերի հստակությունը. հմմտ. նաև* վերէն վար, վարէն վեր, վերով վարով, *ինչպես և* վար իջնել, վար զարնել, վեր ելլել, վեր եկուր *և այլ բազմաթիվ ոճերը։*

Վեր, վերը, վերէն, վերև, վերևից *հմմտ. նախորդը։*

Վերիվերոյ *«Հարևանցի կերպով, առանց մանրամասն ուշադրության». օրինակ՝* Գրուածքը վերիվերոյ կարդաց *կամ* աչքից անց կացրեց *(աչքե անցուց)։ Տարբեր է* վայրիվերոյ։

Վերաբերմամբ *գործ է ածվում* մասին *իմաստով. օրինակ՝* իմ վերաբերմամբ, ձեր վերաբերմամբ *«իմ մասին, ձեր մասին»։ Հաճախ անուշադրությամբ գրողները սրա փոխարեն դնում են վե*րաբերեալ, *որ ածական է և կարող է միայն գոյականի հետ կապվել. օրինակ՝* Ձեզ վերաբերեալ խօսքերը ես լսել եմ. *բայց սխալ է ասել՝* Ես արի այն, ինչ որ կարելի էր անել նրա վերաբերեալ. *երբեմն խոսքը այնպես է լինում կազմված, որ կարելի է թվում երկու ձևերն էլ գործածել. օրինակ՝* Լսեցի ձեր դիտողութիւնները իմ երկերի վերաբերեալ. *Ճիշտ է այս նախադասությունը, եթե ընդունենք որ* վերաբերեալ *ածական է* դիտողութեան, *իբր* Իմ երկերին վերաբերեալ ձեր դիտողութիւնները լսեցի. *բայց սխալ է եթե մտածենք՝* Իմ երկերի վերաբերմամբ ձեր (արած) դիտողութիւնները լսեցի։

Վերաբերեալ *և* վերաբերմամբ *բառերի գործածության տեղը որոշելու համար լավ է փորձել* մասին *բառը. եթե այս բառը ճիշտ հարմար եկավ, ուստի պետք է մնա* վերաբերմամբ. *իսկ եթե ոչ՝* վերաբերեալ *պետք է դնել. օրինակ՝*

Ձեզ վերաբերեալ խօսքերը ես լսել եմ=ձեզ մասին ? խօսքերը ես լսել եմ *(ճիշտ չէ). ուստի* վերաբերեալ։

Ես արի այն, ինչ որ կարելի էր անել նրա վերաբերմամբ=նրա մասին *(ճիշտ է).* ուստի վերաբերմամբ։

Վերջապէս, վերջ ի վերջոյ *«ամենավերջը». օրինակ՝* Վերջապէս գործը հասաւ իր վախճանին։ Վերջ ի վերջոյ համաձայնութեան եկանք։ *Սովորական է թվումների վերջում և հակառակն է* նախ *բառի։ Ասվում է նաև հեգնությամբ.* Վերջապէս միտքդ ի՞նչ է. Վերջապէս ի՞նչ եք ուզում ասել *(սրանց մեջ նշանակում է «կարճ ասա, վերջ տուր»։*

Վերջէն *(արևմտ.)*=վերջում *(արևել.), գրբ.* ի վերջոյ. *օրինակ՝* Վերջէն բարեկամացանք։

Փութով *«շուտով, շտապով». օրինակ՝* Փութով կ՚ուղարկեմ. *Նշանակում է նաև «հոգատարությամբ, ժրաջանությամբ». օրինակ՝* Փութով կ՚աշխատի։

Քաւ լիցի *«Աստված չանի, Տէր մի՛ արասցէ». մերժման և «ոչ» ասելու սաստկական ձևն է։*

Քիչ *«սակաւ». օրինակ՝* Քիչ մնաց. Քիչ օրից կամ Քիչ օր յետոյ.

Քիչ էr մնում ընկնէի. *արևմտահայերն ունեն նաև* fիչ մը, fչիկ մը, fիչէն fիչ *«առնվազն», քիչ քիչ «սակավ առ սակավ»։*

Or. *Նշանակում է թե՛ օրվա 12 ժամը (ցերեկը) և թե՛ 24 ժամը (օր ու գիշեր). օրինակ՝* Մի or (=or մը) *«որևիցե մի օր»*. Or orի– Orից or *«յուրաքանչյուր օր ավելանալով»* (Հիւանդութիւնը or orի վրայ սաստկանում է). Or մը orանց *(=գրբ.* Or մի յաւուրց*) «ո՛չ մի օր»* (Or մը orանց չէկար ինձ տեսնելու). *Այտն. 113 ունի նաև* Orէ երթալ գալ *«հենց նույն օրը երթալ և նույն օրը վերադառնալ՝ գիշերը չմնալով»։*

Այտն. 118 աշխարհաբարի (արևմտյան գրական լեզվի) մակբայներն է համարում հետևյալ բառերը (իրենց օրինակներով).

Մէյ մ'ալ *հառաչեց և անշնչացաւ.*
Մէյ մ'ալ *տեսնեմ որ յարութիւն է առեր.*
Աստr վրայ *ամէն մարդ իր տեղը քաշուեցաւ.*
Or orուան վրայ *թիւը կը յաճախէ (կը շատնայ).*
Գիշեr ցօrեկ *կ'աշխատին.*
Ըստ ամենայնի *եղբօրորդւոյն նման է.*
Ըստ orինի, ըստ պատշաճի *վարուեցան.*
Ըստ պատաճման *իմացայ.*
Առ առաւելն *երկու ժամ կը տևէ.*
Առ ճarկի *բերանը գոցեց.*
Խելօf *գործել,* Զուգելով *յանձն առնել.*
Ջուr տեղ, Պarապ տեղ, Անիrաւ տեղը *(թրք. ոճ).*
Կ'ըլլայ or՝ *չի տեսներ.*
Չըլլայ թէ *բան մ'ըսեն.*
Կarծես թէ *դիւահարեր է.*
Այն ատեն *թողուցին փախան.*
Աստr ճոս տեղը *դատաստանարան չէ (թրք. ոճ է* bunun burasə)։

16. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ինչ որ վերը ասացինք նախադրությունների հոլովման մասին, պետք է հասկանալ նաև մակբայների մասին։

Ինչպես բարբառներում, նույնպես և մեր երկու գրական լեզուներում, այժմ մենք մակբայները գործածում ենք՝

1. Ուղղական ձևով, որ նշանակում է նախդրիվ հայցական. ինչպես՝ վrայ վազեց, մէջ խառնուեց, ներս գնա՛...

2. Նույնը որոշիչ հոդով, որ նշանակում է ներգոյական. ինչպես՝ վրան նստած է, մեջը բնեցին, ներսը պառկեցին.— *այս ձևերը ընդհանուր են թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրական լեզուներին։ Բայց արևելյան գրականը կարող է նույնն արտահայտել նաև -ում ձևով. այսպես՝* ներսում, միջում, դրսում *և այլն։*

3. Բացառական հոլով՝ -ից =-էն. *ինչպես՝* միջից =մեջէն, դրսից=դուրսէն, վրայից=վրայէն *և այլն։*

4. Գործիական հոլով. ինչպես՝ վրայով, ներսով-դրսով, մեջով *կամ* միջով *և այլն։*

Ծանոթ.— *Միջին հայերենից սկսած մինչև արդի բարբառները և արևմտյան գրական լեզուն, մի խումբ տեղական մակբայների բացառականը կազմվում է* -կէ *(նաև* -կէց, -կից*) մասնիկով. օրինակ՝* ճոսկէ, ճոդկէ, ճոնկէ, ուրկէ, ուսկէ. *հնագույն ձևն է* այնկէ, այնկէց, այնկից, *որի շարունակությունն է Պոլսի բարբառով* ասկէ, ադկէ, անկէ. *վերջի երեքը* այս, այդ, այն *ցուցականների սովորական բացառական ձևերն են, ինչպես* սա, դա, նա *ցուցականներից էլ ունենք* սակէ, դակէ, նակէ *և կրճատ* սկէ, դկէ, նկէ: *Այս բոլորը կարող ենք բացատրել միայն* -իկ *մասնիկով, որ նախ ավելացել է* այս, այդ, այն (աս, ադ, ան) *ցուցականների վրա* (ասիկ, ադիկ, անիկ), *որից ապա սզված բացառական* ասկէ, ադկէ, անկէ:

Մակբայների հոլովման մեջ ավելի հետաքրքիր է այն երևույթը, երբ մակբայն ստանում է նախ սեռական հոլով, ապա ստացական հոդ և որոշյալ հոդն էլ ավելացնելով դառնում է նոր գոյական՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով։ Այսպես օրինակ ճոս, ճոդ, ճոն *«այստեղ, այդտեղ, այնտեղ» մակբայներից* ի *սեռականի նշանով ստացվում է* ճոսի, ճոդի, ճոնի. *սրանք նշանակում են «այստեղ գտնված, այդտեղ գտնված, այնտեղ գտնված», որոնցից հոսիսը «իմ այստեղ ունեցածը, կամ իմ ունեցածը որ այստեղ է գտնվում» և այլն։*

Այս բոլորը նույն է գոյականի կրկնակ հոլովման. ինչպես՝ Մեսրոպինը *«Մեսրոպի ունեցածը»,* Մեսրոպինները *«Մեսրոպի ունեցածները»։*

Իբր օրինակ դնում եմ Համշենի բարբառի ճոս, ճոդ, ճոն *մակբայների ածանց ձևերը, որոնք իրենց տեսակի մեջ ամենից բարդն են։*

Այս բարբառում ճոս, ճոդ, ճոն *մակբայները ունեն համապատասխանաբար* ճօզ, ճօդ, ճուն *ձևերը և ստանալով ստացական հոդ, տալիս են հետևյալ ձևերը.*

ճօզիսը *«իմ այստեղ ունեցածը»*
ճօզիդը *«քո այստեղ ունեցածը»*
ճօզինը *«նրա այստեղ ունեցածը»*
ճօդիսը *«իմ այդտեղ ունեցածը»*
ճօդիդը *«քո այդտեղ ունեցածը»*
ճօդինը *«նրա այդտեղ ունեցածը»*
ճունիսը *«իմ այնտեղ ունեցածը»*
ճունիդը *«քո այնտեղ ունեցածը»*
ճունինը *«նրա այնտեղ ունեցածը»*

ճօզիսնէֆը
ճօզիսնէֆս } *«իմ այստեղ ունեցածները»*
ճօզիսէֆը

ճօզինէֆըդ
ճօզիդնէֆը } *«քո այստեղ ունեցածները»*
ճօզիդէֆը

ճօզինէֆը *«նրա այստեղ ունեցածները»*
ճօզիննիս *«(մեր) այստեղ ունեցածը»*
ճօզիննիդ *«(ձեր) այստեղ ունեցածը»*
ճօզիննին *«(նրանց) այստեղ ունեցածը»*
ճօզինէյս *«իմ այստեղ ունեցածները»*
ճօզինէյդ *«քո այստեղ ունեցածները»*
ճօզինէրը *«նրա այստեղ ունեցածները»*

ճօդինէֆս
ճօդիսէֆը } *«իմ այդտեղ ունեցածները»*

ճօդինէֆըդ
ճօդիդէֆը } *«քո այդտեղ ունեցածները»*

ճօդինէֆը *«նրա այդտեղ ունեցածները»*

ճունինէֆս
ճունիսնէֆը } *«իմ այնտեղ ունեցածները»*

ճունինէֆըդ
ճունիդնէֆը } *«քո այնտեղ ունեցածները»*

ճունինէֆը *«նրա այնտեղ ունեցածները»*

ճօդինէյս
ճօդիսնէրը } *«իմ այդտեղ ունեցածները»*

ճօդինէյդ
ճօդիդնէրը } *«քո այդտեղ ունեցածները»*

հօղինէրը *«նրա այդտեղ ունեցածները»*

հունինէյս, հունիսնէրը *«իմ այնտեղ ունեցածները»*

հունինէյդ, հունիդնէրը *«քո այնտեղ ունեցածները»*

հունինէրը *«նրա այնտեղ ունեցածները»*

հօղիննիս *«մեր այդտեղ ունեցածը, -ները»*

հօղիննիդ *«Ձեր այդտեղ ունեցածը, -ները»*

հօղիննին *«նրանց այդտեղ ունեցածը, -ները»*

հունրննիս *«մեր այնտեղ ունեցածը, -ները»*

հունիննիդ *«ձեր այնտեղ ունեցածը, -ները»*

հունիննին *«նրանց այնտեղ ունեցածը, -ները»*

Ստացական հոդերի հետ կարող են միանալ նաև ցուցական հոդերը և այն ժամանակ կազմում են հետևյալ 12 նոր ձևերը.

հօզիսս, հօզինս *«իմ այստեղ ունեցածը»*

հէզիսդ, հօզիդդ, հօզինդ *«քո այստեղ ունեցածը»*

հօղինս *«իմ այդտեղ ունեցածը»*

հօղիդդ, հօղինդ *«քո այդտեղ ունեցածը»*

հունիսս, հունինս *«իմ այնտեղ ունեցածը»*

հունիդդ, հունինդ *«քո այնտեղ ունեցածը»*

Փոխանակ «հոս, հոդ, հոն» բառերի, կարելի է կազմել «այստեղ, այդտեղ, այնտեղ» բառերով և կստանանք հետևյալ ձևերը (Համշենի բարբառում).

աստէղունս, աստէղունդ, աստէղունը.
ատտէղունս, ատտէղունդ, ատտէղունը.
ընդէղունս, ընդէղունդ, ընդէղունը.
աստէղունէքս, աստէղունէքդ, աստէղունէքը.
ատտէղունէքս, ատտէղունէքդ, ատտէղունէքը.
ընդէղունէքս, ընդէղունէքդ, ընդէղունէքը:

Սրանք եթե վերածեինք գրական ձևի, պետք է ունենայինք՝

այստեղինս, այստեղինդ, այստեղինը.
այդտեղինս, այդտեղինդ, այդտեղինը.
այնտեղինս, այնտեղինդ, այնտեղինը.
այստեղիններս, այստեղիններդ, այստեղինները.
այդտեղիններս, այդտեղիններդ, այդտեղինները.
այնտեղիններս, այնտեղիններդ, այնտեղինները:

Բոլորն էլ վերածվում են գոյականի։

ԳԼՈՒԽ Դ

ՇԱՂԿԱՊ

Եթե համեմատենք մի հասարակ, անպաճույճ խոսակցություն գրական մի հատվածի հետ, հայտնի կերպով պիտի տեսնենք երկուսի տարբերությունը շաղկապների գործածության կողմից։ Հասարակ խոսակցության մեջ շաղկապները կարելի է իսպառ անտես անել ա՛յնտեղ, ուր գրական լեզուն անպատճառ պիտի գործածեր. օրինակ՝

Նոր է, լաւ է, թանկ կլինի.

գրական ձևով՝

Նոր է և լաւ է, ուստի թանկ կլինի:

Շաղկապ գործածելու այս ձևը կոչվում է **նարադասություն** (parataxe)։

Արդարև խոսակցության միջոցին, խոսողը իր անմիջական տրամադրության տակ ունենալով ձայնի ելևէջը, դադարը, ուժգնությունը, բարձրությունը, շարժումները և այլն, պետք չի զգում մտքերի կապը անպատճառ նաև շաղկապներով արտահայտելու (Meillet, Ling. hist. et ling. gén., *159—174)։ Ընդհակառակը գրված լեզուն, որ չի կարող գործադրության դնել այդ միջոցները, ստիպված է դիմել շաղկապների օգնության։*

Նախնական լեզուների մեջ հարադասությունը սովորական երևույթ է. այսպես, չինարենում ասում են՝

Ես—դու *(փոխ. ես և դու)*

Ձի—էշ *(փոխ. ձի և էշ)*

Ուզում է գնաս *(փոխ. Ուզում է որ գնաս)*

չորս—հինգ *(փոխ. 4 կամ 5)։*

Այսպիսի ձևեր սովորական են նաև թուրքերենի, ինչպես և արդի ժողովրդական հայերենի մեջ. օրինակ՝

Ես էի, Գրիգորն էր, Տիգրանն էր *(փոխ. Ես, Գրիգորն ու Տիգրանն էինք)։*

Քուր-աղբէր *(փոխ. քույր և եղբայր).*

Հաց—պանիր, պանիր—հաց *(փոխ. հաց ու պանիր, պանիր և հաց).*

Գիշեր—ցերեկ *(գիշեր ու ցերեկ)։*

Եգիպտացերեն «և» շաղկապ չկա. միշտ հարադրությամբ են գրում. օրինակ՝

Չորս-հինգ հատ *(փոխ. չորս կամ հինգ հատ).*

Ասա՛, տամ *(ասա՛, որպեսզի տամ).*

Ասա՛ երթայ *(ասա՛ որ երթայ)։* (Gardiner, 68)

Թուրքական առածն ասում է.

Almadəm, vermem, görmedim bilmem.
Չառի չեմ տա, չտեսայ, չգիտեմ,

որի դեմ գրական լեզուն ծանր ու բարակ պիտի ասեր՝

Որովհետև չեմ առել, ուստի չեմ էլ տայ. և որովհետև չեմ տեսել, ուստի և չգիտեմ:

Պետք է ենթադրել, թե հնդեվրոպական նախալեզուն էլ լայն չափերով գործադրում էր հարադասական ձևը։ Բայց կարելի չէ ասել, որ նա իսպառ զուրկ էր շաղկապներից։ Քույր լեզուների ցույց տված օրինակներից դատելով կարելի է հետևցնել զանազան շաղկապների էլ գոյությունը նախալեզվի շրջանում։

Նկատելի է սակայն, որ լեզուների ընթացքում շաղկապները երկար կյանք չունեն։ Նրանք ենթակա են շարունակական փոփոխության։ Ռոմանական լեզուները, թեև բոլորն էլ միևնույն լատիներենից առաջացած, չունեն սակայն ճշտությամբ միևնույն լատին շաղկապը և կամ իրար հետ նույն չեն։ Ռումիներենը հատկապես մյուս ռոմանական լեզուներից բոլորովին տարբեր շաղկապներ ունի։ Լտ. sed *«բայց, սակայն»,* nam *«որովհետև»,* cum *«երբ»,* ut *«որպեսզի» շաղկապները, որոնք շատ հաճախ գործածված ձևեր էին նույնիսկ ընտանեկան լեզվում, այսօր ջնջված են ռոմանական լեզուներում։ Անգլերենն ու գերմաներենը, երկուսն էլ միևնույն գերմանական ընտանիքի զավակներ, շատ անգամ տարբեր շաղկապներ են ներկայացնում. անգլ.* and *և գերմ.* und *«և» նույն չեն. իսկ անգլ.* if *«եթե» և գերմ.* venn *բոլորովին տարբեր են։ Նույնիսկ սլավական լեզուները, որոնք ընդհանրապես շատ նման են իրար, շաղկապների կողմից տարբերվում են։*

Սրա պատճառն այն է, որ՝ 1) շաղկապները, իբրև շատ փոքրիկ բառեր, ձայնական սղումների պատճառով ավելի կրճատվելով՝ հասնում են դրեթե մի միակ ձայնի. այսպես հնխ. èti, լտ. et <ֆրանս.et (հնչվում է միայն è), 2) հաճախակի գործածության պատճառով շուտ-շուտ կորցնելով իրենց ուժը, արտահայտության զորություն ձեռք բերելու համար պետք ունեն շարունակ նորոգվելու։ Նույն ֆրանս. et «և» շաղկապը դառնում է խոսակցական լեզվի մեջ et puis «և հետո», et après «և ապա», et alors «և այն ժամանակ», et de plus «և ավելի ևս», et puis alors «և հետո այն ժամանակ»,—ou «կամ» շաղկապը դառնում է ou bien «կամ լավ», ou bien encore «կամ լավ ևս»—mais «բայց» շաղկապը լինում է mais bien «բայց լավ», mais plutôt «այլ ավելի շուտ», mais au contraire «այլ ընդհակառակը» և այլն։

Այսպիսով ահա հին շաղկապները վերանում են և շարունակ նորերն են ստեղծվում։

Այսպես պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ հնդեվրոպական լեզուները ընդհանրապես ներկայացնում են իրարից տարբեր շաղկապներ, որոնցից ոմանց մեկնությունը մութ է, ուրիշներինը իսպառ անծանոթ, ինչպես օրինակ՝ հն. ἵνα «թե»։ Լեզուների ցույց տված այս անհամաձայնությունն է պատճառը, որ հնդեվրոպական նախալեզվի շաղկապներից շատերը մեզ անծանոթ են. ծանոթների թիվը շատ քիչ է. նույնիսկ երկու ամենահայտնի շաղկապները՝ հնխ. k^we «և», we «կամ», որոնք գտնում ենք զանազան հին հնդեվրոպական լեզուների մեջ (սանս., հն. և լտ.), հետագայում, այդ նույն լեզուների պատմական կյանքում իսպառ անհետացել են։ Եվ եթե մենք չունենայինք քրիստոնեական թվականից առաջ գրված բնագիրներ, այս երկու շաղկապների մասին անգամ, որոնք այնքան ընդարձակ գործածություն ունեն վերոհիշյալ լեզուների մեջ, գաղափար չպիտի ունենայինք։

Ինչպես նախադրությունները ու մակբայները, նմանապես և շաղկապները նախկին անկախ բառեր են, որոնք գործածության մեջ այնպես սղվել և ձևով ու նշանակությամբ փոփոխվել են, որ այլևս անճանաչելի են դարձել։ Նախնական լեզուների մեջ կարող ենք դեռ տեսնել օրինակներ՝ շաղկապների ծագումը երևան հանելու համար։ Այսպես չին. yin^1 «որովհետև» շաղկապը առաջանում է yin^2 «հիմք» բառից (Seidel, Chin. gr., 134) $c\bar{e}^2$ «ուստի» գալիս է $c\bar{e}^2$ «պատճառ» բառից և այլն։

Քերականական ամեն կարգի բառեր կարող են վերածվել շաղկապի, մինչև անգամ բայեր, ինչպես լտ. vel *«կամ»,* igitur *«ուրեմն»,* licet *«թեև»։*

Պետք չէ կարծել, թե շաղկապները միշտ և ամեն լեզվի մեջ երկու բառի կամ երկու նախադասության միջև են դրվում. ինչպես՝ Հայրս և մայրս. Նա խոստացաւ, և իր խոստումը կատարեց. իսկ դու խոստացար, բայց խոստումդ չկատարեցիր:

Այս կարգը այժմ ընդհանուր է իրոք թե՛ հին և նոր հայերենի և թե՛ ընդհանրապես բոլոր լեզուների մեջ. բայց շեղումներ էլ շատ կան. օրինակ «և» շաղկապը սանսկրիտ, հույն և լատին լեզուների մեջ դրվում էր կցելի երկու կամ ավելի բառերի վերջում. ինչպես՝

սանս. Pita māta-că *հայր և մայր.*

հն. Πατὴρ ἀνδρῶν τε θεῶν τε.

«Հայր մարդկանց և աստուծոց».

լտ. Tectumque, armaque, canemque

«Տունը, զենքերը և շունը»։

Նույնիսկ մենք այսօր հաճախ կազմում ենք այսպիսի նախադասություններ.

Խոստացար, չկատարեցիր սակայն.

և ավելի հաճախ՝

Նա, սակայն, չկատարեց իր խոստումը:

Կան շաղկապներ, որոնք միշտ վերջահար են, կամ նախադաս տարբեր իմաստ ունեն և վերջադաս՝ տարբեր իմաստ։ Օրինակ՝ ևս *«էլ, նա էլ» իմաստով շաղկապ է և վերջահար. ինչպես՝* Եւ միւսումն ևս *«և մյուսին էլ». իսկ նախադաս մակբայ է և նշանակում է «ավելի». օրինակ՝* և՛ս մեծ *«ավելի մեծ», թեև կարելի է նաև հետադաս դնել.* Մեծ ևս քան զայս *«սրանից ավելի մեծ»։ Այսօր էլ աշխարհաբարում* էլ=ալ *շաղկապը հետադաս է, իսկ նախադաս՝ մակբայ է, «այլ ևս» նշանակությամբ. օրինակ՝* ես էլ, դու էլ. *բայց՝* է՛լ չխոսեց Արամը:

Քերականները բաժանում են շաղկապները մի քանի ձևով.

Ա) Ըստ իմաստի բաժանում են երկու կարգի.

1. Համադասական (Conjonction de coordination), *ինչպես՝* և, կամ, բայց, սակայն *և այլն.*

2. Ստորադասական (Conjonction de subordination), *ինչպես՝* եթէ, քանի որ, երբոր, թէև *և այլն։*

Առաջինները միացնում են երկու նախադասություն, որոնք սա-

կայն պահում են իրենց անկախությունը. երկրորդները կապում են երկու այնպիսի նախադասություններ, որոնցից երկրորդը ստորադաս է առաջինին. օրինակ՝ **Պէտք է, որ դուք լսէք:**

Բ) Ըստ տրամաբանության բաժանում են 10 տեսակի. այսպես՝

1) **Կցական** (copulεtive).— **և, ո՛չ միայն, նաև, նոյնպէս...**
2) **Բաժանական** (disjonctive).— **կամ.**
3) **Բացատրական** (explicative).— **բայց, որովհետև, քանի որ...**
4) **Կրկնողական** (récapitulative).— **ոչ... ոչ..., մերթ... մերթ..., մասամբ... մասամբ...**
5) **Համեմատական** (de comparaison).— **այնպէս... ինչպէս..., այնքան... որքան...**
6) **Պայմանական** (conditionnelle) *կամ* **ենթադրական** (hypothétique).— **եթէ, որպէսզի, երբոր...**
7) **Զիջողական** (concessive).— **թէև, թերևս...**
8) **Պատճառական** (causative).—**որովհետև...**
9) **Հակադրական** (adversative).—**բայց...**
10) **Եզրակացական** (conclusive).— **ուրեմն, վերջապէս...**

Գ) Ըստ կազմության բաժանում են երկու խմբի.

1) **Պարզ շաղկապներ,** *որոնք ձևացած են մի բառից. ինչպես* **և, բայց, թէ, որ...**
2) **Բաղադրյալ շաղկապներ,** *որոնք ձևացած են երկու կամ երեք բառից. ինչպես* **որպէսզի, վասնզի, քանի որ, թէ որ, սակայն և այնպէս:**

Բոլոր այս բաժանմունքները սակայն քերականության համար արժեք չունեն. և նույնիսկ Այտն., որ նախադրությունները ու մակբայները դասավորել է ըստ այսպիսի բաժանման, էջ 132 հրաժարվելով նրանցից, շաղկապները հիշում է ըստ կարգի։

Ինչպես որ նախադրությունները հաճախ նույն են մակբայների հետ, նմանապես շաղկապները հաճախ նույն են կամ շփոթվում են մակբայների և կամ ուրիշ մասունք բանիի հետ։ Պոլսում Արևելք թերթի մեջ, երկու նշանավոր հայկաբաններ (Ռեթեոս Պերպերյան և Մելքոն Կյուրճյան) իրար դեմ վեճ բացին «Յործամ մակբա՞յ թէ շաղկապ» հարցի շուրջը և այդ վեճը տևեց ամիսներ։ **Մանաւանդ** *բառը ՆՀԲ նշանակում է միաժամանակ մակբայ և շաղկապ, իսկ Ջալխ. 173 և Այտն. 133 դնում են միայն շաղկապ։* **Գրեթէ** *նշանակված է Այտն. 108 մակբայ, իսկ էջ 134 «շաղկապ»։ ՆՀԲ նշա-*

նակում է միանգամայն մակբայ, այսպես նաև Այտն. 466. բայց Այտն. 132 համարում է շաղկապ, հաստատ իմանալով հանդերձ, որ -այն մասնիկը կազմում է մակբայ։ Այս վարանոտ դրությունը գիտե նաև ինքը Այտն. 135, որ ասում է.

«Ինչպէս կան մակբայներ, որ հաւասարապէս նախադրութիւն ալ են, նոյնպէս շաղկապներ ալ կան որ միանգամայն մակբայ կը համարուին. այսպէս են զօրօրինակ, փրեթէ և այլն»։

Վերը տեսանք ալ=էլ, ևս բառերը, որոնք երբեմն մակբայ են և երբեմն շաղկապ։ Գրաբարում զի՞ (հարցական) մակբայ է, զի (դրական) շաղկապ է, զի՜ (զարմացական) ձայնարկություն է։ Աշխարհաբարում ու թե՛ հարաբերական է, թե՛ միջակ անուն և թե՛ շաղկապ։ Այսպես և ֆրանս. que հարաբերական դերանուն է, շաղկապ է, մակբայ է («ինչքան» նշանակությամբ)։

Հաճախ բառի իմաստը չէ, որ որոշում է մակբային ու շաղկապը իրարից, այլ նրա ձևը. օրինակ՝ երբ ասում ենք՝ Քաղեցէ՛ք ծաղիկները, մանաւանդ շուշանները, այստեղ մանաւանդ շաղկապ է կոչվում, իսկ երբ նրա տեղ դնենք իր մի հոմանիշը՝ հատկապէս, գլխաւորապէս, մասնաւորապէս, կդառնա մակբայ (որովհետև կազմված է -ապէս մասնիկով)։

Կան նախադրություններ և մակբայներ, որոնք ստանալով զի կամ թէ, դառնում են շաղկապ. օրինակ, վասնզի, քանզի, նույնիսկ սակս զի (որ սակայն խորթ է)։

Փոխանակ զի «նրա համար որ, քանի որ». օրինակ՝ Փոխանակ զի ոչ լուար ձայնի իմում:

Իբրև, որպէս, քան թե՛ նախադրություն են և թե՛ շաղկապ, առաջին դեպքում ստանում են հայցական խնդիր. երկրորդ դեպքում (շաղկապ) նշանակում են «իբր թե, քան թե» և ստանում են ամեն տեսակ հոլով՝ նայած իրենց բային։ Այսպես՝

Ուղղական հոլով

Իշխանք նորա իբրև առիւծունք գոչեսցեն:

Կամք իբրև տրտմեալք և հանապազ ուրախ եմք, իբրև տնանկք և զբազումս մեծացուցանեմք:

Ով այսօր իբրև ձուկն անկաւ ընդ ուռկանաւ, վաղիւ իբրև ձկնորս զայլ ձկունս որսայ:

Սեռական հոլով

Վասն է՞ր կարմիր են ձորձք քո իբրև հնձանահարի:

Եղև հնչիւն յերկնից՝ իբրև սաստիկ հողմոյ:

Տրական հոլով

Պաւղոս՝ իբրև ստրկի միում սաստէր սատանայի.
Երկիր պագանել քարանց իբրև Աստուծոյ.
Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան:

Հայցական հոլով

Պարտ է աշակերտի սիրել զվարդապետս իբրև զծնողս իւր:

Բացառական հոլով

Մի՛ փախիցուք յաղքատութենէ իբրև ի չար ինչ իրաց:

Գործիական հոլով

Են որ բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով.
Խաղասցե՞ս նովաւ իբրև հաւու.
Իբրև զբօսանաց պատճառաւ:

Ներգոյական հոլով

Մարթի և յերկրի իբրև յերկինս բնակել:
Տեսանին կերպարանք մարդոյ ի ջուրս իբրև ի հայելւոջ:
Իբրև ի ծովու կալ ի ծփանս ի տան:
Զի՞րդ համարիցին զԱստուած իբրև ի տեղւոջ ինչ յամենայն ի հիւղն լինել... *Եզն. 23։*

Նախդրիվ հայցական հոլով

Իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած:

Նախադրությամբ խնդրով

Իբրև ի վերայ աւազակի եղէք ի վերայ իմ.
Իբրև ի թշնամւոյ վերայ.
Իբրև ի վերայ թևոց արծւոյ.
Իբրև ընդ բարեկամի խօսիցի ընդ նմա.
Լաւ իցէ բնակել յանապատի՝ քան ընդ կնոջ անզգամի:

Ծանոթ. 1.— Իբրև, քան, որպէս *գործածուելով հայցականի հետ՝ իմաստի երկդիմություն են ցույց տալիս. օրինակ՝* Քան զհայր առաւել սիրեմ զքեզ *նշանակում է 1) «Ես քեզ ավելի եմ սիրում քան որչափ հայրը սիրում է որդուն». այս դեպքում* քան *նախադրություն է. 2) «Քեզ սիրում եմ ավելի քան թե հորս եմ սիրում». այս դեպքում* քան *շաղկապ է։*

Իբրև զհայր՝ այնպէս սիրեմ զքեզ *նշանակում է 1) «Ես սիրում եմ քեզ այնպես՝ ինչպես հայրն է սիրում իր որդուն». այս դեպքում* իբրև *նախադրություն է. 2) «Ես քեզ այնչափ եմ սիրում, որչափ իմ հորը». այս դեպքում* իբրև *շաղկապ է։*

Այսպես երկդիմի է նաև երբ ասենք աշխարհաբար՝ Հօրս պէս

(կամ հօրս չափ) կը սիրեմ=սիրում եմ քեզ. *երկդիմությունը կվերանա միայն արևելյան հայերենում երբ ասեմ՝* Ես քեզ իբրև հայր եմ սիրում *(ես հայր, դու որդի),* Ես քեզ իբրև հոր եմ սիրում *(ես որդի, դու հայր)։*

Ծանոթ. 2.— *Թվական անունների հետ գործածվելու ժամանակ* իբրև *և* քան *կարող են նախադրություն համարվել. ինչպես՝*

Ոգիք իբրև ութ ապրեցան ի ջրոյն.

Յիսուս էր ամաց իբրև երեսնից.

Մարթ էր վաճառել զայդ աւելի քան երեքհարիւր դահեկանի.

Այժմ անցնենք հիշելու շաղկապները գրաբարում, միջին հայերենում, բարբառներում (նաև թուրքերենից փոխառյալները) և աշխարհաբարում։

1. ԳՐԱԲԱՐԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԸ

Այլ, այլ և

1. Այլ *նշ. «բայց». օրինակ՝*

Այլ ես վկայ կոչեմ զԱստուած:

2. Բացասականից հետո նշանակում է «հապա», որ աշխարհաբարում էլ ընդունված ձև է. օրինակ՝

Ոչ միայն չպարսաւել, այլ և զարմանալ ևս.

Մի՛ միայն զոտս, այլ և զձեռս.

Կացցուք մի՛ մի օր միայն, այլ և զերկուս, այլ և զամենայն աւուրս.

Ո՛չ ի բնութենէ, այլ ի կամաց մերոց է լինել ծոյլ կամ փոյթ.

Մի՛ յաղթիր, այլ յաղթեա:

Ինչպես օրինակները ցույց տվին, այլ *հակառակն է նախորդի, որ մերժում է։*

Կարող է կցվել նաև իր հոմանիշ սակայն *բառի հետ, որ տե՛ս.—* այլ *շաղկապի մի ուրիշ գործածության մասին տե՛ս* բայց:

Այլ *կապում է երկու հակառակ նախադասություն. օրինակ՝*

Ոչ եկի լուծանել, այլ լնուլ. *Մատթ. Ե 17.*

Ոչ ամուսնացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան. *Բուզ. Գ 5.*

Վարուքն զատ են ի միմեանց… այլ ի քիշին մի են երկոքեան. *Եզն. 116։*

Պետք չէ շփոթել այլ *«ուրիշ» անորոշ ածականի հետ, որի հետ նույն է ծագմամբ. Հմմտ. հն.* ἄλλος *«ուրիշ»,* ἀλλά *«բայց». օրինակ՝* Այլ *Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի (Բուզ. Զ ը). «ուրիշ» նշանակելու դեպքում՝ մի ուրիշ Հոհան էլ հիշված պիտի լիներ։*

Այլ *հերքելով մի բան, հաստատում է մյուսը. կարող է պատկանել մի գոյականի, մի ածականի, մի դերանվան, մի բայի և այլն. օրինակ՝*

Քաղաքը չգրավեցին, այլ բերդը:
Բարի չէր, այլ չար:
Ես չեմ, այլ նա:
Չեմ գրում, այլ նկարում.
Կողքին չէ, այլ վրան.
Առաւօտը չէ, այլ երեկոյին.
Ո՛չ թէ քաղաքը գրաւեցին, այլ բերդը.
Ո՛չ թէ Տիգրանն էր, այլ Արշակը.
Ո՛չ թէ նրա խօսքը կատարելու համար, այլ ուղղակի միւսին հանոյք պատճառելու համար:

Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, նախադասությունը բոլորովին համադիր է, ենթական նույն է, բայց՝ հակառակ կամ հակադրված մի բառ և միայն խնդիրը տարբեր։

Կարելի չէ նաև կրկին հակառակ ձևերով կազմել այսպիսի նախադասություններ. օրինակ՝

Ո՛չ թէ Գրիգորը երգեց, այլ Վահանը նուագեց:

Տարբեր բառ է այլ և, *որ նշանակում է «նաև». այսինքն ո՛չ թե հերքում է նախորդը, այլ նրա վրա գումարում է նաև մի ուրիշը. գործ է ածվում «ո՛չ միայն, ո՛չ թե միայն» բառերի հետ, որով* այլ *դառնում է* միայն *բառի հերքումը. մինչդեռ* այլ *գործ է ածվում պարզապես* ո՛չ թէ *բառի հետ.* Ո՛չ թե քաղաքը գրաւեցին, այլ բերդը.— Ոչ թէ միայն քաղաքը գրաւեցին, այլ և բերդը: *Սխալ է առանց* և*-ի ասել.* Ո՛չ միայն չէր կարող որևէ խօսք փոխանակել նրա հետ, այլ ռոպէ առաջ պէտք էր փախչել նրանից *(Սիրաս, Չգր. օր. 424)։*

Այլ և *բառից առաջ գործածվում է* ո՛չ միայն, ո՛չ թէ միայն, ո՛չ թէ. *առաջին երկու դեպքում,* այլև *բառով սխալ նախադասությունը*

պետք է ավելի զորեղ լինի քան առաջինը. իսկ վերջին դեպքում պիտի լինի հակառակ իմաստ. օրինակ՝

Ո՛չ միայն գիտէ կարդալ, այլ և գրել ու խօսել:

Ոչ թէ միայն հայերէն գիտէ, այլ և ռուսերէն և ֆրանսերէն.

Ոչ թէ բերում է, այլ տանում.

Ոչ թէ գեղեցիկ է, այլ տգեղ:

Հետևաբար բոլորովին սխալ է հետևյալ պարբերությունը.

Դրութիւնը ո՛չ միայն խախտվում է Հռոմում, այլ և գնալով աւելի է ամրանում և բարձրանում *(«Էջմիածին», 1944, № 4—5, էջ 38բ. Գ. Լևոնյանի հոդվածից.— պետք էր ասել* **«ո՛չ միայն չի խախտվում»:**

Այլ *չպետք է շփոթել* **բայց** *բառի հետ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժող., 1930, հատ. Դ, էջ 225.— Տիկին Սոփիայի սիրտը խռովեց, այլ նա չհուսահատվեց։*

Այլ *բառով սկսող նախադասությունը նախորդի հակառակը պիտի լինի. իսկ եթե նրա հակառակը չէ և ավելի է լրացնում միտքը, դառնում է* **այլ և.** *ինչպես՝*

Մոնղոլները ո՛չ միայն հրաժարվեցին քրիստոնէական կրօնից, այլ ընդհակառակը, նրանց մի մասը թշնամական դիրք բռնեց քրիստոնեաների նկատմամբ: *(Աշ. Գալստյան, Մոնղոլական շրջան, Լենինական, 1945, 66)։ Առաջին նախադասությամբ իմացվում է, որ մոնղոլները հրաժարվել են քրիստոնեությունից, սրա հակառակը չէ հաջորդ նախադասությունը. ուստի պետք է ջնջել «ընդհակառակը» բառը, և* **այլ** *դարձնել* **այլև:**

Այսինքն
(որ և այս է, այսինքն է)

Գործածվում է նախորդ մի բառ կամ մի բան բացատրելու համար. օրինակ՝

Զկնիքն Քրիստոսի բարձցուք, այսինքն զխոնարհութիւն նորա:

Անգամ

Նշանակում է «նույնիսկ, մինչև անգամ». օրինակ՝

Եւ հաց անգամ չժամանէին ուտել.

Եւ շարժել անգամ ոչ կարեմք։

Եւ յօրրանսն անգամ ոչ եղաւ:

Ինչպես օրինակներից երևում է, անգամ շաղկապից առաջ վայելուչ է դնել և:

Ապա, ապա ուրեմն, ապա թէ

Ապա *շաղկապը մենակ նշանակում է հենց «ուրեմն». հաճախ գործածվում է* ուրեմն *բառի հետ կից, իսկ* ուրեմն *շաղկապը առանձին քիչ է գործածվում։ Օրինակ՝*

Եթէ որդիք [էք], ապա և ժառանգք.

Ուրեմն դո՞ւ ես որդին.

Ապա ուրեմն ազատ են որդիքն:

Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք:

Ձուր ուրեմն վաստակեցի:

Եթէ *կամ* թէ *շաղկապից հետո եկող խոսքն սկսվում է* ապա *շաղկապով, որին իբր զարդ ավելանում են երբեմն* ապաքէն, արդեւք *մակբայները. օրինակ՝*

Եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն.

Եթէ հաւատարիմ իցէ, ապա չատէ.

Եթէ չէր չարագործ, ապա ոչ մատնէաք զնա.

Թէ թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդեւք.

Եթէ հայր, ապաքէն որդւոյ հայր [իցէ].

Ապա եթէ *կամ* ապա թէ *նշանակում է «իսկ եթէ». օրինակ՝*

Զբարիս գործեա, և ընկալցիս գովութիւն. ապա եթէ չարագործ իցես՝ երկիր.

Չեն ինչ խիստ հրամանքն, եթէ կամիցիմք. ապա թէ ոչ կամիցիմք, և թեթևքն մեզ ծանր թուին:

Սրա համառոտությունն է ապա թէ ոչ *«թէ չէ, չէ նէ».*

Ապա *«ուրեմն»,* ապա ուրեմն, ապա թէ, ապա թէ ոչ. *օրինակներ՝*

Ապա ուրեմն ազատ են որդիքն. *Մատթ. ԺԷ 25։*

Եթէ ասասցէ՝ եթէ բարւոք է, խաղաղութիւն է ծառայի քում. ապա թէ խստիւ տայցէ պատասխանի, գիտասջիր զի... *Ա Թագ. Ի 7։*

Եթէ զիս գիտէիք, ապա և զհայր իմ գիտէիք. *Յովհ ԺԴ 7։*

Արդ

Բուն նշանակությունն է «այժմ». իբրև շաղկապ գործածվում է

նախորդ ասածը ամփոփելու համար, իբր «ուստի»: Հաճախ ավում է Եւ արդ, Այլ արդ, իսկ արդ. *օրինակ՝*

Եւ արդ աղաչեմ զձեզ.

Հինգ քանքար ետուր ցիս, արդ աճաւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ շահեցայ. *Մատթ. Իե 20։*

Բայց

Հոմանիշն է սակայն *բառի*.

Ե՛րբ, բայց զգոյշ լինիջիր *«Գնա՛, բայց զգո՛ւյշ եղիր»: Կարող է կցվել նաև իր հոմանիշ* սակայն *բառի հետ, որ տե՛ս Բացասական կամ հարցական խոսքից հետո* բայց միայն, բայց եթէ, բայց թէ *բաղադրությունները, ինչպես նաև միայն* բայց, *ցույց են տալիս նախորդի հերքումը և միայն հաջորդի ընդունումը. օրինակ՝*

Ո՛չ այլ ինչ տեսանիցես, բայց միայն խաբէութիւն.

Ջլեզու ոչ կարէ այլ ինչ կապել, բայց եթէ երկիւղ միայն:

Ջի՞նչ օգուտ, բայց թէ միայն վնաս.

Մի՛ ումեք պարտապան գտանիցիք, բայց (=բացի) զմիմեանս սիրելոյ :

Սրանց հոմանիշ են նաև եթէ ոչ, *կամ պարզապէս* այլ. *օրինակ՝*

Ոչ այլ ինչ են վիշապք, եթէ ոչ օձք մեծամեծք.

Ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ.

Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի. *Մատթ. ԺԵ 24։*

Ոչ առաքեցայ առ ոք, այլ սոուեր տարերցս:

Բայց, սակայն, բայց սակայն.— *սրանց դեմ կարելի է և գործածել* միայն, միայն թէ. *օրինակ՝* Այս տարի խաղողի բերքը շատ առատ է, բայց լավը չէ *(կամ* միայն թէ*). Երկու բառերի նույնության համար համտ. անգլ.* but *«1. բայց, 2.միայն». ինչպես՝* Justinian was but *(միայն)* seventeen when he came to the throne but *(բայց)* he soon shoved that he intended to rule the empire.

Ոչ միայն մի պարբերության մեջ, այլ կարող է նաև գործածվել երկու խոսակիցների խոսակցության մեջ դեմ առ դեմ։

— Նա չի գողացել:

— Բայց ես տեսայ:

Այս դեպքում կարող է դրվել պարբերության սկիզբը և մինչև անգամ կրկնվել մի քանի անգամ. օրինակ՝

Բայց միայնակ, բայց կոյր, բայց մշտատանջ խղճի խայ-

քերով որ կը տեսնուին, ի՞նչ բանի կրնայի մտածել *(«Գաղտնիք Բարիզի», Թրգմ. Մ. Մամուրյան, Զմյուռնիա, 1869, Զ, 94)։*

Սովորաբար գրվում է հակասող նախադասության սկիզբը. եթե այդ նախադասությունները մի քանիսն են, բայց գրվում է միայն մի անգամ, այն է առաջին նախադասության սկիզբը։

Գրվածքին սաստկություն տալու համար կարելի է սակայն հակասող բոլոր այդ նախադասությունների սկիզբը կրկնել բայց. *ինչպես՝*

Բայց իր զայրոյթը զսպեց, բայց քաղաքավար եղաւ և փաղաքուշ զաւառապետ նոր աղջև, բայց Հռոմի յայտնած փափաքը կատարեց. բայց իր խղճի խայթքէն ճեղուելով և այլն *(«Անիծեալն», Թրգմ. Մ. Մամուրյան, Զմյուռնիա, 1875, Գ, 56)։*

Բայց պէտք էր արքեպիսկոպոսարան դիմել, բայց պէտք էր սաստիկ զանգատիլ, բայց պետք էր այսպիսի նախատանաց զայթակղութիւնը բարձրաձայն ճոչակել *(անդ, Դ, 65)։*

Բայց *«միայն». ինչպես՝*

Պատուիրեաց նոցա զի մի ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ. *Մարկ. Թ 8։*

Կապում է երկու հակառակ նախադասություն. օրինակ՝

Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար. *Մատթ. ԻԶ 41։*

Որդի մարդոյ երթայ որպէս գրեալ է վասն նորա, բայց վայ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն որդին մարդոյ մատնեսցի. *Մատթ. ԻԶ 24։*

Թէև *պայմանական շաղկապից հետո՝ հաջորդ հակառակ նախադասության սկիզբը. օրինակ՝* Թէև նա կանչեց, բայց ես չգնացի:

Թէև *բառին հոմանիշ է* չնայած, *բայց սրա հետ* բայց *չի գործածվում.* Չնայած որ նա կանչեց, ես չգնացի: *Սխալ է ասել* Չնայած մեծ դժուարութեան, բայց պատւով կատարել էր այդ առաջադրանքը *(Սիրաս, Զգրուած օրէնք, 187)։*

Գոնեա՛, գոնեայ, գոնէ, գէթ

Նույնիմաստ շաղկապներ են. օրինակ՝

Գոնէ արդ պատմեա՛ ինձ.

Եթէ գիտէիր դու՝ գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո.

Եթէ չօրհնիցես՝ գէթ յանիծից լռեա՛.

Գոնեայ թէ ստուերն անկանիցի ի վերայ նոցա:

Գրեթէ < գրեա՛ թէ

Նշանակում է «իբր թե, համարեա՛ թե, մոտավորապես».

Գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն։

Եթէ, թէ և այլն

1. Ցույց է տալիս պայման, ճիշտ ինչպես աշխարհաբարում. օրինակ՝

Եթէ կամիս, կարող ես.

Եթէ ոչ տեսանէք, ոչ հաւատայք։

2. Հաճախ առանց պայմանի, պարզապես նշանակում է աշխարհաբար «թէ, որ, քի». օրինակ՝

Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել։

3. Եթէ (որ և թէ) դրվում է երկու հարցման (երկրորդը հաճախ նույնի բացասականը), որոնցից մեկը պետք է ընտրել. «աշխարհաբար թէ ոչ, թէ չէ, ժող. չէ նէ, թրք. yoqsa». օրինակ՝

Տացո՞ւք եթէ ո՛չ տացուք «Տա՞նք թէ չտանք»։

4. Եթէ (որ և թէ) հարցականից կամ բացասականից հետո նշանակում է «որ, որպէսզի». ինչպես՝

Ո՞ եղև խորհրդակից Տեառն, եթէ խելամուտ արասցէ զնա.

Ոչ եմք անձանց տեարք, եթէ ըստ կամս գնասցուք։

Ոչ եղև ինչ գաղտնի եթէ ոչ ի յայտ գայցէ «Չեղավ մի գաղտնիք, որ չհայտնվի»։

Ընդհանրապես այնպես է ընդունված, թե գրբ. եթէ համապատասխանում է աշխ. թէ ձևին, իսկ գրբ. թէ աշխարհաբար եթէ ձևին։ Սա ճիշտ է մեծ մասամբ, բայց ո՛չ միշտ, ինչպես տեսանք վերի օրինակների մեջ։ Բաղադրյալ շաղկապների մեջ թեև պատահում է եթէ ձևը, բայց ավելի հաճախ լինում է թէ. ինչպես՝ զի թէ, ապա թէ, քան թէ, իբր թէ և այլն։

Կրկնությամբ, ճիշտ ինչպես համազոր թէ, նշանակում է աշխարհաբար թէ՛... թէ՛... օրինակ՝

Եթէ մեք և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք.

Եթէ պատճառանօք, եթէ ճշմարտութեամբ։

Բայց եթէ և եթէ ոչ բաղադրությանց վրա տե՛ս բայց։

Ո՛չ եթէ, սրա հետ նաև ո՛չ թէ, իբր ո՛չ եթէ, նշանակում է աշխարհաբար «ո՛չ թէ», որով հերքում է առաջին խոսքը և առաջարկում է մի ուրիշ բան (սկսում է սովորաբար այլ շաղկապով. հաճախ զարդի համար ավելացնում են նաև ինչ). օրինակ՝

Ոչ եթէ ընդ ընչից գնելի են երկնաւորքն, այլ ընդ կամաց.

Ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա.

Անժամն ո՛չ թէ միայն անպիտան է, այլ և վնասակար.

Իբր ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհինն.

Իբր ոչ եթէ զի օգտեցի ինչ, այլ...

Հյ. եթէ *և* թէ *շաղկապների իմաստի նույնության համար հմմտ. ֆրանս.* si *(պայմանական և կասկածական). օրինակ՝*

Si *(եթէ)* vous parlez, je vous écouterais.

Je ne sais si *(թէ)* mon frère parlera.

Թէ *շաղկապի իմաստով գործածվում է հաճախ* բալ *բայը՝ ասել բայի հետ, որոնք հոմանիշ են. օրինակ՝*

Ասացի բամ՝ Ցրեցից զնոսա. *Օր. Լր. 26.*

Ասացեր բաս մարդիկ են. *Ագաթ. § 62.*

Զի ասաց բա[յ] մինչ. *Եփր. Բ էջ 25։*

Թէ, եթէ *բառերի նշանակությունը և գործածությունը աշխարհաբարի մեջ որոշ է.* եթէ *գործ է ածվում պայմանական իմաստով,* թէ՝ *«որ» նշանակությամբ. օրինակ՝*

Ասաց թէ գալու է.

Եթէ ասաց թէ գալու է, ուրեմն կգայ:

Հին հայերենում այսպիսի կտրական տարբերություն չկա, այս պատճառով մենք այստեղ միացնում ենք երկուսը։

Թէ, եթէ *ձևերից պարզ արմատը ներկայացնում է* թէ, *որի վրա ավելանալով* ե *նախաձայնը, ստացվել է* եթէ: *(Տե՛ս Արմ. բառ.)։ Ընտիր գրաբարում գործածական էր* թե, եթե *ձևով, հետո վերածվեց* թէ, եթէ, *ըստ որում* ե *վերջացող հայերեն բառ չկա։*

Թէ, եթէ *գործ են ածվում՝*

1. Երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապելու համար. ինչպես՝

Յիշեցին եթէ այն է որ գրեալն էր վասն նորա. *Յովհ. ԺԲ 16.*

Ոչ կամէր եթէ ոք գիտասցէ. *Մարկ. Թ 29.*

Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ. *Յովհ. Ի 15.*

Զայս ասէր, նշանակելով թէ որով մահու մեռանելոց իցէ. *Յովհ. ԺԲ 33.*

Ուրախ լեալ էր ձեր, թէ ես առ հայր երթամ. *Յովհ. ԺԴ 28։*

2. Մեկի ասած խոսքը, հարցումը և այլն մեջ բերելու համար, ինչպես՝

Ասէին, եթէ դու ես որդի Աստուծոյ. *Ղուկ. Դ 42.*

Ամէն ասեմ ձեզ, թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում. *Ղուկ. Դ 24։*

Թողոք է՝ եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ. *Եզն. 15.*

Հարցանէր զնոսա, եթէ դուք ո՞յք էք. *Բուզ. Գ 3։*

Խոստովան լինէին եթէ եկաք զի աւերեսցուք զտեղիս. *Բուզ. Գ 3.*

Ասացի թէ Աստուածք իցէք. *Եզն. 76.*

Հարցանէր թէ ով իցէ և զի՞նչ իցէ արարեալ. *Գրծ. ԻԱ 33.*

3. Ցույց է տալիս պայման. ինչպես՝

Եթէ դուք որ չարքդ էք, գիտէք պարզևս բարիս տալ որդւոց ձերոց, որչա՞փ ևս առաւել Հայր ձեր տացէ բարիս... *Ղուկ. ԺԱ 13.*

Եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր, ապա թէ ոչ, ի ձեզ դարձցի. *Ղուկ. Ժ 6.*

Եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. *Յովհ. Ժա 21.*

Եթէ զայս գիտէք, երանելի ևս էք, եթէ առնիցէք զայս. *Յովհ. ԺԳ 17.*

Եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լեալ էր ձեր. *Յովհ. ԺԴ 28.*

Կախարդն եթէ հանէր, ապաքէն դիւօք հանէր. *Եզն. 86։*

4. Իբրև նշան անորոշության կամ վարանման՝ երկու հակառակ գաղափարների միջև, դրական կամ բացասական, հաստատական կամ հարցական, մի անգամ կամ կրկնությամբ. ինչպես՝

Ինձ ոչ է փոյթ զնմանէ թէ նորոգեսցէ զքեզ Աստուած քո թէ ոչ. *Ագաթ. § 118.*

Տացո՞ւք թէ ոչ տացուք. *Մատթ. ԺԲ 14.*

Զի՞նչ դիւրագոյն է, ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա. *Ղուկ. Ե 23.*

Եթէ վաղ եթէ անագան՝ քակտի հնացեալ մարմինն. *Ագաթ. § 117։*

Բերված օրինակների մեջ եթէ, թէ ունի «կամ» նշանակությունը. և շատ լեզուներ այս պարագայի՛ն գործածում են «կամ»։ Այսպես նաև աշխարհաբարում կարող են հավասարապես ասել.

Իր կաղապարով կը ձուլէ այն բոլոր օտարամուտ տարրերը՝ լինին գիտական կամ կրօնական (Եղիշե Դուրյան, Կրօն. Պատմ., 151).

Մեկ ուրիշը պիտի ասեր՝ ... գիտական թէ կրօնական։

Թէ, եթէ *բառերի գործածության զանազան ձևեր են ներկայաց-նում Եզնիկի հետևյալ հատվածները.*

Գիտէ՞ր Աստուած եթէ այնպէս լինելոց էր, թէ չգիտէր. թէ գիտէր և արար, ինքն է պատճառ նորա ի լաւութեանցն դառնալոյ. ապա թէ ոչ գիտէր, զիա՞րդ առնէր զայն զոր ոչն գիտէր, թէ որպիսի ինչ ոք լինելոց իցէ *(էջ 54)*։

Եւ թէ ջուր, թէ հուր, թէ երկիր, թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն *(էջ 14)*։

Թէ, եթէ *շաղկապներով կազմված ձևեր են՝*

Գրեթէ *(գրեա՛ թէ). ինչպես՝*

Լուսին ամսոյ ամսոյ նուազանի, գրեթէ և մեռանի. *Եզն. 15*։

Ապա թէ. *օրինակ՝*

Եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր, ապա թէ ոչ, ի ձեզ դարձցի. *Ղուկ. Ժ 6*։

Եթէ ոչ *«այլ միայն». օրինակ՝*

Այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք. *Մարկ. Թ 28.*

Առաջանում է պայմանական իմաստից. իմա՛ «Եթէ պահքով և աղոթքով չելլե, ուրիշ ձևով չելլեր»։

Թէ և. *ինչպես՝*

Թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն, արարից նմա դատ. *Ղուկ. ԺԸ 4*։

Ոչ եթէ. *ինչպես՝*

Ոչ եթէ ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ. *Յովհ. ԺԵ 16.*

Ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ, և ոչ ի մորենւոյ կթեն խաղող. *Ղուկ. Զ 44.*

Ոչ ինչ արտաքուստ ի մարդ մտեալ, եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմանէ, այն է որ պղծէ զմարդն. *Մարկ. Է 15*։

Թէպէտ, թէպէտ և *«թեև» իմաստով. օրինակ՝*

Թէպէտ և ես՛ս վկայեմ վասն անձին իմոյ, սակայն վկայութիւն իմ ճշմարիտ է. *Յովհ. Ը 14.*

Աստուած թէպէտ և ունէր իշխանութիւն... այլ ոչ ինչ դրդեաց. *Եզն. 76.*

Թէպէտ և ամենեքեան գայթակղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց. *Մատթ. ԻԶ 33։*

Եւ

Եւ *շաղկապը միացնում է երկու բառ իրար հետ. օրինակ՝*

Եւ եմուտ Նոյ և որդիք իւր և կին նորա և կանայք որդւոց նորա ընդ նմա. *Ծնն. Է 7.*

Կամ երկու և ավելի նախադասություններ. օրինակ՝

Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին և ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. *Մատթ. ԻԴ 29։*

Երբ կապակցելի բառերը մի քանի հատ են (երկուսից ավելի), աշխարհաբարում միայն վերջինից առաջ է դրվում և. *օրինակ՝*

Հայկի առաջին յաջորդներն են Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա և Արամ:

Գրաբարում սրա համար կա երեք ձև. կա՛մ աշխարհաբարի նման միայն վերջինից առաջ, կամ ամեն բառի հետ և կամ երկու առ երկու. օրինակ, Մնացորդաց Ա գրքի Ա գլխի առաջին համարներում ունենք՝

Որդիք Յաբեթի՝ Գամեր, Մագովգ, Մադայի, Յովիդան, Եղիսան, Թոբէլ, Մոսոք և Թիրաս.

Եւ որդիք Քուշայ՝ Սաբա և Եւիլա և Սաբաթա և Հռեգմա և Սաբակաթա:

Եւ որդիք Քամա՝ Քուշ և Մեստրեմ, Փուդ և Քանան:

Եւ *նշանակում է «էլ, նաև» և պատկանում է հաջորդ բառին (գոյական, դերանուն կամ բայ). օրինակ՝*

Գիտեմ և ես *«Ես էլ գիտեմ».*

Մարմինն և նոցա այսպիսի է *«նրանց էլ մարմինը այսպես է» (ոչ թե նրանց մարմինն էլ).*

Ոչինչ է պիտոյ և խօսել ինչ.

Ջրի էառ, ձրի և տայ.

Ջոր կամի ոք՝ զնոյն և կարծէ, նմին և ակն ունի.

Եւ *շաղկապի զանազան բաղադրություններն են* ևս, և ևս, այլ և, նաև, թէև, թէպէտև, ևս և, չև, միւս ևս, և եթ *և այլն։*

Հարցական մակբայները երբ առանց հարցման գործածվեն, իրենցից հետո ստանում են և *շաղկապը, որի փոխարեն աշխարհաբարում դրվում է* ու. *ինչպես՝*

Զինչ և ասիցես՝ չլսեմ ենզ *«Ինչ որ ասես՝ չեմ լսի քեզ»*.

Զինչ և խնդրեսցես՝ տաց ենզ *«Ինչ որ խնդրես՝ կտամ քեզ»*.

Զոր և ասիցես չարիք՝ անտի են *«Ինչ չարիք որ ասես՝ այնտեղից է»*.

Խնդրեա զոր և կամիս, զոր ինչ և կամիս *«Խնդրիր ինչ որ ուզում ես»*.

Յոր կողմ և դարձցի՝ եղծանի *«Որ կողմ էլ որ դառնա՝ կփչանա»*.

Երթայիր յո՛ և կամէիր *«Ուր որ ուզում էիր՝ գնում էիր»*.

Ուր և մտանէր *«Ուր որ մտնում էր»*.

Առ և տար զիս ուր և իցէ *«Առ և տար ինձ ուր որ լինի»*.

Եթէ կորուսեալ էր՝ ուր և էր՝ չանայաք խնդրէաք գտանէաք *«Եթե կորած լինէր, ուր որ էլ լինեք՝ կաշխատեինք, կորոնեինք և կգտնեինք»*.

Որպէս և կամէր *«Ինչպես որ ուզում էր»*.

Զիարդ և էր՝ զուարճացարուք.

Երբ և է՝ յայտնելոց են:

(Սրանից է, որ արդի աշխարհաբարում էլ ասում ենք՝ Երբ և է *(երբևէ)*=Երբ և իցէ *(երբևիցե)*, ինչ և է *(ինչևէ)*=ինչ և իցէ *(ինչևիցե)*։

Քիչ անգամ կարելի է նաև ասել առանց և *շաղկապի, ինչպես՝*

Բազում պատկերք կան ի գիրս. զո՛ր կամիցիս՝ նկարեա.

Զոր ենզ պատշաճ համարիցիս՝ ընդ այն գնասջիր.

Քիչ անգամ էլ և *շաղկապի տեղ կարելի է դնել* թէ. *ինչպես՝*

Քանիցս անգամ թէ ըմպիցէք *«Քանի անգամ որ խմէք»*։

Եւ *կրկնությամբ նշանակում է* թէ՛... թէ՛... *օրինակ՝*

Որք բամբասենն յամօթ լիցին և աստ և անդ.

Զայս և ասել և առնել պատշաճ է:

Եւ *դրվում է սաստկության համար* ոչ ոք, ոչ ինչ, ոչ ուրեք, ոչ երբեք, ոչ ուստեք, *նաև* մի՛ ոք, մի՛ ինչ, մի՛ ուրեք *և այլն բառերից առաջ, եթե սրանք բայից հետո գտնվեն. օրինակ՝*

Կարօտացա՞յք իմիք. և ո՛չ իմիք.

Ո՞ եկն յերկնից. ի մարդկանէ և ոչ ոք.

Ես ոչ դատիմ և ոչ զոք.

Ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի.

Ոչ գոյ ի ձեռին նորա և ոչ ինչ.

Մի՛ մնասցէ ի նոցանէ և մի՛ մի *(=և ո՛չ մի. առաջին* մի՛ *արգելականն է, երկրորդը՝* մի *«մեկ»).*

Մի՛ գտցէ զկնի իւր և մի ինչ.

Մի՛ լիցի և մի՛ զմտաւ անգամ ածել.

Մի՛ և միում շառաւղի տացես ի վեր արձակել.

Մի՛ և ուստեք ունիցին ակն *«Ո՛չ մի տեղից հույս չունենան»).*

Սրանից էլ սովորություն է եղած առանց բայի ասել և ոչ ուրեք, և ոչ երբեք, և ոչ իւիք, *որոնք նշանակում են «բնավ, ոչ բնավ» (մակբայ)։*

Երբեմն էլ և *դրվում է բայից առաջ. ինչպես՝*

Ուղղութիւն և ոչ ուրեք գտանի:

Եւ *շաղկապը «մինչև» մակբայի իմաստն է տալիս հետևյալ ասացվածների մեջ (ցատը ժամանակի վերաբերյալ).*

Անտի և այսր *«Այն ժամանակից սկսած մինչև այժմ».*

Ի քէն և այսր *«քեզանից այս կողմ».*

Ի նմանէ և այսր *«նրանից այս կողմ».*

Ի քէն և անդր *«քեզանից այն կողմ».*

Յօրէ յայնմանէ և անդր *«այն օրից հետո».*

ՅԱդամայ և ի խոնարհ *«Ադամից այս կողմ».*

Յերկեմենից և ի խոնարհ *«երկու տարեկանից ցածր».*

Ի քսանամենից և ի վեր *«քսան տարեկանից վերև».*

Ի բնէն և ի վեր *«կոթից վերև».*

Ի միջոյն և ի վայր *«մեջքից ցած».*

Աստի և ի վայր *«այստեղից ցածր».*

Եւ *ծառայում է միացնելու երկու կամ ավելի նման մասունք բանի (երկու կամ ավելի գոյական, դերանուն, նախադրություն, բայ և այլն). ինչպես՝*

Այր մի օտարական և անաշխարհիկ. *Ագաթ. § 50.*

Որ շարժին և փոփոխի. Եզն. *էջ 11։*

Եւ *կապում է նաև երկու նախադասություն. ինչպես՝*

Այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար ի մեզ, և զիա՞րդ իշխես պաշտել զաստուածն զայն, զոր ես ոչ պաշտեմ. *Ագաթ. § 50։*

(Արաբերեն و va *կապում է երկու բառ,* ف fa՝ *երկու խոսք)։*

Եբրայեցերենում սիրելի ձև է նախադասությունն սկսել և-ով

(Nöldeke, Die Semit. Spr. 23) *դրա համար էլ հայերենում Ս. Գիրքը լցված է և-ով. օրինակ՝*

Եւ ասաց Աստուած. *Ծննդ. Ա 6, 9, 14, 20, 24, 26, 29.*

Եւ խօսեցաւ արքայն Եգիպտացւոց. *Ելք Ա 15.*

Եւ կոչեաց Տէր զՄովսէս. *Ղևտ. Ա 1.*

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի. *Թիւք Ա 1.*

Եւ խօսեցայ ընդ ձեզ. *Բ Օրէնք Ա 9.*

Եւ եղև յետ վախճանելոյն Մովսիսի. *Յեսու Ա 1.*

Եւ եղև յետ վախճանելոյն Յեսուայ. *Դատ. Ա 1.*

Եւ եղև յաւուրս դատելոյ դատաւորացն. *Հռութ Ա 1.*

Եւ այր մի էր յԱրիմաթեմայ. *Ա Թագ. Ա 1.*

Եւ եղև յետ մահուանն Սաւուղայ. *Բ Թագ. Ա 1.*

Եւ արքայ Դաւիթ ծերացեալ և անցեալ զաւուրբք. *Գ Թագ. Ա 1.*

Եւ ըշխահեաց Մովաբ զԻսրայէլ. *Դ Թագ. Ա 1.*

Եւ այլն, և այլն։

Եւ *նշանակում է «նաև», որից ունենք՝*

Այլ և զՈրմիզդ թագաւորեցոյց ի վերայ նորա. *Ագն. 125։*

Եւ *գործ է ածվում իբր անորոշ. ինչպես՝*

Տուր հրաման վասն իմ որպէս և կամիս, զինչ մահ և հրամայես ի վերայ իմ. *Ագաթ. § 100։*

Եւ-*ից կազմված է նաև՝* և եթ *«միայն».*

Եւ *գործ է ածվում նաև իբր սաստկացուցիչ (ոչ բացասականի հետ). ինչպես՝*

Եւ ոչ մի հատ.

Եւ ոչ մեկը:

Եւ *շաղկապը հաճախ կցվում է առանձին բառերի վրա, առանց իմաստի հայտնի փոփոխության. օրինակ՝* մինչ—մինչև, իբր—իբրև, արդար—արդարև, թէ—թէև:

Ստանալով ս մասնիկը, դառնում է ևս, որ նույնպես կարող է գործածվել առանձին բառերի հետ. ինչպես՝ դեռ ևս, այլ ևս, միւս ևս, արդ ևս, *կամ նույնիսկ կցվել բառին՝ իբրև մասնիկ. այսպես են* թերևս *և* միւս *(հին ձևը* մեւս, *այն է՝* մի ևս*)։*

Հյ. իբր, իբրև, երբ *բառերին նման են հնչում վրաց.* էբր, էբրիվ *«նման, պէս՝* միս-էբր *«նման նմա», ածականների ծայրին՝* էբրի, էբուրի, էբրիվի, մեբրիվի *«նման, իբր, պէս», որոնց ծայրի* իվ *վերջավորությունն էլ կցել եմ հյ. և մասնիկին (տե՛ս Արմ. բառ. Գ 62)։*

Մանջուրերեն և Թրք. չկա և շաղկապ. դնում են դերբայ. ինչպես՝
մանչ. obofi gene
գնա և լուա՛. *(գնալով լուա)*.
Թրք. aləb gitdi *(առնելով գնաց)*.
առավ և գնաց.

Կաբարդին լեզվի մեջ և շաղկապը (re) *կցվում է յուրաքանչյուր բառի վերջին. օրինակ՝*

detlxum-re   sapxum-re
եղբայրը և   քույրը (և)։

Ս. Գրքում, ինչպես վերև ասացինք և տեսանք օրինակներով, չափազանց շատ է գործածվում և շաղկապը. այսպես և Հն. κaι. բայց սա սեմական սովորություն է, ուր և միջակետի արժեք ունի։

Սերբերենում և շաղկապը մի քանի տեսակ է. i պարզ և. a հակադրություն է ցույց տալիս. այսպես՝

dèca slūšajū, a ròditelji zapovédajū
Երեխայք հնազանդվում են, իսկ ծնողք հրամայում.
pâk, pâ *«և այն ժամանակ»*.
pròdaćomo ga zà groš, pâ jmo ȍpēt na dobitku.
Կծախենք զայս մի քանի գրոշի և դեռ կշահենք.
tē և *(հետևանքով միասին)*.
otidi tē učīni kāko trēba.
գնա և արա ինչպես պետք է։

(Meillet, Gr. serbe, *294)*

Բայց կարելի չէ ամեն մի բառի վրա ազատորեն դնել այս մասնիկը, ինչպես և նախորդները։

Կովկասյան ուբիխերեն լեզվում «և» շաղկապի իմաստը տալու համար երկու գոյական կարող են իրար մոտ հարադրվել. ինչպես՝

ȷe-şâ-xišâ *«իր շապիկն (ու) սպիտակեղենը»։*

(Dumézil, *38)*

Հետաքրքրական է ikki *«երկու» թվականի իբրև շաղկապ գործածությունը յակուտերենում։ Երբ երկու գոյական միասին հիշատակվում են կողք-կողքի,* ikki *բառը դրվում է նրանցից հետո, վրան ավելացնելով նաև նրանց հոլովական վերջավորությունը, որից գոյականները զրկվում են. օրինակ՝*

min ağam   iyem   ikki · kelnittere
Իմ հայրս և մայրս (երկու) եկան (հասան)

en min ikkide tuhalaq.
Քեզ և ինձ (երկուսիս) օգտակար։

Երբեմն էլ այս «երկու» բառը կրկնվում է.

Ilin qaya ikki ɛrga qaya ikki
Արևելյան և արևմտյան սարը (երկու=և)

(Ястремскии, *71)*

Եւ

Կազմված է և շաղկապից՝ ս *հավելվածով, որ գտնում ենք շատ մակբայների ծայրին. ինչպես՝ յանակնկալս, յանզգայս, յանգէտս և այլն։*

Ածականից առաջ կամ հետո դրված՝ նշանակում է «ավելի» և մակբայ է. Ե՛ս մեծ, մեծ ևս: *Իսկ ուրիշ բառերից հետո գրվելով և առաջուց էլ ստանալով և շաղկապը կամ նաև առանց այդ շաղկապի, նշանակում է «է՛լ». օրինակ՝*

Եւ միւսումն ևս արարէք պատասխանի *«Մյուսին էլ պատասխանեցէք».*

Զոր ունէրն և զայն ևս կորոյս *«Ունեցածն էլ կորցրեց».*

Նոքա և զնա ևս գան հարին *«Նրանք նրան է՛լ ծեծեցին».*

Միւս ևս այր.

Մյուս ևս այլ երազ:

Զի

Կարելի է ընդհանրապես թարգմանել աշխարհաբար «որ» ձևով, բայց այս «որ» շաղկապը ունի զանազան առումներ.

1) Զի *նշանակում է «որ, թէ», որի փոխարեն կարելի է դնել նաև* թէ, եթէ. *օրինակ՝*

Կամի՞ս զի ասասցուք.

Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք.

Ետես զի բարի էր ծառն.

Տե՛արք, գիտասջիք զի և ձե՛ր տէր գոյ յերկինս:

Զի *նշանակում է «որ, որպեսզի». այսպիսի առում լինում է ապառնիի և ստորադասականի հետ. օրինակ՝*

Արա ինձ խորտիկս, զի կերայց.

Զի ուսանիցիս «որպեսզի սովորես».

Կամի՞ք զի արձակեցից. *Յովհ. ԺԸ 39.*

Խնդրէր նա յԱստուծոյ, զի մի զրկեսցի նա յորհնութենէ զաւակի. *Բուզ. Գ 5.*

Վասն այսորիկ եկի ես առ քեզ, զի հասարակ զհասարակաց վրէժ խնդրել մարթասցուք. *Ագաթ.* § *29.*

Զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա. *Յովհ. Ժ 17։*

Զի *նշանակում է «որ, այնչափ որ». օրինակ՝*

Այնպէս անհագին էր, զի զահի հարեալ եմ։

Զի *նշանակում է «որ, որչափ ժամանակ որ». օրինակ՝*

Այս լի երեսուն ամ է զի պատերազմեցար ընդ իս։

Զի *նշանակում է «որ» (հարցականից հետո). ինչպես՝*

Յո՞ յուսացեալ իցես զի ոչ հնազանդիս ինձ.

Իսկ ես ո՞վ եմ զի աղաչես դու զիս.

Զի՞նչ իրք իցեն, զի այնչափ ժամս յամեաց գալ.

Նախնիքն նորա զի՞նչ էին, զի նա այնպիսի հանդերձս արկանի.

Ընդէ՞ր ոչ օգնեցեր նմա, զի յայնչափ թշուառութիւն մատնեցաւ։

Զի *նշանակում է «որովհետև» (այս իմաստով չի գտնվում ապառնիի և ստորադասականի հետ). օրինակ՝*

Մի՛ երկնչիր, զի ես ընդ քեզ եմ.

Խորհէին ընդ միմեանս թէ զի հացս ոչ ունիմք։

Զի չեկն ի զղջումն յանցուցեալն, յիրաւի կրեաց պատիժ զմահ. *Եզն. 74։*

Խնդրեցէք և տացի ձեզ... զի ամենայն որ խնդրէ, առնու. *Ղուկ. ԺԱ 9.*

Վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ. *Ղուկ. ԺԵ 13.*

Զի առանց կամացն Աստուծոյ զործին իրք ինչ, լինին չար. *Եզն. 50.*

Վասն այնորիկ սիրէ զիս հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ. *Յովհ. Ժ 17։*

Զի *դրվում է նաև այն դեպքում, երբ թեական իմաստով* եթէ, թէ *հաջորդի. օրինակ՝*

Գիտես զի թէ ոչ վաղվաղակի, այլ յետ սակաւ միոյ վայելեսցես *«Գիտես որ եթե ո՛չ շուտով, գոնե քիչ հետո պիտի վայելես»։*

(Այսպես արվել է խուսափելու համար երկու թէ*-ի կրկնությու-*

նից. ինչպես որ այժմ էլ ասում ենք ու եթէ, *չասելու համար* թէ եթէ:

Զի նշանակում է նաև «եթե, թե որ». ինչպես՝

Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞ւ կեցցուք. *Բուզ. Գ 6։*

Զի նշանակում է «թե, որ». ինչպես՝

Տեսին զի այն ինչ մեռեալ էր. *Յովհ. ԺԹ 33.*

Այսչափ ամք են, զի տեսի ես զքեզ. *Ագաթ. § 51։*

Զի կազմում է երկրորդական նախադասություն և որ *հարաբերականի արժեքն ունի. ինչպես՝*

Գոյ աստ այր մի ի դրան քում, զի իրքդ այդ նովաւ վճարին. *Ագաթ. § 44 (փոխ.* որով).

Մի՛ լինիք որպէս զձիս և զջորիս. զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. *Սաղմ. ԼԱ 9 (փոխ.* յորս).

Տեսին զորսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն, *Բուզ. Գ 8 (փոխ. որոց)։*

Երբեմն զի *բռնում է միջին դիրք «թե» և «որ» իմաստների միջև. ինչպես՝*

Տեսանէ զՅիսուս, զի կայր. *Յովհ. Ի 14. իբր «տեսնում էր թե կանգնած է», «տեսնում էր Հիսուսին, որը կանգնած էր»։*

Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զքեզ օրհնել կամ անիծանել. *Բուզ. Զ Թ.*

Զի բարդվելով կամ միանալով ուրիշ բառերի հետ, ձևացնում է զանազան շաղկապներ. այսպես՝

Քանզի *«որովհետև». օրինակ՝*

Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի. *Յովհ. ԺԶ 5.*

Երկեան ի ժողովրդոցն, քանզի իբրև զմարգարէ ունէին զնա. *Մատթ. ԻԱ 46։*

Վասնզի, *ինչպես՝*

Վասնզի չէ պարտ կենաց, վասն այնորիկ ոչ կամի կեալ. *Ագաթ. § 121։*

Որպէսզի *(ստորադասականի հետ). ինչպես՝*

Սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկան. *Մատթ. Զ 5։*

Մինչ զի *«մինչև». օրինակ՝*

Շրջշրջէին զնա անդէն, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ. *Ագաթ.* § *112։*

Փոխանակ զի. *ինչպես՝*

Օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի. փոխանակ զի լուար ձայնի իմում. *Ծննդ. ԻԲ 18.*

Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ. *Բուզ. Ջ Թ։*

Սրանից են կազմված նաև վասն զի, քան զի, որպէս զի, այն զի, զի՞ է զի:

Թէպէտ, թէպէտև

Կազմված է թէ *թէականով* պէտ *(որ պէտք բառի եզակին է)* և *շաղկապը՝ իբրև սաստկացուցիչ։ Նշանակում է «թէև». ինչպես՝*

Թէպէտ և նախատի վատ՝ ո՛չ ամաչէ *«վատը թէև նախատուի էլ, չի ամաչի».*

Թէպէտ և քո իցէ գլուխն, այլ Աստուծոյ արարած է.

Թէպէտ և մեռեալ է, սակայն խօսին զնմանէ.

Անգին է դատաստանն, թէպէտ և Աստուած քաղցր է:

Թէպէտ և առ ակն ածել չասիցէ ինչ, այլ ի մտի ստգտանիցէ զքեզ: *«Թեև ամաչելուց բան չի ասում, բայց մտքումը դատապարտում է քեզ»։*

Օրինակները ցույց են տալիս, որ այս շաղկապից հետո դրվում է այլ, բայց, սակայն, *որոնք եթե չդրվեն էլ, զորութեամբ իմացվում են։*

Թէպէտ *կրկնվելով նշանակում է «թե՛ այս, թե՛ այն, ուզում է այս լինի, ուզում է այն լինի». օրինակ՝*

Թէպէտ հուր, թէպէտ ջուր.

Թէպէտ ի չար վարէր զգործին, թէպէտ ի բարի...

Թէ

Նշանակությամբ նույն է նախ եթէ *շաղկապի հետ. օրինակ՝*

Թէ միայն մերձենամ, փրկիմ «Եթէ դիպչեմ միայն՝ կազատվեմ»:

Բայց նշանակում է նաև աշխարհաբարի նման «թե, որ, քի». ինչպես՝

Ասէք թէ անձրև գայ.

Գիտէին թէ մեռաւ:

Սրա տեղ երբեմն դրվում է զի, *որ տե՛ս.*

Թէ *(ճիշտ ինչպես* եթէ *3) գործածվում է նաև երկու հարցման միջև «աչխ. թէ՞, թէ ոչ, չէ նէ» նշանակությամբ. օրինակ՝*

Գիտէ՞ր թէ չգիտէր.

Պանէ՞ զգաշինսն թէ ոչ.

Ի ժամանակի խնդիր լինիցի, սո՞ւտ խօսեցաւ թէ արդար.

Սո՞վն լաւ իցէ.թէ պատերազմն թէ մահն:

Թէ *(ճիշտ ինչպես* եթէ *4) հարցականից կամ բացասականից հետո նշանակում է «որ, որպէսզի». օրինակ՝*

Չեմ այնչափ անմիտ թէ ոչ գիտիցեմ *«Այնքան անխելք չեմ որ չհասկանամ».*

Չիք ինչ որ մտանիցէ ընդ բերան թէ կարիցէ զմարդն պղծել:

Թէ *կրկնությամբ, աշխարհաբարի նման նշանակում է «ա՛յս էլ և այլն էլ». օրինակ՝*

Ծառտարապետն ճմուտ թէ գործիցէ և թէ չգործիցէ, չնուագի ինչ. քանզի արուեստն ի միտս կայ:

Բայց թէ *բաղադրության մասին տե՛ս* բայց:

Ոչ թէ *բաղադրության համար տե՛ս* եթէ:

Իբրև զարդ դրվում է մակբայների վրա էլ. ինչպես՝ զուցէ թէ, ճազիւ թէ, միայն թէ. *կամ շաղկապների վրա, ինչպես՝* քան թէ, կամ թէ:

Թէև

Կազմված է թէ+և *շաղկապներից. իմաստը նույն է ինչ որ* թէ-պէտ, թէպէտև. *ինչպես՝*

Թէև տրտմեցուցի զձեզ թղթովս, ոչ զղջանամ:

Թո՛ղ թէ

Նշանակում է «ո՛ւր մնաց թե». օրինակ՝

Որ ի քուն կայցէ, նմա և ծառայք չանսան, թող թէ Աստուած.

Չնրեշտակս, թո՛ղ թէ զերկրաւորս:

Իսկ

Հետադաս մակբայ է և խոսքի իմաստն է զորացնում. դրվելով խոսքի սկիզբը, դառնում է շաղկապ և նշանակում՝

1. «սակայն, իսկ». ինչպես՝

Այր բարկացող նիւթէ զկռիւ, իսկ երկայնամիտն և զհանդերձեալսն ցածուցանէ.

Դու·աւադիկ առաջոյ սպասես թշնամեացն, իսկ նոքա զթիկամբք անկեալք կոտորեցին զաշխարհս:

2. Հարցականից առաջ նշանակում է «հապա՞». օրինակ՝

Իսկ այս ո՞վ է.
Իսկ զիա՞րդ ոչ իմանայք.
Իսկ ո՞ հաւատաց.
Իսկ զի՞ մկրտես.
Աղէ՛ ասա, միթէ մա՞հ, իսկ ցաւք, իսկ նեղութիւն:

3. Կապում է երկու հակառակ իմաստով նախադասություններ. ինչպես՝

Յիմարքն առին զլապտերսն և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց. *Մատթ. ԻԵ 3։*

Իր

Սեռական հոլովով միանում է սոյն, դոյն, նոյն *ցուցականների տրականի հետ* (սմին իրի, դմին իրի, նմին իրի), *ցույց է տալիս պատճառը և կազմում է նոր նախադասություն. տե՛ս և* վասն, սակս:

Կամ, կամ թէ

Հայերեն կամիմ *բայից է. իբր աշխարհաբար «ուզես այս, ուզես այն». որ և լտ.* vel, *պրս.* خواه xah, *թրք.* ister.

Ո՛չ միայն երկու, այլ մի քանի բառերի միջև կարող է դրվել. ինչպես՝

Զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգեցցուք:

Նախադասության մեջ բոլորն էլ համապատասխան են իրար, այնպես որ կարելի էր նաև և շաղկապով կապել. բայց կա նաև կրկնության այնպիսի մի ձև, որ ներկայացնում է իրար հակառակ երկու իմաստներ և երկուսից մեկը պիտի ընդունել. օրինակ՝

Ամենայն ճգնողք *(=ըմբիշներ)* կա՛մ պսակին կա՛մ ամաչեն:

Երկրորդ ձևը առաջինից այն տարբերությունն ունի, որ 1) կամ *դրվում է առաջին բառից հետո, իսկ երկրորդում հենց առաջին բառից առաջ. 2) առաջին դեպքում* կամ *շաղկապը շեշտ չունի, երկրորդ դեպքում շեշտով է արտասանվում և գրվում. օրինակ՝*

Գնասցուք կա՛մ թէ յաջ կամ թէ յահեակ:

Կամ *կապում է երկու նման մասունք բանի, ինչպես և երկու նախադասություն. օրինակ՝*

Դուք ո՞յք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ խնդրէք. *Բուզ. Գ 3։*

Սաստկության համար դրվում է և կամ, (և) կամ թէ. օրինակ՝

Զանձնարին թշնամանս զոր եդեր դիցն և կամ մեզ իսկ բազատրացս. *Ագաթ.* § *62։*

Կարող է սկիզբը դրվել և շեշտ ստանալ. ինչպես՝

Կա՛մ արարէք զծառն բարի...

Կամ շաղկապը կրկնության ժամանակ աշխարհաբար դառնում է և կամ, կամ թէ, և կամ թէ, և կամ թէ չէ. ֆրանսերենում էլ ասում ենք ou, ou bien, ou bien encore.

Մանաւանդ

1. Նշանակությունը նույն է աշխարհաբարի հետ. օրինակ՝

Բազում թռչունք ի փեղեցիկ տունս բնակեն, մանաւանդ նայք.

Բերչիք զգիրսն, մանաւանդ զմատեանսն:

2. Բաղդատությամբ նշանակում է «ավելի». օրինակ.

Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն:

3. Մանաւանդ զի, *որի համանիշն է* այն զի, *երկուսն էլ սաստկացնում են նախորդ խոսքի իմաստը. օրինակ՝*

Միթէ ոչ լուան. մանաւանդ զի ընդ ամենայն իսկ երկիր ել բարբառ նոցա.

Մանաւանդ զի յուսացեալ ևս վստահ իցեմք. *Եզն.*

Այն զի ի ներթանոսաց միջի սնեալ էր *«ժամանակ որ հեթանոսների մեջ էր մեծացել»։*

4. Մանաւանդ թէ *(որ և* նա՛ թէ*) ցույց է տալիս նախընթաց խոսքին հակառակ, բայց նրանից գերազանց մի բան. ինչպես՝*

Կինն այրի յամենայնէ զրկեաց զանձն. մանաւանդ թէ չզրկեաց, այլ զամենայն շնորհեաց.

Արնամարհեսցուք զփառս, զի այնպէս կարիցեմք լինել խոնարհք, մանաւանդ թէ բարձրագոյնք իսկ.

Առաքինութեամբ լինիցիմք մարդիկ, մանաւանդ թէ հրեշտակք իսկ.

Այլ այժմիկ ծանեաք զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք յԱստուծոյ:

(Այսպիսի դեպքերում կարելի էր մանաւանդ թէ *թարգմանել «ավելի ճիշտն ասած»)։*

Միայն թէ

Կազմված է միայն *մակբայից*+թէ *շաղկապով. ասվում է նաև* թէ միայն, բայց միայն զի, *օրինակ.*

Բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք *«Բավական է որ աղքատներին հիշենք».*

Միայն թէ ի չարեացն հեռանայցեմք.

Միայն թէ ոգին առաքինի իցէ.

Միայն տուր ևեթ *(միայն թե տուր)։*

Նա՛

Նշանակում է «մանավանդ» և նա *դերանունից տարբերվելու համար ստանում է միշտ շեշտ. օրինակ՝*

Նա՛ նոցա ճանապարհն չէ ուղիղ.

Նա՛ և այն ևս ճշմարիտ է *«Մանավանդ որ ա՛յն էլ է ճշմարիտ».*

Չպետք է շփոթել նաև *շաղկապի հետ, որ դրվում է միացյալ.*

Սրանից է բաղադրեալ Նա՛ թէ, *որ տե՛ս* մանաւանդ թէ:

Նաև

Նշանակում է «էլ, ևս». օրինակ՝

Նաև Սողոմոն շինեաց տուն:

Որովհետև

Կազմված է որ *և* հետ (հետք) *«ոտք» բառերի գործիականով. այս մասին տե՛ս վերը։ Նշանակում է «այն պատճառով, որ». իր հոմանիշներն են* զի, քանզի, վասն զի:

Սովորաբար դրվում է խոսքի սկիզբը. օրինակ՝

Որովհետև միով ձեռամբս շինեցի և քակեցի, երկոքեան նո՞յն իցեն *«Որովհետև միևնույն ձեռքով շինեցի ու քանդեցի, ուրեմն քանդել և շինել նույն բա՞նն է»։*

Որովհետև եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն, չիք այր իմաստնագոյն և խորհրդական քան զքեզ.

Որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարէք:

Մի ուրիշ շաղկապից անմիջապես հետո. օրինակ՝

Իսկ որովհետև զայս ամտիս ունիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր.

Արդ որովհետև մանկունք ճաղորդեցին արեան և մարմնոյ...

Գտնում ենք նաև պարբերության երկրորդ մասում, իբրև պատճառ առաջինի. ինչպես՝

Մեռայց այսուհետև, որովհետև տեսի զերեսս քո.

Ու արդ զի՞նչ արարից, որովհետև Իսրայէլ զպարանոց իւր:

Որպէս զի

1. Նշանակում է «որ», ճիշտ աշխարհաբար գրական լեզվի ընդունած ձևով (ցույց է տալիս նպատակը, մինչդեռ որովհետև *ցույց է տալիս պատճառը). գրբ. ասվում է նաև* զի *(ապառնիի և ստորադասականի հետ). օրինակ՝*

Աղօթս արարէք, որպէսզի բժշկեսջիք:

2. Նշանակում է «որ», «այնպես որ, այնքան որ». օրինակ՝

Այնպէս էր գեղեցիկ, որպէս զի և ասել չէ ճնար *«այնպես գեղեցիկ էր, որ ասել չի կարելի»։*

3. Նշանակում է «այնպես որ». ինչպես՝

Որպէս զի ամենևին վասն ձեր ջանամք և ճնարիմք *«Այնպես որ ամեն կերպ ձեզ համար ենք աշխատում և հոգ տանում»։*

Սրա հոմանիշն է իբր զի, իբրու զի:

Որպէս թէ, իբր (և) թէ

Նշանակում է «կարծես թե, ինչպես թե». օրինակ՝

Որպէս թէ յանձնէ ունիցին:

Ուստի

Բուն նշանակությունն է «որտեղից». օրինակ՝ Ուստի՞ գաս և յո՞ երթաս.

Կազմված է -ուստ *մասնիկով, որ տալիս է բացառականի իմաստ. ինչպես՝ այլուստ, ի ներքուստ, արտաքուստ, յարքունուստ և այլն։ Եվ որովհետև մի մասնիկ միայն չի կարող մի բառ կազմել, ուստի արմատն համարում եմ* ու *«որտեղ», որ* -ր *մասնիկով պահված է* ուր *բառի մեջ և անկախ ձևով* յուկամ, յուպէտ *«ուր որ ուզես, ուր որ պետք է» բառերի մեջ (տե՛ս Արմ. բառ. Դ 690)։ Ըստ այսմ* ուստի <ու-ուստ-ի, *կրկին ու վերածված մեկի։*

24—158

Սա աւասիկ, դա աւադիկ, նա աւանիկ

Համարվում են շաղկապ և նշանակում «տես թէ, մանավանդ թէ». օրինակ՝

Սա աւասիկ զնորին ճակատակն առնեմք, և վասն այնորիկ ամենևին զամենայն կորուսանեմք.

Դա աւադիկ ամենայն ուրեք տեսանեմ զքեզ.

Նա աւանիկ տեսանեմք թէ Կայենի պատարագն չեղև ընդունելի:

Կարելի է անջատաբար էլ ասել՝

Նա տեսանեմք աւանիկ.

Դա և դուք աւադիկ:

Սակայն

Կարծում եմ կազմված է սակ *բառից* -այն *մակբայակերտ մասնիկով. Նույնից է* սակաւ՝ *գործիական ձևով, ինչպես* կամաւ։ *Հոմանիշն է* բայց *բառը։ Կապում է երկու հակառակ նախադասություն. օրինակ՝*

Ոչ տեսանես, սակայն հաւատաս:

Կարող է կցվել նաև ուրիշ բառերի հետ. ինչպես՝ այլ սակայն, բայց սակայն, սակայն և այնպէս:

Սակս

Նախադրություն է «համար» նշանակությամբ. միանալով այս, այն, ո *բառերի հետ, դառնում է շաղկապ «պատճառավ» նշանակությամբ և կազմում է նոր նախադասություն.*

Յայս սակս *«այս պատճառով»*.

յայն սակս *«այն պատճառով»*.

յոյր սակս *«որի պատճառով»*:

Վասն

Թեև վասն *նախադրություն է, բայց* վասն այսորիկ, վասն այդորիկ, վասն այնորիկ, վասն որոյ, ոյր վասն *կապակցությունները համարվում են շաղկապ. ըստ որում կազմում են մի նոր նախադրություն, որ ցույց է տալիս պատճառը. տե՛ս նաև իր, սակս:*

Վասնզի

Կազմված է վասն+զի *բառերից. հմմտ. աշխ.* ինչու համար որ, նրա համար որ. *Նշանակում է «որովհետև». Հոմանիշներն են* զի, քանզի. *օրինակ՝*

Զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս. *Մատթ. ԺԸ 32.*

Հները գրում էին սովորաբար միացյալ, այժմ գրում ենք իբրև երկու բառ՝ վասն զի:

Քան, քան թէ

Նշանակում է «ավելի քան» (պետք չէ շփոթել քան *նախադրության հետ, որ սովորաբար վերցնում է հայցական խնդիր). օրինակ՝*

Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք.

Աստուած առաւել սիրէ զմեզ քան թէ մեք զանձինս.

Քան ամենայն ուրեք առաւել յԵփեսոս պաշտէին զԱրտեմիս.

Լաւ է ինձ մեռանել քան թէ իցեմ կենդանի.

(Դիմավոր բայից առաջ ավելի լավ է համարվում քան թէ *փոխանակ ասելու* քան*).*

Մեզ քաւ լիցի մեռանել քան թէ ըստ օրէնս անցանիցեմք:

Երբեմն համառոտության համար դիմավոր բայի մոտ գրվում է քան, քան թէ, քան զի, *փոխանակ ասելու* քան զայն, քան զայն թէ, քան զայն զի *(կրճատվում է* զայն*). օրինակ՝*

Լաւ էր նոցա թէ բնաւ իսկ չէր ծանուցեալ, քան թէ ծանեան և...

Քան՝ զի անօգուտ շիրիմ կանգնեալ թողուցուս, հնարեա՛ց թողուլ անուն և յիշատակ *«փոխանակ անօգուտ մի շիրիմ կանգնելու և թողնելու, աշխատիր որ բարի անուն և հիշատակ թողնես»*.

Քան՝ զնոսա արկանէր ի գեհեն, զնա որ պատրեացն զնոսա ընդէ՞ր ոչ արկանէր *«նրանց դժոխք գցելու փոխարեն, նրանց խաբողին ինչո՞ւ չէր գցում»*։

Քանզի

Նշանակում է «որովհետև». հոմանիշ է զի, վասն զի *բառերի. կազմված է* քան+զի *բառերից, որի հետ հմմտ.* քանի որ *«որովհետև». օրինակ՝*

Որ ոչն ունէ՝ զայն որ ունէն մի՛ դատեսցի, քանզի Աստուած զնա ընկալաւ *«Չուտողը ուտողին չդատի, որովհետև Աստված նրան ընդունեց»*։

2. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԸ

Ամ

Նշանակում է «արդ, ուրեմն, հետևաբար». (ըստ Karst *257 պրս.* هم ham *«նաև, իսկույն» բառն է, որ ճիշտ չէ)։*

Այլ

Գրաբարի մեջ նախ միջակ անոսն էր և նշանակում էր «ուրիշ». դարձավ մակբայ՝ «մեկ էլ, ևս» նշանակությամբ, ինչպես նախադասության սկիզբը դրվելով՝ գործածվում էր իբրև շաղկապ՝ «բայց. սակայն» նշանակությամբ։

Առաջին նշանակության օրինակ է՝

Եւ այլ խօսեցայց *«Մէ՛կ էլ պիտի խօսեմ»։*

Ժ դարից հետո, միջին հայերենում ստացավ ներկա իմաստն ու գործածությունը՝ իբրև հետադաս շաղկապ. ինչպես՝

Նոfա այլ ճասին.
Եւ զայն այլ առին.
Եւ կինն այլ անտի էր:

Այս է որ ավելի ուշ այ>ա, *է ձայնափոխությամբ պիտի դառնար* Ում *ճյուղի բարբառներում* էլ, Կը *ճյուղի բարբառներում՝* ալ. *բարբառներից էլ անցավ գրական լեզուներին։*

Եթէ

Գրաբարում սովորական է Եթէ *իբրև շաղկապ, բայց բաղադրյալ շաղկապների մեջ ավելի սովորական է* թէ: *Բարբառներում ջնջված է* Եթէ *(կար միայն Ջթ.* էթը՝ *հին բարբառում, բայց այժմ գործածական չէ) և ամեն տեղ գործածվում է* թէ: *Միջին տեղն է բռնում միջին հայերենը, որ պայմանական իմաստով, նախադասության սկիզբը դնում է* եթէ. *ինչպես՝*

Եթէ ճիլայէ, եթէ կենայ, եթէ առնու, եթէ լինի, եթէ մեռնի:

Իսկ երբ կցվում է մի ուրիշ շաղկապի հետ, դառնում է միշտ թէ. *ինչպես՝*

Նա թէ *«և երբ»,* ապա թէ, ոr թէ, ամ թէ, և թէ, բայց թէ, թէ չի=թի չի, fաւէլ թէ.— *չկա բնավ և* եթէ, *որ այնքան սովորական է գրաբարում* (Karst *258)։*

Եrբ.

Միջին r–*ի անկումով դարձել է* եբ, *որ գրվում և հնչվում էլ էր*

եփ. *ստացել էր գրբ.* երբ, յորժամ, մինչ *բառերի նշանակությունը։*

Զատել

Նշանակում է «բացի, այլ միայն». ծագում է զատեալ *ձևից (Այտն. 135). Համտ. անցել, քաւել. օրինակ՝*

Մի՛ տաս (մի՛ տար) կերակուր, զատել թէ բնիկ վատուժել լինի.

Դեղ մի՛ տաս, զատել մրգաչուր տուր:

Ավելի ուշ դառնում է զարդել, զարդի *(փոխ.* զատ ի*)։*

Զէդ, զէտ

Ծագում է գրբ. զիարդ *ձևից (ճիշտ ինչպես* երբ>եփ *և* միակ> մէկ, *առաջինը* r-*ի անկման, երկրորդը* իա>է *ձայնափոխության համար)։ Նշանակում է «իբր, ինչպես» (մի գոյականի մոտ) կամ «մինչ, որովհետև» (մի նախադասության մոտ* (Karst, *257—258)։*

Թէ չէ

Նշանակում է «ապա թէ ոչ». օրինակ՝

Թէ չէ՝ սուտ է.

Թէ չէ սրթայ կ'անէ *(ԺԲ—ԺԳ դար).*

Karst *258—259 վերջինիս հետ հիշում է նաև* թէ չի *և* թի չի, *որոնք ծագած է համարում նմանողությամբ* չէ=չի *ձևից։*

Ինչուր

Ծագում է գրբ. մինչ ոչ *ձևից և համապատասխանում է գրբ.* մինչև, ցորչափ *ձևերին։* Ինչուր *շաղկապ է, իսկ* ինչվի *նախադրություն է, որ սակայն նաև իբր շաղկապ է գործածվում* (Karst, *258)։ Համտ. աշխ.* Մինչև որ նա եկաւ տուն, Մինչդեռ նա գալիս էր,— *մինչև տունը։*

Կամ

Նույն է գրբ. կամ *շաղկապի հետ, որ կրկնությամբ էլ ասվում է* կամ... կամ..... *օրինակ՝*

Հապա, ապա

Գրաբարի ապա *բառն է, բայց իմաստով մի քիչ տարբեր է։*

Նա, նայ

Համապատասխանում է Կբ *ճյուղի բարբառների* նէ, նա *ձևին,*

որ բայերից հետո դրվելով թեականի նշանակություն է տալիս (**եթե, թե որ**). *օրինակ՝* **երթաս նէ, տեսնաս նէ, բերես նէ**: *Միջին հայերենում* **նա, նայ** *ձևով իբր շաղկապ դրվում էր հաջորդ նախադասության սկիզբը։*

Ոչ

Կրկնությամբ միջին հայերենում ասվում է՝

ոչ... ու ոչ...
ու ոչ... ու ոչ...

Ու

Ծագումը հնխ. opi *ձևից է, ինչպես որ* **եւ** *ծագում է* epi *ձևից։ Ըստ այսմ գրաբարի մեջ թեև հավասար հնություն ունեն, բայց մինչդեռ և առատ ու անկախ գործածություն ուներ, ու շատ քիչ էր երևում և այն էլ բառերի բարդության մեջ. այսպես՝*

այրուձի *և* **այրեձի** *«ձիավոր զորք».*
ութուտասն *և* **ութևտասն** *«տասնութ».*
իբրու *և* **իբրև**:

Միջին հայերենում **ու** *դարձավ սովորական. և մինչև անգամ ձայնավորից առաջ կարող էր դառնալ* **վ, ու վ.** *ինչպես՝*

ի բախտ վ՚ ի յըռզակ. ի մեր մէջն վ՚ ի յիրէնցն. վ՚ եդ, վ՚այդ, վ՚ եսպան. ու ուժն, ու ուրանայ. տարի մի ու օր մի. ու իր, ու իր ճետ. ու ի մօտեւոր. ու ի պան. ու այնել. ու այրել եռ ու ելնէ. ու երկուքն *(*Karst, *112)։*

Չէ թէ

Նշանակում է «ո՛չ թէ...». օրինակ՝

Չէ թէ ի ճամբաւէ լուայք, այլ տեսաք *(ԺԲ—ԺԳ դար)։*

Քան ի

Նշանակում է «փոխանակ...». օրինակ՝

Հայնց պատեճեցին *(համար համարեցին)* **որ քան ի յայլ տեղաց՝ բերեն զԱնտաքոյ բրնձին որդին, զի ի մօտս** *(ԺԳ դար)։*

Քաւէլ

Ծագում է **քաւեալ** *ձևից. նշանակում է «բացի, ի բաց առյալ» և հաճախ միանում է* **թէ** *շաղկապին՝* **քաւէլ թէ**:

3. ՇԱՂԿԱՊՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Շատ ծանր դրության մեջ են ընկել շաղկապները բարբառներում. եթե նախադրություններ և մակբայներ կային բավական, շաղկապները մեծ մասամբ ջնջվել և նրանց փոխարեն եկել են թուրքական բառեր. նույնիսկ ու *շաղկապը չի դիմացել և թուրքերենի է վերածվել մեծ մասամբ.* կամ *շաղկապը միայն Նոր Նախիջևանի բարբառումն է պահված, ուրիշ ամեն տեղ դարձել է թրք.* yǝ։

Ահա հայերեն շաղկապների շարքը արդի բարբառներում.

Այլ> *գնում է երկու գծով. Ում ճյուղի բարբառներում դառնում է* էլ. *այսպես Երև., Ջղ.* էլ *«էլ, և», Մրղ.* էլ, *երբեմն դրվում է* է՛լm, *Համշենի բարբառում լինում է* ml *(Մալա և Ճանիկ),* ալ *(Տրապիզոն),— Ննխ.* ալ *(ձայնավորի մոտ* յալ. *կրճատմամբ՝* ա. *օրինակ՝* ճա-յալ *«նաէլ»,* յէս ա *«ես էլ, ես և»), Պլ.* ալ *(ձայնավորի մոտ* յալ, *կրճատ՝* ա, յա. *օրինակ՝* էս ա *«ես էլ»,* աճիգա յալ *«նա էլ»,* ճա՞ յա *«հա՞ էլ, այո՛ բայց»։— Ջարմանալի կերպով դառնում է Ագլ.* ալ *(ինչպես են նաև այս>աս, այդ>ադ, այն>ան)։*

Թէ> *Ջղ.* թէ *«թե»,— Ագլ.* թm, թm or, *«եթե, թե որ»,* թm *«թե, թ՞ե»,* թm չէ *«թե ոչ»,— Հմշ.* թm, um *«եթե»,* թm յor *«եթէ որ»,* թm չm *«եթե ոչ, թե ոչ». ինչպես՝* Տm էգավ, գաօիմ *«Եթե եկավ, կասեմ».* Թm չm կուfoմ ձէձիմ գու *«Թե չէ կգամ կծեծեմ»։*

Թէկուզ. *ծագում է «եթէ կ'ուզէ» ձևից և նշանակում է «մինչև իսկ, նույնիսկ, թեև». ունեն միայն Երև.* թէկուզ, *Ագլ.* թmկուզ:

Ինչու fի *(գրական ձևի տակ՝* ինչու nr*), ինչու ըսէս նէ «որովհետև» Պլ.*

Կամ. *զարմանալի կերպով պահված է միայն Ննխ.* գամ *ձևով. այլուր թրք.* ya.

Հապա> Ննխ. ճաբա *«այլ», Պլ.* ճաբա *«այլ» (օրինակ՝ Դուն չէիր,* ճաբա վօվ էր*).— գրբ.* ճապա *նշանակում է «1. այնուհետև, անմիջապես հետո. 2. դեհ, օն». այս իմաստներից չի կարող բխել «այլ» իմաստը.— ուստի ավելի լավ են Ջղ.* ապա *«1. այլ». (օրինակ՝ Խայ չէ, ապա թուրք ա). 2. «սակայն». (օրինակ՝ Կարող աս ուտելգ. ապա չափավոր).— Հմշ.* աբա *(Մալայում ստացել է* օմբա *ձևը) «հապա, այլ, ապա ուրեմն». օրինակ՝* Տուճ չէյդ, աբա վէ՞վէր. *«դու չէիր, հապա ո՞վ էր»։ Սրանք ցույց են տալիս, որ բոլորը միասին ծագում են գրբ.* ապա *(ապա ուրեմն) ձևից։— Ուրիշ է* ճապա *«օ՞ն» (որ տե՛ս ձայնարկության մեջ)։*

Նէ Պլ. «ներն». օրինակ՝ Ուղէ նէ «ներն ուտե», Դէսնաս նէ «նրե տեսնես»=Ննխ. նր «ներն». երկուսն էլ գործածվում են կազմելու համար բայերի թեական եղանակի բոլոր ձևերը.— Նույն է և լազերեն na, որ իբր հետամասնիկ կցվելով բայերին, կազմում է ստորադասական (տե՛ս իմ Etude sur la langue laze, 99)։— Ձևով և իմաստով նույն է մեջին հայերենի նա, նայ մասնիկի հետ։— Սրանից է Ննխ. Ամբէս է նր=Պլ. Անանց է նէ, Անբէս է, որոնք բացի նշանակում են «ներն այդպես է», բայց գործածվում են «ապա ուրեմն» իմաստով։— Հմշ. յօր նա «ներն». ինչպես՝ էգավ յօր նա «ներն եկավ»։

Որ> Ննխ. օր «որ, թէ», Պլ. օր «որ, թէ, որպեսզի» (գործածական էր հին լեզվում. օրինակ՝ Ըսէ օր գա. էլա օր էրթամ. սրանց տեղ այժմ գործածվում է թրք. kI ֆի):— Հմշ. օր (նաև յէօր, յօր) «որ, թե». օրինակ՝ Ասաց օր արի, Ասա յօր կա «սա որ գա».— Ագլ. օր «որ, որպես զի». շատ անգամ զորությամբ է իմացվում. ինչպես՝ Նա՛նամ քն ա՛կած ա փսա՛կվի (փոխ. ասում են որ եկած է, որպեսզի պսակվի)։

Ու «և». կենդանի է միայն Երևանում և շրջաններում, թե՛ երկու բառի միջև (նաց ու պանիր) և թե՛ նախադասության սկիզբը, ուր կարող է նաև իբրև անշատ բառ գործածվել. օրինակ՝ Ու, տէսա վօր էթում. ա, կանչեցի:— Ուրիշ բարբառներում հազիվ հետքերն է մնում. այսպես Ագուլիսի բարբառում դառնալով ու, իւ, ը մտնում է երկու գոյականի միջև. ինչպես՝ Հայր ու վօ՛րթի. թօր ու թվոնզ՛ (թուր ու հրացան). սօր ու for «սար ու քար», կամ նույները (Հայր ը վօրթի և այլն)։— Մարաղայի բարբառում ու շաղկապը թաքնված է մնում միայն կրկնության մեջ ը ձևով, որ թեթև ձայնավորների մոտ դառնում է ի, ու ձայնից հետո ու, իսկ իւ ձայնից հետո իւ. ինչպես՝ խացըմաց «հացումաց, հաց-մաց», պոնիմոն «բան-ման», կիրք՛իմիրք՛ «գիրք-միրք», խինգիվից «հինգ ու վեց», տունումուն «տուն-մուն», ճիւրիմիւր «ջուր-մուր», ծիկ՛իմիկ՛ «ծուկ և այլն»։ Այսպիսի կրկնություններ հատուկ են միայն միավանկ բառերին։ Բազմավանկ բառերը կրկնվում են առանց շաղկապի. ինչպես՝ խիյար-միյար «վարունգ-մարունգ» և այլն։ Ասվում է նաև ճուշըփըստրյ «ջոջ ու պստիկ, մեծ ու փոքր» և այլն։— Պոլսի բարբառում ու «և» շատ քիչ է գործածական. մնում է վու, վ ձևով մի քանի քարացած բառերի մեջ. ինչպես՝ Հար վու դղա «Հայր և տղա», մար վախճիգ «Մայր և աղջիկ», քուր վախպար «քույր և եղբայր», դաս-

վէրգու «12», դասվիրէf «13», գէսվագէս «կեսվակես, կես առ կես»։— Ու մնում է նաև Ջուղայի բարբառում, բայց պարսկերենի նմանությամբ գործածվում է տարօրինակ ձևով. կցվում է նախորդ բային և շարունակ կրկնվում է. ինչպես՝ էն տղան գ՚նա՚ցու, յե-կա՚վու, առա՚վու, տարա՚վու, ծախէ՚ցու, կէրավ։ Նման գործածու-թյուն ունի նաև թվերի մեջ, որ տե՛ս անդ։— Համշենի բարբառում ու շաղկապը միանալով նըն «ահա ?» բառի հետ կազմում է ննու «և»։ Մյուսները գործածում են թրք. ձևեր որ տե՛ս քիչ հետո։

Չէնէ «ապա թե ոչ». կազմված է չէ «ոչ»+նէ «եթե» բառերից. գործածական է Ննխ. և Պլ. օրինակ՝ Դո՚ւր, չէ նէ գը ձէձէմ «Տո՛ւր, թե ոչ կծեծեմ».— Նույնը հարցականով Պլ. չէ նէ՞ կամ չէ նէ՞ մի (թրքմ. թրք. yoq-sa, yoq-sa-mə ?, որոնց մեջ -sa «եթե», mı, mə հարցական մասնիկ է) «թե՞». օրինակ՝ Հասա՞վ չէ նէ չէ. Հասա՞վ չէ նէ մի չէ «Հասա՞վ թե չէ»։— Առանց հարցականի Պլ. չէ նէ կամ չէ նէ՛ մի «մի՛ գուցե, արդյոք». օրինակ՝ Չէ նէ մի խայիբ եղալ «Գուցե կորավ»։

Չէ թէ> Հմշ. չոխծ «ո՛չ թե». օրինակ՝ Ջոթm մըննաք յէս, ալ այս տլ ըմուն ինf «Չէ թե միայն ես, բոլորս էլ այնպես ենք»։ Նույնը կիսովին թրքմ. Ննխ., Պլ. չէ՛ fի «ո՛չ» թե (հյ. չէ+թրք. ki թե, որ)։

Քինչ «որ» (գործածական է հնդկահայերի մեջ և թվում է թե ծագած է fան+ինչ բառերից). օրինակ՝ էն fինչ դրիստն ա, վոչինչ չասացին (Լեյլի, 81) «Այն որ ուղիղ է, ոչինչ չասացին»։ էն ա fինչ յեկիր, էլ չես արևման «Այն որ եկել ես, էլ չես երևում» (Լեյլի, 65). Հէնց էդ fինչ ասիր՝ շատ բաւական ա (Լեյլի, 82). էդ միտfն՝ fինչ ներկայ (այժմ) ունէf, նաստատուն պախէf (Լեյլի, 85)։

4. ԹՐՔԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ամա «բայց» (<արաբ. أمّا əmma) Ագլ., Ննխ., Պլ., Հմշ., ամմա Մրշ.— Նույնի սաստական ձևն է Պլ. ամմա, որ իբրև մակբայ է գործածվում և նշանակում «շատ, հույժ, չափազանց». ինչպես՝ Ամմա մենծ տուն է նա՛. Ամմա կերաւ նա՛ (չափազանց կերավ է՛). Ամմա ըրիր նա՛ «Շատ ես չափազանցում պատմածիդ մեջ». այս բոլորը նույն են թուրքերենի հետ. հատկապես վերջինը բառացի թարգմանությունն է թրք. amma yapdən ha! ասացվածքի։

Դէ «և» շաղկապի պաշտոն է կատարում երկու բայի միջև. օրինակ՝ Առնեմ դէ գամ «Առնեմ ու գամ», էրթամ դէ բէրէմ «Երթամ ու բերեմ» <Թրք. de, որ ճիշտ նույն ձևով է գործածվում։

Դէյի Պլ. «իբր թե», դէյ Հմշ. «որպեսզի», դէյի Հմշ. «թէև», դէյին Ննխ. «թէ». բոլորն էլ վերջադաս. օրինակ՝ փշօրfին դէյ Հմշ. «որպեսզի փշրվեն», ըսավ դէյի Հմշ.=ըսավ դէյի, ըսավ դիի Պլ. «Թէև ասաց, ի՞նչ վնաս որ ասաց». էրթա դէյի բսի Պլ. «Ասացի, որպեսզի երթա» <բոլորն էլ ծագում են Թրք. دیو deyu բառից, որ թեև բուն նշանակությունն է «ասելով», բայց գործածության մեջ ունի բոլոր վերի իմաստները։

Զէրէ Պլ., Ննխ. զէրէմ Պլ., զրա Ջղ. «որովհետև քանզի» <պրս. որից և Թրք. زیرا žira «որովհետև»։

Էգէր Ննխ., Ջղ., էյէր, էյէր fի (հին ձևն է էյօր, էյօր օր (Պլ., ոյոր, ոյո, ոգոմ, ոյոմ Մրղ. «եթե, թե որ» <բոլորն էլ ձևափոխություններն են պրս. اگر eger «եթե» բառի, որ Թուրքերենումն էլ նույնպիսի բեկբեկումներ ունի։

Թէfօր Ննխ., Պլ., թոfի Ագլ. «միայն թե» <Թրք. که تك tek ki, որ ամբողջությամբ պահել է Ագլ., մյուս երկուսը թարգմանելով ki որ:

Իլէն «և, ու» Պլ. օրինակ՝ նաց իլէն ջուր «հաց և ջուր», իրէf ախպար իլէն մէկ fուր «երեք եղբայր և մեկ քույր». <Թրք. ile, ilen գործիականի մասնիկն է, որ նաև Թուրքերենի մեջ իբրև շաղկապ է գործածվում։ Նույնը արևելյան Թրք. ձևից փոխ առնելով նոն Ագլ., ընոն Ագլ. (տե՛ս սրա մասին ՀԱ 1909, 273), ինոն, նոն Մրղ. օրինակ՝ յիս նոն տին «ես և դու» Մրղ., չօնը նոն կա՛ռուն «շունն ու կատուն», գիլը նոն չօնը «գայլը և շունը» Ագլ.— Նույնը թարգմանաբար գործածում է Ննխ. օրինակ՝ մէգ նադ էրիմարթօվ մէգ նադ գինիմարթ «մեկ այր և մեկ կին» գործիականը իբրև շաղկապ է գործածված, թեև կա նաև ու շաղկապը այս բարբառում։ Պլ. էլ գործիականով ասվում է սոխով նաց «սոխ և հաց» և այլն։

Իսէ Պլ. «բայց, մինչդեռ» (վերջահար). օրինակ՝ էս իսէ «իսկ ես», ա՛ն իսէ «իսկ նա». <Թրք. ایسه ise.

Հէմ (կրկնությամբ) Պլ. հոմ Ագլ., նէմ, նէմը Ննխ., նըմ Հմշ. «թէ». օրինակ՝ նէմ աս, նէմ ան Պլ. «թե՛ այս, թե՛ այն», նըմ тиգասէս, նըմ ըն Հմշ. «թե՛ այս ես ասում թե՛ այն»—Ննխ. Հէմ նացը, նէմ ալ միսը «թե՛ հացը և թե՛ միսը».— <պրս. هم häm, hem.

Հանիբօլա «իբր թե» Ջղ. ենթադրում եմ որ ծագած լինի Թրք. yani bir ola «իբր մեկ լինի» ձևից։

Յա՛ *(կրկնությամբ կամ առանց կրկնության) «կամ, կամ թե» Ջղ., Մրղ., Ննխ., Պլ., Հմշ., յա Ագլ. <պրս. թրք.* يا ya *օրինակ՝* Յա յէս, յա դուն *«Կամ ես, կամ դու» Հմշ.=Պլ.* Յա էս, յա դուն. էս յա դուն *«Ես կամ դու».* Առդու յա իրիգուն, յէփ ուզէս *«Առավոտ կամ երեկո, երբ կամենաս»։*

Յախօդ *Պլ., Հմշ.,* յախուդ *Հմշ. «կամ» պրս.* ياخود yaxōd.

Յօխսա *Մրղ.,* յօխսա, յօխսամ *Պլ.,* յօfսա *Հմշ. «թե ոչ, թե չէ, ապա թե ոչ» <թրք.* yoqsa, *որ կազմված է* yoq *«ոչ» —* sa *թեականի մասնիկը կամ ·եթե. ըստ այսմ էլ թարգմանաբար ունենք չէ նէ Պլ., Ննխ.. և չէ նէ մի Պլ.=թրք.* yoq-sa-mə.

Չէ՛... չէ՛... *(կրկնությամբ) Ջղ. «թէ՛... թէ՛... թեև հյ. բառի երևույթն ունի, բայց ո՛չ մի կապ չունի չէ «ոչ» բառի հետ և փոխառյալ է պրս.* چه či, *ժղ.* če *բառից։*

Չիւնfի *Պլ.,* չիւնfիւ *Մրղ.,* չինfիմ, չունfի, չումfի *Ննխ.,* չունfի, չունfիմ, չունfիտ *այս վերջինը կարծում եմ* չունfի թm *(կամ* տm*) ձևից, նաև* չունկի... *Հմշ. «որովհետև» <պրս. թրք.* چونكه čünki.

Սայի *Հմշ. «թեև». օրինակ՝* Սայի մութն ոլթm յէ նա, աչվիս դէսնուն զու *«թեև մութն էլ է, աչքերս տեսնում են» <արար. թրք.* صحيح sahih *«ճշմարիտ (ճիշտ է որ)»։*

Վm *«և» <արաբ. պրս. թրք.* و va. *գործածվում է զուտ թրքերեն գարձվածների մեջ, այսինքն երբ երկու կողքի բառերն էլ թրքերեն են. ինչպես՝* Սափայօվ վm աբը-ճավան էլ աղէյ դէղ ի *«Օւրախ և օդը-ջուրը լավ տեղ է»։*

Քի *Ննխ., Պլ.,* fի, չի *Մրղ. «թե, որ, որպեսզի» <պրս. թրք.* كه ki, *օրինակ՝* Ըսէ fի գա *«Ասա որ գա»։*

5. ՇԱՂԿԱՊՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Տեսանք այն խղճալի դրությունը, որի մեջ գտնվում են շաղկապները բարբառներում. ամենասովորական բառերն անգամ (և, ու, կամ, թէ, fան թէ) *ջնջվել են բոլորովին, կամ այս ու այն հազվագյուտ բարբառում թաքնվել, ստեղծվել են նոր շաղկապներ* (fինչ, նէ) *և մանավանդ լցվել է լեզուն բազմաթիվ թրքերեն շաղկապներով։*

Աշխարհաբարն ամբողջապես վտարել է թրք. շաղկապները, բարբառների ստեղծած նոր շաղկապները՝ եթե մի ժամանակ գործածում էր (նէ, ինչու nr), *նրանք էլ հեռացրել է և նրանց տեղ նոր*

կյանքի կոչել հին ընտիր շաղկապներ (և, թէև, նաև, ուստի, որովհետև), մինչև իսկ կյանքի է կոչել զուտ գրաբար շաղկապական ասություններ, ինչպես ըստ այսմ, ըստ որում, այնու ամենայնիւ, ի վերայ այսր ամենայնի!

Աշխարհաբարում (ինչպես և թրք., պրս., քրդ.) կարելի է որոշ ջաղկապներ ջնջել. ինչպես՝ Տեսաւ (որ) գալիս է. նստաւ (ու) կերաւ:

Ալ=էլ

Երկուսն էլ առաջանում են գրբ. և մհյ. այլ *ձևից. արևմտյան բարբառներն ունեն* ալ, *արևելյան բարբառները՝* էլ. *սրանցից էլ անցել է գրական լեզուներին։ Սրանք առաջին գլխավոր բացառությունն են, երբ գրական լեզուն տեղի է տվել բարբառներին։ (Կա նաև* վար<ի վայր *մակբայը արևմտյան գրականում, իսկ արևելյան գրականն ասում է* վէր, վայր, *կամ* ցած, ցածր):

Նախադաս մակբայ է (տե՛ս վերը), հետադաս շաղկապ և նշանակում է «նաև, ևս». օրինակ՝ Դու էլ չտեսար, ես էլ=Դուն ալ չտեսար, ես ալ. Տեսա էլ, կերա էլ=Տեսայ ալ, կերայ ալ:

Այլ և

Գրվում է իբրև երկու բառ՝ անջատ. այսպես նաև այլ ևս: *Ոմանք վերջերս սկսել են գրել* այլևս, *մի բան, որ սխալ է։ Եթե դա լիներ մի բառ, պիտի հնչվեր* այլէվ, *ինչպես հնչում ենք* արդարէվ, թերէվս *և այլն։* և *շաղկապով միացումներ ունենք նաև* գուցէ և, թերևս և, ինչպէս և, բայց և *և այլն ձևերի մեջ, որոնց մեջ* և *առանձին է գրվում և չի միանում բուն բառին։*

Իսկ եթէ թէև, նաև *բառերի մեջ հնչվում է* յէվ, *դա ձայնավորների հանդիպման պատճառով է։*

Արդ, ուստի, ուրեմն

Արդ *գրաբարում «այժմ» իմաստով մակբայ է. աշխարհաբարում դրվելով պարբերության սկիզբը, ամփոփում է նախորդ կամ երկար պատճառաբանությունները և հասնում է որոշ եզրակացության. օրինակ՝*

Արդ՝ այս բոլոր տվյալներից հետևում է այն, որ...

Իսկ արդ, և արդ *հնացած ձևեր են։*

Ուստի, ուրեմն *շատ ավելի կարճ պատճառաբանության հետևանքն են. ինչպես՝*

Թաս արաբերէն բառ է, ուստի գործածված պէտք է լինի է դարից յետոյ:

Հաճախ ավում է ուստի և, ուրեմն և, որոնց մեջ և կապող շաղկապ չէ, այլ նշանակում է «էլ»։

Հին ձև է ապա ուրեմն:

Բայց, սակայն, այլ, իսկ

Այս բոլորը ցույց են տալիս նախորդ մի նախադասության հակառակը։

Բայց դրվում է երկրորդ նախադասության սկիզբը և նախորդ նախադասության (լինի դա դրական, թե բացասական) հակառակն է. օրինակ՝

Կը ծոփ, բայց չի կոտրիր.
Գեղեցիկ չէ, բայց տգեղ էլ չէ.
Չէի ուզում առնել, բայց առի.
Ուզում էի առնել, բայց չառի:

Սրա տեղ կարելի է դնել նաև սակայն, *որ իմաստով բոլորովին նույն է, բայց գործածվում է ավելի երկար նախադասության մեջ, նույնիսկ մի նոր պարբերության սկիզբը. օրինակ՝*

Սակայն, ափսոս, երջանկութիւնն այն փափուկ՝
Մահուան ծանր ձեռքով բլլայ վաղանցուկ.

(Պէշիկթաշլյան)

Ժողովրդական նոր ձև է բայց *շաղկապը դնել խոսքի վերջում. ինչպես՝* Տեսա՛յ բայց. *սակայն այս ձևը գրական լեզվի մեջ չէ մտած դեռ։*

Ըստ այսմ բայց *դրվում է միշտ նախադասության սկիզբը. իսկ* սակայն *կարող է մտնել նաև նախադասության մեջ և այս դեպքում, շատերը բաժանում են ստորակետներով. օրինակ՝*

... Տեսնելով, սակայն, որ նիւանդութիւնը նետզնետէ ծանրանում է,...

Ավելի ծանր նախադասությունների մեջ կարելի է դնել երկու համանիշ շաղկապները միասին՝ բայց սակայն:

Եթե մեկն ընդունում է նախորդ պայմանները, բայց նրանք ընդունելով հանդերձ ավելացնում է նրանց վրա մի նոր պայման, որ հակասում է նրանց, դնում է և սակայն, սակայն և այնպէս, բայց և այնպէս, *որոնց համազոր են* ի վերայ այսր ամենայնի, այսու ամենայնիւ, այնու ամենայնիւ:

Այլ դրվում է նախորդ բացասական նախադասությունից և մանավանդ ո՛չ թէ (չէ թէ) *շաղկապից հետո, և նախորդը մերժելով դնում է նորը. ինչպես՝*

Գրիգորը չէր, այլ ես.
Ո՛չ թէ Գրիգորն էր, այլ ես.
Չէ թէ պատուել, այլ պատժել պէտք էր:

Նախորդները կարող են թվով շատ լինել, այլ շաղկապը կարող է մերժել բոլորը և նրանց փոխարեն դնել մեկը. այս դեպքում ասվում է այլ միայն.

Գրիգորը, Լեւոնը, Վարդանը այստեղ չէին, այլ միայն ես:

Իսկ եթե ընդհակառակը պետք է ցույց տալ, ասում ենք այլ և, *որ կարող է և կրկնվել. ինչպես՝*

Միայն Գրիգորը չէր, այլ և ես.
Միայն Գրիգորը, Լեւոնը, Սեռոբը չէին, այլ և ես, այլ և Մարտիրոսը, այլ և նրա եղբայրները *և այլն.*
Ո՛չ թէ նորոգեցին վազօնը, այլ միայն ներկեցին.
Ո՛չ թէ միայն ներկեցին վազօնը, այլ և պատուհաններբը փոխեցին, այլ և կտուրը քանդեցին և նոր կտուր շինեցին:

Փոխանակ պարզապես այլ և *ասելու, կարելի է ասել* այլ նաև, *ոմանք էլ* այլ և նաև, *որ ծանրալուր է:*

Վերի օրինակների մեջ այլ *շաղկապով սկսվող նախադասությունները բոլոր դրական էին. բայց կարելի է նաև բացասական դնել. օրինակ՝*

Ո՛չ թէ եռանդ, այլ կարողություն չունեմ աշխատելու:
Այդ աշակերտին պէտք չէր կարել, այլ ուղղակի դպրոց չընդունել:
Այդ աշակերտներին չպիտի կարէիք, այլ ուղղակի դպրոց չընդունէիք:

Այլ *շաղկապը թեև շատ տեղ նույն է գրաբարի հետ, բայց տեղ-տեղ էլ դառնում է «իսկ, բայց». ինչպես՝*

Այլ դուք զի՞ չաք=Իսկ դուք ինչո՞ւ էք լաց լինում.
Կոչեցի զնա, այլ նա ոչ լուաւ և ոչ եկն=Կանչեցի նրան, բայց նա չլսեց և չեկաւ:

Եթէ

Աշխարհաբարում ցույց է տալիս պայման. այս մասին տե՛ս թէ:

Ըստ այսմ եթէ *և* երբ *գրեթե հոմանիշ են դառնում. օրինակ՝*

Եթէ գայ, կ'ասեմ.
Երբ գայ, կ'ասեմ:

Բայց այս երկուսի տարբերությունն այն է, որ եթէ *ցույց է*

տալիս թե խոսողը գործողության կատարման մասին վստահ տեղեկություն չունի, իսկ երբ *ցույց է տալիս, թե խոսողը գիտե, որ գործողությունը պիտի կատարվի, միայն ժամանակը չգիտե. այսպես՝*

Եթէ գայ, կ'ասեմ *(այսինքն ես չգիտեմ թե նա գալո՞ւ է թէ չէ. եթե պատահի որ գայ, կ'ասեմ)։*

Երբ գայ, կ'ասեմ *(այսինքն գիտեմ որ նա պետք է գա. ե՞րբ՝ չգիտեմ, իսկ երբոր գա, կ'ասեմ)։*

Դուրյանը իր «Թրքուհին» ոտանավորի մեջ, ամեն մի տան վերջում գնում է «եթէ» շաղկապով մի երկտող (5 անգամ) և մի անգամ էլ թէ *(չափի համար դրված, փոխ.* եթէ*). այսպես՝*

Եթէ նայի,
Կ'ըսես. «Հի՛մա կը մարի»:
Եթէ ժպտի,
Կ'ըսես. «Ո՛ն, նիմա կ'անցնի»:
Եթէ շարժի,
Կ'ըսես. «Հի՛մա կը թռչի»:
Եթէ շիկնի,
Կ'ըսես. «Հի՛մա կը բռնկի»:
Եթէ խօսի,
Կ'ըսես. «Հի՛մա կը նատնի»:
Իսկ թէ մեռնի,
Կ'ըսես. «Հի՛մա կը ծնի»:

Այս բոլորը իրավամբ գրված է «եթէ», որովհետև անհրաժեշտ չէր որ Թրքուհին, այն կառքի մեջ, որով գնում էր յամրընթաց, անպատճառ խոսեր, շիկներ, ժպտար, շարժվեր և մանավանդ մեռներ։

Բայց երբ Ռուսինյանը երգում է՝

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկին մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերև...

հայտնապես գիտե որ ձյունը պիտի հալվի, օդը պիտի փայլի, ծիծառն իր բույնը պիտի դառնա և ծառերը տերևներով պիտի զարդարվեն, բայց ժամանակը ճիշտ չգիտե, փետրվարի վերջի՞ն (Կիլիկիայում), մարտի՞ն, թե ապրիլի սկիզբը, ուստի դրա համար էլ ասում է «երբ, երբոր»։

Դրա համար էլ երբեմն ասում ենք պարզապես «եթէ»...». ինչպես՝

— Եթէ տեսնես, ասա՛

— Եթէ... *(այսինքն չեմ կարծում որ պիտի տեսնեմ նրան)։*

Եւ, ու

Երկուսն էլ ազատորեն գործածվում են գրական լեզվում։ Ոմանք ուզեցին այս երկուսի մեջ տարբերություն դնել. և շաղկապով կապել երկու առանձին բառ, **ու** *շաղկապով կապել երկու նախադասություն։ Բայց փորձերը անհաջող անցան, որովհետև չէին հիմնված ո՛չ գրաբարի և ո՛չ էլ ժողովրդական լեզվի վրա։*

Նոր գրողները հաճախ իրենց բանաստեղծությունների սկսում էին հանկարծական **ու** *շաղկապով. ինչպես՝*

Ու անոնք...

Մի քանի բառ կապակցելու ժամանակ գրաբարը զանազան ձևեր ունի, աշխարհաբարը միայն մի ձև ունի. և-ը դնում է միայն վերջին բառից առաջ. ինչպես՝ **հիւսիս, հարաւ, արևելք և արևմուտք:**

Եւ *նշանակում է նաև «թե՛». այս դեպքում նա ստանում է շեշտ, կրկնվում է կապակցելի բոլոր բառերի մոտ և մինչև անգամ առաջինից առաջ. ինչպես՝ Եվ գրում է, և կարդում, և խոսում անգլերեն։*

Այսպիսի գործածություն չունի **ու** *շաղկապը. երբեք շեշտ չի ստանում և յուրաքանչյուր բառի վրա չի կրկնվում։*

Եւ *շաղկապով կազմված բարդ կամ բաղադրյալ շաղկապներ են՝* **նաև, այլ և, թէև, և որովհետև, թէպէտ և** *և այլն։*

Թէ

Գրաբարում **եթէ** *և* **թէ** *հաճախ իրար փոխարեն են գործածվում. աշխարհաբարում այդ շփոթությունը վերացված է.* **եթէ** *ցույց է տալիս միայն պայման և ուրիշ ոչինչ. օրինակ՝*

Եթէ տեսնեմ, կ'ասեմ.

Եթէ ուզում ես, արի ինձ մոտ.

Եթէ ունենայ, կը տայ:

Թէ *չունի պայման, այլ հաստատ իրողություն, և այս իմաստով նախադասությունը կապում է նախորդ նախադասության հետ (իբր ժղ.* **որ***). ինչպես՝*

Ասաց թէ կը գամ.

Վճռեց թէ անարժան է:

Կարելի է նաև թէ *իր ամբողջ նախադասությամբ դնել առաջ. ինչպես՝*

Թէ նա հայ է, այդ լաւ գիտեմ:

Կարելի է նաև թէ *դնել հարցականի և հաճախ բացասականի հետ. ինչպես՝*

Հասա՞ւ թէ չհասաւ. Հասա՞ւ թէ չէ.
Տեսա՞ր թէ չէ. Ինքը թէ՞ ուրիշը.
Հա՞յ է թէ թուրք:

Նույն միտքը առանց հարցականի՝

Հասաւ թէ չհասաւ՝ չգիտեմ.
Ինքը թէ ուրիշը՝ յայտնի չէ.
Հայ է թէ թուրք է՝ չի իմացւում:

Կրկնությամբ և ջեշտված նշանակում է «և». դրվում է թե՛ առանձին բառերի վրա և թե՛ տարբեր նախադասությունների վրա. ինչպես՝

Թէ՛ հայ, թէ՛ թուրք, թէ՛ ռուս բոլորը հաւաքուած էին.
Թէ՛ գրում է, թէ՛ խօսում է, թէ՛ երգում է:

Նույնպես հակիմաստ խոսքեր էլ.

Մեքենան թէ՛ շարում է, թէ՛ ցրում:

Կրկնության ժամանակ, վերջին թե՛ կարող է ստանալ և շաղկապը. ինչպես՝

Թէ՛ հայ, թէ՛ թուրք և թէ՛ ռուս.
Թէ՛ գրում է, թէ՛ խօսում և թէ՛ երգում:

Թէ *«եթե» իմաստով հնություն է և կարելի է գտնել հատկապես տաղաչափության մեջ. օրինակ՝*

Թէ հայրենեաց պսակադիր
   Գողթնի քնարք լռել են...

Թէ թև ունէի, ո՜ն, կը թռչէի
   Ազատ Մասեաց սարերն ի վեր...
Թէ իմ ալևոր հերքս սևնային,
   Ուժս ինձ յետ գար, կտրին դառնայի...
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
   Հոս մառախուղի մէջ յամր, անշշունչ...

Թէ *(առանց կրկնության) նշանակում է «կամ, կամ թէ». օրինակ՝*

Հայ թէ ասորի՝ միևնոյն է ինձ համար.

Գինի, կոնեակ թէ օղի՝ բոլորն էլ վնասակար են առողջության համար:

Թէ *շաղկապով կազմված բաղադրյալ շաղկապներ են՝*

Թող թէ, իբր թէ, իբրև թէ, կարծես թէ, ոռպէս թէ, համարեա թէ, գրեթէ *(նաև մակբայ)*, այսինքն թէ, հան թէ *(նաև* հան*)*:

Թէև

Նշանակում է «այնպես լինելով հանդերձ». իր հոմանիշներն են թէպէտ, թէպէտ և, *և այժմ ռուսերենի վրայից կազմած չնայելով* որ, չնայած (որ) *(ռուս.* не смотря*) օրինակ՝*

Թէև դրսից հասած է երևում, բայց ներսից խակ է:
Թէև գիտեմ, բայց չեմ ասի.

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նօճիներու մէջ կը սողայ...
(Պեշիկթաշլյան)

Կովկասում հաճախ խոսակիցը լսելով խոսողի զանազան մեջբերումները, հայտնում է իր հակառակ կարծիքը՝ ասելով միայն թէ՛և՛. *օրինակ՝*

— Աղջիկը լաւ է, ուսումով է, հարուստ է...
— Թէ՛և:

Իսկ

Իսկ *նախադաս՝ «բայց» շաղկապի զորությունն ունի. օրինակ՝* Իսկ ե՞ս ինչ անեմ:

Իսկ թէ *ունի երկու իմաստ.*

1) «բայց թե». օրինակ՝ Իսկ թէ ե՞ս ինչ պիտի անէի, այդ չասաց ինձ:

2) «Իսկ եթե, բայց եթե», որ հնացած ձև է և կազմված է գրբ. թէ *«եթե» շաղկապից. օրինակ՝*

Իսկ թէ կորնչի պիտի հուսկ իմ շունչ
Հոս, մառախուղի մէջ յամր, անշշունչ...

Իսկ *թվումների մեջ նշանակում է երբեմն «և». օրինակ՝*

«Հայաստանի գլխաւոր քաղաքներն ու նրանց բնակիչների թիւն է՝ Երևան՝ 600 000 բնակիչ, Լենինական՝ 150 000 բնակիչ իսկ Կիրովական՝ 50000 բնակիչ»:

(Այստեղ ո՛չ մի հակադրություն չկա, ուստի անտեղի է իսկ

«բայց». այս ձևը կա միայն արևելյան գրականում, նմանողությամբ ռուսերենի, որ նման դեպքերում դնում է а «իսկ»։ Արևմտահայը այս դեպքում պիտի ասեր պարզապես և)։

Իսկ հետադաս նշանակում է «մինչև անգամ», և ավելի սաստկության համար էլ ասվում է նոյն իսկ, մինչև իսկ, և նոյն իսկ, և մինչև իսկ, բացասական՝ ոչ իսկ, և ոչ իսկ։ Սրանց համազորներն են անգամ, անգամ և, մինչև անգամ.

Ես իսկ զարմացայ իմ յանդգնութեան վրայ.

Քարերը նոյն իսկ լաց եղան նրա աղիողորմ արցունքից.

Ամառը Արարատեան դաշտում ջոգը հասնում է մինչև իսկ 60° և նոյն իսկ աւելի։

Ոչ իսկ հետը խօսել եմ և ոչ իսկ երեսն եմ տեսել։

Հին ձև է մինչ իսկ (*փոխ.* մինչև իսկ). *օրինակ՝*

Ով, կը թռչվեմ ես այս աղտոտ
Զործն հոգւոյս, կեանքս մինչ իսկ այսօր։

(Դուրյան)

Անգամ քարերը ճաքեցին.

Անգամ և ծառերը չորդուեցին կարկուտից։

(Այս երկուսը հատուկ են արևելահայ գրականին, մինչդեռ արևմտահայ գրականը ասում է՝

Քարերն անգամ ճաքեցան.

Մինչև անգամ ծառերն ալ կոտրտեցան։

Նույնը նաև արևելյան գրականով՝

Քարերն անգամ ճաքեցին.

Մինչև անգամ ծառերն էլ չորդուեցին)։

Կամ

Աշխարհաբարում 6 ձև է ստանում. կամ, և կամ, կամ թէ, և կամ թէ, կամ թէ չէ, և կամ թէ չէ. *այս բոլորը նույն իմաստն ունեն և իրար են զորացնում։ Սովորաբար երկու կամ ավելի բառերի միջև է դրվում. օրինակ՝* Գրիգորը կամ Արտաշէսը. կարմիր կամ սպիտակ գոյնով. մեծ կամ փոքր. գրել կամ օրինակել. ուրթը կամ տասը *և այլն։ Կարելի է նաև դնել առաջին բառի վրա, և այն ժամանակ կստացվի կրկնավոր կա՛մ՝ շեշտյալ. ինչպես՝* Կա՛մ ես, կա՛մ դու։ *Բացի պարզ* կամ *ձևից՝ մյուսները չեն կարող կրկնվել. օրինակ՝ չի կարելի ասել՝* Կամ թէ ես կամ թէ դու։

Համար—որովճետև

Պատճառ ցույց տալու նախադրություններ են. ճամար գործածվում է հոլովելի բառերի հետ, իսկ որովճետև բայի հետ. օրինակ՝

Ո՛չ թէ նրա պատուէրը կատարելու ճամար, այլ իրեն դիւր գալու ճամար:

Նույնը բայով՝

Ո՛չ թէ նրա պատուէրը կատարելու ճամար, այլ որովճետև այդ իրեն դիւր էր գալիս.

Ո՛չ թէ որովճետև նրա պատուէրն էր ուզում կատարել, այլ իրեն դիւր գալու ճամար:

Միևնույն ձևով գործածելու ժամանակ կարելի է և պետք է ջնջել ճամար *բառը՝ կրկնությունից խուսափելու համար. օրինակ՝*

Ո՛չ թէ նրա պատուէրը կատարելու, այլ իրեն դիւր գալու ճամար:

Իսկ որովճետև *բառը ջնջել հարմար չէ. ավելի լավ կլինի կրկնել, եթե ուզում ենք պատճառաբանությունը երևան հանել.*

Ո՛չ թէ որովճետև նրա պատուէրն էր ուզում կատարել, այլ որովճետև իրեն դիւր էր գալիս:

Որովճետև *բառի գործածությունը անհրաժեշտ է՝ մանավանդ տարբեր ձևեր գործածելու ժամանակ. օրինակ, սխալ է ասել՝*

Յանկացաւ իմանալ այդ ամէնը, ո՛չ թէ նրա պատուէրը կատարելու ճամար, այլ այդ ուղղակի կարող էր ճաճոյք պատճառել իրեն *(Սիրաս, Զգրուած օրէնք, 264). անհրաժեշտ է ասել* այլ որովճետև:

Հապա

Իբրև մակբայ տեսանք վերը, իբրև ձայնարկություն կտեսնենք վարը. ճապա *«այլ» նշանակությամբ շաղկապ է գրաբար* ապա *ձևից է ծագում։*

Քիչ անգամ գործածվում է հաստատական նախադասությանց մեջ. օրինակ՝

Եթէ դու չէի՛ր, ճապա եղբայրդ էր:

Այս դեպքում ասվում է նաև ապա, ապա ուրեմն, ապա թէ, *որոնք բոլոր հնացած ձևեր են։ Ավելի սովորական է հարցական նախադասությանց մեջ. օրինակ՝*

Եթէ տունը չէր, ճապա ո՞ւր էր.

Եթէ դու չէիր, ճապա ո՞վ էր.

Եթէ առաւօտը չէր, ճապա ե՞րբ էր.

Հինգ չէր, վեց չէր... ճապա քանի՞ էր:

Այս բոլորի փոխարեն կարելի է պարզապես հարցնել ճապա՞, *որ նշանակում է «հապա ե՞րբ, հապա ո՞վ, հապա քանի՞» և այլն. օրինակ՝*

Հինգ չէր, վեց չէր, ճապա՞...:

Սպասվում է պատասխանի։

Մանաւանդ

Սրա համանիշն է առաւել ևս. *Այտն. 133 երեք ձևով է դնում այս շաղկապը՝* մանաւանդ, մանաւանդ որ, մանաւանդ թէ: *Առաջինը պահանջում է անուն, դերանուն կամ մակբայ, իսկ մյուս երկուսը՝ բայ կամ ամբողջ նախադասություն. այսպես՝*

Քաղեցէք ծաղիկները, մանաւանդ շուշանները.

Ես սիրում եմ բոլոր գոյները, մանաւանդ կանաչն ու կապոյտը.

Շուտով բարեկամացանք իրար հետ, մանաւանդ որ իմացանք թէ ճայրենակից էինք:

Վերջինի համար Այտն. ասում է, թե համանիշն է մանաւանդ որ *շաղկապի և զգուշացնում է չշփոթել այդ երկուսը իրար հետ։ Տրված օրինակն է հետևյալը՝*

Մի՛ ժողովէք, մանաւանդ թէ ցրուեցէք:

Այտն. իր առաջ ունի անշուշտ գրբ. մանաւանդ զի *և* մանաւանդ թէ *շաղկապները, որոնց մասին տե՛ս էջ 367։ Բայց աշխարհաբարի մեջ* մանաւանդ թէ *այժմ գործածական չէ. կարող էր այդ ձևը մի դար առաջ, մանավանդ արևմտահայերի գրաբարասեր շրջանում գործածական կամ ընթացիկ ձև եղած լինել։ Այժմ նույն նախադասության փոխարեն մենք պիտի ասեինք՝*

Մի՛ ժողովէք, այլ ընդճակառակը ցրուեցէք:

Ոչ, չէ

Առանձին մակբայ են, բայց նրանցից կազմված զանազան բաղադրություններ շաղկապ են. այսպես՝

Ոչ թէ *(սրա հետ նույն է* չէ թէ, *որ ժողովրդական ձև է համարվում և այժմ հարգի չէ). օրինակները տե՛ս* բայց. *կարող է միանալ ամեն մի մասն բանիի հետ. ինչպես՝*

Ո՛չ թէ գիւղ, այլ քաղաք է.

Ո՛չ թէ դեղինն է աւելացնում բոյսերի կենսունակութիւնը, այլ մանիշակագոյնը.

Ո՛չ թէ ես, այլ դու.
Ո՛չ թէ այժմ, այլ առաջ.
Ո՛չ թէ տակը, այլ վրան.
Ո՛չ թէ գրել, այլ տպագրել։

Կամ նաև ամբողջ նախադասությամբ՝

Ո՛չ թէ օգնում էինք միայն, այլ ամէն կերպ աշխատում էինք որ նա առաջ գնար։

Ոչ թէ *եթե հիշված է առաջին տեղում, պահանջում է իր հետևից* այլ. *օրինակ՝*

Ոչ թէ մենք, այլ նրանք։

Իսկ եթե գործածված է երկրորդ տեղում, պետք չկա այլ *բառի գործածության. ինչպես՝*

Նրանք, ո՛չ թէ մենք։

Ոչ միայն. *օրինակ՝*

Ո՛չ միայն անօգուտ, այլ և բոլորովին վնասակար է։

Չէ՞ որ *(գրբ.* ո՞չ ապաքէն*). օրինակ՝*

Չէ՞ որ լոյսը աւելի արագ է ընթանում քան ձայնը։

Թէ ոչ, ապա թէ ոչ, թէ չէ. *օրինակ՝*

Ժամանակին օգնութիւն հասաւ, թէ ոչ բերդը գրաւուած էր։

Սրանց հետ նույն են եթէ ոչ, իսկ եթէ ոչ։

Հարցական նախադասությամբ ասվում է՝

Տեսա՞ր թէ ոչ, Տեսա՞ր թէ չէ, Հասկանո՞ւմ էք թէ չէ։
Երևի մի վտանգ է պատահել, թէ չէ ինչո՞ւ այսքան պիտի ուշանար։

Մի քիչ հին ձև է եւ ոչ երեսը տեսայ. *ավելի լավ է՝* Ոչ իսկ երեսը տեսայ. Մինչև անգամ երեսն ալ չտեսայ։

Որ

Հնապես հարաբերական էր կամ հարցական. միջին հայերենում դարձավ շաղկապ և գրավեց զի *շաղկապի բոլոր դիրքերը. նույնը շարունակվում է բարբառներում և աշխարհաբարում։ Հնագույն շրջանում գործածվում է շատ սակավ. ինչպես՝*

Նշան քեզ այս լիցի, որ մինչև յայն օր մեռցի մանուկն.
Զի՞նչ է այս որ ի սուգ մտեալ եմք.
Զի՞նչ տեսանիցէք յիս որ առնիցեմ, արասջիք և դուք.
Որ զի ուսասցի *«Որպեսզի ուսա»*։

Գրաբարի հարցական մակբայներից շատերը, երբ առանց

հարցականի գործածվեն, աշխարհաբարում ստանում են որ *շաղկապը. օրինակ՝*

Երբ տեսանեն=*Երբ որ տեսնում են.*

Որպէս լուայք=*Ինչպես որ լսեցիք։*

Մինչև անգամ կրկին որ–*ով ասվում է՝* երբոր որ...

Որ *շաղկապի գործածությունը սովորական է դառնում է դարից հետո. օրինակ՝*

Զայս բանս ի միտ առէք որ թէ ապրիմք...

Այնչափ ճմռութեամբ եկեալ որ *և այլն.* զթագաւորն... *որ (է դար).*

Տեսանես որ ուսման կարօտ է.

Յիրաւի որ *(իրավ որ)* գէր էր և մեծ *(ԺԲ—ԺԳ դար).*

Նույնպես յառաջ, քան որ, ճայնց որ, զերդ որ ասացի *և այլն։*

Միջին հյ. որ *նշանակում է գրբ.* եթէ=թէ, զի, որպէս զի *(ինչպես և աշխարհաբարումն է և բարբառներում)։*

Որ *իբրև շաղկապ նշանակում է աշխարհաբարում՝*

1. *«թէ».* Ասաց որ գալու է։

2. *«զի».* Հրամայեց որ սպանեն. Այնչափ էր շփոթուել որ շլսեց:

3. *«եթե, երբ որ».* Դուրս որ ելլես. Այս որ եղաւ:

4. *«որպես զի».* Դուռը պինդ փակիր, որ գող չմտնի:

Որ–*ով կազմված բաղադրյալ շաղկապներ են՝* թէ որ, երբ որ, ինչու որ, չէ որ, մանաւանդ որ:

Ուստի

Ուստի *դրվում է երկու նախադասությունների միջև, որոնցից առաջինը պատճառ է, երկրորդը արդյունքը. օրինակ՝* Մութն ընկել էր, ուստի ճրագը վառեցի:

Երբ առաջին նախադասությունը դրվում է դերբայական ձևով, այլևս ավելորդ է դնել ուստի. օրինակ՝ Տեսայ, որ նա գալիս է, ուստի ես էլ եկայ.— Տեսնելով նրա գալուստը, ես էլ եկայ:

Սխալ է ուրեմն ասել՝ Ընդօրինակուած ըլլալով ի ճին երկաթագիր ճառընտրէն, ... ուստի անելորդ կը ճամարինք վերստին ցանկել *(Սարգիսյան, Յուցակ ձեռ. Վենետ., Բ, էջ 255)։*

Որովճետև

Գրաբարն ուներ այս իմաստով զի, քան զի, վասն զի, *բարբառներից էլ ավելացավ* ինչու որ, *հետևելով ֆրանսերենի, ուր այս իմաստով կա 3 շաղկապ (*parce que, puisque, car*)։ Արևմտահա-*

յերն ուզեցին դնել նաև մեր շաղկապներից մի քանիսի հետ, բայց այդ փորձերը անցան անհաջող։ Զի *այժմ իսպառ վերացված է, ին–չու* որ *ռամիկ է համարվում և գրական լեզվից հանված է,* ճան զի *և* վասն զի *հնացած են և քիչ անգամ միայն երևում են արևմտյան գրականում, որով մնում է միայն* որովհետև *շաղկապը, որ ստացել է ընդհանուր գործածություն։*

Արևելահայերի մեջ արագ խոսակցության ժամանակ դառնում է ոտև, *բայց դա դեռ գրականի մեջ չի մտել։*

Սովորաբար դրվում է գլխավոր նախադասությունից հետո, և սկսում է առանձին նախադասություն, որ տալիս է առաջին նախա-դասության պատճառը. օրինակ՝

Ծրագը վառեցի, որովհետև արդէն մութ էր:

Բայց կարելի է նաև շարքը փոխել և պատճառը դնել առաջ, որին պիտի հետևի արդյունքը.

Որովհետև արդէն մութ էր, ճրագը վառեցի:

Այս դեպքում սովորաբար գլխավոր նախադասության վրա ավելացնում են նաև ուստի *շաղկապը.*

Որովհետև արդէն մութ էր, ուստի ճրագը վառեցի:

Երկար նախադասությունների և պարբերությանց մեջ, մանա-վանդ պաշտոնական գրություններ մեջ, ուր բազմաթիվ պատճա-ռաբանություններ հաջորդում են իրար, դրվում է մի քանի անգամ որովհետև. *սաստկության համար* մանաւանդ որովհետև, *իսկ մի քանի* որովհետև*-ից հետո, վերջին անգամին* և *շաղկապով՝* և որով-հետև:

Օրինակ չենք տալիս. յուրաքանչյուր ընթերցող կարող է կազ-մել նման օրինակներ։

Հին, այժմ խոտանված ձև է պատճառ. *օրինակ՝*

Ակամայ գնացին այդ երկու մարդիկն, պատճառ՝ վախում էին Աքիլլէսի զայրութիւնից *(Հոմերի Իլիակ., թրգմ. Փիլ. Վար-դանյան, Թիֆլիս, 1886, էջ 44)։*

Մի՛ մրցիր այդ մարդու հետ, պատճառ քեզնից շատ ճզօր է *(անդ, 92).*

Բոլոր յոյներն ուրախացան, պատճառ որ նա ճռչակուած էր իւր ուժով *(անդ, 93).*

Հայրդ ինձ ճրամայել էր քեզ հետ այստեղ արշաւելու, պատճառ դու դեռ մանուկ էիր *(անդ, 113).*

Հրամայելով որ մաճ գալիս իրեն ճեցուկ լինէին, պատճառ ինքն կաղոտն էր *(անդ, 163)*.

Ես քեզանից գերազանց եմ, պատճառ քեզնից շատ եմ ապրել *(անդ, 178)*.

Թաք կացաւ իւր դայեակի ծոցի մէջ, պատճառ զարճուրեցաւ *(անդ, 183)*.

Ե՛ս էլ պիտի մաճ ընդունեմ, պատճառ իմ օրճասն էլ արդէն մօտ է *(անդ, 191)*.

Ես չեմ պրծնիլ օրճասից, պատճառ որ շատ զօրաւոր է *(անդ, 194)*։

Ուրպէսզի

Որովճետև *ցույց է տալիս պատճառը,* ուրպէսզի *ցույց է տալիս նպատակը, ըստ այսմ* որովճետև *գործ է ածվում բայի բոլոր ժամանակների հետ, բացի ստորադասականի ներկայից և անցյալից. իսկ* ուրպէսզի *գործածվում է միայն ստորադասականի ներկայի և անցյալի հետ և ուրիշ մի բայական ձևի հետ գործ չունի։ (Հրամայականը բնականաբար ո՛չ մեկի հետ գործ չունի). օրինակ՝*

Ուրպէսզի տեսնեմ, ուրպէսզի տեսնէի.

բայց՝

Որովճետև տեսնում եմ, տեսնում էի, տեսայ, պիտի տեսնեմ, տեսնելու եմ...:

Կովկասում ոմանք սկսել են հնչել ուրպիսի, *որ նշանակում է «ինչպիսի՞» և ոչ մի կապ չունի նրա հետ։ Շատեր էլ շփոթում են* որովճետև *ձևի հետ և ասում են* որովճետև տեսնեմ, *իբր թե «որպէսզի տեսնեմ»։*

Որ, ուրպէսզի

Այս երկու տարբեր իմաստները հաճախ իրար հարակից են և իրար հետ շփոթվում են. գրաբարում զի *նշանակում է թե՛ «որ» և թե՛ «որպեսզի». ինչպես՝*

1) Տեսես Աստուած զլոյսն, զի բարի է.
Գիտացի, զի երկիւղած ես դու յԱստուծոյ.

2) Այս ամենայն եղև, զի լցցի որ ասացաւն.
Ազդ արասջիք, զի ես եկեալ երկիր պագից:

Այսպես նաև ռուսերենում что бог *ունի երկու իմաստ. օրինակ՝*

скажи ему что бог пришел *«Ասա որ գա»*.

нужно ему сказать что бог пришел. *«Պետք է նրան ասել, որպեսզի գա»։*

Մեր ռամիկն էլ չգիտե այս երկուսի տարբերությունը և միշտ դնում է որ: *Առաջինը դեպքի պարզ թվումն է, երկրորդը պատճառաբանություն (թէ չէ պիտի գար)․ ֆրանս․* que *և* pour que.

Ռուսերենի անորոշության հետևանքով Կովկասում այժմ սկսել են որ*-ի տեղ* որպէսզի *գործածել (մինչդեռ ժողովուրդը հակառակն է)։ Սրա հին գործածությունը գտնում եմ 1893 թվականից․* «Այս յօդուածները համառօտութիւնն են Ագաթանգեղի ընդարձակ պատմածին, ինչպէս ցոյց է տուած վերը. և այնպիսի ոճով, որպէսզի փոխառութիւնը ուղղակի չը նկատուի» *(Գրիգոր Խալաթյան, Զենոբ Գլակ, Վիեննա, 1893, 54)։*

Գրաբարից փոխ առնված շաղկապական ասույթյուններ են.

ըստ այսմ
ըստ այնմ
ըստ որում
այնու ամենայնիւ
ի վերայ այսր ամենայնի
այսու հանդերձ

Առաջինը գործածվում է անմիջապես նույն միջոցին հիշված պայմանների դեպքում, երկրորդը՝ ավելի առաջ կամ նախապես հիշված պայմանների դեպքում. օրինակ՝

Այստեղ մենք դնում ենք մեր ընկերութեան պարտադիր որոշումները. պարտաւոր էք վարուել ըստ այսմ:

Մենք արդէն տուել ենք մեր ընկերութեան պարտադիր որոշումները. առաջարկում ենք վարուել ըստ այնմ:

Նկատելի է, որ

1) Գոյականի երեք ատիճաններից միայն երկուսը ներկա են այստեղ (ըստ այդմ *գործածական չէ այժմ).*

2) Այսմ. այնմ *եզակի են, բայց հոգնակիի դեպքումն էլ մնում են նույնը, ինչպես նկատելի է նախորդ երկու օրինակների մեջ—* որոշումները=ըստ այսմ, ըստ այնմ:

Ըստ որում *գործածվում է այժմ զանազան իմաստներով, ըստ իս լավագույն առումն է «որովհետև». օրինակ՝*

Հայոց պատմութեան նախնական շրջանը ծանօթ չէ մեզ. ըստ որում այն շրջանից պատմիչներ կամ աղբիւրներ չկան՝

ճայ թէ օտար: *(Ըստ որում բուն նշանակում է «որի համեմատ», որ այժմ հասկանում ենք «որովհետև»)։*

Հաջորդ 4 ձևերը բառացի նշանակում են «այս բոլորի հետ միասին», այսինքն «այս բոլոր պատճառաբանություններից հետո»։ Արևմտյան հայերենի ժողովրդական ձև է «ասոր հետ մէկտեղ», որ է արևելյան հայերենի «սրա հետ միասին»։ Այս բոլորը գործածում ենք այժմ «բայց, սակայն, և սակայն» իմաստով, որի մի նոր առումն են միայն։

ԳԼՈՒԽ Ե

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Հայերենի մեջ իբրև կատարյալ հոմանիշ են գործածվում ձայնարկություն և միջարկություն *բառերը։ Առաջինը ավելի ճիշտ բառ է, քան ֆրանսերեն* interjection, *ուստի անկարելի է ջնջել. երկրորդը ավելի անհարմար բառ է. ուստի կարծում եմ լավ կլինի առաջինը պահել զուտ բացականչությունների համար (ա՜խ, վա՜խ, օ՜հ և այլն), իսկ* միջարկություն *բառը գործածել առանձին ասացվածքների համար, որոնք իբրև ձայնարկություն են գործածվում. ինչպես՝* Մեղա՜յ, մուսս ի վրադ *և այլ։*

Գիտենք, որ լեզվի մեջ բառը այն պայմանական նշանն է, որ մարդիկ ու ժամանակը հարմարեցրած ու հատկացրած են այս կամ այն գաղափարի համար։ Ձայնարկություն կոչվում են այն բառերը, որոնք այս պայմանից դուրս, մարդկային կամքից անկախ, իբրև բնական կամ բաղդատական մի արտահայտություն, բխում են գրեթե անգիտակցաբար։ Բառը կամ առարկայի անունը կազմված է որոշ հնչյուններից և ինչ ձևի տակ էլ որ արտասանվեն այդ հնչյունները՝ միշտ նշանակում են նույն առարկան։ Ձայնարկությունը ընդհակառակը արտասանության եղանակի համեմատ փոխում է իր իմաստը. միևնույն ա՜ *ձայնը, արտաբերվելով զանազան երանգներով ու տոներով, կարող է նշանակել «ցավ, զարմանք, հանկարծական հայտնություն, մի՞ թե, չգիտեի, սպառնալիք, մի նախորդ խոսքի հաստատություն և այլն, և այլն»։ Այս տեսակետով ձայնարկությունը նույնանում է անասունների արտաբերած ձայների հետ, որոնք իբրև հնչյուն միշտ միևնույնն են և միայն*

երանգով կամ տոնով են տարբերվում. օրինակ շան հա՜վ-հավը, կատվի միա՜վը, որ միշտ միևնույն բանն է իբրև հնչյուն, բայց ըստ երանգի նշանակում է շատ զանազան բաներ։

Նմանապես, անասունները կանչելու կամ վանելու համար օգտագործված բառերը ձայնարկություններ են. ինչպես՝

պրս. jis *կատուն վանել, փիշտ, թրք. փիս,* Пис.

jis jis *կատուն կանչել. փիշ փիշ, փիսի փիսի,* кис кис.

Ըստ այսմ ձայնարկությունները գրել կամ տառերով նշանակել էլ կարելի չէ, ինչպես չի կարելի շան հաչոցը կամ կատվի մլավոցը գրել տառերով։ Հետևաբար և սկսած հին լեզուներից մինչև նորագույնները՝ ձայնարկությունները, որ առհասարակ միևնույն բաներն են, ներկայացնում են լոկ անիմաստ տառեր։ Կենդանի ձայնը և ֆոնոգրաֆը (ձայնագիր), մագնիտոֆոնը միայն կարող են հարազատորեն պատկերացնել մեզ իսկական ձայնարկությունները։

Չնայած այս բանին, բոլոր լեզուների մեջ էլ ձայնարկությունները ներկայացնում են միևնույն կմախքը։ Նրանք կազմված են a, e, i, o, u *ձայնավորներից, անխուսափելի շնչից (*h *կամ* x*),* v, y *կիսաձայններից և մի քանի սուլող ձայներից (*s, š, z *և այլն)։*

Ձայնարկությունները հաճախ լեզվի սովորական բառերն են՝ գոյական,ածական, բայ, որոնք գործածվում են զգայական շեշտով և նրանով դառնում են ձայնարկություն. օրինակ՝ vivel bravo! *և այլն։*

Բայց բուն ձայնարկությունները բնաձայն բառեր են, որոնք բավական հավատարիմ կերպով ներկայացնում են այն բնական ճիչը, որ մարդ արձակում է այս կամ այն զգացմունքի միջոցին. ինչպես՝ ախ, աճ, ուճ, օֆ *և այլն։*

Ստորև տալիս ենք մի քանի լեզուների հիմնական ձայնարկությունների տախտակը։

Ֆրանսերեն

ah ! *(հայտնում է ուրախություն)*
aïe ! ah ! hélas ! ouf ! *(ցավի համար)*
ha ! hé ! hu ! *(վախ է հայտնում)*
ah ! eh ! oh ! *(հիացմունք)*
fi ! oh ! *(զզվանք)*
sus ! ça ! *(քաջալերանք)*
hola ! hé ! *(մարդ կանչելու համար)։*

Ֆրանսիական լանգդոկ լեզվով

bom ! *թնդանոթի որոտ*
pataflou ! *մի բան ընկնելու ձայն*
ra-ta-plan ! *թմբուկի ձայն*
clic-clac ! *մտրակի շառաչ*
din-dan ! *զանգի ձայն*
riga-raga ! *ճռանի (կարկաչայի) ձայն*
cacaraca ! *աքլորի կանչ*
zon-zon ! *մեղվի բզզյուն*
ziu-ziu ! *ճպուռի* (la cigale) *ձայն*
cri-cri ! grillon-*ի ձայնը։*

(Salvat, Gram. occitane, *158)*

Հոլանդերեն

heisa, hoezee, hoera *(հայտնում են ուրախություն)*
eilleve ! *(փափագ, ցանկություն)*
foei *(զզվանք)։*

(Valette, *167)*

Ամերիկյան այմարա լեզվով

hua ! hual ! *(զարմանք հայտնելու համար)*
ananai ! atatai ! *(ցավ հայտնող)*
ampi *«այդպես է» (համաձայնություն հայտնելու համար)*
atax ! ačtal ! xai xai ! (Verdruss).

(Middendorf, *118)*

Օվկիանյան տաճիքի լեզվով

aue ! tiahoi ! *(հիացմունք հայտնելու համար)*
mai ! c ! *(մեկին կանչելու համար)*
hie ! hee ! *(զզվանք հայտնելու համար)*
aue ! ahe ! ae ! *(ցավ, վիշտ հայտնելու համար)*
tamau ! hae ! *(քաջալերանք)*
aue ! hoi aïtoa ! *(ուրախություն)*
maniania, turituri *(լռի՛ր, սո՜ւս!)*

(Sénac, *57)*

Մի թեթև հայացք գցելով այս փոքր ցուցակի վրա, պիտի տեսնենք, թե բոլորն էլ միևնույն բաներն են. ցավ զգալու դեպքում մե՛նք էլ ասում ենք ո՜ւֆ, ֆրանսիացիք էլ (oui!)։ Ավելի մանր բաներ էլ կարելի է գտնել. օրինակ՝ աֆրիկյան բիլին լեզվով կոչականը կազմվում է wo ձևով. ինչպես՝

wo adara ով տէ՜ր (ո՜տէր)

wo yi dan ով իմ եղբայր

Նույնիսկ ասվում է՝

adé ո՜վ իմ մայր (ժղ. աղէ՜).

(Reinisch, 679)

Ըստ այսմ հին ու նոր լեզուների ձայնարկությունների միջև համեմատական քննություններ կատարել և նրանց վրա հիմնվելով հնդեվրոպական շրջանի ձայնարկությունները փնտրել ավելորդ և ապարդյուն աշխատանք է, որովհետև ինչպես հնդեվրոպական, այնպես և ոչ-հնդեվրոպական լեզուների հին ու նոր վիճակն էլ նույն է. ինչպես՝

հյ. վա՜յ, լտ. vae, գալլ. gwae, գոթ. wai, լեթթ. wai, զնդ. vayōi և այլն։

Ձայնարկությունների ուսումնասիրությունը համեմատական քերականության սահմաններից դուրս է։

Այն բոլորը, ինչ ասացինք մինչ այժմ, վերաբերում են՝

1. Ձայնարկությունների բուն և առաջին տեսակին (ձայներ, բացականչություններ)։

2. Երկրորդ խումբն են կազմում. լեզվի սովորական բառեր՝ առանձին և զգայական շեշտով արտասանված, ինչպես՝ մե՜ղք, մեղա՜յ, ճերի՜ք, Աստուա՜ծ իմ.— ֆրանս. courage! (քաջությո՜ւն), tonnerre! (որոտո՜ւմ), salut! (բարև), peste! (չոռ, ժանտախտ) և այլն։

3. Զանազան բացականչական ասացվածքներ, երդում, անեծք, հայհոյանք, բարեմաղթություն և այլն շատ հաճախ գործածվելով և դրա համար էլ չափազանց մաշվելով՝ դառնում են ձայնարկություն։ Հաճախ սրանց ծագումը անհայտ է մնում. օրինակ՝

գերմ. mein! կրճատված է գերմ. mein Gott! «Աստված իմ» դարձվածից. նույնը նաև անգլ. oh my!

գերմ. Herrjeh! (=Herr Jesus!), որ է «Տէր Յիսուս»։

գերմ. Ojeh! (=O Jesus!), որ է «Ով Յիսուս»։

գերմ. O jehmine! (=O Jesus, oh Domine!). ուսանողական շրջանում լատիներենից կազմված ձայնարկություն, որ

նշանակում է «Ո՜վ Յիսուս, Ո՜վ Տէր» (ըստ Rogge, Der Notstand, 198)։

գերմ. ntag! nabend! (կրճատված են guten Tag, guten Abend «բարի օր, բարի երեկո» բառերից)։

գերմ. gna Frau! (կրճատված է gnädige Frau! «ողորմած տիկին» ձևից. այժմ անսովոր։

Ստրասբուրգում 1898 թվականին հյուրանոցների սանդուղքների վրա հաճախ լսում էի տղամարդկանց բացականչությունը Ksdehan, որի իմաստն է եղել „ich küsse die Hand «Ձեռքերդ եմ համբուրում (տիկիններին ողջունելու ձև)»։

Նման երևույթներ կան ֆրանսերենումն էլ. hélas! «ափսո՜ս, ավա՜ղ» այժմ մի բառ է և համարում ենք զուտ ձայնարկություն. բայց ոչ. ԺԶ դարում դեռ նա գրվում էր երկու բառով՝ he! las! առաջինն էր ո՜հ ձայնարկությունը, երկրորդը նշանակում էր «դժբախտ, թշվառ»։ Ավելի ուշ միացան և կազմեցին hélas! «ափսո՜ս» ձայնարկությունը։

Ֆրանսերենում կան մի խումբ երդումներ կամ հայհոյանքներ (ֆրանսերենում անմաքուր հայհոյանքներ գոյություն չունեն. նրանց հայհոյանքները բարկացած տոնով ասված երդումներ են), որոնք կազմված են Աստուծո անունից, բայց Աստված (Dieu) բառը կա՛մ ջնջված է, կամ ձևափոխված, կամ փոխանակված կապույտ (bleu) բառով. ինչպես՝ jarni = je renie Dieu «Ես ուրանում եմ Աստծուն», morbleu=mort de Dieu «մա՜հ Աստուծո», parsambleu=par le sang de Dieu «արեամբն Աստուծոյ...»։ Ծանր հայհոյանքներից մեկն է Sacré nom de Dieu, որ նշանակում է «Նվիրական անուն Աստուծո՜»։

Մեր հայացքը դարձնելով այժմ մեր շրջակա լեզուների վրա (թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, ռուսերեն) այստեղ էլ գտնում ենք նույնը։ Այստեղ էլ Աստուծո անունը (արաբ. Allah الله) մտել է զանազան ասությանց մեջ, որոնք կորցնելով իրենց նախնական իմաստը, վերածվել են բոլորովին այլիմաստ ձայնարկության։ Այսպես.

Արաբները շատ են սիրում Allah բառը գործածել իրենց ասությանց մեջ. օրինակ՝ ya Allah! «օ՜ Աստված», vallahī «Աստուծով, ստուգիվ», billahī, tallahī «նույն նշանակությամբ», Allam 'ālim «Աստված գիտնական» (որ նշանակում է՝ միայն Աստված գիտե, ես չգիտեմ), mašallah «ինչ որ կամենա Աստված», կեցցե իմաս-

տով, barakallah «օրհնեալ է Աստուած, կեցցե», ey vallah «շնորհակալ եմ», in šāh aliah «եթե Աստված կամենա,· մաղթում եմ, երանի թե»։ Այս բոլորը գործածական են թուրքերենի մեջ և նրանցից փոխ առնելով հայերենի մեջ ունենք եալլաճ, վալլաճ, վալլաճ-րիլլաճ, ալաճալէմ «կարծեմ, ենթադրում եմ», մաշալլաճ «կեցցես», Դրբ. բարաfյալլաճ «կեցցես», էվալլաճ «շնորհակալ եմ, չէի սպասում», իշալլաճ «մաղթում եմ»։

Սրանցից ամենից ավելի հետաքրքրականն է եալլաճ, որի իմաստն է, ինչպես տեսանք, «օ՜ Աստված»։ Երբ մեկը մի քիչ դժվար բան ուզում է վերցնել կամ տեղից դժվարանում է վեր կենալ, ասում է եալլաճ: Բայց նաև երբ ուզում է մեկին քաջալերել կամ հորդորել, որ վեր կենա կամ մի բան սկսի անել, նորից ասում է «եալլահ»։ Այս դեպքում եալլաճ նշանակում է «դե՜հ, օ՜ն»։ Այս բոլորը լավ իմաստով են։ Բայց երբ մեկին ուզում են դուրս քշել, բարկացած տոնով ասում են՝ «եա՛լլահ (նախավանկի շեշտով), որ այս դեպքում նշանակում է «կորի՛ր»։

Ահա այսպես Աստված բառը հասավ «կորի՛ր» իմաստին։

yallah (يالله), որ է «Ով Աստված», այժմ նշանակում է «դե՜հ, օ՜ն» (նշան քաջալերանքի, բայց նաև մեկին դուրս վանելու և այլն)։

inšallah (انشالله), բուն նշանակությունն է «եթե Աստված կամենա», այժմ նշանակում է «տա՜ Աստված, հաջողություն եմ մաղթում, մաղթենք որ այսինչ բանը կատարվի հաջողությամբ»։

afarəm, բուն ձևն է պրս. آفرين āfarīn «ստեղծող (Աստված)». այժմ գործածվում է իբր գովասանական բառ «կեցցես, բրավո»։

mašallah (ماشالله) բուն «ինչ որ Աստված կամենա». այժմ «կեցցես, բրավո» (գովասանական բացականչություն)։

Ռուսերենում էլ կան մի խումբ միջարկություններ, որոնք գործածական են արևելահայ ժողովրդական բարբառներում. օրինակ՝ ռուս. за то, որ բուն նշանակում է «դրա փոխարեն», ինչպես՝ Ձատո ճարուստ է: Սրա բուն հայ ժողովրդական ձևն է բա՜ որ... օրինակ՝ Բա որ ճարուստ է=Ձատո ճարուստ է, է՞ն ինչ ընենf:

Еще бы ցույց է տալիս լսողի զարմանքը. ոմանք հայերեն խոսակցության մեջ դնում են այսպիսի ձև, բայց բուն հայաձև ոճն է՝

Պլ. Ամմա ըրիր ճա.
Ախց. է ճերի՞f:

Նման միջարկություններ են да неужели ! =Ատ էր պակաս, գենէ գենէ, դահա ի՞նչ, թրք. հա շունու բիլե-իդին, աղեկ գիտցար։
Կան նաև կեղտոտ բառերով կազմված ձևեր, որոնցից հիշում ենք մի քանիսը։

Նոր Նախիջևանում փոքրիկ երեխային սիրելու, գգվելու, փաղաքշելու ժամանակ ասում են՝ ճա՞յ անասըճը, որ նշանակում է թրք. «ա՞յ մայրը» (հյց. հոլով. բայը դրված չէ. և խոսողներն էլ չգիտեն, թե ի՛նչ զզվելի բաներ կան թաքնված այդ բառի տակ)։

Ամբողջ Տաճկաստան և Կովկաս տարածված բացականչական ձև է «հա՞յ գիդի». օրինակ՝ հատկապես Հա՞յ գիդի ժամանակ ճա՞յ. բայց ամեն մի բանի համար էլ կարելի է ասել. օրինակ՝ մի լավ սեխի համար՝ Հա՞յ գիդի սեխ ճա՞յ, ի՞նչ լաւ սեխ էր և այլն։

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում գանգատվում է, ասելով թե հայ ժողովուրդը հայհոյանք չգիտեր, բայց արդեն հայհոյախոս է դարձել։ Հայհոյում են հավատ, կրոն, խաչ, եկեղեցի և այս բոլորից սարսափելով, օրենք է դնում, որ կարգվեն առանին ոստիկաններ՝ հայհոյախոսներին ձերբակալելու և ի պատիժ նրանց լեզուն ծակելու։

Մխիթար Գոշի նկատած զարմանալի երևույթը անշուշտ թուրքական արշավանքի արդյունքն էր։ Մինչև այսօր թուրքերը հայհոյախոս են և նույնիսկ իրենց ընտանիքում թուրք կանայք իրենց երեխաների հետ անպարկեշտ հայհոյանքներով են խոսում։ Այսպիսի հայհոյանքների մի հետքն է ճէ՞յ գիդի թրք. hey gidi !, որ այսօր իբրև բոլորովին մի անմեղ բացականչություն գործածական է մեր ժողովրդի մեջ. օրինակ՝

Հէյ գիդի աշխարհf=թրք. Hey gidi dünya կամ պարզապես hey gidi hey !

Բայց այս բառը թրք. گدی gidi ձևով նշանակում է «կավատ», հատկապես այն անձը, որ իր կնոջը վաճառում է ուրիշին։

Նույնիսկ նվիրական բառեր կարող են ստանալ այս բացականչությունը. օրինակ՝

Հէ՞յ գիդի Անի, ինչ էիր, ինչ եղար:

Ավելի կեղտոտ բացականչություններ էլ կան. ինչպես, Կովկասում տարածված ղուռումսախ բառը (չկա Տաճկաստանում) և այլն, որոնց մասին խոսել անպատշաճ եմ համարում։

Օրինակներից երևաց, որ ձայնարկություններն էլ լեզվից լեզու կարող են փոխ առնվել։ Bravo ! «ապրես, կեցցես» համաշխարհային բառ է դարձած։

2. ԳՐԱԲԱՐԻ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ թիվ չեն կազմում, ընդհանրապես մի անգամ են ասվում, մի քանիսն էլ սաստկության համար կրկնված են գործածվում. ինչպես՝ վա՜շ վա՜շ, վա՜յ վա՜յ, ո՜ն ո՜ն: *Ձայնարկությունները մեծ մասամբ իրենցից հետո տրական խնդիր են առնում. ինչպես՝* Երանի՜ ողորմածաց, Բաբէ՜ կուրութեանս, վա՜յ ինձ.— *ուրիշներ՝ սրանից հետո նաև մի ուղղական. ինչպես՝* Երանի՜ է քեզ, Սիմոն *և այլն։*

Ո՜, ո՜վ *(մարդ կանչելու կամ զարմացական բացականչություն). օրինակ՝* Ո՜ աթենացիք, Ո՜վ անմիտ, Ո՜վ սքանչելիք.— *մարդ կանչելու դեպքում, եզակի անունից հետո դրվում է նաև* դու *դերանունը. ինչպես՝* Ո՜վ այր դու, ա՜յր դու, կի՜ն դու, մանո՜ւկ դու, աղջի՜կ դու.

Ո՜վ սքանչելեացս *(այս ի՜նչ հրաշալի բան է)։*

Ազնի՜ւ *«կեցցես, ապրես, աֆերիմ». օրինակ՝*

Ազնի՜ւ, ծառայ բարի և նաւատարիմ:

Աղէ՛ *«օ՛ն, հա՛յդա» (խրախույս տալու և քաջալերելու համար). նաև* դու *դերանունը կցելով՝*

Աղէ՛ դու, քեզ ասեմ.

Աղէ՜ ածէք զմտաւ:

Այ *(բարկություն կամ թշնամանք ցույց տալու համար).*

Ա՜յ թշուառ, այ ապիրատ.

Ա՜յ սուտ և չարագործ *(Եզն. 115)։*

Աւա՜ղ *(ցավ ևափսոսանք է հայտնում). (պատահական է նմանությունը պրս.* اواخ avāx *ձևի հետ, որովհետև պրս.* ح x *չի դառնա հյ.* ղ).

Աւաղ աղէտիցս *«Այս ի՜նչ փորձանք էր»։*

Բաբէ *(զարմանք կամ ցավ հայտնելու համար). բնաձայն բառ է և ըստ այսմ պատահաբար նման է հն.* βαβαὶ *ձևի հետ. օրինակ՝*

Բաբէ՜ թշուառութեանս.

Բաբէ՜ կուրութեանս.

Բաբէ՜, ուպիսի՜ զօրութիւն:

Եղո՜ւկ *(ցավ հայտնելու համար). ինչպես՝*

Եղուկ դու, Եղուկ եմ ես.

Եղո՛ւկ ինձ, որդեակ իմ:

Երանի՜ *(բարի բան մաղթելու համար). օրինակ՝*

Երանի՜ ողորմածաց. Երանի՜ նեզոց.

Երբ իրանից հետո բայ կա, ստանում է թէ *շաղկապը. օրինակ՝*

Երանի՜ թէ աստ լեալ էիր.

Երանի՜ թէ յաջողեալ էր.

Գործածվում է է, էր, իցէ *էականներով, առաջինը ներկա, երկրորդը ապագա մի բան ցույց տալու համար. օրինակ՝*

Երանի է քեզ, Սիմոն *(այժմ).*

Երանի իցէ այնոցիկ զորս գտցէ արթունս *(ապառնի).*

Զի՜ «ինչքա՜ն» (զմայլանք ցույց տալու համար).

Զի՜ բարի, զի՜ սքանչելի է:

Իցի՜ւ *«ո՜ւր էր թե, երանի՜ թե»։*

Իբրև՜ զի *«ինչքան» (հիացմունք հայտնելու համար). ինչպես*

Իբրև զի բարի է *«ինչքան լավ է»։*

Հա՛պա «ո՜ն» (հորդորանք, քաջալերություն ցույց տալու համար).

Հապա գնասցուք «դեհ, գնանք»։

Յանկարծ *«ո՜ւր էր թե, երանի՜ թե». օրինակ՝*

Յանկարծ երթայր Տէրդ իմ:

Ո տայր *«երանի, ուր էր թե» (փափագ, ցանկություն է հայտնում). օրինակ՝*

Ո տայր ինձ գծուխ ծխանի,

Եւ զառաւօտն Նաւասարդի *(Վիպաս. երգ).*

Ո տայր ինձ տեսանել.

Տայր ոք ինձ թևս.

(Այսպիսի իմաստ ունի նաև՝ Առնոյր առնէր ոք զ...):

Ո՜հ *(ցավ և զարմանք հայտնելու). ինչպես՝*

Ո՜հ տէր. Ո՜հ անմտութիւն.

Ո՜հ թշնամեացս.

Կրկնությամբ էլ ասվում է.

Ո՜հ ոհ փախիցուք:

Որպէ՜ս զի *«ինչքա՜ն» (հիացում ցույց տալու համար).*

Որպէս զի քաղցր են.

Ո՜ւր է թէ *«երանի՜ թե» (փափագ, ցանկություն հայտնելու համար).*

Ո՜ւր է թէ ոք զմտաւ ածիցէ:

Վա՜հ *(ցույց է տալիս հեգնանք). օրինակ՝*

Վա՜հ, որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր. *Մատթ. Իէ 40=Մարկ. ԺԵ 29։*

Վա՜յ (ցավ ևափսոսանք է հայտնում). ինչպես՝

Վա՜յ թշուառականացս.

Վա՜յ fեզ fաղաf արեան.

Վա՜յ իցէ յղեաց (Վայ պիտի լինի հղիներին). (էական բայի իցէ, ստորադասականի թէ ցույց է տալիս ապառնի մի բան).

Սաստկության համար կրկնությամբ ասվում է՝ Վա՜յ վա՜յ ինձ:

Վա՜շ «օխ» (ուրախության, հրճվանքի նշան է).

Վա՜շ ինձ, զի տեսի զկրակ.

Վա՜շ անձանց մերոց, զի ընկլուզաf զնա.

Կրկնությամբ էլ ասվում է վա՜շ վա՜շ:

Օ՜ն «դե՜հ, է՛հ» (հորդոր կամ խրախույս կարդալու համար).

Օ՜ն, արիf գնասցուf ստի.

Օ՜ն առ, օն առեալ գնասցուf ի մէջ:

Օ՜ն անդր «քաւ լիցի, չլինի թէ»

Օ՜շ թէ «ուր էր թե, երանի թե» (իղձ կամ ցանկություն հայտնելու համար).

Օ՜շ թէ անսայիf փոfր մի:

Փարգաստ } «չլինի թէ, Աստված չանի».
Քա՜ւ լիցի }

Քաւ լիցի fեզ առնել զայդ:

Քանի՜ «ինչքա՜ն» (զմայլանք ցույց տալու համար).

3. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եղած տեղեկությունները չափազանց քիչ են այս մասին. Karst 259 այս հատվածի մեջ դնում է միայն երկու բառ՝ հայ «այո» և անա, անայ «ահավասիկ». բայց այս երկուսն էլ մակբայ են դժբախտաբար և ո՛չ թե ձայնարկություն։

Այտն. 137 հիշում է մի քանի ձայնարկություններ. այսպես՝

ը՛ն, ը՛ն.

ծօ՛լա «ծօ» (տղամարդ կանչելու համար)

fա՛լա «քա» (կին կանչելու համար)

դէն, արfէն «կեցցես, շատ ապրես»

Պատրա՛ստ «զգո՜ւյշ, չլինի՛ թե». օրինակ՝ Պատրաստ որ չտաս (տճկ. saqən vermeyesin)․ սրանից էլ պատրաստիլ «զգուշանալ»։

Ջալխ. 181 հիշում է, որ «ստորին գրաբարում» կան լինի էական բայով և հայցական խնդրով ձայնարկություններ, ինչպես. Վայ լինի զիս, Ավաղ զընդունող շնորհաց և այլն։

4. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա՜խ Ջղ. (ցավ ցույց տվող), ա՜խ, ա՜ն Ննխ., Պլ., Հմշ. (նշան ցավի, զարմանքի, վրեժի և այլն)։

Ակա՜ «նայի՛ր» Ջղ. կրճատված է ականի՛ր «նայիր» բառից և իբր ձայնարկություն է գործածվում։

Անան, տե՛ս նանա, նա՛։

Ամմէ՜ն. Հմշ., Պլ., Ննխ. և այլն աղոթքների վերջում գտնված ամէ՜ն «եղիցի» եբրայական բառն է, որ այժմ էլ գործածվում է, երբ մեկն ուզենա միանալ կամ ձայնակցել մի ուրիշի տված անեծքին.— Հմշ. գործածական է նաև թրք. ամի՜ն ձևով։

Ա՛յտա «այ տղա» Մրղ. կրճատված է հենց այ տղա ձևից. ճիշտ այսպես է նաև Երև. ադա, ղրբ. ադա, ա՛դա, որոնք փոխառյալ են արևել. թրք. ādä «ա՛յ տղա» բառից. այս ձևն էլ կրճատված է պրս. ای گدا ay gādā «ո՜վ մուրացիկ, ո՜վ աղքատ» բառից. gādā գռեհիկ մարդոց տրված անվայել տիտղոս է, մանավանդ որ պատահաբար նման է պրս. گاده gāde «շաղաշարեցեալ» (ԳԴ, էջ 213) բառին, որի հետ զուգորդվում է չարամտորեն։ Ահա թե ի՛նչ անպարկեշտ բառ են գործածում Կովկասում սովորական մարդիկ իրար մեջ։ Ավելացնենք, նաև, որ ada (ադա) ձևը դարձել է այժմ արա՝ d դ բաղաձայնը ատամների միջև թույլ հնչվելով։ Երևույթը նույն է ճիշտ ինչ որ հին հայոց մեջ պրս. apadana> ապարանք, պլհ. *aspar> ասպար, հպրս. *spadapati > սպարապետ և այլն։

Ապրիս «կեցցես»> աբրիս Ննխ., Պլ., աբռի՜ս Հմշ., իբրև սաստական էլ լինում է շատ ապրիս. ասում են փոքր տարիքի տղայոց և աղջկանց՝ երբ համբուրում են մեծի ձեռքը։

Ափսո՜ս Ջղ., ափսուՙս Մրղ., ափսօս Երև. (ցավ, զղջում ցույց տվող)> պրս. افسوس afsūs.

Անուշ. Ագլ., Երև., Ննխ., Պլ., անո՜ւշ, անո՜շ Ջղ., մի բան խմելու ժամանակ արված բարեմաղթություն։

Բա Երև., բը Մրղ. «իհարկե, հապա՜» <ենթադրում եմ որ կրճատված է hապա բառից։

Բարև՜ Երև., պարէվ Հմշ., փարէվ Պլ., բարէվ ձէ՜զ (Ջալթը՝ բարէվ ծէ՜ձ, ծէձի) «բարև ձեզ». տարբերվում է մյուս բարբառներից

նրանով, որ Ննխ. ձէզ բառի է-ի վրա շատ երկար մի շեշտ ունի. մինչդեռ մյուս բարբառները շեշտում են **բարև** *բառը։*

Դէ՛ *«դեհ, օն, շուտ» Մրղ.*=**դեհ** *Երև.,* **դէ** *Հմշ. օրինակ՝* **դէ ճոհ՚յո** *«դեհ սկսիր»։*

Էրանի> **էրանի, էրնէգ, էյնէգ** *Ննխ.,* **էրանի, էրնէգ** *Պլ.* **էրնէգ** *Հմշ.,* **իրնէկ** *Ջղ.,* **ըրա՛յնակ, ըրոնակ** *Ագլ.*

է՛ *Ննխ., Պլ. «բավական է»։*

է՛ ալ *(Ննխ. հնչվում է է՛-յ-ալ) «ինչ որ է». գործածվում է երբ մեկը խոսակցի պատճառաբանությունները բավական համարելով՝ չի ուզում ո՛չ հակառակվել և ոչ էլ իր ասածից հրաժարվել և անորոշ թողնելով խնդիրը՝ փակում է։— Կազմված է* **է** *և* **ալ** *բառերից. այսինքն «այդպես է, բայց իմ ասածս ալ ճիշտ է»։*

էլի *Երև., սովորական գործածություն ունի ամեն նախադասության միջին ու վերջին՝ իբրև թարմատար.— նույնը Թավրիզում պարզապես* **էլ** *ձևն ունի։ Երկուսի համեմատությունից երևում է, որ* **էլի** *«դեռ, այլ ևս, «է՛լ» բառն է. ինչպես՝* **Գալիս եմ էլի. Ասացի էլի.**= *Նույնը Ագլ.* **ա՛լո՛ւ** *ձևն ունի և դրվում է նախադասության վերջը. ինչպես՝* **Գի՛դոմ ըս ա՛լո՛ւ** *«գիտես էլի՛».* **Դէ, բրխիս հոտի ո ա՛լո՛ւ** *«Երախայիս համար է էլի՛»։— Այսպիսով* **էլի** *նույնանում է Ննխ.* **դա՛** *մասնիկի հետ, որ գործածվում է բայերի վերջում իբրև հաստատական (տե՛ս վերը) և կրճատված է թրք.* ده dεha *«դեռ» բառից։*

է՛հ *Պլ., Հմշ., Երև.,* **ոհ** *Մրղ. Նշան է անփույթ վերաբերմունքի. (Պլ. ընտանեկան լեզվով կցվում է միշտ «մնաք բարով» ձևին և ասվում է «է՛հ, մնաք բարով» այս ձևն է, որ դրված է Դուրյանի «Տրտունջքի» սկիզբը (բայց գրված է).*

«է, մնաf բարով, Աստուած և արև,
Որ կը պլպլաf իմ ճոգւոյս վերև...»:

է՛յ *Երև., Պլ., Հմշ., Մրղ. մարդ կանչելու համար։*

Թո՛ւ *Երև.,* **թու, թուֆ** *Ջղ.,* **թի՛ւ** *Ննխ.,* **թի՛ւ, թի՛ւֆ** *Պլ. «զզվանքի, թքելու, նախատելու, անարգելու նշան»* <**թուf** *բառից կազմված բնաձայն է (տե՛ս Արմ. բառ. Բ 1325). բայց Ջղ.* **թուֆ** *ձևը փոխառյալ է պրս.* تُف tuf *բառից։*

Ի՞՛ *«միթե այդպես է» Ննխ. զարմանք է հայտնում չիմացած բանը նոր միայն լսելով. ունի շատ երկար և առանձնահատուկ մի շեշտ, որի առաջին մասը կարող ենք համարել հարցականի շեշտ, երկրորդ մասը ստիճանաբար իջնող զարմացական շեշտ։*

Հա «այո՛» Երև., Ննխ., Պլ., Հմշ., Մրղ. հնչվում է երեք տոնով. հաստատական (հա՛), զարմացական (հա՜), հարցական (հա՞). հյ. այո՛ բառը համարվում է մակբայ, ուստի այսպես պիտի լինի նաև իր հոմանիշը՝ ճա, բայց որովհետև վերածվել է բնաձայնի, ավելորդ չհամարեցի հիշել նաև այստեղ։

Համմէ Պլ. (թե՛ հարցական և թե՛ հաստատական). քաղաքավարական պատասխան՝ հայտնելու համար թե կանչողի ձայնը լսել է. (ի՞նչ է ասել համարվում է անքաղաքավար).— ծագում է ճրամայէ՛, ճրամմէ՛ ձևից.— Նույնը Մրղ. դարձել է ա՜մմըէՃ՝ անշուշտ ճամմէ և ամմէՃ բառերի խաչաձևումով։

Ծօ՜լա. միջին հայերենի այս ձևը իբրև արական կոչական բացականչություն պահված է Կը ճյուղի զանազան բարբառներում՝ լայն չափերով. այսպես ունինք Պլ. ձօ՜, Ռ. ձէ՜, Տր. ձօ՜, Ննխ. ճաձէ՜ (այսպես քաղաքում. իսկ Չալթր, Սալա աձօ՜, Չալթր, Թոփտի ձօ՜). ընկերական բացականչություն է, որի հոգնակին էլ լինում է ճաձէՃէ՜ր. (օրինակ՝ ճա՛յդէցէֆ ճաձէՃէր «օն, տղերք»). այնչափ հաճախ գործածական է, որ ճաձէ բառը գրեթե «Նախիջևանցի հայ» նշանակությունն է ստացած. օրինակ ասում են ճաձէՃԷրը էգաՃ «Նախիջևանցի հայ տղաները եկան». մինչև անգամ տեղացի ռուսները գործ են ածում այս ձևը՝ մի որևէ հայ կանչելու համար։

Հայճա՜յ Մրղ. ծաղրական բացականչություն է։

Հապա՜, նույն ճապա շաղկապն է՝ վերածված ձայնարկության. հնչվում է Պլ., Ննխ. ճաբա՜, Հմշ. աբա՜, նշանակում է «այո՛, այդպես է, իհարկե այդպես է, մի՞թե չգիտեիր», մեկի հարցումը, տարակույսը կամ զարմանքը հաստատելու նշան է.— գործածվում է այն դեպքում, երբ խոսակիցը նախապես տեղյակ լինելով խնդրին՝ նոր միայն է իմանում.— մի՞թէ հարցման պատասխանն է. ավելի հաստատ քան «այո՛».— երբեմն էլ իբր ծաղրական է գործածվում։ Ծաղրական է նաև Երև. ճաբա՜, կամ նույնիսկ երկու բառով ճա՜ բա՛:

Հա՛յրի Հմշ. հորը կանչելու համար, տե՛ս և յէ՛բա՜։

Հո՛գս Պլ. (հնչվում է ճօ՛ֆըս՝ երկու վանկով) «ինչ փույթ, բնավ հոգս չէ»։

Մա՛յրի Հմշ. մորը կանչելու համար. տե՛ս և յէ՛մա:

Մեղայ. հնչվում է մեղա՜ Հմշ., Պլ., Ննխ. նշան է ապաշխարանքի և զարմանքի.— հները ասում էին Պլ. մէղա՜յ Ասծու (լավ հնչելով յ կիսաձայնը. այժմ այս ձևը վերացված է)։

Մե՞ղf *«ափսո՜ս, ցավալի է»*. *սաստկականն է* մեղf ճազա՞r *«հազա՛ր ափսոս, շա՜տ ցավալի է»*. *հնչվում է Ննխ.* մէխf, մէխf ճազar. *Հմշ.* մէ՞խկ, *Պլ.* մէխկ, մէ՞խկ or, մէխկ ճազա՞r:

Յէբա՞ *Հմշ. հորը կանչելու համար. ծագում է* է՞յ բաբա *ձևից. տե՛ս և* ճա՛յրի:

Յէ՛մա՛ *Հմշ. մորը կանչելու համար. ծագում է* է՞յ մամա *ձևից. հմմտ.* յէբա՞. *տե՛ս և* մա՛յրի:

Նա՛ *Պլ. Ննխ. «ահա ա՛ռ». կա և սրա հոգնակի ձևը՝* Նացէf, *որ գործածական է միայն Նոր Նախիջևանում (չկա Պոլսում). այսպես՝* նա՛ *եզակի խոսակցի հետ,* նացէ՛f՝ *մի քանի խոսակիցների հետ «ահա՛ առէք»։— Որովհետև ռուսերենում էլ կա* на *«առ»,* нате *«առեք», ուստի շատերը կարծում են թե հյ.* նա *փոխառյալ է ռուսերենից։ Սխալ է։ Պոլսում ռուս չկար, երբ գործ էինք ածում* նա՛ *«ահա առ» ձևը։ Ես կարծում եմ, որ* նա *հենց* սա, դա, նա *ցուցականների Գ դեմքն է և նշանակում է «ահա նա՛»։ Շատ սովորական է Պոլսի բարբառում, հեռուն գտնվող մի առարկա ցույց տալիս ասել՝* նա՛, նա՛, նա՛. *և այս է որ հետո դարձել է ձայնարկություն։ Հմշ. ասվում է* ա՛ճան *«ահավասիկ, ահա՛», որ* անա նա *բառն է, բացականչական ձևով ասված։ Ննխ. սովորական է* նա՛նա *«ահավասիկ, ահա» (Չալթր գյուղում կան նաև սրա մյուս դեմքերը.* ճա՛զա *«ահավասիկ» և* հա՛գա *«ահավադիկ», որոնք քաղաքում չեն գործածվում)։ Եվ հենց այս* նա՛նա *ձևն է, որ կրճատվելով դարձել է* նա: *Ռուսերենի նմանությունը լոկ զուգադիպություն է. իսկ* նացէf *ձևը կարող է թարգմանված լինել ռուսերենից՝ ճիշտ ինչպես* նայդեցէf, *որ տե՛ս վերը։*

Շա՞տ բան *Պլ. «զարմանալի՞ բան» ասելու իմաստով. թրգմ. թրք.* čoq šey, *որ նմանապես զարմանք է հայտնում. ավելի սաստկության համար երբեմն երկու լեզվով միասին (բայց նաև թուրքերեն) ասում են* չօf շէյ, շատ բան:

Ո՞վ. *հնչվում է* օ՞վ *և այս ձևի տակ գործածական է այժմ էլ Ջղ., Ննխ. իբրև կոչական. այսպես՝ Ջղ.* օ՞վ մարթ, օ՞վ տղա. *իսկ Ննխ.* օ՞վ մաշթ, օ՞վ տղա՝ *շատ անգամ ուղղում են խոսակցին՝ իբր կոչական։*

Ու՞ր է թէ *«երանի՞ թե». գործածական է Հմշ., Պլ. հետևյալ ձևով. Հմշ.* վո՛ւր mfի=*Պլ.* վուր է fի. *օրինակ՝* Վո՛ւր է fի ճօս գըտնըվէր դէ աշկօվը դէսնար:

Ուխ, ուֆ *Ջղ.* ուֆ *Մրղ., Պլ., Հմշ. ցավ կամ վիշտ հայտնելու համար։*

Պա՛ն պա՛ն Ջղ. զովասանական արտահայտություն

Վա՛խ Հմշ., Պլ., Ննխ. ափսոսանք և ցավ

Վա՛ն Մրղ. զարմանք հայտնելու համար

Վա՛յ Ջղ. զարմացք, ցավ, շվարում, հանկարծ պատահած մի բան է ցույց տալիս, վա՛յ Ննխ., Պլ., Հմշ. ափսոսանք, ցավ, կարեկցություն է ցույց տալիս.— Պլ. նաև ծաղրի, արհամարհանքի նշան է. ինչպես՝ վա՛յ գլխուդ, վա՛յն ի վրան:

Տօ՛ Երև. տղամարդ կանչելու համար (ընտանեկան ձև). նույնը Հմշ. դօ:

Փռն Մրղ. զարմանք հայտնելու համար։

Փա՛ն Ջղ. «իհարկե, անշուշտ». օրինակ՝ Փան, ի՛նչ ես ասում:

Փո՛ւ Ջղ., փուֆ Երև., փիֆ Պլ. վատ հոտից կամ այլ բանից զզվանք ցույց տվող։

Քա Պլ., Հմշ., Ջղ., ճաֆա՛ Ննխ. (գյուղերում ասում են ա՛ֆա). գործածվում է իգական սեռից մեկին (կին կամ աղջիկ) կանչելու համար։

Օ Հմշ., Պլ. զարմանք հայտնելու նշան է (հանկարծ անսպասելի մեկին տեսնելու ժամանակ, անհավատալի մի լուր, չափազանցված մի բան լսելու ժամանակ)։

Օ՛խ Հմշ., Պլ., Ննխ. հաճույք կամ հրճվանք զգալու բացականչություն. նույնը օխէ՛յ Ջղ. ուխխա՛յ, ուխխա՛յ Մրղ., օխա՛յ Երև.— Նմանապես թշնամուն հասած վատ վիճակից հրճվանք զգալու առթիվ, կամ վրեժխնդրության իբրև բավարարություն՝ բացականչում են օ՛խ Պլ., Ջղ., Երև.։

Օհօ՛ Մրղ. ծաղրական բացականչություն։

Օ՛յ Մրղ. մարդ կանչելու համար։

Օ՛ֆ Ննխ., Պլ., ձանձրույթի, անհամբերության նշան. (Ննխ. օ՛ֆ ցավի և զայրույթի նշան).— տաքից նեղվելու ժամանակ բացականչում են Պլ. է՛օֆ:

Այտն. 137 հիշում է մի խումբ պառավական բացականչություններ էլ. ինչպես՝

Ջուն գլխուս, ինչ ձուն տամ գլխուս, վայ գլխուս.

Բայական ձևերով՝

Զզվանքի համար՝ չունենա՛մ, չտեսնե՛մ.

Սաստիկ բաղձանքի կամ աղաչանքի համար՝ խենթենա՛մ, օրինակ՝

Ան ինչ անշնորհք խօսուածք էր, չունենա՛մ.

Պատմեցէք, շուտով պատմեցէք, խենթենա՛մ.

Փաղաքշական՝ Սիրե՛մ, արևուն մեռնի՛մ:

Սրանցից մեծ մասը այժմ անգործածական է նույնիսկ բարբառներում։

5. ԹՐՔԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա՛դա՛մ Պլ., Հմշ., Ննխ., անփույթ վերաբերմունք ցույց տալու համար. օրինակ՝ Ա՛դա՛մ, ախfատ մաշթ է, դո՛ւր թո էշթա (Ննխ.)= Ա՛դա՛մ, ախկադ մարթ է, դո՛ւր թող էրթա (Պլ.) <թրք. ادم adam «մարդ, ո՛վ մարդ» բառից, որ նաև այս գործածությունն ունի։

Բէ՛ Պլ. բայերից հետո կամ նախադասության վերջում ավելացնում են իբր թե իմաստին ուժ տալու համար. ինչպես՝ Գնա բէ՛... Բեր ըսի բէ՛... իբր թե «էլի»։

է յէթէր ա՛ Հմշ. «բավական է» <թրք. یتر yeter «բավական է»։

Ա՛շի, ա՛յշի «այ մարդ, ով մարդ» Ագլ. <արևել. թրք. ای کیشی ay kišı հոմանիշ ձևից համառոտված։

Բօ՛լաfի «երանի թե» Հմշ. <թրք. ola ki «լինի թե»։

Իշտէ Հմշ., Պլ.=շտէ Ննխ. բուն նշանակությունն է «ահա». բայց ավելորդ թարմատար բառ գործածվում է նախադասության սկիզբը, մեջն ու վերջը. ինչպես՝ Իշտէ էլանf գացինf բաղնիf. բաղնիfն ալ ըսես նէ, լա՛վ սուֆա մը իշտէ, մենծօվ պզտիկով լե՛ցվեր են իշտէ, կլվասվին կոր իշտէ... (Պլ.) <թրք. اشته ište «ահա» ,որ ունի նույն նշանակությունը։

Հա՛յ. Պլ. օրինակ՝ Հա՛յ շան որդի՛:

Հայ գիդի նայ, էյ գիդի էյ Հմշ., Հէյ գիդի, Հէյ գիդի նէյ Պլ. ցույց է տալիս ափսոսանք անցած գնացած մի լավ բանի հիշողության ժամանակ.— տե՛ս վերը, էջ 402։

Հա՛դէ, նա՛յդէ Պլ., նա՛յդէ, նա՛յդի, նայդա՛ Հմշ., նա՛յդա, նա՛յդը Ննխ. «դե՛հ, օ՛ն, շարժվեցե՛ք, գործի սկսեցեք». հորդորելու, գրգիռ տալու, կամ նաև դուրս վռնդելու համար է գործածվում.— կրճատն է Ննխ. նադ, նա, որ գտնում ենք նադ էշթանf, նաշթանf «դե՛հ գնանք» ձևերի մեջ. <թրք. هایدی haydı, ժղ. hayde.— հոգնակին լինում է Պլ. նա՛յդեցէf, Հմշ. նայդցէf, նայցցէf, Ննխ. նա՛յդէցէf, Ջալթր գյուղ՝ նայդըցէf «օ՛ն, դե՛հ դուք».— Հետաքրքիր կազմություն ունի այս բայաձև հոգնակի ձայնարկությունը, որ թարգմանվում է համապատասխան թրք. haydeyin, haydeyiniz բառից՝ վերջին մասնիկը միայն դարձնելով՝ -ցէf:

Այսպես է նաև սերբերենը, ուր ունենք hayde *«դե՛հ», հոգնակի* haydete *«հայդեցէք» և մինչև անգամ Ա դեմքով* haydemo *«al-lons, գնանք»* (Meillet, Gr. serbe, *170)։*

Հէ՞ *(թե՛ ունգական և թե՛ հարցական է ձայնավորով). «ի՞նչ, ինչ ասացի՞ր» Պլ., Ննխ., Երև. (անքաղաքավար ձև չի համարվում) թրք.* he ?

Մշfէ՛, Հա՛յ մշfէ *Ննխ. մի երրորդի ասածի վրա զարմանք կամ հեգնանք է արտահայտում. գործածական է եղել հին բարբառում. այժմ գրեթե բոլորովին խափանված—<թրք.* imiš ki *«եղել է, իբր թե» ձևից։*

Յազըխ *Պլ.,* յազուխ *Հմշ. «ափսոս» <թրք.* یازق yazəq.

Յանի, յանիfի *Պլ., Երև. «իբր թե» (նաև ծաղրաբար) <արաբ.* يعنى ya'ni *«այսինքն»։*

Յուհա *Պլ. ծաղրական ձայնարկություն, որ բարձրաձայն կանչում են մեկի ետևից <թրք.* yuha *(բոլորովին այլ է* yahu, *որ մեվլևի դերվիշների բանաձևն է. նշանակում է «ո՛վ նա», այսինքն «ո՛վ Աստված» բայց և «ո՛վ մարդ, ա՛յ մարդ»)։*

Նէսէնդէ՛ *«ո՞վ գիտե, կարելի է այդպես է» Ննխ. (խոսակցի ասածի վրա տարակույս է հայտնում <թրք.* ne sende ? *«դու էլ ի՞նչ (ես ասում)»։*

Քէշկէ, fէշկէմ *Պլ.,* fէշգէմ *Ննխ.,* քյոշկո *Հմշ.,* քյոշկա *Մրղ. «երանի՛ թե, իցի՛վ թե» <պրս.* كاشكه *կամ* كاشكى kyaški *նույն նշանակությամբ։*

6. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այտն. 136—137 աշխարհաբարի համար տալիս է 48 բառից բաղկացած ձայնարկությունների մի ցուցակ. դրանց մի մասը զուտ գրաբար է և այժմ անգործածական (ինչպես վա՛շ, fաջ, ճա՛րշ, եղո՛ւկ*). մի երկուսն էլ ռամիկ են (ինչպես* երնէ՛կ*). դուրս հանելով ցուցակից այս կարգի բառերը, որոնք հիշել ենք վերը գրաբարի կամ բարբառների ցուցակում, մնացյալը դնում ենք այստեղ, մեր հավելումներով և օրինակներով միասին, ըստ այն բաժանման, որ դրել է նաև Այտնյանը*

*Ուրախության.—*ո՛ճ, ա՛ճ. *օրինակ՝*

Ո՛ճ, ի՛նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, ճովի՛կ... *(Պեշիկթաշլյան)*
Ոճ, երկնfի ժապաւէննեբ,

ձառագայթներ, միացուցած
Լին ստերը մեր միմեանց,
Մեր ստերը սիրանուէր: *(Դուրյան)*

Ցավի և զղջման.— վա՜խ, վա՜յ, վա՜ն, ա՜ն, ո՜ն, ա՜խ, ափսո՜ս, աւա՜ղ, մե՜ղf:

Ես լսեցի մի անուշ ձայն,...
Բայց ափսո՜ս որ երազ էր...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր: *(Ս. Շահազիզ).*

Ո՜ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար,...
Ո՜ն, ա՛յս է սոսկ ցաւ ինձ համար... *(Դուրյան)*

Աւա՜ղ, աչfերս յուսախնդիր
Ջուր ծանօթներս պիտի հայցեն: *(Թերզյան)*

Աւա՜ղ, ներս վարդfն ու աստղերն
Լուռ պիտի տար կուլ այն սև փոս: *(Դուրյան)*

Իսկ թէ մոռնայ զիս օր մը,
Ա՜ն, այն օրը fա՛ր կտրի... *(Դուրյան)*

Մեղf fրտանցս որ թափեցի.
Մեղf որ (ափսոս որ) չհանչցայ:

Բաղձանքի.— երանի՜ թէ, ո՜ւր է թէ, Աստուա՜ծ տայ (տար).
Երանի թէ ստուգուէր.
Ուր է թէ տեսնէի մէյ մը:

Երանելու.— երանի՜.
Երանի՜ համբերողներին. Երանի՜ ձեզ:

Անիծելու.— Վա՜յ.
Վայ ձեզ անմիտներ:

Կանչելու համար.— Ո՜, ո՜վ, ա՜յ, է՜, հէ՜.
Ով աշխարհ. Այ հովիւներ:

Խրախուսելու.— կեցցե՛ս, ապրի՛ս, հա՛.
Հա՛ մօտեցէf, հա՛ հասէf.
Կեցցե՛ս որդիս. Ապրի՛ս տղաս:

Բարևելու.— բարև՛, բարև՛ ձեզ, ողջոյն:
Բարկության.— Ա՜յ, հա՜յ.
Ա՜յ անիծեալ. հա՜յ անկիրթ:
Զարմացական.— Օ՜ն, ո՜վ զարմանf:
Զզվանքի.— Թո՜ւ, փո՜ւ, զարշելի՜:
Հիացման.— Ա՜, օհօ՜, հիանալի՜, հրաշալի՜...

Վախի, սարսափի.— Ա՜ճ, վա՜ճ, ա՜յ:

Ի լրացումն այս բոլորի՝ պետք է հիշել կենդանիներին կանչելու կամ վանելու բացականչությունները, որոնք հաճախ կազմված են կենդանիների փաղաքշական կամ մանկական անուններից և ընդհանրապես բարբառային կամ ժողովրդական են.—

Հավ կանչելու համար.— Ջո՜ւջո՜ւ Երև., բիլի՜ բիլի՜ Պլ.

Հավ վանելու.— քշ՜քշ՜ Պլ.

Շուն կանչելու.— Քուչո՜ւ քուչո՜ւ Պլ.

Շուն վանելու.— Օ՜շտ Պլ.

Կատու կանչելու.— Փի՜ս փի՜ս, փիսի՜ փիսի՜, փի՜շ փի՜շ, քիշի՜ քիշի՜ Պլ.

Կատու վանելու.— Փի՜շտ Պլ.

Կենդանիների հանած ձայներն էլ կարող ենք հաշվել ձայնարկությունների հաշվում. ինչպես՝

Ագռաւը ղա՜ռ ղա՜ռ կանչում է.

Ոչխարը մէ՜ մէ՜ մէ՜ քանչում է.

Աքլորի ձայնը կոչվում է Պլ. կուկուլիկո՜ւ, Երև. ծուղրուղո՜ւ.

Ճնճղուկը կանչում է ճի՜ ճի՜.

Եզն ու կովը բառաչում են մո՜ւ մո՜ւ մո՜ւ.

Ձին խրխնջում է փռ՜ռ՜ռ՜

Էշը զռում է զռ՜ զռ՜.

Այծը պապաչում է բէ՜ բէ՜.

Կատուն մլաւում է միա՜ւ միա՜ւ (իսկ կռվելու ժամանակ մռլա՜ւ մռլա՜ւ).

Աղավնին կանչում է վո՜ւ վո՜ւ վո՜ւ.

Ձայնարկությունների վերջին շարքն են կազմում այն բացականչությունները, որոնք արտասանվում են լեզվի կամ շրթունքի բախյունով առանց ձայնավորի, այսինքն անհոդավոր ձայներ են։ Այս կարգի բացականչությունները նույնիսկ կարելի չէ գրել և միայն բաղաձայնի միջոցով է հնարավոր լինում վերարտադրել. ինչպես ցք (մի անգամ արտասանված և գլխի շարժումով). նշանակում է «ոչ». ցք, ցք, ցք ափսոսանք հայտնելու համար. արևմտահայոց մեջ առնվազն 3 անգամ կրկնվելով, իսկ արևելահայոց մեջ միայն մի անգամ։

Ըճը (քթի մեջ արտասանված), որոշ շեշտով նշանակում է «այո», ուրիշ շեշտով՝ «ոչ», իսկ հարցականով՝ «ի՞նչ ասացիր»։

ԳԼՈՒԽ Զ

ԲԱՌԻԿՆԵՐ (PARTICULES)

Այսպես ենք կոչում հնդեվրոպական նախալեզվի մեջ սովորական այն մի խումբ փոքր բառերը, որոնք բռնում են նախդիրների և մասնիկների միջին տեղը։ Նախդիրներից տարբերվում են նրանով, որ մինչդեռ նախդիրները հոլովական ձևեր են, բառիկները ամենևին չեն ներկայացնում որևէ հոլովական վիճակ. նրանք առանց վերջավորության բներ են։ Մասնիկներից տարբերությունն էլ այն է, որ մինչդեռ մասնիկները անկախ գործածություն երբեք չունեն և չունեն բնավ բառ լինելու նշաններ, ընդհակառակը բառիկները դեռ կրում են բառի երևույթ և կարող են մինչև անգամ առանձին ու անկախ էլ գործածվել, ինչպես՝ հայերեն մի՛ արգելականը։

Բառիկները կազմված են լինում կա՛մ մի ձայնորդից (որին կարելի է կցել a նախահավելվածը), և կամ մի բաղաձայնից+$^{e}/_{o}$ ձայնավորով, որին կարող է ավելանալ նաև մի նոր մասնիկ։

Բառիկները հնդեվրոպական նախալեզվի մեջ բազմաթիվ էին և շատ գործածական. մենք կհիշենք դրանցից կարևորները.

Հնխ. u, նախահավելվածով au, որից սանս. u, գոթ. u, հուն. αὖ «և», գոթ. au-k «որովհետև», լտ. au-t «կամ, և»։

Հնխ. r̥. որից հուն. ἀρ, ῥα. ἄρα «և, ուրեմն, արդ», լիթ. ir̃ «և», պրս. ira, թոխար. ra-no «նույնիսկ»։

Հնխ. kʷe «և», որից սանս. ča և, զնդ. ča և, հպրս. ča, հուն. τε, լտ. que և, գոթ. -h (nih բառի մեջ, որ նշանակում է «և ոչ», լտ. ne-quĕ).- Թերևս այս միևնույն բառիկն է, որ կցվում է անորոշներին և հարցականներին. ինչպես հյ. ո-ք, լտ. quis-que, սանս. kaç-ča և հուն. τε: Նոր մասնիկների հավելմամբ կազմված են՝ լտ. qu-om, qu-am, հյ. ք-ան, լիթ. -k-i, վեդ. ca-na «ոչ ոք», գոթ.-

hun, հանգլ. -gen «ոչ ոք»։ —Կցվում է բառավերջին. ինչպես հուն. πατὴρ ἀνδρῶν τε θεῶν τε «հայր մարդկանց և աստուծոց»։

Հնխ. we «կամ», որից սանս. vā, հպրս. vā, զնդ. vā, հաև. fe, լտ. ve, քուչ. wa-t.—կցվում է բառավերջին. ինչպես՝ deive hominesve «աստուածք և մարդիկ»։

Հնխ. gʷhe, որից սանս. gha, ha, հսլ. go (ne-go «որպես» բառի մեջ) և ze, հուն. -θε (ինչպես εἰ-θε, αἴ-θε), լիտ. g-i, -g-u.

Հնխ ne «ոչ, չ, մի», որից սանս. na, հսլ. ne, լտ. ne, գոթ. ni-h «և ոչ» և այլն.—i մասնիկի հավելումով՝ հնխ. nei, որից լիթ. nei, լտ. nī, զնդ. naē (-čiš), հսլ. ni (-kŭto) «ոչ ոք»։ —Նույն բառիկն է, որ n̥ ստորին ձայնավորձով բարդվելով ուրիշ բառերի հետ՝ կազմում է բացասականներ. ինչպես՝ հնխ. n̥g'nōtos >սանս. ajñātas, հուն. ἄγνωτος, լտ. ignōtus, հյ. անծանաւթ։ —Այս բառերը իրապես բարդ են, որովհետև ան ոչ թե մասնիկ է, այլ հնխ. տեսակետից ելնելով՝ անկախ բառ։ Ավելի հետո ne իբր շատ կարճ մի բառ, սկսեց կորցնել իր ուժը. սլավական լեզուների մեջ նա բռնեց n̥ ձևի տեղը և միացվեց հաջորդ բառին. ուրիշ լեզուների մեջ՝ ուժ ձեռք բերելու համար, ստացավ մի նոր հարակից բառ. ինչպես հպրս. naiy, զնդ. nōit, լտ. non (*ne-oi-nom «ոչ մի»). իսկ հայերենն ու հունարենը ջնջեցին ne ձևը՝ փոխանակելով բոլորովին մի ուրիշ բառով (թեև ան- = ἀ-, ἀν- մնաց, որ և համարվեց մասնիկ)։ Այդ նոր ձևերն են հուն. οὐ, οὐk, οὐχ և հյ. ոչ։ Մեր ձևը կազմված է n արմատից, որ է սանս. áti «հակառակ» = հսլ. otŭ «-ից» (սրա, իբրև բացասական, գործածության համար հմմտ. հսլ. ot-rokŭ = ռուս. отрокъ «մանուկ», որ է ճիշտ լտ. in-fans «ան-խոս»), արմատի վրա ավելացրած է չ, որ անորոշն է և գտնվում է նաև ինչ բառի մեջ. ըստ այսմ ոչ բուն նշանակում է «ո՛չ մի», բացասականը անորոշով սաստկացնելու համար. օրինակ լտ. non<ne-oinom, աշխ. ո՛չ մի, թրք. hič bir, հուն. οὐδέν τι. (Meillet, MSL 23, 224)։

Այս նույն մասնիկը mē արգելական ձևով ունեն հյ. մի, հուն. μή, զնդ. և սանս. mā, քուչերենի մեջ դարձել է ընդհանուր բացասական մասնիկ՝ mā, ձևով։

Հնխ. ne «որպես, ինչպես», որից սանս. na, զնդ. kas-nā «ո՞վ», թեսալ. τό-νε, լտ. sicci-ne «արդյ՞ոք», հսլ. no «բայց». —Նոր մասնիկներով՝ լիտ. nei «ինչպես», լտ. num, nam, հսլ. n-ŭ և այլն։

Հնխ. e *կցվում է ցուցականների և նմանների վրա. ինչպես՝ հուն.* ἐ-κεῖνος, *ռուս.* é-tot, *օսկ.* é-tanto, *սանս.* a-sau *«այն»։*

Հնխ. Ké, *որից հուն.* χε, *լա.* (hoc)-ce, *գոթ.* (sa-)h *«սա», լիթ.* (eĭk)-s *«(արի՛) այստեղ»։*

Հնխ. g'e, *որից հուն.* γε, *գոթ.* -k, *ինչպես* mi-k *«զիս»,* au-k, *«որովհետև»։*

Հնխ. pe, *որ գտնում ենք լա.* quip- pe *«որովհետև», լիթ.* knĭ-p *«ինչպես», հուն.* πε- ρ *«իրոք», լա.* quis-p-i-am *«որևէ մեկը» բառերի մեջ։*

Ց Ա Ն Կ Ե Ր

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազերեն—109—110, 118
Ագուլերեն—118
Ալբաներեն—195
Ալթայական լեզուներ—9, 113
Ախվախերեն—117
Անլոն—8
Այմարա—398
Անգլերեն—16, 63, 74, 92, 175—176, 187, 207, 298, 328, 340, 350, 399, 416
Անգլոսաքսոներեն—83, 92,94
Աննամերեն—239
Ավստրալիական լեզուներ—241
Արաբերեն—6—7, 16, 108, 128—130, 265—266, 300—301, 304—313, 321, 358, 377, 379, 400—401, 412
Արավակերեն—10—11
Արիական լեզուներ—13,26—27, 66

Բալթիկ—սլավոնական լեզուներ—13
Բասա—261
Բելուջերեն—17, 24, 159
Բիլին—399
Բրահուի—113
Բուլղարերեն—16

Գալլերեն—71, 176, 195, 399
Գանգ—315
Գերմանական լեզուներ—8, 66—67, 195
Գերմաներեն—8, 17, 64—65, 67, 74, 92, 94, 97, 103, 108, 176, 207, 222, 240, 260—261, 298, 340, 399—400
Գոթերեն—13, 27, 61—64, 71, 80, 83, 92, 94, 152, 179, 195, 208, 260—261, 399, 415—417

Դանիերեն—207
Դորիական բարբառ հունարենի—63
Դրավիդյան լեզուներ—22

Եբրայեցերեն—358—359
Եվրոպական լեզուներ—66—67, 207

Զանդկերեն, *տե՛ս* Զենդերեն
Զենդերեն—12—13, 26,27, 61—64, 73, 94, 118, 171, 195, 399, 415—416
Զիրյեներեն—117, 196

Էվե—315

Թաթարերեն—10, 261, 304—307, 310—311
Թամիլերեն—22
Թոխարերեն—23, 195, 415
Թուրքերեն—9—11, 45, 47, 69—70, 74, 113, 117, 128—130, 137, 156, 173, 179, 183—184, 187, 196, 204, 210, 214, 222, 231, 238, 257—261, 265, 267, 273, 275, 287, 289, 297—298, 300—315, 330—331, 340, 352, 360, 366—375, 377—379, 397, 400—402, 405, 409, 411—412, 416

Ինգուշերեն—19—20
Իռլանդերեն—195

Իտալերեն—62, 74, 207, 298
Իրանական լեզուներ—12, 63

Լազերեն—376
Լանգդոկ—398
Լատիներեն—6, 12—16, 23, 61—64, 67, 71, 80—81, 83, 92, 94, 113—114, 137, 175—176, 179, 181, 193—195, 207, 231, 237, 241, 257, 260—261, 340—342, 366, 399—400, 415—417
Լատիշերեն—61—63, 159, 208
Լեթթերեն, *տե՛ս* Լատիշերեն
Լիտվաներեն—12—16, 71, 92, 94, 179, 195, 237, 415—417
Լիֆու—117

Խասու—8
Խոթաներեն—176

Կաբարդիներեն—7—8, 360
Կամիսերեն—12—14
Կելտական լեզուներ—67
Կիմրերեն—71, 83
Կորանա—117
Կորներեն—63
Կումըխերեն—222

Հին բարձր գերմաներեն—62—63, 83, 92, 94, 195, 260—261
Հինդուստանի—113
Հին իռլանդերեն—61—63, 71, 83, 194, 237
Հին պարսկերեն—12—14, 17, 62—64, 67, 94, 118, 171
Հին պրուսերեն—13, 16, 63, 179
Հին սաքսոներեն—62
Հին սլավոներեն—12—16, 22—23, 27, 61—65, 70—71, 80, 83, 92, 94, 194—195, 240, 416
Հնդեվրոպական լեզուներ—12—14, 260—261, 340—341, 399
Հնդեվրոպական նախալեզու—12—16, 26—27, 61—64, 70—71, 73, 80—81, 83, 88, 92, 94, 97, 99, 118, 139, 144, 152, 154, 159, 162, 176, 179, 194—195, 237, 241, 340—341, 374, 415—417
Հնդկերեն—113
Հոլանդերեն—187, 398
Հունարեն—5, 6, 12—16, 23—24, 27, 46, 61—64, 66, 76, 88, 92, 94, 97, 113—114, 154, 159, 175—176, 193—195, 204, 206—207, 214, 260—261, 306, 340—342, 360, 403, 415—417
Հունգարերեն—113, 239

Ճապոներեն—6, 203—204, 210

Մանիքեական պահլավերեն—171
Մանչուրերեն—9—10, 360
Միջին բարձր գերմաներեն—194
Մոնղոլերեն—9

Յաբեմ—69
Յակուտերեն—360—361
Յուկատեկան—19

Նահուատլ—6
Նորալատին լեզուներ, *տե՛ս* ռոմանական լեզուներ

Շամբալա—8
Շոռ—11
Շվեդերեն—17, 67, 113—114, 207, 209

Չեխերեն—68, 208
Չեչեներեն—257
Չիապանեկա—6
Չիկիտա—118—119
Չիներեն—194, 239, 341
Չուվաշերեն—10
Չուքչիերեն—244

Պահլավերեն—12—14, 17, 26—27, 73, 157, 176, 195, 246
Պարսկերեն—14, 17, 26—27, 64, 69, 74, 109, 124, 128—130, 137, 152, 159, 194—195, 204, 208, 210, 214, 240, 246, 260—261, 265, 267—268, 284,

297—298, 300—313, 366, 377—379, 400—401, 406—407, 412, 415—416
Պորտուգալերեն—18, 39

Ռոմանական լեզուներ—67, 241
Ռումիներեն—16, 187, 208—209, 340
Ռուսերեն—17—18, 63, 69, 71, 81, 108, 137, 152, 154, 193, 195, 204, 208, 222, 231, 240, 242, 245, 257, 260—261, 298, 301, 315—316, 330, 393—394, 400—402, 409, 417

Սանսկրիտ—12—15, 26—27, 61—63, 67, 73, 92, 94, 97, 152, 154, 176, 194—195, 261, 341—342, 415—417
Սերբերեն—16, 65—66, 208, 360, 412
Սլավ(ոն)ական լեզուներ—22—23, 66—67, 241, 340
Սլավոներեն. *տե՛ս* հին սլավոներեն
Սոգդերեն—27, 64, 171
Սումերերեն—117

Վեդայական հնդկերեն—63—64, 195
Վեպս—8
Վրացերեն—106, 241, 251, 261, 298, 359

Տահիթի—398
Տաճկերեն, *տե՛ս* թուրքերեն
Տունգուսերեն—9, 208
Տուրրուքող—198

Ուբիխերեն—360
Ուգրո—ֆիննական լեզուներ—113, 194
Ումբրերեն—62, 94, 179, 194—195

Փռյուգերեն—53

Քամբու—12
Քրդերեն—109
Քուչերեն—13, 416

Օյրոտերեն—11
Օսկերեն—83, 94, 179, 417

Ֆիններեն—113, 117
Ֆրանսերեն—6, 60, 67—69, 74, 113, 119, 124, 137, 154, 165, 175, 181, 187, 201, 204, 208, 222, 231, 241—242, 245, 254, 257, 260, 298—301, 328, 341, 344, 353, 367, 391, 394, 397, 399—400

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս— *30—33, 35—37, 123—130, 136, 138, 143, 145, 148, 151, 155, 160, 176, 179, 269—285, 287—295, 297, 303, 306, 308—309, 375—379, 406—407, 412*

Ալաշկերտ—*29, 45, 105, 107, 127, 136, 138—139, 143, 145, 148, 151, 156, 159, 173, 179*

Ախալցխա—*30, 108, 127—128, 138—139, 145, 148, 151, 159—160, 173, 176, 265, 401*

Ակն—*30, 45, 107, 127—128, 136, 139, 145, 155—156, 160, 221, 282*

Ապարան—*156*

Ասլանբեգ—*30, 127—128, 136, 139, 145, 151, 156, 159—160, 173, 176*

Աստապատ—*156*

Ատափազար—*107, 179, 222*

Արաբկիր—*45, 107, 155—156*

Բաղեշ—*45, 145*

Բայազեդ—*45*

Բուլանըխ—*45, 179, 273, 277, 287*

Գանձակ—*107, 156*

Գորիս—*30, 107, 138—139, 145, 148, 151, 160, 173, 176*

Դերսիմ—*45*

Եվդոկիա—*45, 128*

Երևան—*30—32, 45, 123, 125, 127—130, 136, 138, 143, 145, 148, 151—152, 155—156, 159—160, 221, 231, 270, 273, 276—276, 280, 284—285, 291—295, 297, 299, 301, 304—310, 375—376, 406—412, 414*

Երզնկա—*128*

Զեյթուն—*30, 32, 46, 104, 107, 127—128, 139, 148, 151, 156, 159—160, 173, 176, 179*

Զմյուռնիա—*107*

Թավրիզ—*156, 246*

Թբիլիսի—*30, 32, 108, 127, 136, 139, 143, 145, 148, 151—152, 155—156, 160, 173, 176, 179*

Լենանայ—*300*

Խարբերդ—*30, 107, 127—128, 139, 145, 148, 151, 159—160, 173, 176, 179*

Խլաթ—*45, 156*

Խոտրջուր—*145*

Խրիմ, *տե՛ս* Ղրիմ

Կարին—*30, 108, 127, 136, 138—139, 148, 151, 155, 159—160, 173, 176*

Կեյվե—*156*

Կեսարիա—*46, 107, 128, 158, 295—296*

Կիլիկիա—*32, 103*

Կյուրին—*156*

Հազզո—*128*

Հաճին—*29, 32, 127, 136, 139, 145, 148, 156, 159—160, 173, 176, 282*

Համշեն—*46—47, 104, 127, 136, 138—139, 145, 148, 151, 156, 159—160, 173, 221—222, 237—239, 265, 269—295, 297, 299, 301—313, 315, 335—338, 375—379, 406—412*

Հավարիկ—139, 156, 173, 176, 179
Հնդկահայ—276, 281, 290
Հունգարահայ—103—104, 107, 239

Ղազախ—106, 281, 290
Ղարաբաղ—30, 45, 48, 97—98, 104—107, 124—129, 136, 138—139, 143, 145, 148, 151, 156, 160, 173, 176, 221, 260, 293, 305, 312, 401, 406
Ղարադաղ—136
Ղրիմ—123, 155—156, 304—306, 310

Ճանիկ—278

Մարաղա—30—32, 37—39, 104, 107, 123—130, 136, 139, 151, 156, 173, 176, 269—281, 284, 286, 288, 290—295, 301—312, 375—379, 401—416
Մարաշ—107, 156, 377
Մեղրի—30, 106
Մոկք—30, 107, 128, 139, 145, 151, 159—160, 173, 179
Մուժամբար—148
Մուշ—29, 45, 103—105, 107, 115, 127—128, 139, 143, 145, 148, 151, 156, 159—160, 173, 176, 179

Նոր Նախիջևան—30, 32, 41—45, 47, 123—129, 136, 138—139, 143, 145, 148, 151, 155—156, 159—160, 173, 176, 222, 269—295, 299—313, 315—316, 375—379, 402, 406—412
Նոր Ջուղա—29, 30—35, 46, 104, 107—108, 123—130, 136, 138—139, 143, 145, 148, 151, 156, 158—160, 173, 176, 179, 221, 269, 295, 297, 303, 307—311, 375, 377—379, 406—411

Շամախի—30, 33, 47, 107, 125, 127, 136, 138, 143, 145, 148, 151, 156, 159—160
Շատախ—145
Շիրակ—156

Ոզմի—30, 104, 127, 139, 145, 151, 156, 159—160, 173

Չարսանճաք—45, 107, 128, 145
Չենկիլեր—45

Պարտիզակ—104—105, 179
Պոլիս—30, 39—41, 45, 47, 104—107, 123—130, 138—139, 142—143, 145, 148, 151, 155—156, 159—160, 173, 176, 222, 268—295, 299—314, 335—375—379, 401, 406—412, 414

Ջուղա, տե՛ս Նոր Ջուղա

Ռոդոսթո—127, 139, 151, 156, 159—160, 173, 176, 408

Սալմաստ—29, 127—128, 136, 139, 145, 151, 156, 159—160, 173, 176
Սեբաստիա—30, 127—128, 136, 139, 145, 148, 151, 155, 159—160, 173, 179
Սվեդիա—30, 105, 127, 145, 148, 151, 160, 173, 222
Սուրխա—103, 105, 156
Սուրմալու—45
Սուչավա—29, 103—104, 127—128, 136, 138, 143, 145, 148, 151, 156, 159—160, 173, 176—179, 239

Վան—29, 33, 45—46, 104, 107—108, 127, 136, 139, 145, 151, 156, 159—160, 173, 176, 179, 305

Տիգրանակերտ—30, 45—46, 104, 127—128, 136, 138, 145, 148, 151, 159—160, 173, 176
Տրապիզոն—128, 156, 238, 288, 297, 307, 408
Տփղիս, տե՛ս Թբիլիսի

Ցղնա—35—37, 124—125, 127, 136, 148, 275, 294

Քղի—145

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա. ԼԵԶՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ հ=հին, մ=միջին, ն=նոր)

Աբխազ.—աբխազերեն
ագուլ.—ագուլերեն
ալբ(ան.).—ալբաներեն
ախվախ.—ախվախերեն
անգլ.—անգլերեն
անգսք.—անգլոսաքսոներեն
ատտ.—ատտիկյան
արաբ.—արաբերեն
բուլղ(ար.).—բուլղարերեն
գալլ.—գալլերեն
գերմ.—գերմաներեն
գոթ.—գոթերեն
դան.—դանիերեն
դոր.—դորիական
եբր.—եբրայեցերեն
եվր.—եվրոպական
զնդ.—զենդերեն
թես.—թեսալական
թթր.—թաթարերեն
թոխ(ար.).—թոխարերեն
թրք.—թուրքերեն
իռլ.—իռլանդերեն
իտալ.—իտալերեն
լատ. լտ.—լատիներեն
լատիշ.—լատիշերեն
լեթթ.—լեթթերեն
լեհ.—լեհերեն
լեսբ.—լեսբիական
լիթ., լիտ.—լիտվաներեն
լտ. տե՛ս լատ.

կաբարդ(ին).—կաբարդիներեն
կամիս.—կամիսերեն
կելտ.—կելտերեն
կիմր.—կիմրերեն
կորն.—կորներեն
հբգ.—հին բարձր գերմաներեն
հիռլ.—հին իռլանդերեն
հպրս.—հին պարսկերեն
հպրուս.—հին պրուսերեն
հսաքս.—հին սաքսոներեն
հսլ.—հին սլավոներեն
հնխ.—հնդեվրոպական նախալեզու
հնդկ.—հնդկերեն
հոլ.—հոլանդերեն
հոն.—հոնիական
հոմեր.—հոմերական
հն.—հունարեն
հունգար.—հունգարերեն
ճապոն.—ճապոներեն
մանիք.—մանիքեական
մանչ(ուր).—մանչուրերեն
մբգ.—միջին բարձր գերմաներեն
մոնղ(ոլ).—մոնղոլերեն
յակուտ.—յակուտերեն
շվեդ.—շվեդերեն
չեխ.—չեխերեն
չին.—չինարեն
պահլ., պհլ.—պահլավերեն
պորտուգալ.—պորտուգալերեն
պրսկ.—պարսկերեն

ռում(ին).—ռումիներեն
ռուս.—ռուսերեն
սանս., սնս.—սանսկրիտ
սերբ.—սերբերեն
սլ.—սլավ(ոն)ական
սոգդ.—սոգդերեն
սում(եր.)—սումերերեն
վեդ.—վեդայական
վր., վրաց.—վրացերեն
տճկ.—տաճկերեն
ումբր.—ումբրերեն
քրդ.—քրդերեն
քուշ.—քուշերեն
օսկ.—օսկերեն
ֆինն.—ֆիններեն
ֆրանս.—ֆրանսերեն

Բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ ՈՒ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագլ.—Ագուլիս
Ալշ.—Ալաշկերտ
Ախց.—Ախալցխա
Ապ.—Ապարան
Ասլ.—Ասլանբեգ
Աստ.—Աստապատ
Ատ. Ատափ.—Ատափազար
Արբ.—Արաբկիր
Բլ.—Բուլանըխ
Բղ.—Բաղեշ
Գնձ.—Գանձակ
Գոր.—Գորիս
Եվդ.—Եվդոկիա
Երև.—Երևան
Երզ.—Երզնկա
Զթ.—Զեյթուն
Զմ.—Զմյուռնիա
Թբ.—Թբիլիսի
Լհ., Լեհ.—Լեհահայ
Խլ.—Խլաթ
Խրբ.—Խարբերդ
Խտջ.—Խոտրջուր
Խր.—Խրիմ
Կես., Կս.—Կեսարիա
Կիլ.—Կիլիկիա
Կյ.—Կեյվե
Կր.—Կարին
Հզ.—Հազզո
Հճ.—Հաճին
Հմշ.—Համշեն
Հնգ.—Հունգարահայ
Հնդ.—Հնդկահայ
Հվր.—Հավարիկ
Ղզ.—Ղազախ
Ղրբ.—Ղարաբաղ
Ղրդ.—Ղարադաղ
Մժ.—Մուժամբար
Մկ.—Մոկք
Մղր.—Մեղրի
Մշ.—Մուշ
Մրղ.—Մարաղա
Ննխ.—Նոր Նախիջևան
Նջ.—Նոր Ջուղա
Շիր.—Շիրակ
Շմ.—Շամախի
Շտ.—Շատախ
Ոզմ.—Ոզմի
Ջն.—Ջանկիլեր
Ջրս.—Ջարսանճաք
Պ., Պլ.—Պոլիս
Պրտ.—Պարտիզակ
Ջ., Ջղ.—Նոր Ջուղա
Ռ.—Ռոդոսթո
Սեբ.—Սեբաստիա
Սլմ.—Սալմաստ
Սչ.—Սուչավա
Սվեդ.—Սվեդիա
Սր.—Սուրմալու
Վն.—Վան
Տիգ.—Տիգրանակերտ
Տր.—Տրապիզոն
Տփ.—Տփղիս
Ցղ.—Ցղնա
Ք.—Քղի

ՆՑՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Գլուխ Ա

ԴԵՐԲԱՅ

1. Դերբայ և աներևույթ ընդհանրապես 5
2. Դերբայը հնդեվրոպականում 12
3. Դերբայը հին հայերենում 18
4. Դերբայը միջին հայերենում 28
5. Դերբայը բարբառներում 29
6. Դերբայը աշխարհաբարում 48

Գլուխ Բ

ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Նախդիր 60
1. Նախդիրը հնդեվրոպականում 61
2. Նախդիրը հայերենում 70
Բ. Նախադրություն 113
1. Գրաբարի նախադրությունները 121
2. Միջին հայերենի նախադրությունները 122
3. Նախադրությունները բարբառներում 123
4. Թրքերենից փոխառյալ նախադրություններ 128
5. Աշխարհաբարի նախադրությունները 130
6. Նախադրությունների բացատրությունները 133
7. Նախադրությունների հոլովումը 181
8. Նախադրությունների խնդրառությունը 187

Գլուխ Գ

ՄԱԿԲԱՅ

1. Մակբայն ընդհանրապես 191
2. Մակբայների կազմությունը 197

3. Ածականն իբրև մակբայ 202
4. Մակբայների համեմատության աստիճանները 206
5. Բնածին մակբայներ 210
6. Կրկնավոր մակբայներ 212
7. Մակբայակերտ մասնիկներ 217
8. Գրաբարի մակբայները 222
9. Տեղական մակբայների հոլովական ձևերը 230
10. Հաստատական և ժխտական մակբայներ 239
11. Մակբայների բացատրությունը 242
12. Միջին հայերենի մակբայները 262
13. Մակբայները բարբառներում 269
14. Թրքերենից փոխառյալ մակբայներ 301
15. Աշխարհաբարի մակբայները 316
16. Մակբայների հոլովումը 334

Գլուխ Դ

ՇԱՂԿԱՊ

1. Գրաբարի շաղկապները 346
2. Միջին հայերենի շաղկապները 372
3. Շաղկապները բարբառներում 375
4. Թրքերենից փոխառյալ շաղկապներ 377
5. Շաղկապները աշխարհաբարում 379

Գլուխ Ե

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձայնարկությունը լեզուներում 396
2. Գրաբարի ձայնարկությունները 403
3. Միջին հայերենի ձայնարկությունները 405
4. Բարբառների ձայնարկությունները 406
5. Թրքերենից փոխառյալ ձայնարկությունները 411
6. Աշխարհաբարի ձայնարկությունները 412

Գլուխ Զ

ԲԱՌԻԿՆԵՐ 415

ՑԱՆԿԵՐ

1. Լեզուների ցանկ 421
2. Հայերեն բարբառների և խոսվածքների ցանկ 424
3. Համառոտագրությունների ցանկ 426
4. Նյութերի ցանկ 428

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ ԱՃԱՌՅԱՆ
ГРАЧЬЯ АКОПОВИЧ АЧАРЯН

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ V

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ

ՎՖ06643, Հրատ. № 2398, Խչն 905, պատվեր 158, տպաքանակ 3000

Հանձնված է արտադրության 2/VII 1964 թ., ստորագրված է տպագր. 17/III 1965 թ., տպագր. 27 մամուլ, հրատ. 3/VII 21,8 մամուլ, թուղթ 60×92 1/16,
Գինը կազմով 1ռ. 50 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Էջմիածնի տպարան։

ЦЕНА
А III
2924